Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

262
7-59

2768

6ր
6ն
6ն

ՍՈՒՐԲ

ԲԱՀԱՆԱՅ

2010

262
Դ-59

ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՅ

ԿԱՄ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ

ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ

ԵՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼՈՒ

ՀԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԹԱՐԳՄԱՆՆԱ

ՍՏԵՓԱՆ Վ. ՄԵԼՔԻՍԵԹԵԿԵԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐՆՈՅ

1008
3Տ676



ԱՐ
120 01

ՎԵՆԵՏԻԿ
Մ ԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1876

11473

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հոմոյական պաշտաւնեայ ծանր պարտաւորութեանց ինձ թոյլ տուած ժառանգակը, տանուտէրի հատուածանաց շնորհիւ քաղաքական գործունէութեանս և աշխի ևս կառավարչական վարչական ժողովքը իբրև անդամ յաձախելէ ալ ազատելով (1874, մարտ 7) շահած աշխոյժ ժառանգակս ազգիս օգտաւէտ ընելու խորհրդածութիւնը միտքս գրաւած առնեմ, նպատակաւ գրքոյկ մը պատրաստելու դարձուցածիս պես, յանկարծ Գաղղիացի Տիպոյտս Կռանոլիխոսին «աղբիւր Քահանայ», անունով պրանչելի և անհրաժեշտ գիրքը աչքիս դպաւ։ Գրքին հարմարութիւնը, մեր կարօտութիւնը, պարագայից յարմարութիւնը և ոչ վայրկենական տպաւորութեան տեղի տուին. այլ անմիջապէս միտքս դրի առնելիս գործունէութեանս աշխատած ժառանգակս այսպիսի օգտակար նպատակի մը գործել, և բարգմանութեան ձեռք զարկի, և կարծեմ թէ շատ իրաւարէ։

Վասն զի առաքինի աղբիւր քահանայ մը իւր խնամոց յանձնուած ժողովրդեան և ընտանեաց ազգին ալ նաև Մոխոս մարգարէ մըն է, թէ հոգևոր նպատակն

ղովրդով կը փրկուի, ինչպես որ չար քահանայ մը ալ իր գայթակղեցուցած ժողովրդով կը դատապարտուի։

Այս այսպես ըլլալով ոչ ասկից առնչի աղեկ կրնայի գործածել Ժաւանեակս, և ոչ ալ առնչի աղեկ ծառայուիլն մը ընել Աստծու, երբ ոչ ևս ալ իմ տկարութեանս հանդիսատես փորձիկ Որսաս (տե՛ս այլոց պատրեկեալ ժողոված) բերելով և այնչափ առիթ Հայրապետաց բարդելուն խառնելով, որոնք ակնկալութեաց յայտ մատին առիթ անօրուիլը յագցըլնելու հանար պետք եղած բնական ցրտնելուն պատրաստութիւնը պատրաստեր եմ։

Ես ինչ, մի՛ թե ձեռնադրութեան առնեն այս չէր դիտաւորութիւնս, առիթ ըլլալ, և մեր սրբութեամբ ալ ժողովուրդը սրբացընել. այս չէր քահանայութեան առաջին օրերը ոտնցած նռանգնալից փափաքիս։ Մի՛ թե կարելի է որ մենք առիթ չ'ըլլանով կարենանք զժողովուրդը սրբացընել։ Ո՛չ երբեք։ Ես երբ այս էր դիտաւորութիւնս և փափագիս, այս գրքոյկը երբեք ձեռքերնես չի ձգեի, որի որ սրանչելի կերպով պիտոր օգնէ մեզի նպատակնիորուս հասնելու, և զգալի դիւրութեամբ պիտոր յառաջացընէ սրբութեան ճամբուն մէջ։

Գրքոյկս երեք մասի բաժնուած է. առաջին մասին մէջ քահանային մը սրբութեան հարկաւորութիւնը անժխտելի փաստերով ապացուցանելով, այն սրբութիւնը իրմէ փորձաքար մը կը ծառայէ մեզի՝ անցնելու, ներկայ և ապագայ կեանքերնիս հանգամանաւոր քննելուն։

Երկրորդ մասին մէջ քահանային սրբութեան իրեն առաջին միջոց «առաքինութիւնները» հակադա-

րոյ և թէ մանաւանդ օգնութիւններով։ Այսպիսի քահանայ մը իր բարի կամքով զինեալ ժողովուրդը տապալեալ ներքինեաց էգիպտոսեն հանելով, տնտակ տնտակ վշտաց և ցաւոց կարմիր ծովերեն անցընելով, և անյաչող բաղդերու անապատներուն մէջ առաջնորդելով Աստուծոյ սուրբ կամաց հանդիսատեսը ներքին մխիթարութեան Աշտանաց երկիրներուն մէջ կը տեղաւորցընէ։ Իսկ իր սուրբ և բարի վարուց կենդանի օրինակովը Միհեական ղերին փայլակնացայտ և անարկոտ օրէնքները իր ժողովրդեան ընտանի ընելով, անոնցմով զիտոր Աստուծոյ հետ այնպիսի սերտ սիրով կը կապէ և կը վկայագրէ որ այնուհետև այն ժողովրդեան հոգը և խնամքը Աստուած իր վրայ կ'առնու։

«Հաստատեցից զոխտս իմ ՚ի ձեզ... եղէց ձեր Աստուած, և դուք եղիջիք ինձ ժողովուրդ»[1]։

Միևչդեռ ընդհանրապէս չար քահանայ մը իր հօտին մէջ ամէն տեսակ ապականութեան վտանգներ ծանուր մը ըլլալով, առժամանակեայ օգնութիւն մը ընելու ամենեին ձեռնհաս չ'ըլլալէն զատ, իր վարուց չար օրինակաւն ալ վշտանալ գայթակղութեան առիթ մըն է. որով սուղ ժամանակի մէջ այն դժբաղդ ժողովրդեան մէջ գտնուած ապստամբապաշտութեան աղօտ յոյսն ալ մարելով՝ ամէն տեսակ անտէր և մոլորութիւն հոն արմատ կը ձգնի, յաւիտենական կորստեան անխռովարելի անկումն մը պատճառելով, ինչպես որ այսչափ տարիներու տխուր փորձն ալ յայտնի կը ցուցընէ, և սրբոց Հարց առածին ստուգութիւնը կը հաստատէ, թէ սուրբ քահանայ մը իր սրբացուցած ժո-

պես հարկաւոր ցոյց կը տրուին։ Եւ վերջապես երրորդ մասին մէջ ալ սրբազրիւնը առանալու իրեւ արկրորդ միջոց «գործքեր» առաջարկելով, քահանային մը հաւատարիմ եւ առաքելական գործքը եւ գրաւոնութիւնները սրբագրելու կերպին վրայ կը խօսուի։

Այս գիրքոյկը Եւրոպիոյ մէջ շատ մը լեզու թարգմանուած՝ եւ աւելի ազգաց մէջ աւելնալով օգուտներ, եւ վարուց հոգոգութիւնք սրանչելիքներ ըրած ըլլալով, ուրիշ բանի չեմ փափաքիր, երբ ոչ նոյն հոգեւոր արդիւնքը սիրելի Ազգիս քահանայից մէջ ալ տեսնուելին, որուն օգտին համար այս փոքր աշխատութիւնս կը նուիրեմ՝ ի վնճագոյն փառս մեծի Աստուծոյ, եւ՝ ի պատիւ սրբոյն Յովհաննէս Աստուածահօրը։

ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՅ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Քահանայական Սրբութեան հարկաւորութիւնը — Այսպիսի սրբութեան մը նկատմամբ ի՞նչ էինք անցեալին մէջ — Ի՞նչ է ներկայ վիճակնիս — Ի՞նչ պիտոր ըլլանք ապագային մէջ։

1. Մարդ, ո՛ւ եւ իցէ նպատակ մը իրեն կարգած եւ աւելի ամենակարեւոր վախճան մը դրած տեսնը, ամէն բանէ յառաջ պէտք է որ զանիկայ ձեռք բերելուն հարկաւորութեանը վրայ աղէկ մը համոզուի։ Ուստի քահանայի մը Աստուծոյ իրմէ պահանջած սրբութիւնը առանալու եւ կատարելագործելու համար պէտք եղած այլեւայլ միջոցներուն վրայ մանաւանդ խօսք մը չըրած, պատշաճ է որ այսպիսի սրբութեան մը անհրաժեշտ հարկաւորութիւնը ցուցընենք։

Եւ ահաւասիկ իրեք գլխաւոր խորհրդածութիւններ, որոնցմով կը վախճագինք որ կարդացուի գլխուկիս այս առաջին մասը։

Ա. Քահանայ մը երբեք չի կրնար ինքը զինքը չափազանց սուրբ կարծել, իւր պաշտամանն բարձրութեան պատճառաւ։

Բ. Շատ քահանայք հեռի են իրենց պէտք եղած սրբութենէն։

Գ. Քահանայք որչափ աւելի սուրբ ըլլան, այնչափ աւելի զԱստուած կը փառաբանեն, աւելի հոգի կը փրկեն, եւ իրենց անձնական փրկութեան վրայ ալ աւելի ապահով կ'ըլլան։

Այս խորհրդածութիւնները բաւական պիտոր ըլլան զգուշացընելու զմեզ, գժբաղդաբար ընդհանուր եւ զանձ հակման դէմ, զոր ունինք հանդիսատ ապրելու. երբ հասած կը կարծենք այնպիսի սրբութեան, որով բաւական ապահով կը սեպենք զմեզ յաւիտենական կորստեան վտանգէն: Ո՛չ, հիմայ երկինքը գտնուած ոչքափ բիւրաւոր հոգիները գժոխքին դատապարտուած պիտոր ըլլային, եթէ զոր օրինակ, սուրբ Ֆրանչիսկոս Քասիերեան մը, կամ սուրբ Վինչէնցիոս Ֆէրերեան մը, եւ ուրիշներ այսպէս մտածած կամ վարուած ըլլային:

ԳԼՈՒԽ Ա.

Քահանայի մը համար սրբութեան ամենամասնաւոր հարկաւորութիւնը — Նոյն հարկաւորութեան ապացոյցներ:

2. Ամենագիւրին է քահանայական սրբութեան հարկաւորութիւնը, ըստ որում պատրաստ եւ ամենազօրաւոր միջոցներ կը մատակարարէն սրբոյն Պօղոսի Առաքեալն առ Տիմոթէոս եւ առ Տիտոս թուղթերը: Թէ որ մէկը այս թուղթերուն վրայ անկեղծ եւ խորին ուսում մը ընէ, անտարակոյս զգաստանալով, նիւոր համոզուի այս յայտնի ճշմարտութեանը վրայ թէ, որովհետեւ քահանայ եմ, պէտք է որ սուրբ քահանայ ըլլամ:

Եւ յիրաւի, զմեզ սուրբ ընելու համար այս հռչակաւոր Առաքեալն բերնով Հոգւոյն սրբոյ ըրած կերպ կերպ յանձնարարականներէն աւելի ազդու բան մը չի կրնար ըլլալ: Ո՛չ ոճ մը, եւ ոչ ալ խօսք մը կը գտնուի, որն որ վարուց եւ բարուց կանոն մը չի պարունակէ. եւ ամէկ միա դիր, այնպիսի կենաց ընթացք մը, կանոն մը, որ պարզ հաւատացելոյ ընթացքէն տարբեր ըլլալով մանաւանդ պէտք կը վերաբերին, եւ ատկով միայն մեզի կը յարմարին: Օրինակի համար քանի մը հատածներ կոտ դնենք առանց մեկնութեան, ըստ որում այնչափ բացայայտ են խօսքերը եւ նմանները, եւ այնպէս ալ

նպատակին ճիշտօրէն ուղղուած են, որ մեկնելը դուցէ զօրութիւնն տկարացնէ:

«Օրինակ լինիջիր հաւատացելոց բանիւք, դնացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ, մինչև դամ ես. միտ դիր ընթերցուածոց մխիթարութեան վարդապետութեան. մի անփոյթ առներ զշնորհացդ, որ ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ի ձեռնադրութենէ երիցութեան: Յայդ խորհեաց և ի դոյն կանխեաջիր, զի քո յառաջադիմութիւն ամենեցուն յայտնի լինի. զդոյշ լինիջիր անձին և վարդապետութեանդ, և ի դմին յամեաջիր, զայդ եթէ առնիցես և զանձն ապրեցուսցես, և զայնոսիկ որ քեզ լսիցեն»[1]:

«Այլ շահավաճառ մեծ Աստուածպաշտութիւնն է բաւականութեամբ հանդերձ, զի ոչ բերաք ինչ յաշխարհս, և ոչ տանել ինչ կարասցուք, այլ ունիմք կերակուր և հանդերձս, և այնու շատասցուք:... Զի արմատ ամենայն չարեաց արծաթասիրութիւն է:... Այլ դու, ով մարդ Աստուծոյ, փախիր յայնցանէ, և երթ զկնի արդարութեան զԱստուածպաշտութեան, զհաւատոյ, զսիրոյ, զհամբերութեան, զհեզութեան»[2]:

«Վշտակից լեր երբև զբարեաց զնեսուր Քրիստոսի Յիսուսի: Ոչ ոք զինուորեալ աստէն ընդ կենաս աշխարհիս պատալի:... Փութասջիր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ. ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան: Այլ ի պղծոց և ի մեռոյ խօսից մերժեսջիր»[3]:

«Այլ դու զբաղեցիր կաց յամենայնի, ճգնեաց, ըզգործս աւետարանչի գործեա, զպաշտօնդ քո կատարեալ կալ»[4]:

«Մարմիր զբարեաց մարան հաւատոյ, և բուռն հար զկենացն յաւիտենականաց յոր կոչեցարն»[5]:

Այո՛, կը կրկնենք, այս անմահ թուղթերուն մտադիր և ջերմեռանդ ընթերցումը չափէն աւելի բաւական

1 Ա. Տիմ. Գ. 12, 13, 14, 15, 16:
2 Ա. Տիմ. Զ. 6, 8, 10, 11:
3 Բ. Տիմ. Բ. 3, 4, 15, 16:
4 Բ. Տիմ. Դ. 5:
5 Ա. Տիմ. Զ. 12:

պէտք է ըլլայ յօժարակամ առաջադրութիւն մը ընելու, անխոնջ կերպով այն սրբութեան դիմելու համար, որն որ այնչափ բացայայտ վաստերով հրամայուած է:

Այսու ամենայնիւ կատարեալ կերպով համոզուելու համար ուշադիր քննութեան մը ենթարկենք այս խորհրդածութիւնները, որոնք ծանր հեղինակութեանց վրայ կրթնած, պատշաճ կը սեպենք աւելցընելու Աստուածային խօսքերուն:

3. Ընդհանուր սրբութեան նկատմամբ, ահաւասիկ քանի մը հիմնական սկզբունքներ, որոնք, ամէնքէն ալ ընդունուած ըլլալով, միայն ծանուցանելու դէմ պիտոր ըլլանք: Այն մարդ սրբութեան կոչուած է: — Զայն ձեռք բերելու համար Աստուած հարկաւոր ընորհքները կուտայ: — Երկինքը արքայութիւնը սրբոց հայրենիքն է, աղտեղի կամ անսուրբ բան մը երբէք հոն պիտոր չմտնէ: — Սրբութիւնը այլևայլ բարձր և ստորին աստիճաններ ունի: — Երկինքը ժառանգելու համար հարկաւոր չէ այս աստիճաններուն բարձրագոյնը:

Վերջին երկու սկզբունքները սովորաբար չարաչար կը գործածուին, այսինքն այն թերութեան վճռակը չքմեղ հանելու կը ծառայեն, որուն մէջ քանի քանիներ անհոգ սրտով կը գտնուին: Երբոր մէկը բորբոքուած սէր մը չունի առ Աստուած, ոչ իւր հոգւոյն սրբութեան մեծ եռանդ մը, ոչ ներելի մեղքէն զգալի սարսափ մը, և ոչ ալ ենթակայ եղած թերութեանց դէմ մեքառելու հաստատուն առաջադրութիւն մը. ասով ուրիշ բան չըներ, եթէ ոչ մահուշտի մեղքէ զգուշանալ, ուսկից քանի որ ինքը զինքը սովորաբար ազատ կը կարծէ, այնչափ աւելի եռանդունութեան կը թողու կատարելութեան մէջ յառաջադիմութիւնը, ինքը ծոյլերու հետ գաղջութեան մէջ մնալ:

Թէ որ այսպէս վարուելին պարզ հաւատացեալները արդէն չարիք մը գործած կ'ըլլային, և մեծ չարիք մը. քան որում ամենուն համար ըսուեցան այն խօսքերը. «Սրբիչքը և սուրբ լինիցիք, զի սուրբ եմ ես Տէր Աստուած ձեր[1]: Այս են կամք Աստուծոյ սրբութիւն ձեր[2]: Եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»[3]: Բայց շատ նուազ կ'ըլլար այս չարիքը եթէ այսպիսի վարմունք մը հասարակ չըլլար, զոր օրինակ, կրօնաւորաց ալ և մանաւանդ քահանայից ալ:

Շատ մը նաւակոծութեամբ մահաւիթ եղած այսպիսի վտանգաւոր ժայռէ մը խոյս տալու համար, մեքենան առջևն միշտ ներկայ պահելէ այն անուրանալի ճշմարտութիւնը որ, թէ և տարբեր ըլլան սրբութեան աստիճանները, այսու ամենայնիւ արդար համեմատութեամբ երկրեցականացը միշտ աւելի պէտք է ըլլայ. ինչպէս որ յայտնի է Աստուածային Փրկչին խօսքերէն. «Որպէս շատ տուաւ, շատ խնդրեսցի ի նմանէ»[4]:

Ուստի մենք ամէն մտհկանացուէ աւելի յաճախ և մտերմաբար Աստուծոյ հետ խօսակցելով, և այնպիսի պաշտօն մը ունենալով, զոր հրեշտակներն անգամ չեն կրնար ի գործ դնել. վճռակներուս որպիսութեանը յանձնուած ըլլալով ժողովրդեան և ազգայ սրբութիւնը, և ամէն օր ամենաընտիր ընորհայ մատուռը պանձեր ընդունելով Աստուծմէ, մի՛ թէ բաւական չայտնի չէ՞ որ աւելի սուրբ և շատ աւելի սուրբ պէտք է ըլլանք պարզ հաւատացեալներէն, որոնք որ այն ընորհքներէն մասն և բաժին չունին:

Այս արդարայն սկզբամբ է որ բարձրագոյն դասուն հրեշտակը ստորին դասուն հրեշտակէն աւելի սուրբ է: Այս սկզբամբ է որ Մեսիային մարգարէն և անմիջական կարապետը, Յովհաննէս Մկրտիչ, որն որ աշխարհքի ծանուցածը իր աչքերով կը տեսնէ, անոր ճանապարհը կ'ուղղէ, զանիկայ կը մկրտէ, անոր հետ չը լսուած յարաբերութիւններ ունի, մինչև իր մօրը արգանդին մէջ սրբացած է, այնպէս ալ նոյն Մեսիային հրատարակուած որ՝ կանանց ծննդեան մէջ անոր պէս սուրբ մը եղած չըլլայ: Վերջապէս նոյն այս սկզբամբ է որ ամենասուրբ

1 Ղեւտ. ԺԱ. 44:
2 Ա. Թես. Դ. 3:
3 Մատթ. Ե. 48:
4 Ղուկ. ԺԲ. 48:

Կայսն Մարիամ, որն որ Աստուծոյ Որդւոյն հետ այնպիսի յարաբերութիւն մը ունեցաւ, որ կարելի չէ որ ուրիշ արարած մը կարող ըլլայ ունենալու. այսինքն Մայրութեան յարաբերութիւնը: Աստուծոյ ստեղծագործ ձեռքէն ելած բոլոր արարածներէն աւելի սուրբ, աւելի կատարեալ, և ամենէն աւելի շնորհքով, արդիւնքներով և փառքով լեցուն էր: Ասոր համար է որ իւր Յղութիւնը անարատ եղաւ, որ բոլոր իւր կենդանի ընթացքը անբիծ սրբութեան մը հայելի եղաւ, որ իւր մահը հրաշալի կերպով քաղցր եղաւ, և մինչև որ Աստուած Աստուած է, բոլոր հրեշտակները և սուրբերը զինքը երբև երբեք օգոստափառ թագուհին պիտոր պատուեն ու փառաբանեն:

4. Արդ այս սկզբունքը քահանային վերածելով տեսնենք թէ արդեօք աւելի մանաւանդ սրբութիւն մը երբեն կը պատշաճի՞ թէ ոչ:

Հաստատ ըլլալով որ արարածի մը սրբութիւնը իւր պաշտօնին, և անոր միջոցաւ իւր և Աստուծոյ մէջ եղած յարաբերութեանը համեմատ պիտոր ըլլայ, ինչ տեսակ ուրեմն պէտք է որ ըլլայ քահանային սրբութիւնը: Իւր պաշտօնին հաւասար պաշտօն մը կը գտնուի՞ արդեօք:

Քահանայական պաշտօնը այնչափ վսեմ է որ, անկարելի է ձիշտ գաղափար մը ունենալ: Այնչափ մեծ է որ մարդկային միտքը մոռանելով կը շփոթի և կը ցնդի. «Ո՛վ մեծի արժանապատուութեան քահանայի», կը կոչէ Սուրբն Յերոնիմոս: Ուսոի ուրիշ բան չենք կրնար ընել, եթէ ոչ հիանալով մնալ, բայց մեկնել ուզելով յարգը կը կորսուի:

Ջննէ զքահանան իւր պաշտօնին ի և նայէ ծառայութեանը մէջ, զոր որ հաւատոյ աչքով քննելով չես կըրնար չի համղորդիլ անոր գերազանց վեհութեանը վրայ: Եւ այսպէս ալ պէտք է որ ըլլայ. վասն զի քահանան քանի որ երբև քահանայ կը գործէ, ալ հողեղէն չէ. մինչ այս Թշուառ երկրէս վեր կը բարձրանայ. և իւր քահանայական վսեմ արժանապատուութեան բարձրութեամբը կը սիրէ անոր, Աստուծոյ ձեռքը զինքը հոգևոր

և երկնային սահմանի մը մէջ գետեղած է: Աստուծոյ հետ մշտական ու անմիջական յարաբերութեան մէջ գտնուելով, հոգւոյ նկատմամբ աստուածային երկրպագելի կամաց գործադիր է. Յիսուսի Քրիստոսի ձեռամբ պաշտօնեայ, և անոր վերկագործութեան շարունակող: Ես չեմ որ կ'ապրիմ, կրնայ ըսել Պօղոս Առաքեալն հետ, (որն որ Աստուծոյ իրեն տուած բարձր աստիճանին վրայ հիացած ու զարմացած կը կանչէր). ես չեմ որ կ'ապրիմ, քահանայ ըլլալով՝ մարդկութիւնը տեղն տուաւ. և յիս կենդանի է ու կապրի միայն Յիսուս Քրիստոս: «Կենդանի եմ այսուհետև, ոչ ես. այլ կենդանի է յիս Քրիստոս»[1]:

Իբրև թէ ըսել ուզէր, Յիսուսին հետ միաւորուած եմ. ի Յիսուս փոխուած եմ. այնչափ սահել անոր հետ մարմնով կը միանամ որ իմ էութիւնս բոլորովին անոր էութեան դարձած է, ես եմ անոր աչքը, անոր բազուկը, անոր ձեռքը, անոր ոտքը, անոր մարմինը, անոր հոգին, և անոր սիրտը: «Կենդանի եմ այսուհետև, ոչ ես. այլ կենդանի է յիս Քրիստոս»:

5. Հետևինք այս քահանային իւր պաշտաման մէկուն մէջ, և տեսնենք թէ մի՛ գուցէ ըսածներուս մէջ չափազանցութիւն մը ըլլայ:

Որո՞ւն փոխանորդութիւն կ'ընէ, զոր օրինակ, երբոր իւր ընծան, օրհնութիւններովը, երգմնցուներովը կը հալածէ զատանան նոր ծնած տղու մը հոգիէն. որուն վրայ սուրբ միրոսութեամբ կը հրաւիրէ, և կ'ընդունէ զՀոգին սուրբ: Մի՞ թէ Յիսուս Քրիստոս չէ՞, որ անոր բերնով կը խօսի, որ անոր ձեռքով կ'օրհնէ, որ անոր ընծան կը սրբացընէ. և վերջապէս անոր սպասաւորութեամբ կը միրոէ «Ընա միրոեսցէ զձեզ ի Հոգին սուրբ»[2]: Այո՛, կըսէ Յովհաննէս Միրոթէց. որու վրայ որ աղաւնիին հանդչելը տեսնէք, անկիայ է որ պիտոր միրոէ: «Ընա միրոեսցէ զձեզ ի Հոգի սուրբ»:

Պետրոսը թող միրոէ, կ'ըսէ սուրբն Օգոստինոս, իւր պաշտօնն է, բայց գիտնայ որ Յիսուս Քրիստոս է որ

1 Գաղատ. Բ. 20: 2 Մատթ. Գ. 11:

իւր ձեռքովը կը մկրտէ։ Պօղոսը Թող մկրտէ, բաւլի է, բայց ինքն ալ տեղեակ ըլլայ որ Յիսուս Քրիստոս է, որ իրմով կը մկրտէ։

6. Եւ երբ այս վերջաւին ծնած արարածը իւր տղայութեան սահմանը կ'անցնի. երբ իւր հոգին Թանձրամած ամպէ մը ազատած, իւր մարմնոյն մնունդ տուող կերակուրէն տարբեր կերակուր մը կը խնդրէ. որմէն արդեօք փոխանորդութիւն կ'ընէ քահանան, տեսնելով որ այս քրիստոնեայ տղան իրեն հաստակակիցներուն հետ միացած, որոնք անմեղ դաստուհներու նման իրենց հոգւոյն բաղձութիւնը կը մակաղեն։ Որմէն անուամբ կը խօսի այս քահանան իրեն մատաղերամ ունկնդիրներուն։ Ինչպիսի՛ վարդապետութիւն կը սորվեցընէ անոնց։ Շրթունքներէն վազած խօսքերը իրենն են, թէ մանաւանդ Աստուծոյ։ Այո՛. իւր վարդապետութիւնը Յիսուսի Քրիստոսի վարդապետութիւնն է։ Մանաւանդ թէ իւր երկնաւոր Հօրը, որուն որ նոյն ինքն Յիսուս Քրիստոս կը նուիրէ։

« Իմ վարդապետութիւնս չէ իմ, այլ այնորիկ որ առաքեացն զիս »[1]։

7. Եւ երբ քիչ մը ուշ՝ նոյն այս տղան արդէն կատարեալ մարդ եղած, և միւս հաւատացեալոց ժողովքին խառնուած պիտոր դիմէ Ճշմարտութեան ամպհոնը մնիկ ընելու այն երկնային վարդապետութիւնները, որոնք անհնակիա և միտաբուխ աղբերէ յառաջ եկած՝ զուտ և մաքուր առուակի նման, կ'երթան քահանային բերնէն. այս առթին մէջ ալ որմէն կը փոխանորդէ քահանան։ Որմէն անուամբ կը խօսի։ Զոհ կը ներկայացընէ, եթէ ոչ զանիկայ, ուրն որ իրեն ըսաւ. « Պատմեա ժողովրդեան իմում զվերս նոցա[2]։ Եւ դուն քարոզեա զբանն, հաս ի վերայ ժամու և տարաժամու..... Չդործս աւետարանչի գործեա[3]։ Գնացէք... աշակերտեցէք զամենայն հեթանոսս... ուսուցէք նոցա պահել զամենայն, որ ինչ պատուիրեցի ձեզ »[4]։ Վայ իրեն, եթէ Աստուծոյ կողմանէ

1 Յովհ. Է. 16։
2 Եսայի ԾԸ. 1։
3 Բ. Տիմ. Դ. 2, 5։
4 Մատթ. ԻԸ. 19, 20։

խօսած առեն, մարդիկ չկրնան խօսելու մտաբերել։ Այլ իրեն եթէ չի վախնայ Աստուծոյ ամենատուրբ խօսքը ատանկ սրբապղծելու։ Այսկայ այնպիսի մէկ սրբապղծութիւն մըն է զոր, սուրբն Օգոստինոս, Յիսուսի Քրիստոսի իւր ամենատուրբ մարմնոյն և արեանը չափ՝ իր խօսքին պատուոյն վրայ ալ նախանձախնդիր ըլլալուն սկզբան վրայ խօսած առենը, իրաւամբ ամենատուրբ հաղորդութեան դէմ եղած սրբապղծութեան կը նմանցընէ։

8. Եւ երբ այս աստուածայնին խօսքը դէպ ի քահանային ոտքը առաջնորդելու ըլլայ Մագդաղենացիներ, Պօղոսներ և Օգոստինոսներ, որոնք արդեօք փոխանորդութիւն ընելով քահանան զանոնք խոնարհած և զղջացած տեսնելով, պիտոր ցամքեցընէ անոնց այլայնքները, և իւր պաշտամանն իշխանութեամբ արձակէ զանոնք իրենց մեղքերէն. ինչ տեսակ մարդ պիտոր ըլլայ անիկայ, որ լուսթեամբ և խորհրդաբար իր քայլերը ուղղելով եկեղեցւոյ առանձին մէկ անկիւնը և խոնարհ աթոռքի մը վրայ նստելով իր առջին խոնարհած ապաշխարողներուն քանի մը խօսք կը խօսի. և երբեմն երբեմն իւր աչքը վերցունելով համառօտ վերհուր կու տայ, և իրեք խօսքով դժոխքը գոցելով երկնից դռները կը բանայ, և ակնթարթի մը մէջ մեղաւորները սուրբ կ'ընէ։

Արդեօք մարդ է, թէ նոյն ինքն Աստուած, որ կը նստի այս ողորմութեան աթոռանը։ Քահանայք Յիսուսի Քրիստոսի, մենք ինչ կ'ընենք այս նուիրական և սուրբ աթոռին մէջ։ Թողութիւն կու տանք, այո՛, բայց մի թէ մեզի դէմ եղած նախատանաց թողութիւն կու տանք։ Ո՛չ երբեք։ Այսու ամենայնիւ օրինքը չի հրամայեր որ նախատուած անձին թողութիւն խնդրուի։ Ինչո՞ւ համար ուրեմն այս զղջացած մեղաւորները մեզի կը դիմեն թողութիւն խնդրելու համար։ Զաստուած նախատեր են, և կը դառնան մարդին թողութիւն կ'ուզեն։ Ո՛վ խորհուրդ գերահրաշ մեծութեան, մարդուն համար, և անսահման բարութեան, Յ Աստուած։

Այո՛, քահանայ Յիսուսի Քրիստոսի, դուն անոր փոխանորդութիւնը կ'ընես, նոյն ինքն Յիսուսի Քրիստոս

սի պաշտօնը կը կատարես։ Յիսուսին անուամբ՝ և անոր քեզի տուած աստուածային իշխանութեան զօրութեամբ է, որ դուն արքունական ճոխութեամբ կ'ըսես մեղաւորին. « Ես արձակեմ զքեզ »։ Եւ այնչափ սոսկ է որ, դուն այսպիսի մեծաշուք պաշտամանի մէջ Աստուծոյ վոխանորդ ես, որ ինչպէս ազէկ գիտես, եթէ երկրի դատաւոր մը ուզէր բռնութեամբ այս քու պաշտօնիդ խառնուիլ, և Աստուծոյ որդւոցմէ քու սրտիդ մէջ աւանդ դրուած գաղանիքը գիտնալ, դուն « պարտաւոր ես » համարձակաբար ըսելու. հարցուցած բանէդ ամենևին տեղեկութիւն չունիմ։ Եւ ինչո՞ւ համար։ Վասն զի, չէ՛ թէ երբեւ մարդ, այլ երբեւ Աստուծոյ ներկայացուցիչ մը գիտես խոստովանութեամբ քեզի յայտնուածները։ Կրկնենք. դուն ուրեմն Աստուծոյ վոխանորդ ես, անոր անուամբը կը դատես, ուրեմն ինչ տեսակ պաշտօն է քու վիճդ. ինչ չարմանալի պաշտօն, որ ղՀրէական պաշտօն, որ ղՀրէակաները կը չփոթէր, և գայթակղութեան առիթ էր անոնց, ուսկից գրգռուած բարկութեամբ և անարդաբար կ'ըսէին.

« Ո՞վ կարէ թողուլ զմեղս. եթէ ոչ միայն Աստուած »[1]։

9. Անցնինք աւելի մեծ սքանչելիքներու, սեղանոյն սքանչելեաց, որուն վրայ, դուն ով քահանայ, ոչ միայն զՅիսուս Քրիստոս կը ներկայացնես, այլ նաև կը ծնանիս։ Հոս խօսքը կը պակսի. ամէն մարդկային մեկնութիւններ անբաւական են այսպիսի գերազանց բարձրութիւն մը բացատրելու, այնպիսի հրաշալեաց աշխարհքի մը մէջ կը գտնուինք, որ եթէ կենդանի հաւատք ունինք, ուրիշ բան չենք կրնար ընել՝ եթէ ոչ երկրպագել երկոցս սուրբ Աստուծոյ, զորն որ մեր խօսքին զօրութիւնը երկնքէն ձեռքերուս մէջ կ'իջեցընէ։

Քահանան խորանին առջեւ։ Ո՛վ Աստուած իմ, ինչպիսի՛ սեսարան։ Մարդ մը, որուն խօսքով Աստուած երկնքէն երկրիս վրայ կ'իջնէ, երբ առանց վանկ մը փոխելու, և երբեւ թէ նոյն ինքն Յիսուս Քրիստոս ըսէր, կ'արտաբերէ. « Ա՛յս է մարմին իմ » խօսքերը։ Մարդ մը որ չորս բառ հնչելով դոյացափոխութեան հրաշքը կը

1 Մարկ. ԺԵ. 7։

գործէ. Աստուծոյ որդին պատարագին քարին վրայ կը զոհէ. երկնային արքունեաց պալատականները յափշտակուած հիացման մէջ կը պաշարէ՝ երկրիս վրայ անթիւ չնորհաց գանձեր անձրեւել կու տայ, բիւրաւոր մեղաւոր ոգիներ վրայ սպառնացող կայծակը կ'արգիլուի, քաւարանին կրակներէն հոգիներ կ'ազատէ, և չ'ազատածներուն պատիժներն ալ քաղցրութեամբ կը թեթեւցընէ։ Մարդ մը, որ իր կենաց ամէն օրերուն մէջ այսպիսի հրաշքներ կը գործէ ու կը նորոգէ, առանց Յիսուսէ Քրիստոսէ լրեն խօսքին դիմադրութիւն մը դանելու, այսպիսին իրօք մարդ է արդեօք։ Հրեշտակները՝ որ իրեն բոլորակը պըսակ կը կազմեն, և եթէ երկնային տեղծուածներուն վրայ անարդ ցանկութիւններ կարենային գտնուիլ, այսպիսի պաշտօնի մը բոլոր սրտանց պէտք էին նախանձիլ. հրեշտակները՝ որ Աստուծոյ այնչափ մեծութիւնները, թէև չար և թշուառ մարդու վրայ հաւաքուած կը տեսնեն. հրեշտակները, կ'ըսեմ, մի թէ պարզ մարդ մը կը կարծեն զանիկայ, որն որ ամէն օր իրենց յարգած և պաշտած Աստուածը կը զոհէ։

10. Սակայն բաւական է այսչափ հրաշալեաց վրայ խօսքերնիս, որն որ մի գուցէ չափէն աւելի զարմացմամբ հոգիներուս կարողութեան սահմանը անցնի. աւելի՝ դեռ ևս այսպիսի կարգէ դուրս բաներու վրայ ապշած միտքերնիս ամփոփելով, ձեռքերնիս սրտի մոտը խոնարհեցնելով վրայ դնելով՝ հարցընենք մենք մեզի, թէ այսպիսի արժանապատուութիւններ, զիրենք ունեցողներէն միայն միջակ սրբութիւն մը պահանջելու գոհ կ'ըլլան։ Հարցունենք մենք մեզի, թէ քահանան, որն որ առանց ամեհնալի իրաւունք մը ունենալու, այսպիսի վսեմութեան մը բարձրացաւ, իրեն վայելուչ գիւրքին մէջ կը գտնուի. երբ, չենք ըսեր մեղաւորներուն հետ, որն որ մեծ սարսափ պիտոր պատճառէր, այլ քրիստոնէական կատարելութեան սորին աստիճանին վրայ կեցած ըլլայ։ Հարցունենք, թէ արդեօք այս քահանան առանց դողալու և ամչնալու՝ կրնայ տեսնել այնչափ հաւատացեալներ, որոնք պաշտօնով սորին ըլլալով, սրբութեամբ

իրմէ չատ աւելի վեր կը դասուին: Հարցունենք, Թէ ինչն ալ իր վրայ այն բարձր համարմունքը ունի, զոր ունին այնչափ բարեպաշտ և աստուածասէր անձինք, որոնք նոյն ինքն Աստուծոյ շուքը կը տեսնեն անոր վրայ. և Հոգւոյն սրբոյ գալրոցին մէջ կրթուած, իւր սրբութիւնը պաշտօնին բարձրութենէն, և քահանայութեան աստուածայնութենէն կը չափեն. ինչպէս որ ինքն ալ այնպէս ընելու պարտաւոր է:

Այս հարցմունքներուն մենք ալ նոյն պատասխանը կուտանք, ինչ որ Իւթաքանչիւր ոք իւր խղճին տաճարին պիտոր տայ:

Ամէն օր սեղանին առջին ելլել Ցիսուս Քրիստոս զոհելու, և անոր կենարար մարմնով և արեամբը հեթակրելու համար. ով կրնայ յանդգնիլ ըսելու որ այսպիսի պաշտաման մը անարատ սրբութիւն մը պէտք չ'ըլլայ:

Մեղաւորները Աստուծոյ հետ հաշտեցընելու, գաղթերը եւանգով բորբոքելու, արդարները կատարելագործելու, և փրկութեան Ճամբուն և քրիստոնէական կատարելութեան մէջ այնչափ հոգիները մխիթարելու, լուսաւորելու և անոնց առաջնորդելու համար մանաւոր առաքելութեամբ խորհրդական առեւանը նստիլը գաղջ և ծոյլ քահանայի գործ է, Թէ մանաւանդ սուրբ քահանայի:

Աստուծոյ խօսքը քրիստոնէ ժողովրդեան աւետարանելու համար ամպիոնը ելլել, աւետարանական վոզը բերան առնել, սուրբ աւետարանը մեկնել, և անոր խիստ սկզբանց Ճաշակը ցոյց տալ, ամէն առաքինութիւն քաջողել, ամէն մոլութիւն քակել կործանել. այսու ամենայնիւ վարքը քարոզածին չը համաձայնեցընել, մի Թէ առաքելոյ և հաւատարիմ ծառայի գործ է. և այսպիսի ծառայութիւն մը Աստուծոյ ընդունելի կրնայ ըլլալ:

Ժողովրդեան աչքին առջեւ երկրիս վրայ Ցիսուսի Քրիստոսի պատկերը ըլլալ, անոր պաշտօնեան և գործակիցը ըլլալ, անոր պէս իւր սուրբ պաշտօնը վարել, մեղաւորներու, վշտացեալոց և աղքատներու եռեւէն վա-

զել՝ զամէնքն ալ փրկելու, և զամէնքն ալ աստուածային սիրով բորբոքելու համար, արդեօք սառած սրտով, տկար աստուածպաշտութեամբ, և մանաւանդ սովորական և հասարակ սրբութեամբ կրնա՞ն ըստ պատշաճի և ըստ վայելչութեան ի գործ դրուիլ:

11. Ի վերայ այսը ամենայնի քահանայի մը համար սրբութեան հարկաւորութիւնը այնչափ և այնպիսի հաստատ և դրեթէ չջափելի սկզբանց վրայ հիմնուած է, որ քրիստոնէական սրբութեան Ճամբուն մէջ քիչ յառաջ գացած, և այսպիսի սկզբունքներէ քիչ և տկար տեղեկութիւն ունեցող մարդ մըն ալ, պարզապէս պիտոր տեսնէ Թէ ինչ աստիճան սրբութիւն ձեռք բերելու մանաւանդ պարտաւորուած ըլլայ քահանայ մը:

Կնթադրենք վայրենի մարդ մը, այն ողորմելի արարածներէն մէկը, որ մարդու միայն կերպարանքը կը կրեն. և ինչ կերպարանք. իրեն հայրենի անտառներէն և գաղանները մէջէն առնելով բերուի, և մեր սուրբ կրօնքին մէջ կրթուի, չեմ ըսեր հիմնական կերպով, այլ այնչափ որ քրիստոնէութեան հաւատոյ մասերուն և դլխաւոր վարդապետութեանց վրայ արդար գաղափար մը ունենայ, այնպէս որ, զոր օրինակ, իրեն ըսուի Թէ, հազար ուղիք հարիւր եօթանասուն և վեց տարի յառաջ մարդիկ ընդհանրապէս սպականած և նուաստացած, ուսուի և իրենք իրենցմէ աստուածային արդարութեան հաւատացում ընելու և արդար ցասումը լլեցունելու անկարող ըլլալով, աստուածային յաւիտենական Բանը, Ջմարիտ Աստուած՝ զմարդը փրկելու համար մարդացաւ, և ասոր համար ալ ախոռի մը մէջ ծնաւ, իր Ճակատին քրտինքովը օրական հացը Ճարեց, երկար և դառնակեաց տանջանքներ կրեց, և իր այնչափ ցաւալի մահուան նախընթաց օրը ամէն կերպիւ իրեն նման մարդկանց հաղորդեց իր ունեցած խլճանութիւնը, զորոնք իրեն յաջորդ, փոխանորդ և պաշտօնեայ, մէկ խօսքով ըսեմ, ուրիշ ինչն մը ընտրած ըլլալով, ըսաւ անոնց այս յաւիտենական յիշատակաց արժանի խօսքերը. — Ինչպէս որ իմ հայրս ղիս խաւրեց, այնպէս ալ ես ձեզ կը

խաբեմ, գացէք, քարոզեցէք, միւսեցէք, սեղանին առ-
ջև եղէք զիս ղՀեղու համար, մեղքը կործանեցէք, դե-
ժոխքը գոցեցէք, երկինքը բացէք, ահաւասիկ Թէ մեկին
և Թէ միւսին բանալիները: Վերջապէս մարդկային փըր-
կութեան համար ինչ որ ես ըրի, դուք ալ նոյնը ի գործ
դրէք: Իմ իշխանութեանս աւանդապահ եղէք, և աւելի՛
իմ ձեղի տուած իշխանութիւնս դուք ալ ուրիշներու
հաղորդեցէք, հիմակ հաստատած քահանայութիւնս
մշտնջենաւորեցէք, որպէս զի մինչև կենդանիները և մե-
ռածները դատելու համար եկած օրս աշխարհքի վրայ
այնպիսի քահանայք գտնուին, ինչպէս որ ես եղայ մահ-
կանացու կենացս մէջ: Քահանայք, այսինքն մաքուր բա-
րոյականի մը եռանդուն քարոզիչներ, ղՀոգիները փրկող-
ներ, զանոնք սատանային ձեռքէն կորզելու համար ան-
խոնջ աշխատողներ, մարդկային չարութեան, և ա-
տուածային արդարութեան մէջ մտած զօրաւոր միջնորդ-
ներ, և ի պաշտօնէ սուրբ և պարապանգուածի ան-
դադար աշխատելու համար, որպէս զի զմեղաւոր մարդը
այնպիսի սուրբ Աստուծոյ մը հետ հաշտեցընեն: — Այս
չափը միայն ըսուի, և ոչ այլ ինչ այն ողորմելի վայրենի
մարդուն, որն որ առաջին անգամ կը լսէ այսպիսի ճըշ-
մարտութեանց քարոզութիւնը. և դառնանք երեն հար-
ցընենք, Թէ արդեօք ըստ իւր կարծեաց՝ ընկերութեան
մէջ ո՞ր մարդը պէտք է որ աւելի սուրբ, աւելի կատա-
րեալ և աւելի առաքինի ըլլայ: Կը կարծէք Թէ պիտոր
տարակուսի՛ խակ և խակ պատասխանելու Թէ այդ մարդը
պէտք է քահանան ըլլայ:

12. Բայց այսպիսի ճշմարտութեան մը ապացու-
ցումը նոր աշխարհքին վայրենիներուն մէջ վիճաբերու
հարկ չկայ, նոյն խակ մեր կրօնքին մէջ ալ կրնանք գտնել:

Մեր աստուածային Փրկչին մահկանացու կենաց
ժամանակները, բազմաթիւ ամբոխներ եռակէն կ'եր-
թային անոր քարոզութիւնները լսելու, կը հարցունէին,
կը զարմանային. և անոր գործած հրաշքները տեսնելով
կը գովէին անոր վարդապետութեան սրբութիւնը, և
բարձր ձայնով կը խոստովանէին անոր աստուածու-

թիւնը: Ինքը անտարակոյս, կաթոգին սիրով զամէնքն
ալ կը սիրէր, և այս սէրն ալ ամէն աւելի ըրած ողոր-
մութեան գործքերովը կը յայտնէր: Եւ Թէպէտև ա-
մէնքն ալ անխտիր իրեն սիրելի ըլլային, այսու ամենայ-
նիւ քանի մը ամենասիրելի և մտերիմ բարեկամներ ու-
նէր, զորոնք իր գաղտնի խորհրդոց յայտնելովը կը
պատուէր, և զորոնք չըսաով մը իբրև իրեն փոխանորդ
և պաշտօնեայ, իւր աստուածային պաշտօնը չըսաով մը
վարելու պատուոյն և փառացը կ'որոշէր:

Ի՞նչպանչելիր ոք կը հասկընայ որ անոր առաքելոց և
աշակերտաց վրայ է խօսքերնիս: Հարցընենք ուրեմն.
այն ժամանակները ատենցմէ ո՞վ աւելի պարտաւորուած
էր սիրելու զՅիսուս Քրիստոս: Ո՞սկից կրնար ինքը ա-
ւելի սէր, կատարելութիւն և եռանդ պահանջել: Մի՞
Թէ իւր առաքեալներէն և աշակերտներէն չէ՞ արդեօք:
Մի՞ Թէ ասկից խորհրդածելով չէ՞, որ մեծ սոսկումով
կը մտածէինք Յուդային մատնութիւնը և Պետրոսին ու-
րացութիւնը:

Անտարակոյս անսահմանաբար կ'ատէինք Հրեից ա-
տուածասպանութիւնը. բայց աւելի ևս կը գարշէինք նաև
Յուդային նենդաւոր և սրբապիղծ մատնութենէն: Բար-
կութեամբ կը լեցուինք, մտածելով որ առաքեալ էր և
մատնիչ եղաւ. իւր սրտին մէջ այնչափ սէր պէտք էր ու-
նենար, որչափ որ լեզուն ունէր. որ այն ասոլիճան սուրբ
պէտք էր ըլլար, որչափ որ վատահամբաւ եղաւ: Ատոնք
մտածելով կ'ըսեմ, այն ատոլիճան կը զարհուրինք, որ
սրտերուս մէջ ղդատաստանիս բացատրելու բառեր
չենք գտներ: Իբրև առաքեալ՝ եռանդուն սիրով զՅիսուս
սիրելուն տեղը, իր Թշնամիներուն ձեռքը մատնեց զանիկ
կայ. իբրև առաքեալ՝ հոգիները փրկելու հոգ ու խնամք
ունենալու տեղը, իր հոգին ալ կորսնցուց. իբրև առա-
քեալ՝ փոխանակ բոլոր աշխարհքի վնասութեան առիթ
ըլլալու, աւելի անոր գոյութիւնն և նշոյլից պատ-
ճառ եղաւ և է:

Այս հակադրութիւնները այնպէս զգալի են, որ կը
զգուեցընեն, և տեսակ մը անձկութիւն կ'պղտեն, յոր-

մէ չէնք կրնար գմբէզ ազատել։ Ոսկիէ յատակ կուգայ այսպիսի զգայմունք մը։ Մի թէ անկից չէ՞ որ յայտնապէս կը տեսնենք և կը զգանք որ, Յիսուսին աւելի՞ մօտ գտնուող անձ մը երաւամբ աւելի սրբութեան մը պարտաւորուած ըլլայ։

13. Քահանայական սրբութեան կարևորութիւնը ապացուցանելու համար, այս մեր առաջարկած ճշմարտութիւնները ամէնքն ալ աղտու համառօտութեամբ ամփոփուած են աստուածային Փրկչին մէկ վճռոյն մէջ, զորն որ արդէն ուրիշ տեղ յառաջ բերած ենք. «Որսամ շատ տուաւ շատ խնդրեացն ի նմանէ»[1]։ Արդ քահանայն աւելի ոմէ շնորհքներ կը ստանայ, եթէ իր կոչմանէ անհաւատարմութեան և ընդդիմութեան արգելքներ գնելու չ'ըլլայ։ Ո՞վ կրնայ պատմել այն օրհնութիւնները և երկնային պարգևները, որ քահանայ ձեռնադրուած օրը՝ իւր գլխուն վրայ կ'անձրևեն, եթէ օրինաւորապէս Աստուծմէ կոչուած ըլլալով՝ ինքն ալ պարտաւորուած տրամադրութեամբ ընդունի զձեռնադրութիւնը։

Բարի և օրինաւոր կոչման մը համապատասխանելու համար հարկաւոր եղած շնորհքները՝ Աստուած երբեք չի խնայեր, եթէ կոչուածն ալ պատրաստուած ըլլայ, և այս շնորհքներն ալ աւելի կամ նուազ առատ են ըստ կոչման վիճակին։

Արդ այս սկզբան վրայ ճառելով, որուն ոչ ոք կը հակառակի, ինչպիսի՞ շնորհայ կարօտ չէ արդեօք այն ձեռնադրելի երիտասարդը, որն որ առաքինութենէ տկար և անփորձ, կը պատրաստուի Աստուծոյ լեռը ելլել, անոր յատուկ մտերիմը, մեծագործ դիտաւորութեանց գործակիցը, Որդւոյն պատարագիչը, և յանցաւոր երկրի ու բարկացած երկնքի մէջ միջնորդենաւոր հաշտարար և միշտորդ ըլլալու։ Ի պաշտօնէ պատրաստուրուած ոչ միայն իր հոգին՝ այլ նաև իւր խնամոցը յանձնուած այնչափ բիւրաւոր հոգիները փրկելու համար աշխատելու, ո՞վ կրնայ կասկածիլ իր կոչմանէ արգելք մը չի

1 Ղուկ. ԻԲ. 48։

դրուած առեներ, թէ իրեն և թէ իւր եղբարց պէտք եղած շնորհայ լրումը առնելուն վրայօք։

Դարձեալ ո՞վ կրնայ գիտնալ թէ քանի՛ քանի հոգևոր պարգևներ իջած ըլլան այս ձեռնադրելի երիտասարդին հոգւոյն վրայ երբ ընդունած ձեռնադրութեան պատճառաւ, իրաւամբ կրնայ իրեն ըսուիլ. «Դու ես քահանայ յաւիտեան»։ Ան առեներ, անձառելի խորհուրդներ, զորոնք միայն Աստուած գիտէ, կը կատարուին այն հոգւոյն վրայ, որոնց արդասիքը արտաքուստ ալ կը նշմարուին նորընծային յուզմանց մէջ, յետոյ իրեն հաւաչանաց, ապա արցունքներուն և վերջապէս առաքինութեան և սրբութեան երևելի գործոց մէջ։ Այո՛, երբ ճշմարիտ է իւր կոչումը, երբ այսպիսի կոչման մը հաւատարիմ գործադիր կ'ըլլայ, երբ հաստատ մտքով զԱստուած իրեն բաժին առնելով՝ սրտանց և ցմիչտ կը հրաժարի աշխարհքիս ամէն ունայնութիւններէն և զուարճութիւններէն. ամէն օր ըմպած Յիսուսի Քրիստոսի սուրբ և անբիծ արիւնը՝ շնորհաց անձրևի փոխուած՝ կ'իջնէ իւր հոգւոյն վրայ, և կը հալորդէ իրեն այն հաւատքը, որ սքանչելիքներ կը գործէ. այն առաքինութիւնները, որ հաւատացեալց չինութիւն կուտան. այն սէրը, որ կը բորբոքէ, այն եռանդուն նախանձը, որ անզեղջ մեղաւորներն անգամ կը շարժէ։ Ահասկի այս աստուածային պարգևներուն արգիւնքը, երբ քահանային սիրտը զանոնք ընդունելու արժանի կ'ըլլայ։ Եւ քահանային տրուած այսչափ անգին և ամենաընտիր շնորհայ նկատմամբ, Աստուած ձիչտ համար մը պիտոր էպահանջէ՞ արդեօք։ Աստուած, որ այս շնորհքները առատապէս կուտայ, միայն ասոր համար՝ որ քահանան զինքը և իր բաղդատիքը գտնուածներըն սրբացընէ. Աստուած, որ գիտէ թէ այս շնորհայ ամէն մէկը, Յիսուսի Քրիստոսի սուրբ արեանը գնովը գնուած են, կը թողնէ որ ատանկ անգործ և ապարդիւն մնան։ Աստուած պիտոր համբերէ՞ որ պարապ տեղ վատնուին, առանց իրենց սքանչելի նպատակին ծառայելու, որ է անձին սրբութիւնը, որուն համար որ միայն տրուած են։ Եւ իբրև

արդար հատուցում մը կրնայ ընդունիլ Աստուած մեկ հատարակ սրբութիւն մը, կամ եթէ պատշաճ է ըսել, աշխարհական սրբութիւն մը: Ո՛չ, երբեք չի կրնար ըլլալ: Աւելիայ Աստուծոյ յաւիտենական արդարութեան դէմ եղած անկարգութիւն մը պիտոր ըլլար, որն որ ըսաւ. « Որուամ չատ տուաւ չատ ինդրեսցի ի նմանէ »[1]:

14. Բայց դիցուք թէ Աստուած քահանայէն իր անձնական փրկութեան պատշաճ սրբութիւն մը չի պահանջեր. և քահանան ալ սուրբ չ'ըլլալով՝ ո՛և իցէ վտանգէ ազատ ըլլար, այսու ամենայնիւ հաստատ կը մնայ իրեն ամէն կերպիւ սրբութեան հետամուտ ըլլալու պարտաւորութիւնը. ըստ որում իւր պաշտօնը աղէկ վարելու համար սրբութիւնը էականապէս հարկաւոր է, ոնուն որ քահանայ ըլլալով խիստ պարտաւորութեամբ կապուած է հոգւոց փրկութեան անխոնջ և անդադար աշխատելու:

« Քահանան հոգւոց փրկիչ է ». ահաւասիկ իւր տիտղոսը. իւր ամէն մտածմունքները, ամէն խօսքերը և ամէն գործքերը հոգւոց փրկութեամբ՝ Աստուծոյ վտանգ սկիզբ է ուղղուած ըլլան: Ահաւասիկ իւր պարտաւորութեանց էութիւնը, իւր վիճակին պարտքը, և հիմնական կէտը, որուն վրայ պիտոր դառնայ աստուածային դատաւորին հարցափորձը, երբ անոր ոտքերը ինկած՝ պիտոր լսէ այն ահարկու խօսքերը. « Տո՛ւր ղհամար անտեսութեան քո »[2]:

Բայց եթէ այսչափ խիստ է իւր պարտաւորութիւնը, ինչպէս պիտոր կարենայ ի գործ դնել զայն, սանց սուրբ ըլլալու. ինչ եռանդով մղուած հոգիներուն հաւէն պիտոր վազէ, երբ նոյն իսկ իւր հոգւոյն համար թոյլ և գաղջ է: Ի՞նչ բոց կրնայ ուրիշն հաղորդել, երբ իր անձին համար սառած է: Ի՞նչ զոհողութիւն պիտոր կարենայ յանձն առնուլ իւր եղբարց հոգիներուն փրկութեան համար, երբ իր անձին համար ամենաթեթև զոհ մըն ալ յանձն առնուլ չ'ուզեր: Սուրբ բերը արքայութեան ճամբուն մէջ անթիւ ժողովուրդներ

1 Ղուկ. ժբ. 48:

հաւնեբէն կը քաշէն. ինչո՞ւ համար. վասն զի, երեսնք սուրբ ըլլալով, ուրիշներուն ալ կը հաղորդեն երեսց լուսութիւնը և առաւութիւնը: Իսկ արդ ինչ կրնայ տալ մեկը, որ գաւարկ է, և իւր պարապութիւնը լեցնելու համար անհոգ կը գտնուի:

15. Աստն հաւանդեամբ սրբութեան դիմելու և իրօք ալ սուրբ ըլլալու անհնարինելի հարկաւորութիւնը զգալու մեծ վախագով մը սրտերնիս բորբոքելու զօրաւոր միտումէն մեկն ալ այս է, որ նոյն ինքն աշխարհականները և աւելի յարերը կ'ուզեն մեր վրայ տեսնել ինչ որ իրենք ունենալու բոլորովին անհոգ են, կ'ուզեմ ըսել, արտաքոյ կարգի սրբութիւն մը, և ունեցած վեմ արժանապատուութիւններուս համեմատ կատարելութիւն մը:

Այո՛, այս գայթակղեցուցիչ մարգիկ, որոնց ճամբան խաւար է, կեանքերնին մըլութիւն. այս ոհնայնամիտ և տգէտ մարգիկ, որոնք կրօնքէ և հաւատքէ ամենևին լուր չ'ունին, և սանց վերաբերեալ բաներու տեղեկութենէն բոլորովին զուրկ են, կը պահանջեն որ քահանան, զինքը իրենց չարախօս լեզուաս խարազանելու պատժոց սպառնալէք, ան սահման հատարակ սրբութեան սահմանէն վեր բարձրանայ, որչափ որ իրենք ապահանութեանց անդունդներու մէջ ընկղմած են: Թէ որ քայլ մը այս ճանապարհէն հեռանալու ըլլայ, իրենք են, որ ամենէն յառաջ զքահանան ուղիղ ճամբայ կը կանչեն. և եթէ իրենց շառախօսութեանը մոխիկ չ'ընէ, երեսն ի վեր կ'ըսեն այն կծու երգիծաբանութեամբ, և քահանայի մը համար նուաստացուցիչ խօսքերով, երբ թէ այնպես չ'ըլլար, ինչպէս որ իրեն վիճակը կը պահանջէր, իւր դիրքին պատիւ չի բերեր, աշխարհական մըն է, և հոգեւսանէն զատ քահանայութեան ուրիչ ընորհք մը չ'ունի. մինչև անգամ, ինչպէս որ քանի անգամ սրբութեան անհնարին յաւուրը լսած ենք, իրեն թէ ինքն ալ իւր քարոզածին չի հաւատար:

Իսկ սուրբ քահանային համար բանը բոլորովին տարբեր է: Աստնաշխրը ամբարիշտներն անգամ զինքը կը յարգեն և կը գովեն: Այո՛, նոյն ինքն լկտիներն անգամ,

որոնց հոգին կարծես թէ տրմէ զանգուած մը ըլլայ, այսու ամենայնիւ իրենց ապականած սրտերէն պատշաճ գովասանք մը կրնան հանել սուրբ քահանայից վրայ, և նոյն ինքն Թուխնաւոր լեզուներն ալ նեղբողը կ'ընեն:

Իւր քաղցրութիւնը, պարկեշտութիւնը, անկեղծ սարդութիւնը, անչահասիրութիւնը, առանձնացած և ուսումնասէր կենաց ընթացքը և ուրիշ ամէն առաքինութիւնները, որոնք միշտ իրեն ընկերակից են, ամենուն համբոյրնքը իրեն կը գրաւեն. և չարերն ալ բարենեպուն պէս կը սոխպեն ըսելու թէ՝ ահաւասիկ Ճշմարիտ քահանան, ահաւասիկ սուրբ քահանան, ահաւասիկ իւր աստուածային պաշտաման յարգութիւնը և կատարելութիւնը գիտցող և ճանչցող քահանան:

ԳԼՈՒԽ Բ.

Նոյն նիւթին շարունակութիւնը — Քահանայական սրբութեան հարկաւորութեան նոր ապացոյցներ:

16. Ա՛յնչափ ծանր են մինչև հիմայ ըրած չատ մը խորհրդածութիւնները որ զարմանալու տեղի չի մնար եթէ ամենազօրաւոր հեղինակութիւնները այնչափ աղեղեցութեամբ պնդեն քահանայական սրբութեան հարկաւորութեանը վրայ: Թէ որ հին օրինաց մէջ այսպէս չատ մեծ սրբութիւն մը հրամայուած կը տեսնենք այն քահանայութեան համար, որն որ միայն ուրիշի մը ստուերն էր, հապա ո՞րչափ աւելի կատարեալ պիտոր ըլլայ Ճշմարիտ քահանայութեան համար պէտք եղած սրբութիւնը. որն որ, ըստ վկայութեան բոլոր աշխարհքի, հինէն այնչափ վեր է, որչափ որ երկինքը երկրէս:

Յայտ մասին ի՞նչ կ'ըսէ Հոգին սուրբ: Սուրբ Պօղոս առաքեալը այս Հոգւոյն միջնորդն է. տեսնենք ուրեմն թէ ի՞նչ կ'ըսէ այսպիսի սրբութեան մը նկատմամբ: Կը հրամայէ որ «Աստուծոյ անտես և պաշտօնեայ ըլլալով անարատ գտնուինք»: Մեզի կ'արգիլու որ «Յանդուգն բարկացող Թշնամանող և զօշաքաղ»[1] չ'ըլլանք. և վո-

1 Տիտ. Ա. 7:

խանակ կը պատուիրէ որ «բարեսէր» ըլլանք, «խոնարհ արդար և սուրբ»: ԵՒ հաւատացելոց ալ չենուելիւն պատճառելիք խօսակցութեան և ընկերներուս հետ կենցաղավարութեան մէջ՝ սիրով, հաւատքով և ժուժկալութեամբ: Եւ այսչափով դեռ չ'ըլլալով իւր եռանդուն նախանձայուզութեամբ կը յիշեցնէ մեզի աստուածպաշտութեան և ամէն առաքինութեան թագաւորութիւնը սրտերնուս մէջ հաստատելու պարտաւորութիւնիս. ըսելով թէ, — ո՛վ մարդ Աստուծոյ, հեռու կեցիր այն ամէն բանէն՝ զոր Աստուած կ'ատէ. — «Այլ դու, ո՛վ մարդ Աստուծոյ, փախիր յայնցանէ, և երթ ղհետ արդարութեան, զԱստուածպաշտութեան, զհաւատոց, զսիրոյ, զհամբերութեան, զհեզութեան»[1]: Եւ վերջապէս վախնալով որ չ'ըլլայ թէ իւր յանձնարարութիւնները պարզ խորհուրդներու տեղը դնենք, չէ թէ առաքելական ձայնով զմեզ յորդորելու կը ջանայ, այլ Աստուծոյ հրամանէ, վարդապետի յստակ խօսքով կը հրամայէ, և աստուածային իշխանութեամբ, և իրեն անսովոր խօսակցութեան հանգիստաւորութեամբ կ'ըսէ. «Պատուիրեմ քեզ առաջի Աստուծոյ, որ կենդանի առնէ զամենայն, և Յիսուսի Քրիստոսի, որ վկայեաց առաջի Պոնտացւոյ Պիղատոսի զբարեբոյ դաւանութիւնն»:... Այդ ի՞նչ կը պատուիրես դու, ո՛վ մեծ առաքեալդ, այսպիսի հանդիսաւոր սկզբնաւորութեամբ. «Պատուիրեմ քեզ.... պահել քեզ զպատուիրանն անբիծ՝ անարատ, մինչև ի յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»[2]:

Երբ Հոգին սուրբ այսպէս կը խօսի, ի՞նչպէս կրնանք մենք քահանայ ըսած սրտին Աստուծոյ սեպել, թոյլ և դաղջ կեանք մը անցուցնելով:

17. Հապա Սուրբ Հարք, հապա եկեղեցւոյ Սուրբ վարդապետները, այս առաքելական վարդապետութեան հաչախաւոր ժառանգները, ինչի՞ չեն ըսեր մեզի քահանայական սրբութեան անհրաժեշտ հարկաւորութեան նկատմամբ: Իրենց առ այս վկայութիւնները յիշելու

1 Ա. Տիմ. Զ. 11: 2 Ա. Տիմ. Զ. 13:

համար հատորները պէտք էին, զորոնք յառաջ բերելու մէջ երբեք այսքան չփոթած չէինք: Ա.յս հռչակաւոր անձինք, մեր վարդապետները և առաջնորդները, այն-պիսի վեմ ոճերով և խմաստնալից խօսքերով կը սկսին մեզի յիշեցընելու պաշտօններուս գերազանց արժանա-ւորութիւնը, որ այսպիսի պաշտօնի մը վրայօք ունեցած բարձր գաղափարին կը յայտնեն:

Սուրբն Ամբրոսիոս «Աստուածացուցիչ պաշտօն» կ'անուանէ զքահանայութիւնը, և կը յաւելու որ ան-սահմանաբար կը գերազանցէ ամէն մարդկային մեծու-թիւնները. «Ոչ ինչ գերազանցագոյն յայսմ աշխարհի»: Եւ ոչ միայն թագաւորներու և կայսերաց պատուէն ա-ւելի վեր կը սեպէ, այլ նոյն ինքն հրեշտակներուն աս-ոլիճանէն ալ. «Առաւել մեծարեաց զնէզ քահանայք, քան զթագաւորս և զկայսերս, և նախամեծար քան զհրեշտակս համարեաց»:

Սուրբն Գրիգոր Նազիանզացին, և իրմէ վերջ Սուրբն Թովմաս ըսին որ նոյն ինքն հրեշտակները կը մեծարեն զքահանայութիւնը. «Նոքին իսկ հրեշտակք մեծարեն զքահանայութիւնն»: Եւ իրօք, կը յաւելու Սուրբն Ալբռնաս Ալիգուորի, թէ բոլոր հրեշտակները միասէղ մէկ հասիկ մեղքի մըն ալ արձակուելու չեն կրնար տալ:

Սուրբն Օգոստինոս սեղանին առջև եղած քահա-նային պաշտօնին վրայ մտածելով այս խօսքերը դրեց. «Ո՛վ գերագոյն սրբութիւն ձեռաց, ո՛վ երջանիկ պաշ-տաման: Որ ստեղծն զնս առանց իմ, նա ստեղծ զնիքն ի ձեռն իմ»: Ի՜նչ վեմ խօսք. ինչպիսի՛ արժանապատու-ութեան բարձրութիւն մը չ'ակնարկեր քահանային վրայ:

Իննովկենտիոս Գ սրբազան Քահանայապետը՝ քա-հանային անսահման իշխանութիւնը վրայ խորհրդածե-լով, չի տարակուսիր յայտ մտնին զանիկայ ամենատուրբ Կուսին ալ նախադասելու. «Թէպէտ և ամենեքեանուն Կոյսն առաւել գերազանց քան զառաքեալս գտաւ, ի վերայ այսր ամենայնի, ոչ նմա, այլ սոցա յանձն արար Տէր զքանալիս արքայութեանն երկնից»:

Իսկ ամենատուրբ Կուսին Ջերմեռանդութեան մէջ այնչափ համբաւաւոր սուրբն Բեռնարդինոս Սենացին, կը համարձակի առնա ինքն գիմելու և անոր ուղղելու հետեւեալ խօսքերը. «Ամեներանելի կոյս, լեր ինձ ան-մեղագիր, զի ոչ հակառակ քեզ բարբառիմ, զքահանա-յութիւնն քան զքեզ նախապատիւ համարեալ»:

18. Քահանայական պաշտաման բարձրութիւնը այս-պէս հանդիսաւոր կերպով պայծառացած ըլլալով, տես-նենք թէ այս մեր վարդապետները ինչպէս պիտոր ապա-գոյացանեն այսպիսի պաշտօն մը գերագոյն սրբութեան մը հետ միաւորելու հարկաւորութիւնը:

Այո՛, կ'ըսէ սուրբն Ամբրոսիոս, քահանային սրբ-ութիւնը աշխարհիկ անձանց սրբութենեն շատ աւելի մեծ պիտոր ըլլայ: Քահանան յայտմ մտնին ժողովրդեան հետ հասարակ ըլլալու չէ. «Ոչ ինչ ի քահանայն հասա-րակ ընդ ժողովրդեան գտանիցի: Զի կեանք քահանային պարտ է առաւելուլ, ըստ չնորհայն առաւելութեան»:

Սուրբն Յովհաննէս Ոսկեբերանը միևնոյնն նման քահանայութեան բարձրութիւնը լուսաւոր կերպով հատատեղէն, և հրեշտակաց արժանապատուութենեն ալ նախադասելէն եաքը, կը յաւելու այս անմոռանալի խօսքերը. «Քահանային, որ առ սեղանն մատչի, պարտ է այնպէս անարատ լինել, որպէս թէ յերկինս գտանել, ի մէջ երկնային զօրացն գտանելը: Խնդրեմ ի քէն», կ'ըսէ ուրիշ տեղ մը, «յորո՞ց գտանի զնա (զքահանայն) կարգեսցուք: Զո՞ր անարատութիւն պահանջեսցուք ի նմանէ, որչափ հաւատաս: Խորհեա՛ց ապաքէն, թէ որպէս-սի՛ ձեռաց պէտք էցեն ի մատակարարութիւն սոցին, և որպիսի լեզուի յարտաբերել զբանսն:... Անբծադոյն քան զՀառագայթս արեգական պարտ է լինել ձեռաց, որք զմարմինն Քրիստոսի բաժանեն, և լեզուին՝ որ յերմ պէզ զարիւնն շուռագունի»:

«Քահանայն», կ'ըսէ գարձեալ, «զվարս ունելոյ անարատս, զի ամենեքին իբրև ի գերագոյն նախատիպ՝ ի նա հայեցցին: Վասն այսորիկ ընտրեաց զնէզ Աստուած, զի իբրև Քահ լուսաւորք և վարդապետք այլոց լինիցին»:

և որպէս զՀրեշտակս կեցցուք յաշխարհի »։ Ի՞նչ տեսակ մտածմունքներով պիտոր չի տագնապի գալը քահանան, այս տողերը կարդալու առեն։

Սուրբն Օգոստինոս բացարձակապէս կը զուրկ Թէ ով որ եկեղեցական կ'ըլլայ, չէ Թէ « անկատար », այլ « սուրբ » կեանք մը վարելու կ'ուխտէ. « Կղերիկոսն զերկոսինս ուխտեաց, զսրբութիւն և զկղերականութիւնն »։

Սուրբն Գրիգոր այն իւր Հովուականին մէջ, որն որ ամէն քահանայի ձեռքը պէտք է դնուի, այս հետևեալ վճիռը կու տայ. « Պարտ է քահանային, զի մեռեալ առ ամենայն ախտս, աստուածային ևեթ կեցցէ կենօք »։

« Ո՛վ մեծի արժանապատուութեան քահանայից », կը կանչէ սուրբն Լաւրենտիոս Յուստինեան, « սակայն ո՛վ մեծութեան նաև բեռին։ Ի գերագոյն աստիճանի դասաւորեալք, պարտ է զի և ի ծայր առաքինութեանց հասատեսցին »։

19. Բայց հազարաւորներու մէջէ ընտրուած այսչափ վկայութիւններ բաւական ըլլան. և վերջ տանք այս հեղինակութեանց փաստերուն՝ չէ Թէ անանկ խօսքերով, որոնք սուրբ Հարց և վարդապետացմէ առնուած ըլլալով, գուցէ ոմանք այնպէս կարծեն՝ որ աւելի ձայնատասանական ձևերը ըլլան քան Թէ խիստօրէն տրուած վճիռներ, այլ աստուածաբաններուն խլհանին, դպրոցներուն Հրեշտակին ծանր և երևելի խօսքերովը։ Ասոնց կը խնդրենք պատուական եղբայրակիցներէս, որ կատարեալ ուշադրութեամբ կարդան հետևեալ տողերը։

Քահանայք, կ'ըսէ սուրբն Թովմաս, (լիշենք որ աստուածաբանական ոճով կը խօսի), պէտք է որ ոչ միայն առաքինի, այլ մանաւանդ առաքինութեան մէջ կատարեալ ըլլան. « Պարտ է կատարեալս լինել յառաքինութեան »։ Եւ իւր միտքը յայտնի կերպով բացատրելով կը յաւելու. « Կարգք սուրբք կանխաւ պահանջեն զսրբութիւն, զի բեռն ձեռնադրութեան պարտ է դնել ի վերայ որմոյ կանխիկ սրբութեամբ ցամաքելոյ, այսինքն ի հևութեն ախտից և մոլութեանց »։

Ուշադրութեամբ քննենք իւր առաջարկութեան նկատմամբ լիչած երկու պատճառները։ Առաջինն է որ, — ըստ որում ձեռնադրուածը պաշտօնով աշխարհականներէն վեր կ'ըլլայ, ուստի և պէտք է որ վեր ըլլայ նաև սրբութեամբ, — « ի պատշաճ դործադրութիւն կարգին չէ բաւական հասարակ բարութիւն, այլ խնդրի բարութիւն գերագոյն, զի որպէս ձեռնադրեալքն ասացմանաւ կարգին՝ նախագահին ժողովրդեան, այսպէս և նախագաս լինին արդեամբք սրբութեան »։ Երկրորդ պատճառն է որ, — ձեռնադրութիւնը սեղանին վրայ ամենաբարձր խորհուրդները կատարելու իշխանութիւն տալով, հարկ է որ այս պաշտօնը վարողը կրօնաւորութեան համար (աղեկ միտ դիր) պահանջուածէն աւելի սուրբ ըլլայ։ — « Ինդիր սուրբ ձեռնադրութեամբ կարգի ոք ի գերագոյն պաշտօն, որով ծառայէ Քրիստոսի ի խորհուրդն սեղանոյն, առ որ խնդրի մեծագոյն ներքին սրբութիւն, քան առ վիճակ կրօնաւորութեան »։

Ակնիկ աւելի ճիշդ բան մը կրնայ ըսուիլ։ Ակնիկ աւելի որոշիչ բան մը կրնայ ըսուիլ քահանայի մը սուրբ և անոր ամենաբարձր արժանապատուութեան վայելուչ վարք և բարք մը ունենալու հարկաւորութիւնը աստուածաբանական կերպով ապացուցանելու համար։

20. Բայց դեռ աւելի հեղինակութիւն մըն ալ կայ, մանաւանդ վարդապետներու և աստուածաբաններու հեղինակութենէն շատ աւելի ծանր, այս է ընդհանուր եկեղեցւոյ հեղինակութիւնը։ Ո՞վ կրնայ մի առ մի թուել այն ժողովքները, և ժողովքներուն կանոնները, որոնցմով հրամայուած է սրբութիւնը ամէն եկեղեցականաց։ Ամէն առեն և ամէն ժամանակ եկեղեցին փութաջան դանուած է իւր քահանայները սուրբ ընելու անոնց տուած կանոններով, անոնց նշանակած այնչափ վանդներուն համար, և խիստօրէն ամենուն վրայ հարկ դրուած պարտաւորութիւններով։

« Որոց ոչ են սուրբք », կ'ըսէ Կարթագինեայ Դ. ժողովքը, « չէ պարտ ձեռնամուխ լինել ի սրբազան իրս։ Զայն առաքինութիւն ցպեցարուք », կ'ըսէ Մեդիօլանի

Դ. Ժողովքը, « զի այլք երբև զայս լուսաւորեալ տեսցեն զսրբութիւն ձեր: Որ եթէ մեծապէս ինդրի յամենայն կարգս քրիստոնէական կենաց, արդարև ի ձեզ, որք պաշտօնեայք էք աստուածային խորհրդոց և հաղորդակիցք աստուածային շնորհաց, մեծագոյն առաւելու-թեամբ պահանջի »:

« Ջեկուցեն եպիսկոպոսունք », կ'ըսէ Տրիտեն-դեանը, « զկղերականս իւրեանց, յորոց կարգէ և նկեն. զի կենցաղավարութեամբ, բանիւք, գիտութեամբ նա-խագաս գտանիցին ժողովրդեանն Աստուծոյ, առաջի աչաց ունելով զայն, Թէ Սուրբ լերուք, զի ես սուրբ եմ»: Եւ որպէս զի մեկու մը մտքէն չանցնի որ քահա-նայութեամբ պահանջուած սրբութիւնը սոսկապէս ծանր մեղքերէ զգուշութիւնը ըլլայ, սուրբ Ժողովքը կը յա-ւելու այս մշտաւառ յիշատակաց արժանի խօսքերը. « Ի Թեթև յանցանաց անգամ, որք ծանրագոյնք կինքեանս գլուխցին, զգուշասցին քահանայք »:

« Սմենևին վայելուչ է », կ'ըսէ դարձեալ եկեղեցին նոյն ժողովքին միջնորդութեամբ, « կղերկիսաց 'ի բա-ժին Տեառն կոչեցելոց՝ զվարս այնպէս յարդարել ի ըզ-գեստս, ի բարս, ի գնացս, ի բանս և յամենայն կրս, զի ամենևին ծանր՝ ամիսոի և երկիւղած երևեսցին»:

Ուրիշ տեղ ալ այս սրբազան պաշտօնին ամենաչքեղ մասին, այսինքն սուրբ պատարագին վրայ խօսելով, կը յիշէ որ այս խորհուրդը սուրբ, ահաւոր և աստուածա-յին ըլլալուն պատճառաւ՝ հետևաբար ամենաբարձր կա-տարելութեամբ պէտք է որ մօտենանք:

Այս վերոյիշեալ վկայութիւններէն յայտնի կ'երևի որ սուրբ Հայրը, վարդապետաց և աստուածաբաններ-ուն խօսքերուն մէջ ամենևին չափազանցութիւն մը չի կայ, ըստ որում եկեղեցին ալ մի և նոյն լեզուն կը գոր-ծածէ:

21. Ուստի ամենևին մեկը Թող չի զարմանայ, եթէ սուրբ եկեղեցին այսպիսի հոգւով տոգորուած միայն խօսքով յորդորելու գոհ չըլլալով՝ գործք ալ կը պահան-ջէ. և այս ամէն վայրը, եռանդը, ջանքը ամենևին

քահանան չի սեպեր երբ գործքը քահանայից սրբու-թեան վրայ կը դառնայ, որպէս զի միշտ աւելի արժա-նաւոր ըլլան այն աստուածային պաշտօնին զոր լրենց կը յանձնէ:

Ինչո՞ւ համար Եկեղեցին եկեղեցականները ժողո-վրդեան բազմութենէն կը բաժնէ կը հեռացընէ, և յա-տուկ կանոն և օրէնքներ կուտայ, անոնց սրբութեանը համար սահմանադրութիւն և հրամաններ կը հրատարա-կէ, որոյմէ ազատ են պարզ հաւատացեալները, եթէ ոչ ըստ որում կ'ուզէ որ Յիսուսի Քրիստոսի հօտին հովիւ-ները արածելիք ոչխարներէն չատ աւելի սուրբ ըլլան:

Ինչո՞ւ համար այնչափ թախանձանօք կը պնդէ որ աշխարհքիս ընդունայն զուարճութիւններէն և կիմար ուրախութիւններէն հրաժարին, որոնց հանդիսաւոր ձևով բարով մը ըսել կուտայ եկեղեցւոյ մէջ առաջին քայլը ընելու հրամայած առեն, երբ հերաց խզման աւե-թիւ չատկի հագցունելով՝ կ'ուզէ որ բացարձակապէս որոշեն որ Աստուծմէ զատ ուրիշ բաժին և ժառանգու-թիւն չեն ուզեր հետևեալ խօսքերովը. « Տէր բաժին ժառանգութեան իմոյ և բաժակի իմոյ »[1]: Սեղանին առջևը եպիսկոպոսն կատարած այս արարողութիւնը անտակ կերպաւորութիւն մը չէ, մանաւանդ թէ զօրա-ւոր միտք մըն է եկեղեցւոյ դարուվալի ինամոց, որով եկեղեցական վիճակի մէջ մտնելնուն առաջին վայրկե-նէն ի վեր կ'ուզէ սուրբ ընել իր պաշտօնեայները:

Ինչո՞ւ համար այնչափ խստութեամբ կը պատուիրէ անոնց կուսակրօնութեան օրէնքը, օրէնք մը որ կաթոլիկ քահանային փառքը կը կազմէ, և նոյն ինքն բարբարոս և վայրենի մարդկանց յարգութիւնը և մեծարանքը կը գրա-ւէ: Ի՞նչ բանի կը ծառայէ այս օրէնքը, եթէ ոչ քահա-նային յիշեցնելու որ իւր պաշտօնին հոգևոր և աստուա-ծային գործքերուն ու մարմնոյ գործքերուն մէջ ալ ամե-նևին հաստարակ բան մը չկայ. ալ հաստատութիւնը ոչնչացած է, հաղորդակցութիւնը բոլորովին ընդհատած է: Քահանային յիշեցունելու՝ որ ամուսնութեան խորհուրդ

1. Սղմ. ԺԶ. ՟ե:

դը որչափ ալ որ սուրբ է, այսուհանդերձ ամենայնիւ իրեն համար բաւական սուրբը չէ. յիշեցուներլու որ իւր մարմինը Յիսուսի Քրիստոսի կենարար մարմինէն զատ՝ ուրիշ մարմնոյ ամենևին պիտոյ չի դպչի: Յիշեցընելու որ իւր էութեան մարմնաւոր մասը կերպով մը հոգևորած՝ աստուածացած է. ըստ որում Յիսուսի Քրիստոսի կենդանի տաղաւար մը գարձած է, որուն մէջ այս աստուածային Փըրկիչը ամէն օր մնակելով ալ ամենևին չուզէր արատ մը, մնաւանդ թէ և ոչ իսկ արատի մը աստուերը գանել հոն:

Ինչո՞ւ համար կը պատուիրէ որ աշխարհականներէն տարբեր հագուստ մը ունենանք, ինչո՞ւ համար մինչև կերպն ու գոյնը որոշէլն ալ իրեն նուաստութիւն մը չի սեպեր: Ինչո՞ւ համար, մինչև անգամ պատիժ կը սպառնայ, և երբեմն ալ ծանր պատիժներ, թէ որ առանց օրինաւոր պատճառի զանիկայ փոխենք: Ինչո՞ւ համար այս ամէն բան, եթէ ոչ միայն ասոր համար որ այս հագուստը ուրիշներէն բոլորովին տարբեր՝ ըստ իմիք մեր սրբութեանը սեպհական նշանը ըլլայ. որ այս հագուստը միտս եւ յորդորիչ մը ըլլայ մեզի, և իւր սև գոնով յիշեցընէ որ այսուհետև մեռած ենք թէ աշխարհքի և թէ մեզի. և իրեն ձեռվը միակերպ յիշեցընէ մեզի աստուածային Փրկչին պարկեշտութիւնը վրանիս կրելու և ժողովրդեան աչքին առջև զայն պայծառացընելու պարտաւորութիւնիս. « Զի գնայցէք պարկեշտութեամբ առ արտաքինան » [1]: Այո՛, այս հագուստը քահանայից համար սրբութեան նշանագգեստ մը պէտք է ըլլայ:

Ինչո՞ւ համար եկեղեցին իր ծոցին մէջ կը անուշանէ այն պատկառելի չինքերը, որ կղերանոց կամ նորընծայարան կ'ըսուին, այն քահանայութեան պահարաններըը: Ինչո՞ւ համար զանոնք հիմնեցին վերջը, այնչափ եռանդով և փափաքով ալ կը կառավարէ, և կ'ուզէ որ եկեղեցական վճռակի բաղձացողները հոն իրենց նորընծայութիւնը կատարեն: Ո՛հ, շատ պղծկ գիտենք որ եկեղեցին կ'ուզէ որ իւր ապագայ պաշտօնեայները բարի քահանայի մը հարկաւոր եղած աստուածպաշտութեամբ և ուսմանց մէջ կրթուին:

1 Ա. Թես. Դ. 11.

Եկեղեցին այսպիսի չինքեր չունի անոնց համար որ աշխարհային ընթացքի մը կ'ուղղուին. երբեք զանոնք աշխարհքին չի հեռացըներ, ուչ. այսպիսիները իրենց կըրթութիւնը աւելի բազմամարդ քաղաքներու մէջ, մեծ և բազմամբոխ ընկերութեանց ծոցը մէջ կը վիճառեն, հասարակ պաշտօններու դիմողներուն համար հասարակ մըջոցները բաւական են:

Բայց քահանայ մը պատրաստելու համար շատ աւելի բան պէտք է, գործին կարեւորութիւնը համեմատ միջոցներ ալ կը պահանջէ: Եւ ասոր համար է որ եկեղեցին մտնաւոր դպրոցներ կը հիմնէ, որոց կառավարութեան համար իր պաշտօնեից մէջէն աւելի գիտունքն և աւելի առաքինիները կը կարգէ, աստուածպաշտութեան հետ միատեղ մտոց ամիսփութիւնը և բարեհամբաւ կանոնապահութիւնը կը ծաղկեցընէ, և հոն այն առանձնութեանց կեդրոններու մէջ միայն կրնայ բողբոջիլ և ձիլքահանայական սրբութեան սեր մը, ուր ինքը առաքինութեամբ կը զարգացընէ իւր երիտասարդ կղերկոնները, և կը պատրաստէ բարի քահանայ ըլլալու:

Իրաւցունէ, սիրելի և յարգոյ եղբայրակիցք, մի թէ այս ամէնքը երեւելի ճարտարախօսութեամբ սրբութեան վրայօք չեն ճառեր արդեօք: Սրբութեան այս ամէն միջոցները մի թէ մէյմէկ բերան չեն արդեօք, որոնցմով եկեղեցին միակերպ մեզի կ'ըսէ, սուրբ եղիք, « Սուրբ եմ ես » [1]: Աւելի ևս մանրուեցէք գոնք որ չէ թէ միայն Աստուծոյ անօթները, այլ ինքն Տէրը կը կրէ [2]: « Մեհենեցարուք (լատ. սրբեցարուք) որ բարձեալ բեռը զսպաս տեառն »:

22. Ո՛վ ինչպէս աղէկ հասկըցած էին այս ճշմարտութիւնները այն երեւելի և սուրբ անձինք, որոնք քահանայութեան մեծութիւնը, և անոր կարեւոր եղած ամենաբարձր սրբութիւնը ճանչցած ըլլալով գողալով կը վախչէին այսպիսի սոսկալի բեռի մը յանձնառութենէն: Ի՞նչ գեղեցիկ տեսարան մըն էր այս հոչակաւոր անձինքը տեսնել, Սուրբ Կիպրիանոս, Սուրբ Աթանաս, Սուրբ

1. Եսայի Ծ. 11:

Մարտինոս, Սուրբ Գրիգոր Նազիանզացին, Սուրբն Յովհաննէս Ոսկեբերան, Սուրբ Փուլխենիոս և ուրիշ շատեր, որոնք քաղաքներէ հեռանալով անապատները կը վախչէին եկեղեցականաց և ժողովրդեան ալեբախութեան ազատելու համար: Ինչպիսի չնորհներ էր պատճառէր Աղեքսանդր մը, Աթոռողիոս մը, Օգոստինոս մը, և ուրիշներ, որոնք ըստ իրենց կարելին հակառակ կը ձեռնադրուէին: Բանուորներն ըրին ինձի, կը կանչէ Հիպպոնայի մեծ եպիսկոպոսը, « Բանուցան ի վերայ իմ, արդեամբք մեղայ նմոյ »:

Այս սուրբ սոսկումը ոմանց քով այն աստիճան էր, որ իրաւացուներ մեծ զարմանք կը պատճառէ: Այսպես կը տեսնենք որ Եփրեմ մը չմտար կը ձեռնադ, Ամբրոսիոս մը չի վանար ըստ իրիք բարի քրիստոնեի մը համբաւէն հրաժարելու, իր սուրբ պարկեշտութեան վրայօք կասկածներու տեղի տալով: Ամմոնիոս մը իր ականջները կը կտրատէ, և մինչև անգամ լեզուն ալ կարելու կը սպառնայ, թէ որ ինքը քահանայ ընելու սոսկումնքին չդադարին:

Եւ ոչ մէկ սուրբ մը կը գտնեմ, ի՛ըսէ Կիւրեղ Ալեքսանդրացին, որ աստուածային պաշտօնին ամենածանր բեռէն զարհուրած չըլլայ:

Մոքերէս չանցուներնիք որ այս տեսակ զգայմունքներ միայն քրիստոնէութեան այն դեղեցիկ օրերը յայտնուած ըլլան, երբ հաւատքը վերջին աստիճանի կենդանի էր, և վարքն ալ ամենամաքուր, ոչ, ոչ: Ամեն տեղ սուրբերը զարհուրած են քահանայական պաշտաման և անոր պէտք եղած կատարելութեան վրայ մտածելու առեներն: Ո՛վ չի դիտեր Պաւղոս Սրբոյն Վիննկենտիոսի զարմանալի խօսքերը: Այն աստիճան համարում և յարգութիւն ունէր (ի՛ըսէ իր վարուց հեղինակը Ջերմեռանդն Ալբերի) քահանայական պաշտօնին, և քահանայի մը « մաքուր, սուրբ, և հրեշտակային » վարք մը ունենալու պատասխանութեան վրայ, որ առիթ առիթ կ՛ըսէր. « Թէ որ քահանայ չ՛ըլլայի, երբեք չանձն ալիտար չ՛առնէի քահանայութիւնը, այն աստիճան զիս անարժան կը տեսնեմ »:

23. Չոս քիչ մը կենանք, ըսա որուամ թէ և իրաւ ցոյնէ այսպիսի կարևոր նիւթի մը դեռ ևս վերջը բերած չ՛ըլլանք, այսու ամենայնիւ չենք կրնար կարծել որ մինչև հիմայ ըսածներս բաւական չ՛ըլլան ընթերցողաց վրայ բարի և փրկաբեր տպաւորութիւն մը ընելու: Մանաւանդ թէ վստահ ենք որ եթէ սուրբ են, հոգ սիտար տանին միշտ աւելի սուրբ ըլլալու, բայց եթէ գժբախտաբար չեն, անցած կեանքերնուն վրայ դառնապես լալով, անդադար սիտար չանան որ ապագան կերպով մը անցնելոյն թերին լեցուներ, և գերենք իրենց վիճակին նուաղ անարժան ընէ: Մենք զմեզ Աստուծոյ աչքին առջև դնելով և խղճերնիս ներկայ ունենալով, որն որ երեսներուս դէմ բացուած դրքի նման կը խօսի, հարցուներնք մենք մեզի, սիրեցեալ և պատուական եղբայրակիցք, և հաստատապես ըսենք. Արդեօք ես ըստ սրտին Աստուծոյ քահանայ եմ, երբ սրբութեան ձամբուն մէջ այսպես դանդաղութեամբ՝ հաղիւ զինքս կը քարշեմ, մինչդեռ պէտք էր որ այն ղեկավարութեամբ վազէի, զորն որ Աստուած կը հրամայէ, և ժողովուրդն ալ կը փափագի տեսնել քահանային վրայ:

Մինչև հիմայ քարոզուած սրբութեամբ սուրբ կըրնամ ըսուիլ ես, երբ առանց մահացուցման եմ և հեշտասէր, ագահ, դատարկապորտ, ցնդած, խաղի որուած և որկրամոլ: Արդեօք այնպես սո՞ւրբ եմ ինչպէս որ պէտք է ըլլամ, երբ իմ ախտերուս հետ այն աստիճան ընտելացած եմ, որ հեռերնին կուուիլն անգամ մոքէս չ՛անցնիր, և փոխանակ ողորմելի առաքինութիւններս զարգացնելու, ամեն օր զանոնք աւելի ևս կը տկարացընեմ և երբեք ալ հոգս չէ: Արդեօք սո՞ւրբ եմ ես այն ձգիչ սրբութեամբ, որ կը հաղորդուի ուրիշներուն ալ և ի՛ուղղէ զժողովուրդը փրկութեան ձամբուն մէջ, երբ ես տեսնելով որ մեղաւորայ բաղմութիւն մը դժոխք կը թաֆի, անհոգ կը գտնուիմ անոնց յաւիտենական կորստեան վրայ: Տուէք ինձի, ի՛ըսեր սուրբ Փիլիպպոս Ներեանը, տուէք ինձի տասը հատ եռանդուն քահանայ, և ես բոլոր աշխարհքը դարձընեմ:

Ո՛վ Աստուած իմ, Թափէ, կը խնդրենք քեզմէ, անձրևի պէս Թափէ քու առատ Ընորհքներդ Եկեղեցւոյ, և մանաւանդ անոր պաշտօնեայներուն վրայ, որոնք որ Եկեղեցւոյ սիւներն են, և որոնք սրբութեամբ ալ պէտք է որ անոր զարդը և փառքը ըլլան:

ԳԼՈՒԽ Գ.

Քահանայական սրբութեան նկատմամբ ի՞նչ եղանք աճցելոյն մէզ — ի՞նչ ենք հիմայ — եւ ի՞նչ կ'ուզենք ըլլալ ապագային մէզ:

24. Թէ որ նախընթաց խորհրդածութիւնները ուշադրութեամբ ընելէն վերջը, սրտերնուս մէջ ներմեռանդ զգն աստուածպաշտութեան չափազանց շարժում մը, և սրբութեան մէջ աւելի յառաջ երթալու կենդանի փափագ մը չունինք զգար, յայտնի նշան է որ առաքինութեան ողորմելի և անհիմն է:

Մենք ուրեմն քահանայ ըլլալով սուրբ ըլլալու ամենամեծ հարկաւորութիւնը կը ճանչնանք: Քահանայ ըլլալով սուրբ չըլլալը հակասութիւն մըն է, հակիմաստ բան մըն է, և Աստուծոյ սուրբ կամաց կերպապէս հակառակ վիճակ մը, ըստ որում պարզ հաւատացեալներս հազար անգամ աւելի մեզի ուղղուած են այն խօսքերը. « Սրբեցէք և սուրբը լինիցիք, զի սուրբ եմ ես[1]: Որ սրբեցոյն է սրբեսցի »[2]:

Տեսնենք ուրեմն թէ ասո՞նք են մեր զգացմունքներն ալ, և իրօք ձիշտը հասկընալու համար, առանձնանանք սրտերուս մէջ, մոռնանք անցեալը, քննենք ներկայն, և ապագային ալ յառաջատես ըլլանք, և քահանայական սրբութեան կչնազբով ուշադրութեամբ քննենք թէ ինչ էինք մեր սուրբ ընթացքը սկսած առեննիս, ինչ ենք հիմայ, և թէ ինչ կ'ուզենք ըլլալ:

25. « Ի՞նչ էինք մենք եկեղեցականութեան առաջին օրերնիս »:

1 Ղեւտ. ԺԹ. 44: 2 Յայտ. ԻԲ. 11:

Չոս մեծ լոյս մը կը ծագէ հոգիներուս վրայ, որով դուցէ այնպիսի թերութիւններ նշմարենք, որոնց վրայ աչք դոցեր էինք, իբրև թէ չը տեսնելու զարկուած պատասխանատուութիւնները աստուածային դատաստանին առջև ալ ուղղուած սեղուէին:

Ի՞նչ գեղեցիկ, մաքուր և պարզ օրեր էին, և ինչպէս ալ շուտով անհետ եղան կղերանոցին մէջ անցուցած օրերնիս: Ինչպիսի՛ հառաչանքներով և արցունքներով ըրինք այն խոստովանութիւնիս, որ առաջին հասակիներուս անկարգութիւնները ուղղեց, և որն որ այն առաջին տարիներուն անմոռութիւնը, խայթերը և մոլութիւնները, աստուածային գիտութեան, անձառելի խաղաղութեան, և գուցէ մանքուր՝ անկեղծ և ամենաընտիր առաքինութեանց գարձուց:

Ո՛րչափ քաղցր էին խորանին առջև անցուցած ժամերնիս, երբ անանկ զգալի կերպով կ'որոշէինք և կ'առաջադրէինք միշտ զբաղեցուցած Աստուածը սիրելու, և հաւատարմութեամբ անոր ծառայելու: Ինչպիսի՛ բարի օրինակ կ'ըլլային ուրիշներուն՝ ընկերներուս հետ կենակցութիւնիս, կամ նախանձաւոր տեսուչներուս և վերակացուներուս միտուն հետ խօսակցութիւնիս, որոնց փորձառութեանց վրայ հարցափորձ ընելով ապագային մէջ արժանի քահանայ ըլլալու պատրաստութեան օգտին կը գործածէինք անոնցմէ առած տեղեկութիւնիս:

Ո՛վ, որչափ լեցուն էին այնպէս շուտով սահող օրերը, աշխատութեան և բարեգործութեան սովորութիւնը երբէք պարապութեան տեղի չէր տար, ուսկից միայն ահաձուկութիւն և տաղտկութիւն յառաջ կու գան:

Ո՛րչափ փափուկ և ամօթխած էր խիղձերնիս. ինչպէս կը դողայինք վախ մը չեզած առեննն ալ. որչափ յաձախ և դուցէ ձանձրութիւն տալու չափ խոստովանաւ հօրերուս կը դիմէինք, որն որ մեր ամէն հարցմունքներուն ժպտելով մը այս պատասխանը կուտար. — բան մը չէ որդեակ, հանդարտէ և ըստ սովորութեան դնա ցիւսուդ առ: — Մեկ խօսքով ըսեմ. ինչ սուրբ, ինչպիսի՛

բարի օրինակ պատճառող և ինչպիսի՛ վնասուներ տեսող կեանք, ինչ սիրուն տեսարան էր թէ Աստուծոյ և թէ մարդկանց աչաց:

Երջանի՛կ օրեր, որոնցմէ շատերուն համար, ո՜հ, ուրիշ բան չէ մնացեր, եթէ ոչ դառն յիշատակ մը. այո՛ դառն, ըստ որում երբոր ալ չունինք ինչ որ երբեմն կունինք, և կամ դեռևս պէտք կունինք ըլլալ, ամենասուրբ օրերուն յիշատակն ալ ցաւալի խայթ մը կ'ըլլայ:

26. Անցեալն քննութիւնը յառաջ տանելով, այն օրը յիշենք, որուն մէջ կղերանոցին առանձնութեան, ուսման, հոգևոր կրթութեանց, և ծանր խորհրդածութեանց տարիները վերջը, եպիսկոպոսը քահանայական աստիճանին ձգտելու բերդը վրանիս դրաւ:

Ինչպիսի՛ օր, յարգելի եղբայրակիցք, ինչպիսի՛ օր էր արդեօք այն օրը երբ լսեցինք, թէ « Ահաւասիկ քահանայ յաւիտեան »: Ո՞ր լեզու կրնայ բացատրել մեր հոգւոյն վճռակը ձեռնադրութեան հանդիսաւոր օրուան նախընթաց գիշերը: Ո՞վ կրնայ մեկնել ունեցած զգացմունքնիս, երբ արթընցալով լսինք, « Այս է այն օրը »: Ինչպիսի՛ սարսուռ մը չի պատեց արդեօք ամբողջ մարմինս, երբ մոքերնուս վրայ փայլատակած քանի մը լոյսերուն պայծառութեամբ կը տեսնէինք այն զարմանալի այլակերպութիւնը որ քիչ առէնէն վրանիս պիտոր կատարուէր:

Եւ երբ եպիսկոպոսին ոտքերուն առջև ծունկ չոքած ձեռքերուս և ձախաներուս սուրբ մեռոնով օծուելու կ'ընէինք, և երբ օգոստափառ ղոհին սրբազան ա՛նօթները ձեռքերնիս տալով, որոնցմով իբրև թէ սուրբ խորանին ստացուածը մեզի յանձնուէր, լսեցինք այն բառերը. « Առեա՛լ ընկալարուք, քանզի առեք կարողութիւն ընդհօքն Աստուծոյ կինքել և կատարել զսուրբ պատարագն յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, վասն կենդանեաց և ննջեցելոց »: Եւ երբ եպիսկոպոսին հետ միասին և իրեն պէս քահանայագործութեան աստուածային բառերը արտասանեցինք: Հապա երբ ձեռքերը դնելուն վրայ դնելով մեզքերը ար-

ձակելու սքանչելի իշխանութիւնը տուաւ: Եւ վերջապէս երբ իրեն և իւր յաջորդաց պատուապատաշաճ յարգութեան հանդիսաւոր խոստումնքը առնելէն վերջը դեռևս մեզմէ չի բաժնուած այս սրտաշարժ խօսքերով զմեզ օրհնեց. « Օրհնութիւն ամենակարողին Աստուծոյ Հօր, և Որդւոյն և Հոգւոյն սրբոյ իջցէ ի վերայ ձեր, որք կատարեցայք ի կարգ քահանայութեան, յընծայել զաստուածպաշտութիւն մարմնոյ և արեանն Քրիստոսի, վասն խաղաղութեան և վասն թողութեան մեղաց »:

Ո՜հ, եթէ մեր ձեռնադրութեան առթիւ եղած այս փառաւոր արարողութեանց մէջ, որոնք ոչ միայն մե՛ր այլնաև հանդիսակատաց շատերուն ալ աչքերէն արցունքներ քամեցին, այս սրտաշարժ տեսարանին առեղծը, կ'ըսեմ, անձին մէկը, որուն Աստուծոյ կողմանէ մեր ապագայ վճռակին գաղտնիքը յայտնուած ըլլալով, մեզի ըսէր որ մեր այս նեղնայ եռանդը և աստուածպաշտութեան ղգացմունք պիտոր չքքէր, և գայթութեան և գունդ սառած պաղութեան պիտոր դառնար. ըսէր որ մեր հոգին և մարմինը յուզող այն խռովութիւնը հանդարտ խաղաղութեան մը պիտոր տեղի տար, մանաւանդ թէ կատարեալ անզգայութեան մը պիտոր փոխուէր. կըսէր որ եպիսկոպոսին հետ կենդանի հաւատքով ըսուած պատարագին պիտոր չյաջորդէին գունդ ուրիշ շատ մը ա՛նոյց պատրաստութեան, մոայ ամփոփման, եռանդեան և առանց բարեպաշտութեան կատարուած պատարագներ, և այնպիսի շատով՝ որ նոյն ինքն աշխարհականաց ալ դայթակղութիւն պատճառէր. կը հաւատայինք կամ կրնայինք հաւատալ ընծայել այսպիսի անձի մը խօսքերուն:

27. Բայց եկեղեցի կղերանոցին: Ի՞նչ կինք մենք քահանայութեննիերուս առաջին տարիները: Ինչպիսի՛ էր, կամ մանաւանդ ինչպիսի՛ մեծ ջերմեռանդութեամբ չէինք առաջին պատարագներս: Ի՞նչպէս աղեկ պատրաստութիւն տեսանք: Քանի՛ անգամ այն պատարագին մէջ չփոթեցանք. ոչ թէ չը գիտնալնիերուս և կամ մոքերնուս ցնորած ըլլալուն պատճառաւ, այլ ընդհակառակն չա-

վազանց զգուշութեան, կամ վախի և կամ տագնապի մը համար: Ո՜հ, իրաւցընէ այն օրը և հետևեալ օրերն ալ մենք սուրբ քահանայ էինք: Ո՜հ, այո՛, մենք կաթոգին սիրով զմեր Աստուածը կը սիրէինք, և ինքն ալ աւելի գորովալի սիրով կը սիրէր զմեզ. խնայարհ էինք, անսահմանաբար պզտիկ էինք մեր իսկ աչքերուն, ջարուեթեան ամենափոքր երևութի մըն ալ երկիւղած և խղճահար էինք, և ամէն ժամ տկար գործիք եղած հրաշալեայ տեսքին՝ դրեթէ հնացման վնճակի մէջ ընկղմած:

Բայց միայն սեղանը չէր, որ զմեզ զարմացման ու ահաւոդոյի մէջ կը բռնէր. ապաշխարութեան առեանն ալ շքեղ սոսկում մը ունէր, որ անպատմելի կերպով զմեզ կը յափշտակէր, և որուն մեկնութիւնը չէինք կրնար տալ: Մեզմ ոմ չի յիշեր առաջին անգամ հոն նստիլը: Մեղաւորաց վրկութեան համար ինչպիսի՜ եռանդով բորբոքուած էր սրտերնիս: Ինչ վառվռուն, ստիպողական և ջերմ յորդորակներ կ'ելլէին բերաններէս. որոնք միայն թէ քիչ մը շփոթութեամբ և երկչոտութեամբ բարեխառնած էին: Ինչպիսի՜ տագնապ մը զգայինք արձակուելու համար առաջին անգամ ձեռքերնիս վեր վերցուցած առեննիս: Այն առաջին ժամանակները ինչպիսի՜ բորբոքուած փափաք մը ունէինք՝ տաղանդնիս, կարողութիւննիս, բարեպաշտութիւննիս, ժամանակնիս և բոլոր հոգւիւննիս Աստուծոյ մեծագոյն փառացը և մեր տկար խնամոյ յանձնուած առաքելութեան բարեյաջողութիւնը նուիրելու: Ո՜հ, ինչպէս սուրբ էին ան առեները մեր ամէն գործքերը, ինչպէս ջերմեռանդութեամբ և մտադրութեամբ կ'ընէինք աղօթներս, ինչպիսի՜ քաղցր մխիթարութիւններ կը զգայինք խղճի քննութիւններէն, հոգևոր ընթերցմունքներէն, և Սրբութիւն Սրբոցին այցելութիւններէն:

Մեր բարեպաշտական կրթութեանց չքնաղ երջանիկ ընդհատած էր: Եւ մեզի համար այսչափ քաղցր ջերմեռանդութիւնը բնականապէս ուրիշներուն համար ալ անպատուղ չէր: Հաւատացեալները մեր ամէն գործքերը ջերմեռանդութեամբ պայծառացած տեսնելով, զարմանքէ

չէին դադրեր, և բոլոր սրտանց զԱստուած կ'օրհնէին իրենց փրկութեանը եռանդուն և արժանի քահանայ մը շնորհելուն համար: Մեղաւորները դրեթէ գաղտնի զղջութենէ մը ձգտած կը տեսնէին զիրենք. իսկ ջերմեռանդները միշտ աւելի ևս յառաջ կ'երթային իրենց աստուածապաշտութեան մէջ: Բոլոր հօտը ուրախութեամբ սրտի կ'ողջունէր այս սիզբունքները, այսպիսի քահանայական պաշտօնէ մը իրեն շնորհաց և մխիթարութեան դանձեր բարեմաղթելով:

Այս էր վնճակնիս. ըստ որում հաւատացէք, սիրեցեալ եղբայրակիցք, այս նկարագրութիւնը միայն սըրտերնիզ շարժելու համար մեռոի երևակայութիւն մը չէ, ո՛չ. այլ մեր եղբարցմէ շատերուն և գուցե մեր իսկ անձին վրայ տեսածնիւս հաւատարիմ պատկերն է: Ո՞վ է այն քահանայն, որուն սիրտը այս խօսած ժամանակներուս մէջ գորովալից աստուածապաշտութեան, և փափուկ եռանդեան քաղցրութիւնները, սրտաշարժ տագնապները, յօժարամիտ ցանկութիւնները և զուարճալի զգացմունքները փորձով տեսած չ'ըլլայ:

Այս ուրեմն, ասկից է որ շուտով մոռնալու չի գար. ասկից է, որուն ստիպողութիւնը միշտ օգտակար եղած է, տեսնելու համար թէ արդեօք հետևութիւնը սկզբան կը համապատասխանէ՞ թէ ոչ. տեսնելու համար թէ արդեօք քահանայական կեանքերուս միջօրէն արշալոյսն համաձայն է թէ ոչ:

28. « Ի՞նչ էնք հիմայ »:

Այս կամ այն ինչ ժամանակէն ի վեր Յիսուսի Քրիստոսի քահանայ ըլլալովս ինչ է իմ ներկայ վնճակս: Կրնամ հիմնական կերպով հաւատալ որ հիմակուան անցուցած կեանքս ի գործ դրած պաշտօնիս արժանի ըլլայ: Կրնամ արդեօք հաւատալ որ այս իմ կենացս առվորական կերպը Աստուծոյ վիշտ չի պատճառէ, և արդարացուցած մնալով, ես ինքս ալ իմ կենցաղավարութենէս ժպտուն սիտք է չ'ըլլամ: Խղճիը, այն առողջ և ուղիղ խղճիը կ'ըսէ, որ զինքը աղարտող ամէն անձնասիրութեան մառախուղէ աղատ ըլլայ. կամ իւր ձայնը արդե-

ըլլ ամէն ցնորմունքներէ ղերծ, և կամ ղինքը օտարացը-
նող և բոլորովին կերպարանափոխ ընող խղճահարու-
թեան թշուառութենէն արձակ. մէկ խօսքով ըսեմ, այն
մահուան առեն փայլող լուսոյն ձառագայթներովը լու-
սաւորուած խնդիրը արդեօք կը վկայէ վերնական այնչափ
չար չըլլալուն: Ահա խնդիրը կապահովցընէ զիս որ Ա-
ստուած ընդհանրապէս իրրև չար չի գտտապարտեր իմ
վարքս, և զիս իրեն սիրելի և իրեն սրտին համաձայն քա-
հանայից կարգը կը դասէ:

Ասանկ Աստուծոյ սիրելի քահանաներ կը ճանչնամ,
ամէն մարդ անոնց գովասանքները կը պատմէ, և խօսքը
անոնց մէկուն վրայ դարձածին պէս, ամէնքն ալ կ'ըսեն,
որ անկայ սուրբ մըն է: Ես ինքս անոր վրայ խօսած ա-
ռեներս հարիւր անգամ զնոյնը կրկնած եմ: Եւ ուրիշ
պատճառի համար այնպէս չեմ խօսած, եթէ ոչ իր ա-
ռաքինութեանց և անարատ սրբութեան ականատես վը-
կայ ըլլալուս համար: Ուրեմն անոր նմա՞ն եմ ես: Ես ալ
արդեօք անոր առաքինութիւնները ունի՞մ: Անոր հոգին
ըսո խնկի նման ալ է: Իմ վրաս ալ կը տեսնուի արդեօք
ինչ որ անոր վրայ դեղեցկապէս կը փայլի. այն ձգիչ
պարկեշտութիւնը, յաղթող քաղցրութիւնը, բորբոքող
սէրը, չնոտղ անձնուրացութիւնը, այն ամենուն բերնէն
գովասանք քաշող անշահախնդրութիւնը, այն վերջին
ասպիճանի կաթոգին աստուածապաշտութիւնը որ ամե-
նապաղ և սառած սրտերուն ալ աստուածային սիրոյն
նուիրական կրակը կը հաղորդէ:

29. Հապա աշխարհքս: Մէյմիալ զիս անոր աչքին
առջև քննենք, որն որ Թէ և իւր Թշուառութեանց մէջ
ամենակոյր է, սակայն շատ մը բաներու մէջ կրնայ զիս
մեծապէս լուսաւորել: Ինչ կ'ըսէ արդեօք, կամ աւելի
ևս ինչ կը կարծենք որ ըսէ մեր վրայ: Արդեօք կերպով
մը կրնա՞նք հաւատալ որ զիս կը յարգէ. մի գուցէ մեր
յանցանքներով իւր կշռամբանայ առարկայ եղած ըլ-
լանք: Կրնա՞նք մոքերնիս անցընել որ քիչ մը յաւաչ մի-
շտ սուրբը քահանայից վրայ ունեցած համարմունքով
զիս ալ դասէ: Գուցէ աւելի վախնալու առիթը ունե-

նանք որ զիս ալ այն սուրբը քահանայից հետ դասելու
առեն, անոնց և մեր մէջը եղած մեծ տարբերութիւնը և
խոիրը տեսնելու ցաւալի անարդանաց հանդիպինք: Ո-
չափ ալ որ զիս խաբելու բնականապէս հակեալ ենք,
այսու ամենայնիւ ներքին ձայն մը միակերպ չ'ըսեր մեզի
թէ այն չարդելի և արժանաւոր եղբայրակիցներու
նմանելու համար դեռ շատ բան պէտք է մեզի:

Զմեզ ճանչնալու և պահաստութիւններս գտնելու
համար, այսոքիսի սուրբ, իրաւցընէ անաստիւտ և բոլոր
աշխարհքի զրամոյնման պատճառ եղած քահանայից իրրև
հայելւոյ մը նայելներս մեզ հաւիկ յարմարագոյն միջոց
մըն է: Թէ որ պարկեշտ չենք, անոնց պարկեշտութեան
վրայ գովասանք մը լսած առեննիս, շուտով մը կ'անդրա-
դառնանք այս նկատմամբ անոնց արուած գովասանաց
արժանի չ'ըլլալնուս վրայ: Թէ որ մարդասիրութենէ
զուրկ ենք, անոնց ասով վաստկած համարմունքը մեզի
դառն յանդիմանութեան պիտոյ փոխուի, մեր անհամ
բոյր բնաւորութիւնը, դաժանութիւնը և մոլեռանդու-
թիւնը մոքերնիս բերելով:

Անոնց խոնարհութեան համբաւը հռչակուած ա-
ռեն, մենք խոնարհ չըլլալնուս համար պէտք է որ ամբէ-
նանք. իրրև Թէ անոնց վայելած գովեստը մեր հպար-
տութեան յանդիմանութիւն մը ըլլար: Անոնց ողորմա-
ծութեան՝ նախանձայուզութեան՝ պաշտօններու յաջո-
ղութեանը և աստուածապաշտութեան՝ Աստուծոյ փառքը
աւելցընելու և հոգւոյ փրկութիւնը ձեռք բերելու հա-
մար ունեցած անթիւ գիւտերուն վրայ եղած խռսակցու-
թիւնը, մեր այս առաքինութիւններէն զուրկ եղած ա-
ռեննիս, կարծես Թէ մեր պահաստութեանց և Թերու-
թեանց վրայ գտտաքննութիւն մըն է, նոյն այն խօսքե-
րով, որ անոնց գովեստ կը պատճառեն:

Բայց մենք մեզի գանք, և առանձին մեզի դառնանք,
սրտերուս խորը քննենք, և տեսնենք Թէ ինչ կայ: Ամէն
ո և իցէ Թեթև մեղքերէ ալ ըստ արժանւոյն կը սոս-
կա՞նք: Աստուծոյ ծառայութիւնը կը սիրե՞նք, մի գուցէ
ուրիշ տեղ դրած ըլլանք երջանկութիւննիս: Աչօքէ և

քարեպաշտական գործքերէ կ՚ախորժինք: Աչխարհքիս հեռու՝ ուսման պարապած և քահանայական պաշտօններ-ուս զբաղած առենիս՝ հանգստութիւն և սրտի դոհութիւն մը կը զգանք: Կեանքերնիս արդեօք կանոնաւոր է: Արդեօք հոգւոյ փրկութեան եռանդովը բորբոքած է սրտերնիս: Արդեօք կամաւ և գիտութեամբ երբեմն գայթակղութիւն ուսած չ՚ենք. և ամէն գործերնիս ալ շինութեան սերմ եղած է: Այս և քահանայութեան ամենամեծ պարտաւորութեանց ուրիչ կէտեր մէջ արդեօք սուրբ քահանաներու կը նմանինք: Արդեօք հիմայ ալ այն ենք, ինչ որ էինք կղերանոցին եղած առենիս. աստուածպաշտութիւնիս աձո՞ր է թէ նուազելու վրայ է՝ գաղջութեան կողմը կաղալով, որն որ օր ըստ օրէ եռանդնիս կը մարէ, և որն որ առեն մը հաչակաւոր էր, բայց հիմայ գրեթէ ոչինչ:

Թէ որ իրաց հանդամանքը գժբախտաբար այսպէս էն, համարձակաբար խոստովանինք. մենք ամենևին չենք, ինչ որ պէտք էինք ըլլալ. ոչ, ներկայն անցեալին չի պատասխաներ: Ուսոմ աւելի կամ նուազ ծանր վարմունք, նեղուս նորութեանը պէտք է ձեռք զարնենք, եթէ չենք ուզեր ցմիշտ հրաժարիլ վիճակներուս պատշաճ սրբութիւնը ստանալէն, որուն անտանօթնելի պարտաւորութեամբ կապուած ենք:

30. « Ի՞նչ կ՚ուզենք ըլլալ ապագային մէջ »:

Ասիկայ է ամենահարկաւոր կէտը, այս է այն կէտը որ իրօք կրնայ գլխաւոր և էական ըսուիլ: Նախընթաց երեսները կարդալու առեն, քանի մը ընթերցողներ անտարակոյս խորհրդածութիւն մը ըրած պիտոր ըլլան. որուն վրայօք աղէկ է որ մենք ալ երկու խօսք մը զրուցենք, որպէս զի անոնցմէ յառաջ գալիք քանի մը հետևութիւններ չափազանց չերևին:

Սորտ է, մեկը կ՚ըսէ, որ կղերանոցին այն դեղեցիկ ժամանակները, և քահանայական պաշտօնին առաջին օրերը, շատ աւելի եռանդ կ՚ունենայ մեկը, և առաջին անգամները կատարած բարձր և շքեղ հանդիսներուս նկատմամբ վրկաբար սարսափ մը կը զգացուի: Բայց ա-

սով ալ մարդկային սիրտ առաքինութենէն, իւր կրցածէն աւելին պահանջելու չէ: Մարդ ամէն բանի կը վարժի. մինչև անգամ ամենամեծ աքանչելեաց ալ, երբ զանոնք յաձախ տեսնելու ըլլայ: Ուսոմ այնչափ ալ զարմանալու չէ, երբ քահանան, առաջին օրերը կրօնքին վսեմ արարողութեանց շքեղութենէն և յարգութենէն զարնուած, կամաց կամաց այն զգալի եռանդեան նուազումը զգայ, և մի և նոյն առիթներու մէջ այն առաջին օրերուն բարեպաշտ տագնապը և սրտի յուզումը չի կրէ: —

Այս առարկութեան մէկ մասին իրաւացի ըլլալը տարակոյս չի վերցներ, և ուղիղ տրամաբանութիւն չէր ըներ մեկը, եթէ պահանջէր որ այն առաջին պատրաստութենէն առեն ունեցած զգալի եռանդը առանց նուազելու պէտք էր շատ մը տարիներ ալ կենդանի և մաքուր տեւէր: Ո՛չ, երբէք այսպիսի պահանջմունք մը չի կրնար տեղիք ունենալ: Յայտ մասին կատարեալ միաբան ենք, « զգալին » պէտք է նուազի, ահաւասիկ մարդկային բնութեան տկար և անզօր մասը. բայց « իրականը » պէտք է մնայ և տևէ, ահաւասիկ մեր քահանայական պարտաւորութեանց մասը, կամ աւելի ճիշտը ըսեմ, հիմը և խնդութիւնը:

Յայտ մասին շատ անգամ բաւերու փոփոխութիւն կ՚ընենք, և միշտ հակեալ ըլլալով օգնելու այն բանին, որ անձնասիրութիւնիս կը շողոքորթէ, և մեր պարտաւորութեանց բեռը կը թեթևցնէ, և փոփոխութեան ենթակայ եղող զգալին կը չփոթենք իրականին հետ, որն որ պէտք է հաստատ և անփոփոխ մնայ: Եւ պաշտօններուս առաջին գործքերուս ընկերակից եղած փափուկ ջերմեռանդութիւնը և յօժարամտութիւնը, միշտ այնպէս չը մնալու պատրուակաւ, և նորութենէ ծագած եռանդեան գործածութեամբ մարիլը պատճառ բերելով օր ըստ օրէ ծանրանալիք քանի մը պակասութիւններ զմեզ անմեղադիր կ՚ընենք, որով բուն իսկ գաղջութիւնը զգալի եռանդեան պարզ նուազութիւն կը սեպենք, որոց հետևութիւնը այնչափ աւելի սխալ և

ողբալն կ'ըլլայ, որչափ որ աւելի անհոգ գտնուինք պատճառներուն վրայ:

Ուսոի զգուշանանք այսպիսի ժայռէ մը, որն որ շատերուն համար վտանգաւոր եղաւ, և մեզի համար ալ կրնայ ըլլալ, թէ որ հաստատուն և խղճահար քննութեամբ գործոյն ճշդութենեան չի տեղեկանանք:

31. Եւ որպէս զի ճշդութեամբ յառաջ երթանք, օրինակ մը բերենք, որն որ շատերուն դուցէ հայելի մ'ըլլայ, անձնական վիճակնին տեսնելու և հասկընալու համար:

Ա հաւասիկ Տիրացու մը որն որ կղերանոցէն նոր կ'ելլէ ուր որ իւր նորընծայութեան տարիները անցուցած էր. և ուր որ իւր բարեպաշտութիւնը կ'ածէր և կը կատարելագործուէր. ձեռնադրութեան կը մօտենայ, և քահանայ կ'ըլլայ:

Իւր պաշտօնին առաջին գործադրութեանց մէջ վերջին աստիճանի հնացում, զարմանք, տպաւորել և բարեպաշտութիւն մը կը զգայ: Իւր եռանդը այն աստիճան է որ կարծես թէ քաղցրութեան և մխիթարութեանց ծովու մէջ կը ծփայ: Ո՛ և իցէ վշտ մը իր աչքին բան մը չ'երեւիր: Ո՛չ թէ կը քալէ, այլ կը թռչի կատարելութեան ճամբուն մէջ, որուն աւելի եռանդեամբ մշտապէս գիմելու հաստատուն կայս կու տայ. ախորժելի տեսարան մըն է թէ երկնից և թէ աշխարհի:

Բայց ծերուկի քահանայ մը, չարագուշակ մարգարէ, որն որ ո՛հ, դուցէ իր անձին փորձովը արդէն գիտէ այս ջերմեռանդ երիտասարդին ապագան, կ'ելլայ ձայնով մը կ'ըսէ. « Կղերանոցի ջերմեռանդութիւն. առաջին օրերու ջերմեռանդութիւն »:

Եւ իրօք քանի մը շաբաթէ, քանի մը ամսէ վերջ ոսկին իւր նախկին փայլուհութիւնը կորնցուցեր է: Աւրեգակը քօղով մը ծածկուած է, որն որ թէ և նուրբ, սակայն այն աստիճան է որ առաջին օրերուն ճառագայթներուն գեղեցկութիւնը և զօրութիւնը նսեմացուցեր է, չարագոյն ապագայ մը գուշակելով: Ա յլասթութենէ դուրս չելլենք. հոգին կը թուլանայ, սիրտը կը պաղի,

կամքը աւելի և ս ըմբոստ կ'ըլլայ: Ողորմելի՛ երիտասարդ, ո՞ւր կ'երթաս: Ա յնպէս ալէկ և արագ կը վազէիր, հիմայ ի՞նչ բան քեզի խոչընդոտեր եղած է. « Բարւոք ընթացեալը, ո՞վ կասեցոյց զքեզ » [1]:

Թող քննէ իւր գործքերը, և անմիջապէս պատճառը կը հասկընայ: Հիմայ ալ այնպէս երկար ժամանակ աղօթքի կը զբաղի՛ ինչպէս առաջին շաբթուն մէջ: Առաջուան պէս կը պատրաստուի՛, մի և նոյն ուշադրութեամբ կը վարուի՛. ըրած առաջադրութիւնները ի գործ դնելու համար պատշաճ առիթներէն օգուտ քաղելու մտադիր է: Իւր խղճի քննութիւնները արդեօք կանոնաւոր, ճիշտ, և զոյն ալէկ ընելու չարմար պատրաստութեամբ կ'ըլլա՞ն: Ի՞նչպէս է հոգեւոր ընթերցումը. աստուածային ժամերգութիւնը արդեօք առաջին օրերուն եռանդեամբը կ'ըսուի՞: Պատարագը, որուն համար այնչափ երկար ժամանակ կը գործածէր, որ դուցէ ժողովրդեան մեծ մասը կը յոգնեցընէր. հիմայ ալ արդեօք ընդհակառակն այնչափ շուտ չէ՞, որ շատերուն ալ դայթակղութիւն ապայ: Իւր խնդիրը արդեօք դեռ և ս այն աստիճան փափուկ է, ինչպէս որ էր առեն մը, և դուցէ չափէն ալ աւելի: Մէկ խօսքով ըսեմ, բոլոր վարմունքը քահանայական պաշտօնին առաջին օրերուն կը նմանի՞:

Թէ որ այս քանի մը հարցմունքներուս չի կրնար եթէ ո՛չ դժդհոյ և բացասական պատասխան տալ, կուրծքը ծեծելով թո՛ղ ըսէ. ո՛չ, չէ թէ միայն զգալի եռանդը անհետացեր է, այլ նոյն ինքն ջերմեռանդութիւնը կը նուազի, նոյն ինքն առաքինութիւնը կը տկարանայ, հաստատմութիւնը կը պակսի: Մռայլն է որ աւելի սպառնալից կերպով կը թանձրանայ. հեռու տեղւանքը որոտացող կայծակն է, որ զարհուրելի կերպով ճաթելու վրայ է:

32. Իրը այսպէս պարզելէն վերջը, մենք մեր գլխաւոր հարցմանը վերադառնանք. ի՞նչ կ'ուզենք ըլլալ ապագային մէջ: Հոս Աստուծոյ օգնութեամբ քանի մը մտաւախուզներ փարատելու, և քանի մը քօղեր պատռե-

1 Գաղատ. ե. 7:

լաւ վատահութիւնը ունինք: Այսպէսն: Այնաւասիկ մեծ բառը, որն որ կորսուած խաբէութեամբ ներկայիս մէջ զմեզ գաղջ և անհոգ կը պահէ, եթէ ընելիքներուս անուան յուսալը:

Չի խաբուինք, սիրելի եղբայրակիցք, և որչափ որ կարելի է կանխատես ըլլալով զգուշանանք խոյս տալու օր մը ամէն մեկերնուս վրայ Աստուծմէ դրուելիք անդառձ վճռէն: Ամէն առած քայլերնիս զմեզ այն ահաւոր աւեհնին կը տանի, յորում այս վճիռը պիտոր լսենք:

Ուրեմն աչքերնուս առջին ներկայ բռնենք այս ապագան, որն որ միշտ կը վախչի մեզմէ, և որուն միշտ կը յանձնենք մեր նորոգութիւնը, զորն որ երբեք ի գործ չենք դներ:

Անդամ մը մեծ խմաստութեամբ այս հարցմունքը ընենք մենք մեզի, որն որ այնչափ սուրբ քահանայից համար ամենաբարի պատուիրուով արդասաւոր եղաւ: Այսուհետև ինչ կ'ուզեմ ըլլալ: Պիտոր ինամի, ինչպէս որ եմ: Կ'ուզեմ չարուշտիկել կեանքս այս պակասութեանց, ողջմիզի առաքինութեանց, և քահանայական պաշտօնիս հոգևոր պարտաւորութեանց, և տեսակ տեսակ պարտքերու մէջ գործածած հանապազօրեայ անհատատարմութեանս մէջ մեռնելու համար: Մինչ այսպէս պիտոր տևէմ, առանց իմ խեղճ վիճակս լաւագունի փոխելու:

Տարակոյս չի կայ որ քահանայ մը հաստատուն մըտքով այս հարցումները ինքնիրեն ընելով, և իրօք ալ իր վրայ պակասութիւնները դանելով, անշուշտ պիտոր պատասխանէ Թէ, ո՛չ, ալ չեմ ուզեր այս վիճակիս մէջ մընալ: Ո՛չ, իմ քահանայական հոգիս ալ չը պիտոր Թողում Աստուծոյ ալ ինձի ալ անհամոյ դիրքի մէջ: Ո՛չ, չեմ ուզեր զիս յաւիտենական դատաւորին առեանը երևնալու վտանգին մէջ ձգել առանց ուղղելու իմ ամբարտաւանութիւնս, այս չափազանց Թեթևութիւնս և հպարտութիւնս, այս անհոգութիւնս, մոռմոգրտութիւնս, զղրվինները ծաղրելու և չարախօսելու մոլութիւնս, այս պարտքերս կատարելու ծուլութիւնս, և ուրիշ շատ մը պակասութիւններու ամբոխը, որոնք վրաս

կը վխտան, և որոնց անօգուտ խոստովանութիւնը ամէն շաբաթ կ'ընեմ խոստովանահօրս: Այո՛, որոշումը երբ ալ չեմ ուզեր այս վիճակիս մէջ մնալ, հապա զայն փոխել և ի լաւագոյնն փոխել:

Անտակոր վիճակ, կամ աւելի ճիշտը ըսեմ, մարդկանց մեծ մասին այլանդակ կուրութիւնը: Կեանքերնին երբեք ղերբեք խաբելով կ'անցընեն. երբեմն ամենանեղքին բանի մէջ ալ կոյր են, այսինքն կամաց մէջ. կ'ուզեմ ըսելով ուզել կը կարծեն, բայց երբեմն կամաց երևան վիճակը այնպէս կը ջիղեն անոր պարզ արտաբերութեանը հետ, որ ամբողջ տարիներ կ'անցընեն առանց զայն ի գործ դնելու, և ջրոս անուան բառեր արտաբերելով գոհ կ'ըլլան, զորոնք ալ հովը կը տանի, և որոնք ուրիշ բանի չեն ծառայեր, եթէ ոչ զղուրցողները խաբելու:

Ո՛վ, որչափ տարբեր կերպով կ'ուզեն աշխարհականները երբեմն ընդունայնութիւնները: Երբ ագահը կ'ըսէ, կ'ուզեմ հարուստ ըլլալ, մի Թէ ձեռքերը մէջքը զարկած կը սպասէ որ հարստութիւնը երկնքէն իր վրայ Թափի: Երբոր զինուոր մը կ'ըսէ, ես փառք կ'ուզեմ, մի Թէ վրանին տակը կը քնանայ, կռուի երթըցող ընկերները չէտ մնալով: Երբ փափկասէրը զգաստութիւն կ'ուզէ, մի Թէ կը սպասէ որ աշխարհք զայն իւր տունը տանի, Թէ ինքը կը վազէ զանոնք փնտռելու:

Ո՛վ մեծի Թշուառութեան. միայն քրիստոնեայն և երբեմն ալ քահանան մինակ կ'ըսէ. կ'ուզեմ վարքս փոխել, իմ վիճակիս համեմատ սրբութեամբ կ'ուզեմ զիս զարգարել. այս ինչ պակասութիւններս կ'ուզեմ ուղղել, և մնացածդ Թէ զանոնք առաքինութեան գործը նել: Այո՛ կ'ուզեմ և կ'ուզեմ. սակայն անկեղծ ըլլալու համար պէտք էր աւելցըներ Թէ այս ամէն բանը կ'ուզեմ, բայց առանց փնտռելու աշխատանքի, կ'ուզեմ որ այս ամէնը իմ վրաս կատարուի, առանց ինձի հաճոյանալնելուն ալ զրկուելու, և առանց ծանր և տաղտկալի բաներ ի գործ դնելու: Այսպիսի « ուզել » մը երբք ուրիշ բան չէ եթէ ոչ ճիշտ « չուզել » մը:

Ո՛հ, ասանկ ուզելէ մը շատ տարբեր էր սուրբ

Թովմաս Ագուինացւոյն հասկցածը, երբ, իւր քրոջ հարցուցած առենը Թէ, կատարելութեան հասնելու համար ի՞նչ պէտք էր ընել, պատասխանեց Թէ — սուրբ ըլլալու համար աւելի բան մը պէտքը չէր Եթէ ոչ, միայն ասիկայ «ուզել»։ — Եւ ասիկայ մեծ ճշմարտութիւն մըն է. որովհետեւ Թէպէտ միայն ուզելը բաւական չէ, այլ աւելի աստուածային շնորհքն ալ պէտք կ'ըլլայ, այսու ամենայնիւ սոյգ է որ, այս շնորհքը ամենևին մեկուսի զլացուած չէ, այլ ճշմարտապէս ուզողին քիչ շատ առատութեամբ տրուած է։

Ուստի, սիրելի եղբայրակիցք, գոնե այս վայրկենիս մէջ կ'ուզե՞նք սուրբ ըլլալ։ Խմաստութեամբ, անկեղծաբար, արիաբար, հաստատուն մտքով, աղտու կերպով և բոլոր անձամբ կ'ուզե՞նք։ Այո՛, ըսենք. այո՛, այո՛ կ'ուզենք։

Բայց մեծ զգուշութիւն պէտք է ընենք. վասն զի շատ դիւրին է «այո՛» ըսելը. սակայն Թէ որ անկեղծ և ճշմարիտ է, Թէ որ հաստատ և որոշուած կամքի մը նշան է, ծանր հետեւութիւններ ունի, որոնք հարկաւ այնպիսի գործքեր կը պահանջեն որ բոլոր մեր արթնութեան և քաջութեան կարօտ են։

Դարձեալ կ'ըսեմ, զգուշանանք. ըսո՛ւ որուա՛մ այս դեղեցիկ «այո՛ն» քանի տարի յառաջ ալ ըսած կ'ըլլայինք, Թէ որ հիմակուան հարցմունքը ան առենը մեզի եղած ըլլար։

Ի՞նչ, մի՛ Թէ ամեն օր աղօթքներուս մէջ չե՞նք կըսեր. հարկաւ անգամն աւելի ըսենք Աստուծոյ՝ աղօթքներուս, խղճի քննութեան և ուրիշ առիթներուս մէջ ալ. — Այո՛, կ'ուզենք Թերութիւններս ուղղել, և անոնց հակառակ առաքինութիւնները ստանալ։ — Ի՞նչ եղան այսչափ ի խորոց սրտե Աստուծոյ ըրած խոստումնե՞րնիս։ Թերութիւննիս ուղղուեցա՞ն։ Առաքինութիւնները վաստկեցա՞ն։ Բայց գուցէ պահանջմունքնիս չափազանց ըլլայ, աւելի նուազը փնտռենք. Թերութիւններուս Թիւը պակսեցա՞ւ, կամ իրենք Թեթևցա՞ն արդեօք։ Նուազագոյնով գոհ ըլլանք։ Արդեօք իրաւցնի՞ մտադիր եղա՞նք այս Թերութիւնները ուղղելու և չկեղծու։

Ո՛հ, գուցէ երբեք այնպէս չ'ըլլայ։ Գուցէ պատասխան տալու տեղ ամբիոնէրուս կող ի գլուխ մնանք, և ի նշան արտանց զղջման կուրծքերնիս ծեծենք, և ուրիշ բան չընենք եթէ ոչ խոստանանք ապագային մէջ ընելու, և երբեք ընելու կինչ որ պէտք է։

Իսկ մենք կ'ուզենք բարի սեպել ընթերցողներուս ապագային վրայ ունեցած վստահութիւնին. սակայն համարձակաբար կրնանք ըսել որ իրենց այնչափ վստահացած ապագան այնպէս չերևցաւ, ինչպէս որ իրենք կ'երևակայեին։ Ներկան որ միայն ձեռքերնին էր այսօր, և որն որ վաղը արդէն անցելոյն խառնուած էր, այն ապագային մէկ մասը կը կազմեր, որուն վրայ Աստուծոյ ըրած խոստումնքները կը հիմնէին։ Այս ապագան եկաւ, բայց ինչ նոր և գեղեցիկ բաներ բերաւ։ Ո՞ւր են այնչափ խոստացուած և յուսացուած ուղղութիւնները։

Եւ ինչպէս կրնանք հաւատալ որ, երբ աղտու և արատաբոյ կարգի միջոցներէ չեն գործածուիր ապագան, ըսո՛ւն որ երբեք գեղեցիկ յոյսերով լեցուն կ'ողջունենք, ուրիշ անգամ անձկանօք սպասած ապագաներուս նոյն և նմանը չ'ըլլայ։ Ո՛հ, մանաւանդ Թէ որչափ վախնալու ենք որ այնչափ գեղեցիկ խոստումնքները ուրիշներու պէս պարապի չ'երթան. որչափ վախնալու ենք որ մի գուցէ քամի ցանելով, կետոց ալ մրրիկ հնձենք։

33. Բարուց վրայ ուշադրութեամբ ուսումնք ընողին դիւրին եղած գիտողութիւն մը խօսքերուս աւելի ազդեցութիւն կու տայ։ Գաղջ և Թերի հոգւոյ մը իւր անհատապարմութեանց ճանապարհէն չեղելով, և Թերութիւնները ուղղելով կամ պակսեցնելով հաստատապէս սուրբ կենաց գիմելին աւելի ցանցառ բան չի կայ։ Այսինքն աշխարհքիս վրայ տեսնուած անուրանալի և փորձուած ճշմարտութիւն մըն է, որուն վրայ մանաւանդ աւիսարկութիւն մը ընել ապեկ կ'ըլլայ. ուստի, որպէս զի խօսքերնիս աւելի պատշաճ և օգտակար ըլլան, մեկ կողմը ձգելով օտարները, մեր սեպհական վիճակին վերաբերեալներուն վրայ խօսինք։

Երբեք ասանկ յաճախ տեսնուած է որ քահանայք

քանի որ կղերանոցէն կը հեռանան, և քահանայական ընթացքին մէջ կը յառաջանան՝ իրենց պակասութիւն-ները ուղղելն, և աւելի կատարեալ գործուին:

Իրօք այսպէս պէտք էր ըլլալ, բայց ի՞նչ արդեօք: Այսպէս պէտք էր ըլլալ, ըստ որում ամէն օր զինչ ա-ւելի կը մօտեցընէ մահուան, դատաստանի և յաւիտե-նականութեան:

Այսպէս պէտք էր ըլլալ, վասն զի մեզի տրուած ժամանակը, միայն ասոր համար մեզի չնորհուած է, որ-պէս զի միշտ աւելի և աւելի ըլլալու չգանգիք:

Այսպէս պէտք էր ըլլալ, որովհետև ամէն վայր-կեան անսահման չնորհքներ կ'ընդունինք, Քանկագին չնորհքներ, մանաւանդ պաշտպանութեան չնորհքներ, առաւել սիրոյ չնորհքներ, քահանայի յարմար չնորհք-ներ, եթէ այսպէս պատշաճ է ըսելը:

Այսպէս պէտք էր ըլլալ, ըստ որում սոկոլ սեղա-նին մօտենալով, և ամէն օր Յիսուսի Քրիստոսի սուրբ և կենարար մարմնով և արեամբ կերակրելով, այս երկրը-պագելի արիւնը մեր վրայ արդիւնք մը պիտոր յառաջ բերէր, եթէ մեր անհաւատարմութեամբ և ընդդիմու-թեամբ խոչընդոտան դրած չ'ըլլայինք:

Կրնանինք ուրեմն, այսպէս պէտք էր ըլլալ: Բայց ի՞նչ արդեօք: Մի՛ թէ գժբաղդաբար իրաւունք չունի՞նք Յի-սուսի նմանութեան բարեպարծիչ հեղինակին հետ ըսե-լու. « Եթէ ամ յամէ զմի ի մոլութեանց խլէաք, վաղ-վաղակի լեալ էաք առը կատարեալք: Բայց արդ բաղում անգամ ղհակառակն տեսանեմք. զի լատադոյնս և մեքրա-գոյնս գտանեմք զմեզ ի սկզբան գարձի, քան յետ բաղ-մամեայ ուխտադրութեան: Պարտ էր եռանդեանն և յա-ռաջադիմութեան օր ըստ օրէ առաւելուլ, այլ այժմ մեծ լիմն համարի, եթէ որ զառաջնոյ եռանդան զմտան ինչ յանձին ունիցի »[1]:

34. Սակայն դիտողութիւններս յառաջ տանինք: Ո՞րն է քահանային սովորական վարքը, քանի որ բնած Ճամբուն մէջ յառաջ կ'երթայ:

1 Գեմբ. Գիրք Ս. Գլ. ԺԱ:

Հոստեղ, աղէկ միտ դիր, հոստեղ չենք խօսիր այն բարեբաղդաբար հազուագիւտ քահանայից վրայ, որոնք կղերին ամթի և նախանձնք եղած են. որոնցմով կարծես թէ Աստուած թող կու տայ այնչափ զարհուրելի գայ-թակղութիւններ, աւելի սարսափելի անկումներ, որ-պէս զի թէ մենք դողանք, աղօթք ընենք և հակենք, և թէ ժողովուրդն ալ հասկընայ որ կրօնքիս աստուա-ծային է. վասն զի կը տեսէ և իւր չբեղուութենէն ամենևին բան մը չի կորնչցներ, թէ և նոյն իսկ այնպիսիներէն անարգութեամբ ծածկուած, որոնք աւելի պէտք էին պատիւը և փառքը աւելցընել: Ո՛չ, խօսքերնիս այս թը-ղուածներուն վրայ չէ: Այս տեսակ քահանայից վրայ մեր ամէն խօսքը մեկ անհրաժեշտ « ի զօրագունդի » մը համար մըձի խիստ հարուած մը պէտք էր ըլլալ իրենց յանցաւոր գլխուն վրայ: Ամէն մարդ արդէն կը տեսնէ:

Եւ ոչ ալ միտք ունինք այն սուրբ քահանայից վրայ խօսելու. այն Աստուծոյ յարգելի արանց վրայ, կ'ըսեմ, որոնք միշտ կը ջանան և կը տքնին մեծագոյն կատարելու-թեան հասնելու: Ո՛չ, ոչ անոնց է և ոչ ալ սոնց մեր ակնարկութիւնը: Մինչև կարգին կը դիտէ խօսքերնիս. քահանայից այն երևելի բազմութեանը, կ'ըսեմ, որոնք անսասրակեայ յարգելի են շատ մը պատճառներով: Բայց. բայց թէպէտև կը գարշին և կը զգուշանան ծանր գայ-թակղութիւններու առիթներէ, այսու ամենայնիւ յօ-ժարութեամբ աչք կը գոցեն շատ մը թեթև պակասու-թեանց վրայ, որոնք իրաւցընէ երբեմն սրտերէն հառա-ջանք մը գուբս կը քաշեն, բայց հետևրնին ալ քաջու-թեամբ կառւելու համար բաւական սիրտ չունին: Այս տեսակ քահանայից վրայ կ'ուզենք խօսիլ, երբ կը հաս-ցընենք թէ դիւրին է արդեօք այսպիսիները տեսնել որ պակասութիւնն ուղղեն, առաքինութիւնն կատա-րելագործեն, և Տրնտեղեան սուրբ ժողովքին պա-տուէրին հնազանդին. « ի թեթև յանցանաց անգամ, ողք թէ չինքեանս գտանիցին, փախիցեն քահանայք »:

Ո՛չ, ըսենք սրտերուս մեծ ցաւովը, շատ քիչ անգամ կը տեսնուի որ այս տեսակ քահանայք ի գործ դնեն

իրենց կենաց ուղղութիւնը, զորն որ միշտ վաղուան կը թողուն:

Երբեմն այս անկարգութիւնը նոյն իսկ կղերանոցէն ակած կ'ըլլայ: Շատ քիչ են այն քահանայք որ կղերանոցէն ելլելու առենին ապահով ըլլան իրենց պակասութիւնները հոն թաղած ըլլալնուն վրայ: Դժբաղդաբար երբ շատ տարբեր է: Ո՛չ թէ բոլորովին մարած, այլ միայն թմրած պակասութիւնները յարմար առիթ կը նային որ աւելի առտիճ երևին:

Կղերանոցին մէջ առանց հակառակութեան առ բարեպաշտութիւնը մղուած էին. վանդնեերուն հեռաւորութիւնը, միշտ զբաղած և կանոնաւոր կեանքը, մեծաւորաց խորհուրդները և արթնութիւնը, սուրբ խորհրդոյ յաճախութիւնը, շատ մը ջերմեռանդ ընկերներու բարի օրինակները, ամէնքն ալ առաքինութեան կը տանին, և թերութիւնները կը ծածկեն:

Բայց մեծաւորաց փորձառու աչքը արտաքին պարկեշտութեան երևոյթին տակը կը զննէր քանի մը պակասութեանց բողբոջները, որոնք թէ և կղերանոցի մէջ կղերականի մը վրայ նշմարուած թեթև էին, սակայն կը սպառնային յետոյ ծանրանալու քահանայի մը վրայ: Եւ այսպիսի փորձառութեամբ մեծաւորները ան առենէն ի վեր կրնային անսխալաբար դուշակել որ այս ինչ սիրացուն կամ նորընծան յետոյ ամբարտաւանութեան ախտին ալեսող էնթարկուէր, միան ալ բամբասանոց, և այնպէս միւս ախտերու վրայ ալ խօսելով, մնքի ցնորմանն, ծուլութեան, հեշտասիրութեան, բարկութեան, աստուածպային ծառայութեան մէջ հեղգութեան և այլն, և այլն:

Եւ իրօք սովորաբար ինչ կը պատահի: Սակայ շատ կարճ առենէ մը վերջը, ձեռնադրութեան պատրաստութեանը համար եղած հոգևոր կրթութենէն, ձեռնադրութեան արարողութեան հանդիսաւորութենէն, և պաշտաման առաջին գործքերէն յառաջ եկած եռանդը դաղնութեան կը փոխուի. ծածկուած և արմատախիլ չ'եղած պակասութիւնները, ինչպէս որ ըսինք, երևնալ կը սկսին. և ահաւասիկ մեծաւորաց դուշակութիւնը ներուն ճշտութիւնը:

Եռանդուն և կարգաւորեալ աստուածպաշտութեան, և գաղջ ու անկատար աստուածպաշտութեան մէջ քիչ մը ալեկոծութենէ եռքը, հին և նոր մարդու մէջ քիչ մը կռուելէ վերջը, սպառնացող և ուղիղ խղճի մը և ախտին հետ դիւրութեամբ գաշնագիր եղող մղար խղճի մէջ վարանած այս մեր երիտասարդը կամաց կամաց կը քարշուի ու կը ձգուի այնպիսի միջին տեղ մը, ուր որ չարացած բնութիւնը յօժարութեամբ կը հանդչի. և սովորաբար հոն կանիկ կ'առնէ կը մնայ:

Այսպիսի վիճակի մը մէջ ապահով կը կարծէ ղինքը, և որովհետև հոգեւոր չափ կը սարսափի ծանր մեղքէն, և գեթ ևս ինքը ղինքը արժանի և պատուաւոր քահանայ կը կարծէ՝ հաւատարիմ ամէն էական պարտաւորութեանց մէջ, հանգիստ կը մնայ իւր հանապազորեայ թերութեանց և անհաւատարմութեանց մէջ: Սակայն չի կարնար ուղիղ խղճին ձայնին, որն որ միշտ կը տրանջէ իւր վարմունքին վրայ. և ընդհակառակն մղար խղճին եռանդն կ'երթայ, որն որ զինքը շողոքորթելով կը խաբէ: Նոր մարդուն չի հնազանդիր, որն որ երբեն կ'ըսէ, — Սկսա առ, յառաջ երթանք: — Եւ հնոյն հակառակ կը ժպտի, որն որ կ'ըսէ, — Ո՛չ, քիչ մը հոս հանգիստ առնենք: —

Այս տրամադրութեանց մէջ խաղաղութեամբ կ'ապրի իւր պակասութեանց հետ: Եւ ըստ որում գոնէ մէկէն ի մէկ զինքը մեծ և ծանր յանցանքի մէջ չեն ձգեր, անոր համար անոնց համբերելով կը հանդուրժէ իբրև հիւրերուս. որոնք անշուշտ թէ և ձանձրացուցիչ են, բայց այնպիսի հիւրեր՝ որոնց այսու ամենայնիւ շատ աւելի դիւրին է համբերելը քան թէ վռնտելու համար աշխատիլը: Ասկից յառաջ կու գան ցնորած կեանքի, թեթևութեան, ծաղրածութեան, չափազանց կայտառութեան, բարկանալու դիւրութեան, ծուլութեան, անմխիթարութեան, հեղգութեան և աստուածպային ծառայութեան մէջ պաղութեան ունակութիւնները: Այ-

նուհէտև այն եռանդը, որն որ հաղիւ թէ եռանդի ա-
նունը կրելու արժանի է, որն որ միայն հասարակ և սո-
վորական գործքերով կը մնանի, և որն որ ոչ երբեք
սուրբ քահանայի մը բարեպաշտ յաջողակութեանց և
մեծագործութեանց սիրովը կը բորբոքի:

Ուստի, կրկնենք անգամ մըն ալ, այսպիսի թերի
վիճակի մը մէջ ապահովութիւն կը ստանայ, մանաւանդ
տեսնելով որ վերջապէս ինքը միևնակ չէ: Անտարակոյս —
սուրբ քահանայ մըն եմ — ըսելու չի յանդգնիր. բայց
ի՛ըսէ, որ կրնամ փրկուիլ առանց աւելի բան մը վերնա-
շելու, և այսպէս կէս-հանգիստ ի՛ուղղէ իւր քայլե-
րը դէպ ի յաւիտենականութիւնը քիչ մխիթարու-
թեամբ, բայց ձիշտը ըսենք, գաղտնի սրտնեղութեամբ
և անձկութեամբ լեցուն:

Ահաւասիկ այն քահանայից վիճակին ըստ կարի նկա-
րագիրը, որոց ի՛ակնարկենինք, երբ ի՛ըսենք թէ ցան-
ցառ է մանաւանդ թէ հազուագիւտ տեսնելը որ իրենց
պակասութիւնները ուղղեն, առաքինութեանց մէջ կա-
տարելագործուին, և անորոշ ապագայի մը մէջ այն քա-
հանայական կատարելութեան հասնելու հոգ տանին,
որուն հայկաւորութիւնը սուրբն Պօղոս այսպէս կը
յիշէ. — Քահանայք ոչ միայն պէտք է որ առաքինի ըլ-
լան, այլ կատարեալ առաքինի: — Եւ կը յաւելու թէ
— Քահանայիցմէ պահանջուածը հասարակ բարեպաշ-
տութիւն մը չէ, այլ գերազանց բարեպաշտութիւն մը,
կրօնաւորներէն պահանջուած բարեպաշտութենէն շատ
աւելի վեր: —

Կրկին փորձառութեան հարցընենք: Ո՞ր են այն
քահանայք, որոնք իրենց քահանայութեան առաջին
կամ երկրորդ տարին՝ երկու երեք պակասութեանց են-
թարկուած ըլլալով՝ արիաբար կռուելով և յառաջդի-
մութեամբ դէմ դնելով՝ զանոնք բոլորովին անհետ ըրած
ըլլան:

Թէ ոչ հնարք զանոնք թերեւսօրէն, ցնդած, դատար-
կապորտ, խածան և եռանդուն բարեպաշտութեան գործ-
քերէ հեռու կը տեսնենք, արդեօք կրնա՞յ ըլլալ որ, ըստ

օրինակ, տասը տարի ետքը զիրենք ծանրաբարոյ, ամ-
փոփ, ուսումնասէր, եղբայրասէր և հոգևոր գործոց ու
կրթութեանց եռանդով լեցուն գտնենք: Աչքերնիս բա-
նանք, և սովորաբար հանդիպածը զննելով, հարցընենք
մենք մեզի, թէ արդեօք կեանքերուս մէջ այսպիսի գար-
ձերով ստէպ միխիթարուած ենք:

35. Աղէ, այս խորհրդածութիւնները կարենային
աղդու ապաւորութիւն մը ընել վրանիս. կարենային
փրկարար երկիւղ մը պատճառել տեսնելով ապագայ
մը, գուցէ շատ կարճատև, որուն մէջ կը յուսանք մեր
կենաց նորոգութիւնը, կատարեալ գարձը, գարձ՝ որուն
շատ քիչ օրինակները տեսնուած են. «Անիւ և գողու-
թեամբ զանձանց փրկութիւն գործեցէք»[1]:

Ապագայ, ապագայ. որչափ խաբէութեանց պատ-
ճառ ես եղած, և որչափ կը նմանիս այն սուտ երեւոյթ-
ներուն, որոնք անապատներուն մէջ ճանապարհորդ-
ները խաբելով ի կորուստ կը տանին:

Աղէ ղգուշանանք, սիրելի եղբայրակիցք, այսպիսի
կորստական խաբէութեան զոհ չ'ըլլալու: Մտածենք որ
եթէ միևնակ օր մըն ալ չի կռուինք, և մեր պակասու-
թեանց դէմ չի դնենք, ատոնք կը զօրանան, և առաքի-
նութիւններն ալ բոլորովին ուժէ կ'իյնան: Մտածենք
որ աստուածային ընորհայ մեր կողմանէ գործակից չը
գտնուելնիս նոյն ընորհայ նուաղելուն պատճառ կ'ըլ-
լայ, և այսպէսով օր ըստ օրէ ալ կամքերնիս կը տկարա-
նայ: Մտածենք որ յայտնապէս կ'երևի որ յետոյ քիչ
ընորհքով և աւելի տկար կամքով երբեք ալիտոր չը կա-
րենանք ընել, ինչ որ անցեալին մէջ աւելի առատ ընորհք-
ներով, և աւելի զօրաւոր կամքով ընելու սիրտ չ'ըրինք:
Մտածենք որ քահանային եռանդը իւր սրբութեան աս-
տիճանին միշտ համաձայն է, և հետևաբար ալ գուցէ
շատ մը մարդկանց փրկութիւնը մանաւանդապէս մեր
այն կատարելութենէն կախուած է, զորն որ ձեռք բե-
րելու համար այնչափ նեղութիւն և ձանձրութիւն կ'ի-
մանանք, և երբեք ալ չենք շահիր:

1 Փիլիպ. Գ. 12:

Ուստի ալ չ'ըսենք, ինչպէս որ երբեմն Օգոստինոս կ'ըսէր, վաղը. « Ա՛ւ վաղիւն առ վաղիւն »: Հապա Դաւիթ մարգարէին հետ կրկնենք, հիմայ, հիմայ կ'ուզեմ սկսիլ, և խոհեմութեամբ այսպիսի կարևոր գործի մը ձեռք զարնել. « Ասացի Թէ այժմ սկսայ »[1]: Մեղի սեպհականենք գժբախտաբար երևելի եղած հեղինակի մը խօսքերը, որոնցմէ ինքը իրեն համար օգուտ քաղելու բախդը չ'ունեցաւ. — Վաղն ալ ժամանակ կայ՞: Յիմար, այս քու չարաչար գործածած ժամանակդ, քու դէրեզմանդ կը փորէ, իսկ քու վաղդ ալ յաւիտենականութիւնը պիտոր ըլլայ: —

1 Սաղմ. 29. 11:

ԵԿԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Քահանայական սրբութեան առաջին միջոցը — Առաքինութիւնները:

36. Անհնարն ծանօթ բան է որ, եթէ մարդութիւնը կը պղծէ և կ'ապականէ, քրիստոնէական առաքինութիւնները ալ կը սրբեն և կ'առողջացընեն: Մարդութիւնը բնականապէս զմարդը առ չարն կը տանի. իսկ ընդհակառակն քրիստոնէական առաքինութիւնները դէրբնականապէս և հաստատաբար առ բարին կը դարձընեն. ուստի և սրբութեան զօրաւոր միջոց մը կը կազմեն, և առանց որոյ սրբութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ ստուեր և ցնորք մը: Սուրբ կ'ըսուի միայն անիկայ որ ունի ամէն առաքինութիւնները, և անդադար ի գործ կը դնէ զանոնք հաւատոյ պատճառներով, Թէ որ մէկ հատ մըն ալ պակսելու ըլլայ, ալ սուրբ չ'ըսուիր. ինչպէս նաև Թէ որ ամէն առաքինութիւններն ալ ունենալով և իրենց տեղ ի գործ դնելով, եթէ պակսի, կամ դանդաղութեամբ, և կամ անկատար պատճառներու համար ի գործ դնէ, սրբութենէ շատ կամ նուազ հեռու կ'ըսուի:

Առաքինութիւնները ամենուն ալ հարկաւոր են, ըստ որում ամէնքն ալ պէտք է կռուին չարին դէմ և բարին գործեն, որն որ ուրիշ կերպով կարելի չէ, եթէ ոչ առաքինութեամբ. սակայն այսպիսի պարտաւորութիւն մը անսահմանաբար աւելի խիստ է քահանայի համար, քան Թէ պարզ հաւատացեալ մը: Իւր վիճակին դերազանցութիւնը, Աստուծոյ հետ ունեցած մշտական և մտերիմ յարաբերութիւնները. ժողովրդեան տալու ատիպուած բարի օրինակը, հրապարակաւ ամպիոնէն և ծածկաբար խոստովանարանէն տուած առաքինութեան դասերը, ընդունած ընտրեալներուն առաւելութիւնը. վասն սրբութիւնը, առանց որոյ իւր պաշտօնը ամուլ և կամ քիչ պտղաբեր կ'ըլլայ, այս ամէնքը կ'ապացուցանեն

այն անտնօրինելի հարկաւորութիւնը զառաքինութիւնները մշակելու և ի գործ դնելու այն կատարելութեամբ, որ իւր գերագոյն արժանապատուութեան որոշիչ նշանը պիտոր ըլլայ:

Ո՛հ, Աստուած տար որ աղէկ մը համոզուէր այս ճշմարտութեանց վրայօք ուշադրութեամբ կարդալով ինչ որ պիտոր ըսենք առաքինութեանց ամենակարևոր նիւթին նկատմամբ: Ամէն առաքինութեանց համար զատ գլուխ չը կարդերնուս պատճառն է որ մէկ պիտոյտ տակ հաւաքեր ենք զանոնք, որ մէկմէկու հետ շատ մերձաւորութիւն ունին, բայց ամէն գլուխն ճակատագրին մէջ կը նշանակուին այն գլուխն մէջ յիշուած առաքինութեանց անուններըը:

ԳԼՈՒԽ Ա.

Հաւատք — Հաւատոյ կեանքը եւ ոգին — Հաւատոյ կենաց գործադրութիւնը — Դիտաւորութեաց մաքրութիւն:

37. Հաւատքը, կ'ըսէ սուրբն Ամբրոսիոս, ամէն առաքինութիւններու հաստատ հիմն է. « Հաւատք՝ հիմն հաստատուն ամենայն առաքինութեանց »: Վերջապէս հաւատքը, ալ ինչ առաքինութիւն (մանաւանդ քրիստոնէականները) կրնաս գանել: Ի՞նչպէս պիտոր սիրեմ զԱստուած և ի նա յուսամ, թէ որ անոր չեմ հաւատար: Ի՞նչպէս ի գործ պիտոր դնեմ խոնարհութիւնը, մահասցուցումը, համբերութիւնը, ժուժկալութիւնը, եթէ չեմ հաւատար որ Աստուած ինձի կերպակաս հրամայած է այս առաքինութեանց գործադրութիւնը. և եթէ ի գործ չի դնեմ, սոսկալի պատիժներ պատրաստած է ինձի համար:

Բայց եթէ հաւատքս զիս զրկելով, անով ամէն առաքինութենէ ալ կը զրկէք, ինչ նախանձով կրնամ ուրիշներու վրայ մշակել զայն, որ իմ անձիս վրայ անհոգ եմ թողուցեր. և թէ իմ և թէ իմ խնամոցս յանձնուած հոգւոց սրբութեան չ'աշխատելուս ալ ինչ քահանայ՝ ինչ հովիւ եմ ես:

Այս մեծ ճշմարտութեանց խորհրդածութիւնն էր որ Պաւլայեան սրբոյն Վիկենտիոսի աղղեց այն իւր պարծելի առածը — թէ մեր օգտին և թէ այլոց փրկութեանը համար բացարձակապէս հարկաւոր է միշտ և ամէն բանի մէջ հաւատոյ գեղեցիկ լուսոյն հետևիլ: —

38. Այսպիսի յայտնի ճշմարտութեանց վրայ առիթ առնելի պնդելով դուցէ յարգելի ընկերակիցներուս նախատինք մը ըրած ըլլանք: Հաւատոյ մասանց մէջ և ոչ մէկ քահանայ մը այս առաքինութեան հարկաւորութեան վրայ կը տարակուսի. ամէնքն ալ զայն կ'ընդունին: Մի՛ այն « Քահանայի Առաջնորդ » գրքոյկին հեղինակին հետ կ'ըսենք. — Անկրօնները հետ շատ սերտ յարաբերութիւն մ'ունենալ. բայց առիթը եկած առեն, քաջութեամբ և առանց մարդկային նկատման պաշտպանել քու հաւատքդ: Առանց ակնածութեան ընդունէ եկեղեցւոյ ապստրած սովորութիւնները, և որդիական հպատակութեամբ հնազանդիլ անոր ամէն պատուիրանացը: Երբէք չը սրանչելու հաւատքիդ խստութեանը վրայօք, ոչ չափազանց հետաքրքրութեամբ ու անհանգստութեամբ պատշաճութեանը վրայ դատողական քննութիւններ ընելու: Աստուած մի արասցէ որ քու չըհնազանդներուդ վրայ երեւին այն ապստամբողական խօսքերը. — Բանաւորութիւն է, անձնիշխանութիւն է, ըստ քումց բան մըն է: —

Աւելորդ ենթադրելով կ'ըսենք որ հաւատոյ գործադրութեան և անոր կենաց վրայ մանաւանդ ուշադրութիւն մը ընելնիս շատ աւելի հարկաւոր է: Ասոր համար պէտք է հաւատալ որ այս հոգին զբաւորը կերակուր մը ունենայ, որն որ ըստ իմիք այսպիսի կենաց սկիզբը և աղբիւրը պահպանէ: Արդ Աստուած կ'ըսէ որ

այս կերակուրը հաւատքն է. « Արգարն իմ ի հաւատոց կեցցէ » [1]:

Այս ամենակարեւոր Ճշմարտութիւնը աղեկ մը հասկընալու համար զննենք, ըսր օրինակ, անհաւատի մը համ վայրենիի մը հոգին, որն որ յայտնեալ կրօնքին ամենևին տեղեկութիւն մը չունի: Անհաւասիկ խելքը միայն իւր բանականութեան գործածութեանը ձգուած՝ և բանականութեան աշխարհքին դուրս՝ իւր խելքը բան չի կարեր. իւր գործողութեանց ապացոյցները և պատճառները շատ հեռու տեղւանք վիճուելու հարկ չի կայ, յինքն են, իւր անձնական բարքն և բնաւորութիւններն են: Բայց հոս գայ Աստուած, և այս վայրենիին կը խօսի համ խօսել հոս տայ, Ճշմարտութիւններ կը յայտնի, և օրհնք մը կը դնէ, անոր մեծութիւնը իրեն հասկըցունելով, զոր ան որ թէ որ պահէ՝ երկինքը իրեն վարձք կ'առաջարկէ. բայց եթէ չի պահէ, յաւիտենական սպառիժ կը սպառնայ. և իւր պարտաւորութիւնները աղեկ մը մեկնելէն վերջը, զանոնք աղեկ կերպով ի գործ դնելու միջոցները հոս տայ: Չէք տեսներ որ այս հոգւոյն մէջ նոր հոգևոր աշխարհք մը կը բացուի: Աստուածս, հաւատոյ անսահմանի տարածութեանց մէջ վերացած է. իւր կեանքը և կենաց գործողութիւնները բանականութեան նեղ սահմանին մէջ սպրսիակուած կին. բայց « հաւատքին զարմանալի լոյսը » [2], ինչպես կ'ըսէ Պօղոս Առաքեալը, նոր աշխարհք, նոր երկիր և նոր ու անսահման երկինք մը կը բանայ աչքերուն առջև, և բարձր նպատակի մը կ'ուղղէ անոր գործքերը:

Կարծես թէ երկրորդ կեանքի մը կը ծնանի, Աստուած ու հաւատքի մէջ, որով Աստուած ինքը կը լուսաւորէ, սուրբ և սրբութեամբ արդիւնաւոր կենաց զօրութիւնը կը գտնէ, զոր ան որ յառաջուց ամենևին չէր գիտեր, « և նոր արարած » [3] մը կը գառնայ, ըստ Առաքելոյն գեղեցիկ խօսքերուն. — Ով որ ի Քրիստոս ծնած է, նոր արարած մը կ'ըլլայ. հին մարդը անհետ կ'ըլլայ, և ինքը նոր Ճանապարհի մը վրայ քալելով յառաջ կերթայ: —

Յայտնի բան է որ եթէ այս հոգին իր ունեցած հաւատոյ սկզբան հնազանդելով և համաձայնելով գործելու ըլլայ, իրեն համար ամէն բան կերպարանափոխ կ'ըլլայ. ամէն բան, մինչև անգամ անտարբեր գործողութիւնները ալ, խորհուրդներն ալ, ինչուան ամենաներքին զգայմունքներն ալ: Աստեն մը մարդու կենաք կ'սպրեր, հիմայ Աստուծոյ կենաք կ'սպրի, որ իրեն միայն յարմար կու գայ « Կենդանի եմ... ո՛չ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս » [1]: Բնականէ գերբնական արարած մը գարձած է. « Հաւատովը որդւոյն Աստուծոյ կեայ » [2]: Աչխարհքի վրայ կ'սպրեր, բայց հիմայ իւր կենցաղավարութիւնը երկինքն է. « Քաղաքացութիւն Աստուծոյ ի նեղքս ի ձեզ է »[3]: Ո՞վ չի տեսներ որ այս հոգւոյն կեանքը նոր կեանք մըն է, որուն երկնային աղբերութիւնը կը զգայ. և երբ ուղեղը ըլլայ, այսպիսի կեանք մը կրնայ իրեն երկինքը համար արգեանց աղբիւր մը և յաւիտենական փառաց սկիզբ մը ըլլալ: Այս է մեր խնացած և ծանուցած հաւատոյ կեանքը: Դժբաղդաբար այս հոգևոր կեանքը շատ մը իրմով կենդանացած տեսակ տեսակ հոգւոց համար մի և նոյնը չէ: Ամենց վրայ մարմնաւոր կենաց պէս՝ իւր տկարութիւնը, պատանեկութիւնը և հասունութիւնը ունի. թուլութեան, տկարութեան և մեղրութեանց ենթարկուած է, ինչպէս նաև հիւանդութեանց, մինչև անգամ բոլորովին ալ կը մարի: Խակ ընդհակառակն ուրիշ հոգւոց վրայ ամ աւելի շուտ կը բացուի և կը զարգանայ, աւելի զօրութիւն ցոյց կու տայ. ունի իւր յարձակումները, և այն յարատև ուժեղութեան կայտառութիւնը, որն որ կատարեալ առողջութեան նշան մըն է:

Ինչէ՞ն յառաջ կու գայ տանկ բնութեամբ և հաւատքով նոյն և նման երկու հոգւոց մէջ այսպիսի տարբերութիւն մը: Ինչէ՞ն կ'ըլլայ որ մեկը տկար, թոյլ, ողորմելի, հիւանդոտ և յոգնած կ'ըլլայ, մինչդեռ միւսը

1 Եբր. ժ. 38:
2 Բ. Կորնթ. ե. 17:
3 Ղուկ. ժէ. 21:
1 Գաղատ. Բ. 20:
2 Գաղատ. Բ. 20:

ասանկ առաղջ, ուժեղ, եռանդուն և գործնեայ է։ Այնոր համար է որ մեկը « հաւատքով կ'ապրի », և միւսը ոչ։ Ինչո՞ւ համար այս ինչ քահանան գաղջ, անտարբեր, ծոյլ է, և իւր կատարելութեան վրայ բոլորովին անհոգ կը գտնուի։ Վասն զի իւր կեանքը « հաւատոյ կեանք » չէ։ Եւ ընդ հակառակն ինչո՞ւ համար միւսը նախանձայոյզ, աղօթասէր, ջերմեռանդ է, և միշտ իւր պաշտօնին գործոյը զբաղած. վասն զի իւր ճշմարիտ քահանայական հոգին մշտատև « հաւատքով » բարեխառնած է։

39. Բայց գուցէ ըսէ այս գաղջ քահանայից մեկը, որոնց վրայ կը խօսինք. Ես ալ հաւատք ունիմ, եւ հաստատապէս կը հաւատամ որչափ որ կրնայ հաւատալ ջերմեռանդ քահանայ մը. ուստի ինչի՞ն յառաջ կու գայ այս տարբերութիւնը, զոր ես ալ կը տեսնեմ իմ և անոր մէջը։

Այս հարցման պատասխանը ամենակարեւոր խորհրդածութիւն մը կը պահանջէ, զորն որ մանաւանդ կերպով ընթերցողներուս կը յանձնենք։ — Հաւատք ունենալ — և հաւատքով ապրիլ — երկու զատ բաներ են, որ երբեք մեկմեկու հետ շփոթելու չի գար։ Որչափ ոք զօրաւոր և կորստած մեղաւորներ կան, որոնք ցարդ սրտերուն մէջ կենդանի պահած են ջհաւատքը։ Հաւատք ունին, ատոր է, բայց հաւատքով կ'ապրի՞ն։ Արդեօք այսպիսիներո՞ւն համար կ'ըսէ Աստուած սուրբ Առաքեալն բերնովը, թէ « Արդարն իմ ի հաւատոյ կեցցէ »։ Մենք ատոր գիտենք որ այսպիսիներուն համար չէ գրուած այս խօսքը։

Ուստի կրնայ մեկը հաւատք ունենալ, և հաւատքով չապրիլ։ Այս կենայ երկու վիճակներու մէջ եղած տարբերութիւնը, երկու ցորենի սերման տարբերութիւնը կը նմանի, որոնց մեկը մոխրի մէջ ցանուած ըլլար, իսկ միւսը պատրաստուած պատշաճ հողի մէջ. հչնդքով, կերպարանքով և էութեամբ բոլորովին մեկմեկու նման երկու հատիկ են. այսու ամենայնիւ, մեկը չի բողբոջիր, իսկ միւսը հարիւրապատիկ ալ պտուղ կու տայ։ Այսպէս է նաև հաւատքին մեծագին պարգեւը. գաղջերուն

վրայ անպտուղ, իսկ ամենաարդիւնաւորը՝ սուրբերուն վրայ։

40. Շատ նշանաւոր և զարմանալի է հաւատքին շատ կամ նուազ հաւատքով ապրող հոգւոց վրայ ունեցած պատուիրեալներուն տարբերութիւնը։

Ջննենք մեծ ծանրամբութեանց օրերը եկեղեցիները խառն ի խուռն յաճախող հաւատացելոց բազմութիւնը։ Ենթադրենք որ մեկերնին և ոչ մեկ անկրօն մարդ մը ըլլայ. ամենքն ալ հաւատացեալ են, թէ բարի և թէ չար, մեղաւոր և սուրբ, ամէն ատենէ և վիճակէ։

Այսչափ հոգւոց մէջ և ոչ մեկը կը գտնուի որ չի հաւատայ հաւատալիք բաներուն. մի առ մի քննեցէք, և կրնայ հաւատքին միութիւնը և նոյնութիւնը չնոյնութիւն կը պատճառէ ձեզ։

Հիմայ ո՞վ չի հաւատար որ այս հաւատքը, հատա բերլապէս մի և նոյն, հաւասարապէս ամենքին վրայ ալ մի և նոյն արդիւնքը յառաջ սիտուր բերէ։ Մի և նոյն պատճառ ըլլալով, արդիւնքն ալ նոյն և նման պէտք է որ ըլլան. բայց ասանկ է արդեօք։ Ո՛չ, այսչափ բազմութեան մէջ երկու հոգի չէք կրնար գտնել, որոնց վրայ հաւատքը մի և նոյն կերպով բացուի և գործէ։

Ոմանք հաւատքի մէջ աւելի գերբնական առաքինութիւններ ձեռք բերելու զօրութիւն մը կը գտնեն. իսկ ուրիշները և ոչ մտքնութեան մը դէմ հաստատ մտքով պատերազմելու քաջութիւնը կրնան առանձ. և այն բազմութեան անհամար վիճակներուն մէջ կը տեսնէք չարին ու բարւոյն ամէն տպաւորութիւնը, կատարելութեան և մեղապարտ թշուառութեան ամէն կերպը, ջերմեռանդներու և գաղջերու ամէն տեսակը։ Այսու ամենայնիւ հաւատքը կենդանի է այս ամէն տեսակ հոգւոց մէջ։ Այնասոսկալի ճշմարտութեանց ալ այնչափ հաւատք կ'ընծայեն անգղջ մեղաւորները՝ որչափ որ կրնան ընծայել ամենասուրբ հոգիները. մեղաւորները՝ որոնք երբեմն հաւատքին մէջ դողալու վատաբեր պէտք չունին գտնել, և չեն դողար ու տոկար. ամենասուրբ հոգիները՝ որոնք երբեմն

հաւատքին մէջ վստահութեան և քաղցր յուսոյ պատճառներ պէտք էին գտնել, այսու ամենայնիւ վախու և չիշխանութեան մէջ ինկած կը տեսնուին:

41. Այս խորհրդածութիւնները շատ մը քահանայից համար ալ պէտք էին աղդու ըլլալ, և միանգամայն արդասաւոր բարի հետեւութեանց. և երջանիկ ըլլային եթէ ուշի մտօք և գործ դրուէին: Ջննեցէք, զոր օրինակ, հոգեւոր կրթութեանց ժամանակ այն քահանային բաղմութիւնը, որոնք ամպխտնին բոլորտիքը շարուած՝ Աստուծոյ պաշտօնէին ծանր խօսքերը կը լսեն. ով կրնայ տարակուսիլ որ ամէնքն ալ ամբողջ ու կատարեալ հաւատքով լեցուն չ'ըլլան: Կրնա՞յ գտնուիլ արդեօք մէկ հատ մըն ալ, որ ո՛և իցէ վարդապետութեան վրայօք կամքով վայրկեան մըն ալ կասկածի մէջ մտնէ: Արդարև ոչ. վասն զի կենդանի և զօրաւոր հաւատքով լեցուն են: Այո՛, այս հաւատոյ յարգելի վարդապետները ունին այն հաւատքը զոր կը քարոզեն: Բայց ո՛հ, ամէնքն ալ արդեօք հաւատքով կ'ապրի՞ն. մի թէ հաւատքով ապրող արդարոց դասը կը գտնուի՞ն:

Այս հարցմանց պատասխանը իրենց գործոց մէջ փնտռենք: Քիչ մը վերը պարզ հաւատացեալոց վրայօք ըսածնիս արդեօք քահանայից նկատմամբ ալ չէ՞նք կրնար ըսել: Քահանայից այսչափ բաղմութեան մէջ կրնա՞յ գտնուիլ երկու հատ, որոնց վրայ հաւատքը մի և նոյն ատենին ազդէ և գործէ: Ամենքին վրայ հաւատալու նոյնութիւնը, արդեօք խղճերուն և գործքերուն մէջ ալ մի և նո՞յն է: Ո՞վ չի գիտեր այն անտահման տարբերութիւնը, զոր կը ներկայացնէ այս քահանայից ամէն մէկուն կեանքը: Հաւատքին մէկը առանձնութեան, ջերմեռանդութեան, ուսմանց և աստուածային պաշտամանն վերաբերեալ բաներու սէր կ'ընդունի: Մեսսա հաւատք ունենալովն ալ՝ առանձնութենէն կը նեղի, աստուածպաշտութեան մէջ գալը է, ուսմունքէն կը փախչի, և բոլոր իւր կենցաղավարութեան մէջ կորզ երկրի պատկեր մը կը ներկայացընէ:

Ի՞նչ բանէ յառաջ կու գայ մի և նոյն հաւատքով

լուսաւորուած երկու քահանայի մէջ տեսնուած այս տարբերութիւնը: Շատ յայտնի է պատճառը: Որչափ ալ որ երկուքն ալ մի և նոյն հաւատքը ունին, այսու ամենայնիւ միայն մէկ հատն է որ ստուգիւ հաւատքով կ'ապրի. « Արդարն իմ ի հաւատոյ կեցցէ »:

42. Ով որ կենդանի հաւատքով կեանք կ'անցընէ, անանկ կը լուսաւորուի յաւիտենական Ճշմարտութեանց վրայ, և սրտին մէջ զանոնք այնպէս հաստատ գրոշմած կը կրէ, որ կարծես թէ կերտով մը բայ և մերկացած կը տեսնէ, ու կը զննէ զանոնք խորհրդաբար ծածկող քօղին. « Վէրատյի առադաստն » [1]:

Այնկեղծ հաւատք ունեցողը, անոր Ճշմարտութեանց ալ կը հաւատայ, անոնց վրայ կը խորհի և կը մտածէ ալ, բայց երբեք չի կրնար այնպէս ամփոփել և վերահասու ըլլալ այն անձին պէս, որ հաւատքէն զատ տատուն կերտով ըմբռնած է հաւատոյ կենաց հոգին: Առաջինը երբեմն հեռուէն կը տեսնէ այն Ճշմարտութիւնները, խառն ի խուռն և թանձր մտայղի մէջէն. երկրորդը ընդհակառակն մտքին լինքն կը տեսնէ, և զրեթէ առանց ստուերի:

Ճիշտ ասանկ էր Մովսեսի տրամադրութիւնը, որուն համար ըսաւ Հոգին սուրբ Աստուածային բերնով, թէ « Ջաներևոյթեան երբեմն զտեսեալ համբերութեամբ համարեցաւ » [2]: Եթէ ամէն մեկերնիս հաւատոյ Ճշմարտութեանց մէջ Մովսեսին պէս ըլլայինք « երբեմն զտեսեալ », ամէնքս ալ սուրբ կ'ըլլայինք. ըստ որում աներևութիւն այս նուրբ տեսութիւնը այն աստիճան զմեզ աշխարհքէս կը բաժնէր, մեր անձին վրայ այնքան անաղդութիւն և Աստուծոյ վրայ այնչափ սէր, և իւր ծառայութեանը այնչափ նախանձ կ'ազդէր, որ ամէն հողութիւն և աշխատանք բան մը պիտոր չերեւիր սրբութեան հասնելու, այն աստիճան՝ առ որ կոչուած ենք ամէնքնիս:

Բայց գժբաղդաբար, դէթ շատերուն համար իրը տարբեր է: Մենք կը « հաւատանք » հաւատոյ Ճշմարտու-

1 Ա. կորնթ. գ. 16: 2 Եբր. ժԱ. 27:

Թեանց, սակայն « ՀԻՆՔ ԹԱՓԱՆՑԵՐ », ցամաք կերպով և բռնի կը « ՄՈԱԾԵՆՔ »· բայց այն հաստատուն և ապահով նայուածքով « ՀԻՆՔ ԳԻՏԵՐ » որ զանոնք մեզի կը մեկնաբանէ և կը յայտնէ· « Ձաներևոյթս լերթև զահեսեալ համբերութեամբ համարեցաւ » : Եթէ վայրկեան մը միայն կարող ըլլայինք տեսնել զգժոխքը և անոր տանջանքները, այնուհետև ամենևին և ոչ մէկ արգելք մը մեզի վիշտ կը պատճառէր, նոյն իսկ մարտիրոսութիւնը թեթև և դիւրին բան մը կ'երևէր· բայց ըստ որում ուրիշ բան չենք ըներ, եթէ ոչ պաղ մոռածական մը, զոյն մեզմէ շատ հեռու տեսնելով՝ շատ քիչ կը շարժինք· և այսչափ ու սարսափելի տեղի մը մոռածմունքը՝ կեանքերնուս երևելի նորոգութիւն մը ընել տալու զօրութիւնը չունի :

Իրաւցնէ սուրբերն ալ այս աշխարհքիս մէջ մեզմէ աւելի չէին տեսներ զգժոխքը իւր սարսափելի վիճակին մէջ· բայց այն կենդանի հաւատքը, որով կ'ապրէին, ի բնոյ պարզ ու աղդու կերպով կը ներկայացնէր, որն որ մեզի արուած չէ :

Հայրն Լալըման իւր « Հոգևոր վարդապետութեան » մէջ այս ամէն խորհրդածութեանց զարմանալի համառօտութիւն մը կ'ընէ·— Մոռածականի մէջ, կ'ըսէ, նիւթը շիտակ հեռուէն և ցամաք կը տեսնուի, իսկ մոռզրութեամբ խոկալ կամ դիտելը, յայտնի, որչափ և մօտէն կը ցուցընէ մեզի, հոչակել՝ զգալ և ճաշակել, և սրտերնուս մէջը փորձը առնուլ կու տայ· զոր օրինակ գժոխքի վրայ « ՄՈԱԾԵԼԸ », նկարած առիւծ մը տեսնել ըսել է· իսկ ուշադրութեամբ « ԽՈԿԱԼԸ », կենդանի առիւծ մը տեսնել ըսել է :—

Տարակոյս չի կայ որ հաւատոյ ճշմարտութիւնները աս աշխարհքիս վրայ միշտ խորհրդաւոր ու քօղի տակ են ու պիտոյ ըլլան· բայց զանոնք ծածկող քօղը մեզի համար այնչափ հասա՝ և հաւատքով ապրող արդարներուն համար այնչափ բարակ ու թափանցիկ է, որ շուտով կը մեկնուի անոնց ջերմեռանդութիւնը և մեր պատերազմին խեղճութիւնը :

Ինչո՞ւ համար Յիսուսի Քրիստոսի սուրբ էարչարանաց մոռածմունքը շատ քիչ կը շարժէ սրտերնիս : Ինչո՞ւ համար նոյն մոռածմունքը այնչափ մեծ ազդեցութիւն կ'ընէր Ասիզացի սուրբ Փրանկիսկոսի, որ լալէն ու հառաչելէն չէր դադարեր : Անոր հաւատացածին մենք ալ կը հաւատանք, մի և նոյն է մոռածականներուս նիւթը, այո՛, բայց երկոքեան ալ մոռածած այս ճշմարտութիւնը, ինչը սուրբ Փրանկիսկոս այնքան խորը կը զննէր՝ որ սիրտը կը շարժէր և աչքերէն արցունք կը թափէր· իսկ մենք տակաւ նայուածքով ղայն չվոթ, թերի և գրեթէ պլատոնած տեսնելով, ամենևին ազդու տպաւորութիւն մը չենք ունենար :

Մանաւանդ ընորհք մըն է ասիկա, կ'ըսուի ընդհանրաբար, զորն որ ամենքը չեն կրնար պահանջել :— Սուտ դիւ մանաւանդ ընորհք մըն է, բայց այսու ամենայնիւ սրբակեաց վարուց վարձատրութիւն մըն է : Մենք ալ անանկ վարք մը ունենանք և տեսնենք թէ արդեօք մենք ալ չէ՞նք ընդունիր Աստուածմէ նոյն ընորհքը : Եւ երբ ալ իւր նախախնամութեան անքննելի խորհուրդներովը այս ընորհքը մեզի զլանալու ալ ըլլար, այսու ամենայնիւ սրբակեաց վարքը առատապէս կը վարձատրէր զմեզ, մտածելով որ այսպիսի զլացում մը մեզի համար փորձ է և ոչ թէ պատիժ :

Զի խաբուինք թէ որ սուրբերուն վրայ տեսնուած պայծառ և խորատես նայուածքը մեզի ալ տրուած չէ հաւատոյ ճշմարտութիւնները տեսնելու համար· պատճառը միայն այս է որ մեր ու այս ճշմարտութեանց մէջ անթիւ ունայնութեանց արգելքներ կը դնենք, որ մտքերնիս կը ցնդեցնեն, և շատ մըն ալ չընդդիմացած թերութիւններ՝ որ տեսութիւնիս կը խափանեն :

Կործանենք ուրեմն քաջութեամբ մեզի ձգենք խոչընդոտները, հաստատ մտքով սուրբ ըլլալու չանանք, և կը տեսնենք որ հիմայ քիչ կամ ոչինչ ազդեցութիւն ունեցող մեծ ճշմարտութիւնները, ան ատենը անտարակոյս երևնոյ ամենաղօր ազդեցութիւնը կ'ընեն հոգիներուս վրայ :

43. Այս խորհրդածութիւններէն ուրիշ ինչ հետեւութիւն կրնանք յառաջ բերել, եթէ ոչ այս՝ որ ամէն զոհողութեամբ ալ պէտք է հաստատապէս եւեւէ ըլլանք շարունակ հաւատքով ապրելու: Առանց հաւատոյ կեանց երբէք չենք կրնար քահանայական պաշտօնիս մեզի համար արդեանց պահով, և հոգւոյ փրկութեան ալ բարի պտուղներու առաջարկեամբ ի գործ դնելու:

Ուստի ինչ է այս հաւատքով ապրիլը: Մտիկ ըրէք:

Հաւատքով ապրիլն է հաւատոյ աչքով իրը տեսնել, այնպէս գաղտ, ինչպէս որ անիկայ կը գտնէ, այնպէս յարգել՝ ինչպէս որ անիկայ կը յարգէ:

Հաւատքով ապրիլն է անարգել այն ամէն բան, զոր աշխարհք կը յարգէ, և յարգել ինչ որ աշխարհք կ'արհամարհէ, երբ պէտք ըլլայ աշխարհքի ոճ աւերտարանին մէջ ընարութիւն ընել: Է, զոր օրինակ, հեռանալ աշխարհքիս որդեսցմէ, որոնք անմտութեամբ կը կանչուրտեն թէ— Երանի՛ հարուստներուն. երանի՛ վայելչներուն. երանի՛ անոնց որ աշխարհքիս պատիւ և գովասանք կ'ընդունին:— Եւ այս աշխարհքիս լեզուին դէմ դնել Յիսուսի Քրիստոսի խմատութիւնը որ կ'ըսէ. — Երանի՛ աղքատներուս, երանի՛ անոնց որ կուլան, երանի՛ անոնց որ արդարութեան համար կը հալածուին:

Հաւատքով ապրիլն է ամենեւին բան մը չընել միայն մարգկային նկատմամբ, այլ միշտ դէպ երկնական պատճառներու համար գործել, այնպէս որ միշտ հաւատքը ըլլայ որ կենդանութիւն ապ մեր թէ փոքր և հասարակ, և թէ մեծ և կարգէ դուրս գործքերու:

Հաւատքով ապրիլն է վերջապէս այս աստուածային կենաց մէջ պատսպարիլ, զարգացընել և օր ըստ օրէ աւելի ևս ամէնցընել զայն, չէ թէ միայն վերոյիշեալ ները ընելով, այլնաև քրիստոնէական ճշմարտութեանց ամենակարևոր կէտակրով զՀոգիներս անուշցանելով, սակս սակս զանոնք յիշելով, սովորական մտածական աղօթքներուս նկատ ընելով, և միայն անոնց մէջ վիճաբանելով տարակոյսներու, պատերազմներու և տագնապներու մէջ կարօտացած լոյսերը, առաքինութիւնները և միխիթարութիւնները:

44. Աշխատիլ ի Յիսուս Քրիստոս վերտին ծնած ամէն հաւատարիմ քրիստոնէի ունենալիք կենաց ընթացքը, անոնց որ աւետարանը իրեւ օրէնք ունին, և Հաւատքը իրեւ դրօշակ:

Բայց այսպիսի կենաց ընթացք մը պարզ հաւատացեալէն շատ աւելի պատասաւոր է քահանայ մը ունենալու, որ ամէնուրեք զայն կը քարոզէ, խոստովանաբանելու մէջ ուրիշի ալ հաղորդելու կը ջանայ, և ամէն մէկ վայրկեան ալ հրապարակական գաւանութիւն կ'ընէ, քանի անգամ որ իւր աստուածային պաշտօնին պարագաները կը կատարէ: Եւ նոյն իսկ քահանային վրայ չը գտնելով այս հաւատոյ կեանքը՝ ո՛ր արդեօք կրնանք վիճաբանել:

Քահանան մի միայն հաւատքովը մեծ է, անկից մի՛ այն յառաջ կուգայ իւր ամէն պատիւը և փառքը. հաւատքի մէջ իւր քահանայական պաշտօնը կը կատարէ, առանց հաւատքի բաղդովին ոչինչ է:

Թէ որ, անկարելի ալ ըլլալով, իւր քարոզած հաւատքը ճշմարիտ չըլլար, խաբէութիւնը մէջ տեղ ելած պէս, հրապարակաւ պէտք էր ուրանար իւր վարդապետութիւնները, և հրաժարէր իւր պաշտօնէն, և կեղծաւոր, վատ և հրապարակական սրբապիղծ ոճ խաբեբայ ըսուելու պատժոյն ենթարկուէր: Բայց եթէ ճշմարիտ է հաւատքը, կը կրկնենք, քահանան առանց հաւատքին ոչինչ է:

Ջննեցինք հասարակութեան մէջ եղած սովորական պաշտօնները. այս պաշտօնակատարները կրնան շատ աղեկ կերպով իրենց պաշտօնը ի գործ դնել առանց հաւատքի ալ, վասն զի իրենց պաշտօնը հաւատքի հետ կապակցութիւն մը չունի: Դատաւոր մը կրնայ բարի դատաւոր ըլլալ, և սուտ ուղիղ վճիռ տալ առանց իրեն գժբաղդութեամբ՝ հաւատացեալ քրիստոնեայ ըլլալու: Իրաւագէտ մը շատ յաջողակ և ձարտար կրնայ ըլլալ, միայն բնական ուղղութեամբ ալ, և առանց հաւատքի: Բժիշկ մը կրնայ անկրկն և անաստուած ըլլալ, և այսու ամենայնիւ անթիւ հիւանդներու ալ շատ աղեկ ծառայութիւն

ընել. և այսպէս կրնանք ըսել ուրիշ պաշտօններու հիմամբ ալ:

Բայց քահանային համար իրը շատ տարբեր է. հաւատքը բացարձակապէս իրեն հարկաւոր է, ըստ որում հաւատքէ զուրկ գտնուելով առանց մեղայ չի կրնար իր քահանայութեան մէկ պաշտօնն ալ կատարել: Իր ամէն ըսածը և ըրածը հաւատքին յառաջ կու գայ, այնպէս որ իր պաշտօնին մէջ թէ որ հաւատք չ'ունենայ, ամենափոքր բան մըն ալ չի կրնար ո՛չ ըսել և ո՛չ ալ ընել առանց կեղծաւորութեան և խաբեբայութեան չափ մը գործելու, ըստ որում միշտ պիտոր կրկնենք. քահանան ոչ ինչ է առանց հաւատքի:

Բայց եթէ քահանան իր ամէն ինչը հաւատքին պարտական է, եթէ ոչ ինչ է առանց հաւատքի, եթէ բոլոր իր պաշտօնը հաւատքի պաշտօն մըն է, և եթէ իրաւամբ մի միայն հաւատքի մէջ պէտք է գտնուի, հաւատքին հոգին զատ ուրիշ ինչ հոգեւոր կրնայ զարգանալ և կենդանանալ: Ի՞նչ տեսակ կեանքով պէտք է որ ապրի, եթէ ոչ հաւատոյ կենաք. « Արդարն իմ» , և աւելի իրաւամբ, « քահանայն իմ հաւատոյ կեցցէ»:

45. Ո՛վ, թէ ինչպէս լաւ կը հասկընայինն տարբերը և մանաւանդ տարբը քահանաները այս անտանելի հարկաւորութիւնը, այսինքն, հաւատքին զատ ուրիշ կանոն չ'ունենալ, և առանց անոր պատճառներուն և ազդեցութեանց ամենևին բան մը չի գործել: Ո՛վ չի զարմանար Պաւլոսեան տարբը Վինկենտոսի հաւատքին հոգւոյն և կենացը վրայ:

— Տարբը Վինկենտոսի վրայ տեսնուած հաւատքին մաքրութեան, անկեղծութեան և հաստատութեան գերազանցութենէն զատ, ի'րսկ վարքը գրողը Ապելի, կրնանք ըսել որ տարբը հաւատքին լիութիւնը ունեցած ըլլալ, այնչափ որ հաւատքը միայն իր հոգին չէր լուսաւորեր, այլ սիրտը լեցընելով գործքերուն, խօսքերուն, խղճերուն և խորհուրդներուն ալ կենդանութիւն կու տար, և միշտ Յիսուսի Քրիստոսի աւետարանին Ճշմարտութեան և խմաստութեան ըստ ամենայնի համաձայն գործել կու տար. անանկ որ քրիստոնէից մեծաւ մասամբ բնական վարմունքով և մարդկային հանճարով ըրածը, ինքը հաւատոյ սկզբունքով կ'ընէր, « որն որ » ըստ մարգարէական ձայնին, « վառուած լապտեր մըն էր, զոր միշտ ձեռքը կը բռնէր իր ճամբան տեսնելու համար »:... Տառւգիս Աստուածոյ մէկ յատուկ պարգեւն էր այն ամէն դէպքերու և առնթներու մէջ հաւատոյ լուսոյն գործածութիւնը, ինչուան նաև պարզապէս առ Ժամանակեայ և աշխարհային գործքերու մէջ ալ հաւատոյ պատճառներէ ազդեցութիւն մը չը տեսած՝ ամենևին բանի մը ձեռք չէր ղարներ, բան մը ի գործ չէր դներ եթէ ոչ հաւատոյ լուսով, և ոչ ալ կը կատարէր ու կը լացընէր եթէ ոչ հաւատոյ ազդած գերբնական վախճաններու համար: —

Աւած մըն էր այս մեծ սրբոյն, թէ առաքինութեան և աստուածպաշտութեան մէջ քիչ յառաջադիմութիւնը հաւատքի վրայ չը հիմնուելէ, և անոր լուսոյն չը հետեւելէ կը ծագէր, և աւելորդաբար մարդկային փառաբանութեանց վրայ կրնթնելէ յառաջ կու գար: — Ո՛չ, ո՛չ, ի'րսկր օր մը հաստատ մտքով, մի միայն յաւիտենական Ճշմարտութիւնները կրնան արաբերնս գոհ ընել, և պահպանել մեզի առաքինորդել: Հաւատացէք ինձ, ուրիշ բան չուզէր՝ եթէ ոչ աստուածային կատարելութեանց մեկուն, ինչպէս բարութիւնը, նախախնամութիւնը, Ճշմարտախօսութիւնը, անսահմանութիւնը վրայ աղեկ մը կրնթնել. ուրիշ բան չուզեր, ի'րսեմ, շօշոփով կատարելութեան հասնելու, եթէ ոչ այս աստուածային հիմանց վրայ աղեկ մը հաստատուիլ և կենալ:

— Փորձը կը սորվեցընէ մեզի, ի'րսկր նաև, որ հաւատոյ լուսոյն համաձայն (աղեկ միտ դիր) քարոզ տուող վարդապետները հոգւոյ փրկութեան աւելի օգուտ կը քաղեն, քան թէ անոնք որ իրենց ձեռքերը մարդկային և փիլիսոփայական փառաբերով կը լեցընեն. ըստ որում հաւատոյ լոյսը իր հետ կը բերէ մէկ բոլորովին երկնային օծութիւն մը, որն որ ծածկաբար ունկնդիրներուն սրբտերուն մէջ կը սփռէ, յորմէ կրնանք տեսնել որ, թէ մեր

անձնական կատարելութեան և թէ հոգւոյ փրկութեան համար չափազանց հարկաւոր է միշտ և ամէն բանի մէջ հաւատոյ լուսոյն հետեւելու սովորութիւնը։ —

46. Ի վերայ այսր ամենայնի, քահանայ մը ինչպէս կրնայ միեւնոյն հիմոյ զուգացած հաւատոյ կենաց ապրելէ յետ կենալ, մինչ դեռ բացարձակապէս հարկաւոր է որ իւր այնչափ վսեմ պաշտօններուն մէջ, կամ հաւատոյ պատճառներէ չարժած գործէ, կամ պարզապէս մարդկային պատճառներէ, որ Աստուծոյ հաճելի չեն, և կամ յանցաւոր պատճառներէ, զորոնք Աստուած կը դատապարտէ։

Ահաւասիկ, զոր օրինակ, երկու քահանայ, որոց մէկը իւր ամէն գործոյ մէջ հաւատքը առաջնորդ ունի. իսկ միւսը սոսկապէս մարդկային և բնական պատճառներէ զատ ունի նաև իւր ախորժը, հակումները և անհատական կամքը. ահաւասիկ այս վերջնոյն կանոնը, թէ որ այսպիսի փոփոխական վարմունք մը կանոն ըսուելու արժանի է։ Ջննենք այս երկու քահանան ալ թէ իրենց պաշտօնին ամենասուրբ գործոց, և թէ կենաց հասարակ վարմունքներու մէջ։

Մէկը կ'երթայ, վասն զի երթալու պարտաւոր է, և դէմքին վրայ նեղութիւնը և դժկամակութիւնը յայտնի կը տեսնուի, գուցէ կը տրտնջէ ալ։ Լսած խոստովանութիւնները իւր տրամադրութեան համաձայն են, ինքը ցամաք է, յուշիկ և շատ համառօտ, առանց նախանձու, և ջերմեռանդութենէ զուրկ, միայն մէկ բանի մը փափագող. այսինքն վայրկեան մը յառաջ խոստովանարանէն գուրս ելլելու։ Աչսպիսի քահանայի մը վրայ հաւատոյ հոգի և կեանք կը գանուի՞ արդեօք։

Միւսը ընդհակառակն ուրախութեամբ կը լսէ որ ապաշխարողներ իրեն կը սպասեն. խմացածին պէս կը մտածէ որ հոգիները կամ գործի բերելու և կամ կատարելութեան մէջ յառաջացընելու պարտաւորուած է. և այսչափը բաւական է զինքը սուրբ նախանձով մը բորբոքելու։ Աչսպիսի պատրաստութեամբ կ'երթայ խոստովանութիւն լսելու, և իւր անառակ որդւոց ըսած ա-

մէն մէկ խօսքը անանկ անուշ ու կաթոգին սիրով լեցուն է, որ այն ողորմելիները բոլորովին կը կակղանան և ի ղղջում կը չարժին։ Աչս քահանան հաւատոյ հոգին և կեանքը ունի։

Պարզ տալու հարկաւորութիւն կայ։ Սուրբ և աստուածարեւոր գործք մըն է։ Բայց ինչպէս պիտոր կատարէ։ Թէ որ ծոյլ է, առանց շատ մը պատրաստուելու քարոզ մը կու տայ։ Թէ որ ամբարտաւան է, քարոզ կու տայ պատիւ և գովասանք որսալու համար. եթէ բամբասող և չարաճճի մըն է, քարոզը անձնականի կը վերածէ, և այսպէս ալ ամէն բանի մէջ։ Աչսպիսի քահանայի մը վրայ հաւատոյ հոգի և կեանք չի կայ։

Մինչդեռ միւսը, ուրիշ նպատակ մը չունենալով եթէ ոչ Աստուծոյ փառքը և հոգւոց փրկութիւնը, աստուածային բանին պատշաճ յարգութիւն ցոյց տալով, առանց կարեւոր պատրաստութեան քարոզ չի տար։ Իր ունկնդիրներուն աւելի օգտակար նիւթեր կ'ընտրէ, և այնպիսի օծութեամբ կու տայ քարոզը, զոր միայն հաւատքը և սէրը կրնան հաղորդել սուրբ քահանային. քարոզած ատենը միայն մէկ մտածմունք մը ղինքը զբաղեր է. ալ աւելի ինչ պատշաճ բան կրնամ ըսել ունկնդիրներս զարձի բերելու և կամ կատարելութեան դիմելու համար։ — Հաւատոյ հոգին և կեանքն է այս քահանային առաջնորդը։

Երկու նկարագրուած քահանայից մէջ տեսնուած այս տարբերութիւնը կրօնքին աւելի վսեմ հանդիսանելու մէջ ալ կը տեսնուի։ Աչո՛, շատ դիւրաւ կը տեսնուի, զոր օրինակ, խորանին առջեւ։

Մէկը պատարագ պիտոր զուրցէ, վասն զի զուրցելու սոսկացած է. ահաւասիկ պատճառը, և գուցէ մի միայն պատճառը։ Ուսոյ կամ բնաւ չի պատրաստուիր, և կամ կարճ ու դէշ պատրաստութիւն մը կ'ընէ, անանկ որ քանի մը ազօթքներու մեքենայական արտաբերութիւն կրնայ ըսուիլ. յետ այնորիկ պատարագի մէջ ալ չափազանց արագութիւն մը, կիսկատար արարողութիւններ, անվայել շարժմունք մը, ոչնչ մտագրութիւն,

ամենակարճառօտ դոհութիւն մը և երթաս բարով. ահա՛ասիկ ինչպէս պատարագ կը ղուրգէ այն քահանան որ հաւատոյ հոգւով զարդացած չէ, և հաւատոյ կենօք չ'ապրիր:

Իսկ ընդհակառակն միւսը դեռ ևս խորանին քով չի գացած՝ իւր ուշադիր կերպարանքը, ծանր և վեհանձն քալուածքը հաւատացեալոց չինութիւն կը պատճառէ: Աստուածոյ մը ձէմարիտ մարմինը և արիւնը զոհելու հա՛մար երթալուն հաւատոյ ամենածանր մտածմունքին ամիսփսուած՝ խորանը կ'երթայ, երբև թէ Golgotha լեռը երթար. իւր ամէն շարժուածքին և արարողութեանց մէջ հոգւոյն եռանդուն ղգացմունքը, անկեղծ ջերմեռանդութիւնը և բարեպաշտութիւնը կը տեսնուի: Այսիպէս է հաւատքին հոգին, այս է այն քահանան՝ որ հաւատքով կ'ապրի:

Թէպէ քննութեան այս երկու քահանայից ամէն գործքերը, և ամէն մէկուն վրայ ալ նոյն տարբերութիւնը կը տեսնուի. միշտ պիտոյ տեսնուի մէկուն հաւատոյ հոգիէ զուրկ, և աստուածային գործոյ մէջ մարդկօրէն վարուիլը. իսկ միւսին մարդկային գործոց մէջ ալ աստուածօրէն վարուիլը, այնչափ կ'ամփոփացընէ իւր գիտութիւնը մաքրութեամբ և իւր հաւատքին կենաց բարեպաշտութեամբը:

Ձէմարիտ հաւատքով լեցուն քահանան, կը պարապացընէ և հաւատքով կը լեցընէ իւր ամէն մտածմունքները, խորհուրդները, խօսքերը և իւր գործքերը: Ամէն բան հաւատքով կը բարեխառնէ և կը սրբէ, և ամէն բան Աստուծոյ արժանի կ'ընէ:

Երկար ժամեր անօգուտ և անպիտան մտածմունքներու մէջ չի գիտեր, երբէք անխոհեմաբար չի դատեր. կը զգուշանայ այն ամէն բանէ, որ կրնայ շարժած է. խօսուածքի մէջ զգաստ ըլլալով՝ խիստ ուշադրութեամբ շատախօսութենէ խոյս կու տայ, որուն մէջ շատերը կը պակսին, և իւր բոլոր նաև սովորական գործոց վրայ ալ հաւատոյ նշանը կը դրոշմէ: Ուտելու, խմելու, զբօսանքի, քնանալու սովորութեանց մէջ անբաններէն օրինակ

չ'առներ, այլ հաւատքովը կը բարձրացընէ և կը սրբագործէ նաև այս անասնական կենաց վերաբերեալ գործքերն ալ: Եւ այս ստորին գործքերը սրբացընողը մի թէ չի՞ սրբացըներ իւր նուիրական պաշտաման գերազոյն և սուրբ գործքերը:

47. Ուրիշ, հաւատքով լեցուն մարդ ըլլանք և ուրիշներն քարոզածնիս նախ մենք ի գործ դնենք: Յիսուսի Քրիստոսի մեր գլխոյն հաւատարիմ նմանողն պէս « սուրվեցընելէ » յառաջ, մենք « ի գործ դնելու » սկսինք: Հաւատացեալոց սովորական գործքերն ալ սրբացընելու քարոզելէն առաջ, մինչ դեռ մենք ինքնին չը գիտնանք գերագոյն և սուրբ պատքերնիս արժանապէս ի գործ դնել: Հաւատքով ապրինք, վասն զի հաւատքին միայն մեր ամէն վաստքը յաւաչ կու գայ: Մեզի սեպհականենք Պարոն Տը Բանտի բարեպաշտ հաւատացեալ մը զգացմունքը, որուն վարքը գրեց Այն-Ժիւը բանիբուն քահանան, որն որ իւր բարեպաշտութեան եռանդեան մէջ հառաչելով կ'ըսէր. — Ո՜հ, ինչ գեղեցիկ կեանք մըն է հաւատքով ապրիլը, օր ըստ օրէ աւելի ազիկ կը ճանչնամ այս ընօրհքը: Այնոնք որ գիտեն ձէմարտապէս այս արգարոյն կենօքը ապրիլը, ինչպէս որ կ'ըսէ և կ'ուզէ սուրբ Աւգոստինոս, ընարձր կատարելութեան կը հասնին, և յաւիտենական փառաց քաղցրութիւնները կանխիկ հոս կը ճաշակեն: Այհաւասիկ այս սրբակեաց անձին հաւատոյ կեանքը, հաւատքով կը քններ ամէն բան, հաւատքով կը կատարէր իւր ամէն գործքերը, և վերջապէս հաւատքով հասաւ առաքինութեան բարձր աստիճանին. օրինակ տալով, և սովրեցընելով մեզի այն ճանապարհը, զոր պէտք է բռնենք մենք ալ, եթէ մենք ալ կ'ուզենք հասնիլ այն նպատակին: —

Այլ, մի գուցէ մենք հովիւ ըլլալով, աշխարհական՝ նեղին սովրինք, զորոնք ամէն օր երբև ունինք և աշակերտ ունինք:

ԳԼՈՒԽ Բ.

Յոյս — Իւր ճարկաւորութիւնը եւ գործադրութիւնը — Անվատահութիւն, կրաւմ, յուսահատութիւն:

48. Ամենքս ալ գիտենք աստուածաբաններուն տուած յուսոյն սահմանը. « Աստուածաբանական առաքինութիւն մը, որով վստահութեամբ Աստուծմէ կը սպասենք յաւիտենական փրկութիւնը, և զայն ձեռք բերելու համար կարեւոր միջոցները »:

Գիտենք որ եթէ հաւատարիմ գտնուինք Աստուծոյ ընորհացը, և պահենք իւր սուրբ օրէնքները, պէտք է որ իւր վրան ալ կատարեալ վստահութիւն մը ունենանք ոչ միայն հոգևորաց այլ նաև մարմնաւոր գործոց նկատմամբ ալ, որոնք բաւական է որ առ յաւիտենական փրկութիւն կարգաւորած ըլլան:

Վերջապէս գիտենք որ այս աստուածային առաքինութիւնը անդադար երկինքը ցոյց տալով մեզի, պարտաւոր ենք միշտ աշխարհքէ հրաժարելու, որուն համար չենք ծնած, և խլել օր ըստ օրէ այն կապանքները, որոնք զմեզ աշխարհքի կապած և գերի ըրած են:

Մեր յարգելի եղբայրակիցները ըստ բաւականի տեղեկութիւն ունենալով յուսոյն վրայ՝ երբև աստուածաբանական առաքինութիւն, կը ձգենք աստուածաբանները պատրաստել էն նպատակնիս, այլ բարի և սուրբ քահանաները, որոնք երկնից վարքով Աստուծոյ եկեղեցին փառաբանեն:

49. Թէ որ մենք նախընթաց գլխոյն մէջ յիշուած կենդանի հաւատքը ունենայինք, անտարակոյս նոյնպէս ալ յոյս կ'ունենայինք, Աստուծոյ վրայ վստահութիւն մը կենաց ամէն ալեկոծութեան և փոթորիկներու փորձերու մէջ: — Մեծ հաւատք է մը, կ'ըսէ պրանչեսկոպիս Հայրն Սէն-Ժիւը, երբև աստղ բարոյական հարկաւորութեամբ կը ծնանի մեծ յոյս և մեծ ալ սէր մը: Ուրիշ բան

չուզեր եթէ ոչ հաստատապէս հաւատալ թէ ինչ է Աստուած ըստ ինքեան և յարաբերութեամբ առ մեզ, որպէս զի չուտով անոր վրայ կատարեալ վստահութիւն մը ունենանք, և զինքը սաստիկ սիրով մը սիրենք: —

Յոյսը Աստուծոյ ամենակարողութեանը, բարութեանը, ողորմութեանը, և առատաձեռնութեանը, և Յիսուսի Քրիստոսի ալ անհուն արգեանցը վրայ կը թեքնելու սոխպուած ըլլալով, յայտնի է որ մենք այս պիսի հիմանց վրայ հաւատքէն հաստատուած ըլլալով, յոյսերնիս ալ հաւատքներուս պէտք է համաձայն ըլլայ: Աւելի՝ զարմանալի կերպով կը մեկնուի Պօղոս Առաքեալին խօսքերովը. « Յամենայնի կարող եմ այնու որ զօրացոյցն ինս »[1]: Հաւատքը կը ցուցնէ մեկ ամենակարող Աստուած մը, որ միշտ պատրաստ է օգնելու, և յոյսը չուտով կը մեծնայ հաւատքին համեմատութեամբ. « Յամենայնի կարող եմ այնու որ զօրացոյցն ինս »:

50. Յոյսը այն առաքինութիւններէն մեկն է, որուն մէջ առանց գիտնալու ստէպ կը պակսինք: Մտագրութեամբ քննենք, և կը տեսնենք որ շատ մը առիթներու մէջ գրեթէ մահաբեր հարուած կը տրուի այս առաքինութեան, առանց զայն վերաւորելու փոքր կասկածի մըն ալ: Զօր օրինակ, ծերութեան տեսն աղքատ ծնողաց կասկածով. հարստանալու հոգ տանող քահանային չափազանց երկիւղը: Իւր պաշտօնին աշխատանաց, նաև հոգևոր և բարեպաշտական գործքերու անյաջող և ապարդիւն եղքին նկատմամբ անցաւոր տհաճութիւնը: Մտքերնուս մէջ դրած յաւակապծի մը գործադրութեան՝ չարութեամբ արգելք եղող անձի մը դէմ բարկութեան չարժումները: Ասոնք և ասոնց նման ուրիշ շատեր, զոր դիւրութեամբ կրնանք ըսել, յայտնապէս Աստուած վստահութեան թերութիւնէն յառաջ կուգան: Վերահասու կ'ըլլանք: Կը խոնարհինք: Աւելին ըսենք, կը խոստովանինք: Ան նուաղն կը խոստովանինք զսոսնք երբև յուսոյ դէմ եղած պակասութիւններ:

1 Փիլիպ. Դ. 13:

Եթէ փորձառութիւնը քննելու ըլլանք՝ նախ մերը և ապա մեր եղբորց, շատ հաւանական է որ քիչ մը յառաջ ըրած խորհրդածութիւնիս ուղիղ ըլլայ։

31. Ամէն օր հաւատացեալ սովորեցուցածներուս համաձայն յուսոյ դէմ կը մեղանչուի «նուաղելով» և կամ «առաւելութեամբ»։ ուրիշ խօսքերով ըսենք, «յուսահատութեամբ» և կամ «յանձնապատասխանութեամբ»։

Ձեռքերնիս խղճերուս վրայ դնելով քանի մը վայրկեան խորհրդածութիւնը բաւական է զմեզ համոզելու, որ յուսոյ դէմ կամ յուսահատութեամբ և կամ յանձնապատասխանութեամբ մեղանչող քահանան շատ աւելի ծանր մեղք կը գործէ, քան թէ փառաբերու հաւատարմութեամբ, պարզ հաւատացեալ մը։

Եւ երբ, եթէ յուսահատութեամբ մեղանչէ, իւր մեղքը աւելի ծանրութիւն մը կը առնայ իւր ունեցած Յիսուսի Քրիստոսի պաշտօնէի տիտղոսէն և կնիքէն. տիտղոս և կնիք մը, որով ինքը Յիսուսի սրտին մէջ բոլորովին յատուկ մտաւոք մը ունի, այն սուրբ սրտին, որն որ սիրոյ հնոյ մըն է, և անհուն ողորմութեան անդունդ մը։ Իւր մեղքը աւելի կը ծանրանայ նաև աստուածային բարութեան վրայօք ունեցած՝ կամ ունենալու պարտաւոր եղած ընդարձակ տեղեկութենէն, զոր տեսակցաբար սուրբ Գրոց և աստուածաբանութեան ընթերցմամբ առացած է, և զորն որ օր ըստ օրէ արդեամբ կը առնայ անձնական փորձով ապաշխարութեան առեներն մէջ, յորում այնքան առեղ աստուածային ողորմութեանց գործիք եղած է, որով անթիւ հոգիներ գժոխքէն ազատելով դէպ ի արքայութիւնը կ'առաջնորդէ։

Ամենայն զատ իւր մեղքը կը ծանրանայ նաև ամէն օր ընդունած ամենամանաւոր շնորհաց առատութենէն, զորոնք ազատաբար կրնայ գործածել իր աստուածային վարգապետին շնորհքը կրկին առնելու համար, եթէ զայն կորնչցնելու դժբաղդութիւնը ունեցեր է։

Ուրեմն ինքը մեղադրելի է, եթէ Յուդային թշուառ նմանող ըլլալով յուսահատութեամբ իր անձնական կո-

րուստը կը ձարէ և կը կատարէ. մինչդեռ Յիսուս ղինքը իրեն բարեկամ կը կանչէ, ձեռքերը կ'երկնցնէ, սիրտը կը բանայ, և անհուն սիրով կատարեալ հաշտութեան համբոյրը կը նուիրէ։

Բայց եթէ յուսոյ դէմ յանձնապատասխանութեամբ կը մեղանչէ, ան աստիճանը դիւրութեամբ կը տեսնուի որ իւր յանցանքը պարզ հաւատացեալ մը մեղքէն շատ աւելի ծանր կ'ըլլայ հաւատոյ պարագային մէջ։

Եւ ատոնք, աստուածային թագաւորին մտերիմ բարեկամ, խորհրդակից և պաշտօնեայ ըլլալուն պատճառաւ մշտապէս մեղք գործելու ազատութիւն ունենալ. այնպիսի թագաւորին, որ շնորհած մտերմութեան և ցոյց տուած սիրոյն փոխարէն միայն նախատինք կ'ընդունի, չափազանց կերպով մեղքը ծանրացընել չի՞ պատգեօք։

Մեր կողմանէ, Աստուծոյ ամենամանաւոր բարութիւնէն յանդգնիլ աւելի դիւրութեամբ մեղանչելու համար, մի թէ քահանայի մը համար եռանդեամբ ուրիշի քարոզածը իրեն համար կերպասէս ուրանալ չի՞ պատգեօք։ Ե՞րբ է որ ձայներնիս աւելի կը բարձրացընենք։ Ե՞րբ է որ սուրբ նախանձով մը կը բորբոքինք աստուածայինվարդապետներուս անսահման բարութեան վրէժը առնելու համար։ Ե՞րբ է որ կը պատանձեցուներնք և կը չփոթինք ամենաանզղջալ մեղաւորներն ալ։ Մի թէ ան աստիճանը չի՞ որ այնչափ փառաբերու հանդիսով կը ցուցնենք Աստուծոյ անհուն սէրը, ապերախտ մարդուն բարութիւնը, որ նոյն այս սէրը չարաչար կը գործածէ չարուեստակաբար մեղանչելու համար, և անհատաւալի ժպիրհութեամբ կը համարձակի ըսելու. Աստուած բարի է, ուստի ես կրնամ չարագործ ըլլալ. Աստուած անսահմանաբար բարի է, ուստի ես կրնամ չարութիւնս մինչև վերջին աստիճանը մղել։ Մի թէ ասիկայ չի՞, ըսե՛նք, մի թէ ասիկայ չի՞ այն կէտը, զոր կը ջանանք աւելի ազդու կերպով ցոյցընելու։ Եւ մենք յանցաւոր չէ՞նք ըլլար, անսահմանաբար աւելի յանցաւոր չէ՞նք ըլլար մեր ունկնդիրներն, որոնց Աստուծոյ դէմ ըրած ապերախտու-

Թիւնը այնչափ խստութեամբ կը դատապարտենք։ Եւ մենք, մենք այս ողորմութեան Աստուծոյն ամենասիրելի պաշտօնեայներս, իւր անսահման բարութիւնը չարաչար գործածելով, և զայն մեր չարութեանը վահան ընենք։ Ո՞ւր կրնանք դանել այսպիսի ապերախտութիւն մը ծածկելու պատշաճ պատրուակի և չքմեղութեան տուեր մը։

Վերջապէս թէ որ մենք յուսոյ դէմ յանդգնութեամբ մեզանչելու ըլլանք, մեր մեղքը ամենածանր կ'ըլլայ, նաև Աստուծմէ այնչափ շնորհաց նկատմամբ առանձին շնորհքներ, ամենաընտիր շնորհքներ, որոնց ամենամեծ արժէքը կրնանք ցուցընել և զուրցել երբ մեզաւորի մը չարաչար գործածելուն պատճառաւ վնասը չանդիմանենք, մինչդեռ մենք կը պղծենք զայն մշտաւ դիմադարձութեամբ, և յորում իբրև մեզի պարտաւորուած բանի մը մէջ վստահելու անմտութիւնը ունինք, մինչդեռ մեր գործքերովը ըսած խմիք կը տպիպենք վԱստուած վստահելու մեզի ինչ որ միայն գթութեամբ կը շնորհէր մեզի։

Աստուծմէ ընդունուած շնորհքները յարգել և գժբախտաբար գործած մեղքէ ազատելու համար զանոնք գործածելը, շատ աղէկ բան է։ Սակայն Աստուծոյ ամէն վայրկեան մեզի ուսած շնորհքները մեծարելով, զանոնք երբեք աղէկի չի գործածելն ալ սոսկալի ապերախտութիւն մըն է։

Ի՞նչ ընելու ենք այս երկու ժայռերէն մեկուն դէմ ալ չի զարնուելու համար, այսինքն յուսահատութեան և յանդգնութեան. որոնք ալ և ձախ կողմերէս անխնայ կը սպառնան։ Այսկե աւելի գիւրին բան չի կայ, առաքինորդ բռնենք մեզի աստուածայինն յոյսը։ Աւաքելն այս գեղեցիկ խօսքերով մեզի տուած ծանուցման հետեւելով. « Հաստատուն միտութիւն ունենալիք, որը ապատան եղեաք բուռն հարկանել ղհանդերձեալ յուսոյն, զոր երբեւ զնաբիսա հաստատուն և անշարժ ունելոյիմք անձանց մերոց »[1]։ Այս առաջին միջոցաւ յուսահատութեան ժայռէն խոյս կու տանք։

Իսկ յանդգնութեան ժայռէն ալ ազատելու հա-

1 Եբր. Ջ. 18։

մար մեծապէս ի'օգտէ մտքերուս առջև միշտ ներկայ ունենալ մեր պարտաւորութեանց ծանրութիւնը, զանոնք աղէկի գործ դնելու համար ընդունուած առատ շնորհքները, մեզմէ պահանջուելիք խիստ համարը, մեր բարձր պաշտման ակտը եղած կատարելութիւնը, և ջրա կողմերս պաշարած անթիւ վտանգները։ Այս կերպով ոչ վհատած ի'ըլլանք և ոչ ալ սրտաբեկ. այլ սուրբ Աւաքեղին ուղածին համեմատ սրբաբար երկիւղած. « Անիւ և զողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք »[1]։

32. Սակայն յուսոյ առաքինութեան նկատմամբ ընդհանուր եկեղեցականաց համար ունեցած վախերնուս դլխաւորը յուսահատութեան և յանդգնութեան չափազանցութիւնը չէ։ Ըստ որում այս ստութեան անկարգութեան մը վրայօք ոչ մի ստակար։ Կրնայ ըլլալ որ քահանայիցմէ ոմանք յուսահատութեան մէջ կ'ինան, և կամ խեղճ յանդգնութեամբ մը կուբանան, և այսպէս տալիս բառաբար յանցաւոր՝ կրնայ ըլլալ որ Աստուծոյ ձեռքը կ'ինան, բայց քանի մը հատ հազիւ և ոչ թէ շատերը։

Այլ քահանայից համար յուսոյ նկատմամբ մեզի աւելի վախցընել տուողը շատերուն զանցառութիւնն է. որ կամ անհոգ կը գտնուին, և կամ չեն խոստովանիր, որն որ յայտնապէս չը ձանչցուելուն համար՝ երեն ամենայար հետեւութեանց պատճառաւ աւելի վտանգաւոր և աւելի ողբալի ի'ըլլայ։ Փորձենք յայտնելու այս վերջը։

33. Դեռ ևս քահանայ չի ձեռնադրուած՝ վհատութիւնը հոգիներուս մէջ սպրդելով կը կանայ նուաղել անոր ուժը և վստահութիւնը։

Կը տեսնենք այն բարեհամբաւ կղերականը, որուն վրայ մեծաւորները կը սքանչանան, և իւր վոյժերեան. դութիւնը ընկերներուն նախանձը կը չարժէ։ Ինքը կղերանոցին բարի օրինակն է, իւր սրբութիւնը օր ըստ օրէ աւելի կը փայլի շնորհաց հրահանգներովը, որուն հաւատարմաբար կը համաձայնի, առանց՝ գոնէ կամաւ, երբեք դէմ դնելու։ Իւր վերակացուն ամենևին կասկած մը չունի կոչմանը վրայ. մանաւանդ թէ կը փափագի որ

1 Փիլ. Բ. 12։

իւր տեսչութեան տակ գտնուած բոլորը տիրացուներն ալ անոր նմանին։

Բայց յանկարծ այս երիտասարդին հոգւոյն պարզութիւնը կը խռովի, կը վհատի, և բան մը չի գտնուիր որ զինքը վստահութեամբ ապահովցնէ։ Անցած կենացը մէջ գործուած յանցանք մը չի կայ, որ վերակացուին անծանօթ ըլլայ, և ոչ խղճմտանքին անկիւն մը՝ որ լըսուած չըլլայ. ոչ հակում մը, ոչ բնաւորութեան թերութիւն մը, և ոչ ալ ո՛և իցէ պակասութիւն կամ պակասութեան առաւել մը կը գտնուի, որուն քաջութեամբ յաղթած չըլլայ իւր հոգւոյ հօրը յայտնած ըլլալով. այսու ամենայնիւ իւր խռովութիւնը կը շարունակէ, վախը կ՚աւելնայ, մերձակայ ձեռնադրութեան տեսիլը՝ որն որ երբեւ գլխուն վրայ կախուած ժայռ մը կը ներկայանայ զայն ճզմելու համար, այնպիսի անվստահութեան մէջ կը ձգէն զինքը, յորմէ ազատելու ճար չի կայ. և մինչ դեռ քովը այնպիսի ընկեր մը կը տեսնէ, որ դուցէ պէտք էր գողալ, ու չի գողար, այսու ամենայնիւ ինքը կը խռովի և կը սոսկայ, ինքը որ պէտք էր կատարեալ իրաւղութիւն և վստահութիւն ունենալ։ Ո՛րչափ այս պիսի սուրբ կոչումներ պարապի հանած չէ՞ այս սրտաբեկութիւնը կամ վհատութիւնը։

54. Ուրիշ կղերական մը համոզուած էր որ կղերանոցը մտնելով իրեն համար անկարելի պիտոր ըլլար մեղք գործելը։ Ա՛յս հրէշը՝ իրեն կարծեցեալը համեմատ, դրան քով գտնուած պիտոր ըլլար առանց սեմէն ներս քայլ մը առնել կրնալու։ Բայց գժբաղդաբար տեսնելով որ մարդը միշտ մարդ է, և եթէ աշխարհային ծանր անկարգութիւնները կղերանոցի մէջ տեղի չունին, այսու ամենայնիւ կը գտնուին մարդկային տկարութեան արմատները, աշխարհքին բերուած անհատատարմութեան ինացորդները, որոնք միայն խիստ և երկար բռնութեանց տեղի կու տան. մեծապէս կը զարմանայ այն առաքինութենէն զուրկ գտնուելուն վրայ. զոր պարզապէս կղերանոցը մտնելով ունենալ կամ շահիլ կը կարծէր, ուստի և հիմայ ալ տխուր է, ծածկամիտ, անհանգիստ, սրտակոտոր, վհատած և գրեթէ յուսահատ։

Անտարակոյս շատ դէշ պիտոր ըլլար, եթէ իւր կողմանէ բան մը չըրաւ, կամ քիչ քիչ չաշխատեցաւ իւր թերութեանց և անկատարութեանց յաղթելու, որոնք հիմա զինքը կը լացընեն, ըստ որում ո՛հ, նաև ամենաչքեռ մեռանդ կղերականներն ալ շատ անգամ գաղջ և ստէպ ալ թոյլ քահանայ կ՚ըլլան, եթէ գժբախտաբար հոգ չեն տանիր արթնութեամբ հսկելու և պատերազմելու։

Բայց եթէ այսպիսին անգադար կը հսկէ, հաստատ սրտով կը պատերազմի, եռանդով կ՚աղօթէ, անկեղծաբար սիրտը կը բանայ վերակացուին՝ յորմէ եկեղեցական ընթացքին մէջ յառաջ երթալու քաջալերութիւն և հրաման կ՚ընդունի, ինչքա՞ն կը վախնայ։ Ինչո՞ւ համար աներեւոյթութեամբ ինքը զինքը յուսոյ գիրկը չի ձգեր։ Ինչո՞ւ համար չի հաստատար որ բարեգութեն Աստուած, որն որ կը հրամայէ իրեն փոխանորդ եղած վերակացուին հնազանդելու, անտարակոյս պիտոր չի պատժէ զինքը այս հնազանդութեան համար։

55. Բայց թողունք կղերանոցը, ուր առթիւ մը մտնենք, և քահանայից գանք։

Խոնարհութեան և անձերնուս վրայ անվստահութեան համար պաշտօններէ փախուստ տալը՝ իրաւցընէ այնպիսի գերազանց որպիսութիւն մըն է, որուն ամէն գարերու սուրբերը աքանչելի օրինակներ տուած են մեզի, բայց միևչև այն ատեհնան հասնիլ, որ մեծաւորաց հրամաններուն դիմադարձութիւն ընել, որոնք արժանաւոր քահանայ մը կարևոր և բարձր պաշտօններու կ՚ուզեն կարգել՝ որոնց այնչափ աւելի զանկեայ արժանի կը դատեն, որչափ որ ինքը զինքը անարժան կը սեպէ. զօրաւոր բարեկամներ ոտքի հանել, որպէս զի այսպիսի չափազանց և անտեղի խոնարհութիւն մը պաշտպանեն, որ ալէկ բան մը չէ, ամէն կերպ փաստեր մէջ բերել նախանամութեան դիտումներները խանգարելու համար, անոր գործիք և միջոց եղած մեծաւորները խաբելով, այսպիսի պարագաներու մէջ Աստուծոյ անսահման բարութեանը վրայ չի վստահիլ, որն որ երբեք օգնելէ չի դադրիր անոնց՝ որոնք խոնարհաբար իրենք զիրենք ան-

պէտ և տկար կը ձանչնան, այլ միայն անձնական տկարութիւնը մտքի առջև ունենալով, անոր պատճառաւ ալ խիստ վհատութեան մէջ կ՚ինկաք: Աստուծոյ վրայ վստահութեան կենդանի զգացմունք մը չունենալով, չը հաւատալով որ եղկելի տկարութիւնն ալ ամենամեծ զօրութեան կը փոխուի, երբ մեր վրայ զայն խոնարհաբար կը ձանչնանք, և սրբաբար ապրելով միայն Աստուծոյ վրայ կը վստահինք: Վերջապէս անձնական առաքինութեանց մէջ այնպէս յամառիլ, որ ոչ միայն միտքը չի փոխէ, այլ նաև այսպիսի կեղծեալ և Աստուծոյ անհաճոյ խոնարհութեան մը վրայ երբեմն յաղթանակ կանգնած ըլլալով ուրախանալ, որով առիթ կը տրուի որ կարևոր պաշտօն մը անարժան անձի մը յանձնուի՝ շատ մը հոգւոց կորուստեան վտանգումն ալ: Ասիկայ խաւար և թիւր ընթացք մըն է, որն որ թէ և ըստ երևութին դեղեցիկ, բայց ՚ի նեղբուստ ուրիշ բան չէ, եթէ ոչ չափազանց անվստահութիւն իր անձին վրայ. և վստահութեան ալ պակասութիւն մը Աստուծոյ վրայ: Աստուած տար որ այսպիսի դեղեցիկ խոնարհութեան և անձնական տկարութեան անվստահութեան տեսակին տակը աւելի թերի պատճառ մը չը ծածկուէր. այնպիսի բարձր պաշտօնի մը յանձնելով բաւական յաջողակութիւն ցոյց տալ չը կարենալու կասկած մը, քիչ մը շատկեկ աշխատելու վախ, և ուրիշ այսպիսի տկարութիւններ, որոնք խոնարհութենէ այնչափ հեռու են՝ որչափ որ ախտը առաքինութենէ. ըստ որում բուն խոնարհութիւնը չէ անիկայ, որ զտնուիք ի՚ազդէ, այլ միայն իբրև վերարկու մը զանոնք կը ծածկէ:

Ուսոմն խոնարհ ըլլանք, բայց մի և նոյն տեսն հնազանդ ալ ըլլանք, մանաւանդ թէ աւելի հնազանդ քան թէ խոնարհ: Պահպանինք ամենատուբը կուսին սէտ Նազարէթին տնակին մէջ, շատ աղէկ. բայց երբ Աստուծոյ հրեշտակը, այսինքն եպիսկոպոսը զմեզ նուաստութեան մէջ գտնէ, գարձեալ ամենատուբը կուսին նմանինք, պարզապէս մեր փաստերը և պատճառները յայտնենք. բայց մեր խոնարհութեան ալ յաղթել չի տանալով,

ըստ որում ան խոնարհութիւն չ՚ըլլար եթէ դիմադարձութիւն կ՚ընէնք, այո, ըսենք մենք ալ. « Անհաւասիկ կամ ծառայ Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քումմ »[1]:

56. Երբեմն մեծաւորայ հրամանը չօժար ընդունելութիւն կը գտնէ, և ուրախութեամբ ան՝ ցոյց տրուած տեղը և պաշտօնը կ՚ընդունուի. մեծամեծ գործքեր տեսնելու և սուրբ նախանձով հոգւոց փրկութեան աշխատելու յուսով: Ժողովրդապետութեան մը մէջ մտնալանդ թէ որ իրեն ուզածը ըլլայ, սուրբ եռանդեան օրեր կը բացուին, և նախանձու աքանչելի աշխոյժներ կը տեսնուին: Ներքութիւնը, ժողովրդեան աղէկ ընդունելութիւնը, մեծաւորի մը գարձը, որն որ հին ժողովրդապետին չախորժելով նորին հետ բարեկամանալու կը փութայ, ամենայն ինչ իրեն սիրտ կու տայ, և սրտին մէջ տեսակ մը եռանդ կը դրդռէ, որն որ էլեկտրական կայծի նման հաւատացելոց կը հաղորդուի, որոնց ամէնքը, ոբը չատ՝ որը քիչ սիրելու և յարգելու կը սկսին իրենց նոր ժողովրդապետը. « Ակնդէն եռանդեամբ բորբոքի »:

Բայց եղբ՚ակ որ վախճանը սկզբան չի համաձայնիր: Պաշտաման սովորութիւնը առաջին օրերը ղգացած մխիթարութիւնները կը նուազեցնէ, ըրած բարիքը այն չէր ղոր կը յուսար ընելու, հաւատացելոց ի սկզբան հաղորդուած աշխոյժը գաղջանալով կը սկսի. հովուին սրտին մէջ տխտակ մը տաղտկութիւն և ձանձրութիւն կը սպրդի, և շուտով լքումը կը սիրէ անոր վրայ: Այն առենը սուրբ պաշտօնը ալ անուշահոտ խունկերու բուրումը չէ, այլ թանձր և տաղտկալի օդ մը, որ վտան կը ծանրանայ. յառաջուան բարի օրինակ եղող եռանդը պակսեր է, և ոչ միայն զայն կենդանացընելու հոգ չի տարուիր, այլ մանաւանդ թող կը տրուի որ օր ըստ օրէ աւելի տկարանայ, գուցե տհաճութիւն մըն ալ կը ղգացուի. գուցե յառաջուան պէս յօժարութեամբ ալ ի գործ չի գրուիր. և ոչ գիտէ որ սիրտն ալ բաժնուած ու օտարացած չ՚ըլլայ այնպիսի ժողովրդապետութենէ, որուն այնչափ յօժարութեամբ կը բաղձար: Ո՞չ գիտէ որ արդէն սրտին

1 Ղուկ. Ա. 38:

մէջ ալ օգտակարութեան մտածումնէքը մտած չ'ըլլայ, և քիչ առեներն ալ մեծաւորաց պատշաճ ակնարկը չի ներկայանայ։

Ուսկից յառաջ կու գայ այսպիսի ոգեբաղձ փոփոխութիւն մը, զորն որ գուցէ մեր վրայ ալ կը զգանք։ Ի՞նչ է աստիճառը, եթէ ոչ Աստուծոյ վրայ վստահութեան պակասութիւնը։ Առաջին յաջողութեամբ, և կամ զոյն ունենալու յուսով միայն ոգևորեալ գոհ ըլլալով, զորն որ ունենալու համար Աստուծոյ չը գիմեցինք, այլ մեր անձին միայն, և երբ անձնական ուժարութիւնիս կը տեսնենք՝ կը վհատինք. և այն առենը մոռցարեին յանդիմանութեանը կ'արժանանանք — Ահաւասիկ մարդ մը, որ իւր վստահութիւնը Աստուծոյ վրայ չի դրաւ. « Ահա այր է, որ ոչ արար զԱստուած իւր օգնական [1] »։

Որն որ չի հանդիպիր երբ ձմարիտ խոնարհութեամբ միայն Աստուած կը վստահինք, ամէն բարի յաջողութեան անարժան սեպելով զմեզ։ Այն առենը վախը քաջալերութեան կը դառնայ, և ակարութիւնն ալ զօրութեան։ Սուրբերն ալ իրենց գործոց մէջ միայն ասոր բուն վախճան մը ունեցան։ Սուրբ Բեռնարդոս, սուրբ Լուիձի Թագաւորը անյաջողութեանց ամենը կրելու սովորեցան. բայց Աստուծոյ վրայ վստահութիւննին կատարեալ ըլլալով, հակառակութիւնները ոչ միայն իրենց եռանդը չէին պաղեցներ, այլ կարծես թէ աւելի կը բորբոքէին։ Յիսուսի Քրիստոսի քաջ զինուոր ըլլալով՝ մէկ կոտորուած մը նոր պատերազմներու նշան էր, որոնք ալ փառաւոր յաղթութիւններով կը պսակուէին։

57. Աստուծոյ վրայ վստահութեան պակասութեան հետևութիւնները երբեմն շատ սխալ և զգալի չեն ըլլար, այնչափ շուտով անսխալ չ'ըլլար հոգաբարձութեան պաշտօնը. նախ քանի մը գործքերու դէմ հակառակութիւն կը զգացուի, որոնք թէ և բարի գիտաւորութեամբ սկսած ալ ըլլանք՝ աղէկ եղք մը չեն ունենար։

1 Սղմ. ՃԱ. 9։

Երբ այսպիսի գործքերու մէջ արածելու պարտաւոր եղած հօտին բարիքը կը փնտռենք, երբ մեզմէ այնպէս կարծուած, և իրօք ալ սուրբ եռանդեամբ զանոնք ի գործ դնելու կը ջանանք, և ընդ հակառակն որոնց համար որ կ'աշխատինք, անոնցմէ փոխանակ մեր նախանձայուզութեան համաձայնութիւն նկատելու, ուրիշ բան չենք տեսներ, եթէ ոչ պաղութիւն, և գուցէ հակառակութիւն, և ամենատաղտկալի կծծութիւններ, ան առենը մեր եռանդը կը կորսուի, և տհաճութեամբ կը մարի։

Աստուծոյ վրայ վստահութիւնը մեզի դիւրաւոր նեցուկ չ'ունենալով, ձեռքերնուս մէջ գործքին ձախորդութիւնը տեսնելու պատրաստ և յանձնուած չ'ըլլալով, մանաւանդ թէ յաջող ելքից վրայ ապահով ըլլալով, մեր անձնական ըսկերու, խոհեմութեան, ճարտարութեան և խելքին, և գուցէ ղօրաւոր իշխանի մը համբաւոյն վրայ ալ մեծ վստահութիւն դնելով, և բոլոր յոյսերնիս պարապի եղած տեսնելով կը վհատինք և կը նեղինք, և գուցէ առեն մըն ալ ուրիշ գործքի ձեռք զարնելէ կը հրաժարինք։

Ահա, ահաւասիկ մարդ մը որ իրեն և իւր նմաններուն և ոչ թէ Աստուծոյ վրայ կը վստահի. « Ահա այր է, որ ոչ արար զԱստուած իւր օգնական »։

58. Մինչև հոս ընդհանուր հօտին համար եղած մեծամեծ գործոց նկատմամբ ըսածնիս, միայն մէկ հատիկ ոչխարի մը օգտին համար ալ ըսուած կրնայ համարուիլ։

Մեծ մեղաւորի մը գարձին համար երբեմն ոչնչափ եռանդ ցոյց կը տրուի, և նպատակին հասնելու համար ոչնչափ գնդեցիկ սիրալիր և խոհեմ միջոցներ ի գործ կը դրուին։ Բայց ապահովապէս և շուտով այսպիսի յաղթութիւն մը ձեռք բերելու համար, երբեմն մենք իսկ սուրբ եռանդով լցուած աշխատելէ և ամէն ձիգ թափելէ զատ, գրեթէ նոյն իսկ մեղաւորին ազգականներն ու բարեկամներն ալ մշտնջեան աւաքեալ կը գարձընենք. և երբ ամէն մարտիկ կարգի դրուած, ուրիշ բան կարևոր չի սեպուիր, եթէ ոչ հարուած մը տալ ամէն բան տանուելոյ ընելու, եթէ ոչ խօսք մը խօսիլ նոյն կէտին հա-

մոգելու համար, ձեռք մը երկնցընել որը բռնելու և երթալ ալ յաւտակագծին գործադրութեան ալ ձեռք կը զարնուի, բայց եղեւ, մարդկային կամաց չարութիւնը, այս չարութիւնը որ ատեն նոյն ինքն Աստուծոյ կը հակառակի, շատ անգամ ալ քահանային աշխատութեան դէմ կը գնէ. և այս դիմադրութիւնը յայտնուած ատենը, հովիւը իւր առաջին փորձերուն պարապութեանը վրայ չափազանց կը ապտի: Աստուծոյ վրայ իւր վստահութիւնը չի նորոգելով ալ բան մը չըներ, և ալ հնարք մը չի փնտռեր, որով գուցէ յաջողէր, եթէ նոր եռանդեամբ գարձեալ գործին ձեռնամուխ ըլլար: Ահաւասիկ հոս ալ մարդ մը՝ որ խոյս կու տայ զԱստուած իրեն նեցուկ ունենալէ, երբ Աստուած անոր վստահութիւնը փորձել կ'ուզէր, թող տալով որ իւր խորհուրդը պարապի ելլէր. « Ա՛յս այր է, որ ոչ արար զԱստուած իւր օգնական »:

59. Շատ անգամ փորձութեանց մէջ է որ Աստուծոյ վրայ վստահութեան պակասութիւնը մեծ հետեւութիւններ կ'ունենայ:

Այսպիսի պարագաներու մէջ սրբոց վարմունքէն աւելի պարզ և բնական բան չի կայ: Անձնական թշնամութենէ զգացմամբ լեցուած, մանաւանդ երբ փորձուղէն չարչարուած ու մոլորած տեսնեն զիրենք, առաջին մտածմունքնին Աստուծոյ քով դանելն է ինչ որ իրենց վրայ կը պակսի. և ըստ որում շատ աղէկ գիտեն աստուածային բարութեան մեծութիւնը, իրենց վստահութեան ամենէն չնչին և սահման մը չեն դներ և իւր նախախնամութեանը վրայ ապահով և խաղաղ կը հանգչին, մօրը գիրկը քնացող տղու մը պէս:

Եւ աստուածս, ինչպէս կրնանք մենք ա՛ և նոյն փորձութենէ վախնալ երբ ապահովապէս կրնանք այս հաւատոյ մեծ սկզբանց վրայ: — Մենք կարողութիւններէս աւելի փորձութեանց չենք ենթարկուիր. — փորձութեան ժամանակ մէր զօրութիւնը միայն Աստուծոյ վրայ է: — Զօրութիւն մը, որ ինդրած ատենիս վստահ ենք ընդունելու: —

Իրօք ձեռքերնիս այսպիսի զէնքեր ունենալէն վերջը, թէ որ յաղթուելու ըլլանք, միայն մեր ուղելովը պիտոր յաղթուինք: Ամենալաւ և ընտիր զէնքեր միշտ պատրաստ ունինք, բայց ինչ են և ինչ բանի կը ծառայեն, երբ ձեռքերնիս չենք առներ: Ուստի եթէ ուշագրութեամբ զննելու ըլլանք, պիտոր տեսնենք որ թէ և աղէկ զինուած, բայց թշնամւոյն դէմ եղածնուս պէս՝ անզէն զինուորի նման կը թուինք: Բայց, ի՛ըսուի որ, փորձութիւնը չափազանց սաստիկ էր: — Իրօք. այսու ամենայնիւ ձեր կարողութենէն վեր չէր: — Բայց ես ուրիշ բան չեմ եթէ ոչ թշուառ ու տկար: — Գիտենք, բայց Աստուծմէ պէտք է փնտռէք պէտք եղած ուժը և զօրութիւնը: — Խնդրեցի, բայց ընդունած ըլլալս չեմ գիտեր:— Արդեօք յարատեւ աղօթքով, խոնարհութեամբ, վստահութեամբ, և մտագրութեամբ խնդրեցինք: Խոհեմութեամբ խնդրեցինք լսուելու կենդանի փափագով: Փորձութիւնը սկսած ատեն չուտով և չարունակած ատենը աղօթք ըրինք: Գուցէ ոչ, մանաւանդ թէ ստուգիւ ոչ. վասն զի Յիսուսի Քրիստոսի խոստմունքը պաշտօնական է, և երդման զօրութիւն ունի. « Խնայցէ՛ք ինձ եւ ինչ որ իմ անուամբս խնդրէք Հօրմէս պիտոր ընդունիք »:

60. Դեռ ինչէ՞ր չենք կրնար ըսել Աստուծոյ վրայ վստահութեան պակասութեան նկատմամբ, հիւանդութեանց, կորուստներու, դժբաղդութեանց և՝ ամէն ժամանակ հանգիպած ամէն տեսակ տառապանաց և աղէտից մէջ: Ո՛րչափ տկարութիւն այսպիսի առիթներու մէջ: Ո՛րչափ գանգատ և գուցէ տրտունջներ ալ: Մեր տանջանքներէն սաստիկ նեղուած՝ տղու պէս կու լանք, և այնպէս կը վստահանք, ինչպէս աշխարհական մը կը ցաւի իւր հաճոյքներէն և զուարճութիւններէն զրկուած առեն, և կը վհատինք այն էակներուն նման, որոնք տեսքը Աստուածային ըսածին համեմատ՝ յուսահատուր եղած են. « Որպէս և այլքն, որոց ոչ գոյ յոյս » [1]:

Քահանայ Յիսուսի Քրիստոսի, եթէ ցաւը զքեզ կը

1 Ս. Թես. Դ. 12:

վշտացընէ, ձակատդ վերցուր դէպ ի երկինք, և խաչե-
լութիւնը ձեռքդ առած, որուն առջին ամէն օր քու ա-
ղօթքներդ կ'ընես, համբուրէ, այո՛ համբուրէ, և հա-
րիւր անգամ դարձեալ համբուրէ զայն, սիրոյ և վստա-
հութեան կենդանի զգացմամբ, և աչքերդ փրկիդ պատ-
կերին վրայ սեւեռած՝ խորունկ կերպով մտածէ սուրբ
Գրոց այս խօսքերը, որոնք մեկ կողմանէ կը յիշեն Յիսու-
սի Քրիստոսի չարչարանաց հարկաւորութիւնը, և միւս
կողմանէ ալ քու չարչարուելդդ կարեւորութիւնը կը
ցուցընեն, եթէ կ'ուզես անոր փառացը մասնակից ըլլալ.
«Ո՞չ ընդունս պարտ էր չարչարել Քրիստոսի, և այնպէս
մտանել ի փառս իւր [1]: — Զորս յառաջն ճանաչէր յա-
ռաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի
Որդւոյն իւրոյ» [2]: — Կրած ցաւերուդ դէմ դնելու բան
մը չունիս: Այսաքէնէյն խօսքերը մտիկ ըրէ, որն որ յայտ-
կապէս քեզի համար կը խօսի. « Իսկ արդ ընդէ ասեմք
առ այս, եթէ Աստուած ի մեր կոյս է, ոչ էսկ մեր հա-
կառակ » [3]: Ինչո՞ւ համար այսպէս կը դանդաղիս, մինչ
դեռ Աստուած ի մխիթարութիւն և ի արիտուր քու
կրած վշտերուդ՝ նոյն ինքն իւր Որդին կու տայ քեզի, և
անով այն ամէն բան, որուն կրնաս բաղձալ. « Որ չիւր
Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց
զնա, զնա՛րդ ոչ նովաւ հանդերձ զամենայն ընծրհիցէ
մեզ » [4]: Աղօթքով դէմ կեցիր ցաւոց հեղհեղին, որ զքեզ
ընկզմելու և հեռը քարշելու կը սպառնայ, և երանելի
Աւաքեանէն սորվելով թէ ինչպէս կը սիրուի Աստուած
և անոր կը վստահուի, ըսէ սրտանց. « Արդ ոմի մեհենա-
յէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի. նեղութիւն, թէ անձկու-
թիւն, թէ հալածանի՞ք, թէ սո՛ւր, թէ մերկութիւն, թէ
վնա՞ս, թէ սո՛ւր.... Այլ յայսմ ամենայնի՝ առաւել
յաղթեմք նովաւ որ սիրեացն զմեզ » [5]:

61. Այն մարդիկը, որ էր թէ կարենայինք չ'ըսել
և այն քահանաները, որոնք երկնից ծերութեան վրայ չա-

1 Ղուկ. ԻԴ. 26:
2 Հռոմ. Ը. 29:
3 Հռոմ. Ը. 31:
4 Հռոմ. Ը. 32:
5 Հռոմ. Ը. 35, 37:

փաղանց խնամատար ըլլալով, վախնալով որ այն երկնից
վերջի տարնեերը միայն նեղութիւն և անձկութիւն կրե-
լու սոխպուն, պարապ վախերէ թեզադրուած չափա-
զանց զգուշութիւններդ խոհեմ տեսչութիւն կը կանչեն.
ինչպէս չեն տեսներ այն նախատինքը զոր կը պատճառեն
երկնաւոր Հօրը, որուն նախախնամութիւնը երբ կ'ու-
բանան, մինչդեռ զանիկայ ուրիշներու այնպիսի դեղե-
յիկ գոյներով կը նկարագրեն:

Ո՛վ դանձող քահանայ, ինչը զինքդ ուրեմն Հօրդ
աչքին այն ատելման ենկաճ կը կարծես, որ ա՛լ անոր
բարութեանը յուսալու չը կարողանաս, եթէ աղքատաց
օգնէն, և կամ ուրիշ բարեգործութեան մը համար բանէ
մը զրկուիս: Մոռցար ուրեմն մարգարէ Թագաւորին
սուրբ խօսքերը. « Մանուկ էի ես և ծերացայ, և ոչ
տեսի զարդարն արհամարհեալ, և ոչ զզաւակ նորա թէ
մուրանայ հայ » [1]:

Ո՛վ դանձող քահանայ, ինչը զինքդ ուրեմն Թուչուն-
ներէն և խոտերէն նուաճ Աստուծոյ սիրելի կը կարծես.
« Հայեցարո՛ւք ընդ ագռաւս, զի ոչ սերմանեն և ոչ հնձ-
ձեն, որոց ոչ գոն չեմարանք և ոչ համբարանոցք, և Աս-
տուած կերակրէ զնոսա:... Հայեցարո՛ւք ընդ շուշանն
ուրկէս աճէ. ոչ ջանայ և ոչ նիւթէ. ասեմ ձեզ և ոչ Սո-
ղոմոն յամենայն ի փառս իւր զգեցաւ երբէք զմի ի նոցա-
նէ » [2]: Ո՛չ, ո՛չ, դու խոտերէն և Թուչուններէն նուաճ սի-
րելի չես Աստուծոյ: Ինչո՞ւ կ'ըսեմ. մի Թէ ինքը չէ՞ որ ա-
նոնցմէ հազարապատիկ աւելի քու վրադ կ'անձրևէ իւր
պարգեւները ու շնորհքները. «Ո՞րչափ ևս առաւել զձեզ,
որ լաւ էք... Ո՞րչափ առաւել զձեզ, Թերահաւատք» [3]:
Ուրեմն աշխարհականայ պէս չիմարաբար մի՛ նեղուիր, և
ոչ ալ ապագային վրայ այնչափ մտածէ. « Զայն ամենայն
հեթանոսք աշխարհն խնդրեն »: Դուն քնացիր և հան-
գիստ եղիր, Աստուած գիտէ քեզի հարկաւոր եղածը.
« Այլ ձեր Հայր գիտէ զի պիտոյ է այն ամենայն » [3]:

62. Կարծեմ Թէ այսչափ մանրամասնաբար ըսած-

1 Սղմ. ԼՖ. 25.
2 Ղուկ. ԺԲ. 24, 28.
3 Ղուկ. ԺԲ. 30.

Ներս բաւական են ընթերցողները համոզելու թէ ինչ տխուր հետեւութիւններ կը ծնանին աւելորդ վախէ. և թէ ինչ մեծամեծ բարիքներ կրնան ձեռք բերել բոլորովին Աստուծոյ վրայ վստահողները: — Մեր վրայ անվստահութիւնը, կ'ըսէ Ջերմեռանդ հեղինակ մը, որուն մտադրութեան արժանի այս խօսքերը հոս երբեմն մեր խորհրդածութեան ընծան կը դնենք: Մեր վրայ անվստահութիւնը՝ Աստուծոյ վրայ վստահութիւնը կը գործէ և կը հաստատէ, որով ամէն բան կրնանք, և գրեթէ միշտ ամէն բան տակաւ ու անդորը միջոցներով կը կատարուի: Մի միայն Ճշմարիտ հաւատացեալը մեծանձն է, հետեւաբար ալ այնպիսին միայն քաջասիրտ և հաստատուն. ո՞րովհետեւ գիտէ, կ'ըսէ սուրբն Օգոստինոս, որ «կարող, արդար և բարի Աստուծոյ մը հետ չի կրնար մեկը թշնամանալ և եղկելի ըլլալ, եթէ ոչ անիկայ որ կամաւ այնպէս ըլլալ կ'ուզէ»: Ինչը գիտէ որ եթէ Աստուած այս մահկանացու կեանքի մէջ մեզի վիշտ կը խաբէ, միշտ այս երեք վախճաններուն մեկուն համար կը խաբէ. — կամ մեզքերնիս քաւելու համար. — կամ հաւատարմութիւնիս փորձելու համար. — և կամ առաքինութիւննիս պսակելու համար. «Աւելի յամառութիւն, աւելի փորձ, աւելի պսակ»: Այս Ճշմարտութիւնը աղէկ մը ըմբռնող հաւատացեալը՝ ուրախ սրտով կ'ընդունի իւր վարդապետին մի և նոյն ձեռքէն եկած խաչերն ալ, յաջողութիւններէն ալ. կը պաշտէ վինքը վերցնող ձեռքը նոյն այն սրտով, որով որ կը յարգէ զմխիթարող ձեռքը. և իւր կեանքի մէջ ուրիշ չարիք մը չի ճանչնար, եթէ ոչ զայն միայն, որ վինքը իւր Աստուծմէն կը բաժնէ: —

ԳԼՈՒԽ Գ.

Յուսոյ յարուցանիւրիւն — Յանձնապաստանութիւն:

63. Ինչպէս որ վերը ըսինք, ընդհանուր եկեղեցականոյ վրայ վախցածնիս յուսահատութեան կամ յանձնապաստանութեան չափազանցութիւնը չէ, ըստ որում որ քահանան կրնայ երբեք ըսել, գոր օրինակ, ինչպէս

որ կ'ըսէ աշխարհիկ խստասիրտ մեզաւոր մը, թէ — Ես կրնամ ուզածիս պէս մեղանչել, — Աստուած վնս դժոխք խաբեբայ համար չը սաեղծեց, — օր մը պիտոր ներէ ինձի, մահուանս կէտին, ինչպէս նաև այսօր ալ, — կամ քանի մեզք եմ խոստովաներ՝ կամ մեկ հատ մի և նոյն է:— Հազար փառք Աստուծոյ. քահանայ մը երբեք այս ապերախտը չի հանդիպիր: Բայց այսու ամենայնիւ յանձնապաստանութեամբ որչափ թերութիւններ կրնան ըլլալ յուսոյ դէմ, որոնք առանց վերը յիշուածներուն չափ ծանր ըլլալու, այսու ամենայնիւ ոդբալի հետեւութիւններ կ'ունենան քահանայի պէտք եղած պարտաւորութեանց և սրբութեան նկատմամբ: Այս ոդբալի հետեւութեանց մեկ երկուքը հոս նշանակենք, որպէս զի տեսնուի թէ որչափ հարկաւոր է անոնցմէ զգուշանալը:

64. Ճշտութեամբ և աստուածաբանօրէն խօսելով, յանձնապաստանութիւնը Աստուծոյ բարութեան և գթութեան վրայ յանդուգն վստահութիւն մըն է, որով մարդ աւելի առատաբար մեղանչելու կը յօժարի: Բայց մենք աւելի ընդարձակ մտքով ըմբռնենք. յանձնապաստանութիւն ըսենք այն չարը՝ որ ոչ միայն Աստուծոյ բարութեան և գթութեան վրայ անմիտ վստահութենէն կը ծնանի, այլ նաև անիկայ՝ որ մարդուս իր անձին և կամ կարողութեանը վրայ դրած ընդունայն վստահութենէն յառաջ կու գայ:

Երբեմն նոյն իսկ եղերանոցը վկայ է յանձնապաստանութենէն յառաջ եկած մեծամեծ անկարգութեանց: Գիտէ, գոր օրինակ, այն գուռզուրթեամբ լեցուած և ինքնահաւան երիտասարդը, որն որ եկեղեցական ընթացքին մէջ յառաջ կ'երթայ առանց օրինաւորապէս կոչուած ըլլալու, որն որ կոչման Ճշմարիտ սկզբանց վրայ իրեն խօսք բացուած առեն՝ գլուխը կը շարժէ, և աչքերը գոյ՝ եկեղեցականութիւնը յանձն կ'առնէ միայն այս պատճառաւ որ ուրիշ ամէն վիճակները իրեն յարմար չեն:

Զեմ գիտեր ինչ առաքինութեան վրայ կրնթնած, որուն յարդը իրականէն շատ աւելի վեր բռնած է ինքը,

մի միայն բարի կամքի հիման մը վրայ վատահացած, և սըր-
տին մէջ եկեղեցւոյ ծառայելու տարտամ բաղձանք մը
զգալով, բայց առանց քահանայական վիճակին էական
կէտերու և մանաւանդ մեծամեծ պարտաւորու-
թեան զգուշաւոր քննութեան՝ ընկերներէն ոմանց սըր-
բարար երկիւղածութիւնը խղճահարութիւն կ'անուա-
նէ, և հանգարտ սրտով բեւեռն տակը մանելու կը պատ-
րաստուի, յորմէ նոյն իսկ հրեշտակները կը դողան:

Ի՞նչ բանի վրայ հաստատուած է իւր վատահու-
թիւնը: Աղգէն ընկնք, կասկածաւոր և անհիմն առաքի-
նութեան մը վրայ, ուակիկ կը կարծէ որ Աստուած գոհ
ըլլայ. կարծուած անձանօթ տաղանդի վրայ, որով դրե-
թէ կ'ամբարհատաձի, որն որ միայն իւր կոչումը
կ'աւելցընէ: Երբ իւր սրտին ծածուկ խոռոչներուն մէջ
կը մտաբերէ ուսման մէջ ընկերներէն շատ աւելի յառաջ
ըլլալը, երբ աւելի ուշ՝ պաշտաման աշխատութեանց մէջ
իւր հանճարը ցոյց տալու առիթներուն վրայ կը մտածէ,
իւր վատահութիւնը շատ աւելի մեծնալով՝ ամէն երկիւղ
կը վտարատէ: Եւ ո՞վ գիտէ որ յիմար ունայնամտութեան
մէջ իրեն նման մեկուս մը ձեռնադրութիւնը՝ եկեղեցւոյ
համար մեծ բարեբաղդութիւն մը չի կարծէ:

Ո՛վ յանդուգն վատահութիւն, վտանգաւոր բարե-
բաղդութեան որչափ յաւալի արտյուքներու պատճառ
չես եղած նոյն եկեղեցւոյ:

65. Ուրիշ կէտ մը գուցէ այս աստիճան ամ-
բարտաւանութեան չի հասնի, բայց զուրկ է այն ա-
տուածապաշտութենէն, որ կը տրամադրէ զայն ունեցո-
ղը անդադար կերծրով ու և նոյն պատրաստութեանց դէմ
մաքառելու: Կը տեսնէ թէ ուրչափ բարեպաշտութիւն
կը պակսի իրեն, և կ'առաջադրէ օր մը սատանալու: Բայց
ըրբ: Հոս է որ յանձնառաստանութիւնը իւր դէշ խաղը
կը խաղայ: Աչքին խաբեբայ ձիւաղէ մը խաբուած,
մեր երիտասարդ կղերականը կը յուսայ ապագային մէջ
ընելու՝ ինչ որ հիմայ չ'ըներ, մինչդեռ ժամանակը արագ-
ընթաց կ'անցնի, և ինքը միշտ նոյն է: Կ'ուզէ առաքինի
ըլլալ, բայց ըստ որում առանց աւելի աշխատութիւն և

նեղութիւն կրելու կ'ուզէ ըլլալ, երբեք առաքինի չ'ըլ-
լար, մանաւանդ թէ թերութիւնները աւելի ուժգնա-
լով, միշտ աւելի և առաքինութենէն կը հեռանայ: Եր-
բեք չ'ըսեր թէ « Ո՛վ, հիմայ այս կէտս կ'ուզեմ սկսիլ»,
այլ միշտ կ'ըսէ, « ընենք, տեսնենք »:

Սակայն մեծաւորաց հսկող աչքը կը տեսնէ այս
վարմունքը, որ իրենց տեսակ տեսակ վախեր կը պատ-
ճառէ. ժամանակը կու գայ այսպիսի երկբայ կոչման մը
վրայ վճիռ տալու, ինչպէս ազատելու է այս մտատանջու-
թենէն: Եթէ այսպիսի կղերականի մը բաւական ըլլա-
լին պատշաճ ազգաբարութիւններ, բարի խորհուրդ-
ներ, շահուելիք պակասութեանց ծանուցումներ, եր-
բեմն ալ ձեռնադրութեան չի մտեցընելու սպառնալիք-
ներ, շատ դիւրին էր. բայց դժբաղդաբար ազգաբարու-
թիւն, խորհուրդ, սպառնալիք՝ բոլորովին անպտուղ են,
և ուրիշ բանի չեն ծառայեր՝ եթէ ոչ ժամանակ մը կեղ-
ծել և ծածկել յանգիմանուած պակասութիւնները.
արտաքուստ փոփոխութեան մը նշան կու տայ, բայց
ներքուստ միշտ մի և նոյնը կը մնայ:

Այսու ամենայնիւ այս ողբալի երիտասարդը կը
տեսնէ իրեն եղած յանդիմանութեանց արդարութիւնը,
բայց ապագային մէջ շահելու կը վստահի. այսը ձեռնա-
դրութեան ընորհաց վրայ դնելով, և ամէն մեկ ընդու-
նելիք նոր աստիճանը, իրեն համար խթանելու մէյմէկ
նոր առիթ է: Ակնառարկաւորութիւնը՝ որով անդադ-
նալի ուխտերով կը կապուի, հեռուէն իրեն յարմար ժա-
մանակ կ'երևէր Հաստատապէս ինքը վնքը շահելու. ընդ-
ունեցաւ այս աստիճանն ալ, բայց ամենևին օգուտ մը
չի քաղեց: Այն առեղը նայուածքը քահանայական ձեռ-
նադրութեան ժամանակին վրայ դարձուց, և ուղեց հա-
մոզուիլ որ ան առեղը անշուշտ բոլորովին նոր կեանք մը
պիտոր սատնար: Նպատակին հասաւ արդեօք: Փորձը
թող պատասխանէ և ըսէ, որ այսպիսի տիրացու մը, որն
որ գոնէ առանց յայտնի մեծ պակասութիւններու, ոչ
միայն աստուածապաշտութեան մէջ յառաջ չ'երթար,
այլ նաև տարուէ տարի ալ կը նուազի, յետոյ ըստ Աս-

տուծոյ սրտին քահանայ ալիտալ ըլլայ: Փորձառութիւնը թուղ ըսէ, թէ արդեօք այսպիսի յանձնապաստան և գաղջ կղերական մը կ'ուզէ՞ տուրբ Առաքելոյն ուղածին համեմատ տուրբ, նախանձաւոր, և « անստգիւտ » քահանայ ըլլալ:

Ո՛հ, արդէն ըսինք, եթէ նոյն իսկ ջերմեռանդ ուխտացուները չատ անգամ հալիս թէ հաստատակ բարի քահանայ կրնան ըլլալ, անփոյթ և գաղջ կղերականէն ինչ կրնանք յուսալ, երբ միայն իւր խաբեբայ յանդգնութեանը վրայ հաստատուած է, որն որ չատերը մոլորեցնելով կորնչեցուց:

66. Քահանայ ձեռնադրուած, կամ ձեռնադրութենէն քիչ մը յառաջ ալ, թէ որ յանձնապաստան մէկն է, իւր առաջին մտածմունքը այս կ'ըլլայ, թէ ինչ բանի պիտոյ գործածէն: Ինձի ինչ պաշտօն պիտոյ տան: Բոլորովին աստուածայնին նախախնամութեան և անոր գործիք եղած մեծաւորաց յանձնուելու, նախապաշարուած կ'այլայլի կը խռովի, կը տագնապի, տեսակ տեսակ հաւանական պաշտօններդը կը քննէ, և որովհետև մեծ բանի տեղ դրած է իւր արժանաւորութիւնը, տակնուվրայ կ'ըլլայ իրեն հաճելի չ'եղած պաշտօնի մը կանչուած ատեն, մանաւանդ թէ իրեն նուաստութիւն կը սեպէ: Ուստի և կը սկսի սեամոլել, գաղտնի գանգատները ընել, թերևս նաև բամբասանքներ ալ և դուխ ինչուան գժգոհութիւն ալ, որն որ իւր ընտրած վիճակէն աղէկ յաջողութիւններ չի գուշակեր: Ո՛հ, այսպէս չէր ըներ տուրբն Աղեքսիոս Գոնձակայ, որն որ քանի մը վայրկեան « Մեծաւորներս ինչ բանի պիտոյ դործածեն » մտածելուն համար, չափազանց ցաւ զգալով կու լար:

Երբեմն բարձր պաշտօններու հասնելու բաղձանքը այնպէս կանուխ չ'զգացուիր. մեծաւորները արուածը յօժարութեամբ և քաղաքավարութեամբ կ'ընդունուի. սակայն եթէ այս ընդունուած վիճակին մէջ գովելի գործ մը պատահի, այսինքն երբ տեսնուի, որ իբրև խոստովանահայր, և կամ իբրև քարոզիչ հաւատացեալոց ընդհանուր գոհունակութիւնը լսէ, եթէ անպատշաճ գովաբանողները հրապուրիչ խօսքերով գժբաղդաբար անձնասիրութեան վրայ ունեցած համոզումը աւելի ևս հաստատելու ըլլան, ան ատենը անուն գովասանքներով լղփացած՝ յանձնապաստանութիւնին կը գրդռէ բարձրագոյն պաշտօններու գիմելու: Եւ այսպիսի պահանջմանց ատելի մասը մեզմէ անգամ ծածկելու համար՝ յանձնապաստանութենէն միշտ խաբուած ու մոլորած՝ կ'ըսենք, որ բարձրագոյն պաշտօններու մէջ աւելի յաջողութեամբ Աստուծոյ փառքը կ'աւելցընենք, աւելի կ'աշխատինք, աւելի հոգիներ կը փրկենք, և այլն: Խաբեբայ նենգութիւններ, յորմէ սուրբերը ամէն ջանքով կը զգուշանային, և երջ առաքինի քահանայք ալ իբրև Թշուառ աղէաքէ հեռու կը փախչին:

Չի մոռնանք ըսելու, որ եկեղեցին սուրբ քահանայից կարօտ է, և ոչ թէ ամբարտաւաններու: Պաշտօններու փափաքիլը կուրութիւն է, և անարժանութեան սոյգ փաստ մը: Ա.յսպիսիներուն համար երանաւէտ և համարձակախօս կրնայ ըսուիլ. « Եւ ոչ ոք ինքնին Աստուած » [1]:

67. Ինչպիսի տարբերութիւն մինչև հիմայ ըսածներուս և այն քահանայութեան իրաւունքին արժանի քահանայից Աստուծոյ այն յարգելի ծառաներուն մէջ, որոնք պաշտօն մը ընդունելու համար բռնութեան կարօտ էին: Ո՛րչափ մեծ խոր կայ, զոր օրինակ, այն ժպիրճ քահանայից և Սօլմինեակ Ալտոսի մը մէջ, որն որ Նոգովիկոս երեքտասաներորդին երեն եպիսկոպոսութեան առաջարկութիւնը լուտս կոչել տալու համար, թէ ուղղակի և թէ անուղղակի ամէն միջոց ի գործ դնելէն վերջը, երբև վերջին փորձ մը, պալատը գնաց իւր խոնարհութեան և չափազանց վախուն գաղը վարելու համար:

— Գնաց Թագաւորին խօսելու, կ'ըսէ իւր վարուց հեղինակը. երեք անգամ ծունկ չոքեցաւ անոր ոտքերուն առջին, Թախանձելով որպէս զի երեն տեղը ուրիշ մը առաջարկուէր: Ա.յս տեսակ նորատեսիլ բան մը բո-

1 Ա. Թագ. ԻԶ. 8:

ըր պաշտաւանները ապչեցուց, և Թադաւորը զԱզա-
նոսը ոտքի կայնեցընելով, ըսաւ. « Օրհնեա՛լ ըլլայ Աս-
տուած ասոր Համար, որ իմ Թադաւորութեանս մէջ կը
գտնուի քահանայ մը, որ եպիսկոպոսութենէն կը հրա-
ժարի »։

— Օր մը աղնուական մը Աղանոսին լուր տալով
Հայր Լուիձի Կրանատային կարմելնական գտակէն
հրաժարիլը, չուտով պատասխանեց, որ Թադէ և գտակէ
հրաժարիլը մեծ առաքինութեան կարօտ չէ, մանաւանդ
աւելի մեծ առաքինութիւն պէտք էր գտնոյք ընդունելու
Համար. և շատ կը զարմանար որ գտնուէին այսպիսի
բարձր պաշտօններու փափագողներ, և ի՛ըսէր միանգա-
մայն որ մեծ առաքինութիւն մըն էր գտնոյք յանձն առ-
նուլը՝ երբ ապահովութիւն կայ Աստուծոյ սուրբ կամացը
վրայ, զորն որ մեծ խնամքով քննելու է։ —

Զգուշանանք բարձրագոյն պաշտօններու նախան-
ձէն, և աստուածային նախախնամութեան կարգադրու-
թեանց առջին ալ արդելքներ չի դնենք ամէն միտու որո-
շուած պաշտօններու նկատմամբ. Թող տանք որ մեր վրայ
ունեցած գաղափարը ազատօրէն կարգադրէ և ի գործ
դնէ. մեր աղմուկներով իւր գործքերը չխոթելէ զգու-
շանալով, այլ հանգարտութեամբ և վստահութեամբ մեր
խնամոյ յանձնուած հօսը արածելու նայինք, ինչպէս որ
երիտասարդ Դաւիթը իւր հօրը ոչխարները կ'արածէր,
երբ Աստուած զՍամուէլ իրեն խաւրեց. և ապահով
ըլլանք որ Աստուած մեծաւորաց ձեռքով ուր ալ ըլ-
լանք, կրնայ զմեզ գտնել՝ եթէ ուզէ զմեզ բարձրագոյն
պաշտօններու հասցընել։ Ո՛հ, չի գործածենք երբեք այն
աւելի կամ նուազ կեղծեալ ճարտարութիւնները և
խորամանկութիւնները, զորոնք ամբարտաւանութիւնը
դիտէ այնպէս վարպետութեամբ բանեցընել իւր ուզածը
ձեռք բերելու Համար. ինչպէս նաև չի ձանձրացընենք
մեծաւորները կամ նամակներով, կամ այցելութեամբ,
և կամ թիւրած բարեկամներու միջնորդութեամբ, որ-
պէս զի փառասիրութիւններուս ձեռնտու ըլլան։ Այլ
մանաւանդ թէ պատուներու մտոտի ցնորքներէն ջլացած

աւեննիս մեր թշուառութեանց և կարծուած արժանա-
ւորութեան վրայ հսկելով՝ յիշենք երկնաւոր Վարդա-
պետին այս խօսքերը. « Որ առաջի մարդկան բարձր է,
պիղծ է առաջի Աստուծոյ »[1]։ « Պիղծ »։ Ո՛հ, այս է այն
խիստ բառը, զոր սուրբ Գիրքը կը գործածէ։

68. Յանձնապաստանը միշտ իւր ունեցած պաշտօ-
նէն բարձրագոյններու չի փափագիր։ Շատ մը բարի
զգայմունք և ուղիղ դատողութիւն ունեցող քահանայք
հասկընալով և խոստովանելով, որ ունեցած պաշտօնին
իրենց արժանաւորութենէն և տաղանդէն աւելի ստորին
չէ, առանց ուրիշ պահանջողութեանց՝ իրենց յանձնուած
անտիրող երկրին մասը մշակելու հոգ կը տանին։ Ա-
կայն ամէն բարեաց Թշնամին՝ որն որ երբեք չի քնանար,
տարբեր յարձակմունքներով զայնպիսիներն ալ յանձնա-
պաստանութեան մէջ կը ձգէ։ Իւր սովորութեանը հա-
մեմատ խաբեբայ յանդգնութեան սուրբ նախանձու կեր-
պարանք մը տալով, զոր օրինակ, ժողովրդապետի մը
դէմ խօսիլ կը խոթէ մեծ գործքի մը ձեռք զարնելու դէղե-
ցիկ փափաքը, զորն որ ըստ իւր երևակայութեան տղուր
երազներու բաղդաւոր վախճան մը պիտոր սպասէ։ Ին-
ըորովին գոհ և ուրախ՝ ձեռքին մէջ կարծուած յաջող է-
ղեց վրայ, խոչընդոտներէ չի վախնար, իւր անձին վրայ
ունեցած վստահութիւնը՝ զինքը կուրցընելով ի՛ասա-
հովցընէ և սիրտ կու տայ։ Աւարկութիւն մը ընելու
փորձը ըրէք, ժպտելով յառաջ կ'երթայ, յանդգնութե-
նէն զատ մէկու մը հետ չի խորհրդակցելով՝ մեծ ծախքե-
րու կարօտ գործքերու ձեռք կը զարնէ, մէկդի ձգելով
անտանելի պայմանները, զորոնք կը կարծէ որ առանց
վտանգի զանց առնելու կարող ըլլայ, կը բարկանայ ա-
նոնց ամենուն, որոնք իրմէ աւելի խոհեմ, եղբայրսիրու-
թիւն կը կարծեն այսպիսի վնասակար գործքի մը ար-
գելք ըլլալը։ Իւր քահանայական պաշտօնին պարտա-
ւորութիւնները շտապով կատարելով՝ թախծագին վի-
ճակի մէջ կը ձգէ զայն, և դանդատանայ պատճառ կու

1 Ղուկ. ԺԶ. 15։

տայ հիւանդներու, որոնք պարապ տեղ իրեն կը սպասեն, աղքատներու՝ որոնք ամենաչնչին ողորմութենէ զատ ուրիշ նպաստ մը չ'ունին իրմէ:

Կարճառօտ երեթանք, բոլոր Ժողովուրդը կը սկսի գանգատիլ, և անոր վրայէն կը վերցընէ իւր վստահութիւնը. և Աստուած, որ երբեք չ'օրհներ զանգգնութիւնը, կը զլանայ իւր օգնութիւնը այս անհաւատարիմ ծառայէն, որն որ միայն իւր անձին վստահելը է, կը պատժէ և կը խոնարհեցունէ (գոնէ ատով կարող ըլլար խելքը գլուխը բերել), թող տալով որ այն գործքը ձախորդ վախճան մը ունենայ, որուն յանձնապաստանը հաւատք չ'ընծայեր, եթէ ոչ երբեր ալ չի կրնար արդեօք:

Այսպէս չեն վարուիր սուրբ քահանայք. թէ և գործքի մը համար ունեցած եռանդնին չափազանց ալ ըլլայ, այսու ամենայնիւ կը յիշեն որ եռանդը միայն ան առենը օրհնեալ ու սուրբ է, երբ առ Աստուած կը վերբարձրի, որուն համար պէտք է ըլլայ պարզ և մաքուր դիտաւորութեան մէջ – խոհեմ— լմնատուն խորհուրդներով լուսաւորուած — ժամանակաւ և հաստատամիտ խորհրդածութիւններով հաստուն — անձնական կարողութեան վրայ վրկարար անվստահութեամբ բարեխառնած — և միշտ ալ այն հաւատոյ և աստուածպաշտութեան հոգւով ընկերացած, որն որ լուսոյ ուղղութեան և զօրութեան հոգի է:

Այսպիսի հիմանց վրայ հաստատուած են ձեռք զարկած գործքերը՝ յաջող վախճանով պսակել ուզող սուրբ քահանայք: Եւ Աստուած ալ կը յաջողէ անոնց վերձեռնադրութիւնը, ըստ որում տեսնելով որ իր ձեռքին մէջ հլու գործիք են, գրեթէ ինքն է որ գործքը կը կատարէ, ինքն է որ կը մտածէ, կ'ազդէ, կը սկսի, կ'ուղղէ, և զարմանալի վախճանով մըն ալ կը պսակէ:

Անհաւասիկ սուրբերուն մեծագործութեանց մեկնութիւնը, զոր օրինակ, Պաւլայեան Վիննկենսիոսի մը: Չամրեցէք, եթէ կրնաք, այս մեծ սուրբին ըրած գործքերը. հաստատած եղբայրսիրութեան ընկերութիւնները, հիմնած ու կառավարած առաքելութիւնները, հնած հիւանդանոցները, և ուրիշ գործքեր՝ որոնք յայտնապէս կը գերազանցեն մարդկային կարողութիւնը: Ինչո՞ւ համար ինքը այնպիսի փառաւոր յաջողութիւններ ունեցաւ, մինչդեռ ուրիշներուն ձախորդութեան դարձաւ: Վասն զի մեզի ստէպ պակասածը ինքը առատութեամբ ունէր, հաղթադիւտ խոնարհութիւն մը, խորին խոնարհութիւն մը, Աստուծոյ վրայ հաստատ վստահութիւն մը. և աստուածպաշտութեան հոգի մը՝ որ ամենադժուար պարագաներու մէջ ալ միշտ ապահովապէս ղեկը կ'առաջնորդէին:

Սուրբերուն նմանինք, որոնք երբեք իրենց վրայ չէին վստահէր, այլ միայն Աստուծոյ վրայ. և գործքերնուս յաջող ելից վրայ կրնանք ապահով ըլլալ:

69. Պաշտօններուս մանր և մանաւանդ գործքերուն մէջ ալ յանդգնութիւնը կրնայ սպրդիլ իւր չար աղդեցութեամբ: Այսպէս, օրինակի համար, յանձնապաստանութիւն չի՞ արդեօք այն խոստովանահօրը, որ վայրկեան մըն ալ մտնայ թէ իւր ապաշխարութեան առեղծին մէջ և գործ դրածը միայն Աստուծոյ գործք է: Յանձնապաստանութիւն չի՞ արդեօք, երբ անձին վրայ ընդունայն հաճութիւն մը զգալով՝ բարեբաղդաբար հոգածարձութեան յաջող դէպքերը միայն իւր խելքին, ճարտարութեանը և ընտրողութեանը արժինը կարծէ: Եւ որպիսի՛ հիմարական յանդգնութիւն, եթէ ցնորական լրտեսել չըլլայ, աստուածային ընորհքէն աւելի իւր եռանդեան, ճարտարութեան և հնարից վրայ վստահացած՝ խոստովանորդուց բաղմութիւնը իրեն փառք և պատիւ սեպէր, անմտութեամբ մտածելով որ իւր առաջնորդութիւնը ուրիշներուն կառավարութենէն շատ աւելի ազնիկ ըլլայ:

Անշուշտ ազնիկ բան է որ խոստովանարանին վրայ սէր կապրուի, և յօժարութեամբ խոստովանութիւնները լսուին, յորմէ հոգւոց ամենամեծ ազնիկութիւնները պատճառին. բայց որչափ ալ որ սուրբ ըլլայ այս պաշտօնը, և մանաւանդ թէ ըստ որում սուրբ և իրաւցընէ

աստուածային պաշտոն մըն է, պէտք չէ՛ որ մարդկային և երկրաւոր մտածմունքներէ և յանկուածներէ ազատ և սուրբ կարգաւորութեամբ ընենք զայն:

Փիլիպոս մը փորձը առնողներն ալ գիտեն, որ աւելի յաջողակ, աւելի խմաստուն, և փորձառու խոստովանողը կը հանդիպին՝ որ ընդդիմութեամբ ղերենք կը տագնապեն ու բոլոր իրենց ճարտարութեամբ, գիտութեամբ, և փորձառութեամբ կարող չեն զանոնք դարձի բերել: Ո՞վ չի գիտեր նոյնպէս որ այսպիսի խոստովանողի մը ըղձ ճարտար և խմաստուն խոստովանահայր մը չի կրցաւ առ բարին ուղղել, երբեմն պարզ և աւելի բարեպաշտ քան թէ գիտուն քահանայի մը ղեկցած հաւատացեալ մը կրնայ հոգիները կը լուսաւորուի, կը շարժի, կը յաղթուի, և կատարեալ դարձի կու գայ:

Անյապաղ սոսկ է որ, կը կրկնենք, խոստովանարանին մէջ եղածը Աստուծոյ գործ է և ոչ մարդու. ուստի ղգուշանանք զայն մարդկօրէն ընելէ, ըստ որում եթէ Աստուծոյ գործը ծուլութեամբ կատարողը անիծած է. « Անիծեալ լիցի որ գործէ ղգործ Տեառն հեղգութեամբ » [1]: Հապա ինչ պիտոր ըլլայ այնպիսին, որ ոչ միայն ծուլութեամբ, այլ, որն որ անսահմանաբար չարագոյն է, ամբարտաւան յանդգնութեամբ կը կատարէ:

Ընդունինք խոստովանահօր պաշտօնը, երբ եպիսկոպոսը մեզի զայն տալու բարեհաճի, և խորին խոնարհութեամբ լալով մեր անարժանութեան վրայ, և խեղճութիւններուս մտածմունքով ամբչնալով ուրիշները մխիթարելու կանչուած ըլլալնուս համար, հեզութեամբ Աստուծոյ ձեռքը յանձնուինք երբև գործիք մը, առանց ուրիշ բան պահանջելու, գոհ ըլլալով խոստովանողութեան թուոյն վրայ, զորոնք Աստուած պիտոր հաճի մեզի խաւրելու, հանգարտ սրտով սպասելով առանց գոռոզութեամբ անոնց առաջնորդ ըլլալու պատիւը վիճտուելու: Վերջապէս աստուածպաշտութեան մէջ այն օծ-

1 Երեմ. Խ. 10:

մամբ լեցուն խոստակցութիւնը գտնելու չանգնք, զորն որ սուրբ քահանայք այնպէս աղեկ գիտեն գործածել, յորմէ՝ չափիկ աւելի աղդու ըլլալնուն համար՝ մինչև անգամ քարասիրտ մեղաւորներն ալ կը շարժին: Այն աստիճանը մեր վրայ անխոտահութեան, և Աստուծոյ վրայ վստահութեան երկու թևերով բարձրած՝ շատ մը հոգիներ կը փրկենք՝ առանց մերը վտանգի մէջ գնելու:

70. Մանաւանդ քարոզիչները պէտք է աւելի ուշադրութեամբ հսկեն յանձնապաստանութեան որոգայթներուն մէջ չիյնալու: Վա՛յ այս աստուածային պաշտօնը վարող քահանային, եթէ ամպհոնին վրայ Աստուծոյ արձագանգն և գործիք ըլլալը մոռնայ:

Վա՛յ իրեն եթէ ունեցած կամ ունենալ կարծած խմաստութեամբ շլացած, միայն անոր վրայ վստահի. անկից և ճարտասանական արուեստէն յաջողութիւն յուսալով, զորն որ Աստուած սովորաբար չի շնորհեր, եթէ ոչ միայն աւետարանական բանին պարզութեանը, և քարոզչին սրբութեանը: Վա՛յ վերջապէս իրեն, եթէ ինքը զինքը աւելի խմաստուն ու ճարտար կարծելով քան զՊօղոս Աւաքեալը, այս մեր վարդապետին և աքանչելի օրինակին քարոզութեան կերպերը անպիտան, զորն որ նոյն ինքն Աւաքեալը կը նկարագրէ Կորնթացւոց գրած թուղթին մէջ: Մեզի յարմարցընելով, հիանանք անոր գեղեցիկ խօսքերուն վրայ, որոնք մարդկային գիտութիւնը՝ և առնոր վրայ յանգուցն վստահութիւնն գնող քարոզիչները չխոթելու յարմար են: — Ես երբոր եկայ, ով եղբայրք, Յիսուսի վկայութիւնը ձեզի աւետարանելու, չէ թէ բարձր ճարտարախոսութեան կամ խմաստութեան վրայ վստահացած եկայ, ըստ որում չէի կարծեր ձեր քովը ուրիշ բան մը գիտնալ, եթէ ոչ զՅիսուս Քրիստոս, ուստն ալ խաչուած: Ու մէջերնիդ շատ մը տկարութեամբ ահով ու դողով գտնուեցայ: Եւ իմ խօսքերս ու քարոզութիւնս չէ թէ երկրաւոր խմաստութեան սուտ խօսքերով, այլ Հոգւոյն և զօրութեան յայտնութեամբ է, որպէս զի ձեր հաւատքը ոչ թէ մարդկային խմաստութեան, այլ Աստուծոյ զօրութեան վրայ հաստատուի [1]:

1 Ա. Կորնթ. Բ. 1—5:

Աշխատասիրի երանելի Աստքելցին ձեռքով Հոգւոյն սրբոյ մեզի տուած կանոններըը, որուն գալոցին մէջ պէտք է որ բոլորը քարոզիչները պատրաստուին և կրթուին:

— Խմաստասէրները, կ'ըսէ Բեռնարդինոս ոը Պիկկինի, իրենց ապացոյցները ունին. իսկ Աստքելցի աստուածային Ճշմարտութեանց քարոզութեան ապացոյցները Հոգւոյ մեծ հանդէսի հետ հրաշքներով հաստատելը: Ով որ կ'ուզէ աստքելական սնձ ըլլալ, նայ սուրբ աւետարանին բարձր Ճշմարտութիւնները սակաւիկ հանդովք քարոզելու. և զանոնք սուրբ կենաց օրինակներով հաստատելու, որոնք հրաշքներու տէր կը բանեն... Եթանէ այն Ժողովրդեան որ զՅիսուս Քրիստոս Թէ խօսքով և Թէ բերի օրինակով ներկայացնող քարոզիչ ունին: —

71. Քարոզչի մը համար շատ պարտաւորելի յանդիմանութիւն մըն է յանկարծահասութեան ձիրքին վրայ վստահիլը, անանկ որ մինչև անգամ ամպիոնը երթալ առանց պատշաճ պատրաստութեան: Սոյպէս է որ երբեմն յանկարծագէպ պարագաներու մէջ Աստուած իրեն քարոզիչներուն առանց պատրաստուելու ալ աղեկ խօսելու և օգուտ քաղելու կ'օգնէ: Բայց ընդհակառակն կ'ուզէք որ այսպիսի ընորհք մը ապ անոնց, որ իրենց վրայ վստահացած՝ Աստուծոյ խօսքին մարդկային խօսքերն նուազ յարգութիւն կու տան. զոր օրինակ մեծ խշխանի մը առջև աշխարհային ձառ մը խօսելու սոսկալուած առիւնին:

Ոչ ոք խօսելու դիւրութեան ձիրք մը ունենալով, առանց աշխատութեան և յանկարծ քարոզ կամ ձառ մը զուրցելու կարողութեան վրայ յանդգնի, ըստ որում մի Թէ ասկից է օգտակար կերպով քարոզ տալը. և այս պէտով աստուածային խօսքին պատշաճ յարգութիւն կը տրուի: Մի Թէ այսպէս կը հրաւիրուի երկնից օրհնութիւնը քարոզներուս վրայ. մինչդեռ առանց այս օրհնութեան ամէն ձարտար քարոզ կամ ձառ ուրիշ բան չէ, եթէ ոչ ծնծղայի հնչիւն: Ասկից զատ՝ մի Թէ ունկնդիրներուն ալ ձանձրութիւն չի՞ պատճառուիր արդեօք մի և նոյն բանը կրկնելով: Ո՛հ, եթէ քարոզներու պատրաստութեան համար, դատարկութեան, խաղի, և անպէտ այցելութեանց ծախսած ժամանակը գործածուելու ըլլար, աստուածային Աստուծոյ համար աւելի փառաւոր, հոգւոյ համար աւելի փրկարար, և մեզի համար ալ աւելի օգտակար չէր ըլլար արդեօք քարոզիս: Մի Թէ այսպիսի սուրբ գործքի մէջ ունեցած ծուլութենէ կըրնանք զմեզ արդարացընել. պէտք չէ որ գողայ այնպիսին որ յանցաւոր ըլլալով, ամպիոնը չ'ելած և իջնելէն վերջը խաչելութեան առջին միտքը բերէ այն սարսափելի նզովքը. « Անիծեալ լիցի որ գործէ զգործ Տեառն հեղգութեամբ »[1]:

Յայտնի բան է որ քարոզիչներու նկատմամբ ըսածնիս քրիստոնէական վարդապետութիւն սովրեցընողներուն ալ կը պատշաճի: Երկրորդ ալ պէտք է զգուշանան այս խաբեբայ յանձնապաստանութենէն, որն որ իրենց աչքին առջև կը չափազանցէ այն հանճարը, յորմէ շատ անգամ զրկուած են. և եթէ ունին ալ, Աստուծմէ օրհնուած ու արդասաւորուած չէ, Թէ որ ունեցողը խոնարհութեամբ Աստուծմէ չի ճանչնար, և խոնարհաբար ալ առ Աստուած չի կարկեր և անոր չի նուիրեր:

Չի մոռնանք երբեք որ մարդը չէ, այլ Աստուած է գարձ տուողը. մենք կրնանք զՃշմարտութիւնը յուսցընել մեղաւորին, բայց անոր վարքը փոխել ուրիշի գործ է և ոչ մերը, որնք առ առաւելն Աստուծոյ ձեռքը գործիք ենք, զոր սովորաբար չ'օրհներ, եթէ ոչ մեր սրբութեան աստիճանին համեմատ: Ո՛րչափ գեղեցիկ էր Տիւ Պերոն կարմելիտին խօսքը. « Եթէ հերետիկոսները համոզել պէտք ըլլայ, դուցէ կարող ըլլամ, բայց եթէ գարձընել կ'ուզեմ, Սալեզեան Փրանկիսկոսին խաբելու է զանոնք »: Եթէ առաջնոյն պէս լուսաւորելու տաղանդը ունինք, աշխատինք երկրորդին նման գարձընելու սրբութիւնն ալ ունենալու:

72. Մինչև հիմայ յանձնապաստանութեան՝ քահանայի մը զոյն իրեն առաջնորդ ունենալովը, ախտը արդեանց վրայ ըսածնիս, աստուածաբանական են մեզի հասու-

1 Երեմ. ԽԸ. 10:

տատ առաջադրութիւն մը ընելու բոլոր ուժով և անդադար կեռուելու անոր դէմ, և շատ աւելի եռանդեամբ պիտոր յարձակինք, եթէ աղէկ մը ըմբռնինք այն անկարողութիւնը, զոր կը պատճառէ մեր հոգւոյն, երբոր հոն բնակելու թոյլ տրուի:

Ասկից յառաջ կու գայ, զոր օրինակ, որ քանի մը պահասութիւններով արատաւորուած ըլլալով, որոնք հետեւեալ կենակցողներուն վնաս կը պատճառեն, և մեզ ալ երբեմն արտասուել կու տան, այսու ամենայնիւ տալ բիներ կ'անցնին և մենք անհոգ կը գտնուինք զանոնք մաքրելու և բոլորովին բժշկելու: — Կը ձանձնանք մենք այս պահասութիւնները: — Այո, վասն զի երբեմն մեզ հառաչել արտասուել կու տան: — Ամէն ուժով կը կռուինք մենք անոնց դէմ: — Ո՛չ, վասն զի յաւելէ զատ ուրիշ բան մը չենք գիտեր: — Կ'առաջադրենք գոնէ երբեմն զանոնք ուղղելու: — Այո, վասն զի ամէն խոստովանութեան մէջ կը խոստանանք մեր հոգւոյ հօրը: — Իրօք եթէ բոլորովին չէ, գոնէ ըստ մասին կ'ուղղենք: — Ո՛չ, ըստ որում օր առաւօտ վրայ աւելի հաստատուն և զօրաւոր կ'երեւին: — Կը յարգենք արդեօք այն թերութեանց հակառակ առաքինութիւնները: — Այո, որովհետեւ այնպիսի առաքինութիւն կը նախանձինք: — Կը ջանանք մենք ալ զանոնք ձեռք բերելու, և մեր հոգին անոնցմով զարդարելու: — Ո՛չ, վասն զի պահասութիւնները ամենևին իրենց տեղն չեն տուրն ինչպէս որ պատշաճ էր: — Յաւիտենական դատաւորին առեւանը չ'ելած՝ իրացընէ կ'ուզենք արդեօք վարքերնիս փոխել: — Այո՛, կ'ուզենք: — Եաթէն ուղղելու չունինք. և այս չյաջողինս աղէկ և հաստատուն հիման վրայ հաստատուած է: — Ոչ, ըստ որում երբ առնոյ հիման վրայ հաստատուած է: — Ոչ, ըստ որում երբ առնոյ է վէր է որ կը յուսանք, և մինչ անօգուտ աեղը, այնպէս որ յոյսերնիս աձելուն տեղը կը նուազի:

Ո՞վ ուրեմն պիտոր աղատ ըլլայ այս խաւարէն: Ո՞րն է արդեօք այսչափ անմիաբանութեան, այսչափ կուրութեան և անկարգութեան պատճառը: — Ճանչնանք, և նոյն ինքն յանձնապատասանութիւնը. այո, նոյն այն է, որ զմեզ հրապուրելով կը խաբէ. նոյն անիկայ է, որ

ներկայ իրական թշուառութիւններուս վրայ, անդադար կերպով ապագային սպասուած ցնորական առաքինութեանց զուարթ տեսարանը կը ներկայացնէ: Այսու ամենայնիւ կը սահի կեանքերնիս այսպիսի երազներու մէջ, առաքինութիւնները չեն գար, պակասութիւնները կը տևեն, և այն ատուն յոյսը իրականի փոխուելէն յառաջ մահը վրայ կը հասնի:

73. Ինչի վատահութիւն տուողը, գուցէ ըսէ մեկը, այս է որ իմ տկարութիւններովս և խեղճութիւններովս ալ կը սոսկամ մահուընչափ մեղքէն: Ներելի մեղաց սահմանին դուրս չելլելու ըրած, և դեռ ևս շարունակաբար ունեցած առաջադրութիւնս փրկութեանս նկատմամբ շատ աղէկ երաշխաւորութիւն մըն է:

Դարձեալ մի և նոյն յանձնապատասանութիւնն է, որ այս տեսակ խաբեայ խոստակցութիւնը ընել կու տայ: Այն անուան ապաւէնն ալ կործանելու համար, փորձութիւն կը զգանք հրաւիրելու զայսպիսին՝ ներելի մեղաց վրայ եղած քարոզը կարդալու, զորն որ հարկաւ իւր հոգւոյ գրքերուն մէջ պէտք է որ ունենայ: Այս քարոզին մէջ, կ'ըսենք, մեր դէպատասխանելները համոզելու համար գործածած փաստերէս շատ աւելի զօրաւորները պիտոր գտնէ, ներելի մեղքէն փախչելու հարկաւորութեան վրայ. ոչ միայն առ կատարելութիւն գիմելու ծանր պարտաւորութեանց, այլ յատկութեական փրկութիւններուս նկատմամբ ալ, զորն որ ներելի մեղքը մեծ և յոյսի վտանգի մէջ կը ձգէ, և շատ անգամ ալ բոլորովին արդելք կ'ըլլայ, երբ առանց խղճի զայն գործելու ըլլանք:

Հրապարակաւ ամէն օր ներելի մեղաց, և անոր վերանդներուն վրայօք ըսածնիս սոսկալի է թէ ոչ: Եթէ սոսկալի չէ, մեծ է ուրեմն մեր խաբեպայութիւնը:

Իսկ եթէ սոսկալի է, ինչպէս որ ամենասոսկալի է, ինչպէս կրնանք հաւաստել ժողովրդեան, որ պարզ հաւատացելոյ մը համար վտանգաւոր եղած ներելի մեղքը քահանայից համար ոչինչ և անմեղ բան մը ըլլայ:

Այս ուրեմն, մի թէ ամենքէն աւելի սուրբ ըլլալու

պարտաւորուած ըլլալնիւս համար մենք քահանայքս սրբութեան հակառակ այս մեղքը հանդարտ սրտով դատելու ենք:

Մի միայն յանձնապաստանութիւնը կրնայ այս ամէնուն կատարելութիւնը գտնել:

74. Նոյն ինքն յանդգնութիւնը, եթէ իւր չար թելադրութիւններէն չ'զգուշանանք, պիտոր ըսէ մեզի, որ առանց վանդի կրնանք աւելի կամ նուազ մեծաւոր աւելիներու մէջ գտնուիլ: Ըլած և հաստատ կարծուած առաջադրութեան վրայ վստահանալով, որ քահանայական զգեստին ծանր արատներով աղտեղելու երբէք չի թողուիր, անծանօթ և բոլորովին մարգկային պատուոյ զգացման մը վրայ վստահացած, որն որ մեզի իբրև թէ անկարելի կ'ընէ ծանր մեղքի մէջ կրնալը, մինչ պիտոր ըլլանք, եթէ նեղիչ յանձնապաստանութենէ զատ ուրիշ բանի մը վրայ կրօնական չըլլալով և մեծաւոր այն Աստուծմէ որ կ'ըսէ. « Ուր սիրէ գլուանգ, ի նմին և կորիցէ » [1]. զմեզ թշնամւոյն հարուածներուն և որոգայթներուն մէջ պիտոր ձգենք:

Ի՞նչ պիտոր ըլլայ վիճակնիս, երբ Դաւթին պէս սուրբ և Սողոմոնին պէս ալ իմաստուն չ'ըլլալով, փոխանակ փախչելու, մանաւանդ թէ վնասուելնք այն մահաբեր վտանգները, որոնց մէջ քանի քանի թշուառ եղբայրներս իրենց կործանումը գտան:

Երբէք չը պիտոր կարենանք զսպել բոլոր այն զարհուրելի չարութիւնը, ուր կը տանի զմեզ յանձնապաստանութիւնը, եթէ այն ատելման հասնինք, որ զմեզ կուրցնելով, ալ չի ճանչնանք այն չար աւելիներուն վտանգը, առ որ կը մղէ զմեզ:

Աստիճան զգուշութեամբ ուրեմն հակինք, աղօթքնիս թէ շատ և թէ եռանդուն ըլլայ. անվստահ ըլլանք մեր վրայ և փախչինք. ահաւասիկ այսպիսի պարագաներու մէջ փրկութեան մի միայն ճանապարհը:

75. Վերջապէս յանձնապաստանութիւնը զմեզ առ չարն մղելէ զատ չ'ըլլար, այլ հոն զմեզ կը կեցընէ, իբր

1 Ժող. Գ. 27:

վարդապետութեանց ճաշակը առնել տալու համար, զորոնք մենք առանց մանրամասն քննութեան կ'ընդունինք, բայց շատ դիւրութեամբ պիտոր հասկընայինք անոնց տըկար և խաբեբայ ըլլալը, միայն թէ քիչ մը ուշադրութեամբ քննել ուզէինք: Մտաց մշտատև զբաղմանց և ցրման փոթորիկէն մեզուած, կ'ըսենք թէ — Աստուծոյ դանձերուն մէջ իւր պաշտօնեից համար մատուցուած գըթութիւն մը կայ, — ինքը կը ճանչնայ անոնց թշուառութիւնները, — գիտէ զանոնք պատող վտանգները. — վերջապէս քահանայք հրեշտակ չէն, — վանքերու մէջ գոյուած կրօնաւորներու պէս քահանայից ալ մեղքէն հեռու կենալը միջոց չէ տուաւ, — աշխարհքի և անոր գայթակղութեանց մէջ ապրելու ստիպուած են, — և թէ շատ գժուարին է կրակին քով գտնուիլ՝ առանց առնոր տաքութիւնը զգալու, և այլն:

Բոլոր հոգւով զԱստուած սիրող սուրբ քահանայի մը, որն որ անխոնջ կերպով կը վազէ զմեղաւորները դանելու, որ մշտատև արթնութեամբ իր անձին վրայ կը հսկէ, և գրեթէ երբէք կատարեալ գիտութեամբ ներելի մեղաց մէջ չ'կրնար, այսպիսի քահանայի մը սիրտ տուող այս խորհրդածութիւնները, արդեօք մի և նոյն կերպով կրնա՞ն քալալերել զյանձնապաստան քահանան ալ, որն որ Աստուծոյ բարկութեան և պատժոց արժանի կեանք մը վարած առնը, յոյսը աստուածային գթութեան և ընորհաց վրայ կը դնէ:

76. Այս դէպքին վերջ տալով, կը խնդրենք Աստուծմէ, որ մինչև հիմայ ըսածներս թէ հոգիներուս և թէ կենաց կանոններուս համար բոլորովին անպատուղ չ'ըլլան:

Պատերազմ լքման դէմ, որն որ շատ անգամ մեծամեծ չարեաց պատճառ է, և ոչ երբէք փոքր աղէտութեան մը:

Պատերազմ յանձնապաստանութեան դէմ, որ զհոգին Աստուծոյ ընորհքներէն կը զրկէ, և զինքը հալածող Թշնամւոյ բարկութեան դէմ անպէն կը թողու:

Պատերազմ վհատութեան դէմ, որ զմեզ աւելի տկար կարծել կու տայ. պատերազմ յանդգնութեան դէմ, որ եղածներէս աւելի զօրաւոր կ'երևցընէ զմեզ:

Պատերազմ սրտաբեկութեան դէմ, որ աստուածային բարութեան դէմ կ'անիրաւի. պատերազմ մեծամտութեան դէմ, որ անոր բարկութիւնը վրանիս կը շարժէ:

Պատերազմ վհատութեան դէմ, որ կ'ընկճէ կը կործանէ. պատերազմ ժպրհութեան դէմ, որ վտանգաւոր քնոյ կ'ենթարկէ:

Ո՛վ քահանայ Յիսուսի Քրիստոսի, դու որ ոչինչ ես, եթէ ոչ Աստուած և Աստուծով, յուսա, այո՛, ի նա յուսա. քու վստահութիւնդ անոր անսահման բարութեանը վրայ կըռնենած ըլլայ, որուն ամենուին չափ մի դնես, որպէս զի քեզի գործաւոր նեցուկ ըլլայ աշխատանքներուդ, պաշտօնիդ, փորձերուդ, տհաճութեանց, փորձութեանց, հիւանդութեանց և ամէն վիշտերուդ մէջ: Այո՛, կրկնենք, յուսա, յԱստուած յուսա. « Յուսա ի Տէր », բայց Դաւիթ մարգարէին տուած խորհրդոյն միայն մէկ մասը չ'առնուա. « յուսա ի Տէր » կ'ըսէ, բայց կը յաւելլու « և արա ղքաղցրութիւն »[1]. (զբաս. ըլ): Վայելչապէս ապրելով Աստուծոյ վրայ յուսալը իմաստութիւն է. բայց մի լսուելիք կարծութիւն մըն է Աստուծոյ վրայ յուսալ, առանց մեր գործքերով զինքը փառաբանելու աշխատանաց:

Ուստի յուսանք յԱստուած, և բարի գործենք, « Յուսա ի Տէր և արա ղքաղցրութիւն »: Անհատական ճշմարիտ և հաստատուն վստահութիւնը, անհատական Աստուծմէ օրհնուած վստահութիւնը, որն որ ամենաթշուառ տկարութիւններն ալ անյաղթելի զօրութեան կը փոխէ:

1 Սաղմ. ԼԴ. 3:

ԳԼՈՒԽ Դ.

Մեր առ Աստուած — Այս առաքինութեան ճարկաւորութիւնը — Այնոր գործադրութիւնը — Աստուծոյ ներկայութիւնը — Աստուծոյ վրայ խորհիլ — Աստուծոյ վրայ խօսիլ — Աստուծոյ համար գործել — Մտել ամեն բան որ անոր ճախատինք կը պատճառէ — Անոր փառացը ճոգ տանիլ:

77. Այս դլուխը ուրիշ կերպով չէինք կրնար սկսիլ եթէ ոչ Պօսիւէին Աստուծոյ սիրոյն վրայ զուրցած գեղեցիկ խօսքերովը: Կարգալու առեն պէտք է դիտնալ որ քահանայից ուղղուած չէն, այլ պարզ հաւատացեալոց, ուստի « 'ի հզօրագունէ » փաստաբանելով շատ աւելի մեծ տպաւորութիւն պէտք է ընեն մեր վրայ:

— Սիրենք, կ'ըսէ, սիրենք զԱստուած քոլոր սրտովով. քրիստոնեայ չէնք, եթէ Աստուծոյ սէրը ունենալու համար ամէն ճիգ չենք թափեր, թէ որ դոնէ չենք փափագիր, թէ որ եռանդեամբ զայն չենք խնդրեր մեր հոգւոց կենդանարար յաստուածային Հոգւոյն: Ասով չեմ ուզեր ըսել որ ընդ պատժովք յաւիտենական դատապարտութեան ստիպուած ըլլանք կատարեալ սէր ունենալու: Ո՛չ, հաւատացեալք, մենք ողորմելի մեղաւոր մարդիկ ենք. Յիսուսի Քրիստոսի սուրբ արիւնը Աստուծմէ մեղքերուս թողութիւնը կ'ընդունի, բաւական է որ ապաշխարենք: Չեմ ըսեր որ մենք կատարեալ սէր մը ունենալու պարտաւոր ենք, այլ « կ'ըսեմ և կը հաստատեմ որ ի հարկէ պարտաւորած ենք առ այն դիմելու », իբրաքանչիւր ուրուք տրուած չափուն համեմատ, առանց որոյ քրիստոնեայ չէնք: Սիրա առնենք ուրեմն, և ջանանք այն սէրը ստանալու. անիկայ է քրիստոնէութեան ամէն ինչը, դուք սէրերնիդ սրբելով և կատարելագործելով երկինքը համար զարդ մը կը պատրաստէք: Մի միայն սէրը, կ'ըսէ Պօղոս առաքեալը, կը տևէ երկինքն ալ, մինչդեռ հաւատքը կը ցնդի հաւատացուած բաներուն

ներ կայուԹեամբ, և յոյսը կը սպառի յուսացուած քա-
ներուն սասցմամբ. — Մի միայն սէրն է որ երբեք չի
նուազիր [1]. « Սէր ոչ երբեք անկանի » [2]: —

Եթէ այս խօսքերը ամենայն խոստուԹեամբ ճիշդ են
ընդհանուր քրիստոնէից համար, և այսպէս ալ պէտք է
հաւատանք զուրցողին վկայուԹեամբ, որչափ աւելի զո-
քուԹիւն չէն տանար հասպա առ քահանայս վերաԾե-
լով: Եթէ պարզ հաւատացեալց կրնայ ըսուիլ որ կատա-
րեալ սէր մը ունենալու սոխպուած չ'ըլլալով, « անոր-
նօրինաբար պարտաւոր էին առ այն դիմելու », քահա-
նայ մը ինչպէս կրնայ իւր վարմունքը արդարացընել,
երբ ոչ միայն իւր սէրը կատարելագործելու չի չարժիր,
այլ օր ըստ օրէ անհոգուԹեամբ և աստուածային շնոր-
հայ անհիւ հակառակուԹեամբ զայն կը գաղջացընէ:

78. Սիրել զԱստուած: Ինչպէս կրնանք տպաւորիլ
այս աւենածանր պարտաւորուԹենէն, որ զամէնը կը
դերազանցէ, մանաւանդ Թէ զամէնը կը պարունակէ
ինքն կրկելով օրինաց լուսմբ. ինչպէս կ'ըսէ Հոգին
սուրբ. « Լուսին օրինացն սէր է » [3]: Իրաւցընէ գոնէ
քահանան այսպիսի էական պարտաւորուԹեան մը դէմ
պահպանելու խրատները խրեն չի սեպհականեր: Եւ իրօք
ով չի տեսներ որ ամէն մարդու և ամէն քրիստոնէի զԱս-
տուած սիրելու պարտաւորուԹեան պատճառները քա-
հանային նկատմամբ խրենց զօրուԹիւնը չէն կորնցըներ,
որ միանգամայն պէս Թէ մարդ և Թէ քրիստոնեայ է:
Բայց մի և նոյն առեն ով չ'անգրագտնար որ իւր քահա-
նայուԹեան վնճակին պատճառաւ այս պարտաւորու-
ԹիւնԸ հազարապատիկ կ'աւելնայ, անանկ որ ոչ երկրա-
ւոր և ոչ ալ երկնաւոր խլճանուԹիւն մը կրնայ զինքը
անօրինել:

Մենք զհաւատացեալներս զԱստուած սիրելու սով-
սելու համար ինչ կ'ըսենք սովորաբար. անոնց կը յիշեցնենք
երկրորդ օրինաց պատուիրանը. « Սիրեսցես զտէր Աս-

1 Պօսիւէ, Ճառ յաւուր Պենտեկոստէի:
2 Ա. Կորնթ. ԺԳ. 8:
3 Հռովմ. ԺԳ. 10:

տուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ
քումմէ և յամենայն զօրուԹենէ քումմէ » [1]: Պատուի-
րան՝ զորն որ Յիսուս Քրիստոս յայտնապէս նորոգեց
նոր օրինաց մէջ: Կ'ապացուցանենք որ ուրիշ վախճա-
նաւ ստեղծուած չէն եԹէ ոչ զԱստուած սիրելու հա-
մար, որ նոյն ինքն Աստուած չի կրնար զինքնէ այս-
պիսի սէրէ մը տնօրինել: Կ'ըսենք որ նոյն ինքն է
իրենց յաւիտենական երջանկուԹեան հարկաւոր վախ-
ճանը և սկիզբը. կը սպգենք որ ինքը անսահման բարի,
գեղեցիկ և կատարեալ ըլլալով, անսահմանաբար ալ սի-
րուելու արժանի է: Կը հաստատենք որ իրենք մաս-
նաւոր կերպով այս աստուածային սիրոյն պարտաւո-
րուած են. ըստ որում Աստուած իրենց համար բո-
լորովին սէր է, այնչափ անԹիւ երախտեաց համար,
զոր իրմէ իբրև մարդ և իբրև քրիստոնեայ ընդունած
են և ամէն օր կ'ընդունին ԹէՀ ընդհանուր և ԹէՀ մաս-
նաւոր, ԹէՀ հոգևոր և ԹէՀ մարմնաւոր բարիքներ: Կը
յիշեցնենք որ իրենց համար այս աստուածային սէրը բո-
լորովին ձրի և յաւիտենական է, ըստ որում զինքնէ
ստեղծեց, ԹէՀև իւյաւիտենից իրենց ապերախտուԹիւնը
և նենգուԹիւնը տեսած ըլլալը: Կը ծանուցանենք որ ի
տրիստուր իրենց պատսպարած, և կամ ապաշխարու-
Թեամբ նորոգած անմեղուԹեան, երկինքը նոյն իսկ իւր
ԹագաւորուԹեան մէջ յաւիտենական փառաց և անչափ
վարձք մը պատրաստած է: Կը վկայենք որ հարիւր ան-
գամ դժոխոց արժանի ըլլալով, այսու ամենայնիւ չատե-
րէն աւելի գուԹ ցուցընելով իրենց կենաց Թելը չի կտ-
րեց, փրկուԹեան հանելու համար ուրիշ ընորհքներ
ալ տալով:

Դեռ ուրիշ ինչ կ'ըսենք աստուածային սիրոյն մէջ
հաւատացելոց առանգը շարժելու համար: Յիսուսի
Քրիստոսի վրայ կը խօսինք իբրև Աստուծոյ Ճշմարիտ
Որդւոյն, և իբրև Հօր հաւասար Աստուծոյ, որն որ իբրև
Աստուած անչարչարելի ըլլալով, բայց այսու ամենայնիւ
զմարդը փրկելու համար կրեց ուզելով իւր յաւիտենա-

1 Բ. Օրինք. Զ. 5:

կան խմաստութեամբ կերպալը գտաւ, և ըստ այնմ իւր ան-
սահման գթութեամբ ի գործ դրաւ մեզի պէս մարդ ըլ-
լալով, որպէս զի կարող ըլլայ կրել և Թշուառ մարդ-
կութեան բարւոյն համար սահմանել իւր սուրբ չարչա-
րանաց արդիւնքը: Կը նկարագրենք աստուածային Բանին
մարմնանալով իւր անչափ խոնարհութիւնը, մանաւանդ
Թէ գրեթէ ոչնչանալը, զոր Պօղոս առաքեալը կենդանի
կերպով կը մեկնէ. « Ա՛յլ զանձն ունայնացոյց զկերպա-
րանս ծառայի առեալ »[1]: Կը պատմենք անոր ի Բեթղե-
հէմ ծնունդը, յԵգիպտոս փախչիլը, Նազարէթի մէջ
տառապեալ և ծածուկ և յետ այնորիկ ալ՝ի Հրէաստան
անցուցած յայտնի կեանքը և քարոզութիւնը. ամենա-
սուրբ Հաղորդութեան խորհրդոյն հաստատութեամբ՝
իւր անձառելի սէրը, և վերջապէս այն անգութ չարչա-
րանքը, որով մարդկային սիրոյն համար այնչափ նախա-
տանաց և ցաւոց դառն բաժակին մինչև վերջին կաթիլը
քամեց:

Ա՛յս ամէն խորհրդածութիւններէն, սովորաբար
զօրաւոր փաստեր յառաջ կը բերենք, զմեզ սիրոյ զԱս-
տուածը սիրելու անանօրինելի հարկաւորութիւնը ցոյց
տալու համար, ինչուան նաև Պօղոս առաքելոյն տարա-
փելի նզովքը կարգալով. « Եթէ ոք ոչ սիրէ զտէր Յի-
սուս, եղիցի նզովեալ »[2]:

79. Ա՛յս ամէն փաստերը Թէև շատ զօրաւոր հաս-
տատուն և ամուր էն, սակայն Աստուծոյ մարդկանց
վրայ ունեցած անչափ սիրոյն վրայ շատ տկար գաղա-
փար մը կուտան:

Ա՛յսու ամենայնիւ բաւական են Հիմարիտ մտօք մեր
գործոց և վարուց քննութեան ատկերելու զմեզ: Երբ մինչև
հոս ըսուածներուն վրայ Ճառ մը պատրաստելու կ'ըլ-
լանք: Երբ ունկնդիրներս զԱստուած սիրելու պարտաւո-
րութեանց նկատմամբ՝ համոզիչ փաստերը եռևէ եռև կը
շարենք: Եւ երբ այս փաստերուն զօրութիւնը մեր Ճար-
տասանութեամբ և աչխուժով կ'աւելցնենք, մի Թէ
մեզի համար գաղտնի զարտուղութիւն մը կ'ընենք: Ա՛ս-

1 Փիլիպ. Բ. 7:

2 Ա. Կորնթ. ԺԶ. 22:

տուածսիրութեան պատուիրանը մի Թէ միայն ուրիշի
քարոզելու համար եղած կը կարծենք: Արդեօք առան-
ձնաշնորհութեամբ մը մենք զմեզ անօրինուած կ'ենթա-
դրենք: Եւ պատուիրանազանց գտնուած առեններս մի Թէ
Պօղոս առաքելոյն նզովքին ենթարկուած չենք ըլլար
արդեօք:

Յիրաւի այս ամէնը այնպիսի հարցմունքներ են, որ
մեզի անպատեհ կ'երեւին, ինչպէս որ իրենց յարաբերեալ
ենթադրութիւններն ալ զմեզ տակնուվրայ կ'ընեն, ըստ
որում շատ աղէկ գիտենք որ քրիստոնէութեան ընդ-
հանուր օրէնքները ուրիշներուն պէս զմեզ ալ կը պար-
տաւորեցընեն՝ մենք ալ քրիստոնեայ, մանաւանդ Թէ
քահանայ ըլլալնուս համար:

Բայց դժբաղդաբար հաւատոյ մեծ Ճշմարտու-
Թեանց վրայ Ճառելու այնպիսի սովորութիւն մը ստա-
ցեր ենք, անոնց հետ այնպիսի ընտանութիւն մը ունե-
ցեր ենք, այնպէս սառել ուրիշներուն կը յայտնարարենք,
որ սովորաբար շատ քիչ օգուտ կը քաղենք մեզի համար:
Եթէ զօրեղ խորհրդածութիւններով, և աստուածպաշ-
տութեան բարի գործքերով սրտերնուս վրայ՝ի խոր չը
դրոշմենք, անոնք հոգիներուս գրեթէ երեսին վրայ միա-
լոլ երբեք ոչ ներսը կը Թափանցեն և ոչ ալ աղդուս և խո-
բին տպաւորութիւն կ'ընեն: Ուշադրութիւն ընենք, և կը
տեսնենք որ հաստատուն հաւատքով հաւատացած Ճշմար-
տութեանց մեկը, զոր աստուածաբանօրէն կ'ապացուցա-
նենք, Ճարտար լեզուաւ կը քարոզենք, և որն որ ամբողջ
ունկնդրաց վրայ աքանչելի արդիւնք մը կ'ունենայ, մինչ-
դեռ զմեզ, Թէ որ սրբակեաց քահանայ չենք, առանց չար-
ժեզուլ պազ վիճակի մէջ կը Թողուս, այնպէս որ այն Ճշմար-
տութիւնը, որն որ դուցէ շատ մը մեղաւորներ լուսաւո-
րելով դարձի կը բերէ, ամենևին ազդեցութիւն մը չը-
նեք մեր վրայ, ոչ Թէ վարքերնիս փոխելու, այլ և ոչ
պակասութիւններուս դէմ կռուելու խորհուրդը կրնայ
մեզի Թելադրել:

Վերցընենք այս կուրութիւնը, և ամենայն հոգւով
Ջանանք համոզուելու որ այնչափ եռանդեամբ ժողովրդ-

գեան քարոզած ամէն ճշմարտութիւնները, նոյնչափ կրակի կայծ պիտոր դառնան, զորոնք գլխընեռուս վրայ կը ժողվենք, եթէ վարքերնուս մէջ չտկուեցնինք կատրնները ուղղելու համար օգուտ քաղելու չի կանխենք:

Մանաւանդ հասկնալու համար հարկաւորութեանը վրայ որ կը սահի զմեզ Աստուծոյ մէր վրայ ուշնեցած անսահման սիրոյն դէմ սեր հատուցանելու՝ եթէ ոչ հաւասար, գոնէ կարելի եղածին չափ մեծ և եռանդուն ըլլայ, աւելի ևս մեզի ալ յորմոյրցնելով այն վատաները և պատճառները, որոնցմով հաւատացեալները պարտաւորուած են զԱստուած սիրելու, ըստ որում անոնց պէս մենք ալ մարդ և քրիստոնեայ ենք:

80. Բայց մտածմունքներուս հորիզոնը աւելի տարածենք, և հաւատքներուս բարձրութեանը ելլելով, մանաւանդ թէ անոր բարձրագոյն աստիճանին հասնելով, քննենք թէ արդեօք Աստուած հասարակ սէր միայն կը պահանջէ անոնցմէ, զորոնք ինքը կարգեր է — իր խորհուրդներուն հաղարտարեա — հոգւոց փրկիչ — և իր Որդին պատարագող քահանայ:

Ո՛հ, ինչպիսի՛ սիրտ պիտոր ըլլար արդեօք այն քահանային սիրտը, եթէ Աստուծոյ ուղածին պէս ըլլար:

Բրնատնէի մը պատիւը, և այս պատուոյն զարմանալի արժանութիւնները խորհրդածելէն վերջը, երբ քահանայութեան մեծութիւնը և գերազանցութիւնը մտածելու ըլլանք, կը տեսնենք որ ասոր քով հաւատացեալին պատիւը կ'ոչնչանայ. բայց երբ այս երկու պատիւը մէկ անձի մը վրայ կը միանան, ան աստիճանի սքանչելի բան մը կ'ըլլայ, զոր մարդկային լեզուն չի կրնար մեկնել:

Պատուոյ նկատմամբ, պարզ հաւատացեալին և քահանային մէջ այնպիսի գերազանցութեան խտիր մը կայ, որ կարծես թէ երկու զատ էակ ըլլան, որոնք թէև մի և նոյն քօղին տակ ծածկուած, սակայն ուրիշ ամէն բանի մէջ միմիայն էականապէս զատ են:

Եւ իրօք, քահանային համար պատրաստութեան տեղ մը կայ, կատարեալ նորընծայարան մը, յորում աշխարհէն բաժնուած, քանի մը տարի պէտք է անցընէ իւր կոչումը աղէկ մը քննելու, աստուածպաշտութիւնը կատարելագործելու, և պատշաճ ուսմունքը առնելու համար: — Այսուհ և ոչ մէկ հատը ունի պարզ հաւատացեալը, որն որ աշխարհքիս մէջ իւր ուզած վիճակին կը դիմէ:

Քահանան սուրբ կնիքով մը զարդարուած է, զորն որ մանաւանդ խորհուրդ մը իւր հոգւոյն վրայ դրոշմելը կը միրուէթեան կնիքոյն պէս անջնջելի, և որուն հետ ալ յատկութեան պայծառութեամբ պիտոր փայլէ: — Այսպէս չէ պարզ հաւատացեալը:

Քահանան իբրև Աստուծոյ դեսպան ներկայանալով աւետարանական լեզուին բարձրութենէն կը սիրէ բազմութեան վրայ, որն որ լռութեամբ և յարգանօք իրեն պատկ կը հազմի, և հանդիսաւոր կերպով աստուածային պատգամները կ'աւետարանէ անոնց: Նոյնպէս ալ կըրնանալ ընել պարզ հաւատացեալին նկատմամբ, որուն եկեղեցւոյ մէջ ունեցած պարտաւորութիւնը լսելն է, և ոչ թէ խօսիլը:

Քահանան իւր բացայայտ աստուածային իշխանութեամբ ձեռքը կը վերցընէ օրհնելու համար, և գլուխը կը ծռէ ու խորհրդաւոր ընդոլը կը սրբացընէ թէ անձինք և թէ ո՛և իցէ իր մը: Այսանկ բան մը չի տեսնուիր պարզ հաւատացեալին վրայ: Մանաւանդ թէ ասիկայ քահանային ոտքերուն առջին ծունկ կը բերէ անոր օրհնութիւնը առնելու համար, և ոչ երբեք տեսնուած է որ մէկը աշխարհականի մը առջին ծունկ բերէ անկից օրհնուելու և սրբուելու համար, ինչպէս որ կ'ընեն քահանայից:

Քահանան ապաշխարութեան սուրբ առեանը կը նստի, և յանուն Աստուծոյ դատելով, ոսկից որ խաբուած է, այնպիսի վէրհներ կու տայ, որոնցմով դժոխքին դռները կը գոցէ, և արքայութիւնը կը բանայ իրենց մեղքերը խոստովանող ղջացած մեղաւորներուն: Նոյնը կրնայ ընել պարզ հաւատացեալը:

Քահանան սեղանը կ'ելլէ, բնութեան հրեշտակները

Լուր բոլորտիքը կը շարունէն, ամբողջ երկինք ուշադրու-
Թեամբ և պատկառանօք իր ըրածը կը դիտեն, իր խօսքը
երկսայրի սուրի նման օդոստափառ պատարագը կը ղո-
հէ. այս զոհը նոյն իսկ Golgոթային է, նոյն ինքն Յիսուս
Քրիստոս է: Քահանային մէկ խօսքովը երկինքէն կ'իջնէ,
քահանային կերակուր կ'ըլլայ, և քահանային ձեռքով ալ
հաւատացեալոց՝ որոնք ծնրադիր յարգանօք կ'ուղեն: Ո՞ր
մարդը և ո՞ր հրեշտակը կարող է նոյնը ընելու:

Ալ ի՞նչ կրնանք ըսել: Քահանան Յիսուսի Քրիստոսի
մուերիմ խորհրդականն է, անոր ամենասիրելի բարե-
կամն է, անոր խորհրդոց, արդեանց, չնորհաց, մարմնոյ
և արեան, աւետարանին, հոգևներուն, մէկ խօսքով ը-
սեմ, անոր ամէն ծանրագին բաներուն աւանդատան է.
Իւր վիճակին պարտքն է ամէն բանի մէջ Յիսուսի Քրիս-
տոսի փոխանորդութիւն ընելու, դահերէց ըլլալու, կա-
ռավարելու, քարոզելու, քրիստոնէական վարդապետու-
Թիւնը մեկնելու, սրբացընելու, սրբագործելու և անոր
անուամբը արձակելու. այս աշխարհքիս վրայ վրկագոր-
ծութեան անճառելի գործքը շարունակելու և կատարե-
լագործելու իշխանութիւնը ունի, ամէն բան այն դիտ-
մամբ ընելով, որով կ'ընէր Յիսուս Քրիստոս իր մահկա-
նացու կեանց մէջ: Ո՞ր հաւատացեալը կրնայ յանդգնիլ
այսպիսի իշխանութեան մը ձգտելու:

Մի Թէ այս ամէն բան զմեզ չի՛ պարտաւորեր աւելի
Լս զԱստուած սիրելու: Մի Թէ Աստուած Պետրոս ա-
ռաքելոյն նման քահանային ալ սիտոր չհարցընէ երեք
անգամ, Թէ արդեօք պարզ հաւատացեալներէն աւելի
զինքը կը սիրէ Թէ ոչ. « Սիրե՞ս զիս առաւել քան զդո-
սա »[1]: Ո՛հ, այո՛, խոստովանինք՝ իրօք այսպէս է, ապա
Թէ ոչ հանդիսապէս զաւետարանը սուտ կը հանենք. ըստ
որում նոյն աւետարանին մէջ գրուած է, Թէ « Որում
շատ տուաւ՝ շատ խնդրեացի ՚ի նմանէ »[2]:

81. Սակայն աւելորդ է ասանկ բացայայտ բանի մը
վրայ աւելի սնդելը, մինչդեռ ընթերցողներէս և ոչ մէկը
կ'ուզէ կասկածիլ ըսածներուս ճշմարտութեանը վրայ:

1 Յովհ. ԻԱ. 15: 2 Ղուկ. ԺԲ. 48:

Գէշն ան է որ սիրոյն՝ ինչպէս ուրիշ առաքինութեանց
նկատմամբ ալ, տեսականը կ'ընդունուի, բայց ՚ի գործ-
նականին չի պահուիր, այսու ամենայնիւ շատ աղէկ գի-
տենք որ չէ Թէ տեսականը, այլ գործնականն է որ փըր-
կութեան կ'առաջնորդէ:

Եթէ ամենևին սէր չունենայինք, պէտք էր որ մենք
մեզմէ սոսկայինք, և այս սոսկումը անտարակոյս մեր վա-
րուց պատրաստ փոփոխութիւն մը պէտք էր ընէր. բայց
երբ այս առաքինութեան գոնէ փոքր մասնիկ մը ունենալ
կը կարծենք, զմեզ կուրցընող անձնասիրութիւնը ըստ
բաւականի ունենալ կարծել կու տայ, և Թուլութիւնը՝
որ միշտ քիչով գոհ ըլլալու պատրաստ է, այնպիսի վի-
ճակի մը մէջ կը Թողու՝ որ եթէ կատարելապէս ապահով
չէ, գէթ վտանգաւոր ըլլալուն վրայ չենք կասկածիր:

Բայց ասիկայ ինքնասիրական դրութիւն մըն է, ըստ
ինքեան չար և ամենամեծ չար մըն է: Որովհետև երբեմն
ըստ մեծի մասին ալ անմոռութեամբ՝ բաւականաչափ սէր
մը ունենալու վստահելով, անով գոհ կ'ըլլանք առանց
աւելորդաբար պաշտօններուս ծանրատաղտուկ պար-
տաւորութեանց եռանդն ի չնալու. չենք տեսներ որ այն
փորձութեանց դէմ կռուելու նուազ քաջալերութիւնը,
այն աշխատանքները և վիշտերը կրելու քիչ արիութիւ-
նը, պաշտօններ օգտաւէտ ընելու պէտք եղած չնորհաց
պակասութիւնը, մեղաւորաց եռանդն վաղելու փոյթե-
ռանդութեան մարիլը, մեր իսկ անձնական սրբութեան
նկատմամբ եղած անհոգութիւնը, ամենքն ալ այն չար
դրութեան արգիւնքն են, որն որ եթէ չ'ըլլար և աւելի
մեծ սէր մը ունենայինք, շատ դիւրութեամբ կրնայինք
այն ամէն բան ստանալ: Եւ իրօք ո՛վ կրնայ համարձակիլ
ըսելու որ սիրով բորբոքուած քահանայ մը ուրիշին ալ
հազար անգամ աւելի օգտակար չ'ըլլար՝ քան միւսը որ
միայն չը գտաապարտուելու չափ սէր ունի:

Ուստի ամէն հոգւով ջանանք սիրոյն մէջ կատարեալ
ըլլալու, և հաստատ առաջադրութիւն դնենք երբեք
չ'ըսելու Թուլացածներուն ըսածը. « Անձն... հանգիր»[1]:

1 Ղուկ. ԺԲ. 19:

վերջապէս այսպիսի կարեւոր դործքի մը յաջողութեան վրայ ապահովելու համար սիրոյ նկատմամբ ունեցած դրութիւննիս աղէկ մը քննելով՝ մենք մեզմէ հարցնելու պահն է, որուն մեծապէս կ'օգնէ ամենայն փութով վճռաբեր թէ արդեօք կը դտնուին մեր վրայ սիրոյն գլխաւոր նշանները:

82. «Աստուած կը մտածե՞ք»: Այո՛, եթէ զինքը կը սիրենք: Ի՞նչպէս կրնայ մտածել սիրուած անձը, երբ ատուգիս կը սիրուի: Ծանր գործանոց մէջ ալ, երբ հոգին չանայ գործքի մը պարապիլ, սիրտը կրնայ զանիկայ ցնորելով սիրուած նիւթին վրայ դարձնել անոր ուշադրութիւնը: Եւ զարմանալու բան մը չէ, հոգին աւելի սրաբորբիս է խորհուրդներու կառավարողը. հոգւոյն մէջն են, ըստ որում հոգին է որ զանոնք կը կերպաւորէ, բայց իշխանութիւնը սրտին ձեռքն է, որ հոգւոյն ալ կը հրամայէ: Հոգին թէ ատոր և թէ ուրիշ բաներու մէջ սրտին խոնարհ ծառան է, որն որ միտասէս զինքը պահչարեալով, իր ցանկութեանց առարկային զատ, ուրիշ բանի վրայ մտածելու չի թողուր: Իր աղուամէ հեռու գանուած մայր մը, օտարութեան մէջ հայրենեաց փափագալի պանդուխտը, իր սիրելիներէն բաժնուած բանտարկուածը, մի թէ շատ մտածմունքներու ենթարկուած են: Ո՛չ, կրնանք ըսել որ միայն մէկ հատիկ մտածմունք մը զիրենք գրաւած ըլլայ, այնպէս որ՝ հաստատուն, ուժգնական և շարունակ է այս մտածմունքը. և մի թէ կարելի՞ է որ այս մտածմունքը սիրուած առարկային կարող ըլլայ բաժնուիլ:

Ո՛հ, թէ որ զԱստուած սիրեինք, թէ որ գործակից, ջօրեղ և հաստատուն սիրով զինքը սիրեինք, եթէ սուրբերուն պէս զինքը սիրեինք, թէ որ կարող ըլլայինք ըսելու, ըստ օրինակ, Դաւիթ մարգարէին պէս (որն որ քրիստոնեայ ալ չըլլալով, եթէ ոչ փափագով միայն, այնչափ ալ հեռու էր քրիստոնեայ քահանայի մը պատուէն). «Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս, կամ ի քէն զի՞նչ ևս ինդրեցից յերկրի... Աստուած սրտի իմոյ: Բաժին իմ Աստուած յաւիտեան» [1]: Ի՜նչ երջանկութիւն և ինչ-

1 Սղմ. ՀԲ. 25, 26:

պիսի՛ երանութիւն պիտոր ունենայինք, Աստուծոյ վրայ խորհելով, միշտ շարունակաբար զԱստուած մտածելով, այն եռանդեամբ մտածելով, որ Աստուծոյ չը վերաբերած միւս ամէն իղձերը կը մարէ:

Երբոր Հմմարտապէս զԱստուած կը սիրենք, առանց դժուարութեան և բնականաբար ալ անոր վրայ կը խորհինք. ըստ որում սէրը զխորհուրդները կը ծնանի, և խորհուրդներն ալ բնական ձամբով և այնչափ դիւրութեամբ զսէրը կ'արծարծեն և կը բորբոքեն, ինչպէս որ թոքը ընչաւորութեամբ կը պահէ մարմնոյն կեանքը:

Իսկ արդ կը մտածե՞նք մենք Աստուծոյ վրայ. արդեօք կը մտածե՞նք մենք չէ թէ ցնդած միօք, չփոթութեամբ, պաղ սրտով, հարևանցի և դրեթէ պատահմամբ. այլ բարեպաշտութեամբ, յօժարութեամբ, սովորաբար, և ուրախ զգայմամբ, որ հոգիներուս ներսը աղդէ, և յայտնապէս հասկըցնէ որ Աստուած, մի միայն Աստուած պէտք է ըլլայ մեր վախճանը, հիմը և կեանքը: Եթէ այս հարցման հաստատութեամբ կրնանք պատասխանել, ո՛հ, ան ատեն ուրախանանք, վասն զի զԱստուած կը սիրենք:

Սակայն աւելի յառաջ երթանք: Այնպիսի հաճութեամբ Աստուծոյ վրայ կը մտածե՞նք որ ամէն արգելքները մեզի ծանր և տաղտկալի երևին: Այսպէս, ըսե՛ ինձ, հարկ եղած առենը այս աստուածպաշտութիւնը խոհեմութեամբ պատուղը և քաղցրութիւնը չի կորնչցնելու համար՝ արդեօք աղկալից բաղմութիւններէն և ժողովներէ կը փախչի՞նք, ուր որ գանուելու ամենէն կարևոր պարտաւորութիւն մը չի կայ: Արդեօք կը հրաժարի՞նք բարեպաշտութեան երկնային օծման վերատակ ինձոյքներէ, որ մտածմունքնիս կը ցնդեցընեն: Կը գարշի՞նք արդեօք շատ երկար և չամախ խաղերէ, որոնց մէջ հոգին ախորժ ժեղի բերկրանաց մէջ ընկղմած՝ կը մոռնայ քահանայի հոգի ըլլալը. և երկար ժամեր կ'անցընէ առանց անգամ մըն ալ Աստուծոյ վրայ մտածելու, որն որ միշտ և շարունակաբար իւր աւելի փափուկ սիրոյն առարկան ըլլալու էր:

Ի՞նչպէս կրնանք հաւատալ, որ սուրբ քահանայի պէս ՚Աստուած՝ կը սիրենք, երբ Աստուծոյ վրայ մտածելու արգելք եղած բաները կը վնտռենք, և առ այս սահպողներէն ալ վախնալու կու տանք:

Կ՚ուզե՞նք գիտնալ թէ ինչ է արգելք սիրածնիս, ինչ է որ սրտերուս աղնիւ մասը գրաւած է: Գիտնենք թէ ո՛րն է այն բանը որ սովորաբար մտածմունքներուս առարկայ եղած է: Սուրբ քահանան արձնցածին պէս առանց աշխատանայ սիրտը չուտով առ Աստուած կը վերցընէ. սիրով անոր անունը կ՚օրհնէ, ընդը բոլորովին անոր ծառայութեանը կը նուիրէ. և նոր օրուան մէջ Աստուծոյ փառաց և հոգւոց փրկութեան համար ընելիքը կը մտածէ: Այսպիսի վրկարար մտածմունքներով միտքը ամփոփած, իւր նախանձը կը բորբոքի եռանդուն աղօթքներով, մանաւանդ յետոյ պատարագի մէջ: Իւր սիրտը, թէ որ այսպէս կրնանք ըսել, Աստուծով լեցուն ըլլալով չարուհնակ Աստուծոյ վրայ կը մտածէ, և անոր համար ալ անդադար կը ոքնի: Այսպէս օրը կ՚անցընէ, այսպէս նաև սուրբ քահանային բոլոր կեանքը միչտ ՚Աստուած կը մտածէ, վասն զի միչտ Աստուած է իւր սիրոյն առարկան:

Բայց գիտցուք թէ այս քահանան գոհոզութեամբ լեցուած, պատիւներու և իշխանութեանց եռանդն ալը, Թողու Աստուծոյ սէրը և անոր ծառայութեան փափաքը: Ահաւասիկ ենթադրենք զնիքը իրրև փառասէր քահանայ մը: Ի՞նչ տխուր վտխտխութիւն. ինքնահաւան և սիրտը մի միայն փափաքած պատուոյն դարձուցած՝ անկից չի շարժիր, հոն կ՚ամփոփուին իւր ամէն մտածմունքները, կամ գէթ աւելի եռանդուն և սասկիկ բաղձանքները: Ա՛լ Աստուծոյ չի վերաբերիր իւր սրտին պատուաւոր տեղը, ուսկից որ ղղուելի կիրք մը ՚Աստուած հեռացուցեր է:

Ներնը կրնանք ըսել աշխարհքիս սիրոյն, անժուժկալութեան, ագահութեան վրայ: Այո՛, քահանային սրտին յաղթող ո՛ և իցէ կիրք մը, Աստուծոյ պատկանելիք մտածմունքներն ալ բոլորովին իրեն կը սեպհականէ. և այն կիրքը իրեն դանձը ըլլալով, այսպիսի անիրաւ պաշտօնեի մը վրայ կը տատուղուին Յիսուսի Քրիստոսի խօսքերը. « Ուր դանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին »[1]:

83. « Աստուծոյ վրայ կը խօսի՞նք »: Այո՛, եթէ զնիքը կը սիրենք: Ի՞նչպէս կրնանք զմիկը սիրել և սերտ սիրով սիրել, առանց անոր վրայ երբեք խօսելու: Ասկայ բնութեան հակառակ է: Եւ իրօք ո՞վ չի գիտեր որ երբեմն հետերնիս կենցաղավարողներուս դիւսացաւելի կը պատճառենք մեր սիրելի անձանց վրայ ըրած շատ անգամ չնչին ազնց ներբողներով: Ուսկի՞ց յառաջ կու գայ այն անվերջանալի խօսակցութիւնը, որ խօսողին զատ ուրիչի կարևորութիւն մը չունի. ուսկի՞ց, կ՚ըսենք, եթէ ոչ այն սասկիկ սէրէն, զոր ունի մեկը իւր բարեկամին վրայ:

Սակայն վարդապետը ըսաւ, « վարդապետեան ասաց », և անոր մեկ խօսքը մեր անթիւ խօսքերէն շատ աւելի ազդու է. « Ի յաւելուածոյ սրտի խօսի բերան »[2]: Աշխարհասէրները միայն ընդունայնութեանց վրայ կը խօսին, ըստ որում սրտերնին ուրիչ բանէ չի հասկընար. իսկ սուրբերն ալ Աստուծոյ և անոր սիրոյն վրայ կը խօսին, որովհետև ասոնց ալ սիրտը ուրիչ բանէ տեղեկութիւն չունի. « Ի յաւելուածոյ սրտի խօսի բերան »:

Այս ինչ քահանան խաղը շատ կը սիրէ, ժամանակ անցընել և զուարթ ճաշը իրեն հաձելի է, այսինքն ուրիշներուն հետ ընկերութեան և թեթևութեան տարուած է, զբօսանքը իրեն համար ոչ կարևորութենէ յառաջ եկած է, և ոչ ալ ուժ առնելու համար, քիչ մը շունչ առնելու, հանգչելու պատշաճաղութենէ, այլ մի միայն այսպիսի մտածմունքներուն հակում ունենալէն ծագած, անանկ որ առիթը գտածին պէս սասկիկ բաղձանքով մը մէջ կը նետուի. իսկ խաղէ արգելուած առենն ալ սասկիկ կը նեղուի. կարճը ըսեմ, այնպէս տարուած է որ խաղալու համար վերջին ձիգը կը թափէ:

Ի՞նչ տեսակ քահանայ է ասկիկայ: Կը տեսնէք զնի-

1 Ղուկ. ԺԲ. 34: 2 Մատթ. ԺԲ. 34:

քը, նաեւ թեթեւսոլիկ, որուն խակը կը յուսանք որ եկեղեցւոյ մէջ չի գտնուի: Բայց եթէ գտնուի, կը կարծէք որ այսպիսի քահանային սրտին մէջ աստուածասիրութեան պատշաճ տեղ մը մնացած ըլլայ:

Կը կարծէք որ գտնուած առենն ալ առաջին տեղը՝ կաթոգին եւ եռանդուն ըղձերու սեպհական տեղը պահած ըլլայ: Ո՛հ, խրատչընէ ոչ: Կրնա՞յ յուսացուիլ որ ականակիտ աղբիւրներէ բխած անուշ ջուրերու նման այսպիսի սրտէ մըն ալ մինչեւ բերանը ելլեն հոգեւոր ձառեր, խրատներ եւ խօսքեր, որոնք միշտ սուրբ քահանայական ջերմեռանդութեան վրայ կը տեսնուին: Գրեթէ անկարելի է: Նանրասիրութիւնը միայն իւր սրտին անպտուղ առատութիւնը կը գաղմէ, ուսան եւ սովորաբար ալ միշտ անոսկ եւ ընդհանրայն կ'ըլլան իւր խօսակցութիւնները. ինքն ալ թեթեւսոլիկ, հետաքրքիր, շատախօս, գաւեզ զուարթ եւ երբեմն ալ անխոհեմ քահանայ մը կ'ըլլայ. միայն ընդհանրայն եւ անօգուտ խօսակցութեան ձոռոմնաբանութեամբ զարդարուած. « Ի յաւելուածոյ սրտի խօսի բերան »:

Ո՛հ, եթէ զԱստուած սիրէինք, եթէ միայն Աստուծոյ սէրը ընդունէինք, ինչպիսի՛ եռանդուն խօսքեր, բորբոքուած կայծերու նման ամէն վայրկեան սրտերէս դուրս պիտոր չի ցանկէին, անանկ որ մեղաւորներուն պաղած և սառած սրտերն անդամ բորբոքէին: Ուշադրութեամբ խորհրդածելով յիշենք Յիսուսի Քրիստոսի աստուածային վճիռը. « Մարդ բարի՝ ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս, և մարդ չար՝ ի չար գանձուց սրտի իւրոյ հանէ զչարիս » [1]. — « Ի յաւելուածոյ սրտի խօսի բերան »:

Հայր Լա Փօյմպլիէր իւր Հոգեւոր առանձնութիւն գրքին մէջ կ'ըսէ, որ սուրբ Փրանկիսկոս Քաւիէրեանը ամէն առթի մէջ և ամենուն հետ Աստուծոյ վրայ կը խօսէր. ուր որ գտնուէր իւր առաջին մտածմունքն էր Թէ ընկերոս ի՞նչ ծառայութիւն կրնամ ընել: —

— Անթիւ առիթներ չեն պակսիր, կ'ըսէ նոյն հեղի-

1 Մատթ. ԺԲ. 35:

նակը, մարդկանց սիրտը և միտքը առ Աստուած վերցնելու, և շատ անգամ ոգեւից խօսակցութիւնները քարոզներէն աւելի կ'օգնեն: Ո՛չ ոք կրնար երանելի Յովհաննէս Բերկմանին հետ խօսիլ, առանց ջերմեռանդութեան շարժելու: Ի՞նչ բաներու վրայ կը խօսինք մենք աշխարհականաց հետ խօսակցութեան առեն:... Ո՛հ, շատ քիչ կը խօսիմ քու վրադ, ով Աստուած իմ, ըստ որում շատ քիչ անգամ կը յիշեմ զքեզ, վասն զի շատ քիչ կը սիրեմ զքեզ: —

Այս վերջին խօսքերէն մեր պտուղը քալենք, որոնք մինչեւ հիմայ ըսածներուս կատարեալ համաձայնութիւնն են: — Ես քու վրայդ քիչ կը խօսիմ, ով Աստուած իմ, ըստ որում քիչ անգամ քու վրադ կը մտածեմ, շատ քիչ կը սիրեմ զքեզ: —

84. « Կը հրաժարի՞նք այն ամէն բանէ, զոր գիտենք որ մեզք է և Աստուծոյ Թշնամանք »: Այո՛, եթէ զԱստուած կը սիրենք:

Ճշմարիտութեամբ խօսելով, երբա՞ է որ մարդ կրնայ Աստուծոյ վրայ մտածել, նաև առեպ ալ, առանց զինքը սիրելու: Կը գտնուին տեսակ մը յամառ հոգիներ, որ իրենց հակառակութեամբ ալ Աստուած ետեւներէն կ'երթայ, զիրենք կը կանչէ, երբեմն կաթոգին հօր, և երբեմն ալ անաչառ դատաւորի կերպարանքով. սիրով յաղթել չը կրցած առեն՝ զանոնք սարսափով վախցընելու համար:

Նմանապէս ալ առեպ կրնայ մեկը Աստուծոյ վրայ խօսիլ, առանց զանիկայ սիրելու: Կեղծաւորը այս արհեստին վարպետն է: Հոգեւորապէս կուրցած մարդը, երբ կուրութիւնը անյաղթելի տգիտութենէ յառաջ եկած չէ, կրնայ զԱստուած մտածել, անոր վրայ խօսիլ, զանիկայ սիրելու կարծիքը ունենալ. բայց սակայն անկից հեռու մնալ: Այսպիսիներուն համար կը խօսէր Աստուածային Փրկիչը՝ երբ կը վճռէր, Թէ « Ո՛չ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր Տէր, մտոյ յարքայութիւնն երկնից » [1]: Ի՞նչ օգուտ ունի երկնից Աստուծոյ վրայ մտածելը, միտ-

1 Մատթ. Է. 21:

անոր երկրպագելն անունը բերաննին կրնալը ու ամենևին զինքը չը սիրելը: Եւ Աստուած ալ զիրենք պիտոր չսիրէ, և ոչ ալ իրեն արքայութեան մասնակից պիտոր ընէ:

Ո՞րն է ուրեմն ճշմարիտ սիրոյն նշանը, ճիշտ փորձաքարը: Անհատական ճշմարիտ սիրոյն նշանը, գործքերն են. « Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա »[1]: Մտածմունքները, խօսքերը աւերև ու ծաղկիկներն են, իսկ միայն գործքերն են արքայութեան համար պէտք եղած պտուղները... « Ախ որ առնէ զկամն հօր իմոյ որ յերկինսն է... մտոյ յարքայութիւնն երկնից »:

Ո՛րչափ զարհուրելի հակառակութիւն է սիրել զԱստուած և միանգամայն զինքը վշտացընել: Ախլանգակ բան, միայն Աստուծոյ նկատմամբ կ՚ենթադրուի այսպիսի հակասութեանց միաւորութեան կարելիութիւնը. բարեկամ մը միշտ իր խօսքերուն, գործքերուն և վարմունքին հոգ կը տանի, և ամեն կերպիւ կը զգուշանայ որպէս զի չ՚ըլլայ թէ իր բարեկամին վիշտ կամ ահաձուութիւն մը պատճառէ: Եւ եթէ երբեմն վրդը ժամհատութիւն մըն ալ պատահի, հապատա գիտցէք որ մանաւանդ գիտմամբ չէ եղած: Մի միայն Աստուած կը նախատուի, առանց նախատողին մտածելուն թէ անով սիրոյն էական հաւատքին դէմ կը պահասի, որն որ կը պահանջէ որ սիրուած առարկային ո և իցէ ահաձուութիւն տալէ զգուշացուի:

Պարզ քրիստոնէից՝ մանաւանդ բանական մարդկան այսպիսի վարմունքները դրի առած առեննիս, որ երեսին տակնուվրայ կ՚ըլլայ: Հապա ինչ պիտոր ըլլայ, ով Աստուած իմ, թէ որ նոյն իսկ քահանան ալ այսպիսի յանցաւոր հրաժարութեան մը ենթարկուած ըլլար: Սրտերնուս խորը կլլենք և հոն խղճմտանքայ ձայնը լսենք: Մենք օրուան մէջ շատ անգամ ապօթքի առեն կը կանչենք. Տէր, Տէր, և բարի է: Սակայն գործքերնիս պինպէս են, ինչպէս որ պէտք է ըլլան: Սիրոյ գործքեր են արդեօք: Սիրոյ գործք է արդեօք, այն սակաւ և երկար միջոց խաղն պարապմունքը՝ զոր աշխարհականներն անգամ կը քամահրեն:

[1] Մատթ. է. 16.

Սիրոյ գործքեր են արդեօք այն ինքնյքները, որոնց ոչ հարկը և ոչ ալ պատշաճութիւնը թոյլ կու տան մեզի յաճախելու. և որոնց մէջ ժամանակին կորսուելէն զատ ժուժկալութեան դէմ ալ կը մեղանչուի, թէ որ գայթակղելի կերպով բոլորովին անժուժկալութեան չի դառնար:

Սիրոյ գործքեր են արդեօք այն անոտի ընթերցմունքները, որով այն անգին ժամանակը կը մխսուի, որն որ օգտակար աշխատութեանց և բարեպաշտական գործոց համար գործածուելու էր, որոնք այսպիսի ընթերցմունքներով լրենց կեղեքանի եռանդնին և քաղցը օծութիւնին կը կորնցընեն:

Սիրոյ գործքեր են արդեօք այն առանց նպատակի և պատճառի եղած, և երբեմն ալ գուցէ անվայել այցելութիւնները, որոնք միայն գատաբկութեան անբաժանելի ընկեր եղած՝ ատպակալի ձանձրութենէ փախչելու համար կ՚ըլլան, և շատ անգամ ալ նոյն իսկ այցելած մարդկանց շինութիւն պատճառելուն տեղը՝ գայթակղութիւն ալ կու տան:

Սիրոյ գործքեր են արդեօք այն երկար և աղմկալից խօսակցութիւնները, որոց մէջ կը վատնուին խնայարկութիւնն ալ, սէրն ալ, հեզութիւնն ալ, պարկեշտութիւնն ալ՝ շատ մը ուրիշ առաքինութիւններով:

Սիրոյ գործքեր են արդեօք այն ընդհատած և պաղ սովորութեամբ եղած մտածական աղօթքները, այն շտապաւ և անմտադրութեամբ ըսուած աստուածային վարդապետութեանց ժամերգութիւնները, այն առանց « պատրաստութեան » և առանց « գոհութեան » և աշխարհականներու աչքին ալ դպած արագութեամբ ըսուած պատարագները:

Ո՜հ, եթէ ջԱստուած սիրելու ըլլայինք, մեր գործքերուն մէջ ուրչափ ուղղելու, շտկելու և մկրտի ձգելու բաներ պիտոր գտնէինք. վարմունքներուս մէջ ուրչափ ընելիք նորոգութիւններ, և նոյն իսկ առաքինութեանց մէջ ուրչափ կատարելագործութեանց պիտոր կարօտէինք:

Ասանկ չի վարուիր սուրբ քահանան. անփոփոխ կանոն մը ընդուներ է, և դրեթէ Դաւիթ մարգարէին պէս երդումընցեր է զայն հաւատարմաբար պահելու. « Երդուայ և հաստատեցի, զի պահեցից զամենայն իրաւունս արդարութեան քո »[1]: Ա.յս կանոնը, զոր Աստուծոյ սէրը իրեն սորվեցուցեր է, ասիկայ է. երբեք կատարեալ դիտակցութեամբ հաւանութիւն պիտի չի տամ և իսկ մեղքի, թէ մահուչափ ըլլայ և թէ ներելի:

Աղէ, մեղի սեպհականենք մենք ալ այս կանոնը, և ապահով ըլլանք որ որչափ որ հաւատարիմ ըլլանք անոր, այնչափ ալ աւելի ընդունիլ պատուիրանը պահած կ'ըլլանք:

85. « Արդեօք գործքերնիս Աստուծոյ համար կը կատարե՞նք, և ամէն վայրկեան իրեն հաճելի եղածը ընելնուս համար էրշանկութիւն մը կը զգա՞նք »: Պարձեալ այս, եթէ ընդունած կը սիրենք:

Աստուծոյ անհամոյ գործէ մը հրաժարիլը, անտարակոյս մեծ բան է. սակայն Աստուծոյ վրայ ձգմարիտ սէր մը չ'ունեցած առեւտիկա՝ ա սիկայ տեղական առաքինութիւն մը չէ: Եւ իրօք, գործոյ սովորական ընթացքը նայելով պակ և երկբայելի չէր ըլլար այն սէրը, որն որ ոչ բարեսրտութեան ցոյցերով և վկայութեամբ, ոչ առատաձեռնութեան արդիւնքներով, ոչ սրտաբուղխ խնճեռով հաստատուած է. և ոչ ալ սիրուած առարկային համար փոքր զոհողութիւն մը ընելու պատրաստութիւն մը կը ցուցընէ: Ո՛րչափ մեծ տարբերութիւն է երկու որդւոց մէջ, որոց մէկը ընդհանրապէս գոհ կ'ըլլայ. իսկ միւսը ոչ միայն չի վճռացըներ, այլ ամէն կերպիւ հոգ կը տանի անոր հաճելի եղածը և գործ դնելու: Ճիշտ է նաև Աստուծոյ համար: Երբոր աստուդիս վճռքը կը սիրենք, նախ և յառաջ վճռքը ո՛ և իցէ կերպիւ վճռացընելէ կը զգուշանանք, յետ այնորիկ ամենայն հոգւով և ամենայն զօրութեամբ շատ մը գործքերու ձեռք կը զարնենք, որոնցմով կը հաստատենք իրեն վրայ ունեցած սէրերնիս: Որո՞նք են այս գործքերը:

1 Սաղմ. ՃԺԹ. 106:

Ամէն բանէ յառաջ իւր պատուիրանաց հաւատարիմ պահպանութիւնը. « Որ ունի զպատուիրանս իմ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս »[1]: Իրրև պարզ հաւատացեալ՝ ընդհանուր պատուիրաններ. բայց իբրև քահանայի և հովուի նկատմամբ, սուրբ պատարագի, ժամերգութեան, սուրբ խորհրդոց մատակարարութեան և պաշտօնեութեան ուրիշ գործքերուս համար մասնաւոր պատուիրաններ:

Առանց եւէն կու գան գործքերու շարք մը, զորոնք թէ և Աստուած խստիւ չի պատուիրեր, սակայն չափազանց հաճելի են՝ երբ սիրով և սրտաբուղխ յօժարութեամբ իրեն կը նուիրենք:

Կան նաև ապաչխարութեան և մաքառումին գործքեր, զորոնք թէ անձնական մեղքերուս քաւութեանը, և թէ մեր նախանց յանձնուած հոգիներէն շատերը դժոխքէն ազատելու համար կը կատարենք:

Համբերութեան և համակերպութեան գործքերը կան, որոնցմով կը սրբացընենք Աստուծոյ խաբած վիշտերը և նեղութիւնները, զվորձութիւնները և խնամոտութիւնները՝ որոնցմով զմեզ կը փորձէ, հիւանդութիւնները և ուրիշ աստոյ նման ժամանակաւոր աղէտներ, որոնք ըստ աստուածային նախախնամութեան նըպատակին՝ աղէկի գործածողներուն համար են, և պիտոր ըլլան ընդհակառակ արդեանց առատ աղբիւրներ:

Սուրբ նախանձու գործքերը կան, զորոնք եռանդով կը կատարենք, որոնցմով իւր աստուածային Որդւոյն անդին արեամբը գնուած հոգիները կամ գարձի կը բերենք, և կամ էն, կը կատարելագործենք եթէ ուղիղ ճամբու մէջ են:

Ոմն իսկ սովորական գործքերը կան, երկրաւոր և ըստ բնութեան անաստական գործքեր. ուտել, քնանալ, զբօսնուլ և ուրիշ աստոյ նմաններ, որոնք մարդուն շատ հաճելի են՝ երբոր սէրը զիրենք կը ներկայացընէ:

Այս, այս ամէն գործքերը ուղիղ դիտաւորութեամբ և Աստուծոյ հաճելի ըլլալու կենդանի փափագով զար-

1 Յովհ. ԺԴ. 21:

գացած՝ անոր սրտին կը դպչին. փառքը կ'աւելցընեն, և կը ստիպեն ընողները առատապէս վարձատրելու, ըստ որում յայտնի կը տեսնէ սիրոյ նշանները և փորձերը՝ ո-րոնցմէ որ չարժած են:

Մի թէ այսպէս կ'ընե՞նք: Օրերնիս արդեօք այսպէս սուրբ և արբաբար կատարուած գործքերով լեցո՞ւն են: Այս գործքերը կատարելապէս բարի են. այսինքն եթէ ըստ ինքեան չար չեն, այլ դիտաւորութեան մաքրութեամբ բարձրացած՝ աղնուացած և սրբացած, որով պէտք է կատարուին՝ մանաւանդ սիրով՝ որուն պատուղը պէտք է ըլլան: Եթէ այսպէս է, ուրախանանք, ըստ ո-րում այնպիսիներուն կարգը կը գտնուինք, որոնց ներքողը նոյն ինքն Հոգին սուրբ կ'ընէ ըսելով. « Եւ աւուրք լի կատարեալ գոցին ի նոսա »[1]:

86. « Ինչպէս ուրիշներուն՝ այսպէս ալ մեզի համար մեղքին դէմ կը կռուի՞նք »: Այո՛, գոյնակալ այո՛, եթէ զԱստուած այնպէս կը սիրենք՝ ինչպէս որ ինքը սիրուիլ կ'ուզէ:

Զի թէ միայն մեր հոգիին պէտք է միշտ հեռացընենք զմեղքը, այլ եթէ ստուգիւ զԱստուած կը սիրենք, ամէն տեղ և ամէն ժամանակ անոր դէմ կռուելու ենք: Պաշտօնեայք Աստուծոյ, մենք ենք որ պէտք է յառաջէ-ցընենք Աստուծոյ փառքը, և անոր անուանման մեծավայելչութեան դէմ եղած նախատանաց վրէժը առնունք: Մի՛ թէ սիրե՞լ է զանիկայ, որն որ զմեզ երբեմն բարեկամները կը կարծէ, երբ մեր ներկայութեամբ իր համբաւին դէմ եղած զրպարտութեան դէմ զինքը պաշտպանելէ կը հրաժարինք: Նմանապէս զԱստուած սիրե՞լ է երբ զինքը նախատուած կը տեսնենք առանց ցաւ մը զգալու, կամ առանց մեռ մը չարժելու որ կրկին անդամ չի վշտանայ:

Յայտ մեզի ո՛րչափ զարմանալի էին սուրբերը. ինչպիսի՛ եռանդեամբ չէր բորբոքեր Դաւիթ մը, մեղքով աստուածայրին օրհնեալը անարգուած տեսած ատեն. « Մաշեաց զիս նախանձ քո »[2]: Կ'աղաղակէր սիրոյ և ցաւման մէջ. « Զի մոռացան զբանս քո Թշնամիք իմ:

1 Սաղմ. ՀԲ. 10: 2 Սաղմ. ՃԺԹ. 139:

Հայհի յանապօրոյնս և մաշեի, զի զպատուիրանս քո ո՛չ պահեցին »[1]: Ուրիշ տեղ մը առ Աստուած դառնալով, զինքը վկայ կը կանչէ մեղքին համար ունեցած զղջանքին նկատմամբ. « Զատեցիս քո, Տէր, առեցի, և ի վերայ Թշնամեաց քոց մաշեցայ: — Փորձեա զիս Աստուած, և ծանիր զսիրտ իմ, քննեա զիս և ծանիր զշաւիղս իմ, և տես թէ իցէ՞ն անօրէնութիւնք ի ճանապարհս իմ»[2]: Սիրենք զԱստուած ինչպէս որ Դաւիթ մարգարէն կը սիրէր. և ան տեսնը Դաւիթին պէս ալ վերհանձն մտածմունքներ և վառվռուն խօսքեր կ'ունենանք:

Սրբակեաց անձ մը կենդանի հաւատքով կ'ըսէր. — Երբոր բոլոր կենացս մէջ ուրիշ բան մ'ըրած չըլլայի, եթէ ոչ բոլոր աշխատանքներով, վիշտերով և աղօթքներով միայն մէկ հատիկ մահուշափ մեղք մը արգելած ըլլայի, այսու ամենայնիւ մեծ ուրախութեան առիթ մըն էր. — Սուրբն Լիպուորի դեռ ևս մատղաշ հասակին մէջ իր ընկերներուն հետ պարապելի մը մէջ խաղալու տեսեն, անոնց մէկուն բերնէն հայհոյութիւն մը կը լսէ. բարեպաշտ տղան խոհոյն կը խռովի, երբոր թէ ինքը եղած ըլլար յանցաւորը, և խաղը ձգելով հայհոյիչ տղուն կ'ըսէ. « Ա՛յսպէս ուրեմն անարգ խաղի մը համար Աստուծոյ մեծավայելչութիւնը կը նախատես »: Այս խօսքերէն ընկերները սաստկելով առանց ընդդիմութեան թող կուտան որ միայնակ անկից հեռանայ. բայց քիչ մը ետքը զինքը վիճաբերող, վերջապէս անկուն մը կը գտնեն՝ ուր գետնամած ամենասուրբ Կուսին պատկերին առջեւն ինկած, ղրը միշտ սրտին վրայ կը կրէր, և արտասուալից աչքերով և եռանդուն աղօթքի զբաղած՝ իւր ընկերներն գործած մեղքը կը տուժէր:

Սուրբն Գայետանոս Տիեն 1647ին մեծ ապստամբութեան առեն Նեապոլիս կը գտնուէր. տեսնելով որ այն անկարգութեանց առթիւ շատ մը հոգիներ գժոխք երթալու վտանգի մէջ էին, այն աստիճան տրտմութիւն մը զգաց՝ որ ուրիշին մեղքին համար երբեք կատարեալ

1 Սաղմ. ՃԺԹ. 158:
2 Սաղմ. ՃԼՀ. 21, 23:

զղջման սասակութենէն՝ սիրտը ձաթելով յաւէն մեռաւ:

Յուլիա Պռասէլ Կուտանս քաղաքը ողբմութեան քրիստոնէ գոլոցի Ֆերց հիմնադիրը, որն որ մեռ աւենները սրբութեան համբաւով մեռաւ, դեռ ևս երիտասարդ օրիորդ, մէկ երեկոյ առթի մը մէջ յայտնեց թէ ինչպիսի կենդանի հաւատք և եռանդուն սէր կը կրեր սրտին մէջ: Զարհուրելի մրրկահասն փոթորիկի մը առեն, որ ամենաքաջ սրտերն անգամ սարսափով կը սաւեցընէ, ինքը բոլորովին ուրախ և զուարթ կ'երևէր. իր ծնողքը զարմանալով մը պատճառը հարցուցին: Ո՛հ, օրչափ ուրախ եմ, պատասխանեց, գոնէ այս վայրկեանները մէջ զԱստուած վստացընող չ'ըլլար. ամենամեծ ամբարիշտները անգամ չեն համարձակիր իւր սուրբ անունը հայհոյելու, մանաւանդ թէ մեծ յարգութեամբ իրենց օգնութիւն կը կանչեն: Ո՛հ, կ'ուզէի որ ժամանակը միշտ այսպէս մրրկալից և զարհուրելի ըլլար [1]: Եւ դեռ ևս փոքր աղջիկ մըն էր որ այսպէս կը խօսէր: Ո՛վ սէր, որպիսի աքանչելի խորհուրդներ չես ազդեր անոնց՝ որ քեզմով բորբոքուած են:

87. Մենք ալ սիրելի եղբարք, այո, մենք ալ զԱստուած սիրենք. այնչափ սիրով սիրենք, որչափ որ սրբոտերս կրնայ տանիլ, և չը թողունք որ սիրոյ ճամբուն մէջ մատաղ տղաք ու աղջկունք մեզմէ յառաջ անցնին:

Սիրենք զԱստուած բոլոր մեր կարողութեամբ, մենք՝ որ ուրիշներուն զաստուածսիրութիւն կը քարոզենք, չանանք որ ուրիշները մեր սիրոյն առաւելութենէն օգուտ քաղեն, և սրտերնիս այսպիսի սիրոյ՝ միշտ զեղուն և թաթաղուն անօթը ըլլայ:

Սիրենք զԱստուած բոլոր հոգւով, մենք՝ որ զայն Յիսուսի Քրիստոսի ամենասուրբ մարմնով և արեամբը կը կերակրենք, և որուն վայ իրեք փառաւոր կենք դըրսոյնած կը կրենք, որոց երեքն ալ սէր կը քարոզեն և կը պատուիրեն:

Սիրենք զԱստուած, վասն զի սիրտ մը ունինք այնչափ սիրելու կարօտ՝ որչափ բաբախելու. և որովհետև եթէ փրկարար սիրով չը սիրենք, հոգեկորուստ և ապականիչ սիրով բորբոքուելու վտանգի մէջ կը ձգենք զայն:

Սիրենք զԱստուած, որովհետև վիճակներուս պաշտօնեն « հոգւոց փրկիչ » ենք, զորոնք առանց սիրով և եռանդով բորբոքուած ըլլալու՝ չենք կրնար փրկել:

Սիրենք զԱստուած արդիւնաւոր սիրով, և այս սիրով սրբենք խորհուրդներս, խօսքերս և գործքերս, աղօթքներս, նեղութիւններս և սրբազան պաշտօններուս ամէն զբաղմունքներս:

Սիրենք զԱստուած վերջապէս ջմռնալով երբէք Պռսիւեին վշտուը. — Կ'ըսեմ և կ'ապահովցընեմ որ անանցանելի կերպով սիրոյ կատարելութիւնը ստանալու պարտաւորուած ենք՝ իւրաքանչիւր ուրուք արուած չափուն համեմատ, ապա թէ ոչ ամենևին քրիստոնեայ չենք: —

ԳԼՈՒԽ Ե·

Սէր առ ընկերն — Քահանայի մը համար ասոր մասնաւոր կարեւորութիւնը:

88. Ընկերասիրութիւնը Յիսուսէ Քրիստոսէ յառուկ պատուիրանաւ՝ խիստ պարտաւորիչ առաքինութեանց կարգը դասուած ընդ պատժով դատապարտութեան, սիրելու զԱստուած և Աստուծոյ համար բոլոր մարդիկ ու ուրիշները. մեծաւորները, հաւասարները, ստորինները, հաւատացեալները, անհաւատները, բարիները և չարերը, բարեհաճները և թշնամիները, թէ երկինքը, թէ քաւարանը և թէ երկրիս ամէն անկիւն գտնուածները: Ընկերասիրութիւնը կ'ըսենք, որ գերբնական սիրով բոլոր մարդկութիւնը կ'ամփոփէ գաստապարտեալներէն զատ, աքանչելի առաքինութիւն մըն է, որ ըստ ինքեան բաւական էր զանիկայ պատուիրող կրօնքին փառքը կազմել:

Նոյն իսկ ապականեալ աշխարհքը իւր տգմին մէջէն ալ գիտէ այս աստուածային առաքինութեան գովեստը

[1] Տը Լամար, Կուտանսի ընդ. փոխ. վարք Յուլեայ Պռսաէլ:

տալ: Յիրաւի չատ անգամ կ'անտրդէ, սակայն ունեցո-
ղին վրայ ալ կը զարմանայ: Եւ իրօք, ինչպէս չը դողել
այնպիսի առաքինութեան մը, որ կ'ըսէ մարդուն. — Մի՛չա
ինչուան ամենածածուկ խորհուրդներուդ մէջն ալ զգուշ-
չացիր այն ամէն բանէ, որ ընկերիդ կրնայ վնաս պատճա-
ռել, և մանաւանդ որչափ որ կրնաս, չանաչ կրած ցաւե-
րէն զինքը ազատելու, և չ'ունեցած բարիքին հասցընե-
լու: — Մարդու համար այս տեսակ լեզու գործածող
առաքինութիւնը՝ իրաւ աշխարհքիս վրայ կը կատարուի,
սակայն երկինքէն ինչած է: Այո՛, Յիսուս է բարեգութ,
գորովալից և գթասիրտ. Յիսուսն է որ երկնաւոր Հօրը
ծոցէն հանեց այս անձառելի առաքինութիւնը. ինքն է
որ աշխարհքի սորվեցընելու պարտաւորութիւնը իր
վրայ առաւ, և իրօք ալ ամենակատարեալ կերպով սոր-
վեցուց թէ վարդապետութեամբ և թէ անձին օրինակ-
ներով:

Վարդապետութեամբ, մտիկ ընենք. «Սիրեցէք զըն-
կեր ձեր իբրև զանձն ձեր »[1]: — « Զայս պատուիրեմ ձեզ
սիրեցէք զմիմեանս »[2]: — « Այս է պատուէր իմ ձեզ սի-
րեցէք զմիմեանս »[3]: — « Պատուիրան նոր տամ ձեզ,
ձեզ սիրեցէք զմիմեանս, որպէս սիրեցի ես ձեզ »: —
« Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք,
եթէ սիրեցէք զմիմեանս »[4]:

Անձին օրինակներով, զորոնք պատմելու համար
հարկ կ'ըլլար հոս աւետարանը և նոր կտակարանը ամ-
բողջ օրինակել: Որովհետև ինչ են աւետարանը և առա-
քելոց ու աւետարանչաց միւս գրութիւնները, եթէ ոչ
Յիսուսի Քրիստոսի մարդու ըրած սիրոյ գործքերուն
շարունակ պատմութիւնը. օրօրոցէն՝ ուր երեն սէրը
կը սկսի յայտնուիլ՝ ինչուան խաչը՝ ուր աշխարհքիս
վրայ նոյն սիրոյն արիւնահեղ յայտարարութիւնը և
լրումն է. « Ծնաւ ձեզ այսօր փրկիչ »[5]: — « Եկայք առ
իս ամենայն վաստակեալք և բեռնաւորեալք, և ես հանգու-

1 Մատթ. ԺԹ. 59:
2 Յովհ. ԺԵ. 17:
3 Յովհ. ԺԵ. 12:
4 Յովհ. ԺԳ. 34, 35:
5 Ղուկ. Բ. 11:

ցից զձեզ »[1]: — « Ոթամի ժողովուրդ »[2]: — « Թոյլ
տուք մանկտւոյդ գալ առ իս »[3]: — « Զօրութիւն
բազում ելանէր ի նմանէ և բժշկէր զամենեսեան »[4]: —
« Տեսեալ զքաղաքն, ելաց ի վերայ նորա »[5]: — « Սի-
րեցայ զիւրան որ յաշխարհի աստ էն, խոպան սիրեցայ
զնոսա »[6]: — « Անձն կերպաք, այս է մարմին իմ... որ ի վե-
րայ բազմաց »[7]: — « Մկրտութիւն մի ունիմ մկրտիլ, և
զինքդ փութամ մինչև կատարեսցի »[8]: — « Ընկերը, ուան
որմի եկիրդ »[9]: — « Հայր, Թող դոցա, զի ոչ գիտեն
զինչ գործեն »[10]: — « Սիրեցայն զնս, և մանեւեաց զանձն
ւան իմ »[11]: — Զանձն ունայնացոյց, զկերպարանս ծա-
ռայի առեալ »[12]: — « Շրջեցաւ բարի առնել և բժշկել
զամենայն »[13]:

Ահաւասիկ սիրոյն սկիզբը և աստուածային գործու-
րը: Յիսուսի սիրտը, ահաւասիկ այն հնոցը, ուսկից սի-
րոյ կրակին բոցը դուրս կը ցաթիւէ, այն կրակը, զոր
ինքը եկաւ աշխարհքիս մէջ ձգելու. և ուրիշ բանի չի
փափագիր, եթէ ոչ զայն բռնկած տեսնել. « Հուր եկի
արկանել յերկիր, և զինչ կամիմ՝ թէ արդէն եակ բոր-
բոքեր »[14]:

89. Այս ընկերասիրութեան վրայ եղած ընդհանուր
խորհրդածութիւնները բոլոր հաւատացեալց ալ կը
պատշաճին. բայց որչափ աւելի քահանայից պէտք է որ
սեպհականին, որոնք « ի պաշտօնէ » վիճակներուն (այս
բառը կը նշանակենք և կը յիշեցընենք) սիրոյ աստուա-
ծային պաշտօնին նուիրուած են, ինչ տեսակ որ կ'ու-
զէ նկատուի: Ուր որ հոգեւոր և մարմնաւոր թշուառու-
թիւն մը կայ, պէտք է որ քահանան հոն գտնուի սփո-
փելու համար:

Ապաքսը չբաւորութեան նեղութիւնէն կը վտա-

1 Մատթ. ԺԱ. 29:
2 Մատթ. ԺԵ. 32:
3 Մարկ. Ժ. 14:
4 Ղուկ. Զ. 19:
5 Ղուկ. ԺԹ. 41:
6 Յովհ. ԺԳ. 1:
7 Մատթ. ԻԶ. 26—28:
8 Ղուկ. ԺԲ. 50:
9 Մատթ. ԻԶ. 50:
10 Ղուկ. ԻԳ. 34:
11 Գաղ. Բ. 20:
12 Փիլիպ. Բ. 7:
13 Գործ. Ժ. 38:
14 Ղուկ. ԺԲ. 49:

նայ, ժողովրդապետութեան մէջ ով պիտոր ըլլայ այս գժբաղդին ճշմարիտ հայրը, եթէ ոչ քահանան:

Յաւը տեսակ տեսակ կերպով շարունակ կը լացընէ այնչափ թշուառները, քահանային զատ ով կրնայ ըլլալ վշտացեալոց մխիթարիչը:

Կիրքերը մարդուս սրտին վրայ կը բռնանան՝ ամենամեծ վտանգներու ենթարկելով զանոնք. ով պիտոր դէմ դնէ այս ոզբալի կոտորածին: Ով պիտոր ծանուցանէ անոնց խոստմունքներուն խաբեբայութիւնը. քահանային զատ ով պիտոր փարատէ անոնց երեւութական ցնորքը, և ցոյց տայ անոնց զուարճութեան ոչնչութիւնը:

Մեղքը ամէն օր հազարաւոր հոգիներ գժոխքը կը թաւիէ. ով է մեղքին բնական թշնամին. ով է այն անձը, որ բոլոր իւր կենացը մէջ և իւր պաշտօնին ամէն միջոցներուն ստիպուած է անոր դէմ կռուելու, եթէ ոչ քահանան:

Ով որ կրնայ թօղ ցուցընէ հարկաւորութիւն մը, ցաւ մը, ձախորդութիւն մը, չարիք մը, ո և իցէ թշուառութիւն մը, թէ մարմնոյ և թէ հոգւոյ, զղրնիք կամ փարատելու և կամ սփոփելու առաքելութիւն չ'ունեցող քահանան: Յիսուսի Քրիստոսի սիրոյն ժառանգը, անոր գործակցութեան մշտատև գործիքը, անոր վարդապետութեան քարոզիչը, անոր կամացը պաշտօնեային, այսու ամենայնիւ ինչ կը դառնայ, եթէ իւր սիրտը առաւածային վարդապետէն իրեն կտակաւ ձգուած սիրոյմէ զուրկ և դատարկ է:

Կ'ըսէ Պետրոս ալ Պօղոս, որ այսպիսին դեռ ևս քահանայ կրնայ ըսուիլ, վասն զի անջնջելի կնիքը ունի. բայց գործքով քահանայ չէ. « Առանց սիրոյ կարէ քահանայ կոչիլ, բայց լինել ոչ երբեք »:

90. Քահանային առ ընկերն մեծ սէր մ'ունենալու պարտաւորիչ մէկ կէտն ալ այս է, որ նախանձը կամ եռանդը իրեն համար ոչ միայն խորհրդոյ, այլ նաև բացարձակ պատուիրանի առաքինութիւն մըն է: Աննախանձ քահանայ մը ինչ է Աստուծոյ և մարդկանց առջեւ: Իսկ արդ ինչպիսի՞ եռանդ կրնայ ունենալ առանց սիրոյ, որն որ եռանդեան սկիզբ և հիմն է:

Եռանդը սիրոյն բոցն է: Մեկնենք. սէրը իբրև թէ կայծն է, վառուած ածուխը, իսկ եռանդը անկից ելած բոցն է: Կայծը իւր ջերմութիւնը պահելու համար, շատ չի տարածուիր, և ոչ ալ իրեն հարկաւոր եղած ճարակը կը փնտռէ, այլ իրեն տալու է զոյն: Բայց շատ տարբեր է բոցը. այնպէս ժիր և առոյգ է որ կը տարածէ, կը բարձրանայ, իր վրայ կը ծալուի՝ կրկին անգամ աւելի ազդեցութեամբ բացուելու համար, և գրեթէ միշտ նոր խանձ կը փնտռէ լափելու համար, սակայն կայծէն աւելի շարժական, գործնեայ և հաղորդող է: Կայծէն կ'ելլէ ու կը տարածուի և կայծը սպառելուն պէս՝ ինքն ալ կը մարի: Յայտնի է, կայծը սէրն է, իսկ բոցն ալ եռանդը:

Աստուածային Փրկչին խօսքերը՝ « Հուր եկի արկանել յերկիր, և ընդէ՞նչ կամիմ թէ արդէն իսկ բորբոքեր » [1], ընծանեներուս գեղեցիկ բացատրութիւն մըն են: Եկայ աշխարհքիս մէջ կրակ ձգելու համար, ահաւասիկ սիրոյն կայծը. և ուրիշ ինչ կ'ուզեմ, եթէ ոչ բորբոքի. ահաւասիկ եռանդեան բոցը:

Ուսոն մեր խօսքին դառնալով, քահանան իւր պաշտօնին սոխուած « այր եռանդեան » ըլլալով, և որով հետև, հաւկրցնելու համար կ'ըսեմ, այնչափ աւելի քահանայ է, որչափ որ աւելի եռանդ ունի. յայտնի կ'ըլլայ որ ինքը ընկերին սիրովը պէտք է որ բորբոքուի, ըստ որում եռանդը այսպիսի սիրոյ արդիւնքն է. համ ուրիշ խօսքերով ըսեմ, որովհետև եռանդեան բոցը ուրիշ կերպով չի կերակրիր և չի մնանիր՝ եթէ ոչ սիրոյ կայծէն:

91. Գուցէ ըսուի որ չատ բան կը շնորհենք սիրոյն, և համմտածուի որ ընկերն ալ ոչ այնչափ սրտաբուղխ եղբայրով այլ արդեամբ միայն սիրելը հարկաւոր է, և ընկերասիրութեան պատուիրանը կատարելու համար պարտաւորութեան չորութիւնը բաւական է, և աւելցընելու հարկ չկայ որ երջանկ՝ այսինքն սրտանց սիրուի:

Կը պատասխանենք ամէն բանէ յառաջ, որ չատ բա-

1 Ղուկ. ԺԲ. 49:

ցոյցայտ են սիրոյ պատուիրանը արտաբերող խօսքերը, ուստի և անօգուտ է ասոր վրայ վիճելը։ Այս պատուէրը առաջ Յիսուս Քրիստոս բարակ զանազանութեանց մէջ չի մտներ, այլ յայտնապէս կ'ըսէ. «Սիրեացես», պիտի սիրես. և գիտնալով որ մեր անձին վրայ ունեցած սէրերէս աւելի կաթոգին, սերտ և ձշմարիտ սէր չի գտնուիր, կը յաւելու՝ որ ընկերներս ալ մեր իսկ անձին պէս սիրելու ենք։ Այնինչ կանոն, որուն վրայ նոյն ինքն փիլիսոփայութիւնն ալ կը հիանայ. « Սիրեացես զընկեր քո իբրև զանձն քո » [1]։ Այնտարակոյս այս ընկերասիրութիւնը սոսկ զգալն սէր մը ըլլալու չէ, պատուիրանը այնպիսի սէր մը կը հրամայէ որ իրմէ թելադրուած արդիւնքով ալ հաստատուած և փորձուած ըլլայ. ըստ որում « Սիրեացես զընկեր քո իբրև զանձն քո » ըսող Օրէնսդիրը՝ իրեն խօսքերուն համաձայն՝ նոյն անկեայ պիտոր ըլլայ որ պիտոր ըսէ. « Երթայք յինէն, անիծեալք, ի հուրն յաւիտենական » [2], եթէ իւր միւս պատուիրանը լիովին կատարած չ'ըլլանք. — Այսօթեցայ և ուտելիք չտուիք, ծարաւեցայ չի խմցուցիք. գացէք, անիծածներ, գացէք յաւիտենական կրակին մէջ։

Երկրորդ տեղը կը պատասխանենք, որ բնաւորութիւննիս աս է որ սովորաբար աղէկ չենք ըներ, եթէ ոչ այն բանները միայն՝ զորոնք յօժարութեամբ կամ բերմամբ և մանաւանդ սիրով կ'ընենք։ Յիրաւի մեծ բան է պարտաւորութեան զօրութիւնը, ուսկից և ոչ կէտ մը նուազիլ կ'ուզենք. այո, կ'ըսենք, որ երբ այս իշխանութենէն չարժած գրեթէ սրտերնիս ալ քարշ ի քարշ կը մղէ զմեզ ընելու, ինչ որ արդէն ի պարտուց սահպուած ենք ընելու, ան առանց հնազանդութիւնը ալ ձնշող ծանրաբեռնութիւն մը չէ, այլ հրապուրիչ զուարճութիւն մը։

Ենթադրեցէք մայր մը, որ իւր տղան սիրելու և անոր պէտք եղած խնամքը տանելու ուրիչ պատճառ մը չ'ունենայ, եթէ ոչ պարտաւորութեան զօրութիւնը, համապատասխանին խստութիւնը. և միւս կողմանէ ալ

1 Մատթ. ԻԲ. 39։ 2 Մատթ. ԻԵ. 41։

ուրիչ մը երևակայեցէք, որ պարտաւորութեան և պատուիրանի պատճառներէն զատ՝ մայրենի և սրտաբուղխ սիրոյ պատճառ մըն ալ ունենայ. և տակա դատեցէք թէ այս երկու մեր որոնն տղան ըլլալ կ'ուզէիք։

Ենթադրեցէք որ Փաւլէրեանը ուրիչ բանէ չարժած չ'ըլլար, եթէ ոչ իւր պարտաւորութեան զօրութենէն, և իւր սիրտը այն հոգւոյ զարմանալի սիրովը բորբոքուած չ'ըլլար. և յետոյ տեսէք թէ արդեօք աշխարհքիս վրայ իրեն ամենասիրելիներէն կը բաժնուէր չորս հազար մղոն հեռու տեղուանք երթալու, միլիոնաւոր ողորմելի վայրենիները դարձնելու համար։

Կլավէրին պարտաւորութեան զօրութենէն աւելի բան մը մի տաք և մարեցէք անոր սրտին մէջ բորբոքուած սիրոյն կրակը, և տեսէք թէ ալ կ'երթայ կարթագինէ խեղճ ողորմելի հնդիկներու օգտին իր անձը նուիրելու, զարմանալի գթութեամբ գինըր ցերեկ անոնց ամենանաւթ ծառայութիւն ընելով, թէ բանտերու և թէ հիւանդանոցներու մէջ, առանց իր կրած վշտերուն՝ աշխատանաց և նեղութեանց վրայօք երբեք դժգոհութիւն մը ցոյց տալու։

Թէ որ Պաւլայեան Վինկենտիոս մը միայն պարտաւորութեան զօրութենէն չարժած ըլլար, թէ որ իրեն սիրտը, բորբոքուած սիրտ մը՝ սիրոյ Ձշմարիտ հնոց մը չ'ըլլար, որ աղբեց իրեն և այնչափ անձնական գործքեր կատարել տուաւ, այլ պարզ և պատուիրանին պարտաւորութեան վրայ ձառող սիրտ մը ունենար, կը կարծէք որ այն սուրբը ունենայինք որ Պաւլայեան Վինկենտիոս կ'ըսուի։ Փորձեցէք անոր սիրով բորբոքուած սիրտը, ինչպէս որ կ'ըսէինք, պարզ և մանրաքննին սրտի մը դարձընելու, և տեսէք թէ արդեօք աղքատները ձեզմէ գոհ կ'ըլլան։

Բայց երբ աւելի մօտէն տեսնելու համար, երկու քահանայ՝ երկու ժողովրդապետութեանց հոգաբարձութեանը կարգենք. որոց մէկը միայն խղճմտանքին ձայնէն և պարտաւորութեան պատճառէն կանչուած ըլլայ ազնտելը կրթելու, մեղաւորաց դարձին համար աշխա-

տէլոյ, աղքատներուն օգնութեան հասնելու, ամենուն չէ նուիրուած տալու. բայց իւր հօտին վրայ փափուկ սէր չ'ունենայ, «իր սիրտը» աղքատաց և վշտացելոց սիրովը լեցուած չ'ըլլայ. մեղաւորները դարձի բերելու համար՝ աշխատանաց և քրտանց կենդանի եռանդը կէս մը մարած ըլլալով, մի միայն պարտաւորութեան զօրութիւնը զինքը շարժէ և կառավարէ: Իսկ միւսը պարտաւորութեան զօրութենէն և խղճմտանաց ձայնէն զատ, դիւցազ թէ հոգւոյ վրայ ձշմարիտ և ջերմ սէր մը ունենայ ընդհանրապէս. և ի մասնաւորի ալ իւր խնամոցը յանձնուած ներուն, իր ժողովրդապետութեան մէջ գանուած բոլոր աղքատաց և վշտացելոց վրայ՝ կարեկից սէր մը զգայ. ասկէն զոհողութեան, նախանձու և սիրոյ գործքերու ալ կենդանի եռանդ մը կրէ. սիրտ մը ընդունակ երեւի, ուսկից ոչ ոք դուրս մնացած ըլլայ, մանաւանդ թէ ամենուն համար ալ բաց ըլլայ, առանց հարուստներու և աղքատներու, խմաստուններու և տգէտներու, բարեկամաց և թշնամիներու զանազանութեան. սիրտ մը՝ որ ժողովրդապետութեան մէջ երբեւ սիրոյ հնոց մը ըլլայ, որ ամէն կողմէն բոցերը արձակէ, որ արժանի ըլլայ հովուի և հօր սիրտ ըսուելու: Ի՞նչ կ'ըսէք. որպիսի՞ հաւասարութիւն կ'ընէք. մի թէ կը կարծէք որ «հաւասար իրաց մէջ» երկրորդին պաշտօնէն յառաջ եկած օրհնութեան և կեանց պտուղները՝ առաջինէն ալ երկնանք յուսալ:

Ո՛վ ուրեմն, արծարծելով մեծցընենք սէրերնիս, որովհետեւ սիրով մարդիկ սուրբ կ'ըլլան, և անով մեծամեծ գործքեր կը կատարուին, որոնցմէ այնչափ առատութեամբ կը ծագի Աստուծոյ փառք, և հոգւոց և մեղի համար ալ փրկութիւն, «ընդարձակեացին սահմանք սիրոյ»:

92. Ընկերասիրութիւնը քահանային ասոր համար ալ դարձեալ հարկաւոր է, որ եթէ ինքը իւր պաշտօնին բնութեանը վերահասու եղած է, գիտնալու է որ ինքը աւելի ուրիշին համար քահանայ է՝ քան թէ իր անձին համար: Անհատական խորհրդածութիւն մը զոր սովորաբար շատ աղեկ չենք ըներ: Փորձենք բացայայտ մեկնելու:

Մեր աստուածային Փրկիչը զքահանայութիւնը հաստատած ժամանակ՝ ինչ նպատակ դրաւ իրեն: Աստուած ուրիշ վախճան մը չ'ունեցաւ, եթէ ոչ իւր գործ դրած սուրբը պաշտօնը աշխարհքիս վրայ միջնորդեցնել: Այո՛, այս նպատակաւ իւր առաքեալները ընտրեց, զՊետրոսը անոնց գլուխ կարգեց. ասոնց վրայ աւելցուց նաև եօթանասուն և երկու աշակերտները. այս գիտմամբ ալ այս սուրբ ընկերութիւնը՝ եկեղեցւոյ երեւելի օրօրոցը կը հրահանգէր իւր վարդապետութեամբ և օրինակներով, որոնք ուրիշ բան չէին ազդեր՝ եթէ ոչ մարգկանց վրայ գործուելիք սէր մը: Այս վախճանաւ էր որ տուաւ անոնց քահանայութեան բարձրագոյն իշխանութիւնը. իշխանութիւն մը որ իրեն չօրմէն առած իշխանութեան նոյն և նմանն էր. «Որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ»[1]: — «Ահաւասիկ Հոգի սուրբ»[2]:

Ուստի քահանան ձշմարիտ և ըստ մտաց Յիսուսի Քրիստոսի անոր գործքը շարունակող է: Այդ ինչ կ'ընէր Յիսուս Քրիստոս բոլոր իւր կենաց մէջ, մանաւանդ վերջին երեք տարիները, որ մանաւորապէս իւր քահանայութեան տարիները եղան: Տգիտներուն կը սորվեցընէր, մեղաւորները կը վիճաւէր՝ զանոնք դարձընելու համար, վշտացեալները կը մխիթարէր. մոլութիւնը կը զարհուրեցընէր, զառաքինութիւնը կը քաջալերէր, և իւր վարմանց քաղցրութեամբը բոլոր աշխարհք իրեն կը գրաւէր: Ուղելով որ առաքեալները և աշակերտները իր ամէն օր ըրած սիրոյ սքանչելեաց վկայ ըլլային, որպէս զի յետոյ քահանայ ըլլալնէրէն եաքը յիշեին շարունակ իրենց տուած սիրոյ դասերը և օրինակները: Յայտնի է, գթասիրտ և ուխտաւորներուն համար զոհուելու պատրաստ հովիւ երեւնալով, կ'ուզէր անոնց նմանութեան նախատիպ և օրինակ ըլլալ. «Օրինակ մի ետուի ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, և դուք առնիջիք»[3]:

1 Մատթ. ԻՀ. 18:
2 Յովհ. Ի. 22:
3 Յովհ. ԺԳ. 15:

93. Բայց եթէ աւելի մանաւանդ մեզի յանձնուած քահանայական իշխանութեան գործադրութեան վրայ եղած խորհրդածութիւնիս, անտարակոյս պիտոյ տեսանենք թէ որչափ ստոյգ է վերը ըսածնիս, այսինքն թէ մեզմէ շատ աւելն ուրիշի համար քահանայ ենք:

Որո՞նք են եկեղեցւոյ մէջ քահանային մեծ և գլխաւոր պաշտօնները: Ջմարդիկ քրիստոնեայ ընել միւռոնութեամբ. — վերստին ծնանիլ ջանալը ապաշխարութեամբ. — հոգևորապէս աղօթքով անոնց օգնել. — մարմնաւոր կարօտութեանց մէջ ողորմութեամբ նպաստամատոյց ըլլալ. — քարոզութեամբ ջանալը լուսաւորել և կրթել. — սրբացընել ջանալը սուրբ պատարագի արդեամբք և Յիսուսի Քրիստոսի պատուական մարմինը և անգին արիւնը տալով անոնց. — մահուան ևէտին ալ ժամանակէն ի յաւիտենականութիւնը անցնելու պատրաստել ջանալը:

Ամառարկոյս ասոնք են քահանային գլխաւոր պաշտօնները. իսկ արդ յայտնի է՛ որ ասոնք ամէնքը ուրիշի նպաստաւոր պաշտօններ ըլլալով սերն ալ ասոնց հիմը և էութիւնը է: Աւելի ևս, մի թէ քահանային ընկերին հետ յարաբերութիւնը կտրած աւեն՝ այս պաշտօնները բոլորովին չէի՞ն դադրեր, և ի գործադրութեան ալ ոչինչ չէի՞ն սեպուիր:

Ժամանակաւոր և ընկերական վիճակի մէջ ստոյգ է որ տարբեր արհեստներ կամ պաշտօններ ընկերութեան այլ և այլ անդամոց ալ օգտակար կ՛ըլլան. սակայն քահանայական պաշտօնը միւս աշխարհային պաշտօններէն շատ աւելի սերոյ նշան կը կրէ: Իրաւագիտը ըսր օրինակ, ինչպէս ուրիշի համար՝ այսպէս ալ իրեն համար իրաւագէտ է. յանիրաւի զրպարտուած աւեն՝ գատաւորաց առջին ուրիշի գատերուն նման՝ իրենն ալ կը պաշպանէ: Աոուգիւս բժիշկը հասարակութեան համար կարգուած է, բայց իրեն համար ալ արհեստը ի գործ կը դնէ. ըստ որում բան մը երբեք արդելք չի կրնար ըլլալ, որ ինքն ալ իրեն արհեստէն օգուտ քաղէ իր անձին

համար հիւանդութեանց դէմ, որոնց առաջին նշանները տեսած ըլլայ, ի սկզբան անոնց առջին առնելու համար:

Մի թէ մի և նոյն է քահանային համար ալ իւր սեռնակարեւոր մատակարարութեանց մէջ: Յայտնապէս ոչ, միայն իւր եղբարց օգտին համար կը գործածէ իւր պաշտօնը: Ուրիշները կը մկրտէ, և ոչ թէ ինքը վերնքը. ուրիշները կ՛արձակէ, և ոչ թէ իւր անձը. և եթէ քանի մը հանդիսութեանց մէջ իւր պաշտօնին ուրիշին մատուցած պատուղներէն ինքն ալ օգուտ կը քաղէ, զոր օրինակ պատարագի մէջ, յայտնի ալ եկեղեցին իրեն միաքը կը ձգէ որ աստուածային ղոհը կատարած աւեն՝ ալ իրմէ աւելի եղբայրները պէտք է մտածէ. ինչպէս որ Ձեռնադրութեան օրը բացայայտ խօսքերով կը հրամայէ. «Ա՛ռ ընկալ. քանզի առեր կարողութիւն ընդհանուր Աստուծոյ կենդանեաց և կատարել զսուրբ պատարագն յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի վասն կենդանեաց և ննջեցելոց»:

Այո՛, քահանան իւր պաշտօնին էութենեն սերոյ անձն է: Երբ աղքատաց թշուառութիւնը թէ իրեն և թէ իւր խնամոյ յանձնուած հարուստներուն ողորմութեամբ կը թեթևցընէ, երբ յանուն եկեղեցւոյ աստուածային ժամերգութիւնը կ՛ըսէ, երբ ղողայքը կը կրթէ, մեղաւորներուն կը սպառնայ, արդարները աստուածպաշտութեան ճամբուն մէջ կը յառաջեցընէ, վշտացեալ այցելութիւն կ՛ընէ, հիւանդներուն քով գանուելով կ՛օգնէ, միշտ և ամէն աեղ սիրոյ հրեշտակ է. կերպով մը ինքը զինքը կը մոռնայ, կ՛աներևութանայ՝ սիրոյն դանձերը այլոց վայլ սփռելու համար. բոլոր իւր խորհրդոց, խօսքերուն և գործքերուն միայն մէկ հաստիկ սկիզբ և վախճան ունի սէրը, սէրը և դարձեալ սէրը:

Այս էր սուրբ Աստաքեզին զարմանալի սիրով մը Կորնթացւոց ըսածը. Ունեցածս բոլորը ձերն է, ոչ Կորնթացիք. և աւելի ևս, մինչև անդամ ես ալ ձեմ ինձ, ոչ ես, և ոչ ալ գործակիցներս մերը չենք, այլ բոլորովին ձերը: Երբոր սէրը զմեզ ձեզի հետ միացուց, այն աստենը մենք կորսուեցանք, անյայտ եղանք Յիսուսիս Քրիստոսիս Աստուած, որ է սիրոյ վախճանը և լրումը.

« Ամենայն ինչ ձեր է. եթէ Պօղոս, եթէ Ապողոս, եթէ Կեփաս, եթէ աշխարհ, եթէ կեանք, եթէ մահ, եթէ որ կանս, եթէ հանդերձեալքն. ամենայն ինչ ձեր է. դուք Քրիստոսի, Քրիստոս Աստուծոյ »[1]:

Թո՛ղ ըսուի հիմայ որ սէրը քահանային համար դեռ բաղանցաբար կարևոր առաքինութիւն մը չէ:

94. Վերջապէս մենք պարտաւոր ենք և աւելի աղեկ կերպով ի գործ դնելու ենք այս կատարելապէս քրիստոնէական և քահանայական առաքինութիւնը, ըստ որում (աղեկ միտ դնենք) գուցէ առաքելոց Ժամանակէն մինչև մեր օրերը ո՛չ երբեք այնչափ ընդհանրապէս ի գործ դրուեցաւ:

Յաւերժական գոհութիւններ մատուցելին առաւածային սուրբ Հոգւոյն, որ իւր շնորհը կ'արգասաւորէ եկեղեցին: Սիրոյն հովը եկեղեցւոյ բոլոր առաքսանները լեցուցեր է: Ջո՛ր օրինակ Փարիզ քաղաքը պայծառ օրինակներ կու տայ, որն որ կեդրոն և հնոց մըն է, ուսկից լուսաւոր բոցերը մինչև գաւառները կը տարածուին, սիրոյ գործքերու մէջ երբեք չտեսնուած եռանդ և մրցում մը կը բացուի: Սէրը այն ազնիւ ազգին մէջ օր ըստ օրէ աւելի սովորական կ'ըլլայ: Ագահութիւնը և անձնասիրութիւնը մէջ տեղ երևնալու անգամ կը խոյնին: Ամէն հաստակէ, սեռէ և վիճակէ աշխարհականներ անձինք ընկերութիւն կը կազմեն, որոց հոգին սէրն է. և ամէնքն ալ համոզուած են որ այս սիրոյն գործութիւնը, հանճարը և ճարտարութիւնը անթիւ և անչափ են, ինչպէս որ անբաւ և անսահման են աստուածային ողորմութեանց գանձերը, որոց ինքը միայն առուսակ մըն է երկրիս վրայ:

Իսկ արդ որչափ մեծ ամօթ և ինչ նախատինք պիտոր պատճառէ այն քահանային, եթէ այսչափ սիրոյ կրակներուն մէջ ինքը միևնակ պաղ և սառոյցի պէս անշարժ մնայ: Ինչպիսի պատկառանք և նուաստութիւն պիտոր ըլլայ քահանայից, երբ տեսնեն որ իրենց ժողովրդականութեան մէջ գտնուած աշխարհականները իրենցմէ շատ աւելի եռանդուն ըլլան գործերը դարձի բերելու, և առաքելութիւնները մխիթարելու և անոնց նպաստամատոյց ըլլալու համար:

Օ՜ն, ի գործ ուրեմն, սիրելի եղբայրակիցք, դործադրութիւն, այսչափ անթիւ բանակներուն գլուխը անցնինք, որոնց դրօշակը սէրն է. սիրոյն կրակը ամէն կերպով և ամէն տեղ արծարծենք և բորբոքենք, վասն զի զայն վառ պահելու պարտաւորութիւնը մերն է: Սիրոյ Աստուծոյն պատուոյն համար, յորմէ քահանայական էութիւննիս կը ձանչնանք. կրօնքներուս պատուոյն համար, որուն պաշտօնեայ եմք, ցոյց տանք որ ամէնքէն աւելի աղեկ գիտենք, երկնաւոր վարդապետներուս սասակիկ բաղձանքը ի գործ դնել. « Հուր եկի արկանել յերկիր, և զինչ կամիմ՝ թէ արդէն իսկ բորբոքեր »: Ամենևին չի վախնանք ո՛չ արգելքներէ, ո՛չ հալածանքներէ, ո՛չ նեղութիւններէ և ոչ ալ հալածանքներէ, որ կրնայ մեզի պատճառել ժողովուրդը, որոնց մէջ մեր նուիրական պաշտօնը կը վարենք: Սէրը մեզի վահան բռնենք, և անվիրաւորելի կ'ըլլանք: Սիրե՛նք, սիրենք մեր եղբայրները. սիրենք զանոնք անսասրակոյս, եթէ անոնք ալ զմեզ կը սիրեն. բայց աւելի սիրենք, թէ որ անոնք զմեզ սիրել չեն գիտեր, սիրով յաղթենք անոնց. սիրենք մեղաւորները, զորոնք ամէն տեղ յաւիտենական կորստեան վտանգի մէջ կը տեսնենք. զամէնքն ալ սիրենք, վշտացեալները, հիւանդները, աղքատները: Սէրերնիս աշխարհքի առջև պայծառապէս փայլի. բայց անշուշտ առանց ամբարտաւանութեան, այլ սիրով՝ ի շինութիւն ժողովրդեան: Եւ Պօղոս առաքելոյն ուրիշ առաքինութեան մը համար գրածը, մենք սիրոյն յարմարցնելով ըսենք, ոչ միայն « Հեզութիւն ձեր, այլ նաև սէր ձեր յայտնի լինի ամենայն մարդկան »[1]:

Ո՜հ, այն առենը որչափ արդիւնաւոր պիտոր ըլլայ մեր պաշտօնը, թէ որ արդեամբը արժանի ըլլանք այն Աստուծոյն արժանաւոր պաշտօնեից համբաւը առանալու, որն որ ինքը զինքը մեզ խօսքով կը սահմանէ, Սէր. « Ջի Աստուած սէր է »[2]:

1 Փիլիպ. Դ. 5:

2 Ա. Յովհ. Դ. 8:

1 Ա. Կորնթ. Գ. 22, 23:

ԳԼՈՒԽ Զ.

Նոյն նիւթին ղարուճակութիւնը — Ի՛նչ բան կ՛արգելու եւ ի՛նչ բան կը նրամայէ ընկերսիրութիւնը — Եռանդ — Անդադանդրութիւն, եւ այլն։

95. Արդեօք անկեղծ մտքով կը բաղձա՞նք սուրբ քահանայ ըլլալու։

Ընկերներս սիրենք և անշուշտ կ՛ըլլանք։ Ինչո՞ւ համար։ Վասն զի ընկերսիրութիւնը աստուածային օրինաց կատարեալ պահպանութիւնն է, որ զմարդը սուրբ կ՛ընէ. իսկ արդ ըստ Աւետարանին կերպական վճռոյն, ով որ ընկերը կը սիրէ, անկասկած Աստուծոյ օրէնքը կը պահէ. «Որ սիրէ զընկերն, զօրէնսն կատարէ»[1]։ Եւ ուրիշ տեղ ալ կ՛ըսէ. «Զմիմեանց բեռն բարձէք, և այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիստոսի»[2]։

Այս ամէն բանը շատ աղէկ գիտենք, և սկզբանց վրայ լիովին համամիտ ենք. բայց միայն ի գործնականին մեկմեկու չենք համաձայներ։

Որովհետև կ՛ուզենք սուրբ քահանայ ըլլալ, և անշուշտ այնպէս ալ կ՛ըլլանք, եթէ ընկերսիրութեան օրէնքը հաւատարմութեամբ պահենք. քննենք ուրեմն թէ յայսմ մասին սուրբ քահանան ինչպէս կը վարուի։

Նոյս տալ բացարձակապէս այն ամէն բանէ, զոր ընկերսիրութիւնը կ՛արգելու — և անխախտ կերպով ի գործ դնել ինչ որ կը հրամայէ։ Անհատական երեն դրած երկու կանոնները՝ զորոնք անթերի կը կատարէ. և եթէ երբեմն ալ կը պակսի, ան ալ հաղիւ թերեւ կերպով, և գրեթէ միշտ առանց մոռնալութեան և կատարեալ գիտակցութեան։

96. Մանաւանդ ընենք ըսածնիս։ Ընկերսիրութեան օրէնքը ըստ կարի կատարելապէս պահելու համար, սուսկապէս բնական սիրով սիրելը բաւական չէ։ Աստուա-

1 Հռոմ. ԺԳ. 8։ 2 Գաղ. Զ. 2։

ծաբանօրէն խօսելով մենք քանի մը պարագաներու մէջ պարտաւորուած ենք գերբնական սիրով ալ սիրելու։

Սուրբ քահանան այս ճշմարտութիւնը վրայ համազուած, միշտ սրբելու և գերբնականացընելու կը ջանայ իւր ընկերսիրութիւնը։ Արդեօք մենք ալ կը նմանի՞նք։ Եթէ մեր սէրը գերբնական է սկզբով, պատճառաւ, յօժարութեամբ և նպատակաւ, եթէ զընկերնիս յԱստուած և Աստուծոյ համար կը սիրենք. աւելի բացայայտեմ խօսքս. Թէ որ նոյն ինքն Աստուած է գրեթէ մարդկային կերպարանքի տակ քօղարկուած և ծածկուած, զոր մենք ընկերներս վրայ կը սիրենք, մեր սէրը բարի և օրինաւոր է. Աստուած գոհ կ՛ըլլայ, ընկերը կը շինուի, և մենք ալ ամէն վայրկեան արգահատնց դանձեր կը ժողվենք. բայց տեսնենք Թէ արդեօք մեր վարմունքն ալ ճիշտ այսպէ՞ս է։

Մի Թէ գերբնական սէ՞ր է զընկերը սիրել, երբ անկայ զմեզ կը գովէ և կը վաղաքշէ. իսկ անտարբեր և պաղ գտնուիլ, երբ կը վատաբանէ և կը հակառակի։

Մի Թէ գերբնական սէր է խլճտանները, հարուստները և աշխարհքիս զօրաւորները սիրել. և ընդհակառակն զղուիլ խեղճերէ, աղքատներէ և անոնց հետ տըմարդութեամբ վարուիլ։

Մի Թէ գերբնական սէր է սիրել զանոնք, որ հոգւոյ գեղեցիկ ձիրքեր ունին, հանճար, գիտութիւն, խմաստութիւն, անոնց ընկերութիւնը փնտռել, և այնպէս առանց հետ ժամավաճառ ըլլալ, միևչդեռ ուրիշ տեղ աւետեսիս գուշէ աւելի օգտակար կերպով կրնայինք գործածել. և ընդհակառակն ուրիշներուն և պարզամիտներուն ընկերութենէն խոյս տալ, որոնք իրենց հովուներ ըլլալու և խորհուրդներուն շատ աւելի կարօտութիւն ունին։

Մի Թէ գերբնական սէր է սիրել զանոնք, որ զմեզ բաղմախորհրդակ սեղանի, խաղալու և ուրիշ շատ անգամ եկեղեցական ոգւոյ հակառակ և ինքնակամ զբօսանքի կը հրաւիրեն. և Թշնամութեան մէջ անմիխիթար և անօգնական Թողուլ այնչափ աղքատ հաւատացեալները, որոնք ցաւոց և վիշտերու մէջ կը տառապին։

Մի՛ թէ դերբնական սէր է սիրել այն ապաչխարող-ները, որ իրենց եռանդեամբ և հպատակութեամբ վեր կը մխիթարեն, և ուրիշ չարութեան մէջ աւելի կարծր և յամառներու հասկըցնել որ անսահման բեռի տէր դըրուած են, որոնցմէ մինչև ապաւինք՝ կարծես թէ հազար տարիներ կ՚անցնին:

Մի՛ թէ դերբնական սէր է այն ժողովրդապետու-թիւնը սիրել, որուն հաւատացեալները մեզմէ ահորժե-լով կը դողան, և ընդհակառակն սերերնիս պաղեցընել, երբ կերպով մը հաճելի չ՚ըլլալով՝ երբեմն յաղ կը յանդի-մանուինք, որուն ալ միշտ անարժան չենք:

Մի՛ թէ դերբնական սէր է վերջապէս սիրել և շատ սիրել զանոնք, որ զմեզ կը սիրեն. զանոնք՝ որ միշտ զմեզ և ըրածներս կը դողեն. զանոնք՝ որոց անընդդիմակաց համակրութիւն մը կը զգանք, և ընդհակառակն ոչ միայն տեսակ մը հակառակութիւն զգալ՝ այլ և յայտնել անոնց որ նոյնպէս կը վարուին հետերնիս: Այդ-ոք դերբնական՞ն է այս սէրը, թէ աստուածային Փրկչին սառնիկ կերպով պարսաւած սէրն է, երբ կ՚ըսէր. « Զի եթէ սիրիցէք զսիրեսիկ՝ որ սիրեն զձեզ, ո՞վ վարձք իցեն. ոչ ապա-քէն և մաքսաւորք զնոյն գործեն » [1]:

Ըստ մեր կարծեաց, այս խորհրդածութիւնները պէտք է որ լոյս մը սփռեն մեր սիրոյն և աւելութեան վրայ: Այլ, ո՛ւր էր թէ մենք ալ սուրբ քահանային նման ընկերը ընկերին չի զանազանէինք. զմեզ գովաբանող ընկերը՝ չը գովող մանաւանդ թէ անարգող ընկերին, « բնա-կանաբար » սիրելի ընկերը՝ բնականապէս ձանձրացուցիչ ընկերին: Այն ընկերը՝ յորմէ չենք ահորժիր, թէև մեր անհաչա թշնամին ըլլար, թէև վարմունքներուս անիրաւ զրպարտիչ մը ըլլար, չանդանք զինքը սիրելու. և վոխա-րէն մեր վրայ տարածած բամբասանաց՝ սէր վոխարի-նենք. և այնպիսի սէր մը՝ որ ամբէնայ տեսնելով որ մեր սիրոյն մեծութիւնը՝ իւր լեղւոյն դառնութիւնը շատ ա-ւելի կը զերազանցէ:

Գուցէ ըսուի թէ շատ կը պահանջես: Շատ կը պա-

1 Մատթ. ե. 46:

հանջենք. սուրբ աւետարանը բառ առ բառ օրինակելէ աւելի ի՞նչ ենք ըրած. « Լուարուք ասացեալն ի հնոց. սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթշնամին քո: Այլ ես ասեմ ձեզ. սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց, և աղօթս ի վերայ այնոցիկ՝ որ ըլկենն զձեզ և հալածեն. զի եղիջիք որդիք Հօր ձերոյ որ յերկինսն է, զի զարեգական իւր ծա-գէ ի վերայ չարաց և բարեաց » [1]:

Ո՛րչափ փառք Աստուծոյ և սրբութեան սկիզբ սկ-սող չը շահեին թէ ընդհանուր ժողովրդապետութեան և թէ իրենց համար այն հոգաբարձութիւնը, որ իրենց սուրբ եղբարցմէ օրինակ առնելով՝ միայն աստուածային սիրոյն մաքուր և սուրբ ազդեցութիւնը ի գործ դնեին:

97. Մտաց մէջ յանդուգն դատողութիւն ընել, ա-ռանց հաստատուն պատճառի մը, կծու խօսք մը կամ ան-ախորժելի գործ մը այնպիսի մեկու սեպհականել, որն որ դուշ բոլորովին անմեղ ըլլայ. այսպիսեայն դէմ բար-կանալ, լինջեան նաև անարդել ալ և երկար աստեն մտա-ծել որչափ որ կեանքին մէջ ըսպասանելի գործ ըրած կրնայ ըլլալ, այս կամ այն պարագաներու մէջ ունեցած կասկածներու հաստատութեան գոյն մը տալու համար, աստոնց ամէնքը լինչպիսի՛ աստիճ հարուած մըն են սիրոյ դէմ: Զի թէ միայն սէրը պիտոր վերաւորուի այս կա-կածներէն և յանդուգն դատողութիւններէն, որոնք, լինչպէս գիտենք, երբեմն մինչև մահու-չափ մեղքերուն չարութեանը կը հասնին, այլ նաև չարաչար պիտոր տանջուի այն դատութիւններէն և հակակրութիւններէն, զոր յանդուգն դատողութիւնը միշտ կը թողու սրտին մէջ:

Այնիկայ է զոր ամենայն զգուշութեամբ իրմէ հեռու պահելու կը ջանայ սուրբ քահանան, որն որ քայլ առ քայլ Յիսուսի Քրիստոսի հետքերուն ետևէն կ՚երթայ սիրոյ Ճանապարհին մէջ. միայն իւր անձը և ոչ թէ ուրիշները դատելու, կամ անոնց քննութեան աշխատանքին տակ մտնելու մտադիր ըլլալով: Ինքը իրեն դէմ եղած չարա-

1 Մատթ. ե. 43—45:

խօսութիւններէն պատճառած նուաստութենէն հազա-
րապատիկ աւելի կը խոնարհի իւր խոնարհութեամբը, և
մեծ մխիթարութիւն կը զգայ անդորրութեամբ Դաւիթ
մարգարէին խօսքերուն ձայնակը առնելէն. « Բարի է ինձ,
զի խոնարհ արարեր զիս »[1]: Ինչպէս նաև սրբոյն Պօղոսի
առաքելոյն խօսքերուն. « Բամբասեին զմեզ՝ օրհնեաք,
հալածէին՝ յանձն առնուաք, հայհոյեին՝ աղաչեաք »[2]: Եւ
մանաւանդ այս շատ աւելի յարգելի խօսքերուն, վասն
զի նոյն իսկ Յիսուսի Քրիստոսի բերնէն ելած են. « Մի՛
դատեք զի մի՛ դատիցիք »[3]:

Օգուտ քաղենք այս աստուածային վարդապետու-
թիւններէն, և որչափ որ զմեզ դատողներուն չարութիւ-
նը աւելի չարաչար խայթէ, այնչափ ալ աւելի մենք
հանդարտ և վեհանձն երևնանք: Մեր վրայ եղած զըր-
պարտութիւնները կամ հիմ մը ունին, կամ ոչ: Եթէ
ունին, զմեզ ուղղենք և Աստուծմէ ընորհակալ ըլլանք
տուած խրատին համար. բայց եթէ անիրաւ են, ինչո՞ւ
խռովինք: Մեր բարի խղճմտանաց խաղաղ առանձնու-
թեան մէջ հանգչելով՝ աղօթք ընենք անոնց համար, որ
զԱստուած կը վշտացընեն՝ անոր պաշտօնեան ձեռք առ-
նելով. « Աղօթս արարէք ի վերայ նեղչաց ձերոց »[4]: Ա-
հաւասիկ սիրոյն այսպիսի փափուկ և վսեմագոյն պա-
րագաներու մէջ՝ սուրբ քահանային սորվեցուցած գաղա-
նիքը: Նոյնպէս վարուինք մենք ալ, և սակայն մոռնանք
Պաւլեայեան սուրբ վիճակնախօսին առածը. — Մենք
պէտք է որ զԱստուած օրհնենք, ու անկից չնորհակալ
ըլլանք՝ երբ սիրոյ գործքերով վիշտ մը կրելու առիթը
մեզի կը տրուի: —

98. Նախանձն ալ սիրոյմէ արգիլուած ախտ մըն
է, յորմէ սուրբ քահանան միշտ կը խորշի. « Սէր ոչ նա-
խանձի »[5]: Եթէ Թողունք որ այս ամէնավատ մոլութիւ-
նը մեզի առաջնորդէ, ո՜հ, ի՜նչ ախտով վիճակի մէջ պիտոր
ձգէ զմեզ: Բայց իւր պատուղները զննենք:

1 Սաղմ. ճԺՀ. 71:
2 Ա. Կորնթ. Դ. 12:
3 Մատթ. Է. 1:
4 Ղուկ. Զ. 28:
5 Ա. Կորնթ. ԺԳ. 4:

Նախանձոտ աչքով մեր եղբարց յաջողութիւնները
դիտել, անոնց բարձրանալը մեզի նուաստութիւն համա-
րիլ, այրատսուր նեռէ մը խոցուածի պէս ըլլալ. երբ
մեկը կը գովէ անոնց բարեգործութիւնը, աստուածպաշ-
տութիւնը և ուրիշ յատկութիւնները, որոնք հաւա-
տացեալոց յարգութիւնը և սէրը գրաւած են: Նեղու-
թիւն խմանալ անոնց խնամատուն մարդկանց համբաւով
պատիւ գտնելէն, առանց յայտնապէս ընդդիմանալու
այս կարծեաց՝ երբ արդէն ընդհանուր եղած է. բայց
զայն նուազելու աշխատելով, երբ կասկածաւոր ու դեռ
հաստատուն չէ, ուսոի և միշտ ալ ծածկաբար զայրա-
նալ անձնական նուաստութեան վրայ, կամ նախանձի
ենթարկուած եղբայրներուս վրայօք գովասանքները հեր-
քելով՝ զորոնք մեր ականջներովը լսելու ատաճութիւնը
կը ղգանք, զանոնք կամ կրկր նախատաշարմանց արգիլնք,
և կամ ուրիշ պատճառներու հետևութիւն կարծելով
զրը գարշելի նախանձը գիտէ միշտ թելադրել: Ահաւա-
սիկ այս ամենազզուելի ախտին մոռածմունքն և խղձերը,
զոր կը ծածկէ հոգւոյն մէջ, որն որ գժբաղդաբար խա-
բուելով կ'ապականի: Զիս կը չարչարեին ըրած բարե-
գործութեանցս համար, կ'ըսէ Դաւիթ մարգարէն.
« Զարխօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարու-
թեան »[1]:

Ի վերայ այսր ամենայնի այս գարշելի վէրքը ծած-
կող քօղը գեռ կիսատ բացած ենք: Եւ երբ, նախան-
ձոտը իւր ընկերին յաջողութեանց, գովեստներուն և
յատկութեանց վրայ սուկ արամելով և խայթուելով
գոհ չ'ըլլար, այլ դեռ աւելի հեռուն կ'երթայ. եղբարց
գժբաղդութեանց վրայ կը խնամայ, երբև թէ անոնց գըժ-
բաղդութիւնները հարկաւ պէտք էին գործիք ըլլալ իրեն
վատաց ու պատուոյն: Ուսմանց և առաքինութեանց
մէջ իրմէ առաջաւորներէն մէկուն սխալմունքը լսածին
պէս կը ցնծայ, բայց առանց գուբսէն յայտնելու, ըստ
որում ինքն ալ գիտէ թէ ինչպիսի վատութիւն և անար-
դութիւն է ուրիշին չարեաց վրայ ուրախանալը: Իւր ըն-

1 Սաղմ. ԼԵ. 21:

կերպաց մեկուն գովասանաց մեջ խառնուած փոքր պարսաւանք մըն ալ խմացածին պէս, առանց գովեստները ընելու՝ պարսաւանաց վրայ կը ժպտի: Թէ որ անձամբ այնպիսի մեկուն սխալմունքը տեսնէ, որն որ հրապարակաւ գրեթէ անսխալական կարծուած էր, նախանձը ունկնդրութիւն կու տայ, գաղտնի ուրախութեան զգայմունք մը կը հաղորդէ, տեսնելով որ անոնք ալ՝ որոց առաքինութիւնը կը վառաբանուի, միւսներուն պէս մարդկային թշուառութեանց ենթարկուած են:

Ո՛վ Աստուած, մի թէ մարդ կրնայ այսչափ նուաստանալ: Իր սիրտը կրնայ այն աստիճան վատութեան ենթարկուիլ՝ որ յաւ և զուարճութիւն զգայ եղբօրը բարեաց և չարեաց վրայ: Թշնամութեան չայրողութեանց վրայ արտմիլ, անոր թշուառութեանց վրայ խնդալ, արդէն խակ մեծ չարութիւն մըն է. աւետարանին աստուածային բարոյականին դէմ կերպական մեղք մըն է, բայց սակայն խելքերնիս կը հասնի: Ինչո՞ւ. վասն զի այս մեղքը դժուարծելու համար ուրիշ բան չ'ուզեր, եթէ ոչ խանգարուած բնութեան մը հակման հնազանդիլ:

Սակայն արտմիլ անըսդատանելի, և գուցէ ալ բարեկամ անձի մը աղէկութեան վրայ, որն որ ընկերը գաղտնի հալածող նախանձոտին ծածուկ խորհրդոյը տեղեակ ըլլալով կրնայ ըսել. Ֆեզի ի՞նչ ըրի որ ատանկ չարաչար կը նախանձիս ինձի: Մի՛ թէ իմ կարգաւորեալ վարմունքս ինձի գովեստ պատճառելուն համար, չարութիւն ընելու եմ, որ այլոց անարգանաց արժանի ըլլալով միայն քեզի հաճոյութիւն պատճառեմ: Մի՛ թէ աշխատութիւնս արդիւնաւոր և գործերս ալ Աստուծմէ և մարդկանցմէ ալ օրհնուած ըլլալնուն համար՝ գործելէ և աշխատելէ դադարելո՞ւ եմ, քու կիրքդ չի զայրացնելու համար: Մի՛ թէ Աստուծոյ տուած քանի մը քանքարները, որոց նը-կատմամբ ամենախիստ համար մը տալու պարտաւոր եմ, հողի տակ թաղելու և կամ ապարդիւն թողուլ եմ, այսպէս Աստուծոյ բարկութիւնը վրաս չարժեցնո՞վ միայն քու վրադ տուեր չի ձգելու համար: Բայց ի մտնտաւորի

քեզի ի՞նչ ըրած եմ, որ չարութեամբ սրտիդ մէջ կ'ուրախանաս ինձի նուաստութիւն բերող մեկ սխալմունքիս համար: Մի՛ թէ ես քու թշնամիդ եմ, ես՝ որ այսպիսի մեկը կարծուելու երբեք առիթ մը չի տուի, մանաւանդ թէ զքեզ ինձի բարեկամի տեղ եմ դրած, և ըստ բերման առիթներուն՝ յարգանաց և սիրոյ նշան մը ցոյց տալուս վրայ ալ մեծապէս կ'ուրախանամ:

Այսպիսի կշտամբանքները, զորոնք անթիւ նախանձոտները կրնայինք տալ, եթէ իրենք իրենց նկելքին տրամադրութիւնները յայտնէին, կ'ապացուցանեն՝ ըստ մեր կարծեաց, թէ ուրիշի զգուելի բան է այս կիրքը, որն որ ամենևին մխիթարութիւն մը չի կրնար տալ իր զոհերուն, և վտանգէն անոնց կրնայ առաջ այնչափ նեղութեանց:

Երբեք չենք կրնար հաւատալ որ քահանայի մը սրտին մէջ այս տեսակ նախանձ մը կարող ըլլայ արմատ ձգել. սակայն այսու ամենայնիւ շատ հարկաւոր է այս գաղտնին չուխտաղանց զարհուրելի ըլլալը յայտնել, ընթերցողներս անոր տխուր թելադրութեանց դէմ պաշտպանելու համար:

99. Եղբայրսիրութեան օրէնքը կ'արգիլու նաև երդիծաբանութիւնները կամ կծու կատակները, չարաճճութիւնները, զրպարտութիւնները, ոխակալութիւնները, թշնամութիւնները, քսութիւնները, առատաբանութիւնները և ասոնց նման դէպ ուրիշ շատ մը զազրութիւնները: Որոց իւրաքանչիւրին վրայ մէյմէկ խօսք զուարցենք:

« Կծու կատակներու » նկատմամբ, սովորաբար երդիծաբանը չի կրնար երբեք « սուրբ քահանայ » ըսուիլ: Ի՞նչպէս կրնայ յուսալ մեկը սուրբ քահանայ ըսուելու, երբ ամեն վայրկեան Աստուծոյ երկրորդ պատուիրանին դէմ կը մեղանչէ, որն որ առաջնոյն նման է. « նման ամին » : Ի՞նչպէս կրնայ սուրբ ըսուիլ անիկայ որ ամեն առթի մէջ մտանաւոր պատուիրանով աստուածային օրինայ դէմ կը գտակոսի ոչ միայն, այլ նաև բնական օրինացն ալ, որ կ'ըսէ « ուրիշին չընել այն բանը զոր չես ուզեր որ քեզի ընեն » :

Երգիծաբանը սիրոյ պատուիրանը կծռու խօսքի մը կը զոհէ: Եւ ամբարտաւանութեամբ կծեղմով մի և նոյն առեն թէ՛ սիրոյ և թէ խոնարհութեան դէմ կը մեղանէ: Շատերը կը ինտան անոր խօսքերուն վրայ, բայց ոչ ոք զինքը բարեպաշտ անձ մը կը կարծէ. ինքն ալ նոյնը իր սրտին մէջ կը խոստովանի, և ըստ իւր սովորութեանը ըրած խօսակցութենէ մը վերջը, կու լայ իւր լեզուին չափազանցութեան վրայ, եթէ քանի անգամ պապանձած խիղճը զինքը լալու կարողութենէն չէ զրկած:

Զղջումը այս ախտէն, որուն գերի եղած քահանան Աստուծմէ ալ մարդկանցմէ ալ դատապարտուած է, շատ մը ներելի և մանուշակի մեղքերով կ'արատաւորի, և այս մեղքերը Աստուծոյ սիրտը երկմէ կը հեռացընեն, և իրեն սիրան ալ աստուածային սիրոյմմէ կը պակղեցընեն, անթիւ չնորհքներէ կը զրկեն, աստուածպաշտութեան քաղցր օծութիւնը կը կորնցընեն, և հաւատացեալոյ մէջն ալ պատիւը և վստահութիւնը կը նուազեցընեն: Մեկ խօսքով ըսեմ, երգիծաբանութենէն ամենեւին բան մը չի ծագիր, մանաւանդ թէ միշտ ալ չարիք կը ծնանի, և մանաւորի երբ դժբաղդաբար սովորութեան փոխուած ըլլայ:

Պատերազմ ուրեմն այսպիսի ագէզ մոլութեան դէմ: Երբեք կծու կատակներով և դառն կշտամբանքներով չի բանուիր, երբեք, երբեք: Միշտ և ամէն տեղ քահանայ դանուիր, յիշենք որ սիրոյ օրինաց ճիշտ պահպանութիւնը, աստուածային Փրկչին խօսքերուն համաձայն՝ այն նշանն է, որով իրեն աշակերտ ըլլալնիս պիտոր յայտնուի. « Ցայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրեցէք զմիմեանս »[1]:

100. « Չարախօսութիւն կամ բամբասանք »: Թէ որ ուշակացեալ երգիծաբանը չի կրնար երբեք սուրբ քահանայ ըլլալ, ինչպէս որ վերը ըսինք, հապա ինչ պիտոր ըլլայ չարախօս քահանան: Ոչ միայն « սուրբ » քահանայ չի կրնար ըլլալ, թէ որ ուշակացեալ է, այլ և ոչ « բարի » քահանայ կրնայ ըլլալ: Թէպէտ և ուրիշ ամէն

1 Յովհ. ԺԳ. 35:

բանի մէջ անբծդատանելի ըլլայ, ասիկայ միայն բաւական է զինքը « բարի » քահանաներէն ալ աւելի վար դասելու: Չարախօս քահանան գայթակղութիւն տուող քահանայ մըն է, բառին ճիշտ նշանակութեամբը. այսինքն չարախօս քահանան ղուրիչներն ալ բամբասանաց կը դրդռէ:

Սակայն ինքը պարկեշտ, ժուժկալ, անշահասէր, ուսումնասէր, վոյթեռանդ... է, ինչ օգուտ, երբ իր սովորական չարախօսութեամբը առաքինութեանց թագուհին կը վշտացընէ: Աւելի յառաջ երթալով կ'ըսենք, որ բամբասող քահանան գայթակղութեան նկատմամբ՝ իւր չարախօսութեամբը չատ աւելի չարիք կը պատճառէ, քան թէ բարիք իր ունեցած առաքինութիւններով, եթէ ունի: Վասն զի չար, կամ այնպէս կարծուած քահանայ մը, որչափ որ կ'ուզէ թող բամբասէ. բարի մարդկանցմէ ոչ ոք իւր չար օրինակին կը հետևի: Բայց քահանայ մը, որ եղբայրսիրութենէ զատ ամէն առաքինութիւն ի գործ կը դնէ, իւր վարմունքով այնպէս կը հաւատացընէ որ բամբասանքը մեծ մեղք մը չէ, ըստ որում ինքը կ'ընէ առանց խղճահարութեան: Եւ այսպէս իւր միւս առաքինութիւնները ուրիշ բանի պիտոր չի ծառայեն, եթէ ոչ իւր չը պահած պատուիրանին օրինազանցներ որսալու:

Աղերսուն կենանք ուրեմն, ամենայն չնորհով հսկենք լեզուներուս վրայ, և զգուշանանք կամաց կամաց, և գրեթէ առանց ուշադրութեան բամբասանաց ունակութիւնը չ'սատանալու. « Օրինակ լինիջիր հաւատացելոց »[1]:

101. « Զրպարտութիւն »: Մի միայն զրպարտութիւն բառը աստուածպաշտ ընթերցողներս կը զարհուրեցընէ. բայց չի վախնան, ըստ որում մենք չենք ուզեր ըսել, որ իրենք զընկերները չգործուած յանցանքի մը համար զրպարտեն. այլ կ'ըսենք որ զրպարտութեան նկատմամբ, և ոչ խօսելու կենք. վասն զի ոմն կրնայ երբեք հաւատալ որ քահանայի մը ամէն օր Յիսուսի Քրիստոսի սուրբ և անպին արեանմբը թրջած լեզուէն զրպարտ-

1 Ս. Տիմ. Դ. 12:

տուԹեան գառն Թոյնը կաԹէ։ ԵԹէ այս մեղքը իւր պիղծ և ատելի բնուԹեամբ ո՛ և իցէ քահանայի սարսափ և սրտմտուԹիւն կը պատճառէ, հապա ինչ ըսելու է շատ մը սուտ առաւելաբանուԹեանց վրայօք, զորոնք չարասիրտ մարդիկ շուտ մը իրական բամբասանաց կը դարձընեն։ Ա.յսպիսի չափազանցուԹեանց դէմ քահանան միշտ պէտք է զգուշուԹիւն ընէ։ ԽօսակցուԹեանց մէջ դանուելով, որոնց ընկերներուս ԹշուառուԹիւննեբը նիւԹ կը պատրաստեն, ամենամեծ ուշադրուԹիւն ընենք ամէն մէկ խօսքերուս վրայ։ Մանաւանդ Թէ ղննենք Թէ արդեօք չ'ըլլայ որ մենք իսկ մեր դատողուԹեանց և պատմուԹեանց մէջ առաւելաբանուԹեան ենԹակայ ըլլանք։ Շատ աւելի մանաւանդ պէս հսկենք, որ մի գուցէ մեր ներկայուԹեամբը բամբասուած մարդկանցմէ դանգատելու առիԹ կամ պատճառ մը ունենանք. « Դիր, Տէր, պահապան բերանոյ իմոյ և դուռն ամուր շրԹանց իմոց »[1]։

102. « ՉակակրուԹիւն, ոխակալուԹիւն, ԹշնամուԹիւննեբը », և այլն։ Ա.հաւասիկ զսերը ի հիմանց քանդողները։ ԳիտուԹեամբ եղբայրներս մեկը սրտեբէս դուրս վռնտելը, մի Թէ զսերը ուրանալ է՞. մի Թէ ուղղակի Յիսուսի Քրիստոսի խօսքերուն դէմ մեղանչել է՞ արդեօք, որն որ ըսաւ. « Սիրեցէ՛ք զԹշնամիս ձեր »[2]։

Ա.յսպէս կը հրամայէ Յիսուս Քրիստոս. և այնպէս ին որ գիտնալով ղննելը կը մերժէ իր սրտէն՝ սրտին տրամադրուԹեամբը, և գուցէ արտաքին գործքերով ալ կը պատասխանէ՝ Թէ « Ոչ սիրեցիմ », չը պիտոր սիրեմ։

Ինչպիսի՛ յաղԹանակ մը պիտոր կանգնէին վերԺիննդիրները, եԹէ քահանայի մը չար օրինակէն դըրդըռուած կարող ըլլային մշանջենաւորել իրենց ԹշնամուԹիւնները։

Զգուշանանք, պարզ հակակրուԹիւն մը երբեմն աղմկայոյզ վէՃերու դուռ կը բանայ, որոնք ալ կծու խօսքերու տեղի կու տան, զորոնք վերաւորուած ամ-

1 Սաղմ. ՃԽ. 3։ 2 Մատթ. Ե. 44։

բարտաւանուԹիւնը երկար տուեն կը յիշէ, և ահաւասիկ ոխակալուԹեան ասպարէզը կը բացուի։ Ան տուեալ Ա.տուած չ'ընէ որ կամ մէկ և կամ միւս կողմանէ գանգատանաց, կամ նախատանաց առաջարկուԹիւն մը, և կամ պարզ քաղաքավարուԹեան զանցառուԹիւն մը ըլլայ. որն որ՝ երկու բարեկամի մէջ ոչնչ սեպուած տուեն, այնպիսեաց մէջ որ բարեկամուԹեան կապը արդէն խըզուած է, կրնայ երկար ԹշնամուԹեան փոխուիլ։

Ինչպիսի՛ մեծ և ծանր գայԹակղուԹիւն պիտոր ըլլար, եԹէ քահանան ալ այսպէս վարուէր։ Ո՛հ, վայ է-բեն, եԹէ իր յանցանքովը ան աստիՃանը հասնի որ ոչ ամպիոնէն, ոչ բեմէն կարող ըլլայ քարոզել, և ոչ ալ առանձնաբար արտաբերել այն խօսքերը, որ քրիստոնէուԹեան փառքը և պարծանքը կը կազմեն. « Հայր, ... Թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք Թողումք մերոց պարտապանաց »[1]։

Նմանինք, սուրբ քահանային նմանինք, որուն երկրիս վրայ դանուած բոլոր մարդիկը բարեկամ և եղբայր են, և որուն իւր դիւցազնական սիրոյն զօրուԹեամբ, մանաւանդ Թէ բոլոր Թշնամիներն անգամ մտերիմ բարեկամ եղած են։

Զարմանալի էր Պաւլեայեան սուրբը վիճկենտիոսի վարմունքը անոնց հետ՝ որոնք իրեն դէմ պաղուԹիւն և հակակրուԹիւն ցոյց կու տային։ Օր մը պատարագի զգեստները հագուած ատեն՝ յիշեց որ Փարիզ դանուող կրօնաւոր մը սկզբոյ հակառակ զգացմունքներ ցոյց տուած էր։ Իսկ և իսկ հանուելով վազեց գնաց այն կրօնաւորին քով ԹողուԹիւն խնդրելու ահաՃուԹեան մը համար, զոր կրնար անոր պատճառած ըլլալ. ըսելով նաև որ ինքը սիրով կը յարգէր զինքն ալ՝ իւր կրօնքն ալ. որով խաղաղացած գնաց պատարագը զուրցելու. երջանիկ յիրաւի, կրնալով քիչ մը ատենէն իւր ձեռքերուն մէջ հանդչելիք Յիսուսին յայտնելու՝ անոր պատուիրանին հաւատարիմ գտնուիլը. « ԵԹէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ և անդ յիշեսցես, եԹէ եղբայր քո ունիցի

1 Մատթ. Զ. 12։

ինչ խնթի գքեն, Թուղ զպատարագն քո առաջի սեղանոյն, և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քումմ, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո »[1]:

Ինչպիսի բարի օրինակ մը Ժողովրդեան համար. ինչպիսի միութիւն մը եկեղեցականաց մէջ, եթէ ամբարտաւանութիւնը խղդած՝ միայն սիրոյն ձայնը լսելով ամենքնիս ալ այս մեծ սուրբին նմանելու կանայինք, որն որ հիմակ երկինքէն կ'ըսէ մեզի. Ինձի նմանող եղիք, ինչպէս որ ես ալ Քրիստոսի եղայ. «Նմանողք ինձ եղերուք, որպէս և ես Քրիստոսի »[2]:

103. Վերջապէս եղբայրսիրութեան պատուիրանը կ'արգելու այն ամէն ինչը, որ ապօրինաւորաբար ընկերին վնաս մը կամ գոնէ տհաճութիւն մը կրնայ պատճառել, կամ այն ամէն ինչը՝ որ ձանձնալով երեսն վշտանալու և տհաճութեան պատճառ պիտոր ըլլար: Այս կանոնին մէջ կը բովանդակուին խորհուրդները, խօսքերը, գործքերը և զանցառութիւնները:

Սիրոյն աստուածային առաքինութիւնը մեր հոգւոյն ինքնիշխան տէրը ըլլալով, այնուհետեւ չի թողուր որ իրեն հակառակ ոչ մտածմունք մը, ոչ յանգուգն գաղտղութիւն մը, ոչ պաղութիւն մը, ոչ նախանձ, ոչ ոխակալութիւն, և ոչ ալ դաժանութեան կամ հակառակութեան զգացմունք մը հոգւոյն մտերնոյ. կը չհիւղըտն, և չի թողուր որ այնուհետեւ կծու, հեգնական, չարախօս կամ զզպարոիչ բառ մը արտասանէ:

Մեծամեծ խնամքով հսկել կու տայ, որ անխոհեմ և անմիտ խօսքէ և խօսակցութիւններէ խոյս տրուի:

Ինքը ի լուսթիւն կը սահիլ, տեսնելով որ սիրոյ գաղնացեր է և բարկութիւնը կ'եռի, որպէս զի անով կանխէ խօսակցութիւնները, կծու խօսքերը, և գուցէ տրտունջները և քսութիւնները ալ:

Վերջապէս բոլոր վարմունքը կը կանոնաւորէ, և բոլոր գործքերը կը սրբէ, հեռու մերժելով իրեն վնասակարները, ինչուան նաև այնպիսիներն ալ արգիլելով,

1 Մատթ. ե. 23, 24:
2 Ա. Կորնթ. ժԱ. 1:

որոնք առանց իրեն արատ մը բերելու հակառակ կը գտնուին իւր ընտիր փափկութեանը. ինչպէս են մեծաբանութ, մարդասիրութեան, քաղցրաբարոյութեան, խնամարհամութեան և ուրիշ վայելչութիւններու մէջ պակասութիւնները. որոց ամենքէն յառաջ կու գայ այն կատարեալ միաբանութիւնը, այն փոխոխակի սէրը, որն որ ընդհանուր շինութիւն պատճառելով առատ միխթարութեանց աղբիւր մը կ'ըլլայ:

Այսպէս կը վարուի սուրբ քահանան. և որովհետեւ իւր ամենամեծ զուարճութիւնը սիրոյ գործքերը կատարելն է, առանց բռնութեան մնանաւանդ թէ մեծ գոհունակութեամբ փոքր զոհողութիւններ յանձն կ'առնու, որոնց առատ փոխարինութիւն մը կը գտնէ եռանդեան առաւելութեամբ և նեղքին գոհութեամբ, որ բարեգործութեան մշտատև ընկերն է:

Ամենքս ալ սուրբ ըլլանք, սիրելի եղբայրակիցք, և ամենքս ալ այս առաջադրութիւնը ընենք. «Մինչ զգուշութիւն ալիսոր ընեմ ո և եցէ կերպիւ սիրոյ դէմ չի մղանչելու ոչ խօսքով և ոչ ալ գործքով»:

104. Աւելորդ կը սեպենք խորհրդածելու որ եղբայրսիրութեան դէմ եղած ամէն բանէ զգուշութեամբ խոյս տալու հարկաւորութիւնը մնանաւորաբար պէտք է խնայուի հոգաբարձուի մը համար իրեն խնամոց յանձնուած հօտին նկատմամբ: Որովհետեւ ինչ բարի բան կրնայ ընել իր Ժողովրդապետութեան մէջ, եթէ երբեմն երբեմն զանիկայ վշտացնէ իր խօսքերովը, գործքերովը և բոլոր իր վարմունքովը. ինչ վստահութիւն կրնայ յուսալ անոնցմէ, որոնց հոգը իրեն տաղտկալի երեւցուցեր է:

Յարգոյ Հովիւներ, Աստուծոյ փառացը, հոգւոց և նոյն իսկ ձեր փրկութեան համար կ'աղաչենք զձեզ, սիրեցէք. ապէ, սրատես սիրեցէք ձեզի յանձնուած ոչխարները: Ոչ հրապարակաւ և ոչ ալ առանձին բերան նեղիդ բառ մը փախցընէք Ժողովրդեան մեկուն դէմ. մնանաւանդ թէ չահեցէք զնրնք եռանդեան, բարութեան, զոհողութեան, և մեքուբ, անկեղծ ու անչափ սիրոյ առաւելութեամբ:

Լսեցէք թէ ինչպէս կը խօսէր սուրբ Առաքեալը Կորնթացւոց հետ, որոնք երբեմն իրեն մեծամեծ վշտաց առիթներ կու տային, անոր խօսքերը ձեղի սեպհական նելով, դուք ալ ըսէք Ժողովրդեան. — Պատերնիդ բացէք զմեզ ընդունելու համար. ինչպէս գիտէք, և ոչ մեկերնիդ վնասացուցինք. « Տարայք մեզ, զի ոչ ումեք մեղաք... »: Պրդէն ձեղի ըսած եմ որ դուք իմ սրտիս մէջ էք, թէ կենացս և թէ մահուանս առեն ալ. « Ի՛նդի չառաջ եկաք ասացի, եթէ ի սրտի մերում կայք ի կեալ և ի մեռանել ընդ ձեզ »: Եթէ համարձակաբար կը խօսիմ, վասն զի կատարեալ վստահութիւն ունիմ վրանիդ. մանաւանդ թէ զձեզ կառավարելը և ձեղի առաջնորդելը՝ ինձի փառք կը սեպեմ. և այս մտածմունքովս սիրտս ոչ միայն մեծ մխիթարութիւն մը կը զգայ, այլ ամենաբազցը ուրախութեամբ լցուած է, թէ և շատ կողմերէ տառապանքները անվնաս ալիս կը նեղէին. « Բաղում համարձակութիւն է ինձ առ ձեզ, բազում պարծանք են ինձ վասն ձեր. լի եմ մխիթարութեամբ, առաւելեալ եմ ուրախութեամբ յամենայն նեղութիւնս մեր »[1]:

Ի՛նչպէս եկեղեցին կերպարանափոխ պիտոր ըլլար, որչափ դարձեր պիտի ըլլային և որչափ անթիւ հնորհքներ պիտոր անձրևէին երկնքէն քահանայից վրայ, եթէ ամեն մեկերնիս ալ Առաքելոյն ազնիւ զգացմունքը սրտերնուս մէջ և բորբոքուած խօսքերը ջերմութիւններուս վրայ կրկնինք:

105. Բայց եղբայրսիրութեան հակառակ բաներէ խոյս տալը բաւական չէ. այլ հարկաւոր է նաև ընել, ինչ որ կը հրամայէ: Տեսանք « զԽոտաբութիւն ի չարէն », հիմայ ալ տեսնենք « զԱրթ զբարին »[2]:

Ինչպէս որ ըսինք, մենք մեզի համար քահանայ չենք եղած, այլ ընկերին համար: Աստուած ի մեզ սիրոյ գործերուս նուիրուած անձինք կ'ուզէ տեսնել: Մենք Յիսուսի Քրիստոսի փոխանորդ ենք, որուն աշխարհքիս վրայ անցուցած կեանքը՝ մարդկանց համար սիրոյ երկար կրթութիւն մը եղաւ օրօրոցէն մինչև խաչը: Ուստի

1 Բ. կորնթ. Ը. 2, 3, 4: 2 Սղմ. ԼԴ. 27:

այն քահանան որ գերազանց սէր մը չունի, և բոլոր իր կենաց մէջ սիրոյ գործքեր չի ցաներ, գեռևս քահանայութեան բարձրութեանը վերահասու չէ եղած:

Հայր Սիւբրէնը իւր « Հոգևոր երկխօսութեանց » մէջ կը հարցընէ, ինչ կ'ըսնանաս սիրով լցուած սիրտ ընծեղուն: Կը պատասխանէ. — Մարդասէր կամ գորովագութ սիրտը՝ ըստ իմ կարծեացս անկիայ է, որն որ ուրիշի բարիք ընելու հակեալ է: — Եւ ուրիշ տեղ ալ կը յաւելու. — Այն սիրտը որ այնպէս ուրիշին բարիք ընելու հակեալ է, և մեծ զուարճութիւն մը կը զգայ « ամեն կրցած բարիքը ամեն տեսակ մարդկանց ընելու », առանց գիտենալու որ ասիկայ կամ անիկայ իրեն հաճելի է, ուրիշ բան չի մտածելով եթէ ոչ միայն Աստուծոյ հաճոյանալ, այս է մարդասէրը, գորովագութ և սիրով լեցուն սիրտը: — Անհատական գործնական եղբայրսիրութեան գերազանց և հակիրճ ծանօթութիւնը:

— Աստուծոյ որդւոց, կ'ըսէ նոյն հեղինակը, աւելի գեղեցիկ նշանը բարի և մարդասէր սիրտ մը ունենալն է: Վասն զի Աստուած սէր և բնականապէս ալ բարերար ըլլալով, մենք այնչափ աւելի կը մօտենանք Աստուծոյ, որչափ որ ընկերներուս բարիք ընելու հակեալ ըլլանք Աստուծոյ պէս, որն որ բոլոր աշխարհքի բարիք կ'ընէ: — Սուրբ քահանան ոչ միայն կը հասկընայ, այլ նաև և գործ կը դնէ այս վեհ վարդապետութիւնը: Սէրը իրեն հիմն ու կեանքն է: Տեսնենք թէ սէրը ինչպիսի գործքերու թելադիր կրնայ ըլլալ սուրբ քահանային:

106. Աստուածս բոլոր մարդիկ ըստ իմիք ձեռնտուութեան մը կարօտ են, ըլլայ հոգևորապէս, ըլլայ մարմնաւորապէս՝ ամենքն ալ քիչ շատ ողորմելի են. և եթէ պտի մը կրնայ ըսուիլ որ մարդկային գերդաստանը և ոչ մեկ մը գոյս ձգուած, մեծագործ հիւանդանոցի մը պատկերը կը ներկայացընէ, որուն մէջ գանուին այն ամեն թշուառութիւնները՝ որոց ենթարկուած է խեղճ մարդկութիւնը: Քահանան Աստուծոյ կողմանէ այս հիւանդանոցին իբրև բժշկապետ կարգուած է, և սիրոյ

գործառնան մէջ այս իրէն խնամոցը յանձնուած բոլոր հիւանդներն ալ առողջացնելու օգտակար և կարևոր դեղերը ունի:

Տեսնք թէ սուրբ քահանան ինչ գաղափար ունի իւր պաշտօնին նկատմամբ: Համոզուած ըլլալով որ այն՝ ինչ մարդկանց մէջ կը գտնուի, որ կամ այս կամ այն բանին համար իրէն օգնութեանը կարօտ են, միշտ պատրաստ է զամենքն ալ իրենց կարօտութեանը համեմատ մխիթարելու, այն բժիշկներու նման՝ որոնք ձեռքերնին շատ մը հիւանդ ունենալով՝ հազիւ թէ կրնան ուտելու և քնանալու առէն կը գտնեն: Բայց իւր սիրոյն գլխաւոր գործքերը հետևեալներն են:

« Խորհուրդ կու տայ »: Բարի խորհրդատու մը անգին գանձ մըն է: Ո՞վ կրնայ մեյմեկ զուրցել մեկ բարի խորհրդով մը արդելուած մեծ անախորժութիւնները, և երբեմն ալ յանցանքները: Այդ սուրբ քահանային պատ ո՞վ կրնայ տալ այսպիսի խորհուրդներ, որն որ նախ ինքը կ'ընէ, և յետոյ ալ ուրիշին կ'ապրսպրէ: Փորձով սորված ըլլալով այս (նախ անձամբ ըրած և ապա այլոց խրատած) խորհուրդներուն ազդեցութիւնը, մեծ գոհունակութեամբ հարցուն ոլներուն առատապէս կը մատակարարէ: Երբեք իր վրայ ամբարտաւանութիւն մը չի տեսնուիր, և ոչ իսկ պաղութիւն կամ ձանձրութիւն նշանակող բառեր կը փախչին բերնէն. բոլոր աշխարհքի պարտաւորը ըլլալով սրբոյն Պօղոսի առաքելոյն հետ կ'ըսէ. « Իմաստնոց և անմտից պարտապան եմ »[1]: Այս խօսքերէն լուսաւորուած ինքը միշտ քաղցր է, և իւր եռանդեան անուշ մարդասիրութեամբը պատրաստ է համապատասխանելու իրեն ցոյց տրուած վստահութեան:

Դեռ աւելին կայ. ինքը չի սպասեր որ ուրիշները գինքը փնտռեն. հազիւ գիտնալով որ մեկը՝ որուն քով կրնայ մտեներ՝ իրմէ կամ խրատով մը լուսաւորուելու, և կամ քաջալերութեամբ զրգռելու կարօտութիւն ունի, սիրով առաջին քայլը ինքը կ'ընէ յօժարութեամբ

1 Հռոմ. Ա. 14:

տալու՝ ինչ որ դուցէ խնդրելու համար կ'ակնածուէր՝ ձանձրութիւն չի տալու պատճառաւ: Բայց ինքը կը կանխէ և կը փարատէ այսպիսի ձանձրութեան վախը և ակնածութիւնը, ըսելով որ մեծ մխիթարութիւն մը կը զգայ, երբ մեկը իրեն եղբայրսիրութեանը դիմելու ըլլայ:

Այսպէս վարուելով, ինքը սիրուածին չափ կը սիրէ, և այս փոխոխակի սէրը իւր ծանօթ աստուածպաշտութեան եռանդեան հետ միացած՝ իրեն տուած խորհուրդներուն ընդհանուր մը, մանաւանդ զօրութիւն մը կու տայ, որոնց ազդեցութիւնը տարակոյս չի վերցներ:

Ո՞վ մեզ կ'արդելու այսպիսի վարմունք մը ունենալու: Այնչափ օր ո՞րչափ առիթներ կը ներկայանան մեզի բարի խորհուրդներ տալու: Սուրբը ըլլանք, արծարծենք մենք ալ սուրբերուն սէրը սրտերնուս մէջ, և կը տեսնենք որ ամէն մեզի պատահած մարդիկ, ինչպիսի ուրախութեամբ սիտոր ընդունին մեր սիրալիր խորհուրդները, կամ դանի այն խօսքերէն մեկ հատը, որոնք սուրբ քահանային համար շատ դիւրին են, և միշտ ալ հոգւոյ վրայ փրկարար ազդեցութիւն մը ըրած են:

107. « Խոհեմութեամբ կ'ուղղէ »: սուրբ քահանան իւր երկնաւոր վարդապետին սորվեցուցածները ի գործ դնելով ոչ երբեք կը մոռնայ անոր խօսքերը. « Եթէ մեղկեց քեզ (ըստ մեկնչին՝ առաջի քո) եղբայր քո, երթ յանգիմանեա զնա, յորժամ դու և նա միայն իցէք. եթէ լուիցէ քեզ՝ շահեցար զեղբայրն քո »[1]: Եւ որովհետև ինքը ճշմարիտ սէր մը ունի իւր ընկերին վրայ, իրեն պարտք կը սեպէ սիրով խրատել, որպէս զի հասկընէ յանցանքին չարութիւնը, որուն մէջ կ'ինալը վրայ է, կամ ինկած է, և այն ըռնած չար ճանապարհէն յետ դարձընէ:

Անխոհեմ և թեթևսոլիկ քահանայ մը, որուն սրբութեան մէջ անկեղծ սիրոյնմէ աւելի դառնութիւն կը դտնուի, ինքն ալ իր կողմանէ զմեղաւորները կը յանդիմանէ. բայց ըստ Աստուածոյ չ'եղած անկարգ նախանձէ մը մղուած ըլլալով՝ փոխանակ խաղաղեցընելու՝ աւելի և

1 Մատթ. ԺԸ. 15:

կը ըրդռէ, մեղմացընէլուն տեղը՝ աւելի կը կարծրացը-
նէ, և փոխանակ անդունդը գոցելու՝ աւելի եւս կը խոր-
կընէ զայն: Փոխանակ սուրբ քահանային նման հայ-
րական սիրով խրատելու, ինքը բռնաւորական իշխանու-
թեամբ կ'ուզէ հրամայել. որով իւր սէրը չէ թէ միայն
օրհնուածենէ զուրկ՝ այլ նաև անարգելի ալ կ'ըլլայ: Եւ
չարագոյն կ'ըլլայ եթէ զանցաւորը առանձնաբար տես-
նելուն տեղը, «յորժամ դու և նա միայն իցէք», հրա-
պարակաւ զանիկայ կշտամբելու սովորի, որն որ միշտ
անօգուտ և շատ անգամ ալ ինասակար է, կշտամբանք՝
որուն միշտ պէտք է կանխէ առանձին և ծածուկ յանդի-
մանուածենիւն:

Պաւլոսեան սուրբը վկայեցնելով կ'ըսէ, որ քանի
մը ժամ սպասելու է, և յանդիմանուածենէն առաջ Աս-
տուածոյ առջևն իյնալով աղէկ մը խորհիլ պէտք է, մանա-
ւանդ երբ յանցանքը ծանր է, և անձն ալ յանդիմանու-
թեան արամադրուածիւն չունի:

Այս խորհրդածուածեան արժանի խորհուրդն ալ
կու տար, թէ որպէս ղն խրատեցաւ եղբօրը օգտակար
ըլլայ, պէտք է որ խրատատուն քաղցրութիւն այր Աստու-
ծոյ ըլլայ: — Տեսէք թէ ինչ բան է որ սուրբ քահանա-
յին սիրալիր յանդիմանուածեան այնչափ գործնէու-
թիւն կու տայ. կը սիրէ որ իւր ընկերը աստուածպաշ-
տուածեան ընդհակը իրեն չազնի, և սրտերու վրայ ի գործ
դրած բարձր առաքինուածեան իշխանուածեամբ՝ հրապա-
րակական յանդիմանուածեան վերջին գեղը գրեթէ երբեք
գործածելու կարօտ չ'ըլլայ:

Դժբաղդաբար մենք միշտ չափը կ'անցընենք. ունինք
ամենևին բանի տեղ չեն դներ եղբայրական յանդիմանու-
թիւնը, և ըստ որում գիտեն որ քանի մը պարագանե-
րու մէջ կրնայ զանց առնուիլ. անոր համար երբև խոր-
հուրդ մը կը կարծեն զայն, որն որ շատ անգամ խիստ
պատուիրան մըն է, մանաւանդ հոգւաբարձու հովիւնե-
րու համար: Ուրիշներն ալ չը տեսնելու զարնելով որ
իրենք սիրոյ առաքինուածենէ աւելի բնուածեան սաստ-
կուածենէ շարժած են յանդիմանուածիւն ընելու, առանց

ժամանակի պատեհուածեան նայելու, ոչ ջղուղուածիւն,
և ոչ ալ և իցէ կանոն մը ունենալու, իբր Բաւիէն ֆրատ-
ները և կշտամբանքները, որոնք ալ բոլորովին ապար-
դիւն կը մնան:

Խոյս տանք այս ծայրերէն, և առաջնորդ բռնենք մեզի
— ոզջամիտ աստուածաբանուածեան սկզբունքը. — փոր-
ձառու խոհեմուածիւն մը. — ընդունը աստուածպաշտու-
ածենէ և կարեկցիլ գիտցող սէրն շարժած եռանդ մը: —
Ասոնք են սուրբ քահանային զէնքերը խրատելու առեն
ունեցած կանոնները:

108. «Բարոզուածեամբ կը կրթէ»: Ո՛վ, ինչպիսի սի-
րոյ պաշտօն և կրթուածիւն մըն է քարոզուածիւնը: Ո՞վ
կրնայ համրել քարոզուածեամբ գործի եկած, փըր-
կուած և երկինք խաւրուած հազարաւոր և միլիոնաւոր
հոգիները: Ինչպէս կրնայ ըլլալ ուրեմն որ Աստուածմէ
ժողովրդեան փրկուածեանը համար կարգադրուած այս
սիրոյ մեծ գործքը շատ անգամ անպէտ տեղը գործա-
ծուի: Պատճառն ինչ է: Մեղաւորաց կուրուածիւնը,
անտարբերուածիւնը, թէ յամառ պնդուածիւնը: Ստուգիւ
այո, բայց մի թէ յանցանքը միայն մեղաւորներունն է:

Ո՛հ, թէ որ ամենքս ալ սուրբ և եռանդուն քահա-
նայ ըլլայինք... եթէ խօսքերուս պէս գործքով ալ քա-
րոզէինք, թէ որ սրտերնիս սիրով և եռանդեամբ բոր-
բոքած ըլլար, եթէ հաւատոյ մեծ ճշմարտուածեանց
ըստ պատշաճի վերահասու և տեղեակ ըլլայինք, թէ որ
դժոխքը թաւիշով հոգիներուն բաղմուածեան սարսափելի
տեսարանը այն ազդեցուածիւնը ընէր վրանիս, որ կա-
տեկցուածեան և գորովագութ սիրոյ արցունքներ թա-
փէինք: Եթէ խօսէլուածիւնը՝ Յիսուսի անսահման սէրը
յիշեցնելով մի և նոյն առեն մտքերնիս բերէր այնչափ
հոգւոց նկատմամբ համար տալու պարտաւորուածիւն-
նիս, որոնց համար որ աստուածային Փրկիչը իրեն ա-
րիւնը անխնայ թափեց: Եթէ, մէկ խօսքով ըսեմ, սուրբ
ըլլայինք, ո՛հ, որքա՜ փ և ինչպիսի նորոգուածիւններ պի-
տոր չը տեսնէին մեր ժողովրդապետուածեանց մէջ. և որ-
չափ սրտանց պիտոր ցաւէինք, տեսնելով որ շատ անգամ

Եղբայրներս այնպիսի բաներու համար ամբաստաներ Էինք, որոնց մէջ իրենցմէ աւելի մենք յանցաւոր գտնուած Էինք:

Ֆարոզիչներուն վրայ տեսնուելիք փոփոխութեան հարիւրին մէկ մասն անգամ չենք կրնար դրի առնուլ, եթէ ամէնքն ալ հոգ տանէին սուրբ ըլլալու և սիրով բորբոքուած ըլլալու:

Այն առենը տղայքը շարունակաբար եռանդեամբ աստուածպաշտութեան, գոհունակութեան, սիրոյ և փոյթեռանգութեան նշաններով քրիստոնէական վարգապետութեան ղեկաշած կ'ընդունին: Այնուհետև առանց պատրաստութեան քրիստոնէականի մեկնութիւնները չէին յանձնիներ, և պաշտօններուս այս ամենակարևոր պարտքը քիչ ախորժակով և ձանձրութեամբ չէր կատարուեր. այնուհետև ալ խստաբար և գառնութեամբ չէին վարուեր տղայոց Յիսուսի Քրիստոսի հօտին գառնուկներուն հետ:

Այն առենը փոխանակ այնչափ պերճաբան և մեծատուչակ քարոզներու, որոնք ամենևին անպէտ են, հաստատուն և գործնական խրատներ կը լսուէին, որոնք առաջ պատուղ կը բերեն հաւատքին. մանաւանդ երբ այնպիսի հովիւներէ տրուած ըլլան, որոնց գերազանց աստուածպաշտութիւնը ծանօթ ըլլայ:

Այն առենը փոխանակ անորոշ, վերացեալ, ունկնդիրներու մեծ մասէն անիմանալի եղած բնազանցական ճառերու, քրիստոնէական վարդապետութեան ամէն մասանց վրայ աստուածաբանական և բարոյական խրատներ կը լսուէին:

Այսպէս կ'ընեն սուրբ քահանայք, և մանաւանդ ժողովրդապետները՝ երբ իրենց սերտ սիրոյն եռանդեամբը շարժած՝ քարոզութեան այնչափ փրկարար պաշտօնին կը զբաղին:

109. « Այպաշխարութեան սուրբ առեանին մէջ հոգւոյ փրկութեան առաջնորդ կ'ըլլայ »: Հոս է որ իւր սէրը մանաւոր յաղթականակ մը կը կանդնէ: — Խոստովանարանին մէջ, այս աստուածային ողորմութեան գահին վրայ, ինքը անտարակոյս « գառաւոր » է, և գառաւորի պէս ալ աստուածային մեծվայելչութեան լրատանց հատուցում կը պահանջէ, որուն անուամբ վճիռներ կու տայ. բայց ինքը նաև « բժիշկ » և մանաւանդ « հայր » է. և այս կրկին տիտղոսով գիտէ՝ որ իրեն հիւանդներուն և որդւոց համար այն աստուածային դեղութեամբ զբաղացած սէրը՝ ունենալու է՝ որուն որ ինքը գործիք է:

Անհամար քահանայք խոստովանութիւն կը լսեն. բայց այս խոստովանութիւնը իրենց համար արդեօք սիրոյ կրթութիւն կ'ըլլա՞յ: Կը գտնուի՞ մէկը որ հաւատայ թէ աղէկ խոստովանցընելու համար բաւական ըլլայ խոստովանարանին մէջ նստիլ, մեղքերը լսել, և յետոյ ըստ ապաշխարողին տրամադրութեան արձակումը տալ կամ ըլլանալ:

Ո՛չ, այսու ամենայնիւ առանկ ոչչնչեր կը գըտնուին: Բայց սուրբ քահանան երբ կ'ուզէ որ խոստովանութեան պաշտօնը սիրոյ կատարեալ գործք մը ըլլայ՝ այսպէս չի վարուիր: Ջանանք ուրեմն իւր գաղտնիքը գտնել, և մենք ալ անկից օգտուա քաղենք:

Սուրբ քահանան խոստովանութեամբ եղած բարիքը տեսնելով՝ այս պաշտօնին մեծ սէր մը կը կապէ, և յօժար սրտով խոստովանարանին մէջ կը գտնուի: — Նոյնը կըրնա՞նք ըսել մեր անձին նկատմամբ ալ. խոստովանարանը նստելով հաճութիւն և զուարճութիւն մը կը զգա՞նք, գիտնալով որ հոն հոգւոյ փրկութեան համար կ'աշխատինք:

Սուրբ քահանան կերպով մը կը հասկըցընէ որ խոստովանանք լսելն մեծ հաճութիւն մը կը զգայ, որով ամէնքը այս իւր տրամադրութիւնը գիտնալով՝ իրեն կը վաղեն աղէկ ընդունելութիւն մը գտնելու վստահութեամբ: — Նոյն համբաւը մենք ալ հասած ենք մեր ժողովրդապետութեան մէջ, մեր բնակած տեղը: Հաւատացեալները գիտե՞ն արդեօք որ մենք ալ վերոյիշեալ խոստովանարանը կը սիրենք, և խոստովանութեան առեն այնպիսի կերպեր կը գործածե՞նք, որով զմեզ սորվածները գիւրութեամբ մեզի քաշենք:

Սուրբ քահանան հրաշագործական և առանձին յորդորներով ամէն առիթներ զմեզ աւուրները խոստովանանքի հրաւիրելու կը գործածէ: — Այսպիսի կարևոր կէտի մը մէջ անոր նմանելու չունինք: Անառակի մը հետ գտնուած առենիս արդեօք եւանգնիս կը բորբոքի՞: Արդեօք բորբոքուած սիրով կը սիսկի՞նք զանիկայ անկէղծ զղջմամբ առ Աստուած դառնալու:

Սուրբ քահանան միշտ հաւասար եւանգով կ'ընդունի ամէն իրեն դիմող ապաշխարողները, և երբեք ամենաթեթև զանազանութիւն մը կամ առաւելութիւն մը չի ցուցներ: — Մի թէ մեր եւանգն ալ այսպէս հաւասար է ամենուն համար, անանկ որ և ոչ մէկը վնասնալով ամէնքն ալ շինուին: Ո՛հ, այո՛, ունենանք մենք ալ սուրբ քահանային այս եւանգը, և անոր պէս ըսենք բարեպաշտ կա Կօլոմբիէրի հետ. — Վերջապէս աղքատի մը հոգին ալ թագաւորի հոգւոյն պէս սիրելի է Յիսուսի Քրիստոսի, և ամենէն վոյթ չէ թէ ինչ տեսակ հոգիներով ալքայութիւնը կը լեցուի: —

Սուրբ քահանան ամէն մէկ ապաշխարող տեսնելով երբեմն մէկ սրտի մը կ'ընդունի, զորն որ Աստուած իրեն կը խաբէ, որպէս զի զանիկայ լուսաւորէ, զարդարէ, քաջալերէ, մխիթարէ և սուրբ ընէ: — Մենք ալ այս եւանգն և սիրալիր մտածմունքը ունինք արդեօք: Մի թէ զԱստուած կ'օրհնե՞նք մեզի այսպիսի արդիւնքներ չահելու առիթը տալուն համար, խաբելով մեզի լուսաւորութիւնը կոյրեր, բժշկութիւնը հիւանդներ, քաջալերութիւնը և վերանորոգութիւնը, վհատած ու սրտաբեկ հոգիներ, մխիթարութիւնը վնասացեալներ և փրկութիւնը մեղաւորներ:

Սուրբ քահանան հեզութեամբ Յիսուսի Քրիստոսի հաւատարիմ նմանող՝ ոչ երբեք անհամբերութեան կամ ատելութեան նշան մը կու տայ, իւր յորդորները միշտ քաջալերիչ օծմամբ լեցուն և հայրական են, այսու ամենայնիւ յանդիմանած տեսնն ալ կը տեսնուի, որ իւր յանդիմանութիւնն ալ սէրէ և եւանգէ յառաջ եկած է: — Մենք ինչ կ'ընենք: Երբեք էք պատահեր որ խոս-

տովանութիւնը աճապարէնք՝ գուցէ անոր ամբողջութեան ջնասուիլ ալ, տեսակ մը անհամբերութեանց, խստութեանց, յոռնածութեան և ձանձրութեան համար: Մեր յորդորները և յանդիմանութիւնները միշտ հայրական եղած են:

Փառք և գոհութիւն Աստուծոյ, թէ որ այս ամէն հարցմունքներու գոհացուցիչ պատասխաններ կրնանք տալ:

110. «Կ'աղօթէ և բոլոր իւր բարեգործութիւնները ընկերին օգտին համար կը նուիրէ»: Ինչպէս կրնանք ամէն աստեն աղօթք չընել և անդադար չաչխատիլ ընկերներուս համար, մինչդեռ կը հաւատանք հաստատուն հաւատքով որ երբև քահանայ միջնորդ կը գտնուինք յանցաւոր մարդուն և վհատացած Աստուծոյ մէջ: Ո՞վ կրնայ Աստուծոյ բարկութիւնը էջեցնել, թէ որ իւր պաշտօնեայները չեն կրնար անոր աթոռոյն առջին միջնորդութիւն ընել յօգուտ ապստամբ մեղաւորաց:

Թէ որ մենք մեր սրբութեամբ ըստ սրտին Աստուծոյ քահանայ ըլլանք, ան ատենը ինքը միայն գիտէ թէ ինչպիսի շնորհայ աքանչելիքներ և գարձեր կրնանք ընդունիլ իւր անսահման գթութենէն:

Այս խորհրդածութեամբ քննենք քիչ մը առանց սխալ երեւակայութեամբ զմեզ մտանելու, թէ արդեօք աղէկ կը կատարե՞նք այս մեր միջնորդութեան պաշտօնը: Շատ աղօթք կ'ընե՞նք մեղաւորաց համար: Յիսուս Քրիստոս զանոնք գժոխքին ազատելու համար մեռած ըլլալով, պէտք է հաւատանք որ երբեն աւելի ընդունելի և հաճոյական աղօթքը մեղաւորաց փրկութեան համար եղածը ըլլայ: Ուրեմն գարձեալ կրկնենք. Անոնց համար աղօթք կ'ընե՞նք:

Հոս յարմար կու գայ մէկ խորհրդածութիւնիս: Իրաւցընէ մենք աղօթք կ'ընենք. բայց արդեօք մեղաւորաց համար աղօթք կ'ընե՞նք: Ակ աւելի. սովորաբար աղէկ որոշուած և հաստատուն նպատակի համար աղօթք կ'ընե՞նք: Աղօթքը սկսելէ յառաջ մենք զմեզ կը ժողվե՞նք քիչ մը առեն նպատակը որոշելու, և ըսելու համար թէ

ՙրն է արդեօք այն մեր աղօթքին մանաւանդ դիտաւորու-
թիւնը: Ի՞նչ պատասխան պիտի ապրինք, թէ որ աղօթք
մը ըրած առեննիս յանկարծ մէկը ընդհատէր զայն, հար-
ցընելու համար թէ այն մեր աղօթքովը ինչ մանաւանդ
և որոշուած ընդհ.ք կը բաղձանք ընդունելու: Ո՛րքա՛վ
անօգուտ աղօթքներ, որոնք դիւրութեամբ կրնայինք
շատ արդիւնաւոր ընել:

Մաածական աղօթքները, ձայնաւոր աղօթքները, հո-
գևոր ընթերցումները, ժամերգութիւն, պատարագ, ինչ-
պիսի՛ միջոց և ձանապարհներ և փաստեր են ամենա-
մեծ գործքեր կատարելու: Ինչպիսի՛ ոսկեղոյ առատ հան-
քեր են թէ որ մեղաւորաց օգուին համար մշակինք,
ինչպէս որ կ'ընեն սուրբ քահանայք: Մի՛ թէ կը սըր-
բացընե՛նք մեր գործքերը, պաշտօններուս ըստ ին-
քեան սուրբ և այնպիսի վարձուց արժանի արդիւնքնե-
րը, երբ գիտտան պատշաճ մաքրութեամբ կ'ըլլան, վիճ-
տեր և աշխատանքներ և հանապազօրեայ կատարած գոր-
ծողութիւննիս, և այլն, կրնա՞նք մեր սրբութեան գոր-
ծածել դիտաւորութիւննիս աղէկ ուղղելով: Մի գուցէ
սովորական ունակութեամբ ընենք այս ամէն բան, ա-
նանկ որ մեզի համար բոլորովին անօգուտ ըլլան:

Սուրբ քահանայ ըլլանք, և Ձմմարիտ քահանայա-
կան վարքով արժանի ըլլանք մուտ մը գտնելու Աստու-
ծոյ սրտին մէջ, ու այնուհետև չի կասկածինք շնորհայ
անձրևի մը գարձնելու բոլոր մեր բարեգործութիւննե-
րը և աղէկ ըրած աղօթքները. ան առենը միայն մէկ բան
մը կը պակսի: Ի՞նչ: Ո՛ և իցէ գործքի ձեռք չի զարկած
բարի դիտաւորութիւն մը ունենալ: Մանաւանդ թէ ան
առենը ամէն գործք ալ դիւրին կ'ըլլայ մեզի, և անսահ-
մանաբար ալ արդիւնաւոր կ'ըլլան բարի պատուիրներով
թէ մեր եղբարց և թէ մեզի համար:

111. « Աղքատաց օգնական կ'ըլլայ »: Առաջին նա-
յուածքով կրնայ կարծուիլ որ քահանան մանաւանդա-
բար հոգւոց հովիւ կարգուած ըլլալով, աղքատաց մար-
մնաւոր կարօտութեանց օգնելու ալ յատուկ առաքե-
լութիւն մը չ'ունենայ: Սակայն գործքը բոլորովին տար-

բեր է: Ինչպէս ըսինք, քահանան սիրոյ մարդն է, և ո-
րովհետև սէրը կը բովանդակէ զամբողջ մարդը, ինչպէս
որ է, յայտնի կ'ըլլայ որ քահանան պարտաւոր է ամէն
հոգևոր և մարմնաւոր թշուառութեանց դէղ և գարման
հայթհայթելու: Իւր գովասանքը կատարեալ չ'ըլլար՝
եթէ հոգւոց փրկիչ ըսուելէ զատ՝ չը կարենայ կոչուիլ
նաև հայր աղքատաց: Բայց երբ այս երկու համբաւը իր
վրայ միացած կը տեսնուի, ան առենը երկինքն ալ երկիրս
ալ զինքը կ'օրհնեն, և իւր քահանայական առաքելու-
թիւնը կատարեալ կ'ըլլայ: Այս վերջին կարծին վրայ ա-
ղէկ մը քննենք զմեզ, հասկընալու համար թէ արդեօք
սէրերնիս հոս նկարագրածներուս համաձայն է:

Կը սիրե՞նք մենք զաղքատները. արդեօք այն գոր-
վալից վշտակցութեան սիրով կը սիրե՞նք զանոնք, որն որ
սիրուած անձին այնչափ ախորժելի կ'ըլլայ: — Դատա-
պարտուած սրտի մը Ձմմարիտ պատկերը, կ'ըսէ Հայր
Սիւրէն, հարուստ անձ մըն է, որն որ իւր գեղեցիկ զար-
դարուած տանը մէջ շատ հանգիստ կ'ապրի, որն որ իւր
ժամանակը շքեղութեան, խաղերու և զբօսանայ մէջ
զուարճանալով կ'անցընէ... և աղքատները ու ողորմելի-
ները՝ երբև ոչինչ արժող բան մը կը կարծէ: Ախկայ է
այս չարաբաստիկ հարուստը՝ գժոխքը գատապարտուողը: —

Աղքատաց կ'օգնե՞նք արդեօք: Մեր բարեգործու-
թեամբը ցոյց տուած ենք որ ամէն մեկերնիս երկնց հա-
մար մեկմեկ հայր ենք: Արդեօք կը զրկե՞նք զմեզ կերա-
կուրէ, հագուստէ, տան կահ կարասիքէ, հարկաւոր
չ'եղած գրեանքներէ, զորոնք գնելու փորձութեան մէջ
կը դանուինք, Յիսուսի Քրիստոսի աղքատաց սիրոյն հա-
մար, որոց ամէն բանէ յառաջ կ'ուզենք կերակուր և
մխիթարութիւն տալ երկնց թշուառութեանց մէջ:

Ակնդետութիւն կ'ընե՞նք աղքատաց՝ անոնց սիրելնիս
հասկընելու, զանոնք մխիթարելու և համբերութեան
և քրիստոնէական կենաց յորդորելու համար:

Աղքատաց օգուին համար արդեօք հարուստներուն
եղբայրսիրութիւնը չարժէլու կը ջանա՞նք: Անոնց հա-
մար միջնորդութիւն կ'ընե՞նք: Պատշաճ պատասխանը

կու տա՞նք աշխարհականաց առարկութեանցը, որոնք ստ-
ւերաբար կ՚ընեն աղքատաց ողորմութիւն տալու պար-
տաւորութենէն զերծնելնիս համար:

Այդեօք առատաձեռնութեան օրինակ կու տա՞նք: Մի՛ թէ մեր քահը չի պարպած՝ հարուստներուն չը դի-
մելու համբաւը ստացե՞ր ենք: Մի՛ գուցէ մի միայն ու-
րիշներուն ըրած ողորմութեան բաշխիչը ըլլանք, և ոչ թէ մեր անձնական ողորմութեանց:

Մեր եկամտից գործածութիւնը «աստուածաբա-
նական» կանոնաց համաձայն է: Այդեօք Աստուծոյ մե-
ղի պարգեւած ժամանակաւոր բարեաց աւելորդը մեզի սեպհական ի՞նչք կը կարծենք թէ աղքատաց հայրենի ժառանգութիւն: Այդեօք այս աւելորդին մէկ մասը ան-
գործ պահած չի՞յանցաւոր դատարկութեան մէջ: Եւ ղայն գատարկութենէ աղատած ասե՞ննիս, այնպէս գոր-
ծածե՞ր ենք, որ ուրիշին գայթակղութիւն չը պատ-
ճառէ:

Եղբայրսիրական գործքեր հատատելու ջանագիր կ՚ըլլա՞նք, որոնք նոյն իսկ մեր բնակած տեղը կրնան հի-
մնովիլ: Այսպիսի հիմնարկութիւններ առաջարկելու մէջ կը փութա՞նք մենք առաջինը ըլլալու, որով պատիւ և յարդ աւելցընելով մեր քահանայութեան, որն որ սի-
րոյ գործոց մէջ ամենեւին պէտք չէ որ աշխարհականնե-
րէն վար մնայ:

Վերջապէս երբ աղքատաց Հմայրիա բարեկամ, բարերար և հա՞յր ենք: Եւ այնպէս ալ ըլլալու արդեօք համբաւը ունի՞նք թէ ոչ:

112. «Հիւանդաց ու վշտացելոց այցելութիւն կ՚ը-
նէ և կը միխիթարէ»: Ի՞նչպէս կը վարուի՞նք այսպիսինե-
րուն հետ: Այդեօք կը փութա՞նք հայրհայրենելու այն միխիթարութիւնները, որոց կարօտ են այնչափ հիւանդ-
ները, որոնք ոչ միայն հիւանդութիւնենէ՝ այլ մանա-
ւանդ անոնէր և անխնամ ըլլալնէրէն կը տագնապին: Այդեօք այն փափուկ սիրով այցելութիւն կ՚ընե՞նք, որն որ գոնէ քանի մը վայրկեան իրենց ցաւերը սփոփելով, կը սակաւ զերծնէ երախտագէտ սրտիւ ըսելու, որ մենք

ենք իրենց Հմայրիա և մտերմագոյն բարեկամները: Մի՛ գուցէ միայն պաշտօններէս պարտաւորուած իրենց այ-
ցելութիւն կ՚ընենք. երբ քահանայի կարօտ կ՚ըլլան, զի-
րենք տեսնելու զանց ընելով՝ երբ հիւանդութենին թե-
թեւ է, և բոլորովին դադարինք այցելութիւններէ՝ տուբը խորհուրդները մատակարարելէն վերջը, և այսպէսով զանց ընելով բարի մահուամբ մեռնելու ձեռնտուու-
թիւնիս: Մէկ խօսքով ըսեմ, ամէն հիւանդներուս վրայ սէր և եռանդ ունենալու համբաւը ունի՞նք:

Ո՛հ, ո՛ւր էր թէ յայտ մասին խիղճերնիս զմեզ յան-
դիմանելու բան մը չի գտնէր: Աշխարհքիս վրայ տառա-
պող միայն հիւանդները և աղքատները չեն: Ո՞վ կրնայ մէկիկ մէկիկ համրել մարդկութեան բոլոր թշուառու-
թիւնները: Խիղճ ողորմելիները, դառնակսկիծ ցաւերուդ և տառապանացդ մէջ ո՞վ զձեզ պիտոր մխիթարէ: Այդ-
պէս է որ անտարբերութիւնը զձեզ կը մոռնայ, բայց սէրը երբէք զձեզ չի թողուր. ահաւասիկ քահանան, ահա-
ւասիկ այն անձը՝ որ հետևներդ կը պտըտի, միխիթարու-
թեան բալասանը սրտերուդ մէջ թափելու համար, ո-
րուն գաղանիքը իրմէ աւելի ոչ ոք կրնայ ունենալ այս աշխարհքիս մէջ:

Յայտ մասին ալ սուբը քահանային նմանելու կը ջանա՞նք: Յօժար սրտով թշուառներուն և տառապելոց կ՚երթա՞նք, գժբաղդութեան մը պատահած ըլլալնին լսածնուս պէս: Այսպիսի պարագաներու մէջ սրտերնիս հակե՞ալ է այն տուներուն, ուր ողբոց և հառաչանաց ձայնը միայն կը լսուի: Այդեօք հաճութիւն մը կը զգա՞նք դժբաղդները միխիթարելու, հաւատոյ, յուսոյ, համա-
կերպութեան խորհրդածութիւններ ընելով. և այն սի-
րալիր ու քաղցր լեզուն գործածելով՝ որ լսողը կը չինէ, և գործածողին պչնուն վնաբերան օրհնութիւնները թա-
փել կու տայ:

113. Այսչափս բաւական ըլլայ, թէև այս նիւթիս վրայօք ըսուելիքներուն հարիւրին մէկ մասն ալ դեռ ևս ըսած չ՚ըլլանք:

Ինչպէս կը տեսնէք, սիրելի եղբայրակիցք, երկրիս

վրայ մեր առաքելութիւնը երաշխիք աստուածային է։ Մեր սիրտը միայն մէկ գերդաստանի մը նեղ չրջանակին մէջ սեղմուելու և դադրուելու չէ։ Եկեղեցին կուսակրօնութեան պարտքը վրանիս դնելով՝ ուղեց մեր սիրոյ սահմանը ընդարձակել և ընդհանուր ընել։ և վոխանակ քանի մը անգամներէ բաղկացած գերդաստանի մը, մեզի որդեգիր ըրաւ երկրիս վրայ դանուող բոլոր Թշուառ տառապեալները։

Ըանանք ուրեմն, յարգոյ եղբայրակիցք, բանանք սրտերնիս այս սիրոյն։ Այս բոլոր աշխարհքիս սիրելի առաքելութիւնը մեզի միշտ նեցուկ և առաջնորդ ըլլայ։ Խորհուրդնիս, խօսքերնիս, աշխատութիւննիս, պաշտօննիս, գործքերնիս և բոլոր ամբողջ կուռքիւննիս սիրոյ հոգւով զարգանայ, որն որ քրիստոնէութեան հիմը և գոյութիւնն է։ « Լուսն օրինաց սէր է » [1]։ Երջանկութիւննիս ողորմութեան գործոց մէջ պիտոէնք, և օր մը պիտոր գանենք զայն այս գործքերուն մէջ։ Ո՛հ, այո՛, անտարակոյս պիտոր գանենք. վասն զի նոյն ինքն Յիսուս Քրիստոս է, որ հաստատեաւ կը խոստանայ. « Եղանէ՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն » [2]։

ԳԼՈՒԽ Է.

Հեզութիւն — Անոր հարկաւորութիւնը — Գործադրութիւնը — Անկից հրամայուած ու արգիլուած բաներ։

114. Հեզութիւնը և եղբայրսիրութիւնը այն առլիճան մեկմեկու նման առաքինութիւններ են, որ երբ կրօրգին վրայ այնչափ երկար խօսեցին վերջը, կարծես թէ անտեղի է առաջնոյն վրայ խօսիլը։ Սակայն է որ կըրնայ մեկը եղբայրսիրութեան մէջ պակսիլ՝ առանց հեզութեան դէմ մեղանչելու. բայց չի կրնար մեկը պակսիլ հեզութեան դէմ՝ առանց մի և նոյն ատեն եղբայրսիրութեան դէմ ալ մեղանչելու։ Անիկա ճշմարտութիւն մըն է, որուն վրայ համոզուելու համար ուրիշ բան պէտք

1 Հռովմ. ժԳ. 10։ 2 Մատթ. Ե. 7։

չէ, եթէ ոչ նախընթաց գլուխը կարդալ, որուն մէջ թէ եղբայրսիրութեան և թէ հեզութեան հակառակ քանի մը պակասութեանց վրայ կը խօսուի։

Հեզութեան առաքինութիւնը ամենուս համար ալ այն աստիճան բացարձակապէս հարկաւոր է, որ Յիսուս Քրիստոս յատուկ օրինակովը կը սորվեցնէր։ Եւ նշանակելու արժանի բան մըն է, որ այս մեր աստուածային Փրկիչը, երբ միւս ամէն առաքինութիւնները վարդապետութեամբ և օրինակներով կ'ապսպրէր և կը հրամայէր, միայն հեզութեան և խոնարհութեան մասնաւոր վարդապետութիւնը իրեն անձին կը սեպհականէր. « Ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ » [1]։

« Ուսարուք յինէն ». — Ո՛վ փրկիչ իմ, կը կանչէ հոսանել Պաւլեայեան սուրբ Վինկենտիոս. ինչպիսի խօսքեր են ասոնք, ինչպիսի երջանկութիւն մըն է մեր քեզի աշակերտ ըլլալը և այնպիսի կարճառօտ ու գերազանց դաս մը սորվելը, որ զմեզ քեզի կը նմանցընէ։ — Ընթերցողներուս համբերութիւնը պէտք էր վչտացընէինք եթէ ուզէինք մի առ մի չարել հեզութեան հարկաւորութեան ապացոյցները. ուստի միայն գոհ կ'ըլլանք քանի մը խօսքով յիշելու, որ այս առաքինութիւնը պարզ հաւատացեալին համար աւելի հարկաւոր է քահանայից։ Անպատուղ է եռանդը, եթէ ժողովրդեան վստահութեան, յարգութեան և սիրոյն վրայ կըմենած չէ։ Թէպէտև քահանան աստուածային իշխանութեամբ խօսի, թէպէտ անոր վոխանորդն ըլլայ և իրաւամբ սպառնայ մեղաւորաց ամենաստուեկ պատիժներըը, այսու ամենայնիւ, որովհետև այս պատիժներըը հնմայ ոչ տեսնուած և ոչ ալ չօչափուած են, — վասն զի առ ձեռն չունի այն գործիքներըը որ ունի քաղաքական իշխանութիւնը՝ պատժելու չարագործ ապստամբներըը, — կը հպատակին եթէ հպատակիլ ուզելու ըլլան. ինչպէս որ իրօք ալ չեն հնազանդիր՝ երբ քաղցրութեամբ յորդորելու տեղը՝ խստութեամբ կը հրամայէ ու կը կառավարէ. երբ իրեն դառնութեամբ չափեն աւելի կրակո-

1 Մատթ. ժԱ. 29։

տուրեամբ և կծու յանդիմանութիւններով հոգիները ալ սրտերն ալ իրմէ կ'օտարացընէ, այնուհետև ալ ինչ բարիք կրնայ ընել: Ինչպիսի խոչընդոտներ ամէն վայրկեան մէջ տեղ պիտոր չելլեն:

Աչերցուցէք նաև գայթակղութիւնը, զոր կրնայ տալ քահանան, երբ հեզութեան հակառակ մնալութեան դէմ կռուելուն տեղը, ինքը անձամբ ցասկոտ ու զայրացոտ երևնայ: Շատ քիչ ախտեր կը գտնուին որ ասկից աւելի ներելի ըլլան աշխարհականաց համար. բայց քահանայի մը վրայ այս ախտը անտանելի է: Քահանայ մը բարկացած ... ինչ գայթակղութիւն: Ուստի առաջադրենք անոր դէմ կռուելու, և կատարեալ յաղթութիւն մը չընդունիս վար չդներնք, թէև այսպիսի յաղթութիւն մը Սալէզեան սրբոյն Փրանկիսկոսի նման տասնևութ տարուան շարունակ մրցութիւն և տաժանելի ջանք մը արժէրու ալ ըլլայ:

115. Ահատասիկ քանի մը նշանակներ, որոնցմով կրնանք ճանչնալ հեզութենէ զուրկ ըլլալնիս:

« Արդեօք ամբարտաւա՞ն ենք »: Զգուշութիւն ընենք, միայն խոնարհութեան առաքինութիւնը չէ որ ամբարտաւանութիւններէս կը վտանգէ, այլ խոնարհութեան մտերիմ բարեկամ՝ հեզութիւնն ալ շատ անգամ այն ախտին զոհ կ'ըլլայ: Ուշադրութեամբ զննենք և կը տեսնէք որ բարկութիւնը ամբարտաւանութենէն, և « ես » նախատակաւ սեպելէ յառաջ կու գայ:

Ոմանց համար և անձնական վարկմամբ կոպտաբար յիմարացած մարդը կը կարծէ՝ որ ամէն ինչ իրեն պատշաճի. եթէ մէկը զինքը խայթելու ըլլայ, շուտ մը ինքն իրմէ դուրս կ'ելլէ, և բարկութեամբ իւր արժանաւորութեան վրէժը առնելու կը ջանայ:

Ընդհակառակն ճշմարտակից խոնարհը միշտ չափաւոր կը գտնուի. իւր անձնական անարգութեան ըզգացմամբ լեցուն, երբեք մտքին չ'անցուներ որ ըստ արժանւոյն անարգուած ըլլայ. ուստի և բարկութիւնն ալ իր վրայ բռընկելու համար նիւթ մը չի գտներ: Ուրիշին խոնարհ ըլլանք, որպէս զի թէ խոնարհութեան և

թէ իրեն անբաժանելի ընկեր հեզութեան դէմ չի մեղանչենք:

116. « Ցասկոտ բնութեան տէր ենք »: Սրտերուս մէջ գաղտնի կրակ մը կը զգա՞նք որ մեզի դէմ եղած ամենաթեթև հակառակութեամբ ալ բռընկելով կը բորբոքի, ան կայծին նման որ ակնթարթի մը մէջ պողպատով զարնուած գայլախազէն դուրս կը ցաթկէ: Մեծ զգուշութիւն ընենք. այս բնաւորութեան ցասկոտութիւնը, եթէ մարելու համ գոնէ տկարացընելու հոգ չի տանինք՝ խեղդերնիս կը շփոթէ, գատողութիւննիս կ'ախտաւորէ, հաղար տեսակ յանցանքներու մէջ կը ձգէ. այնպիսի անխոհեմութիւններ ընել կու տայ, որոնք մեզի շատ ծանր նատելով ատելի ալ ժողովրդեան ակնածութեան և գայթակղութեան առիթներ կը մատակարարեն:

Ամէն ճիգ թափենք այս բնական բորբոքը մարելու. և երբ կը զգանք որ երակներուս մէջ կը սկսի, երեսնիս կը բռընկի, և բերանիս գրեթէ ակամայ կը բացուի, ու դէրաբուխը դուրս ժայթքելու կը սպառնայ, ան ատենը բերանիս դոցենք, ու ոչ խօսք մը խօսելու, և ոչ ալ գործք մ'ընելու թողունք: Լռենք, այո՛, ան ատենը լռենք. կամ մանաւանդ թէ խօսինք, բայց մի միայն Աստուծոյ հետ, ըսելով. « Օգնեա՛ ինձ տէր.... Ե՛կ տէր իմ Յիսուս, ե՛կ »:

117. « Արդեօք պատուասէր և հակառակասէր բնաւորութիւն ունինք, որն որ ուրիշի խորհուրդներուն դէմ դնելու և անոնց հակառակելու հակեալ ըլլայ »: Մեծագոյն զգուշանանք, վասն զի այսպիսի բնաւորութիւնը սասկ կը սիրեն մարդ և բարակ քննութիւններու զբաղիլը: Եթէ բանի մը վրայ վճիռ տալու ըլլաս որ շատ բացայայտ չ'ըլլայ, պէտք է ապահով ըլլաս այսպիսի բնաւորութեան տէր մարդկանց քեզի հակառակելուն վրայ: Անկասկածելիքդ առաջարկութենդ ամենամանր մասնութիւններու կը բաժնեն, և փաստերու ահեղ հրետանիները այնպիսի կէտի մը դէմ ուղղելով, որն որ քու մեծութիւնդ չէ, կը ջանան քու փաստերուդ ակարութիւնը, և իրենց պատճառներուն զօրաւոր ըլլալը ցու-

ցընելու. և բոլոր այս աշխատութիւնը կը կրեն, չէ թէ
ընչաքաղցութիւնը պաշտպանելու, այլ իրենց վիճելու և
անձնական կարծիքը յամառութեամբ պաշտպանելու
հակումներն յագեցընելու համար: Ախսիսի բնաւորու-
թեան տէր մարդիկ, որ սուրը ձեռքերնին՝ քու իրաւա-
ցի և արդար կարծեացդ դէմ կը մաքառին, նոյն եռան-
դեամբ անոր հակառակ կարծիքը պաշտպանելու ալ
գժուարութիւն մը չեն զգար. որուն նաև ախոյեան կը
հանդիսանային թէ որ դուն նախ այս և ոչ թէ այն կար-
ծիքը պաշտպանած ըլլայիր:

Մենք այսպիսի մոլեռանդին մէկ քանիները ճանչցանք,
որոնց հետ խաղաղ կեանք անցընելու համար, խոհեմ և
զգաստ մարդիկ՝ խօսակցութեան մէջ իրենց կանոն դրած
էին՝ անունդ մէկ յառաջ չը խօսելու: Խօսակցութեան առեն
այսպիսի հակառակասէր լեզուներ դանուածին պէս,
խօսքը սկսելու պատիւը միշտ անոնց կը թողուին, և կա-
րևոր նիւթերէ զատ՝ « վան խաղաղութեան », միշտ
ընդունելի կը սեպէին անոնց կարծիքները:

Գուցէ հարցուի թէ ինչպէս այս հակառակասիրու-
թեան ախտը կարող ըլլայ հեզութեան ինքնասէր, մինչդեռ
կրնայ առանց բարկութեան յայտնուիլ: Կը պատասխա-
նենք, որ շատ անգամ կը պատահի: Եւ իրօք մի թէ կարելի
է որ միշտ և ամեն բանի մէջ ուրիշի խօսքերուն հակա-
ռակութեան առեն, դիմացինը այնպիսի քաղցրաբարոյ
մէկին ըլլայ՝ որ դէմս չի վերցընէ ու խօսքին վրայ չի
պնդէ, մանաւանդ երբ իրաւանց իւր կողմն ըլլալուն
վրայ ապահով ըլլայ:

Ակնյ զատ հակառակասէրը մարդկանց վրայ կծու-
ութիւն և գառնութիւն մը կը տեսնուի, որ ի բարկու-
թիւն կը շարժէ. որն որ եթէ բռընկի, կրնաք դուշակել
թէ երկու կողմանէ ալ ինչպիսի խօսքերու հեղեղներ,
ինչպիսի կրքոտ և տաքցած վէճեր և մեկմեկու դէմ կծու
խօսքեր կը լսուին: Երբեմն այսպիսի վէճեր սրտի մէջ
տեսակ մը գառնութիւն կը թողուն որ երկար առեն կը
տևէ:

Այս տանը այսպիսի վէճաբանութեան չար հո-

դին. երբեք անօգուտ վէճերու առիթ չի տանք, և եթէ
բանուած ըլլանք՝ տեղի տալով հեռանանք: Եթէ վէճա-
բանութիւնը հարկաւոր կամ օգտակար է, անտարբե-
րաբար և առանց կրքի կարծիքնիս ղրկեցինք: Ճշմար-
տութիւնը պէտք է որ վհատութեամբ և պարկեշտու-
թեամբ պաշտպանուի. և այսպէս ալ կը պաշտպանենք,
եթէ միայն անոր յաղթանակը մեզի նպատակ ունեցած
ըլլանք: Բայց եթէ վէճաբանութեան մէջ ուրիշ վախճան
մը չունինք, եթէ ոչ ճարտարախօս ըսուելու սնափա-
ռութիւնը, անշուշտ կրակոտ, յանդուգն, սնապարծ և
դուցէ նաև բանազբօսիկ և անընդունակ ալ ի՛ ըլլանք:

118. « Խոժռուելու և վշտանալու դիւրութիւն ու-
նինք արդեօք »: Գուշանանք, վշտանալու դիւրութիւնը
շատ քիչ անգամ կը համաձայնի հեզութեան հետ: Ամեն
օր ընկերութեանց մէջ տեսնուած ախտերուն մէջ շատ
դիւրութեամբ վշտանալու հակումն աւելի անտանելին
չի գտնուիր: Եւ իրաւցնէ ասկից աւելի ինչ խեղճու-
թիւն կրնայ ըլլալ որ սովորաբար այնպիսի մէկու մը հետ
կենցաղավարիլք, որ եթէ զեզ բոլորովին իրեն թշնամի
տեղ դրած չէ՝ գոնէ բարեկամ ալ չի ճանչնար: Ով որ այս
դիւրաւ վշտանալու ախտը ունի, ուրիշ բան չի դիտեր՝
եթէ ոչ սխալմունքնիդ բռնել: Որչափ որ ի՛ ուզէք սէր և
մարդասիրութիւն ցոյց տուէք. եթէ անգամ մը միաքը
դնէ, որ իր անձը ձեզի սիրելի չէ, այնուհետև ինչ ալ
ընէք ամենևին հաճելի չ'ըլլար: Եթէ սէր և յարգութիւն
ցուցընէք, չողոքորթութիւն կը կարծէ. այնպէս որ չէք
դիտեր թէ ինչ ընէք իրեն հաճելի ըլլալու համար:

Այս մոլութիւնը այնչափ աւերի պիտոյ և հատ-
արմատ է, որչափ որ մեզին և ոչ ի՛ երեսիդ այս ախտը
ունենալը: Դատողութեան մէջ ինքը զինքը անսխալ կը
կարծէ, և որչափ որ աշխատուի իւր սխալմունքը ցուցա-
նելու, մանաւանդ իր կարծիքէն չի հեռանար: Քանի՛ քա-
նիները այս տողերը կարդալու առենին պիտոյ ըսեն,
թէ ատոր է. բայց առանց կուրծքերնին զարնելով ըսե-
լու, թէ « դու ես այն այն »:

Այսպիսի տրամադրութեամբ յայտնի է որ սովո-

բաբար հեղուԹեան հակառակ կը վարուի : Եւ Ի՞րաք գԺուարի չէ տեսնելը որ երբ մեկը շռայլով վչսանալու դիւրուԹիւնը ունի, բնականապէս սրտին մէջ գառնուԹեան և հակառակուԹեան բողբոջը կը պահէ, որոնք յետոյ անխոհեմ խօսքերու, անկրաւ ամբաստանուԹեանց և երբեմն ալ այնպիսի տեսարաններու պատճառ կ՚ըլլան՝ որով սէրն ալ, հեղուԹիւնն ալ յօդս կը ցնդին :

119. « Արդեօք բնականապէս ներողամիտ չ՚ըլլալով, խստուԹեան հակեաւ ենք » : Զգուշանանք. այս աստուածային փրկչին անձառելի մարդասիրուԹեան և հեղուԹեան հակառակ հակումը, քաղցրաբարոյուԹեան դէմ մեղանչելու կը նախապատրաստէ : Ա՛յսպէս, զոր օրինակ, տաքնալով բարկանիլ և գրեթէ բարկուԹիւն զգալ, երբ ուրիշին ըրած անմտագրուԹեանը կամ յանցանքին համար համբերել պէտք էր. չկամեցուԹիւն չընդունիլ, կամ տկարուԹեան և թեթևուԹեան չը տալով, ամենայն ինչ մտածուած չարուԹեան արդիւնք սեպել. բարկուԹեամբ յանդիմանել առանց պատասխանի առնելու և միջոց տալու, միայն մեր կիրքը թափելու հաճուԹեան համար. վերջապէս չափազանց խստուԹեամբ պատժել՝ առանց պատիժը յանցանքին համեմատելու : Մի՛ թէ այս ամենը հեղուԹեան հակառակ բաներ չե՞ն :

Ո՛հ, թէ որ աստուածային օրինակը միշտ աչքերուս առջին ներկայ ունենայինք, միայն այս տեսարանը ինչպիսի փոփոխուԹիւններ կրնար ընել մեր վրայ : Անիկա՝ որ ամենուն հետ բարի, հեզ, ներողամիտ և զթասէր էր : Անիկա՝ որ զՅուդան երեն բարեկամ կը կանչէր, և ա՛մենուին յետ չի քաշուեցաւ, այլ յօժարուԹեամբ ընդունեցաւ այն նենգամիտ ուրացողին համբոյրը : Անիկա՝ որ առանց բառ մը արտաբերելու և չփոթած երևնալու, Հերովդէսին յիմար և կայլափայլն ալ հայհոյել ըսուելու համբերեց : Անիկա՝ որ համբերատար համակերպուԹեամբ կրեց ցաւալի վշերով պսակուիլը, անողորմ ձաղկումը, անարգ ապտակը, անհատաւալի նախատանքը ծածկուած և կշտացած : Անիկա վերջապէս, որ խաչին վրայ իւր անսահման հեղուԹիւնը և սէրը կը պսակէր՝

նոյն իսկ վինաքը խաչողներուն համար աղօթք ընելով. « Հայր, Թո՛ղ դուցա, զի ոչ գիտեն զինչ գործեն »[1] :

Քահանայ Յիսուսի Քրիստոսի, որ եղբօրդ համար այդչափ քիչ ներողամտուԹիւն ունիս, ամեն և նուաստուԹիւն չե՞ս ըլլար տեսնելով քու Օրինակիդ վրայ այնչափ հեղուԹիւն և քու վրադ այնչափ խստուԹիւն : Զընե և ըստ այնմ ըրէ. « Տեսջիր, արասցես զամենայն ըստ օրինակին »[2] :

120. Սակայն այս հեղուԹեան առաքինուԹեան նկատմամբ զոր կ՚ուզենք ամէն քահանայի սրտի մէջ արմատացած տեսնել, մանաւանդ իմանալով՝ վերը ըսածնեբուս դործադրուԹիւնը տեսնենք :

« Արդեօք տղայոց հետ դաժանուԹեամբ և խստուԹեամբ կը վարուի՞նք » : Փոքր կղերանոցներու և դպրոցներու մէջ դանուած երիտասարդներու կրթուԹեան պարապող կամ պաշտօնը ունեցող քահանայի մը համար, ասիկայ ամենավատ տրամադրուԹիւն մըն է :

Կը դանուին այնպիսի քահանաներ՝ որ տղայոց բնաւորուԹեան յարմարելու բնաւին հակում մը չունին, մանաւանդ Թէ ըստ իմիք անտանելի կ՚երևին իրենց : Ա՛յս ողբալիներէն բան մը չեն կրնար ընել, ոչ մտա մը շարժել, և իրենց հասակին յատուկ կայտառուԹիւնը և զուարԹուԹիւնը ցոյց տալ, որ այս վերապատուելիները չը գժկամակին ու չի բարկանան : Ա՛յսպիսիներէն կ՚ուզեն որ տղաքը տղայ չ՚ըլլան, այսինքն ծերերուն վեհանձնուԹիւնը և ծանրաբարոյուԹիւնը ունենան : Ուստի և ամենափոքր ԹեթևուԹիւն մըն ալ ծանր յանցանքի պէս կը պատժեն. երբեմն քաղցր և սիրուն բառ մը չեն գործածեր. ամենևին քաղաքավար և քաղցր ժպիտ մը երեսներուն վրայ չի տեսնուիր, այլ միշտ կարծր, պաղ, խոժոռադէմ և խիստ երեսով, ու հրամայողական և ուժգնուԹեամբ հնչած խօսքերով կը սոսկացնեն այն փափուկ սրտերը : Եւ իմաստալուր արժանին այս է, որ այսպիսի վարմունք մը հաստատուԹիւն՝ և երիտասարդ ընտանեբնին կառավարելու մեկ հաւիկ ձամբայ կը կարծեն :

1 Դուկ. ԻԳ. 34 : 2 Երր. Ը. 5 :

Այսպէս վարուելով քահանայք գրեթէ միշտ այն տեսակ մարդիկ են, որ տղոց վրայ սէր չունենալով, կատարեալ հանդարտութեան մէջ կ'ուզեն ձեալ, միշտ կատարեալ հնազանդութիւն կը պահանջեն, չեն ուզեր երբեք ո՛և իցէ կերպիւ խռովիլ կամ անհանգիստ ըլլալ: Այնպիսի մարդիկ որ բնաւորութեամբ ծանրաբարոյ վարմունքի և խորին ուսմանց հակեալ են. ուսոյն և իրենց ու տղայոց բնաւորութեան մէջ այսչափ տարբերութիւն ըլլալով, թէ մէկ և թէ միւս կողմանէ միակերպ հակասութեան մէջ կը դանուին:

Այդ ասկից, կը կրկնենք, շատ մը պատճառներու համար ամենամեծ տրամադրութիւն մըն է: Տղաքը չի սիրելով և ոչ ալ անոնց առտղութիւնը հանդուրժելով՝ ամեն վայրկեան պոռալու, կանչելու և ոչինչ բաներու համար ալ ապաշխարանք դնելու աւելի կը դանուի: Երբեմն ալ բերանները անվայել խօսքեր կը փախցընեն, յորմէ և գործադրութեան ձեռք կը զարնուի, որոնցմէ սիրոյ ալ, հեզութեան ալ վնասանալու պատճառներ կը ծագին: Միւս կողմանէ ալ ուրիշ բան չի չահուիր, եթէ ոչ այսպիսի տղայոց դժկամակութիւնը, որոնք ծերութեան հասակներուն մէջ ալ՝ կրած ծանր պատիժներուն դառն յիշատակը կը պահեն: Ուսկից շատ յայտնի կը տեսնուի որ վատահութիւնը կը կորսուի, և փոխանակ անոնց սէրը գրաւելու՝ զմեզ աւելի կ'ընենք. կը դողան այսպիսի՝ նեռուն խոստովանելու գնացած աւետնին, և եթէ կը խոստովանին ալ, միայն ստիպուած ըլլալնուն համար է, որոց խոստովանութիւնը այն աստիճան ազատ և համարձակ չէ, որ երբեմն սրբապղծութիւնն ալ մէջ չի մտնէ:

Զարագոյնը այն կ'ըլլայ, եթէ այս յիմար խստութիւնը ի մանուկսրի միայն քանի մը տղայոց ցոյց տրուելէր, որունք ընկերներուն մէջ աւելի չարաճճիները չեն. զոր օրինակ, խստութիւն գործածուելէր աղքատանեղրուս, ըմպամիտներու և կամ այնպիսի տղայոց դէմ, որոց ծնողքը ընկերութեան մէջ շատ պատուաւոր պաշտօններով վարուաւորուած չ'ըլլային: Եթէ, կ'ըսեմ, այսպիսի՝ նեռուն խոժոռադէմ դանուելով, միայն խելացիներուս,

ընորհալիներու և կամ հարուստներուս՝ զուարթ երես մը ցոյց տրուելէր, ո՜հ, այսպիսի վարմունք մը որչափ նուաստացուցիչ պիտոյ ըլլար անոնց համար, որ իրենց խոժոռադէմ մեծաւորներէն այսպիսի ընորհք մը երբեք չը տեսնելու դժբաղդութիւնը ունենային:

Ուսոյն և նոյն մանաւորութենէ խորհինք: Մեր աստուածային Վարդապետին նմանինք, որ ամէն բանի մէջ ուզեց մեզի կատարեալ օրինակ ըլլալ: Մինչդեռ օր մը բազմախումբ ժողովրդեան կարևոր խրատ մը կուտար, քանի մը կանայք իւր խօսքը ընդհատելէ չէին դադրիր, աղաչելով որ իւր օրհնած ձեռքերը տղայոց դնելուն վրայ դնելով՝ օրհնէր իրենց զաւակները: Այսինքն տեսնելով աշակերտները պատշաճ սեպեցին անոնց սաստել. « Իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ որ մատուցանէին »: Բայց Յիսուս ի՞նչ ըսաւ, ի՞նչ ըրաւ. լսեցէք. « Իբրև եհաս Յիսուս, բարկացեալ սաստեաց նոցա և ասէ. Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ ես, և մի արգելուք զդոսա, զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ:... Եւ առեալ զնոսա ի գիրկս՝ ձեռն եդ ի վերայ և օրհնեաց զնոսա »[1]:

Ուրիշ անգամ տղայ մը տեսնելով հասկըցուց մեզի, թէ որչափ սիրելի ենք իրեն այն անմեղ հասակներուս մէջ. « Առեալ մանուկ մի կացոյց ի մէջ նոցա, և ընդունեալ զնա ի գիրկս իւր՝ ասէ ցնոսա. որ միանգամ յայսպիսի մանկտւոյ ընկալցի յանուն իմ, զիս ընդունի. և որ զիս ընդունի, ոչ զիս ընդունի՝ այլ զայն որ առաքեացն զիս »[2]:

Այս վարդապետութիւնը որո՞ւ աւելի պատշաճ է, եթէ ոչ անոնց որ այս վարդապետութիւնը ընդոլին պաշտօնը կը շարունակեն:

121. « Այդեօք խոստովանութիւն լսելու աւետն հեզութեան դէմ կը մեղանչէ՞ք »: Թէ որ աւետն մը կայ, որուն մէջ այս առաքինութիւնը հարկաւոր ըլլայ, աստուածնկայ է, երբ այնպիսիներուն տագնապներուն խոստովանութիւնները կը լսուին, որոնք կը դողան

1 Մարկ. ժ. 13—16: 2 Մարկ. թ. 35, 36:

խոստովանահօր ոտքերուն առջին եկած առեներին. որոնք գուցէ մեզ անգամներն աւելի առաջադրութիւն դրին չի գալու, և գալու ալ չի համոզուեցան, եթէ ոչ կաթոգին և գթասիրտ ընդունելութեան, անկեղծ և ներողամիտ գթութեան յուսով: Ինչպիսի՛ գժբաղդութիւն եթէ յոյսերնին պարապ ելլէ. եթէ փոխանակ հեղութիւն ու քաղցրութիւն գտնելու, անպատեհ խստութիւն, գաժանութիւն, թթու երես առնեն, և նաև խիստ յանդիմանութիւններ լսեն:

Ո՛հ, զգուշանանք այսպիսի վարմունքներէ, սիրելի եղբայրակիցք. և չը կարծենք որ խոստովանողիք պիտի և անղգայ ըլլալով, մենք ալ այնպէս ըլլալու ենք: լուսաւորենք, կրթենք, և պէտք եղած ժամանակ յանդիմանենք նաև, բայց հեղութիւնը մեզի ուղեկցոյց և առաջնորդ ըլլայ: Կանոնները ի գործ դնենք, սակայն միշտ առնոց խստութիւնը մեր վարմանցը և խօսքերուս քաղցրութեամբը բարեխառնելու հոգ տանելով:

122. « Արդեօք քարոզութեան մէջ հեղութեան դէմ կը պակսի՞նք »: Իրաւցընէ այսպէս կ'ըլլար, եթէ առաքելական նախանձիս քիչ մը խստութեամբ և դառնութեամբ խառնուած ըլլար, որն որ փոխանակ ունկնդրոց հաճութիւնը չահելու, զայն կը կորսնցընէ: Այսպէս, զոր օրինակ, եթէ աւետարանին միտքը չափազանցելով՝ աստուածային օրինաց լուծը եղածէն աւելի ծանրացընէինք, զանիկայ իւր ձիւէ քաղցրութենէն մերկացընելով, այնպէս որ ալ չը կրնար ըսուիլ. « Լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի »[1]: Այսպէս կը պատահէր եթէ սուկ երկիւղալից և զարհուրելի նկարեր ու վայ միայն խօսէինք. և աւելի սփոփիչ և ախորժելի ձևիս առութեանց վրայ խօսելու առեներս ալ, խիստ և չափազանց ծանր կերպարով վարուէինք: Այսպէս կ'ըլլար վերջապէս, եթէ քարոզութեան մէջ անարգական խօսքեր ուղղուէին մանաւանդ մարգկանց՝ եթէ ոչ ուղղակի, զոր երբեք չենք կրնար ներելի դատել, որոնք գէթ այնչափ ալ գոց չ'ըլլային որ գիւրաւ հասկցուէին որու դէմ ըսուած ըլլալնին:

1 Մատթ. ԺԱ. 30:

Ինչպիսի՛ մահաբեր և հրապարակական հարուած մը պիտոր ըլլար այսկայ Յիսուսի Քրիստոսի չափազանց սիրելի առաքինութեանը, եթէ այս վերոյիշեալ թերութիւնները ի գործ դրուէին այնպիսի պաշտաման մէջ, որ բոլորովին սէր և հեզութիւն ըլլալու էր:

123. « Պաշտօնեներուս կարօտ, կամ գործքով մը հեռացընես յարաբերութիւն ունեցողս և եղէ անձինք կրնան միշտ վարմունքնիս գովել »: Քահանան աշխարհքիս վրայ Յիսուսի Քրիստոսի երեսփոխանը ըլլալով, այնպիսի գիրք մը ունենալու է, որ ամէնքը գիւրաւ կրնան զինքը տեսնել և գտնել, ինչպէս որ կ'ընէր Յիսուս Քրիստոս: Ինքը ամենուն հետ անխտրաբար պէտք է մարդասիրութեամբ՝ ընորհալի և քաղաքավար կերպարով վարուի, այնպէս իբրև թէ ըսէր. « Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ »[1]: Այսպէս վարուելով կրնայ ապահով ըլլալ հաւատացելոց յարգանաց, վստահութեանը և սիրոյն վրայ. որոնք չինքն հայր մը կը տեսնեն, որուն ամենայն խաղաղութեամբ կրնան սրտերը բանալ. և նոյն իսկ ամենահպղծ մեղաւորները՝ իր անայլայլելի քաղցրութենէն չարժած ու յաղթուած, իւր ոտքերուն առջին կու գան թողուլու իրենց խեղճութիւնները, իրենց համար աստուածային ողորմութեան գործիք մը ըլլալու բարեբաղդութիւնը անոր հայթհայթելով:

124. « Մեղմ սորվին և սիրտ հպատակ անձանց հետ միշտ քաղցրութիւն կը գործածէ՞նք»: Գուցէ այսպիսիներուն հետ է որ շատ անգամ եղբայրսիրութեան դէմ կը մեղանչենք, և ասկայ ալ անոնց հետ կենակցելէ և գործքի ու խօսքի աղաւութենէ չատաչ կու գայ: Ո՛հ, մեծամեծաց հետ պաշտաճ կերպարով վարուիլ կը գիտցուի, բայց մի և նոյնը չէ փոքրերու և հպատակներու հետ: Ոչ աւելի և ոչ ալ պակաս ըսած կը կարծենք. բայց վերջը աւելի ևս ձանձրացու համար կ'ըսենք, որ մեզի հպատակ անձանց նկատմամբ քաղցրաբարոյութեան դէմ գործած ամէն մեղքերնիս, մանաւանդ ալեկ ծառայուելու,

1 Մատթ. ԺԱ. 29:

կէտ առ կէտ հնազանդուելու, յարգութեամբ վարուելու, և շատ քիչ անգամ հակառակ խօսք լսելու բաղձանքէ յառաջ կու գան. որ ըսել է թէ այս հեզութեան դէմ սակաւութիւններս մահացուցման հոգի չունենալնիերնէս կը պատճառին: Սուրբ Փրանկիսկոս Պօրձեանն վանքի մը դուռը քանի մ՝անգամ զարնելէն վերջը, երբ կը տեսնէ որ դուռը չեն բանար, միտքը կը դնէ հոն բայ տեղ մնալու. երբոր ձիւնը փոնջի պէս վրան կ՝ինկնէր, և երբոր ուշ առեն դռնապանը դրանը զարնուելը լսմանալով կու գայ բանալու, ոչ կը յանդիմանէ և ոչ ալ կը բարկանայ, այլ մանաւանդ թէ մեծ հեզութեամբ ալ հետը կը խօսի: Ի՞նչպէս կրնայ ըլլալ: — Յայտնի է, սուրբ Փրանկիսկոս Պօրձեան շատ հեզահոգի և մահացուցեալ անձ մըն էր:

Իակ մենք ընդհակառակն փոքր հակառակութեան մը համար համբերութիւննիս կը կորսնցընենք, և ոչինչ բանի մը համար մեծ աղմուկ մը կը բանանք. սաստկով Աստուծոյ աչքին առջև մեղի դէմ սակաւութիւն մը ընդունիլն՝ շատ աւելի մեծ չարիք մը գործելով: Ինչո՞ւ համար. ըսե՞նք: — Վասն զի սուրբ Փրանկիսկոս Պօրձեանին հեզութեան և մահացուցման հոգիէն հազար մղոններով հեռու ենք:

Հեզութեան մեծ գաղանիքը՝ համբերել գիտնալն է: Համբերել սորվինք և ահա հեզահոգի կ՝ըլլանք. և այս առաքինութիւնը ունեցածնուս պէս, ամենայն ինչ մեզ անոր կը հնազանդի. արտերնիս հանդարտ և չափաւոր կ՝ըլլայ, կամքերնիս հպատակ և կարգաւորեալ, հոգիներնիս կարողութիւնները խաղաղութեան նպաստաւոր կ՝ըլլան, ինչուան նաև արտաքին վարմունքնիս անգամ նեղբին հեզութեան ազդեցիկ կ՝ըլլայ:

Մեզմէ սաստիկներու հետ անհամբերութիւններէ և փոքր բարկութիւններէ խոյս տալու, և զանոնք մնաս նաւոր փոյթեռանդութեամբ զսպելու պարտաւոր ենք. չէ թէ միայն քահանային առաքինութեանը սխալը գաղափար մը տալերնուն համար, այլ նաև՝ ըստ որում ստորին նեերը երբ ո և իցէ պատճառի մը համար անոր տունէն ելածին պէս, ամենևին խելօք չեն ըներ « առաջի ժողովեան » քարոզելու անոր փոքը պահառութիւննեերը, պատուոյն և համբաւին վնասով:

Ասպա ուրեմն հեզ և եղբայրասէր ըլլանք ամենուն հետ՝ ամէն կերպով, մեղի ստորակարգեալներուն հետ, ինչպէս ծառայներու, սպասաւորներու, պահապանապետներու, գործաւորներու հետ, այնպիսի հայրական բարութիւն մը ցուցընելով, որ անոնց սէրը մեղի գրաւէ: Եւ այս ամէնքը անտարակոյս Աստուծոյ սիրուն համար. բայց այսու ամենայնիւ ապահով ըլլանք որ Աստուած ի փոխարէն մեր հեզութեանը պիտոյ ընէ որ ստորակարգելոց ծառայութիւնը մեղի շատ աւելի ախորժելի ըլլայ, որ պիտոյ չի յայտնէր, եթէ խստութեամբ ու դաժանութեամբ վարուած ըլլայինք:

Սալէզեան սուրբ Փրանկիսկոսին նմանինք, որ ամէն քահանայական առաքինութենէ օրինակ է, մանաւանդ հեզութեան: Ծառայ մը ունէր, որուն չափէն աւելի ախորժելի էր դիմին. գիշեր մը շատ ուշ աւեն եպիսկոպոսարանը դառնալով ոտքերնի վրձակի մէջ դուռը դոց գտաւ. և բանալի չ՝ունենալով և կամ կորսընցուցած ըլլալով՝ սկսաւ դուռը զարնել: Բայց որչափ որ ուզէր կրնար զարնել, վասն զի բացող մը չէր ըլլար, եթէ սուրբը՝ որ մինակ լսած էր գրան զարնուիլը՝ անձամբ եկած չ՝ըլլար դուռը բանալու: Սակայն որչափ ցաւ եղաւ այն սուրբ եպիսկոպոսին զաղջոմելին այն տխուր վիճակին մէջ տեսնելը: Այսու ամենայնիւ ինչ կ՝ընէ: Ի դուռն շարժած՝ ձեռքին կը բանէ և սեղեակը տանելով զգեստը հանելու կ՝օգնէ. և այսպէս անկողնին մէջ պառկեցընելով կ՝երթայ անոր համար աղօթք ընելու: Չեռեւեալ առաւօտն, ծառան գիշերուան դէպքը յիշելով, թէ ինչպէս եպիսկոպոսը անձամբ դուռը բացած և այնչափ խնամք ցոյց տուած էր իր վրայ, բոլորովին չփոթած՝ ամօթիած կը վախնար անոր հանդիպելու. բայց սուրբը որ կ՝ուզէր զինքը տեսնել և դէմ առ դէմ երկու խօսք խօսիլ, զինքը կանչելով զարմանալի հեզութեամբ մը իրեն ըսաւ. — Բարեկամ, կարծեմ որ երէկ քիչ մը կեանդ էիր, այնպէս չէ: — Այս քաղցրալից խօսքերը մարդուն

կայծակի հարուած մը եղան. իւր անզուգական տիրոջ ոտքերը կ'նալով հազար Թողութիւններ կը խնդրէր, զոր սուրբն ընդունելը դժուարին գործ մը չէր. այսու ամենայնիւ քանի մը վրկարար խօսքեր անոր ուղղելու դիտմամբ, գիտէք ինչ ձամբայ բռնեց: Հանգիք այս աքանչելի օրինակին վրայ, և նմանելու ջանանք: — Այո՛, կը ներեմ, ըսաւ անուշ կերպով, բայց ուշադրութեամբ զննէ գինովութեան վնասակ, հազար դժբաղդութիւններ կրնան պատահիլ. կրնաս դեռևին կ'նալ, նախատական խօսքեր լսել, առողջութիւնդ կորսընցնել. բայց որ աւելի ջարն է, խեղճ հոգիդ կը կորսընցնես, զԱստուած կը վշտացընես, դայթակղութիւն կու տաս. և եթէ այն պիսի վնասակի մէջ մեռնիս, ինչ պիտոյ ըլլաս, ինչպէս պիտոյ ներկայանաս Աստուծոյ առեանը: — Ծառան ինչուան արցունք թափելու չափ շարժած՝ կը խոստանայ բոլոր կենաց մէջ գինի չխմելու: — Ո՛չ, կ'ըսէ սուրբը, Աստուած այսչափ չի պահանջեր քեզմէ. սակայն իմ ըսածս քեզի շատ օգտակար կրնայ ըլլալ. կը հրամայեմ ուրեմն, որ ժամանակ մը ջրախառն գինի խմես: Հնազանդեցաւ, սիրելիս, ջանաց Աստուծոյ հետ հաշտուելու, և այսու հետև բարի քրիստոնեի մը վայելուչ կեանք անցընելու հոգ տար: — Ծառան հնազանդեցաւ, խոստովանեցաւ, բայց իւր բարի տիրոջմէն զատ՝ ուրիշ խոստովանահայր ընտրեց, զոր իր բոլոր կենացը մէջ հօր պէս սիրեց, և պահասութիւնը ուղղելով՝ հաստատուեցաւ ծառայ և բարի քրիստոնեի մ'եղաւ:

Կ'տրերը միայն չէն տեսներ թէ որչափ աւելի աղէկ են այս քաղցր և սիրալիր վարմունքը՝ շատ մը կրքոտ և դառն յանդիմանութիւններէ, որոնք երբեք չէն ուղղեր, և փոխանակ ուրիշին սէրը գրաւելու, եղածն ալ կը նուազեցընեն:

123. Հաւանական է որ ոմանք իրենց բարկութեան և անհամբերութեան գործքերը արդարացընելու համար, 'ի բնէ առ այս հակեակ ըլլալնուն վրայ համրուին, այնպէս որ պարապ բան մը ըլլայ զիրենք շտկելու աշխատութիւնը: « Ինձ ու գործ չտունիմ», գուցէ ըսէ մեկը.

ինչպէս որ ռամկօրէն կ'ըսուի, թէ « անիկայ քան զիս զօրաւոր է »:

Ո՛հ, անտարակոյս, քեզմէ աւելի զօրաւոր է, սիրեցեալ եղբայրակիցդ իմ. ինչպէս հարիւրաւոր ուրիշ բաներ, զորոնք Աստուած մեզի կը հրամայէ, և մենք միայն մեր կարողութեամբը չենք կրնար ի գործ դնել, բայց իւր աստուածային շնորհքով շատ գիւրին կ'ըլլան. « Յաւիտենական կարող եմ այնու՝ որ զօրացոյցն զիս »[1]: Ո՞ր կիրքերնիս կրնանք յաղթել, եթէ առնձարձակ Թողտալով ծոյլերուս և դողերուս պէս ըսուելու ըլլանք. « Ինչո՞ւ ընդդիմանալ, քան զիս զօրաւոր է »:

Այրդէն ըսինք, որ հեզութեան առաքինութեան ստացմամբ տանեւութ տարուան մշտատև կռիւ մը արժեց Սալէզեան սրբոյն Փրանկիսկոսի: Մի թէ կարելի էր որ նիզը իւր ժամանակին ամենահեզ և քաղցրաբարոյ անձը ըլլար, եթէ քանի մը պատերազմէ վերջը՝ զինքերը գետինը ձգած՝ ինքն ալ ըսէր, թէ դեմ դնելը օգուտ չունի, « քան զիս զօրաւոր է »:

126. Գուցէ կրկնէ մեկը, եթէ ասիկայ բացարձակապէս անկարելի չէ, այսու ամենայնիւ խոստովանելու է որ վերջին աստիճանի դժուարին է:

« Դժուարին »: Թող ըլլայ: Բայց ասկից ինչ կը հետևի: « Հարկաւոր է ». ուսան փախուստ չունի: Հարկաւորութեան դիմացը « դժուարութիւնը » ինչ կ'ըլլայ: Մանաւանդ թէ ինչ կընայ այն « դժուարութիւնը », երբ Աստը բարձրագոյն հարկաւորութիւններ կը հրամայեն անոր յաղթելու: Այրդ մի և նոյն է հեզութիւնն ալ, հարկաւոր է ձեռք բերել և ի գործ դնել, — Աստուծոյ հնազանդելու համար, — Յիսուսի Քրիստոսի նմանելու համար, — ընկերին շինութեան համար, — սիրտերը շահելու համար, — հոգիները փրկելու համար, — չարերէն արուած խոչընդոտները վերցընելու համար, — թշնամիները չնաչահաւ ընելու համար, — աստուածային օրհնութիւնները մեր պաշտօնին վրայ հրաւիրելու համար, — անթիւ մեղքերէ խոյս տալու

1 Փիլիպ. Դ. 13:

համար, — և վերջապէս սուրբը ըլլալու և քահանայական պաշտօններէն պահանջուած կատարելութեան հասնելու համար:

Ահա խորհրդածութիւնները մեզի սիրտ և քաջալերութիւն տան, և ըստ որում Աստուծով ամէն բան կըրնանք՝ որ մեր զօրութիւնն է, Աստուած վնտռենք՝ ինչ որ՝ ի մեզ չենք գտներ:

Ի վերայ այսր ամենայնի այնչափ ալ մեծ սեպելու չէ այս գժուարութիւնը, մանաւանդ երբոր անոր յաղթելու համար գոնէ ծանր փորձ մը ըրած չենք: Արդ խոստովանինք, սիրելեաք եղբայրակիցք, մենք մինչև հիմայ գուցէ դեռևս ի գործ դրած չ'ըլլանք այն ազդու և զօրաւոր միջոցներէն և ոչ մէկը, որոնք կրնան մեր բնաւորութեան թերութիւնները ուղղել. այսինքն բարութեան և անհամբերութեան դիւրագրգիռ ըլլալնիս: Եւ եթէ անցածին վրայ նայուածք մը ձգելու ըլլանք, հաւանականաբար պիտոր տեսնենք որ գուցէ չատ աւելի գժուարին և թանկագին յաղթանակներ կանգնած ըլլանք մեր չար բնաւորութեան վրայ քան զայն, որուն վրայ կը խօսինք: Ինչո՞ւ համար ան առեներ դէմ դրինք և յաղթեցինք: Վասն զի գիտէինք որ ուրիշ միջոց չի կայ, կամ յաղթել և կամ դառապարտուիլ: Իսկ ինչո՞ւ համար հիմայ որ աւելի ուժեղ և կռուի ընտելացած ենք, հեզութեան հակառակ պակասութիւնը չենք կրնար յաղթել: Վասն զի դեռ ևս փրկութեան յոյս ունինք: Ահա ասիկ ինչո՞ւ համար այնչափ քիչ ուժով և յամրոտութեամբ կը կռուինք: Մտածենք ուրեմն, և սիրտ առնենք դիտմամբ՝ վերոյիշեալ ազդու միջոցները կրկին մըտքերնիս բերենք. մեկ կամ աւելի մտածականներուս նկատ ընենք, ամենամեծ զգուշութեամբ հսկենք մեր վրայ, որպէս զի անհամբերութեան և կամ բարկութեան առաջին շարժուձեները ծնած չի ծնած զսպենք. չատ և կենդանի ու անկեղծ բաղձանքով աղօթք ընենք, որպէս զի Աստուած լսէ. և պիտոր տեսնենք որ այն վախցուած գժուարութիւնը ուրիշ բան չէ եղեր՝ եթէ ոչ անոտի երկիւղ մը, ձիշտ այն տուներնուն և տգեղ կերպարանքներու

նման, զորմնք տղայք գիշերը և հեռուէն տեսնելով կը դողան, բայց մօտիկէն գնտնելով կը խնտան:

Պաւլեայեան սուրբ Վինկենտիոս մաղձոտ բնաւորութեան, աչլոյժ հոգւոյ տէր և բարկութեան հակաձայնմըն էր: Արդ, ինքը սուրբ պարզութեամբ մը կը պատմէ թէ ինչ ըրաւ այս ախտէն առողջանալու համար: — Աստուած կը դառնայի, կ'ըսէ, և եռանդեամբ կ'աղաչէի որ այս դառն և դարչնելի բարքս փոխէր և քաղցր և բարեսէր հոգի մը տար. այսպէս Աստուծոյ չնորհիւ, և քիչ մըն ալ բնական եռանդը զսպելու համար ըրած ըղգուշութեամբս, քիչ մը ուղղուեցայ: —

Ասիկա իրաւցնէ զարհուրելի միջոց մը էր, որ իրեք բանի վրայ կը հայանայ. — անկեղծօրէն բաղձալ հեզութեան առաքինութիւնը ունենալու յորմէ զուրկ էնք, — սաստիկ եռանդով զայն Աստուծմէ խնդրել, — և վերջապէս ամենայն զգուշութեամբ հսկել անոր հակառակ շարժուձեները, հալնիւ թէ գլուխ վերուցած՝ զսպելու և հանդարտեցընելու:

Մենք ալ՝ ի գործ դնենք այս գերազանց միջոցը, որ այնչափ օգտակար եղաւ Պաւլեայեան սրբոյն Վինկենտիոսի, և ապահով ըլլանք որ մեզի ալ օգտակար կրնայ ըլլալ: Բայց էի խաբուինք, « կամեցութիւնը » կամքի տեղ չի գնենք. անկեղծաբար փափագինք, — եռանդեամբ աղօթենք, — ուշադրութեամբ հսկենք, — տաս մտօք պատերազմինք, և միայն կատարեալ յաղթութենէ վերջը զինաթափնիս վար ձգենք:

127. Գուցէ ըսողներ ալ ըլլան, թէ չափազանց հեզութիւնը թուլութեան և ակարութեան կը փոխուի. երբեմն ալ հաստատամտութիւնը հարկաւոր է:

Ասոր, ամենատոյգ. ոչ ոք կը հակառակի: Ճշմարիտ հեզութիւնը ոչ տկար է և ոչ ալ չափազանց ներողամիտ. և բարւոյն մէջ հաստատամտութեան ալ ոչ երբեք դէմ կը դնէ, որուն մանաւանդ թէ, ինչպէս կ'ըսէ Աբելլի, ընկերակից է, ըստ որում առաքինութիւնները ոչ երբեք կը վնասեն միմիանց հետ:

Պաւլեայեան սուրբ Վինկենտիոս կ'ըսէր, որ բա-

րութեան մէջ հեզահոգի և բարեսիրտին առեղծ՝ յայտա-
առ ու հաստատուն մարդ չի կրնար ըլլալ. ինչպէս որ
ընդհակառակն կը բնութեան ալ սովորաբար շատ խոխոտ
կ՚ըլլան, որովհետև ըստ հաճոյից և ըստ յուզման կրից
կը գործեն. ձիշտ այն հեղեղատներուն նման, որոնք
անձրևներուն յորդութեամբ կը ճոխանան, և յետ այնո-
րիկ կը ցամաքին. մինչդեռ գետերը որ բարի և հանդարտ
մարդկանց պատկերն են, առանց աղմկի հանդարտ կ՚ընթանան և երբեք չեն նուազիր: Այսպէս ընելով որչափ
որ կը տանի մարդկային տկար բնութիւնը, աստուածա-
յին բարձր խմաստութեանը կը նմանինք, որուն համար
դրուած է, թէ զօրութեամբ և քաղցրութեամբ իր ա-
մէն նպատակին կը հասնի՝ պատշաճ միջոցները ի գործ
դնելով. « Զկտի ի ծագաց մինչ ի ծագս զօրութեամբ, և
գարմանէ զամենայն քաղցրութեամբ »[1]:— Մի՛ սպրդենինք
այս երկու « զօրութեամբ և քաղցրութեամբ » բառերը,
և մեր գործոց մէջ մեզի կանոն բռնենք ինչ որ այս երկու
բառով գերազանցապէս մեզի արուած է:

Այս նիւթիս մէջ գլխ. խաթոլն է որ բարկութիւնը
հաստատութեան տեղ կ՚առնուն, այնպէս որ երբեմն
արդէն սահմանին գուրս ելած ըլլալով կը կարծենք որ
գեռ ևս հաստատութիւն ըլլայ ի գործ գրածնիս:

Ուշադրութեամբ մտածելով պիտոյ տեսանենք որ
եթէ հաստատ մնալնիս օգտակար կ՚երևի, (և իրօք ալ
մենք չենք որ կուրանանք), շատքիչ անգամ կը պատշաճի
որ Աստուծոյ փառաց և հոգւոյ փրկութեան համար
ցասկոտ կերպերը գործածենք: Սուրբ Փրանկիսկոս Գա-
վերեանը շատ մը նամակներու մէջ կը հաստատէ, որ
« անուշութեամբ և խնդարհութեամբ եղած բանը, եր-
բեք բարկութեամբ՝ խառնայոյզ և մնասարծ հոգւով
ձեռք չի բերուիր »:

— Երբեմն միայն մեկ անուշ և հեզ բառ մը, կ՚ըսէ
Պաւլեայեան սուրբը վկնկենտիոս, բաւական է անկեղծ
մը գործընկերուս. և ընդհակառակն մեկ հատ՝ բայց խիստ

1 Իմաստ Ը. 1:

բառ մը կրնայ խռովել հոգի մը, և այնպիսի գառնու-
թեան մէջ ընկղմել՝ որ ամենամեծ ջնաս յառաջ գայ:

— Խօսքը կենացս մէջ ուրիշները յանգիմանելու և
ուղղելու համար միայն երեք անգամ խիստ բառեր գոր-
ծածեր եմ, կարծելով որ այսպէս վարուելու իրա-
ւունք մը ունեցած ըլլամ. բայց յետոյ միշտ զղջացի,
ըստ որում չարաչար վարուած ըլլալուս վերահասու
եղայ. ընդհակառակն անուշութեամբ ուղած՝ միշտ շա-
հեցայ: —

Պարապել չերթան, աղէ, սիրեցեալ եղբայրակիցք,
պարապել չերթան այս անգին օրինակները, այլ հոգ տա-
նենք անոնց նմանելու շուտով և անմիջապէս:

128. Ես, գուցէ ըսէ սուրբ անձին մեկը, ես փոյթ
Աստուծոյ, արտաքին և կրքոտ գործքերով հեղութեան
դէմ երբեք չեմ մեղանչեր, և ոչ ալ աչքի դպչելիք կայտա-
ռութեամբ. բայց երբեմն վերջին ատենները բռնութեան
տասնեակ չարժուամ մը կը զգամ, որ շատ մը ցնս կը խո-
նարհեցընէ և կասկածիլ կու տայ, որ մի գուցէ այն աս-
տիճան հեզահոգի եղած չ՚ըլլամ, որչափ որ կը փափա-
գիմ: Ինչպիսի՛ գեղեցիկ արամագրութիւն մըն է, որ ոչ
միայն զԱստուած չի վշտացըներ, այլ մանաւանդ թէ
կ՚ուրախացընէ: Այն առաքինութիւն, ինչպէս որ նոյն
ինքն բառը կը յայտնէ, ջանք մը՝ կռիւ մը կ՚ենթադրէ.
բնութեամբ այնպիսի բարեհաճ և չափաւորները կան,
որոնց այնչափ գժուարին է բարկանալը, որչափ որ ու-
րիշներուն ծանր է բարկութիւննին զսպելը: Անոնք
առջեր զուրցելու համար, հեզութեան առաքինութիւ-
նը չ՚ունին. այնպիսինեանը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ բնա-
կան հանգարտութիւն մը, ապարդիւն չափաւորութիւն
մը: Սակայն այնպէս չէ բնականապէս կրքոտ եղողնե-
րուն համար, որոնք Աստուծոյ հաճոյանալու համար,
միշտ բռնութեան վիճակի մէջ են. որպէս զի մի գուցէ
այլոց առիթ այնպիսի գործք մը ընեն, որ բարկ ու գե-
ղեցիկ չ՚ըլլայ: Այսպիսիները առաքինութիւն ունին, և
մարած ամէն անկարգ չարժումները միշտկ յաղթանակ
է, որ իրենց վրայ հեզութիւնը կանգնել կու տայ: Ի

բնէ առաւած, առաքինութեամբ՝ գառն գարձած: Ահաւասիկ Ճշմարիտ արդիւնքը. « Աղքայութիւնն երկնից բրնագաւի, և բռնաւք յափշտակեն զնա » [1]:

Սալէզեան սուրբն Փրանկիսկոս ասոր աքանչելի օրինակ մը տուաւ, որ զարմանալի կերպով ըսածնիս կը հաստատէ: — Օր մը աղնուականի մը սոսկմամբ պահանջած ինդիրը զանազանութեամբ լսելով, ասիկայ կատղած անարգաբար զինքը նախատեց, ու անոնկ բարկացած քովէն հեռացաւ: Սուրբին եղբայրը, որ անձամբ ներկայ գտնուած էր այս կոպիտ աղնուականին ամբարիշտ տեսարանին և միանգամայն Փրանկիսկոսի անչափ հեզութիւնը, որ ամենևին այլայլած չէր, ըսաւ իրեն՝ թէ այն անզգամին պատշաճ պատասխանը պէտք էր տար. վասն զի իւր պատուոյն կը գոյէր և իւր իշխանութիւնը այսպէս ոտնակոխ ըլլալով կ'անարգուէր: Բայց սուրբը կը շարունակէր իւր լուութիւնը. յորմէ եղբայրը զարմացած՝ եպիսկոպոսին այս տեսակ անզգայութեան վրայ, — Մենք առանձին ենք հոս, կըսէ, ոչ ոք զմեզ կը լսէ. ուսաւ կը խնդրեմ որ համարձակապէս ամենայն ինչ մեզնես ինձի: Այսպէս տմարդաբար նախատուած առենդ չի խռովեցաւ արդեօք, և նեղքուստ ցոյց կու տայիր: — Կ'ուզէս որ քեզի ընտակը զուրցեմ, պատասխանեց ան առենը Փրանկիսկոս. կ'ուզես որ Ճշմարիտը քեզի զուրցեմ, ինչպէս որ է: Շատ աղէկ, ըսէ ուրեմն: Ոչ թէ միայն այս, այլ ուրիշ առիթներու մէջ ալ կը զգամ բարկութեան երևոյթները մէջս եփիլը, ինչպէս որ ջուրը կրակի վրայ. բայց Աստուծոյ օգնակա նութեամբ առիւծի մեռնիլը յանձն կ'առնեմ, քան թէ այնպիսի վիրաւ բան մը ընել կամ ըսել, որ Աստուծոյ հաճելի չըլլայ: Այսպէս առաջադրեցի, և աստուածային շնորհաց օգնականութեամբ՝ զործ սկիսայ դնել: —

129. Թէ և այս գլխոյս մէջ ցիր և ցան քանի մը մեղքերը ցոյց տուինք բարկութեանը յայտնելու, և հեզութիւնը ստանալու համար, այսու ամենայնիւ առիթ

1 Պատմ. ժԱ. 12:

ծանօթութիւն մը տալն ալ կարևոր կը սեպինք, մեր յարգելի եղբայրակցաց մեծագոյն՝ օգտին համար: Ահաւասիկ ուրեմն, ինչ որ սուրբերուն և հոգևոր վարդապետաց խրատներուն և օրինակներուն համեմատ պէտք է զործ դնենք, կատարեալ յաղթութիւն մը ձեռք բերելու համար:

Պիտոի, բայց մեկդի ձգելով անձնասիրութեան ամէն պատրանքները, քննել զգուշութեամբ և փութով, մի գուցէ շատ կամ քիչ հակեալ ըլլանք անհամբերութեան, վառվռուն բնաւորութեան, և գուցէ նաև բարկութեան չարժումներուս հետ գործածած կերպերնիս, անոնց գործքերէն տհաճութիւն ունեցած ժամանակնիս. Աստուծոյ աղաչել որ մեզի լոյս տայ այսպիսի առիթներու մէջ հեզութեան դէմ գործած սխալմունքները ճանչնալու համար. բարեպաշտ ընկերներուս մեկին հարցընել, աղաչելով որ ամենայն վըստահութեամբ ծանուցանէ մեզի հեզութեան նկատմամբ վարմունքներուս մէջ ինչ որ ըստգտանելի կը տեսնէ:

— Անկեղծաբար և սրտանց փափագիլ հեզութեան առաքինութիւնը ձեռք բերելու համար, ինչ որ կ'ուզէ Թող արժէ: Այս փափագը շատ հարկաւոր կ'ըլլայ, ըստ որում առանց անոր կարծենք թէ կը կռուինք, մինչդեռ երբք ամենևին չենք կռուիր: Եւ որովհետև երբեք աղէկ չ'ըլլար այն գործքը, զոր աղէկ ընելու չենք փափագիր, ահաւասիկ մեր հոգևոր թշնամութեան պատճառը, ոչ միայն հեզութեան նկատմամբ, այլ ընդհանրապէս ամէն բանի մէջ. կարծենք թէ կ'ուզինք, սակայն բան մըն ալ չենք ուզեր, այսպէս ամենայնիւ կ'անցնի, և մենք ալ միշտ նոյնն ենք: — Հաստատապէս համոզուինք որ եթէ հաստատ կամք ունինք, այս հեզութեան առաքինութիւնը ձեռք կը ձգենք: Յաջողութեանը վրայ չի կասկածինք, եթէ վերը նշանակուած միջոցները գործածուած են, և Աստուծոյ վրայ կատարեալ վստահութիւն ցուցած է, որ միշտ օգնական է բարի կամք ունեցող մարդկանց: Այն օրը որ ըսէինք, թէ լմնցաւ, ալ չեմ կրնար, իրօք պիտոր չը կարենանք. վասն զի քաջալերու-

Թիւնը և Աստուծոյ վրայ վստահութիւնը պիտոյ պակսի. « Յամենայնի կարող եմ ինձ որ զօրացոյցն զիս» [1]: « Յամենայնի ». աղեկ մը կշռենք այս խօսքը. — ուշադրութեամբ վերահասու ըլլալ այս գլխոյս մէջ յիշուած հեզութեան օգուտներուն, և բարկութենէն յառաջ եկած չար պատուղներուն: Երեւակայել այն երջանիկ կեանքը կը յորդորէ պիտոյ դանուիլնք, երբ կրնանք ըսել — առ Աստուած, — առ ընկերն, — առ մեզ —, եթէ գան ալ պէս հեզահոգի ըլլանք:

— Բոլոր հոգւոյ զինքերնիս այն պակասութեան դէմ գործենել, զոր կ'ուզենք անհետ ընել: Յատուկ և առեպ աղօթքներ՝ հեզութեան շնորհքը ստանալու համար: — Յաճախ մտածականներ այս առաքինութեան վրայ: — Հոգւոյ ընթերցմունքներ նոյն նիւթին վրայ: — Խոստովանութեան մէջ այս առաքինութեան դէմ եղած ամէնափոքր սխալմանց ծանուցումը. ըսելով նաև խոստովանահօր, որ հաստատապէս կ'ուզենք այս առաքինութիւնը ձեռք բերել, և կ'աղաչենք որ մեզի ամենայն զօրութեամբ օգնական ըլլայ: — Վերջապէս աղօթք ընել, և կենդանի հաւատքով աղօթել առ Աստուած պատուական գոհութեան առեն, որ զմեզ հեզութեան և համբերութեան մէյմէկ կենդանի օրինակ շինէ:

— Նախատես ըլլալ այն առիթներուն, որոց մէջ սովորաբար հեզութեան դէմ կը մեղանչենք, որպէս զի ընդդիմանալու և պատերազմելու պատրաստ ըլլանք: — Այսպիսի առիթներու մէջ առանց զգուշութեան և զգրութեամբ կրնալով առանց ջերմեռանդն հառաչանք ներով Աստուծոյ օգնութիւնը խնդրելու դանուիլը մերկ և անզէն պատերազմին ասպարէզը մտնել է: Բայց վստահութիւնդ գուշակելով, կամքերնիս քաջութեամբ պատերազմելու գրգռելով և զԱստուած մեզի օգնութեան կանչելով, ամուր զգաստ և ամէն զէնքով զինուած քաջ զինուորի պէս թշնամւոյն դէմ ելլել է. « Եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ » [2]:

— Բարկութիւնը բորբոքուելու նշանը տուածնին

1 Փիլիպ. Դ. 13: 2 Հռոմ. Ը. 31:

պէս՝ հեզութեան գործք կատարել, և յուզման ուաց առեն՝ սրտերնիս և մոքերնիս առ Աստուած վերցընել: Այս միջոցը մանաւորապէս կ'ապրսպրենք: Կիրքը զգացնուս պէս և ուաց ժամանակը՝ Յիսուս և Մարիամ օգնութեան կանչելնիս՝ բաւական է բարկութեան կրակը մարելու:

— Բարկութեան չարժուած մը յուզուած առենը՝ անմիջապէս գործենք և խօսելէ դադարիլ, և այն առենը այնպէս չանալ զսպելու վրէժ լնելքուսա խօսողը կիրքը՝ որ ոչ ոք իմանայ:

— Ամէն օր աղեկ և մանաւոր քննութիւն մը ընել հեզութեան և տնող հակառակ մոլութեան վրայ: Մասնաւոր քննութեան նկատմամբ կը համարձակինք այս երկու բանս հաստատելու: — Նախ որ առանց այս միջոցը լ գործ դնելու՝ անկարելի է որ պակասութիւն մը կարենանք չակել: — Երկրորդ անտարակոյս կը չակենք ամէն պակասութիւն ալ, եթէ խոհեմութեամբ և յարատեւութեամբ այս միջոցը լ գործ դնելու ըլլանք: — Վերջապէս բարկութեան նկատմամբ ամենեւին բանի մը չէ հնայել. և ամէն անգամ հեզութեան դէմ մեղանչելէն վերջը, ապաշխարանք մը դնել մեզի, և մանաւանդ, եթէ այնչափ քաջութիւն ունինք, մեր անկիրթ և գառն վարմունքով ցաւ ցօղացած անձինքներէ թողութիւն խնդրել:

130. Այս քանի մը ծանուցումները ասլով, համաձակաբար կրնանք ըսել ամէն ընթերցողներուս, թէ « Ջայդ արա և կեցցես » [1]: Այսպէս վարուէ ու կ'ապրիս. այո, կ'ապրիս այնպէս բարի, հեզ, համբերող, ողորմած և ամենուն հետ կաթոգին Յիսուսին կեանքով: Բարի օրինակ ըլլանք, սիրեցեալ եղբայրակիցք, հեզութեամբ շինութիւն պատճառենք ժողովրդեան. անով թշնամեաց ձեռքէն զէնքերը կը թափենք, ամենաանզեղջ մեղաւորներն անգամ առ Աստուած կը գարձընենք, կը փրկենք, հոգիները կը փրկենք: Հեզութիւնը ամէնքէն՝ ինչուան քրիստոնէ չէղողներէն ալ գովաբանուած՝ և

1 Դուկ. ժ. 28:

մարդկանց սիրտը շահելու համար մեկ հատիկ միջոց մը սեպուած է։

Երբ մեծին Աղեքսանդրի հարցուցին թէ այնպիսի երիտասարդ հասակի մէջ ինչպէս կրցեր էր անանկ ընդարձակ տէրութիւն մը հիմնել, և բոլոր հպատակաց սէրը իր վրայ գրաւել։ — Թչնամեացս հետ, պատասխանեց, անուշ և մարդասէր վարմունք մը ունենալով, որով թշնամիներս ինձի բարեկամ ըրի. աշխարհակալութիւնը տեւողական ընելու համար, սրտերը գրաւել պէտք է։ —

— Փասլոս կ'ըսէր, որ վայրենի գազաններըը խաղաղանով և շղթաներով չեն ընտելանար, այլ միայն գըթասիրութեամբ և անուշ վարմունքով։ Հեղութիւնն ու բարութիւնն զատ ուրիշ միջոց չի կայ՝ դժնդակ ու խիստ բարքերը ամոքելու և մարդավարի ընելու համար։ —

Ձախաւորապէս գործածէ իշխանութիւնդ, կ'ըսէր Կատոն ծերունին, եթէ կ'ուզես երկար առեն պահել զայն։ Հեզութիւնը զիշխանութիւնը կը հաստատէ և տեւողական կ'ընէ, մինչդեռ խստութիւնը զայն կը կործանէ։ — « Սր ձեզ, ո՛ Հռովիւք »։

Աստնմէ աւելի նախադաս ըլլալու արժանի են Պաւլայեան սրբոյն Վիճկենտիոսի հետեւեալ խօսքերը. — Եթէ Աստուած մեր առաջին առաքելութեանց օրհնութիւն մը տուաւ, ամենուն հետ սիրալիր, խոնարհ և անկեղծ վարմունք ունենալնուս համար էր։ Եւ եթէ բարեհաճեցաւ Աստուած իւր ծառաներուն մէջ ամենէն խեղճին ձեռքով հերետիկոսները ուղիղ հաւատքի կանչել, այս նորադարձները խոստովանեցան, որ գործածուած ամէն միջոցներէն աւելի ազդու եղած էին իրենց ցոյց սրուած համբերութիւնը և մեծահոգութիւնը։ Նոյն իսկ շղթայի և թիակալութեան դատապարտուածներն անգամ, որոց քով կեցած եմ, ուրիշ կերպով չեն շահիլը. և երբ իրենց վրայ խիստ խօսեցայ՝ չար հետեւութիւն յառաջ եկաւ. իսկ ընդհակառակն իրենց համակերպութիւնը գոված առենս, իրենց թշուառութեանց մէջ կարեկից ըլլալով զիս թէ ուրիշ երջանիկ են այս աշխարհքիս մէջ իրենց քաւարանը ընելով. շղթանին համ

բուրեցի, յաւերժուն վշտակից եղայ, ան առենը ինձի մեղիկ ըրին, ան առենը Աստուծոյ փառք տուին, ան առենը յաւիտենական փրկութեան ճամբան բռնեցին։ —

Սիրեցեալ և պատուական եղբայրակիցք, Աստուծոյ մեզի օրինակ և առաջնորդ տուած՝ սուրբ քահանայից հաւատարիմ նմանողը ըլլալը՝ մեզի պարտք սեպենք։

ԳԼՈՒԽ Ը.

Հնազանդութիւն — Քահանայի մը առ իւր եպիսկոպոսն եւ առ անոր փոխանորդները ունեցած պարտաւորութիւնը։

131. Եթէ կայ առաքինութիւն մը որ սուրբ քահանային ամենայատուկ ըլլայ, անտարակոյս որդիական հնազանդութիւնն է առ իրեն եպիսկոպոսը, և յարգական սէր մը առ անոր նուիրական անձը. ինչպէս որ ընդհակառակն ըսա Աստուծոյ սրտին չէզած քահանայի մըն ալ անսիրալ նշանն է ուղղակի կամ անուղղակի կերպով իր եպիսկոպոսին կամացը հակառակիլ, և նուազ սէր ու յարգութիւն առ անոր անձը ցուցընելը։

Աշխարհքիս ամենագեղեցիկ տեսարաններէն մէկն անտարակոյս սուրբ եպիսկոպոսն է և բազմաթիւ բարի կղերկ մը կառավարուած թեմն է, որ իւր եպիսկոպոսին խրատ Աստուծոյ կը հնազանդի, և ինքը զինքը երջանիկ կը սեպէ անոր խորին յարգանաց հաւատացիք ցոյց տուած առենը։ Երբ այս բարեբաղդ գերդաստանը — ըսա որուամ այս անունը չատ կը յարմարի — իւր միութիւնը կը կատարելագործէ մեծահանդէս և սիրով խոնարհելով օգոստափառ սրբազան Քահանայապետին, որ կաթոլիկէ միութեան կեդրոնն է, ան առենը բոլոր աշխարհք կը զարմանայ և երկինք ծափ կը զարնեն։

Զի հանդուրժենք, սիրեցեալ եղբայրակիցք, որ այսպիսի կատարեալ միաբանութիւն մը մեջերնիս միայն մեկ ան հատ մըն ալ քակուի կամ պլպլի։ Պինա կենանք կարգերնուս մէջ, որպէս զի կարող ըլլանք դէմ

գնել Թշնամւոյն, որ կը ջանայ զմեզ բաժնելու, որպէս զի չաղթէ: Մեկզի ձգենք ամէն վէճ ու կռիւ, մեր դէմը-ներուն բոլորովին ամիսոխունք: Փոքրիկ գառնուկներու պէս հնազանդ ըլլանք հովիւներուս՝ որոնք զմեզ կառավարելու բեռը ունին, և անոնց այս բեռը մեր համբերու-թեամբ և սիրովը թեթևցընել պարտք մը սեպենք մեզի:

132. Մենք եպիսկոպոսներուս հնազանդելու պար-տաւոր ենք, պէտք է որ զինքը յարգենք և սիրենք շատ մը ծանօթ և չայտնի պատճառներու համար, զորոնք հոս չիշելը միայն բաւական է: — Որովհետև անիկայ մեզի նկատմամբ Յիսուսի Քրիստոսի վոխանորդ է: — Որովհետև անոր՝ յանձն Առաքելոց, որոց յաջորդն է, ըսաւ Յիսուս Քրիստոս. « Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ »[1]: — Որովհետև բոլոր քա-հանայապետական կարգը կ'աւրուի, եթէ չի հնազանդինք անոր որ խարխլան է: — Որովհետև ձեռնադրութեան օրը յարգութեան և հնազանդութեան հանդիսաւոր և ստոյգ խոստմունք ըրինք. « Խոստանամ ինձ և յաջորդացն իմոց յարգութիւն և հնազանդութիւն: — Խոստանամ »: — Որովհետև գայթակղութիւն պիտոր ասնք մեր եղբարց և հաւատացեալոց, եթէ եպիսկոպոսին յարգութեան ու հնազանդութեան մէջ պակսինք: — Որովհետև Աս-տուած պիտոր չօրհնէ մեր պաշտօնը, եթէ չի պատուինք զանիկայ՝ որուն ձեռքով որ այն պաշտօնը մեզի յանձնեց:

133. Կը կրկնենք, այս պատճառները ծանօթ և յայտնի են, և կատարեալապէս համոզուելու համար բա-ւական է միայն զանոնք յիշելը: Բայց ուրիշ պատճառ մըն ալ կայ, որ հաւանականաբար մեր յարգելի եղբայրակ-ցաց շատերուն սրտին վրայ կրնայ ազդել, և նոյն ինքն մեր եպիսկոպոսաց կը վերաբերի:

Մենք պէտք է հնազանդինք եպիսկոպոսներուս, և խորին յարգանաց և սիրոյ նշանը ցոյց տանք անոր, վասն զի ասով մեր կոչմանէ իրեն ամենաբաղցր մխիթարու-թիւն մը կը պատճառինք, զոր կրնայ ունենալ իւր պաշ-տաման հոգաբարձութեան մէջ:

1 Ղուկ. ժ. 16:

Ընդհանրապէս բնական է, որ բարձր աստիճանի հա-սած մարդիկը ոչ միայն կարեկցութենէ զուրկ են, այլ մանաւանդ թէ երջանիկ ալ կարծուած են: Պաշտօննե-րու մէջ աստիճանները սովորաբար աստիճանին բարիքը և բարձրութիւնը, իշխանութիւնը, պատիւը և նիւթական օգուտները կը դիտեն:

Արդ ինչպէս կրնայ մեկը կարեկից ըլլալ այնպիսի անձի մը որ այսչափ բան ունի և կը վայելէ:

Եւ ինչ որ ընդհանրապէս կ'ըսուի ամէն պաշտօննե-րու վրայ, նոյնպէս եկեղեցական պաշտօններուս նկատ-մամբ ալ խմանալու է:

Գիտենք որ դիւրութեամբ կրնանք եպիսկոպոսին տրամեցընել, որուն համար ուրիշ բան պէտք չէ, եթէ ոչ ընդվզել իւր իշխանութեան լուծը, և կամ մեր չար վարմունքովը սխալել զինքը որ զմեզ պատժէ: Բայց միւս կողմանէ ալ գիտէնք արդէօք, որ ուզած աստիճանս կրնանք իրեն ձգմարիտ մխիթարութիւն և ամենամեծ հաճոյք պատճառել: Խոստովանինք, սիրեցեալ եղբայրակիցք, այս մեկ կարդը չենք գիտեր. մանաւանդ թէ և ոչ կրնանք ըմբռնել թէ ինչպէս կրնայ ըլլալ ասկայ: — Ի՛նչ, դուցէ ըսէ բարի ժողովրդապետին մեկը, ես գիւղի մը անկիւնը առանձնացած և մոռցուած, եպիսկոպոսին ե-րեսուն մղոն հեռու, որ իրօք զիս չի մտածեր, մի թէ կրնամ իրեն մխիթարութիւն պատճառել և իւր երջան-կութիւնը և հաճութիւնը աւելցընել: Ո՛չ, ո՛չ. ասիկայ չի կրնար ըլլալ: —

Այսպէս է, այս է կղերին ընդհանուր տրամադրու-թիւնը, և ալէկի՝ բարի օրինակ եղող կղերին, որ անկեղ-ծաբար կը սիրէ իւր եպիսկոպոսը և խորին յարգանօք կը մեծարէ. և անայլայլելի հաւատարմութեամբ ամէն բանի մէջ կը հնազանդի անոր: Այս ամենայն իրրև պարտք մը կը կատարուի, բարեպաշտութեան հոգւով, խղճմի հնազանդելու համար, և անշուշտ ամենամեծ ար-դեամբ: Բայց այսու ամենայնիւ երբեք մոքէն ալ չ'ան-ցըներ այն մխիթարութիւնը, զոր կրնայ ունենալ իւր առաջին հովիւը:

Ասոր պատճառն այն է որ մենք եպիսկոպոսի մը իր Թեմին մէջ ունեցած ներքին զգացմանց սեղեակ չենք։ Անոնք՝ որ իւր գաղտնի խորհրդոցը ծանօթ են և կառավարութեան բեռը կրելու մնանակից են, անոնք միայն գիտեն եպիսկոպոսին դլխուն վրայ դրուած պատասխանատուութեան բեռին ծանրութիւնը։

Կղերին մնացած մասը ուրիշ բան չի տեսներ, եթէ ոչ արտաքին պատիւը, եպիսկոպոսական իշխանութիւնը, բայց բեռը չեն տեսներ. « Ջօծութիւնն նկատուն, գնացէն ոչ տեսանեն »։

Ննջադրելով, զոր ոչ երբեք կրնանք ընդունիլ, որ մեր արժանամեծար եպիսկոպոսները ի սկզբան քիչ մը նոր պատուէն շլացած ըլլան. բայց ատ ալ հաղիւ թէ վայրկենական տպաւորութիւն մը ունեցած, և շուտ մը մտայղի սէր վարատելով՝ աշխատասէր հոգաբարձութեան տեղն տուաւ։

Շատ դժուարաւ կրնանք հաւատալ որ այս այսպէս ըլլայ, և զարմանալու չէ. նեղութեանց և վշտերու նկատմամբ, մերինը ի խոր կը զգանք. ուրիշներունը՝ մանաւանդ մեծաւորացը, միշտ մերինէն նուազ կը սեպենք. և յետոյ, ինչպէս ըսինք, առաւօրէն փոխարինուած կը կարծենք ուրիշ շատ մը առաւելութեամբ։

Բայց եթէ գիտնայինք, ինչպէս որ եպիսկոպոսը գիտէ, բոլոր Թեմի մը կղերին այն ամէն տագնապները և փոքր վշտերը։ Եթէ ամէն օր ականջնիս պատրաստէին ժողովրդապետի մը դանդատները իւր օգնչին դէմ, և կամ հոգաբարձուի մը տրտունջները ժողովրդապետին դէմ։ Եթէ միւս կողմանէ, եպիսկոպոսներուն պէս երբեմն քաղաքական իշխանութեան, երբեմն վարպետներու, երբեմն հաւատացեալոց գանգատներէն խլացած ըլլայինք, որոնք մշտապէս կը յանդիմանեն, կը բողոքեն և կ'ամբաստանեն իրենց ժողովրդապետները, և կամ փոխադարձաբար։ Եթէ տեսնէինք եպիսկոպոսին եկած անթիւ նամակներու ծրարները, որոնք գիտնայինք՝ որ բանալով շատ աւելի սրտնեղութեան նիւթ պիտոր գտնէինք՝ քան թէ մխիթարութեան։ Եթէ մշտապէս

դոցուած ըլլայինք փոքր սենեկի մը մէջ, երբեմն տաղտկալի այցելութիւններէ ձանձրացած, երբեմն ծանրատաղտուկ և նեղացուցիչ վարչական գործոց ղբաղած, ան առեղը առուգիւ լեզընիս պիտոր փոխէինք, և պիտոր հասկընայինք որ եպիսկոպոսական վիճակը ուրիշ այնպիսի բան մըն ալ ունի՝ որ աստիճանին պայծառութիւնը չէ. և եպիսկոպոսին կուրծքին վրայ փայլած խաչը՝ ոչ այնչափ պատուաւոր առաւելութեան նշան է, որչափ հանապազօրեայ վշտերու և սրտնեղութեանց։

Աւելցուր նաև, որ եպիսկոպոսը թէև Թեմի մը բացարձակ հովիւը, այնչափ մխիթարութեան աւիւնները չունի, որչափ որ ունին երկրորդական կարգի հովիւները, զոր օրինակ ժողովրդապետները։ Եպիսկոպոսը ընդհանուր հօտը կ'ընդգրկէ. բայց այս հօտը կազմող ամէն առանձին ոչխարի հետ մանաւանդ յարաբերութիւն մը չունի։ Իսկ ժողովրդապետը պաշտօնին բերկրութիւնը և մխիթարութիւնը ունի, մինչդեռ եպիսկոպոսին ձեռքը ընդհակառակն միայն փուչերով լեցուն է, և միայն այլոց մխիթարութեամբ կը սփոփի։ Ո՞վ աւելի երջանիկ կրնայ ըլլալ քան ժողովրդապետեան որ կաթոգին սիրով սիրուած է իր ժողովրդին, որոնց ինքը բարի օրինակ է. աղքատներէն, որոնց նպաստամատոյց է. վշտացեալներէն, որոց մխիթարութիւնն է. տկարոցմէ, զորոնք կը կրթէ. հինմեղաւորներէ, որոնց ուղիղ ճամբու մէջ կ'առաջնորդէ։ Ամէն օր իրեն համար միշտ նոր մխիթարութեան օր է, որոցմէ եպիսկոպոսը զուրկ է, և երբեք չի կրնար ունենալ։ Լերան գագաթին վրայ դրուած՝ իւր նայուածքը բոլոր հօտին վրայ դարձընելու համար, երբեք դաշտը չի կրնար իջնել ընտանեկան զուարճութիւնները վայելելու։

Որով եթէ եպիսկոպոսի մը իր Թեմին մէջ ունեցած վիճակին ձգրիտ գաղափարը կազմելու ըլլանք, և եթէ իր վրայ կաթոգին և ձիմարիտ որդիական սէր մը ունենանք, հարկաւ ըստ մեր կարողութեան պիտոր չանանք բեռին այս աստիճան ծանրութիւնը թեթևցընելու։

134. Ամէն բան աղեկ, գուցէ ըսէ մեկը. բայց ինչ

հաճութիւն կամ ինչ մխիթարութիւն կրնանք տալ ե-
պիսկոպոսներուս, երբ շատ քիչ անգամ կրնանք հեռը
կենցաղավարիլ։

Հոս էր որ ձեզ կը սպասէինք։ Վայրկեան մը առա-
ջնակայ կեցին վրայ խորհրդածելով, եւ ան մտածմունք
մը մեզ ներկայացուց. և է՝ որ եպիսկո-
պոս մը մանաւանդ կղերին միխիթարութիւն սպասելու
իրաւունք ունի։ Թէև շատ ցանցառ ըլլայ որ ինքը
քահանայի մը հետ կենցաղավարի, բայց աւելի ցան-
ցառ կ'ըլլայ հաւատացեալոց հետ կենցաղավարութիւնը։
Դժբաղդաբար հաւատքը թուլնալով, ժողովուրդը ընդ-
հանրապէս, և ի մանաւանդ ինչ ինչ գաւառներու մէջ,
եպիսկոպոսի մը նուիրական անձին համար այն խորին
յարգութիւնը և եռանդուն սէրը չեն զգար, որ կենդա-
նի հաւատքի ցոյցերով յայտնուած՝ իրենց մեծ հաճու-
թիւն պիտոր պատճառէր։ Թէ որ հայրական խնամքով
զիրենք կառավարէ, ան աստեն ընկերը հանգիստ կը թո-
ղուն. բայց եթէ պատահի, որ ժողովրդեան կամքին հա-
կառակ կարգադրութիւն մ'ընելու սոխպուի, ան աս-
ենը դու տես խիստ դատողութիւններէը։ Ա՛յս կողմանէ
ուրեմն եպիսկոպոսը շատ միխիթարութիւն մը չունի։ Կը
կրկնենք, մանաւանդ իւր կղերին պէտք է զայն սպասե-
և շուտով վերահասու կ'ըլլանք որ պիտոր չի պակսին,
այլ մանաւանդ թէ առատապէս պիտոր գան թեմին ա-
մէն կողմերէն այս միխիթարութիւններէը, եթէ մենք՝
ինչպէս որ պէտք է, այնպէս հայթհայթենք։

Իրօք ենթադրենք որ ամենքս ալ խորին յարգու-
թիւն, կենդանի և անկեղծ սէր, կատարեալ յարմար,
կոյր, պատրաստ, ընդհանուր և ճշմարիտ որդիական հնա-
զանդութիւն ունեցած ըլլանք առ մեր եպիսկոպոսը։ Են-
թադրենք որ իւր տեսչութեան գործքերը յարգած, և
պլոց ալ յարգել առած ըլլանք. և այնպէս վարուինք
որ միշտ իրմէ գոհասանք՝ և ոչ թէ յանդիմանութիւն
լսենք. որ իրեն հետ այնպէս կը խորհրդակցինք, ինչպէս
ղաւակ մը իւր հօրը հետ, որ մեր պաշտօնին վրայ ամէն
տեղեկութիւնը կու տանք. նեղութիւններս պատմելով՝

որպէս զի զանոնք երելու նպաստէ. յաջողութիւնները
և ուրախութիւնը՝ որպէս զի ինքն ալ մասնակից ըլլայ։
Ենթադրենք որ այս ամէն յարգութեան, սիրոյ և հնա-
զանդութեան բարի զգացմունքը հաւատացեալոց ալ հա-
ղորդելու կը ջանանք, որպէս զի անոնք ալ իրենց առա-
ջնի հովուին վրայ սէր մը կապեն՝ զինքը իրենց մէջ տե-
սած առնելնին, և մեր նախնի հարց նման սիրալիր և մե-
ծարոյ ընդունելութիւն մ'ընեն։ Ենթադրենք, կ'ըսեմ,
որ ամէն բան մեզի համար այսպէս յառաջ երթայ, այն-
պէս որ եպիսկոպոսը սպասով ըլլայ յանձն իւրաքան-
չիւր քահանայի՝ հաւատարիմ, հնազանդ և սրտանց ե-
ռանդուն գործակից մ'ունենալու. այսինքն սուրբ քա-
հանայ մը, զոր կաթոգին սիրով կը սիրէ, վասն զի գիտէ
որ ինքն ալ անկից սիրուած է։ Մի թէ ստոյգ չէ՞ որ այս-
պիսի եպիսկոպոս մը, սիրոյը սուրբ երախտագիտու-
թեամբ լեցուած՝ երբեք պիտոր չի դադարի օրհնելու
ապուշածային բարութիւնը՝ զինքը այսպիսի արժանաւոր
թեմի մը կառավարութեան նշանակած ըլլալուն համար։
Մի թէ իրաւ չէ՞ որ հառաչելով պիտոր կանչէ սրբոյն
Պօղոսի նման. Ամենասիրելի ոչխարներս, դուք էք իմ
պահս ու փառքս, դուք զիս անպատուեմ միխիթարու-
թեամբ կը ափոփէք. դուք իմ՝ նեղութեանցս ու վշտերուս
մէջ շատ աւելի ուրախութեամբ կը լեցունէք իմ սիրտս.
« Բազում համարձակութիւն է ինձ առ ձեզ, բազում
պարծանք են ինձ վասն ձեր, լի եմ միխիթարութեամբ,
առաւելեալ եմ ուրախութեամբ յամենայն նեղութիւնս
մեր... Եւ արդ ուրախ եմ, զի յամենայնի համարձակ
եմ առ ձեզ»[1]։

Զինք գիտեր թէ այս խորհրդածութիւնները ինչ-
պիսի ազդեցութիւն պիտոր ընեն մեր եղբարց հոգւոյն
և սրտին վրայ. այսու ամենայնիւ կը յուսանք որ սէր և
յարգութիւն պիտոր թելադրեն առ իւրեանց արժանա-
ւոր եպիսկոպոսնուն։

Արդ ինչո՞ւ համար գեղեցիկ և կատարեալ մնաւո-

1 Բ. Կորնթ. Զ. 4 ... 16։

բանականէն պիտոր սոխսովինք առ իրականին անկատարը, և գուցէ առ թշուառութիւնը ջնջելոյ:

Ուսոի մանաւանդ կերպով տեսնենք թէ ինչպէս կը կատարենք մեր առ եպիսկոպոսին ունեցած պարտաւորութիւնները:

135. Երբեմն թեմերնուս համար որոշուած եպիսկոպոսը՝ կառավարութեան սանձը ձեռք առնելէն ալ յառաջ, մենք արդէն հակառակութեան և ատամբակութեան հոգւով մէջ տեղ կ'ելլենք: Փոխանակ աղօթելու, հաղօթք ընել տալու, որպէս զի Աստուած մեզի արժանաւոր և սուրբ եպիսկոպոս մը տայ՝ փոխանակ հանդարտութեամբ աղօթքներուս և բարեգործութիւններուս ելլոյ սպասելու, մենք մեզի ըսելով՝ որ եպիսկոպոսին ընտրութեան պատասխանատուութիւնը գլխընեերուս վրայ չի ծանրանալով, անհանգիստ ըլլալու չենք. ըստ որում մեկ հոգի, ով ալ ըլլայ զմեզ կառավարող եպիսկոպոսը, կրնանք միշտ նոր ընորհքը գրաւել, սուրբ քահանայի կեանք վարելով և հոգւոյ փրկութեան նախանձախնդիր ըլլալով: Փոխանակ սուրբ քահանայիցմէ ի գործ դրուած այս խոհեմ վարմունքին, մենք երկիւղալից՝ անհանգարտ և նախապաշարեալ ժամեր կ'անցընենք, որ բան մը եաւէլ չարիք կը գործեն: Մանաւանդ դեռ աւելին կայ: Մեր եպիսկոպոսը ճանչնալու անհամբեր փափաքնիս՝ ապագին անգիտին մանրամասն տեղեկութիւններ կը ճարէ մեզի. և ով ըլլալը խմացածնուս պէս, պէտք է որ ինչ տեսակ մարդ ըլլալն ալ սորվինք. հասարակութիւնը ինչ կարծիք ունի անոր վրայ. այս կամ այն կէտին վրայ ինչ են անոր սկզբունքը. ինչպիսի ընտանութեան տէր է. որո՞նք են անոր նախընթաց գործքերը. ինչ է այն թեմին կղերին կարծիքը, ուսկից որ կու գայ. և այսպէս հաղար տեսակ նուրբ քննութիւններով գլուխնիս կը լեցնենք, որոնցմէ երբեմն գաղափար ալ կ'առնունք եղբայրսիրութեան դէմ դատողութիւններ ընելու:

Համեստութիւն, եթէ այս մեր խուզարկութեանց չար պտուղները միայն մենք վայելելու գոհ ըլլայինք. բայց այս՝ ինչպէս նաև ուրիշ հաղար պարագայից մէջ,

գիտնալու հաճութիւնը մեզի անոր համար սիրելի է՝ որ ուղածնուս չափ կարենանք խօսիլ: Ուսոի որչափ որ գիտենք՝ կը կրկնենք մեր եղբարց, և ի վախարէն քանի մը նոր լուրեր ալ անոնցմէ կ'առնունք, որով մեր տեղեկութեան ամբարը ևս առաւել կ'ընդարձակի: Այսպէս այս լուրերը թեմին մէկ ծայրէն միւսը վազելով, բնական է որ կղերին կարծիքը կը կանխէ նորընտիր եպիսկոպոսին վրայ, որ եթէ յաջող ջրլայ, ձախողապէս պիտոր կանխագրաւէ թեմականայ սիրտը՝ եպիսկոպոսին մատակարարութեան դէմ, ամենուն ամենամեծ ձեռասովը:

Ինչ պէտք է ընել այս անպատեհութիւնն խոյս տալու համար, որուն հետեւութիւնները երբեմն կարծածնիրնէս շատ աւելի չարագոյն կ'ըլլան: Ինչ պէտք է ընել: Արդէն ըսած ենք. սուրբ քահանայից նմանիլ, որոնք այսպիսի ընչին բաներու չեն զբաղիր, այլ աւելի աղօթքի, բարեգործութեանց և իրենց պարտքերը կատարելու կը պարապին. անկեղծ և բարի կամքով սպասելով անոր՝ զոր նախախնամութիւնը պիտոր խաբէ իրենց:

Ինչ պէտք է ընել: Բան մը չը լսել, և մանաւանդ չը զրպրցել, որ կրնայ ո՛և իցէ կերպիւ արգելք ըլլալ բարի արգեանց նորեկ եպիսկոպոսին գործոց, զորոնք թեմին օգտին համար պիտոր ընէ, և որոց ալ ըստ կարի գործակից ըլլալու պարտաւոր ենք: Վերջապէս ինչ պէտք է ընել: Գանուած երկիրներուս մէջ, որչափ որ կրնանք՝ խուսած մտքերը հանդարտեցընել. և առանց եղբայրներուս վարդապետ ըլլալու պահանջողութեան, ուղիղ ճամբայ բերելու փորձը ընել՝ եթէ անկէց հեռացած են: Վերոյիշեալ պարագայից մէջ այս է կանոնը, որով կը վարուի քահանան ըստ սիրոյ, խոհեմութեան, ճշմարիտ նախանձախնդրութեան և հաստատուն բարեպաշտութեան աղդեցութեանց:

136. Բայց մէյմը ըմեզ սովորական պարագայից մէջ, և եպիսկոպոսին ներկայ առաջնորդութեան տակ ենթադրենք: Սոյպէ է որ մենք իրեն հնազանդութիւն, յարգութիւն, որդիական սէր և անկեղծ ու յօժարամիտ գործակցութիւն ցուցընելու պարտաւոր ենք: Սոյպէ է

որ մեր այս վարմունքը երեն շատ անուշ պիտոր գայ։ Ջննենք թէ արդեօք ի գործնականին ալ նոյն ենք։

Ամեն բանէ յառաջ երբեւ էական կէտ, պէտք է խոստովանինք որ ամեն քահանայ պարտաւոր է յանձն առնուլ եպիսկոպոսին երեն տուած պաշտօնը։ Ինչ կը դառնայ եպիսկոպոսին վարչութիւնը, եթէ տարակարծիքը հաճոյից ախորժակին և յայտնի կամայ ենթարկուած ըլլար։ Մի թէ կարելի՛ է ըլլար այսպիսի կառավարութիւն մը։ Յայտնի չէ՞ որ քանի մը պաշտօներ, ոչ ոք ուզելով, երեսի վրայ պիտոր մնային, եթէ եպիսկոպոսը իշխանութիւն չ'ունենար զանոնք մեկուս մը յանձնելու։

Եթէ մեկը եպիսկոպոսին չը գիտցած նուիրեր վրայ երաւայի և արդար խորհրդածութիւններ ընէ, մանաւանդ թէ կատարեալ հնազանդութիւն ալ խոստանայ, եթէ եպիսկոպոսը բերուած պատճառները կշռելով բաւական չի սեպէ, բարի է, ըսելիք մը չունինք։ Միայն թէ կը յանձնենք որ ուշադրութեամբ քննուին, Աստուծոյ ներկայութեան առջեւն, եթէ մէջ բերուած խորհրդածութիւնները ճիշտ նոյն են, ինչպէս որ կը ներկայացուին. և զանոնք ներկայացնելու առեն զօրաւոր փաստով մ'անոր ուժը չը պաշտպանէ, եպիսկոպոսին հրամայածը չընելու բաղձանքով։

137. Կրնայ ըլլալ որ ձեռքերնիս զօրաւոր փաստ չունենալով, և այսու ամենայնիւ ուզելով անոր հրամանէն խոյս տալ, անուղղակի միջոցներու ձեռք զարնենք։ Այսպէս, զոր օրինակ, կրնանք եպիսկոպոսին քով խօսքը անցուկ երեւելի անձի մը բարեսիրտ միջնորդութեամբ գիմելու փորձութիւնը ունենալ, անոր ձեռքովը ընդունելու համար՝ ինչ որ ուրիշ միջոցով չենք կրցած ձեռք բերել։

Անկեղծաբար ըսենք, ասիկայ գործածելը ոչ ուղիղ միջոց մըն է, ոչ անկեղծ, ոչ հաւատարիմ, և քիչ մըն ալ հակառակ է այն հանդիսապէս մեր եպիսկոպոսին ուղղուն առջև խոստացուած հնազանդութեան, զոր երդնուելով Աստուած ալ է'օրհներ։ — Հոգին սուրբ, կ'ըսէ Իմաստութիւնը, կեղծաւորութիւն չի սիրեր. « Չի սուրբ Հոգին խնամատարութեան փախչէ ի նենգութենէ »[1]։

Բացայայտենք հոս տեղ բոլոր մոքերնիս, յուսալով օգտակար կ'ըլլայ, որովհետև ըստ բաւականի չարը դիտցուած չէ։ Եպիսկոպոսին առաջարկուած պաշտօնի մը ընդունելութիւնը՝ ձմեռին « կոչում » մը կը կազմէ, որ հարկաւորապէս այն նախկին կոչմանէն յառաջ կու գայ, որով մեկը քահանայութեան կոչուած է. « կոչում » մըն է կոչման մէջ, եթէ այսպէս կրնանք ըսել։ Ապօրինաւոր ձամբով անկից խոյս տալը կոչման հնութիւնն սկզբանց համեմատ, նովին գործով փախչիլ մըն է նախախնամութեան կարգադրութենէն, և ընդհակառակ՝ զորութիւնն մէջ, և զորութիւն պիտոր տար մեզ այն պաշտօնին մէջ, և զորութիւն պիտոր զանոնք մեր պարտաւէլի միջոցներով ընտրած և ձեռք բերած պաշտօնին մէջ։ Արդ, եթէ մենք ըստ սուրբ քահանայից մտածելինք, պիտոր հասկընայինք թէ ինչ ըսել է զրկուիլ այն առատաձիր ընդհանրութենէն, զորմէ Աստուած սովոր է տալու այն մանաւանդ կոչման՝ զոր մեկու մը պատրաստ տեսեր է. մենք հարկաւոր ընդհանրութիւնը ամեն վնասակէ, բայց մանաւորապէս քահանայականին. մանաւանդ վերահասու պիտոր ըլլայինք, թէ որչափ ողբալի բան է եղեր տարիներ՝ դուցէ բոլոր կեանքերնիս ալ անցընել Աստուծոյ չ'ուզած պաշտօնին մէջ։

Դժբաղդաբար այս բաները միայն սուրբերը կը հասկընան, ուր մարդկային աչքը չի թափանցեր. և երբ կատարելութեան ձգտողներն մեզի չենք սեպհականեր, թեթև և ոչնչ կը կարծենք զայն, որ սուրբ քահանան ամենածանր և ամենակարեւոր կը սեպէ։ — Մահուան առեն խաբեութիւնը կը ճանչնանք, կ'ըսէ Ֆ. Լալըման, և պիտոր տեսնենք որ ոգւոյական խաղերով զուարճացած ենք։... Ինչ և իցէ պատճառաւ և ինչպիսի պարագաներու մէջ կ'ուզէ ըլլայ, երբեք նուրբ քաղաքականութիւն գործածելու չենք մեծաւորներուս հետ այն պաշտօնեներուն նկատմամբ՝ զոր մեզի կը տրուի. վասն

[1] Իմաստ. Ա. 5։

զի ասիկայ մարմնոյ խորհուրդ կամ խոհեմութիւն մըն է սուրբ Առաքելոյն բերնով Աստուծմէ դատապարտուած։ « Զի խորհուրդ մարմնոյ մահ է, և խորհուրդ հոգւոյն կեանք և խաղաղութիւն »[1]։

138. Բայց Թէ որ եպիսկոպոսը չի պարտաւորիր զիս առաջարկուած պաշտօնը ընդունելու, Թէ որ զիս ազատ կը Թողու ընդունելու կամ ոչ, չէմ կրնար արդեօք բացատական պատասխան մը տալ և հանգիստ ըլլալ։

Ասիկա գրքոյկիս ուղղութիւնն է։ « Սուրբ Քահանայ » ըլլալով, և ենթադրելով որ ասիկայ կարգալու պատիւ ընծղնեցը երբէք փափաք մ'ունենան սուրբ քահանայ ըլլալու, անոր համար անկեղծօրէն կը պատասխանենք, որ պէտք է ընդունին այն առաջարկուած պաշտօնը՝ զոր ընդունելու չեն պարտաւորուիր, Թէ որ չընդունելու համար ունեցած պատճառները տղայական են, և ասոր համար ալ չեն համարձակիր եպիսկոպոսին զուրցելու։ Բայց եթէ ունեցած փաստերը ծանր են, բարի քահանայի գործ կը կատարեն՝ եթէ ինչպէս որ են այնպէս զուրցեն իրենց փաստերը, առանց կերպարանափոխ ընելու զանոնք։ ԵՒ միշտ ալ յայտնելով որ ոչ միայն հնազանդելու պատրաստ են, այլ նաև անոր մէկ պարզ բաղձանացը անգամ խոնարհելու։

Եպիսկոպոսին եղած պաշտօնի մը առաջարկութիւնը՝ միայն սուրբ քահանայի մը համար աստուածային կամք ըլլալուն՝ բաւական նշան մըն է։ ԵՒ երբ այս կամքը մեզի կը յայտնուի, ամենևին պէտք չէ որ ընդդիմութիւն ընենք մեռոի բարուբանքներով, այլ մանաւանդ Թէ մեր Փրկչին հետ ըսելու ենք։ « Ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին »[2]։

Շատ անգամ այսպիսի առիթներուն մէջ եպիսկոպոսը աստիճ կը բաղձայ որ առաջարկուած պաշտօնը ընդունինք։ Եթէ աւելի էն պնդեր, և եթէ յայտնապէս ալ մեզի ըսէ, որ մեր կատարեալ ազատութեանը կը Թողու այո՛ կամ ո՛չ պատասխանելը, իր կողմանէ ուրիշ բան չէ, եթէ ոչ հայրական բարիք կամ զիջողութիւն մը։

1 Հռոմ. Ը. 6։ 2 Ղուկ. ԻԲ. 42։

Իբրև բարի հայր մըն է, որ աղեկ կը վարուի զաւակներուն հետ, որոնք առած կրթութեանց չը համապատասխանելով այնպէս մեծցան որ ինքը բացարձակապէս հրամայելով կը վախնայ աւելորդաբար վերջնք վշտացնելու. գուցէ Թեմին ըրած մեկ ծառայութիւններուս համար իրեն պարտք կը սեպէ այնպէս քաղաքավարութեամբ վարուիլ մեղի հետ։ Եւ ով գիտէ որ առաքինութեան մէջ նուաղութիւննիս գիտնալը չ'ըլլայ որ զինքը կը սպիսէ այնպիսի ներողամիտ վարմունք մ'ունենալու մեղի նկատմամբ։ Եթէ սահակութիւննիս կանխադատչակելով չ'ուզէր այնպիսի փորձի մէջ ձգել մեր հնազանդութիւնը, որ կը վախնայ մի գուցէ չը կարողանանք յաղթելու փորձութեանը։ Ինչ և իցէ, կը կրկնենք, մեղի ըրած պարզ առաջարկութիւնը՝ արդէն յայտնի նշան մըն է աստուածային կամաց, որուն պէտք է պատասխանենք. « Եղիցի »։ Եթէ խաչելութեան առջին մտածենք պատասխանելս, երևակայելով Յիսուսին ըսելու. « Եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է »[1]։

Ինչպիսի գերազանց և ստուգիւ սուրբ քահանայի արժանաւոր գործք, եթէ այս առթիւ անգամ մը ցմիչտ ըսենք եպիսկոպոսներուս, որ մենք իր ձեռքին մէջ այնպէս ենք, ինչպէս որ կաւը բրուտին ձեռքին մէջ. ըսենք որ մեր բարեբաղդութիւնը իրեն հնազանդելն է, և Թէ կ'աղաչենք որ ամենայն ազատութեամբ մեր անձը այնպէս տրամադրէ, ինչպէս որ կը պահանջէ Աստուծոյ մեծագոյն փառքը և Թեմին բարիքը։ Ինչպիսի՛ ընորհքներով արդեօք պիտոր վարձատրուի այս վարմունքը։ Ի՛նչ միտքարութիւն եպիսկոպոսին համար։ Որչափ խոչընդոտներ մեկդի ձգուած, որչափ դժուարութիւններ յաղթուած իր պաշտօնին մէջ։

139. Ինձի համար, գուցէ ըսէ բարեպաշտ եղբայրակիցներէս մեկը, ինձի համար, փառք Աստուծոյ, ինքը զինքս անպարտաւ կը գտնեմ հոս վերը ըսուածներուն նկատմամբ։ Մինչև ցարդ եպիսկոպոսին ինձի տուած

1 Մատթ. Ե. 48։

պաշտօններուն յարմարած եմ. բայց չեմ կրնար ըսելու համար, այս պաշտօններուն մէջ անանկներ ալ կայնին՝ որ առանց արժանաւորութեան ընդունելեցայ, միայն պարզ սասակի բաղձանքի մը պատճառաւ, զոր յագեցընելու համար՝ տեսակ տեսակ խելք բանեցուցի, քիչ մըն ալ ապօրինաւոր, զոր միայն ես գիտէի:

Տէր Աստուած որ ասկէայ վախուկ խղճմտանքի խայթ մ'ըլլար. բայց եթէ այսպէս չէ, եթէ աստուածային կան այնպիսի քահանայք՝ որ եպիսկոպոսին կամքը կը կանխեն սոխակամբ և անձնահաճ ձարտարութեամբ, յայտնի բան է որ այսպիսի սոխակմունքը և ձարտարութիւնները աստուածային օրհնութենէն զրկի կը մնան: Ձշմարիտ հնազանդը ոչ կը խնդրէ և ոչ ալ կը մերժէ, ինքը երբէք գործիք մըն է արհեստաւորին ձեռքը, որ երբեք չի լսեր գործիքէն թէ « սուր ըլլս »· և կամ ինչպէս կաւ մը բրուտին ձեռքը, որուն չ'ըսեր թէ « ինչս պատուաւոր անօթ մը չինէ »:

Ինքը կը վարնայ պատասխանատուութեան բեռին տակ կրնալու այն պաշտօնը ձեռք բերելով, որ գոյէ երբեն չէր առաջարկուեր՝ եթէ ինքը խորամանկութեամբ չի վարուեր: Գիտէ որ ամեն պաշտօնի մէջ աստուածային օգնականութեան վրայ ապահով ըլլալու համար, պէտք է անկից և միայն անկից կարգուած ըլլալ: Գիտէ որ այսպիսի վարմունքով խաղաղութեամբ և հանգարտ սրտով կ'ընդունուին վրայ եկած նեղութիւնները. և երբեմն ալ ուրախութեամբ իր կողմանէ անտարբեր դանուելուն մտածմունքով, զոր չենք կրնար ըսել, երբ գրեթէ ձեռք բերած պաշտօններու ձամբան՝ մենք ինքներն բացած կ'ըլլանք:

Նախանձամոլութեան յանձնուինք, սիրեցեալ եղբայրակիցք, և երբեք չի կանխենք անոր խորհրդոց գործադրութիւնը ուղղակի կամ անուղղակի մեր հաձութիւնը յայտնելով: Այնչափ վստահութիւն ունենանք երկնաւոր և բարի Հօրերնուս վրայ, որ հաստատենք թէ ինքը մեզմէ շատ աւելի աղէկ գիտէ թէ ո՛ր բանը օգտակար է մեր յաւիտենական փրկութեանը:

Այնարհականայ Թողունք խորգախութիւնները, խորամանկութիւնները և ծուռ ձամբաները, որոնք և ոչ այնարհական քաղաքավարութեան ախորժելի են. անարգենք անձնասիրութեան այս ամեն խաբեութիւնները, և մեր եպիսկոպոսին նկատմամբ՝ պարծինք քիչ մը յառաջ ըսուած կատարեալ հնազանդին կերպարանքը առած ըլլալնուս, « չի խնդրել, չի մերժել »:

140. Բայց գոնէ երբ այնպիսի պաշտօն մ'առնելու հրաւիրուած ենք, յորմէ կը խորշինք, չե՞նք կրնար յայտնել այս մեր դժկամակութիւնը, և այսու ամենայնիւ յետոյ ալ հնազանդիլ:

Ահաւասիկ այն հարցումները մեկը, որոնց պատասխանը բնականապէս ինքերնիմ կուտայ:

Եւ երբք յայտնի է որ ահաձուագութիւնս յայտնելը ըստ սրտին Աստուծոյ չէ. իրաւցընէ կամքը կը զոհուի, բայց որովհետև ամբողջութեամբ կը զոհուի, անոր համար ալ Աստուծոյ հաձելի չէ: Ինքը զուարթամիտ և յօժարակամ ծառայութենէ կ'ախորժի. « Յանձինս մտաց դիւրս և 'ի սիրտս կամակարս » [1]: Եւ ոչ երբեք կը հաձի վոքը, անձնասէր և ակար կամքերէ, որոնք կը գողան Աստուծոյ կամքը իրենց կամայ հակառակ տեսածներուն պէս: Աստնք են Աստուծոյ սիրելի հոգիները, որոնք որ ուրախութեամբ անոր կը ծառայեն. « Զտուրս զուարթառատս սիրէ Աստուած » [2], և ոչ թէ անոնք՝ որ տհաձութեամբ և գոյէ արտնջելով կը ծառայեն:

Ինչո՞ւ, պէտք է հարցընենք, ինչո՞ւ համար ամբողջութեամբ հնազանդիլ. գոյէ այսպիսի խոժոռադէմ հնազանդութեան մէջ հաձութիւն մը գտնել կը կարծուի: Ո՞վ չի տեսներ որ մանաւանդ հակառակը կը պատահի, որ տխուր մտածմունքներու ենթարկուելով վերջը փոխանակ առողջանալու՝ կը զայրանայ: Այն գանգատներով այլոց կարեկցութիւնը կը փնտռուի: Ասկից աւելի ինչ տղայամիտ ու ծաղրելի բան կրնայ ըլլալ: Զգացուած ցաւը յայտնելով՝ եպիսկոպոսին առած հրամանաց լեռս կոչումը կը յուսացուի: « Յերգման »

1 Բ. Մակաբ. Ա. 3: 2 Բ. Կորնթ. Թ. 7:

հնազանդութեան դէմ պակասիլ մըն է, և շատ անգամ ալ անօգուտ տեղը: Կամ գուցէ կը մոռնան որ մեղք յանձնուած պաշտամանն նկատմամբ դժկամակութիւնս նիս յայտնելով, եպիսկոպոսը պիտոր սակսուի ի դէպ ժամանակին տեղերնիս փոխելու: Այսկայ ուրիշ բան չէ, եթէ ոչ մեր կամաց մէկ արհեստը, որ ներկայիս չը կրնալով գոհ ըլլալ, ապագային օգուտ քաղելու կը ջանայ հնազանդութեան ինքնամը:

Ասոնց ամէնքէն ալ հեռու է սուրբ քահանան, կը հնազանդի առանց գանգատանաց, ըստ որում «խոստանամ» ըսած առենը՝ կատարեալ հնազանդութեան մէջ գտնուելու մոտադիր էր, մանաւանդ թէ ցնծութեամբ կը հնազանդի. որովհետև գիտէ որ եպիսկոպոսին կամքը իրեն համար Աստուծոյ կամք է, որուն երջանիկ է իր կամքը հպատակեցընելու. գոնէ կը հնազանդի առանց դժկամակութեան նշան մը ցոյց տալու, մանաւանդ այն հաւատացելոյ՝ որոց որ հովիւ պիտոր կարգուի. վասն զի գիտէ որ ժողովուրդը որչափ որ աւելի կը սիրեն յօժարութեամբ իրենց եկող սուրբ քահանան, այնչափ ալ աւելի կը պաղին անկից՝ որ զայրացած դէմքով իրենց կու գայ, և ուղղակի կամ անուղղակի կերպով կը հասկընէ, որ եթէ ինքը հովիւ է, ուրիշ բանի համար չէ՝ եթէ ոչ այդ պաշտօնէն վայրկեան մը յառաջ ազատելու համար:

Նմանող ըլլանք սուրբ քահանային, ըստ որում ներքին ձայն մը կ'ըսէ, թէ այնպիսւոյն վրայ է որ կ'անձրևեն Աստուծոյ շնորհքները և օրհնութիւնները:

Աստենօք ճանչցանք սուրբ քահանայ մը, ստուգիւ այս անուան արժանի, որ միշտ ի գործ դրած էր մեր հոգեղէն խօսքով ապրեցրածը: Իւր մեծաւորները գիտնալով որ ինքը միշտ պատրաստ էր իրենց ո՛և իցէ կամքը կատարելու, և ճանչնալով որ իւր նախանձախնդրութիւնը հնազանդութենէն նուաղ էջը, երբ ժողովրդապետութեան մը անկարգութիւնները վերցընելու կամ զայն ուղղելու հարկը պահանջէր, շուտ մը անոր կը դիմէին: Այրդէն շատ անգամ ասդին անդին խաւրած էին, և ինքն ալ հաւատարիմ զինուորի պէս անոնց առաջնին ակնարկութեանց հնազանդեր էր, առանց յաղթահարութեան այն մխիթարութիւններէն՝ որ Աստուծմէ օրհնուած պաշտօնէն յառաջ կու գային, յորմէ կը հրաժարեր, և կամ այն գառն ցաւերէն որ կը պատճառէր իրեն աշխատութեամբը գարձած այնչափ խելօք մեղաւորներէն բաժանուելը, որոնք անոր՝ իբրև գորովագութ հօր մը՝ ձամբորդութեանը վրայ կու լային: Բայց օր մը իւր հնազանդութիւնը վերջին աստիճանի ցաւալի փորձ մը կրեց: Նամակ մ'ընդունեցաւ իւր եպիսկոպոսէն, որով ամենավատ կարծուած ժողովրդապետութեան մը հոգաբարձու կարգուած ըլլալը կ'իմացներ: Այս լուրը տարածուածին պէս՝ ամէն կողմանէ իրեն բարեկամ հոգաբարձուները վազելով եկան, և զինքը կը տխրեցնին որ այնպիսի հնազանդութենէ մը խոյս տալու ձաղը մոռածէ, և իւր այսպիսի վարմունքին իրաւացի ըլլալը յարգել տայ եպիսկոպոսին: Բայց այն Աստուծոյ, որ աւելի բարձրէն կը գիտէր իրը, ամէնքին ալ քաղաքավարութեամբ և անուշ ժպիտով մը պատասխանեց. — Շնորհակալ եմ իմ վրաս ունեցած խնամքներէդ, սակայն ափսոս որ խորհուրդներուդ չեմ կրնար հետեւիլ. վասն զի եպիսկոպոսս նամակին առածիս պէս՝ շուտով մը պատասխանեցի թէ պատրաստ եմ. ուստի, սիրելիք, «շատ ուշ է»: —

Եթէ թեմի մը բոլոր քահանայք սոյնպիսի զգացմանց տէր ըլլային, սիրեցեալ եղբայրակիցք, կրնայինք արդեօք ըմբռնել, թէ ինչպիսի մխիթարութեան և անպատում ցնծութեան պատճառ պիտոր ըլլային եպիսկոպոսին:

141. Բայց մենք խօսք մըն ալ ըսենք էհ թէ եպիսկոպոսին առաջարկուած պաշտօններուն վրայ, այլ կղերին բարւոք կառավարութեան համար սահմանուած թեմական կանոններու և կարգադրութեանց վրայ:

Այս կանոնները հարկաւոր են, ոչ կրնայ տարակուսիլ. որ ընկերութիւնն է որ իւր կանոնադրութիւնը չ'ունենայ: Այն թեմականք քրիստոնեայ գերդաստանի

մը կը նմանին, ուր առանց կանոնադրութեան՝ անկարգութիւնը, անտէրութիւնը, և յաճախ և քանի մը պատճառներու համար ամենածանր զեղծումները կը տիրեն: Մինչդեռ ընդհակառակն այն կանոնադրութիւնները՝ ուր որ աղէկ կը պահուին, կարգը և միաբանութիւնը կը տիրէ, շինութիւն կը գտնուի, վարմունքի համար ալ նոր կանոններ ի գործ կը դրուին, որոնք կղերի մը համար ընդհանրապէս սրբութեան աղբիւրներ են:

Կանոնադրութիւնները նոյն ինքն առաջին Հովուին խօսքերն են, այնչափ ծանր և հանդիսաւոր, որչափ որ հասուն խորհրդով պատրաստուած, եկեղեցւոյ կենքը վը կշռուած, ու փորձառու և բարի խորհրդականաց դատողութեան ենթարկուած՝ Թղթի վրայ դրոշմուեցաւ, և բոլոր կղերին անդամներուն ձեռքը տրուեցաւ, որպէս զի ամէն վայրկեան անոնց համար երեկոյ պարտուց մշտատև քննատակարան մ՚ըլլայ:

Եղբ՛ակ անոր որ իւր եպիսկոպոսին այս հիմնական օրինաց չի հնազանդիր, և զանոնք չի յարգեր. համար պիտոր տայ Աստոր որ ըսաւ. « Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ » 1:

142. Բայց այս նզովքը, ահաւասիկ ընելու, մեր եղբարց և ոչ մէկուն դէմն պիտոր լինայ: Իրենք ամէնքն ալ, ինչպէս որ համոզուած ենք, ամենայն հաւատարմութեամբ ի գործ պիտոր դնեն իրենց պարտուց այս ամենագլխաւոր կէտը: Բայց այս կանոնադրութեանց նկատմամբ՝ սուրբ քահանային բռնած ընթացքը մտածելով՝ օրինակ առնենք:

Ամէն բանէ յառաջ, թէև հարկ չէ զուբլելը, որ ինքը այն կանոնադրութեանց օրինակ մը քովը կը պահէ. այն կանոնադրութիւնները շինող իշխանութեան ամենէն մեծ անարգութիւնը կ՚ըլլար անտարակոյս, անկից օրինակ մըն ալ չունենալը: Բայց քահանայ մը երբեք այս ասոնց անմոռութեան չի հասնիր:

Սուրբ քահանան ուրիշ Թեմական կանոնադրութեանց մէկ օրինակը քովը կը պահէ: Ի՞նչ օգուտ ունի

1 Ղուկ. ժ. 16:

չը գործածուած գիրք մը: Բայց սուրբ քահանան կը գործածէ զայն և ստէպ. և ոչ ալ հարևանցի կարդալէ մը գոհ կ՚ըլլայ, այլ ծանրութեամբ և հանդարտութեամբ կը կարդայ, և խոր մտածելով. և այնպիսի յարգութեան և հնազանդութեան ջերմեռանդ զգացմամբ՝ որ իրաւցնէ կը տեսնուի որ եպիսկոպոսին խօսքը երեն համար նոյն ինքն Յիսուսի Քրիստոսի խօսքն է:

Հարկ եղած ժամանակը այս կանոնադրութենց վրայ խօսելով, միշտ չափաւոր և յարգական բառերով կը խօսի. և եթէ պատահմամբ մէկը զանոնք պարսաւէ և կամ անարգական կերպով անոնց չափազանց խստութիւնը քամահրէ, ոչ միայն մարդկային նկատմամբ այլոց խօսքերուն արձագանգ չի տար, այլ եպիսկոպոսական իշխանութեան յարգութենէն ստիպուած՝ խակ և խակ կը սկսի պաշտպանել անկից շինուած օրէնքները: Եւ իրեն բարեպաշտութենէն ազդած նախանձայուզութեամբ ալ անոնց ջատագովութիւնը կ՚ընէ. ուսկից կը հանդիպի որ նոյն այն օրէնքը կշռատուները՝ յաղթուած և չարժած անոր կենդանացուցիչ հաւատքի հոգիէն, և ամենուն սերը դրաւոր բնաւորութեան քաղցրութենէն, կ՚արգելուն զջարախօսութիւնը և խօսքերը հաստատապաղան ձև կ՚առնուն:

Թէ ինչպիսի շինիչ ձգտութեամբ կը պահէ այս օրէնքները, ամենևին հարկ չէ ըսելը: Այո, հաւատարիմ պահպանութիւնը երեն հաճոյք կը պատճառէ. և պահպանութեան մէջ ամենևին չ՚որոշէր « ընդ ծանր պարտուք » պարտաւորողները անոնցմէ՝ որ չեն պարտաւորիր «ընդ դատակնիքով». և ոչ ալ ծանր ու թեթեւ պարտաւորութեանց մէջ զանազանութիւն կ՚ընէ, իրեն համար բոլորն ալ յարգութեան արժանի են. ամենևին յօդուածմը չի կայ՝ որուն հնազանդելու պարտաւոր չ՚ըլլայ. այլ ամէնքին՝ մինչև անգամ պարզ խորհուրդներուն ալ՝ հերպական հրամաններու պէս կը հպատակի: Արժանաւո՛ր և երջանիկ քահանայ, Թո՛ղ Թափէ Աստուած քու վրադ իւր ընորհաց լոյսը, որուն որ քու հնազանդութեամդ արժանի եղած ես. ո՛ւր էր որ կարող ըլլայինք

ամէնքս ալ քու վեմ՝ աստուածպաշտութեանդ կատարելապէս նմանիլ։

143. Մի թէ այսչափով կը լմննայ եպիսկոպոսական իշխանութեան յարգութիւնը։ Կը պահանջէ որ ունկնդիր ըլլանք ամենափոքր յանձնարարականներուն անգամ, որոնք եպիսկոպոսը պատշաճ կը տեսնէ թէ խօսքով և թէ գրով հաղորդելու Աստուծմէ երեն յանձնուած սուրբ դերդաստանին։ Եւ իրօք հասարակ ընտանեայ մէջ բարի հօր արժանաւոր զաւակ կրնանն ըսուիլ անոնք, որ անոր միայն կերպական հրամաններուն ուշ զնեան հնազանդիլ, և գլուխ չի ծռեր անոնց՝ եթէ ոչ ծանր պատճառ սպառնալեօք։ Չունեցէք բարի տղայ մը որ զհայրը կը սիրէ և կը յարգէ. տեսէք թէ որչափ փութաջան է ոչ միայն անոր կամքը կատարելու, այլ նաև զանիկայ գուշակելու և կանխելու։

Աղէ, մենք ալ այնպէս վարուինք, ով սիրեցեալ եղբայրակիցք, անոր նկատմամբ՝ որ մեզի համար մարմնացաւոր հօրէ մը չատ աւելի նուիրական հայրենի իշխանութեամբ ճոխացած է։ Ը՛ըսենք երբեք, թէ իրաւ եպիսկոպոսս կ՛ուզէ որ այս ինչ բանը ի գործ դնեմ, այն ինչ բանէն ալ հրաժարիմ. բայց սակայն խորհուրդ մըն է, ուստի կրնամ դիւրութեամբ ընդվզել։ Աստանկ վարմունք մը Աստուծոյ սրտին, ձշմարիտ աստուածպաշտութեան կանոնաց, և կատարեալ հնազանդութի մը վարմանցը հակառակ է։ Մի թէ այնպիսի հնազանդիլ մըն է, ինչպէս կ՛ուզենք որ ուրիշներն ալ մեզի հնազանդին, եթէ ունենայինք այն իշխանութիւնը՝ զոր այնչափ քիչ կը յարգենք այլոց վրայ։

144. Խօսակցութեանց մէջ ալ եպիսկոպոսին յարգելու պարտաւոր ենք, զգուշանալով այնպիսի խօսքերէ՝ որոնք ինչ և իցէ կերպիւ կրնան նուազել անոր իշխանութիւնը. այլ մանաւանդ պաշտպանելով՝ եթէ մեր ներկայութեանը ամբաստանուած ըլլայ, ծանուցանելով այն դէպքերիկ ձիրքերը որոնցմով որ բարեբաղդաբար զարդարուած է. և մեր զինքը պաշտպանելու նախանձաւոր ցուցընելով, թէ այնպիսի անկեղծ սիրով զինքը կը սիրենք, ինչպէս որ խոստացած էինք ընելու։ Ինչպիսի՛ չարիքներ չէինք ըներ, եթէ հաւանութեան կերպ մը ցուցընէինք, կամ չարագոյն և՝ եթէ իրօք հաւանէինք անզգոյշ եղբարցս մէկուն կամ աշխարհականի մը՝ անզգամ գաւաքննութեանց, որ մեր հաւանութիւնը իրեն առիթ պիտոր ընէր՝ երկար առեն չարուսնակելու այն գաւաքննութիւնները։

Այսպիսի փափուկ պարագաներու մէջ մոքերնիս բերենք աղայոց քրիստոնէական վարդապետութեան մէջ, և ժողովրդեան ալ քարոզներով սորվեցուցածնիս. երբ թէ աղայոց և թէ ժողովրդեան կը մեկնենք տանաբաւ նեայ պատուիրանաց չորրորդը, այն պարտաւորութեանց վրայ՝ զոր ամէնքնիս ալ ունինք՝ մեր հոգևոր և ժամանակաւոր մեծաւորաց նկատմամբ։

145. Խօսքերնուս պէտք է համաձայնին կատարելապէս նաև գործքերնիս ալ։ Չոս ալ եպիսկոպոսին հրամայուած կամ սոսկ խորհուրդ տրուած կէսերու վրայ չէ խօսքը. այսու ամենայնիւ կ՛ըսենք որ գործքերէն ալ՝ որոց վրայօք մանաւանդ խօսք մը չըրինք, պէտք է հրաժարինք, եթէ գիտնանք որ եպիսկոպոսը չի հաճիր անոնցմէ։ Աստուգիւ իւր կամքը է որ սուրբը ըլլանք, ուրեմն բարի և սուրբ քահանայի պէս ապրելով՝ իր կամքը յարգած կ՛ըլլանք։

Ահաւասիկ մեր ունենալիք գերազանց կանոնը։ Ինչպէս պիտոր վարուինք եթէ եպիսկոպոսս ներկայ ըլլար։ Խաղի մը համար պաշտօնիս այս ինչ պարտքը զանց առնելու փորձուութիւնը կը զգամ. ինչ կ՛ընեի եթէ եպիսկոպոսը գիս տեսնէր։ Խելքս կը փչէ որ քահանայական զգեստներս վար ձգեմ և աշխարհականի զգեստ հագուիմ՝ առանց հարկաւորութեան. վար կը ձգե՞մ եթէ եպիսկոպոսը ներկայ ըլլար։ Քանի մը օր կարևոր չեզած ճամբորդութիւնը ընելու փափաքը ունիմ, մանաւանդ թէ կիրակի աւուր առանց պատրաստութեան քրիստոնէականի մեկնութիւն և քարոզ տալու վտանգովը. այս հաճոյքս ի գործ կը դնե՞մ արդեօք եթէ եպիսկոպոսը անձամբ հոս ըլլար։

Որովհետև այս և այսպիսի նման ուրիշ հազար բաներու մէջ կրնանք հասկընալ գերամեծար հովիւներուս կամքը, բարի ոչխարի նման համակերպինք գործքերուս մէջ. և ճիշտ կեղծաւորութիւն սեպենք եպիսկոպոսին ներկայութեամբը՝ սուրբ քահանայ ձևանալ, և անոր բացակայութեամբը՝ թուլցած կեանք մը վարելը:

146. Զի թէ եպիսկոպոսին անձը՝ այլ անոր պաշտօնին այս կամ այն գործքերը դատապարտելն ալ ծանր անարգութիւն կը պատճառէ եպիսկոպոսական իշխանութեան, յորմէ ամէն քահանայ պէտք է որ ղգուշանայ: Եթէ եպիսկոպոսի մը կառավարութեանը ամէն գործքերը՝ թէպէտև կղերին քննութեան ենթարկուէր. եթէ եկեղեցական իշխանութեան վճիռները՝ և ներկայութեան թէ եկեղեցական և թէ աշխարհիկ անձանց առանց խղճի գատուէին. եթէ զոր օրինակ, ընարութեան մը առթիւ՝ հրապարակաւ գժգոհութիւններս յայտնէինք, կ'ըմբռնուէր արգելք թէ ուրիշ ծանր հետևութիւն պիտոր ունենար այսպիսի վարմունք մը: Իշխանութեան նուաղելէն և առ այն պէտք եղած յարգութեան պակասելէն զատ, յայտնի կը տեսնուի որ ճիշտ գայթակղութիւն մըն է, որ քահանայ մը յայտնապէս և դուրս չարութեամբ ալ կշտամբել իւր օրոստափառ Պլևոյն անառակութիւնը:

Զարադոյն հետևութեանց աղբիւր պիտոր ըլլար նոր արգելուած կամ բանադրուած քահանայ մը գանելով փոխանակ մեղմելու, աւելի ղայրացընել անոր եպիսկոպոսին դէմ արանձնելու արամադրութիւնը: Սուրբ քահանան ալ անտարակոյս այսպիսի գժբաղդ եղբօր այցելութեան կ'երթայ, հաւատոյ և ճշմարիտ բարեկամութեան մխիթարութիւններով զանիկայ սփոփելու համար. բայց ի՞նչպէս խնայելով խօսքերը, ինչպիսի եռանդուն յորդորներով կը համոզէ որ խոնարհութեամբ համբերէ և խաղաղութեամբ համակերպի: Անկիայ, իրաւցընէ, ասկիայ է այն մխիթարիչ լեզուն՝ որ ողբումէլ վշտացեալ մը վիրաւորուած սրտին մէջ բալասանը կը կաթեցընէ:

Անկիայ մանաւորապէս կը յանձնենք քանի մը բարի քահանայից, որոնք ծանր յանդիմանութեան արժանի բան մը չը գտնելով երբեմն վշտացած՝ կ'ուզեն որ պատասխանէ եպիսկոպոսին պատժուած ըլլայ, նախանձ կը բանկնին այնպիսի վարմունքի մը դէմ. աղաւեղ զղջալու թեան մը ղոհ կարծելով՝ կը պախարակեն զՔեզ թեհեւամտութեամբ հաւատացած ըլլալուդ համար. և անոնց վրայ ունեցած յարգութեան և սիրոյ մէկ մասը կը կորսընցնեն:

Ի՞նչ կ'ընէ արդեօք սուրբ քահանան այսպիսի պատգամելու մէջ: Կը լռէ և իր չը գիտցած գաղտնիքը կը յայտնէ: Եպիսկոպոսական խորհուրդին մէջ յարմար տեսնուած միջոցներուն մասնակից չ'ըլլալով, անմոռնելիւն կը կարծէ գործքը պախարակելը. և աւելի կը հաճի բառ մը չըսելու, և իրեն սիրելի ուշադրելի մտածմունքները յառաջ քշելու, քան թէ գատապարտելու. և չ'ակնածելը ըսելու որ մեծաւորները խոհեմ ըլլալով առանց պատճառի չեն պատժեր. և թէ կրծնելին պատիւը, որուն իրենք դլխաւոր պաշտպաններն են, կը սեպէ զիրենք ողբալու իրենց խնամակալութիւնը պախարակող քահանայիմ որուած գայթակղութիւնը, քան թէ անկից վախնալու, որոց երբեմն առիթ կու տան իրենցմէ վճռուած գատապարտութիւնները. և եթէ այսու ամենայնիւ կը կարծեն որ պատժելու սովորած ըլլան, կը պատժեն ձեռքերնին ծանր և բարի վախտեր ունենալով, որոնց զղրութիւնը ոչ երբեք կը նուաղի այլոց շատախոսութենէն:

Անկիայ կը վարուի սուրբ քահանան ոչ միայն սանկ ողբումելի առիթներու մէջ, այլ նաև այն ամէն պարագայից մէջ յորում եպիսկոպոսին գործքերուն վրայ խօսք կ'ըլլայ: Մ'ըլա իւր յարգութեամբ կը չրջապատէ զանոնք, և ան առենին ալ'երբ իւր բարի կամաց հակառակ չի կըրնար զանոնք լիովին ընդունիլ, գոնէ ամենամեծ զգուշութեամբ իւր ներքին խորհուրդը յայտնելէ կը զգուշանայ: Եւ աւելի ևս, իւր արձնաւորութիւնը չինքը միչև ան աստիճան կը մղէ, որ խոնարհութիւնը իրեն ա-

մենասիրելի առաքինութիւնը ըլլալով յայտնապէս կը զրուցէ որ ինքը անտարակոյս կը խաբուի, և խելքը կարճ ըլլալուն համար՝ շատ հեռուն չի կրնար գիտնել:

Սուրբ քահանայս այս սիլլոգութիւնները ոչ միայն եպիսկոպոսին անտեսական գործոյ նկատմամբ ի գործ կը դնէ, այլ նաև անոր ամէն աստուածաբանական և ոչ աստուածաբանական կարծեաց, և վէճի տակ ինկած այս կամ այն կէտերուն նկատմամբ ալ, որոց վրայ ուրիշին կարծիքը իրեն կարծիքէն կը տարբերի: Կ'ըսէ ինքն իրեն առանձին. Ես իմ եպիսկոպոսիս գատաւորը չեմ. քանի որ ինքը միութեան կեդրոն՝ սուրբ Գահին հետ հաղորդութեան մէջ է, հնազանդութիւնը, յարգելի լռութիւնը, և իմ դերագոյն մեծաւորիս, Եկեղեցւոյ, և ընդհակառակ կառավարող Սրբազան Գահանայապետին համար անգադար և ջերմեռանդ աղօթքը իմ վարմունքիս մի միայն կանոնը պիտոր ըլլան. « Երդուայ և հաստատեցի զի պահեցից զամենայն իրաւունս արդարութեան քո» [1]:

147. Գուցէ անօգուտ չ'ըլլայ նաև խօսք մըն ալ զրպցելը եպիսկոպոսին խորհուրդականներուն վրայ, որոց ջափե դուրս իշխանութիւն մը կը հաղորդէ իրեն ընդհանուր փոխանորդ կարգելով զանոնք:

Այս մեր օրերին շատ աւելի զեղեցիկ տեսնելը, երբ անկախութիւնը դեռ ևս իւր դպրոցական վերուցած չէր, յարգութիւնը և հպատակութիւնը դատարկ խօսքեր չէին, ընդհանուր փոխանորդին իշխանութիւնն ալ շատ յարգի էր, որով և շատ ալ զօրաւոր. զրեթէ եպիսկոպոսական պատուով կը ճոխանային, և երբեք մէկը չէր համարձակեր պատճառ յարգութեան մէջ պակասելու: Բանի անգամ մենք բարի օրինակ առինք քանի մը հին կղերին վերջին մնացորդ յարգելի ծերունիները լսելով, որոնք արժանաւոր և չափաւոր խօսքերով կը խօսէին. « Տէր, Ընդհանուր փոխանորդ », կամ « Գերապայծառ Եպիսկոպոս »: Մեր օրերը այս կերպ խօսքերը չեն անցնիր, և անոնց փոխարէն գիտենք թէ ուրիշ ինչ անարժան և անարդ սիտղոններ կը գործածուին: Զար-

1 Սաղմ. ՃԺԹ. 106:

մանալու բան. մենք ապստամբութեան միջա աւելի և յառաջադիմութիւնը, և իշխանութեան նուաղիլը կ'ողբանք, և չենք տեսներ որ շատ մը առիթներու մէջ մենք ալ հասարակ ընթացքին կը հետևինք, եթէ յառաջ ալ չենք մղեր զայն:

Վարժինք, ամենասիրելի եղբայրակիցք, յարգելու մեր գլուխներուն իշխանութիւնը, եթէ կ'ուզենք որ ուրիշներն ալ մերինը յարգեն. ընդհանուր փոխանորդը եպիսկոպոսին տեղապահը սեպենք, անոր մտերիմը, յատուկ գործակալը, ինչպէս որ իրօք ալ այնպէս է: Անոր պահապանութեանց տեղ՝ եթէ ունի ալ, մեր անոր նկատմամբ պարտաւորութիւնը զինենք, երբեք չի գովինք զանիկայ կշտամբողը: Ամեն անգամ որ կը պատահի անոր հետ խօսիլ կամ կենակցիլ, ամենախոստ պատշաճութեանց վրայ ալ անհոգ չ'ըլլանք: Փոխանակ նուաղելու՝ մանաւանդ աւելցընենք անոր տեսչութեան արժէքը. և անշուշտ զգուշանանք չողոքորթութենէ և կոտրատուկ յարգութենէ, և մեծարանաց, սիրոյ և հպատակութեան անկեղծ ցոյցեր պակաս չընենք: Այս ամենը ոչ ինչ աշխատութիւն կը պատճառեն մեզի, երբ եպիսկոպոսին հետ այնպէս վարուինք, ինչպէս որ պէտք է: Ըստ որումն առիթը պիտոր գիտանանք, որ ինքը իրեն եղած պիտոր կարծէ ինչ որ մենք կ'ընենք անոր բարձր վստահութիւնը դրաւող անձին:

148. Այս գլխոյն սկիզբը հարևանցի կերպով խօսք մ'ըսինք նիւթի մը վրայ, զոր հնազանդութեան ճառերնիս չի լմնցուցած՝ կրկին կ'ուզենք մէջ բերել: Ըսինք որ ամենաբարձ մխիթարութիւն պիտոր պատճառէ եպիսկոպոսին քահանայիցմէ իրենց տեսակ տեսակ պաշտօններուն մէջ ունեցած յաջողութեանց տեղեկութիւնը: Կը կարծենք որ քահանայք ընդհանրապէս շատ հեռու կը դանուին եպիսկոպոսէն, և զլուխնին եպիսկոպոսին մտաբերելու յարմար միջոց մը կ'ըլլայ եթէ երբեմն երբեմն եղելութեան համար տալու իրենց բարի նախանձով ճառք զարկած գործոց, գտմանած զեղծմանց, զվեպաւորութիւնը առ բարին դարձնելու, աղքատները սփոփելու և ան-

հաւատացեալները մոլորութենէ դարձընելու համար. մէկ խօսքով, իրենց նուիրական պաշտօնը յարդելի և պատուական ընելու համար՝ գործածած սուրբ հնարքներուն նկատմամբ:

Եպիսկոպոսի մը իրեն արժանաւոր գործակցաց մխիթարութեանը մասնակից ըլլալէն աւելի քաղցր բան չի կրնար ըլլալ: Օրինակի համար, որչափ ուրախութիւն պիտոյ պատճառէ իրեն դիանալը առաքելութեան մը, ուսման, կրթութեան մը, քաղաքակրթական քարոզներու, զաւակի, և այլ Աստուծոյ փառաց և հոգւոց փրկութեան համար սկսուած անթիւ գործերու երջանկութիւնը: Ո՞վ գիտէ որ ասանկով շատ մը չը գիտցած բարեգործութիւն ընելու կերպերը չի տրվին, և թեման այցելութեանց առեն զանոնք ի գործ դնելու բարեբաղդութիւնը չ'ունենար: Ան առեն գոնէ քանի մը մխիթարական նամակներ կ'ընդունի, զորոնք հիմայ տալորաբար չի տանար. վասն զի տոյժ է որ մէկ հատ մխիթարական նամակի մը դէմ անգին հարիւրաւորներ կ'ընդունի, որ իրեն տագնապ և ձանձրութիւն կը պատճառեն: Ան առեն իրեն ցոյց տրուած քաղաքավարութեան վոխարէն նամակներ պիտոր գրէ, որոնցմով զմեզ քաջալերելով եռանդնիս պիտոր աւելցընէ, ինչպէս նաև սիրտ պիտի տայ մեծագոյն եռանդեամբ ուրիշ փրկաւէտ գործերու ձեռնամուխ ըլլալու:

Չենք սիալիր եթէ ըսելու ըլլանք որ այսպէսով աւելի կ'ամրանայ այն կապը՝ որ պէտք է միացընէ զեպիսկոպոսը իւր հզերին հետ, և եկեղեցւոյ այգեցին մէջ փրկութեան շատ մը պտուղներ հասցընէ:

149. Տաք Աստուած որ այս խորհուրդին՝ զոր հաստատեցիր եղբայրակիցներուս տալու, հաւատարմութեամբ ի գործ դրուէին: Յիշատակած կանոնները ամէն գարերու սուրբ քահանաներէն մեզի ատանդուած են, որոց պահպանութեամբը՝ զԱստուած փառաբանեցին, Ժողովրդեան շինութիւն եղան և իրենք զիրենք փրկեցին:

Մխանանք, սիրեցեալ և արժանայարգ եղբայրա-

կիցք, սերտ սիրով միանանք եպիսկոպոսներուս հետ, որովհետև մեզ են այն խորհրդաւոր մարմնոյն՝ որուն իրենք գլխաւոր անդամներն են, և Սրբազան Պահանայապետն ալ օգոստափառ Գլուխը: Պատուենք եպիսկոպոսնիս, ըսա որուամ բուն օծեալ ի Հոգւոյն սրբոյ են. հլու և հնազանդ ըլլանք անոնց, որովհետև մեր մեծաւորներըն և վարդապետներն են, և մանաւանդ թէ հնազանդութեան հանդիսաւոր ուխտ ըրինք. յարգենք զիրենք, վասն զի աստուածային իշխանութիւն ունին մեր վրայ, և մենք ալ իրենց հնազանդութիւն և յարգութիւն միատեղ խոստացանք. սիրենք զիրենք վերջապէս, սիրենք որպիսի սիրով, ըսա որուամ մեր բարի հայրերն են, և մենք ալ անոնց սիրուն զաւակները:

ԳԼՈՒԽ Թ.

Մաճացուցում — Պարկեշտութիւն — Ժուժկալութիւն — Այս առաքինութեանց հարկաւորութիւնը եւ գործադրութիւնը:

150. Երբ մահացուցումը ի գործ չի դրուիր, և ի գործ դնելու ալ արամադրութիւն մը չի կայ, անոր գաղափարին մեր վրայ առաջին ազդեցութիւնը է, որ խիստ պարտաւորիչ չ'ըլլայ այս առաքինութիւնը: Մանաւանդ երբ իրայ խորը չը նկատելով ամենուն վրայ միատեղ անհատատ նայուածք մը կը ձգուի, յորմէ շատ շատ հանգամանքի գաղափարներ կը ծնանին, որոնք համառօտելով դրեթէ այս խնդիրը կ'ելլէ: Մահացուցումը անտարակոյս շատ գեղեցիկ առաքինութիւն մըն է, սրբոյց և կատարելոյ առաքինութիւնն է, որ շատ մը զարմանալի գործերը իրենց «օգտակար» կը թելադրէ, բայց իրենց «հարկաւոր չի հրամայեր». այս վատ սկզբունքէն յառոյ, գոնէ ի գործնականին այս հետևութիւնը յառաջ կը բերուի, որ մահացուցումը պարտաւորութենէ դուրս կամ աւելի եղած առաքինութիւն մ'ըլլայ, որ կրնայ զանց առնուիլ առանց յատկութեան փրկութիւնը վտանգի մէջ ձգելու: Այս ամենածանր սխալմունք մըն է:

Ոչ ոք կրնայ ուրանալ որ կը գտնուին մահացուցման գործադրութիւնները, որոնք ըստ ինքեան «ընդծանր պարտաւոր» չեն պարտաւորեր, բայց թէ նոյնը ընելու է նաև այն ամենուն վրայ՝ զոր մահացուցման ոգին կը հրամայէ. և թէ նոյն իսկ մահացուցումը, ընդհանրապէս մտածելով, մարդկային կենցաղոյ նորոգութեան, սանձահարած կրից, բարեխառնած հրճուանաց, յաղթահարած զգայարանաց, կուռած և նուաճուած մարմնոյ նկատմամբ, պարտաւորիչ՝ հարկաւոր և բացարձակապէս անտնօրինելի չըլլայ քրիստոնեի մը և մանաւանդ քահանայի մը, ամենամեծ և դժնաւոր վրիպմունք մըն է. կը կրկնենք, նոյն ինքն Յիսուս Քրիստոս, աւետարանը, եկեղեցին և բոլոր դարերու սուրբերը սուտ հանել մըն է, այսինքն այն ամէն բան՝ որ իշխանութեան մասին աշխարհիս վրայ ամենէն աւելի յարգելի են:

151. Սակայն այս ճշմարտութիւնները ըմբռնելու համար, բաւական է մտածելը թէ ինչ է մահացուցման բնութիւնը և ինչ է առարկան: Մահացուցումը զմարդը կեղծով մը սկզբնական արդարութեան վիճակին երջանկութեանը կը դարձընէ, յորում կը գտնուէր Եդեմի սկզբնաւորութեան: Աստուած, ի՛սկ սուրբ Գիրքը, «զինքը ուղիղ ստեղծեց», եւ ամենէն տեղեկութիւն ջանէը այն բաներէն՝ որոնք մահաբեր ձախորդութենէն վերջը՝ անկարգութիւն, ախտ, թերութիւն, և այլն, ըսուեցան: — Յանկութիւնը բանականութեան կը հնազանդէր, և բանականութիւնն ալ Աստուծոյ. ամենայն ինչ կարգաւորեալ էր: Արդ՝ սկզբնական մեղքը ամէն բան տակնուվրայ ըրաւ, Աստուծոյ և մարդկան մէջ եղած նեղբերն և բնականը յարաբերութիւնը կարեց. այսչափով ալ դոհ չըլլալով, զմարդը իր անձին դէմ մշտատև պատերազմի մը մէջ կաշկանդեց, և զգայարանաց և հոգւոյն կարողութեանց մէջ եղած ազնուր ներդաշնակութիւնը չքոթեց: Մոսկալի դժբաղդութիւն, որ ողբալի հետեւանաց են՝ թարկելով զԱդաքեալը ըսել կու տար. — Մարմնաւոր եղած եմ և մեղքի ծախուած, այնպէս որ ըրածս չեմ գիտեր. վասն զի բարին կ'ուզեմ և չեմ ըներ, և չարն որ կ'ատեմ՝ յօժարութեամբ ի գործ կը դնեմ. — «Այլ ես մարմնաւոր եմ ընդ մեղօք վաճառեալ. զի զոր գործեմն՝ ոչ գիտեմ. ոչ եթէ զոր կամիմն՝ զայն առնեմ, այլ զոր ատեամն՝ զայն գործեմ» [1]:

Այսպիսի ախտաբ և վշտալից վիճակի մէջ ինչ կ'ընէ մահացուցումը. աւերակները կը նորոգէ, քայքայեալ շէնքը կը յարդարէ. կարելի եղածին չափ կը դարմանէ այն ամէն անկարգութիւնները, զոր սկզբնական մեղքը մարդուն պատճառեց, նորէն ստորին կարողութիւնները վերնագոյններուն ենթարկելով, զգայարանքը բանականութեան և բանականութիւնն ալ Աստուծոյ: Մահացուցումը ուրեմն ըստ իմիք ձգտողին կրնայ երբեմն բարոյական մարդուն երկրորդ ստեղծումը ըսուիլ, և կամ բարեպաշտ անձի մը դեղեցիկ խոսքին համեմատ, «սկըզբնական արդարութեան յաւելուած մը»:

Այս առաքինութեան բացարձակ հարկաւորութեան նկատմամբ բաւական է ըսելը, որ զայս մերժելով աւետարանը կը մերժուի. որ այս առաքինութիւնը քրիստոնէութեան հիմ կը դնէ, և երբեք զանց չըներ անոր խիստ պարտաւորութիւնը յիշելուս, ինչպես որ հաղարաւոր տեղերէ յայտնի կ'երևի:

— «Վա՛յ ձեզ մեծատանդք, զի ընկալայք զմխիթարութիւն ձեր: Վա՛յ ձեզ որ յագեալք էք այժմ:... Վա՛յ ձեզ որ ծիծաղիքդ այժմ:... Երանի՛ որ լան այժմ:... Երանի՛ սգաւորաց:... Եւ ասէր առ ամենեսեան. Եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն, և առցէ զխաչ իւր հանապազ և եկեսցէ զկնէ իմ:... Յաւուրցն Յովհաննու Մկրտչի մինչև յայժմ արքայութիւնն երկնից բռնադատի, և բռնաւք յափշտակեն զնա:... Մտէք ընդ նեղ դուռն. քանի՛ ընդարձակ է դուռնն, և համարձակ ճանապարհն, որ տանի ի կորուստ:... Եթէ ոչ հատ ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցէ, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցէ, բազում արդիւնս առնէ» [2]:

Եւ ոչ միայն Յիսուսի Քրիստոսի սուրբ աւետարա-

1 Հռոմ. է. 14, 15:
2 Ղուկ. ջ. 24: Մատթ. ծԱ. 12: Յովհ. ծԲ. 24:

նին մէջ պարունակուած վարդապետութիւնը մահացուցման հարիւրորութիւնը կ՚ապացուցանէ, այլ պատուիրանին յառաջ կանխելով իւր անձին օրինակը, որ տուաւ մեղի երկրպագելի Փրկիչն մեր՝ իւր մահկանացու կենաց երեսուն և իրիք տարուան մէջ. որ ուրիշ բան չէր՝ եթէ ոչ մեղի սորվեցուցած մահացուցման վերջին աստիճանի կատարելութեան գործադրութիւնը. անանկ որ մեծն Աբաքեալը իւր աստուածային վարդապետին մահացուցեալ կեանքը կարծես թէ կը համառօտէ այս հետևեալ երկու վճռով. « Ինձ համար ոչ եթէ անձին հաճոյ եղե[1]... խոնարհեցոյց զանձն » [2]: Ուսկից ծագումն ունեցաւ իւր կատարեալ քրիստոնէական առածը. « Իսկ որ քրիստոսինն են՝ զմարմինս իւրեանց ՚ի խաչ հանին կարեօքն և ցանկութեամբք հանդերձ » [3]:

Այսպիսի վարդապետութեանց դէմ ինչ է մեր պարտքը, եթէ ոչ ընդլինիլ որ առաքելոց Իշխանը առանկ եռանդեամբ մեղի կ՚ապըսպրէ. « Ջանայ ի դոյնս իսկ կոչէցարուք: Զի և Ինքնատս վասն ձեր մեռաւ, և ձեզ եթող օրինակ՝ զի վճիտ երթայցէք հետոց նորա » [4]:

152. Սակայն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի վարդապետութեան և օրինակին կրկին հեղինակութիւնն ալ մեկդի թողուլով, մի թէ բաւական չէ վայրկեան մը մեզի մտածելը իսկ և իսկ տեսնելու համար, որ չարը հակամարմն և բարին ալ բնութեամբ և աշխատութեամբ այսինքն մահացուցմամբ գործելով, չարը անվրէպ վրէզ կը քարշէ կը տանի, եթէ մահացուցումը վրէզ մշտապես ոտքի վրայ չբռնէ: Անոնի աշխատանք, կռիւը բացուած է. հոգին և մարմինը փոխադարձաբար մեկզմեկ կը հալածեն. « Զի մարմին ցանկայ », կ՚ըսէ Աբաքեալը, « հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ մարմնոյ » [5]: Հարկաւոր բաւես պէտք է որ կամ մեկուն և կամ միւսին կողմը բռնենք. պէտք է որ կամ մահացուցումը չ՚ուզելով՝ երկրաւոր մարդ դառնանք, որ փափկութեամբ կ՚ապրի

1 Հռոմ. ժե. 3:
2 Փիլիպ. Բ. 8:
3 Գաղատ. Ե. 24:
4 Ա. Պետր. Բ. 21:
5 Գաղ. Ե. 17:

երկրիս վրայ. « Այսօրին մարդն յերկրի՝ հողեղէն». և կամ թէ որ չէ, այն երկնային մարդը ըլլանք՝ որ մահացուցմամբ երկնից հետ կը կենակցի. « Իսկ երկրորդ մարդն Տէր՝ յերկնից »[1]: Ի՞նչ ընելու է ուրեմն: Աստուծոյ հնազանդելու է, որ կ՚ըսէ. զնուէ քու անձիդ դէմ, սանձէ զգայարանքներդ, նուաճէ կիրքերդ, փախիր վտանգաւոր առիթներէն, ուղղուէ, և ջար հակումներդ, թերութիւններդ և մոլութիւններդ բժշկէ, և վնդէ ձչմարիտ առաքինութիւններով զարդարէ. « Այդ կացցէ զքեզ այսօր... խլել և բրել... շինել և տնկել » [2]: Իսկ արդ, այս ամէնքը պարզ խորհուրդ են. և մի թէ տարբեր են աստուածանին մեղի պատուիրած մահացուցմանէն:

153. Բայց եթէ այս ամէնքը կրնայ ըսուիլ և նոյն քրիստոնէի մը համար, և եթէ միայն քրիստոնեայ ըլլալը մահացուցման օրինաց հանդիսասէս կը պարտաւորէ, ինչ կրնայ ըսուիլ քահանային նկատմամբ, որ վճռակին դրութեամբը այն աւետարանը կը վարդապետէ, որ խաչս կը սորվեցընէ զմահացուցումն, և որ իւր աստուածային Վարդն պէս սորվեցընելէն յառաջ պէտք է որ ինքը անձամբ ի գործ դնէ. « Սկսաւ առնել և ուսուցանել » [3]:— Մարդուս համար, կ՚ըսէ սուրբն Լիզուորի, երկու տեսակ կեանք կայ. հրեշտակներու կեանք մը, որոնք ուրիշ բան չեն մտածեր՝ եթէ ոչ Աստուծոյ կամքը կատարել. և անասուններու կեանք մը, որոնք միայն իրենց ղգայարանքները յագեցընելու կը նային:

Եթէ մարդ ամէն բանի մէջ Աստուծոյ կամքը կատարելու ըլլայ, հրեշտակ մը կը դառնայ. և ընդհակառակն անասուն կ՚ըլլայ, եթէ միայն ղգայարանքներուն հաճոյքը կատարելու հոգ տանի:—

Ասկից ալ յայտնի վարդապետութիւն մըն է. արդ ինչ պիտոր ընէ քահանան, որ իւր քահանայական պաշտօնին գերազանցութեամբը երկրի հրեշտակին է: Հրեշտակ պիտոր ինայ, թէ անասուն դառնայ. քան զորշղութեան՝ կամ մեկը պիտոր ըլլայ, և կամ միւսը: Ես որ-

1 Ա. Կորնթ. ժե. 47:
2 Երեմ. Ա. 10:
3 Գործ. Ա. 1:

պէս չի իւր ընտրութիւնը ձանչցուի, մահացուցման գործադրութեան մէջ պարունակուած քանի մը կէտերուն վրայ մանաւոր տեղեկութիւն մը տանք:

Ճշմարտապէս կրնայ ըսուիլ որ այս առաքինութեան կրթութիւնը այնչափ տարածուած է, որչափ որ հարկաւոր է գործադրութիւնը: Եւ յայտնի է, վասն զի մահացուցման առարկան մարդկային բնութեան կատարեալ և հիմնական նորոգութիւնն է. և որովհետև սկզբնական մեղքը այս բնութիւնը բոլորովին ոտնկոցեր և խանգարեր է, յայտնի է որ մահացուցումը, որուն նպատակը զայն կազդուրելն է, հարկաւորապէս պէտք է որ բովանդակ մարդուն վերաբերի: Ուստի և կը բաժնուի նեղքին և արտաքին մահացուցում, որ մի և նոյն ատեն կը գործէ մարդուն հոգւոյն և մարմնոյն վրայ, ըստ ո-րում երկուքն ալ նորոգութեան կարօտ են:

Ուստի չանանք մտադրութեամբ անդամալնենք, եթէ այսպէս կրնայ ըսուիլ, մեր « էսը », մսոյ առ մսոյն քննելով և ուշադրութեամբ չնկնելով անոր որպէս սութիւնը մահացուցման նկատմամբ:

154. « Խորհուրդները »: Ինչ կ'ըսէ մահացուցումը այնչափ մտածմունքներու վրայ, որոնցմով դէպ ի նիկա միշտ լեցուն է: Ինքը կ'ըսէ որ խորհրդով կրնանք մեզմէ հեռանալ մահուան ալ, որ ինչ ինչ նեղութիւններու նկատմամբ՝ խորհրդոյ և ցանկութեան մը մէջ կամաւոր դեղերիլ մը բաւական է հոգւոյն մահ պատճառելու, և սուրբ մը գտուտպարտեալ ընելու համար: Ինքը կ'ըսէ, որ խորհուրդները չար գործոց առաջին բողբոջներն են: Կ'ըսէ որ մնոտի և անպէտ խորհուրդներն ալ միշտ չար հակման նպատակաւոր են, և հետևաբար ալ կը պատմադրեն և մեղքի մէջ կը ձգեն: Ինքը կ'ըսէ, որ այս ընդհանրապէս խորհուրդները մինչդեռ հոգւոյ մէջ բնակելու թոյլ կը տրուի, ժամանակ կորնչցնելու պատճառ կ'ըլլան, որ շատ աւելի աղէկ կերպով կրնար գործածուիլ օգտակար և ծանր բաներու վրայ մտածական ընելու համար: Ինքը կ'ըսէ վերջապէս, որ այս ոնչնչային խորհրդոյ խոստովանութիւն և ապաշխարութեան ներգործութեանց մէջ

անտեղի ցնորմանց մայր է. ցնորք, որ զհոգին պաղութեան և ցամաքութեան ոնախական վիճակի մէջ ձգելով, աղօթքէ ձանձրութիւն կը պատճառէն և աղօթքով ընդհանուրեանք առաջ չնորհքներէն կը զրկէն:

Մահացուցումը այս ամէն բաներէն կը հետևցընէ, որ մենք մշտապէս պէտք է պատերազմինք այս ընդհանրական խորհրդոյ դէմ. վասն զի միշտ ամենքն ալ — կամ մեղանչական են — կամ վտանգաւոր — և կամ անօգուտ: — Ինքը մեզի կ'արգելու հաւանութեամբ այսպիսի խորհուրդներու մէջ կանգ առնուելը, և կ'ուզէ՝ որ զանոնք մերժենք, տեղի տալով աւելի ծանր, օգտաւէտ, բարեպաշտ և առաքինի քահանայավայել խորհուրդներու:

Ասոնք է վարմունքնիս: Խորհուրդներուս մէջ մահացուցած ենք: Արդեօք հոգիներուս ապարիզը արձակ թողուցած չե՞նք շատ մը ամենաանուոյ խորհուրդներու, որոնք ըստ հաճոյից հոն կը ձեռնեն: Մի թէ տեսել չի պատահիր, և երբեմն ալ գուցէ ամբողջ ժամերով:

Որո՞նք են մեր խորհուրդները՝ երբ առանձին կը գտնուինք սենեկի մէջ կամ դուրսը:

Արդեօք մահացուցումը ամենևին գործք մը չունի՞ մեր խորհրդոյ նկատմամբ, թէ պատերազմելու, թէ նորոգելու, թէ մերժելու ինչ որ գժբաղդաբար չար է: Ամենայն ինչ կարգաւորեա՞լ է: Աստուած գո՞հ է. մենք իսկ գո՞հ ենք մեզմէ:

Խիղճերնիս արդեօք ամենևին չի՞ յանդիմաներ բանի մը վրայ. կ'ըսե՞ մեզի արդեօք որ յայսմ՝ճմարիտ քահանայ ենք, և սուրբ քահանայի վարմունք ունինք: Եթէ այսպէս է, օրհնեալ ես Աստուած և յաւետ երթանք:

155. « Բաղձանքներ »: Բաղձանքն ալ խորհուրդ մըն է, բայց ոչ ամէն խորհուրդ բաղձանք է: Ընդհանրական բաներ կրնայ մեկը մտածել առանց հատատապէս ա-նոնց վրա դարձնելու: Բաղձանքը ուրիշն պարզ խորհուրդ մը շատ աւելի կարևոր բան է:

Բաղձանք, ով, ինչպիսի՛ լայնատարած ասպարէզ մը կը կազմեն մահացուցման մեծամեծ գործքեր գործելու

համար: Ինչպէս խորհուրդներու մէջ, այնպէս ալ բաղձանքներու մէջ ինչ որ բարի, օգտակար, բարեպաշտ և աստուածային կամաց համաձայն չէ, հարկաւորապէս ընդդէմն է, կամ վտանգաւոր և կամ մեղսագործական է, և հետևաբար պէտք է որ մահացուցման սուրբն ոտկը ջնջէ:

Կ'ուզենք մենք ջերմ ձանձնալ և հիմնովին ձանձնալ: Փնտռենք բաղձանքներուս՝ մանաւանդ աստուածային բաղձանքներուս՝ նիւթը և առարկան:

Սուրբ քահանան բոլոր իր բաղձանքները այս ընթեք նպատակներուն կը վերածէ. — Աստուծոյ մեծագոյն փառքը, — ընկերին սրբութիւնը, — և իր փրկութիւնը: Ամէն բաղձանք որ այս երեք վախճաններէն մէկուն չի պատկանիր, ղացացնին պէս՝ դէմ առ դէմ կը մաքառի: Մահացուցում է որ զսուրբ քահանան այսպիսի երջանիկ վիճակի հասուց, և մահացուցում է որ զինքը հոն պիտոյ պահպանէ:

Մենք ալ այսպէս ենք: Տեսնենք ուրեմն: Մենք ալ բաղձանք ունինք: Ա, յո՛, անտարակոյս. առանց բաղձանոյ մարդ կ'ըլլայ: Ուրեմն մեկդի ձգենք անձնասիրութեան խաբէութիւնները. ինչ է բաղձանքներուս նիւթը: Մի թէ սուրբ կեանքէ մը աւելի երկար կենալ չենք բաղձար. — մեղի ինկած խոնարհ պաշտօնէն աւելի բարձր իշխանութիւնի մը. — անաչխատ և դիւրին ղուարձութիւն ու զբօսանաց. — ընկերին բարի և օգտակար ըլլալէ աւելի պատուաւոր պաշտօններու. — Աստուծոյ մեղի խաւրած քանի մը հատ խոստովանորդութիւն աւելի խոշոր բազմութեան մը. — և վարձ մեր սոսկած և լքած քարոզներու՝ քիչ մը գովասանաց և աշխարհային փառաց, քան թէ պարզ հոգւոյ և կրթական քարոզներով ճարտուած հոգւոց փրկութիւն: Մի թէ չենք բաղձար ձախորդութենէ աղատ հոչակաւոր յաջողութեան, առանց կռուի՝ յաղթանակներու, ժամանակաւոր օգտի՝ առանց օրինաւոր պատճառներու, հաճոյական զբաղմանց, անցաւ ուրախութեան, անգատ գովասանաց. քաղցր, հանդիստ, բարեկեցիկ, անխռով, անաչխատ և

անարգութենէ հեռու և ամէն տեսակ խաչէ ազատ կեանոց. այսինքն ապրիլ մը մտածելով, աստուածային փըրկչին կենաց բոլորովին հակառակ կեանքի մը, որուն վոխանորդ կը դանուինք. այնպիսի կենաց մը, կ'ըսէ Պօսուաէը, յորմէ սուրբերը և մանաւորապէս առաքեալ՝ կան անձինք պէտք էր որ սոսկային:

Ո՞րչափ ղբաղմունք մահացուցման համար, եթէ ուզենք պարտաւորիլ զինքը ընաջինջ ընելու այս ընդդէմ բաղձանքները, և սուրբ քահանայի մը արժանի եռանդուն բաղձանացը փոխելու:

136. «Դատողութիւններ»: Ո՞վ կրնայ ըստ արժանւոյն պատմել սկզբնական մեղսոյ մեր ընութեան աղէտներըն մասին պատճառած անկարգութիւնը, հոգիներուս այն գործողութեան նկատմամբ՝ որ դատողութիւն կ'ըսուի:

Սրտերուս մէջ եղածին և չեղածին, — ճշմարտին և սուտին, — բարւոյն և չարին վրայ վճռել, և այս ամէն կէտերուն մէջ ըստ պատշաճի կասկածի տեղի տալ, ահաւասիկ կ'ըսէ Պօսուէ, բարի դատողութեան գործք մը: Ահաւասիկ ինչ որ մենք դիւրութեամբ, կամ մանաւանդ բնականապէս պէտք էր ընէինք, եթէ դեռ ևս սկզբնական արգարութեան վիճակին մէջ դանուէինք, և կամ գոնէ մահացուցումը ներկայիս կարելի եղածին չափ այն վիճակին մօտ պահէր:

Բայց անոր տեղը, ո՛րչափ սխալներ, ո՛րչափ ցնորքներ: Ո՛ և իցէ վճիռ մը չի տուած՝ ամենամեծ զգուշութիւն ընելով՝ քննելու, կշռելու, և նպատակ ու հակառակը մտածելու ենք: Կը կարծենք որ կ'ընենք, բայց երբեք չենք ըներ. և կամ ըստ պատշաճի չենք ըներ, և հաստատ ու վայելուչ ուշադրութեան պակասութեամբ՝ ըստ հաճոյից դատելու կը հակինք:

Սղկէ դատելու համար դատողութենիս հասուն ըլլելու հարկ եղած ժամանակը՝ առնելու և գործածելու ենք: Առանցմէ բան մը ի գործ չենք դներ: Ամբարտաւանութիւնը, չափազանց չտալը, անհամբերութիւնը և նախապաշարումը իրենց քմայ հաճոյամբ կառավարելով դատողութենիս կը չեղեն:

Ազէկ դատելու համար միշտ նեբկայ ունենալու ենք հաւատոյ հաստատուն սկզբունք մը, որ մեր դատողութեան կանոն ըլլայ: Նոյնը այլոց կ'ըսենք և կը սորվեցնենք, և ամպիոնէն և խոստովանարանին մէջ և ուրիշ տեղ կը խրատենք, այսու ամենայնիւ ուրիշին խրատածնիս մենք ի գործ չենք դներ:

Ազէկ դատելու համար՝ մոքերնիս պահելու ենք որ մեր հոգին ալ իւր ախտութեան մասը ունի, և հետևաբար մեր սխալականութեան ալ հաւատալու ենք: Ի տեսականին կը համաձայնինք, բայց ի գործնականին ուրիշ բան կ'երևի, ըստ որում առէպ կարծիքնիս պաշտպանելու յամառութիւնը՝ յայտնապէս կ'ապացուցանէ անձնական գրեթէ անսխալականութեան վստահութիւննիս:

Անհաւասիկ այն գլխաւոր սխալմունքները, զորոնք մտածողութիւնը խորհրդակից եղած առեն կը կանխէ: Ո՛րքան խոհեմ, խոնարհ, վերապահեալ, չափաղանց հանճարեղ և քրիստոնեայ է սրբոց դատողութիւնը: Դատողութեան մասին անոնց հիմնական սկզբունքն այս է, որ մարդոյ միտքը պէտք է որ Աստուծոյ մտաց ենթարկուի, և ասկից ծանուցուած առենը անկից պէտք է լսէ: Այս սկզբունքը դնելով կ'ըսեն սուրբերը, Աստուծոյ դատողութիւնը մեր դատողութեան կանոնն է: Անհաւասիկ առաջարանը, բանանք: Կը բանան և կը գտնեն թէ ինչ էր Յիսուսի Քրիստոսի դատողութիւնը՝ կենաց, մահուան, երկրի, երկնից, մեղաց, առաքինութեան, աղքատութեան, հարստութեան, ցաւոց, ուրախութեան և քրիստոնէի մը կենաց մնացորդ բաներուս վրայ. և Յիսուսի Քրիստոսի այն ամէն բանի վրայ ըրած դատաստանը առնելով իրենց դատողութիւնը կը լուսցնեն, և բոլորովին անոր դատաստանին կը համակերպին:

Կը հետևինք արդեօք այս բարի օրինակին:

Ջընթերցողը կը հրաւիրենք Մաթէոսի հինգերորդ գլուխը կարդալու, որուն սկիզբը գրուած են « ուրախ եղանութիւնները », զորոնք Պօսուէ ամենայն իրաւամբ « քրիստոնէական վարդապետութեան համառօտութիւն

նը » կ'անուանէ: Մի առ մի կարդալով այս երանութիւնները, ամէն մէկէն վերջը մենք մեզի հարցընենք, թէ արդեօք սուրբերուն պէս հաստատութեամբ կը հաւատանք. և ատոնց վրայօք դատողութիւննիս Յիսուսի Քրիստոսի դատաստանին կատարելապէս կը համաձայնի՞ն: Եթէ գժբաղդաբար այս երկու դատաստանաց մէջ խոսիր մը գտնելու ըլլանք, ինչ ընելու ենք: Յայտնի է, զմահացուցումը սրտնութեան կանչելու ենք, վասն զի անկից է որ պէտք է լուսցնէ մեր անմիտ դատողութիւնը, և խոնարհաբար ենթարկէ Աստուծոյ դատաստանին:

157. « Երևակայութիւն »: Արդէն մեզի ծանօթ են անոր այլանդակութիւնը և հետևաբար ողորմելի թափառականութիւնը, երբ չենք բարեխառներ և զսպեր զայն: Մի գուցէ ըսա ինչեան չար ըլլայ: Ստուգիւ ոչ: Անկից մեր հոգւոյն ամենապէտքեցիկ և ազնիւ ձիրքն է. անով մենք մեզի կը ներկայացընենք տեսարաններ, պատկերներ, երբեմն սխուր և երբեմն ուրախալի դէպքեր, զորոնք օգտաւէտ և սուրբ կերպով կրնանք գործածել մտածականներուս, քարոզներուս, քրիստոնէական վարդապետութեան մեկնութեանց մէջ, աւելի ազէկ և յայտնապէս բացատրելու համար զանոնք: Սակայն այսչափ օգտաւոր քով որչափ ընդունայնութիւններ, որչափ ցնորք և անպատեհութիւններ:

Այս կարողութիւնն էր, զոր Թշնամին մանաւանդ պէս ձեռք առաւ զմեր նախահաքրը փորձելու համար. ամենամեծ բարեաց պատիր նկարագրութեամբ հրապուրելով զկերնիս հաւատացուց, որ անձամբ պիտոր ըլլար իրենց էրջանկութիւնը, երբ Աստուծոյ պէս ըլլային. « Լինիցիք իբրև զԱստուածս » [1]: Արդ մի և նոյն թշնամին է որ կը ջանայ մի և նոյն զէնքով զմեզ ալ փորձելու և խաբելու:

Երբ, զոր օրինակ, բարձրագոյն պաշտօնի մը պատուհութիւնը, և զանիկայ ձեռք բերելով անկից յառաջ գալիք օգտաւէտները կը ցուցընէ մեզի, երևակայու-

1 Ծննդ. Գ. 5:

Թիւննիս է որ ձեռք կ'առնէ. և եթէ մահացուցումը վերջ հասնելով ամենայն ինչ իւր բնական վիճակին մէջ չի պարզէ, ամբարտաւանութիւնը զմեզ կ'ուռեցընէ, այն փառաւոր պաշտօնին փոխարէն կը խաբէ, հոգիներուս հետ սրտերս ալ բոլորովին տակնուվրայ կ'ընէ. և այսպիսի պաշտօն մը ձեռք բերելու համար, որուն գոյէ երբեք ձեռնհաս չ'ըլլանք, ունեցած պաշտօններուս ամենակարևոր պարտաւորութիւնները կատարելու զանց կ'ընենք:

Երբ աղօթքի առեն ցնորական մտածմունքներուս շարունակ յաջորդութիւնը հոգիներս կը գրաւէ և կը ցնդեցընէ, գարձեալ երևակայութիւն է, որ զմեզ այս պէս թափառեցընելով աղօթքին պատուղէն կը զրկէ զմեզ:

Գուցէ այլոց կամ առանց չարութեան ըսած խօսքերէն և կամ ըրած գործքերէն դրդռուած կամ նախատուած առենիս, եթէ քննելու ըլլանք, գարձեալ երևակայութիւնը կը գտնենք՝ որ այն խօսքը կամ գործքը երևոյ ամէն անյաղող պարագաներով կը ներկայացընէ մեզի, և զմեզ կը գրգռէ այն անձին դէմ, յորմէ կը կարծենք որ ցաւելու իրաւունք ունենանք:

Երբ ապագային վերջ մեզի նայուածք մը ձգելու ըլլանք, սրտերնիս ալ բնականապէս արտում ըլլալով, աւելի ևս կը արտամի այնպիսի բաներ աչքին ներկայացընելով՝ որ երբեք չեն պատահիր. գարձեալ երևակայութիւն է, որ սրտերնիս կը լեցընէ այս նեղութիւնները, խռովութիւնները, սևամաղձը, որ այնչափ վտանգաւոր է հոգիներուս, և մանաւանդ աստուածային պաշտօններուս բարի պատուղներուն:

Երբ փոքր անհանգստութիւն մը ծանր հիւանդութեան տեղ կը դնենք, և երբ ամենահարկաւոր կը կարծենք ինչ ինչ թեթև և խոհեմութենէ չը թելադրուած զբաղումներ, և իրօք տանիլ կրցած աշխատութեան մասերնիս չափին աւելի թեթևցընելով դրեթէ զմեզ անպէտ կ'ընենք, երևակայութիւն է՝ ամենայն բարեաց թշնամին, զոր գործածելով նախանձայուզութեան գործքերնիս կ'արգելու:

Երբ ընդհակառակն առենէն յառաջ մտքերուս մէջ կը նկարենք այն ցնծութիւնները, զուարճութիւնները, ծափահարութիւնները, յաջողութիւնները և հազարումէկ բարեբաղդ դէպքերը, զորոնք կերպով մը տեսնել կը կարծենք խանդակաթ նայուածքով մը, բայց որոնք, գուցէ մտքերէս գուրս երբեք չը գանուին, երևակայութիւնս է՝ որ կը յուզէ և կը ցնորէ զմեզ իւր ընդունայնութեամբ, մինչդեռ մի և նոյն առեն կ'ընկճէ զմեզ իւր պատրիչ խաբեայ և առատ նկարներովը:

Երբ քարոզներս գրելու առեն եռանդներուս աշխուժին կը յանձնուինք, երևակայութիւնս է որ շատ անգամ զմեզ կը մոլորեցընէ: Եւ այս աշխոյժը շատ անգամ ուղղել գատողութեան արդիւնքը երեն կը գրաւէ: Եթէ ասկից չուզղեր իւր ունայնամիտ ընկերը, եթէ օրինաւոր սահմանի մէջ չի զսպեր, աքանչելիք կարծածը ուրիշ բան չէ եթէ ոչ չիմարութիւն: Սոսկ երևակայութեամբ շինուած ձառերը, կրնան նմանութիւններով լեցուն ըլլալ, բայց իրկ զուրկ են. առեակ մը լուսով կրնան փայլիլ, բայց այնպիսի լուսով որ թէպէտ կրնայ թեթև ուղեղ մը շլացընել, այլ ընդհանրութեան ձանձրացուցիչ և տաղտկալի կ'ըլլայ:

Ասանկ շուտով վերջը չհերնք կրնար բերել, եթէ մի առ մի ուզեինք թուել այն չարութիւնները, որոց մայր է երևակայութիւնը, երբ իւր ուզածին պէս սահակեալ թոյլ տրուի: Ի՞նչ բան կրնայ ասոր ամէն խաբէութեանց առաջն առնուլ, եթէ ոչ մահացուցումը, որ յաղթութեամբ զմեզ հակողութեան, աղօթքի, լուսաւոր հանճարոյ և հաստատ հաւատքի մը ազդեցութեան մղելով աստուածային խնամատուութեան ձանապարհի մէջ չ'ուղղէ զմեզ:

158. « Կիրքեր »: Ասկա խօսքով մտքերուս մէջ կատարել թշնամեաց, մահաբեր պատերազմներուս, հոգւոյ կաւոր յաղթութեանց և կամ ամօթալի պարտութեանց գաղափարը կ'արթընցնայ:

— Կրկց գէմ պատերազմը, կ'ըսէ հայրն Նըպվէօ, քրիստոնէական մահացուցման գլխաւոր կրթութիւնն

է. պէտք է որ սատիկ և եռանդուն ըլլայ, ըստ բերման ի և եղէ գժուարութենէ անընկճելի, յարատև, անանկ որ ոչ օր անցնի և ոչ ժամ առանց անոր վրայ աշխատելու, այնպէս որ երբև ձչմարիտ քրիստոնէին նշանը հարկաւորապէս Պօղոս առաքեալին «Մեռանիմք ըօրհանապազ» [1] խօսքը եղած ըլլար: Վերջապէս պէտք է անդադար ըլլայ, անանկ որ մեր մահուամբը դադարի. ըստ որում մինչև որ կենաց չունչը կայ վրանիս՝ ազատ պիտոր չը մնանք նաև թշնամիներէ, որոց դէմ պէտք է կռուինք: — Ամէն բարեպաշտութիւն (մանաւանդ պահքը) որ առ այս ուղղուած չէ, ղատարկութիւն և կամ խաբեութիւն մըն է:

Դժբաղդաբար գուցէ ամենքնիս ալ այս ձչմարտութեան վրայ ազէկ մը համոզուած չ'ըլլանք, և կամ գոնէ ի տեսականին ընդունելով՝ ի գործնականին կը մոռնանք: Ցայսմ ըմեզ խաբողը է՝ որ յաղթուած, ընկճուած և ոչնչացած կը կարծենք այն կիրքերը, որունք կամ ծածկուած են, կամ ծպտեալ և կամ թեթև կերպով սանձուած: Երբ խորհուրդնիս զմեզ կանխաւ կրած յիւանութիւն կը տանի, և տեսնելով որ ներկայիս այնպիսի դժբաղդ վիճակի մէջ չենք, քաղցր վստահութիւն մը կը ծագի սրտերուս մէջ, որ կ'աճի և կը զարգանայ, երբեք այն թշնամութեանց մէջ չ'ընկնալու առաջադրութիւններէս: Այսպիսի վիճակի մէջ (կ'ըսենք մենք մեզի). ինչո՞ւ կը վախնանք. ինչո՞ւ համար միշտ արթուն կենալու ներքին ենթարկուիլ. ինչո՞ւ համար միշտ առաւել մահացուցմամբ սևամաղձիլ. ինչո՞ւ համար, սիրեցեալ եղբայրակիցք: Վասն զի գրուած է. «Արթուն կացէք և աղօթս արարէք, զի մի անկանիցէք ի փորձութիւն» [2]: — «Բայց ըզր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ, արթուն կացէք» [3]: — «Որ համարիցի հաստատուն կալ, զգոյշ լիցի, գուցէ անկանիցի» [4]: — «Արթուն լերուք, հսկեցէք զի ոսոխն ձեր սատանայ, իբրև զառիւծ գոչէ. չքնի և ինդրէ, թէ զոմ կլանիցէ» [5]: — «Անհիւ և գողութեամբ զանձանց փըրկութիւն գործեցէք» [1]: Ինչո՞ւ գողալ. ինչո՞ւ համար ձչնշուիլ: Վասն զի մենք սուրբ Պօղոս Առաքեալէն աւելի կատարեալ չենք, որ իր անձին համար կը գողար, և խստիւ ալ զինքը կը մահացընէր. և այս չէ թէ կատարելութեան կրթութիւն մը ի գործ դնելու, այլ (աղէկ ըմբռնենք) իւր ապստամբ մարմինը զսպելու համար, որ զինքը թէ և սուրբ, կրնար ակնթարթի մը մէջ դատապարտեալ ընել. «Այլ ձնշեմ զմարմինս իմ և հնազանդեցուցանեմ, զի գուցէ որ այլոցն քարոզեցի՝ ես ինքն անպիտան գտանիցիմ» [2]:

139. Հաճելի է մեզ կիրքերս ընկճուած կարծել, վասն զի մահացուցումը զմեզ կը սարսափեցընէ, և յաղթութեան հրճուանքը՝ պատերազմին աշխատութիւններէն և առաքինութիւններէն շատ աւելի ախորժելի են: Բայց, ո՜հ, ուրեմն ստուգիւ ընկճուած են մեր այս կիրքերը. արդեօք միշտ մռնչէ և քնացած պիտոր մնան: Կարճառօտ խորհրդածութեամբ մը քննենք:

Սորդ է որ եթէ բոլոր աշխարհս ալ մեզի տալու ըլլան՝ սատիկ բարկութեան գայթակղութիւնը չենք ուզեր տալ. բայց ամենափոքր առիթ մըն ալ հանդիպելով, գաժանութեանց, անհամբերութեան, ցասկոտութեան, կծու խօսքերու տեղի տալով, կրնա՞նք ըսել որ բարկութեան կիրքը ի մեզ ընկճուած ըլլայ:

Նմանապէս և յայտնի և տգեղ փառասիրութիւնը անհաճոյ է մեզի և կը ղգուշանանք, և նաև ձարսլիկութեամբ և նախանձորդաց ալ ընտրակար և բանակատութենէ ու հաւատքէն ալ դատապարտուած հնարքներով յաջողցընելէ անդամ կը ղգուինք. սորդ, ամենասորդ: Բայց եթէ ունայնաբար մեծաւորաց գովեստին կը ցանկանք, եթէ բարձրագոյն պաշտօններու աչք կը անկենք, եթէ գովասանքներ որսալու կ'ելլենք, եթէ ամենափոքր նուաստութիւնը զմեզ կը վհատեցընէ, կրնա՞նք ըսել որ մնապարծութեան կիրքը ի մեզ մեռած ըլլայ:

Իրաւցընէ կը գարչինք ագահին վախճանէն որ իւր ոսկիներուն դէզին վրայ անօթի կը մեռնի, իրմէ հեռու

1 Փիլիպ. Բ. 12:
2 Ա. Կորնթ. Թ. 27:

1 Հռոմ. Ը. 16:
2 Մատթ. ԻԶ. 41:
3 Մարկ. ԺԳ. 37:
4 Ա. Կորնթ. Ժ. 12:
5 Ա. Պետ. Ե. 8:

գանուած Թշուառութեան մը վախէն, կծծի և ողորմելի կ'ապրի, ատոր է։ բայց եթէ կը գանձենք, եթէ սրաեր-նես խուշ է մուրացկին ձայնին, եթէ ոսկւոյն անտեղի ցանկութեամբ ձեռք կը քաշենք այնչափ բարեգործու-թիւններէ՝ զոր կրնայինք ընել, եթէ որչափ որ առնելու առեն հաճութիւն ունինք՝ այնչափ ալ տալու գժկամա-կութիւն կը ղգանք, կրնա՞նք ըսել որ ագահութենէ ա-զատ ըլլանք։

Յիրաւի կ'առնենք խաղն չափազանց սէրը. բայց այ-սու ամենայնիւ եթէ ըստ իմիք խաղը մեզի ախորժելի կու գայ, եթէ սրտանց կը փափաքինք խաղալու, եթէ երկար ժամեր խաղերու կը ծախենք, որոնք ուրիշ գործո-մունքներու պէտք էին գործածուիլ, կրնա՞նք ըսել որ խաղին սէրը ի մեզ մարած ըլլայ։

Ամենատապ է, որ ինչ ինչ վատութիւններով ժո-ղովրդեան որուած գայթակղութեանց յիշատակութիւ-նը անգամ կը սարսափեցնէ զմեզ, իրաւ է և ամեներաւ։ Բայց եթէ կուրծքերուս նեղքն չափազանց զգայուն սիրտ մը կը զգանք, եթէ գիտենք որ մարմիննիս դեռ և ս ապստամբ է, երևակայութիւննիս չափէն աւելի վառ-վռուն, բնական հակում մը առ անմեղ սէր, որ յետոյ գիւրութեամբ կրնայ վտանգաւոր ըլլալ, կրնա՞նք ըսել որ կրից մէջ ամենազարհուրելին ի մեզ խսպառ անհետա-ցած ըլլայ։

Եւ այսպէս խօսելով ամէն կրից վրայ, պէտք չէ՞ որ տեսնենք և խոստովանինք, եթէ կ'ուզենք անկեղծ ըլլալ, որ կրակէն հազիւ թէ երկու քայլ հեռու կը գտնուինք, մանաւանդ թէ նոյն ինքն ի մեզ կը կրենք զայն, և եթէ մահացուցմամբ մեզի օգնութեան չի հասնի, առիթ մը, անխոհեմութիւն մը, վայրկենական մոլի ցնդում մը բաւական են զմեզ գահավիժելու, այնպիսի անկմամբ՝ որ ջահանան վտառց գագաթէն անարգութեան ամե-նախոր անդունդը կը ձգէ։

160. « Կամք »։ Մարդուս ըրած բարիքին ալ չարիք-քին ալ արդիւնքը կամ ապարդիւնքը կամքէն կը կա-խուի, ուսկից յայտնի է որ եթէ ուրիշ բանի մէջ չէ,

գոնէ անձնական կամքին համար մտրդ պէտք է որ մա-հացուցմանն հարկաւորութիւնը տեսնէ։

Կը մահացընե՞նք արդեօք այս կամքերնիս՝ որ բա-րիքն շատ աւելի առ չարն հակեալ է։ Տեսնենք։

Ձնշուած կամք մը պէտք է հրաժարի իւր բնական հակմունքէն ալ, երբ զանոնք աստուածային օրինաց հա-կառակ և կատարելութեան արդելք գտնէ։ Իսկ ընդհա-կառակն չը ձնշուած կամք մը իւր կատարեալ հաճոյքը կ'ուզէ. և եթէ երբեմն փոքր զոհ մըն ալ կ'ընէ, ոչ այն-չափ Աստուծոյ սիրոյն համար է, որչափ որ դժոխքէն վախէն։ Որուն ապացոյց է, որ երբ կը տեսնէ թէ ո՛ և իցէ աստահակութիւն մը զինքը յաւիտենական պատժոյ վճռոյն չ'ենթարկեր, առանց խղճահարութեան ուշադիր կ'ընէ։

Մահացուցուած կամք մը մտոք և անպէտ ցանկու-թեանց մէջ չի դադարիր, մանաւանդ թէ կը ջանայ կար-դաւորեալ և օրինաւոր եղածներն ալ չափաւորելու, Սալէզեանին հետ ըսելով, թէ « փափագանս շատ քիչ բան մըն է, այսու ամենայնիւ այս շատ քչին ալ շատ քիչ կը փափաքիմ »։ Ընդհակառակն մահացուցմանէ զուրկ կամք մը իւր ցանկութիւնները կ'աւելցընէ փոխանակ զանոնք նուազելու, և չէ թէ միայն յօժարութեամբ կ'ընդունի, այլ զանոնք գործադրելու կը ջանայ։ Եւ ո-րովհետև շատ անգամ չի յաջողիր, անոր համար ալ կը խռովի, կը տագնապի, կը վհատի և բարիք մը գործելու գրեթէ անկարող կ'ըլլայ։

Ձնշուած կամք մը մեծաւորաց կամքին մէջ Աստու-ծոյ կամքը կը տեսնէ. ամենաթեթև անհնազանդութիւն մըն ալ նրան համար ապստամբութիւն է, և հրամայուած բանի մէջ երբեք չ'ուզեր յանցաւոր գտնուիլ, որչափ ալ թեթև ըլլայ։ Ընդհակառակն չը ձնշուած կամք մը մեծա-ւորաց կամքը պարապուի կը հանէ, և հաղար հնարքներ կը գտնէ անոնց հրամաններէն խոյս տալու համար, և թիւր ընթացքը այնպիսի փաստերով արդարացընելու կը ջա-նայ, որոնք արտաքուստ ալ անյարմար ըլլալով խաբուիլ ուզողներն անգամ չեն կրնար խաբել։

Մահացուցուած կամք մը ոչ միայն չի վախնար, այլ մանաւանդ թէ օգտակար կը սեպէ բացարձակ կանոնի մը հրամանը, որ ուղղէ իւր քայլերը և չեղելու թոյլ չի տայ: Բայց սանձարձակ կամք մը երբեք կապի չի յարմարիր. կանոնի մը ենթարկուելիւնը՝ թէ և խիստ ալ ծանրոյ, իրեն համար անտանելի լուծ մըն է: Ձանձրոյք, անկախութիւն, անկարգութիւն, աղաւաղութիւն առանց քննելու, ահա իրեն ախորժածը:

Վերջապէս ճնշուած կամք մը հաճութիւն կը զգայ, մանաւանդ թէ պարտք կը սեպէ ղինուելու ոչ միայն մեծաւորաց, այլ ո՛և և նոյն մարդու կամաց, երբ Աստուծոյ փառաց և կամ ընկերին օգտին համար ըլլայ: Ընդհակառակին, մահացուցմանէ զուրկ կամք մը ուզածը յամառութեամբ կ՚ուզէ, և ոչ երբեք փոքր զոհ մը կ՚ընդունի յօգուտ խաղաղութեան, սիրոյ, մարգասիրութեան և կամ ընկերական վայելչութեան: Յամառութիւն, ահա ասսիկ իւր կանոնը, յաղթել ինչ որ իրեն կը հակառակի, ահա ասսիկ իւր փառքը: Ակն վերոյիշեալ օրինակներով դատենք, թէ մեր կամքն ալ մահացուցման օրինաց կը հետևի՞ թէ ոչ:

161. « Մարմին »: Ի մէջ, կ՚ըսէր Լմոնցի աղնիւ մարդիրոս մը, հոգին կը հրամայէ և մարմինը կը հնազանդի. — ով որ կրնայ նոյնը ըսել իր անձին համար ալ, անկայ իւր մարմինը մահացուցած է: « Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ մարմնոյ » [1], կ՚ըսէ սուրբ Պօղոս առաքեալը. ով չի գիտեր մարմնոյն այս մշտական պատերազմը հոգւոյն դէմ: Անկայ իւր զգայական ախորժակը ուզի և նիւթին հակամէտ է, անոր բնածին բարքը՝ բիրտ կրքերու մէջ կը գտնէ իրեն հաճութիւնը:

Իսկ ընդհակառակին հոգին իւր բնութեամբ հակեալ է իւր բնութեանը յարմար հոգևոր բերկրութեանց. և մանաւանդ երբ հանճարոյն և հաւատքին մաքուր լուսովը լուսաւորուած է, աշխարհքիս ընդունայն զուարճութիւններէն կը նեղի և կը ձանձրանայ, և միայն Աստուծ-

1 Գաղ. ե. 17:

մէ յուսացուած ճշմարիտ բարեաց կը փափաքի: Սակայն երբ մարմինը կը կառավարէ զինքը, մանաւանդ թէ անամթաբար իրեն կը տիրէ, ան առեղը կարծես թէ ինքն ալ մարմնաւոր կը դառնայ. ալ ախորժելի չեն իրեն առաքինութեան զուարճութիւնները, և ոչ ալ հաւատոյ ճշմարտութիւնները իրեն մտածականներու նիւթ են: Գերի մըն է, մարմինը զինքը նուաճելով՝ տէր եղած է:

Կ՚ուզէ՞նք գիտնալ թէ արդեօք ի մէջ մարմինը հոգևոյ հպատակ է, և թէ յափշտակած չ՚ըլլայ այն իշխանութեան մասը, զոր պէտք էր որ երբեք գործածէ՞: Քննենք:

Արդեօք ամենասիրելի և ամենաքաղցր հաճութիւնս աստուածային ծառայութեան և պարտքերնուս կատարման մէջ կը գտնե՞նք: Հո՛ն է արդեօք որ իրաւցընէ երջանիկ կը գտնենք զմեզ, և ասկից դուրս անհանգիստ:

Կը սիրե՞նք խաղերը, ուրախութիւնները, աղմկալից ընկերութիւնները, մտոմ հետաքրքրութիւնները, և այն ամենայն ինչ՝ որ հաճոյ է զգայարանաց: Այսպիսի բաներու մէջ ըստ քմայ ցանկութիւնիս կատարելու առիթը փափագելով կը փնտռե՞նք արդեօք:

Խօսակցութիւններս չե՞ն հաստատեր արդեօք որ նիւթական զուարճութիւնները հոգևորականներէ շատ աւելի ախորժելի են: Աչաքինեներուն վրայ ատկ և ականդեամբ կը խօսի՞նք, և երկրորդներուն վրայ ցանցառ և պաղութեամբ:

Անպէտ այցելութիւնները, և երկարատև զբօսանքները արդեօք աւելի տիրելի չե՞ն մեզի, քան թէ այն ծանր աշխատութիւնները և ընկերաց և մեզի համար օգտաշատ ուսմունքները:

Մի՛ թէ չե՞նք զգար որ երկրաւոր հաճութեանց մէջ ժամերը ամենայն արագութեամբ կը վազեն, և ընդհակառակին ալօթքի առեն յաւիտեան կ՚երկարին:

Եթէ այս ամեն հարցմանց գոհացուցիչ պատասխան չենք կրնար տալ, չուտով մահացուցման մէջ մեզի տիրող հեշտութեան դէմ պատշաճ գեղը փնտռենք:

162. « Զգայարանք »: Ասսիկ այն դուռը՝ ուս-

կից Թշնամին ներս կը մտնէ. ահաւասիկ կրկից զօրաւոր բարեկամները. ահաւասիկ մեզմէ ընդարձակ դռները, որոնք միշտ բաց կը մնան, եթէ մահացուցմունը զանոնք փակելու հոգ չի տանի: Ինչեր չենք ըսած, և ինչեր չենք ըսեր ամէն օր ամպիոնէն հաւատացելոց, խոստովանութեան մէջ ապաշխարողաց, այն վանդակներուն նկատմամբ՝ որոնց մէջ կը ձգեն իրենք զիրենք, տալով զգայարանաց այն ազատութիւնը՝ որուն այնչափ կը բաղձան: Ա՛յս այլոց առած փրկաւէտ աղդարարութիւններուս և խոհեմ դասերուս մենք ալ կը հետեւինք. զանոնք ի գործ կը դնենք անձնական օգտութիւններուս համար:

«Աչքերնիս» միշտ պարկեշտութեան հրամանին տակ գտնուած են: Յարատեւ վախի մէջ կ'ապրինք արդէօք այն երկու սոսկալի եղեռնագործութիւնները չկրելով, որոնց մէջ ինկաւ Դաւիթ մեկ նայուածքով մը, թէև Աստուծոյ օգնութեամբ զարգացած: Երբեմն կը տեսնուին քահանայք, որ իրաւունք առանց յարութեան սակայն վանդակաւոր և գայթակղեցուցիչ թեթեւութեամբ՝ երբեք չեն կրնար աչքերնին զսպել: Ամէն բան կ'ուզեն տեսնել և նայիլ, իրենց վրայ վատահելով այնպիսի առարկաներու վրայ նայուածքներ կը ձգեն, զորս համարձակապէս նայելու բարեպաշտ աշխարհականներն ալ կը խոչնին: Ա՛յս անպարկեշտութիւնը շատ վանդակաւոր ըլլալէն զատ, բոլորովին ալ հակառակ է այն սրբութեանը՝ որով պէտք է քահանայ մը զարդարուած ըլլայ, և գայթակղութիւն կը պատճառէ ներկայ գտնուողներուն, որոնք որչափ որ կը պատուեն ու կը յարգեն պարկեշտ, երկիւղած, նայուածքի կողմանէ ամբիծ քահանաները, այնչափ ալ աւելի կը խորշին անպարկեշտ և մահացուցմանէ զուրկ քահանաներէն:

163. «Լսելիքն» ալ սակայն շատ մը մեղքերու առիթ է: Կը զսպե՞նք արդէօք ի մեզ այն օրական լուրերը առնելու փափաքը: Ա՛յս ցանկութիւններս արատաբեր ալ ցոյց չե՞նք տար. և չի՞ հանգիստը որ զուրկին ալ դրդռեն մեզի պատմելու այնչափ անօգուտ բաներ, որոնք ուրիշ

բանի չեն ծառայեր՝ եթէ ոչ ընդունայնութեամբ գլուխնիս լեցնելու, որոնք յետոյ աղօթքի առեն մտաց ցընդմամբ զմեզ կը նեղե՞ն: Աւելի ևս, արդէօք մեր կոմմանէ առիթ չե՞նք տար այնչափ պարապ խօսքերու, բարբանջմանց. և դատարկապօրութեան երկար ժամեր չե՞նք մսխեր ունայնամիտ և թեթեւսոլիկ անձանց հետ, որոնց երջանկութիւնը երկարաւոր դատարկախօսութեան մէջ կը կայանայ: Արդէօք երբեմն քիչ մը եղբայրսիրութեան դէմ եղած խօսքերու ալ ուշկնդրութիւն չե՞նք տար, և փոխանակ շուտով վերջ տալու այնպիսի վատահութեանց, երբ առիթը ներկայանայ, կամ դուռ ոչնչանալ մը ցոյց տալով և կամ յարուկ լուութեամբ, մի թէ այսպիսի խօսակցութիւններէ զգացած ըլլարձանութիւնիս խօսողներուն ալ չե՞նք ծանուցաներ:

Յայտմասին սուրբ և մահացուցեալ քահանային վարմունքը գիտենք, որ մինչև հիմայ ըսածներուս հակառակ է: Այս ուրեմն ըստ որում մենք ալ պէտք է որ սուրբ քահանայ ըլլանք, հետեւինք անոր չինչ պարկեշտութեան և սիրալիր զգուշութեան, որոց գեղեցիկ օրինակները կ'ընծայէ մեզ:

164. «Շօշափուն»: Ոչ ոք կ'ուրանայ, ամենափափուկ և ամենեն աւելի զգայնութեան հակեալ զգայարանքն է: Անշուշտ մինչև ժուժկալութիւնը վերացընելու չափ յառաջ չենք երթար. բայց այսու ամենայնիւ առանց ծայրը հասնելու՝ զոր ինքը կը գատապարտէ, թէ առ մեզ և թէ առ այլս նկատուած չանգիմանութեան արժանի անմաքուր թեթեւութիւններ չընե՞նք: Զաւիկ գուբս զբաղութիւն և ուրախութիւն, ընդհանուր անմահացուցում մը, ազատութենէ ի վեր բարեկամութեամբ օրինաւոր կարծուած ընտանութիւն մը, երբեմն այնպիսի անհոգեմտութեան մէջ կը ձգեն՝ որ վտանգէ ազատ չեն, մանաւանդ երբ փափուկ խղճի և հաստատուն ատութեան տէր մը չենք:

Որչափ ալ որ զգայունութիւնը հաստատուած ըլլայ հոգիներուս վրայ, այսու ամենայնիւ չատ մը սուրբերու վրայ տեսնուածէն աւելի ազատով չէ. զոր օրինակ սըբ-

բոյն Աւետիսեան վերայ, որոնք միևնոյն ցարդ ըսած ծներ են եր-
բեք թոյլ չեն տալէն զատ՝ և ոչ ալ երբեմն քեզ կամ մե-
րերուն երբեք կը նայէին:

Գուցէ ըսուի որ ասոնք Լերմեռանդական չափա-
զանցութիւններ ըլլան, որոնք երբեմն խիստ կանոն չեն
կրնար առաջարկուիլ, և մենք այս կէտիս վերայ չուզենալով
վիճիլ, միայն այս պատասխանը կու տանք որ սրբոց օրի-
նակին հետևելով կրնանք առաքը ըլլալ, և թէ անոնց չը
հետևելով երբեմն զարհուրելի անդունդներու մէջ կը
ձգուինք:

165. «Լեզու»: Ինչ կրնանք ըսել լեզուին, և ա-
զատութիւն գործածութը ըրած կոտորածին վերայ: — Ով
որ խօսքի մէջ չի գայթակղիր, կ'ըսէ սուրբ Յակոբոս ա-
ռաքեալը, անիկայ կատարեալ է, և կարող է բոլոր իւր
մարմինը սանձահարել... Լեզուն կրակ է, և անիրաւու-
թեան աշխարհք մը: Լեզուն մեր անդամոց մէջ դրուած
է և բոլոր մարմինը կ'ապականէ, և գժոխքէն բորբո-
քուած ըլլալով կը վառէ մեր կենաց անիւը... չար մը՝
որ չի սանձահարուիր և լեցուն է մահաբեր թոյնով. —
«Եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ՝ նա է մարդ կատա-
րեալ, որ կարող է սանձահարել զամենայն մարմին իւր...
Լեզու հուր՝ զարդ անիրաւութեան, լեզու հաստատեալ
է յանդամս մեր, որ զամենայն մարմինն ապականէ, և
վառէ հրով զանիւ ծննդեան, և բորբոքեալ ոտիւրի է
գեհենի»[1]:

Ինչպիսի զօրաւոր խօսք: Նոյն ինքն Հոգին սուրբ է
որ այսպէս կը խօսի, որպէս զի լեզուին ամէն օր ըրած
անհատուցելի չարիքներէն զգուշանանք:

Խնդրենիս ինչ կ'ըսէ այս ամենակարևոր կէտին նը-
կատմամբ: Աւրգեօք այն շատախօս քահանայիցմէ չենք
որ խօսակցութեան մէջ վերջ ու վախճան չեն գիտեր:
Թեև անհետևութեամբ չենք խօսիր արդեօք մեր խօսքերով խո-
նարհութեան, հեզութեան, եղբայրսիրութեան և զու-
ցէ պարկեշտութեան ալ դպչելով:

Խօսակցութեանց մէջ պատահած անխոհեմութիւն-

1 Յակոբ. գ. 2, 6:

ներէ մի թէ սխալուիլ հետևութիւններ յառաջ չեն գա-
և մի թէ այնչափ վայելուչ պատճառ չեն, զորոնք վրա-
նիս կը հրաւիրենք չափաղանցութեամբ, գաղտնեաց
անզգոյշ յայտնութեամբ, կծու և թունաւոր երգիծա-
բանութեամբ:

Ո՛րչափ անսահման տարբերութիւն այսպէս վա-
րուողՀ և այն քահանային մէջ, որ ամենևին բառ մը չ'ար-
տաբերեր առանց կշռելու, որ ամէն զինքը տեսնողներուն
վնասութիւն կը պատճառէ, չնորհալից և բարեբարոյ, որ
աներկիւղ կրնայ ներկայանալ Աիոր առեանը, որ ըսաւ.
«Ընդ ամենայն դատաւորիկ բանիւ, զոր խօսիցին մարդիկ,
տացեն համար յաւուրն դատաստանի»[1]:

166. «Ձաշակ»: Ասոր նկատմամբ մահացուցում
չը գիտցող քահանայ մը երբեք չի կրնար սուրբ ըլլալ:
Աւրիկայ մեզմէ չենք ըսեր, նոյն ինքն սուրբերը Թոզ
խօսին:

— Կատարելութիւնը, կ'ըսէ սուրբն Լիփուորի,
մեծաւ մասամբ ճաշակին հեշտութիւնը մահացընելուն
մէջ կը կայանայ: — Ով որ կ'ուզէ կատարելութեան
մէջ յառաջանալ, կ'ըսէ սուրբն Անդրեաս Աւելլինացին,
պէտք է որ զճաշակը մահացընէ: — Բոլոր սուրբերը,
կ'ըսէ սուրբն Լևոն, սրբութեան ճամբուն մէջ ճաշակը
մահացընելով յառաջ գնացին: —

Սուրբ Փիլիպպոս Նեբեանը իւր մէկ ապաշխարո-
ղին, որ մահացուցման գործադրութեան շատ հետա-
տարիմ չէր, ըսաւ. «Որդեակ, չես կրնար սուրբ ըլլալ,
եթէ ճաշակդ չի մահացընես»:

Եւ իրօք ատոր վերայ զարմանալու չէ: Մի թէ չենք
գիտեր որ կերակրոց անժուժկալութեամբ մարդ հե-
տաւսէր կ'ըլլայ: Ինչ է այն մարդը՝ որ իւր երջանկու-
թիւնը ուտելու և խմելու մէջ կը գտնէ: Ո՞ւր է իւր
մարդկային պատիւը, քրիստոնէական մեծութիւնը:
Բայց մանաւանդ, ո՛վ Աստուած իմ, ո՛ւր պիտոր ըլլար
քահանայական պատիւը, եթէ քահանայ մը այսպիսի
գռեհիկ հետևականութեան մէջ վիտուէր իւր երջանկու-

1 Մատթ. ժբ. 36:

Թիւնը: Ինչ կրնայ յուսացուիլ աստուածպաշտու-
Թեան, եղբայրսիրուԹեան, ըղձի և նախանձու նկատ-
մամբ այսպիսի մարմնասէր անձէ մը: ՀեշտասիրուԹեամբ
դրաւուածին քով ինչպէս կրնան տեղի գտնել աշխուա-
բարոյ ըղձմունքը, և աստուածային սիրոյն սուրբ ե-
ռանդը:

Աստուածս ընԹերցողներէս և ոչ մէկը պիտոր ուզէ
հակառակիլ այս ըսածներուս. բայց գուցէ գտնուի մէկը
որ ըսածնիս այն քիչ Թշուառ և վատ քահանայից վե-
րաբերէ, որ չեն ամչնար վերջին աստիճանի անժուժ-
կալուԹեան գայԹակղուԹիւնը տալու հաւատացելոց:

Զի խաբուինք, սիրեցեալ եղբայրակիցք, այս նիւ-
Թիս մէջ շատ մեղքեր կրնան գործուիլ, մանաւանդ Թէ
մեր քահանայական վիճակներուս մէջ կրնանք առանց
ծայրը հասնելու՝ գայԹակղուԹիւն տալ հաւատացելոց:
Տեսնենք Թէ արդեօք յայսմ մինչ ջանգիմանելու
բան մը ունինք:

Աստուածային խորհուրդներով զարգարուած սեղանները կը
սիրե՞նք: Կոչումնիս հաճելի՞ են մեզի, Թէ սուրբ քահա-
նաներուն պէս յամառելով կ'երԹանք միայն քաղաքակա-
րուԹեան մէջ յանգստեր ջլլալու համար: Կերակրոց
գործածուԹեանց մէջ ժուժկալ և սակաւակեաց ենք:
Յայսմ մասին հաւատացելոց բերի օրինակ կու տա՞նք:
Մանաւանդ մեծածախս ճաշերու մէջ, մահացուցման
պատուոյ հաւատարմուԹեան համար անձերնիս կը զըր-
կե՞նք արդեօք: Ամենայն ջանքով կը զգուշանա՞նք ար-
դեօք ըմպելեաց հեշտուԹենէն, որոց գործածուԹեան
վարժելը դիւրին և հրաժարիլը շատ դժուարին կ'ըլլայ:
Մենք չե՞նք որ երբեմն ըմպելեօք աստմունքնիս կը լեցը-
նենք, մեզի անհնաս ջլլալու կարծելքէն համարձակու-
Թիւն առնելով, և չ'ուզելով տեսնել Թէ որչափ տգեղ
և անարժան բան է քահանայի մը համար այսպիսի ա-
րիներու մէջ նոյն իսկ աշխարհականներէն ալ նուազ
ժուժկալ երևիլը: Մի Թէ մեզի ախորժելի եղած այս
կամ այն կերակրոյն համը չափազանց ձոռոմաբանու-
Թեամբ չե՞նք գովեր: Արդեօք գինիներուն աղէկու-

Թեան և տեսակին վարպետ և փորձառու ճանչցող (չենք
ուզեր ըսել սիրող) չե՞նք ձեւանար, որով և ըմեզ ճար-
տար խմողն տխուր համբաւը ստանալու վտանգի մէջ կը
ձգենք:

Հակենք, սիրեցեալ եղբայրակիցք, հակենք մեր վայ
ամենամանուաւոր ուշադրուԹեամբ, և աղէկ զգուշա-
նանք այն մոլորեալ պաշտօնէից վիճակին մէջ չէյնալու,
զորոնք Պօղոս առաքեալը սոսկալի կերպով կը կշտամբէ.
« Զի բաղձամբ գնան, զորոց բաղձամ անգամ ասէի ձեզ,
բայց արդ և լալով խոկ ասեմ զքշնամեաց խաչին Քրիս-
տոսի, որոց կատարած կորուստ է, որոց Աստուած ո-
րովայնն իւրեանց է, և փառք ամօԹն իւրեանց, որք
զերկրաւորս միտ խորհին »:

Այսպիսի հեշտասէր կեանքը մեծ Աստուածն ար-
գոնք Թափել կու տար. գալշինք և բնակուԹիւնս
մինչև. երկինքը բարձրացընենք, որ մի միայն արժանի է
քահանայական պատուոյն. « Այլ մեր առաքինուԹիւն
երկինս է, ուստի և Փրկչին անն ունինք տեառն Յիսուս
սն Քրիստոսի, որ նորոգեսցէ զմարմին խոնարհուԹեան
մերոյ, կերպարանակից լինել մարմնոյ փառաց իւրոց »[1]:

167. Անհաւասիկ ուրեմն մարդկան մեծ Թշուառու-
Թիւնը աչքերնուս առջին բացուած, որուն մէջ ինկաւ
խեղճը սկզբնական մեղքով: Անհաւասիկ այն մեծ աղէտ-
քը, զոր մի միայն մահացուցումը կրնայ դարմանել: Իրա-
ւունք չ'ունէի՞նք արդեօք ըսելու որ մարդ ինք երեն Թող
տրուած ուրիշ բան չէ, եԹէ ոչ մեծ և ողորմելի աե-
րակ մը: Հիմայ մանրամասնաբար տեսնենք վերջը,
Թող ըսուի որ մեզայ քաղցկեղը բոլորովին ջինքը գրա-
ւած և ապականած չ'ըլլայ, և Թէ չեն յարմարիր երեն
մարգարէին՝ Թէև խնասուն տարբեր խնասով՝ բայց նոյն
բառերու ճշմարտուԹեամբ սուրբ Գրոց այս խօսքերը.
« Յոտից մինչև ցգլուխս չկայ ի նմա առողջուԹիւն »[1]:

Այսու ամենայնիւ, եԹէ այսչափ աղետից տեսա-
նելի մեր վայ ալ երկիւղ մը չ'ազդէր, ալ անգարմա-
նելի սեպելու է այս չարիքը: Արդարև ամենամեծ չարիք,

1 Փիլիպ. գ. 18-21: 1 Եսայի. ա. 6:

բայց դարմանելի կ'ըլլայ անկասկած աղդու դեղով զոր ձեռքերնիս ունինք: Մահացուցումը արդէն սուրբերուն վրայ սքանչելիքները գործեց, և դեռ ևս կը գործէ բարեպաշտ քահանայից վրայ ալ: Մենք ալ ուրեմն մահացուցման ձեռք զարնենք և անոր պատուիրած այս միջոցները գործածենք:

Ամէն բանէ յառաջ անոր վերջին աստիճանի կարօտ ըլլալնուս վրայ համոզուինք: — Ամենայն եռանդեամբ Աստուծմէ խնդրենք այս մահացուցումը ի գործ դնելու կարևոր առաքինութիւնը: — Ամենայն ուշադրութեամբ մտածենք այն գլխաւոր կէտերը, որոնք մեզմէ պատրաստ և հնինական նորոգութիւն մը կը պահանջեն: — Աստուծոյ ներկայութեան առջին քննենք զմեզ, տեսնելու համար թէ ո՞րն է արդեօք սիրող և գլխաւոր թելուցանիչնիս: — Կռուինք անոր դէմ, ամէն օր անոր հակառակ առաքինութեան ներդործութիւն մը ընելով: — Պատժենք մարմինիս, վասն զի անիկայ է մեր ոխերիմ թշնամին: — Ակնինք զրկելու զինքը այն բանէն՝ որուն եռանդեամբ կը փափագի: — Հարկաւոր եղած ժամանակ՝ մարմնաւոր ապաշխարանաց ալ դիմենք, ըստ այնմ որ հոգևոր հայրերնիս հրաման և կանոն կուտայ: — Սանձահարած պահենք զզայարանքնիս, և զանոնք վազքչելով երբեք համարձակութիւն առնելու չի թողունք: — Ընտակաբար պարկեշտ ըլլանք, արթուն, չնորհալից, խոհեմ և զգաստ: — Յիշենք որ քահանայ ենք, Յիսուսի Քրիստոսի պաշտօնեայ, առաքինութեան նախանախակ, և կենդանի գաղափար իւր հօտին, ամենքէն աւելի պարտաւորուած իւր գործածած մահացուցումը վրանիս դրոշմած կրելու. «Յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմնիս մեր կրեսցուք, զի և կեանքն Յիսուսի ի մարմնիս մեր յայտանեսցին»[1]:

Ան տեսնը մենք մեր օգոստափառ կոչմանը արժանի քահանայ կ'ըլլանք. ան տեսնը պիտոր վայելենք այն բարիքները, զորոնք մահացուցումը կը շահի՝ զինքը եռանդեամբ ի գործ դնողներուն. ան տեսնը հաւատացելոց

1 Բ. Կորնթ. Դ. 10:

չինութիւն պիտոր ըլլանք, և շատ աւելի հոգիներ պիտոր փրկենք մեր ապաշխարող և մահացուցեալ կենաց օրինակով, քան թէ այնչափ հռչակաւոր քարոզներով որ այսպիսի կեանքով մը ընկերացած չեն:

ԳԼՈՒԽ Ժ.

Խոնարհութիւն — Անձնուրացութիւն — Դիտման մասքրութիւն — Այս ամեն առաքինութեանց քահանայի մը համար յատուկ նարկաւորութիւնը — Խոնարհութիւն խորհրդոց եւ իղձերու մէջ:

168. Սուրբն Գրիգոր Մեծն այնպիսի վէրք մը ըսաւ, որ պէտք է սոսկացընէ ամբարտաւանները. — Դատապարտութեան ամենայայտնի նշանը ամբարտաւանութիւնն է, ըսաւ. — «Ամենայայտ նշան դատապարտելոց է ամբարտաւանութիւնն»:

Եւ իրօք, երբ այս մեղքը մարդու մը վրայ այն աստիճան չէ, որ ըստ ինքեան դժոխոց դատապարտէ, սակայն շատ մը այնպիսի չարութիւններով կ'արժանացընէ, որոնք առաջին նայուածքով կարծես թէ ամբարտաւանութեան հետ ամենևին յարաբերութիւն մը չունին. բայց այսու ամենայնիւ անկից իբրև թունաւորուած աղբերկ յառաջ կու գան: Կրնայ նաև ըսուիլ որ այս գլխաւոր մեղութեան ուրիշ ամէն մեղութեանց հետ ունեցած սերտ աղգականութիւնը՝ բոլորովին իրեն սեպհական բան մըն է:

Շատ քիչերը կը կարծեն որ ամբարտաւանութիւնը այնչափ վտանգաւոր չ'ըլլայ, ինչպէս որ իրօք է, և անոր գործած չարութեան տգիտութիւնն է, որ իրեն ներողամտութիւն կը մուրայ. ուստի փոխանակ անոր դէմ կռուելու, կ'ընդունուի և կը գթայ: Գոնէ եթէ չար ալ կարծուած է, սակայն ամենածանր չարի մը տեղ դրուած չէ:

Բոլոր աշխարհք գիտէ որ առանց օրինաւոր պատճառի բարկութիւն մը, անիրաւութիւն մը, ծանր չարախօսութիւն մը, անմաքրութեան գործք մը

մահուչափ մեղք են: Բայց երբ աստուածաբանութեան լուսով կը քննուին ամբարտաւանութեամբ ապակառնուած այնչափ խորհուրդները, խօսքերը և գործքերը, և տեսնելով որ ներելոյն սահմանը չեն անցնիր, հանդիստ սրտով նոյն չար ճամբուն մէջ յառաջ երթալը կը շարունակուի:

Այս իրաւցընէ յաճախ տրամադրութիւնը չափազանց վտանգաւոր է, ըստ որում շատ աւելի ալէկ է յայտնի թեև զարհուրելի ձշնամւոյ մը դէմ մաքառիլ, քան թէ այնպիսի ձշնամւոյ մը դէմ, որ արուսքուստ ահաւոր էերևնալով՝ բայց ի ծածուկ զօրաւոր բանակի մը կը հրամայէ:

Այսօր ամենայնիւ մեր այնչափ յանձնառարութիւնները բաւական չեն արժանաւոր եղբայրներս զգուշացնելու այն խաբէութիւններէն, զորոնք հնմայ կ'ուզենք բացայայտել: Հաղարաւոր դատապարտուածներ այս նենգաւոր որոգայթին մէջ բռնուեցան, և հնմայ վարը գժոխքին մէջ կը ձանչնան որ իրենց դատապարտութեան առաջին պատճառը ամբարտաւանութիւնն եղաւ:

169. Ձիշտը խօսելով՝ նախընթաց խորհրդածութիւնները շատ քիչ անգամ մտքերէս կ'անցնին. յայտնապէս աւելի մոլութիւնները աչքերուս կը զարնեն, մինչդեռ գաղտնի՝ կամ ըստ մեր կարծեաց, նուազ ծանր մոլութիւնները՝ ամենևին ազդեցութիւն մը չեն ըներ վրանիս:

Այնձին մեկը երբ հերետիկոսութեան մէջ կ'ինկնայ, ամենքը կ'ըսեն. Ո՜հ, ողորմելին իր հաւատքը կորսընցուց: Այոյզ է, բայց հաւատքին յառաջ խնամարհութիւնը կորսընցուց. և որովհետև չ'ուզեց իր միտքը եկեղեցւոյ դատաստանաց հպատակեցընել, անոր համար ապստամբեցաւ:

Ուրիշ մը բարկութենէն կուրացած՝ ոտքէ և ծանր նախատինքներ կը թափէ բերնէն, Աստուծոյ անունը կը հայհոյէ, և ըրածը ու ըսածը ամենևին չի գիտեր: Ի՜նչ ծանր մեղք, կ'ըսուի, ի՜նչ հայհոյութիւն: Ձշմարիտ է, բայց երբէք չի մտածուիր որ այսպիսի եղեռնագործու-

թեանց սկիզբը ամբարտաւանութեան պարզ մեղք մը եղաւ: Այս ողորմելին այնչափ խոնարհութիւն չ'ունեցաւ, որ թեթև կատակի մը, փոքր հակառակութեան մը, քանի մը անզգոյշ խօսքերու համբերէր. իր ամբարտաւանութիւնը գրգռուեցաւ, և ինքը ասանկ տմարդութեամբ սահմանը անցաւ:

Վրէժխնդիր մը իր մեղքին մէջ կ'ապրի և կը մեռնի: Ի՜նչ զարհուրելի մահ, կ'ըսուի, ի՜նչ թշուառութիւն և առանց թշնամւոյն հետ հաշտուելու մեռնիլը: Այոյզ է, բայց չի մտածուիր որ քիչ մը խոնարհութեամբ՝ խաղաղութիւնը կրնար իսկոյն մէջերնին հաստատուիլ:

Անպարկեշտ մը, (և ասիկա մեղմ աւելի զարմանալի կ'երևի), անխղճի կերպով իր անառնական կրից կը հետևի. բայց քրիստոնեայ որ գիտեն իր անկարգութիւնները, զզուած կ'ըսեն. Ողորմելի՜, որ անամեթաբար կը զոհէ ամենէն գեղեցիկ առաքինութիւնը: Իրաւ է, բայց հաստատ գիտցէք որ ինքը նախ խոնարհութիւնը կորսընցնելով սկսաւ, որովհետև մանաւանդաբար սրբոյն Օգոստինոսի և շատ մը ուրիշ սուրբերու ըսածին համաձայն, այս օրուան օրս հոգւով ամբարտաւանելուն՝ մարմնով անարգուելէն աւելի հասարակ բան չի կայ:

Այսպէս ըսելու է նաև շատ մը ախտերու նկատմամբ, զորոնք հարկ չէ հոս մի առ մի յիշելը:

Եւ այսպէս ալ պէտք է որ ըլլայ, վասն զի գրուած է. «Սկիզբն մեղաց ամբարտաւանութիւն»[1]: Եւ հարկաւորապէս պէտք է որ այս ախտը շատ աւելի աղտեղի և ծանր երևի Աստուծոյ աչքին քան թէ մեր աչացը. ըստ որում տեսնէք թէ ինչ սոսկալի նշոյլներ արձակուած են ամբարտաւանիլ դէմ. «Տէր ամբարտաւանիլ հակառակ կայ»[2]: — «Չի օր Տեառն զօրութեանց ի վերայ ամենայն հպարտի և ամբարտաւանի, և ի վերայ ամենայն բարձրացելոյ և վերացելոյ, և խոնարհեացին»[3]: — «Աւելի է առաջի Տեառն և մարդկան ամբարտաւանութիւն»[4]:

1 Սիրաք. ժ. 15:
2 Ա. Պետ. Ե. 5:
3 Եսայի Ե. 12:
4 Սիրաք. ժ. 7:

—«Որ բարձրացուցանէ զանձն խոնարհեսցի»[1]։—«Ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց, քակեաց զՀզօրս յաթոռոց»[2]։—«Որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի Աստուծոյ»[3]։

Հոգին սուրբ, խնամատուրեան և Ճշմարտուրեան հոգի, ստուգիւ այս խօսքերը չէր գործածեր ամբարտաւանութենէն զգացած սոսկումը նշանակելու համար, եթէ այս ախտը չինքն չը պարունակէր բոլորովին իրեն սեպհական չարութիւն մը, և իրմով ապականուած ներոյն համար անթիւ մեղքերու պատճառ չ'ըլլար, որոնք չէր գործեր՝ եթէ խոնարհ ըլլար։

170. Ըսենք խոնարհութեան վրայ ինչ որ միւս առաքինութեանց վրայ ալ ըսինք. այսինքն թէ քահանայի մը յատուկ առաքինութիւն մըն է, էէ թէ միայն իւր պաշտօնին արդիւնքը կը պահանջէ որ աշխարհականներէն շատ աւելի առաքինութիւններով զարդարուած ըլլայ, այլ մանաւանդ թէ ամէն վայրկեան անհատանելի վտեմութեան պաշտօններ վարելով միշտ յանուն Աստուծոյ գործելով, որուն գործիք մըն է, ամէն օր սեղանին վրայ զՅիսուս Քրիստոս ըղհելով. և թէպէտ ողորմելի իրեւ աթարած և անարդ իրեւ մեղաւոր, սակայն յարատեւաբար Աստուծոյ գործը կատարելով, ասոր համեմատութեամբ ինքը պէտք է այնչափ խոնարհի, որչափ որ Աստուած զինքը իրեն յանձնած պաշտօնով կը բարձրացընէ և կը պայծառացընէ։

Իրեն և բոլորովին իրեն սեպհական է իւր մեծ թշուառութիւնը. բայց քահանայական պաշտօնը՝ որով զարդարուած է, ուրիշէ մը՝ նոյն ինքն Յիսուսէ Քրիստոսէ իրեն տրուած է, որ մահուան չափ խոնարհեցաւ. «Զանձն ունայնացոյց»[4]։ Ուրեմն ինչ սոսկալի անկարգութիւն մը պիտոր ըլլար, եթէ մունալով իւր ոչնչութիւնը, ամբարտաւանութեամբ լեցուած ըլլար, այն ախտով զոր աստուածային Փրկիչը յատկապէս կ'ատէր.

1 Մատթ. ԻԳ. 12։
2 Ղուկ. Ա. 51։
3 Ղուկ. ԺԶ. 15։
4 Փիլիպ. Բ. 7։

«Որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի Աստուծոյ»[1]։

Ասիկայ է այն վերջին ստուգանիշ քրիստոնէական խոնարհութիւնը զոր ամենասուրբը կրցան այնչափ կատարելութեամբ ի գործ գրաւ բոլոր իր կենաց մէջ. որուն նկատմամբ ուրիշ բան չենք կրնար ըսել, եթէ ոչ թէ անձառելի սքանչելիք մը եղաւ, որուն պէտք է որ ամենայն հոգւով ջանանք հետեւելու։ Ամենասուրբը կրցաւ իւր իշխանութեամբ բոլոր արարածները, ինչուան հրեշտակները ալ կը գերազանցէր. այսու ամենայնիւ իւր անչափ խոնարհութեամբը՝ ամենափոքրը և ամենախոնարհ էր Աստուծոյ որգւոյ մէջ։ Ինչո՞ւ համար։ Վասն զի չրցաւ նախ ճանչնալով իւր ոչնչութիւնը՝ իբրև արարած՝ մեծ չափութիւն մը կը զգար Աստուծոյ մայր ըլլալու ընտրուելուն համար։ Խոնարհութեան չափը իւր բարձրութիւնը համեմատ էր։

Այսպէս և աւելի իրաւամբ պէտք է ըլլայ նաև անոնց՝ որ եկեղեցական պատուով բարձրացած են. որովհետեւ ամենասուրբը Կուսէն ալ նուազ սուրբ ըլլալով, այնպիսի պաշտօններ կը կատարեն՝ զոր նա ինքն երբեք չի կրցաւ կատարել։

Մեւս կողմանէ խոնարհութիւնը ամենայատուկ կերպով մեղի հարկաւոր է. անոր համար որ եթէ գժբաղդաբար ունակութեամբ ամբարտաւանութեան գերի եղած ըլլայինք, անտարակոյս հպարտութեան մեղքով պիտոր մեղանչէինք պաշտօններուս շատ մը գործքերուս մէջ. և աս ալ կրկնապատիկ աւելի պիտոր ըլլար Աստուծոյ աչքին, որ նոյն այն պաշտօնը մեղի տուաւ ոչ թէ մեր՝ այլ իւր փառացը համար վարելու, հոգւոյ փրկութեան համար աշխատելու, և ոչ թէ իրեն գարշելի ախտ մը մնուցանելու համար։

Մենք ալ պէտք է խոնարհ ըլլանք, և ամէն մարդկանցմէ աւելի խոնարհ. վասն զի շատ աւելի քան զպարզ հաւատացեալս կարօտ ենք բարձրագոյն շնորհաց։ Հասարակ պաշտօնները կատարողներուն համար՝ հասարակ

1 Ղուկ. ԺԶ. 15։

ընորհքները ալ բաւական են. բայց ինչպիսի՞ ընորհքներ հարկաւոր չեն քահանայի մը համար մեր սեզանները ուն օգուստափառ ղոհը կատարելու, այնչափ հազարաւոր մեղաւորները արձակելու, և նոյն ինքն Աստուածոյ մը առաքելութիւնը՝ ժողովրդոց մէջ շարունակելու ամենավեմ պաշտօնին համար:

Արդ Աստուած չէ թէ ամբարտաւաններու, այլ միայն խոնարհներու կը խոստանայ իւր ընորհքները. « Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ ընորհս խոնարհաց »[1]:

Վերջապէս չեմ ուզիլ խոնարհութիւն ունենալու համար քան զայրզ հաւատացեալս, որովհետև ի պաշտօնէ խոնարհութեան վարդապետ ենք: Մենք ենք որ այսպիսի առաքելութեան մը հարկաւորութիւնը կը քարոզենք: Մենք՝ որ ամբարտաւանութեան հետ ամբարտաւաններն ալ կը դատապարտենք: Մենք ենք՝ որ ժողովրդեան կը մեկնենք վարիսեցւոյն և մաքսաւորին հզօր առակը, որով մեր աստուածային Փրկիչը ամենապարզ և պատժուած կը ցուցընէ զամբարտաւանութիւնը, և զխոնարհութիւնը վաստաւորապէս վարձատրուած. իսկ արդ ինչպէս կրնանք համարձակիլ այնպիսի առաքելութեան մը ներբողն ընելու՝ յորմէ զրկուիկ ենք, և ախոռ մը հակառակ քարոզել՝ որով մենք իսկ չազատած ըլլանք:

171. Գիտնանք վարմունքներնիս, և տեսնենք թէ ինչպէս կը գտնուի խոնարհութեան նկատմամբ: Այն բանէ յառաջ, « այս առաքելութեան հարկաւորութեան վրայ աղեկ մը համոզուած ենք »: Ընդհանրապէս այո. բայց հազարաւոր պարագայից մէջ, ոչ: Ներկայացեք ո՛ւ և իցէ քահանայի մը, և առանց շատ յառաջաբանութեան հարցուցէք, թէ խոնարհութիւնը հարկաւոր առաքելութիւն մըն է. և պատասխաններ մէկէն կ՛առնէք: Նախ և յառաջ բարեպաշտ ժպիտով մը պիտոր պատասխանէ, իբրև թէ կէսաւուր արևէն աւելի պայծառ բանի մը վրայ հարցմունք ըրած ըլլայիք. և տեսնելով հաստատութիւնիդ, նոյն կէսին ձարտար և ճոռոմ ձառ մը

1 Պ. պետ. ե. 5:

պիտոր խօսի, հազար բան պիտոր ըսէ խոնարհութեան վրայ, որ գերազանցապէս քրիստոնէավայել առաքինութիւն մըն է, որ քրիստոնէին հոգին է, որ անիկայ աշխարհքին վրայ հեթանոս ամբարտաւանութեան տեղը բռնեց, որ Յիսուսի ամենասիրելի առաքինութիւնն է՝ զոր շարունակ ի գործ գրաւ օրօրոցէն մինչև խաչը. և վերջապէս պիտոր ըսէ որ եթէ աւետարանական բարոյականի մէջ ձշմարտութիւն մը կայ՝ որ առածի փոխուած ըլլայ, ասիկայ է որ « խոնարհութիւնը ամէն առաքինութեանց հիմն է, ինչպէս որ ամբարտաւանութիւնն ալ ամէն մեղութեանց մայրը »:

Ահաւասիկ անտարակոյս ինչ որ կրնայ զբրջել խոնարհութեան վրայ ձեզմէ հարցուած ո՛ և իցէ քահանայ մը. ի տեսականին՝ սքանչելի բաներ, բայց եթէ գործնականին գալու ըլլանք, ան ատենը իրը կերպարանափոխ կ՛ըլլայ և անհամաձայն: Ձշմարտապէս խոնարհ քահանայ մը, ինչպէս որ է ի տեսականին, նոյն է նաև ի գործնականին, հաւատացածը կը կատարէ. բայց ամբարտաւան քահանան ի գործնականին՝ տեսականէն կը խոտորի, և գործքի մէջ շատ կը տարբերի իր խօսքով ըսածներէն:

Այս երկուքէն որո՞ւն կը նմանինք մենք: Խոնարհութիւնը մեզի համար զարմանալի տեսական մը չէ՞ արդեօք. ոչ միայն քրիստոնէ՝ այլ վսեմաբար փիլիսոփայական առաքինութիւն մըն է, բոլորովին երկնային՝ զոր միայն երկինք կրնային երկրի ընորհել: Անտարակոյս այս ամենը՝ է խոնարհութիւնը: Բայց եղբա՛ր, այս ամէն բաները կրնա՞յ ըսել մեկը առանց խոնարհ ըլլալու Աստուծոյ աչքին առջև, որ վարձքը պահեր է՛ էե թէ վսեմ խորհրդածութեանց և զեղեցիկ ոճերու, այլ գործքերու. միայն ատոնց ի գործ գրուած խոնարհութիւննե՞ր որ կը չաղթանակէ: Ուրեմն համոզուած ենք մենք խոնարհ ըլլալու հարկաւորութեան վրայ: Այս համոզումնիս ուրիշ բանով ալ կը յայտնե՞նք թէ միայն բարձր տեսականով և ձոխաբան ձառերով: Գործնական խոնարհութեան հարկաւորութեան վրայ չէ թէ լոկ խօսքերով, այլ կատարելապէս համոզուածի պէս կը վարուինք արդեօք:

Ահաւասիկ, կը կրկնենք, ահաւասիկ էական կէտը, առանց որոյ բոլոր մեր փիլիսոփայական և աստուածաբանական նրբութեամբ, բոլոր մեր ճարտար կամ այնպէս կարծուած քարոզներով, ուրիշ բան չենք կրնար ըլլալ՝ եթէ ոչ պաղ դաղափարախօս և ունայնաբան:

Առաքինութեան վրայ կը խօսինք առանց առաքինի ըլլալու. խոնարհութեան վրայ զրմանալի բաներ կ'ըսենք, առանց խոնարհ ըլլալու: Շատ կը յարմարին մեզի Գեմբացւոյն խօսքերը. « Եւ զի առաւել ընտրեն մեծարդի լինել քան խոնարհ, վասն այնորիկ նանրանան ի խորհուրդս իւրեանց:... Նա է Աչմարատապէս մեծ, որ յաչս անձին փոքր է, և զամենայն բարձրութիւն պատուոյ ոչ համարի ինչ »[1]: Շարունակենք քննութիւնին:

172. « Խոնարհութեան դէմ ծանրաբար չի մեղանչեր նաև համար բաւական խոնարհ չենք կարծեր զմեզ »:

Ահաւասիկ անտարակոյս սովորական խաբեպութիւն մը, չէ թէ միայն աշխարհականաց՝ այլ նաև քահանայից ալ: Ամբարտաւանութիւնը թէև բնականապէս մահու չափ մեզի է ըստ աստուածաբանութեան, շատ անգամ նկատելի թեթեւութեան համար նեղուելի ըլլալով խոնարհ կը կարծենք զմեզ, խոնարհութեան դէմ ծանր չի մեղանչեր համար:

Սրբութեան պարտաւորուած անձի մը համար, ինչպէս է քահանան, աւելի վտանգաւոր բան չի կրնար ըլլալ, եթէ ոչ կատարելութեան ասպետութեամբ չափել: Որչափ նուազ պիտոր ըլլար եկեղեցւոյ մէջ աստիճանները աստուածաբանութեամբ չափել: Որչափ նուազ պիտոր ըլլար եկեղեցւոյ մէջ աստիճանները, եթէ այսպէս հասկցած ըլլային սրբութեան պարտաւորութիւնը: Եթէ սուրբը Գրոց, եկեղեցւոյ, աստուածաբանութեան, սրբոց հարց և վարդապետաց քահանաներէն պահանջած սուրբ կեանքը միայն մտածելի մեզի հրաժարին ըլլար, ան ատենը ինչ տարբերութիւն պիտոր գտնուէր քահանայից և աշխարհականաց սրբութեան մէջ: Որչափ պիտոր գտնուէր այն կատարելութիւնը, եթէ օրինաց ամէն կէտին և մանաւանդ օգոստափառ արարողութեանց վերաբերեալներու մէջ, զորոնք ամէն օր կը պահենք, իւր կեանքը ուրիշ բան չըլլար՝ եթէ ոչ ծանր կամ նուազ նեղելի մեղքերու հիւսուած մը: Որչափ այն բարի օրինակը, զոր պարտաւոր է տալու. որչափ այն Յիսուսի Քրիստոսի անուշահոտութիւնը, զոր ամէն կողմ պէտք է բուրէ. որչափ այն սուրբ եռանդը, որով պէտք է բորբոքուած ըլլայ. որչափ այն խանդակաթ սէրը առ աստուածային Փրկիչն, որ զինքը իրեն պաշտօնեայ ընտրելով հարցուց, ինչպէս արդէն սրբոյն Պետրոսի ըրած էր, թէ զինքը միւսներէն աւելի կը սիրէր արդեօք. « Սիրե՞ս զիս առաւել քան զդոսա »[1]:

Բայց խօսքերնիս մանաւանդ առաջնոյ խոնարհութեան վրայ դարձընելով, ինչ քահանայ կ'ըլլանք, եթէ մենք մեր վրայ հաճութիւն զգանք, մեր անձը այլոց նախադասենք, գովասանքները որսանք, և թերութիւնիս ծածկենք, այլադունինք, նուաղինք, և չքմեղ հանենք, յատկութիւններուս վրայ պարծինք, մեր կարծեաց վրայ յամառինք. այլոց խոհական աղդարարութիւնները դժկամակութեամբ ընդունինք, ընկերաց հետ գոռոզութեամբ վարուինք, և գրեթէ ամէն գործքերուս մէջ մենք զմեզ փնտռենք: Եւ այս պակասութիւնիս նեղելի չ'անցնիներնուն համար իրաւցընէ և ըստ բաւականի խոնարհ պիտոր սեպենք զմեզ: Եկեղեցին զմեզ ամէն զոհողութեան պատրաստ ծառայ պիտոր գտնէ: Ժողովուրդը ի մեզ պայծառ օրինակ և գործնեայ միջնորդ պիտոր տեսնէ: Աստուած ունենայ պիտոր զմեզ իրեն սրտին համաձայն, և իւր փառացը նախանձաւոր պաշտօնեայ: Իրաւցընէ խոնարհ քահանայի մը սուրբ կեանքը մերինին հետ համեմատելով արդեօք ամբընալու փաստ մը չենք ունենար: Եւ անոր օրհնուած և հարիւրապատիկ պտղաբեր պաշտօնը պիտոր չամբաստանէ մեր պաշտօնին յանցապարտ անպտղութիւնը:

Այսու ամենայնիւ լրացնենք այս գլխոյն սկիզբը ըսածնիս, որ ամբարտաւանութեան ամենածանր չարիքը և վտանգը ամէն վայրկեան մեզի գործել տուած այնչափ

1 Գեմբ. Գիրք Ա. Գլ. Գ. 6:

1 Յովհ. ԻԱ. 15:

չարութեանց վրայ չի կայանար, որչափ որ այնքան շնորհքներէ զրկելուն և իւր գերիները անչուշտ անթիւ մոլութեանց մղելուն վրայ հաստատուած է:

Ինչպէս որ խոնարհ քահանան ամէն առաքինութեանց տէր է, այսպէս ալ ամբարտաւան քահանան ամէն մոլութեանց որամագրած է: Ընթերցողներէս կը խնդրենք որ այս վճիռը մտքերնուն մէջ աղէկ մը տպաւորեն, որուն ճշմարտութիւնը անկասկածելի է, ըստ ո՛րում մենք չենք որ մեզմէ կ'ըսենք, այլ հանապազօրեայ փորձառութիւնն է որ կը հաստատէ:

173. «Այնկեղծօրէն խոնարհ ըլլալու կը վախցիք: —

Այս հարցմունքնիս գուցէ զարմանալի երևի. և իրօք, շատ քիչ են այսպիսի հարցմունք մը ընողները: Այսու ամենայնիւ տեսնենք թէ արդեօք կարծուածին չափ անտեղի՞ է:

Սիրեցեալ եղբայրակիցք, մեզմէ ոմն ալիսոր հարձակի ըսելու որ չուզեր ինքը խոնարհ ըլլալ. ասիկայ այն տեսիլքան կարգէ գուբս խոստովանութիւն մըն է, մանաւանդ քահանայի մը համար, որ ոչ ոք կրնայ ուզել չէ թէ պլտց, և ոչ երբեն անձին ընելու: Օրինակի համար, մեզմէ ոմն ալիսոր ուզէ պարզապես ըսել. «չէ, ես չեմ ուզեր խոնարհ ըլլալ, խոնարհութիւնը ինձի հարմար անտանելի բեռ մըն է, թող առնէ ով որ կ'ուզէ, իմ կողմանէս չօժար սրտով կը շնորհեմ: Այսպէս խօսք մը լսելնուս արիւնիս երակներուս մէջ կը խառնուի. և տուգիս ալիսոր գայթակղիմք եթէ քահանայ ըլլար այն անձը՝ որ այս խօսքերը ականներուն պարկսպներէն գուբս փախչելու Թոյլ տար: Բայց ինչ ընես ունի սըրտի մը տասնկ ազէզ և անկարգ որամագրութիւնն խոստովանութիւնը, երբ առանց այսպիսի խոստովանութեան, գարձեալ նոյն որամագրութեան մէջ կը գտնուի մեկը: Թէև ծանր կու գայ մեզի ըսելը, այսու ամենայնիւ սաստիկ է որ այսպիսի որամագրութիւն մը մեր եկեղեցականութեան արդիւնքը չէ, այլ շատերը այսպէս կը գտնուին, և ուղղուելու համար ալ բան մը չեն ըներ: Տեսնենք:

Ե՞րբ է որ մենք համարձակապէս, յայտնի և հաստատապէս ըսինք, թէ կ'ուզենք խոնարհ ըլլալ: Ե՞րբ է որ մենք մարգարէ Թագաւորին հետ աղաչու կերպով խրեն ալս ըսինք. «Ասացի Թէ այժմ սկսայ»[1]:

Եթէ խոնարհ ըլլալու եռանդուն և անկեղծ վախ մը ունենայինք, մի Թէ ի գործ չէինք դներ զայն: Երբ եռանդամբ բանի մը կը բաղձացուի, արդեօք զայն առանալու համար ամեն հնարք ի գործ չի՞ դրուիր: Արդ մենք ինչ կ'ընենք զխոնարհութիւնը առանալու համար: Արդեօք մտածականներով, խոհական, հաստատուն և համրերէ խորհրդածութեամբ՝ կամքերնիս կը գրգռենք այսպիսի առաքինութիւն մը առանալու, և ամբարտաւանութեան դէմ մաքառելու հարկաւորութեան վրայ: Այս նիւթիս վրայ մանաւանդ քննութիւն կ'ընե՞նք էք Թէ չաբաթներով, այլ հարկը պահանջած առեն՝ ամիսներով ալ: Հոգւոյր Հօր ծանուցի՞նք արդեօք խոնարհ ըլլալու բաղձանքնիս, ըսելով իրեն, զոր օրինակ. Հայր, Աստուած ողորմեցաւ ինձ զիս լուսաւորելով, կը տեսնեմ որ կ'առաջ զամբարտաւանութիւնը և կ'ուզէ որ ուղղուիմ: Մինչև հիմայ, ձիլոը զբօրցելու համար, յայտմ մասին շատ քիչ բան ըրած եմ. ուստի աւելի բան մը ընելու յօժար եմ, եթէ առ այս պատշաճ յորդորներով, և այս նիւթին նկատմամբ մանաւանդ քննութիւններով օգնելու բարեհաճիք, առանց բան մը խնայելու, կ'առաջադրեմ վերջապէս հաստատ սրտով սկսելու, և այլն:

Այսպէս վարուելով, կրնանք ըսել որ խոնարհ ըլլալու ճշմարիտ բաղձանքը ունինք: Բայց ըսենք անկեղծաբար, իրաւցնէ այսպէս կը վարուի՞նք: Եւ «ի տեսականին» ունեցած այս կարծուած բաղձանքը կ'աշխատի՞նք ամեն օր «ի գործնականին» ալ արդիւնաւորելու: Անբարոյականութեան նկատմամբ ուրիշ սխալներու պէս չէ՞նք վարուիր, զորոնք մեր հոգւոյ փրկութեան այնչափ վնասակար չի կարծեցուի, մանաւանդ Թէ քիչ մ'աւելի նեղողամիտ կը ցուցընենք մենք զմեզ. ուսկից կը հետևի որ փոխանակ արդեօք և խոչընդոտն դանուելու իրենց

1 Սաղմ. ԼԹ. 11:

ընթացքին մէջ աւելի յուժ և նոր զօրութիւն մը կը ստա-
նան: Ա.յսպէս խոստովանութիւնիս Ձմարիտ խոստովա-
նութիւն ըլլալին, և ոչ թէ պարզ պատմութիւն մը (ըստ
որում բան մը ամբաստանելու ենք) մեր իրաւցընէ դոր-
ծած յանցանքներուս, որոց վրայ ոչ ազդու և կենդանի
ցաւ մը կը զգանք, և ոչ ալ հաստատուն և անխոս-
ձեղի առաջադրութիւն մը կը դնենք ալ աւելին չի գոր-
ծելու:

Ա.ստուած տար որ ընթերցողներդ և ոչ մէկը իւր
պատկերը տեսնէր այս խօսքերուս մէջ:

174. Նախընթաց երեք խորհրդածութեամբ խո-
նարհութեան նկատմամբ ընդհանրապէս ունենալիք պատ-
րաստութիւնիս քննելէն ետքը, արժան է որ հիմայ ալ
աւելի մանրամասն և գործնական համեմատութիւն մը
ընենք. որպէս զի տեսնենք թէ մի դուցէ ամբարտաւա-
նութիւնը վրանիս արմատացած ըլլայ:

« Խոնարհ ենք մենք մեր խորհրդոց և զգացմանց
մէջ » : —

Ողբալի բնութիւնիս ըստ ներքին մասին ամբար-
տաւանութեամբ այնպէս խանգարուած է, որ ամէն ա-
տեն, ինչպէս կ'ըսուի, հետերնիս կը կրենք յատկապէս
ամբարտաւանութենէն պատրաստուած խորհուրդնե-
րու ամբոխ մը: Շատերը ստուգիւ կամաւոր չեն, և երբ
կու գան և կը զգանք, բաւական է որ հառաչելով ար-
տաքսենք զանոնք. բայց ուրիշ քանի քանիներ կ'ընդու-
նինք և հաճութեամբ ալ կը պահենք կամքերնուս կա-
տարեալ ներգործութեամբը:

Երկիւղս լեցուն է այս աշխարհիկ ամբարտաւաննե-
րով, որոնք իրաւցընէ կռապաշտ են, մանաւանդ թէ
անձնապաշտ, երբոր մինակ են և իրենց սրտերուն մէջ
իրենք պղծուած տաճարի մը մէջ առանձնացած, յիմար
ախորժ մը կը զգան իրենք զիրենք մտածելով: Ի՞նչ ողոր-
մելի տեսարան մըն է զիրենք հոն տեսնել. բուրվառը
ձեռքերնին՝ իրենց վրայ աքանչանալ, աղէկութիւններուն
վրայ խայտալ, կարծուած արդեանցը վրայ բերկրիլ և
այսպէս իրենց հաւատարիմներուն ներկայանալ: Կրնայ ը-

սուիլ որ այնչափ ուրախութեամբ կը կայնին իրենց
կուռքին առջին, որչափ որ անապատի վայրենի մը իւր
պաշտած արեւուն առջեւ: Ա.յսպիսի վայրկեաններու մէջ
զԱ.ստուած ոչ ինչ կը համարին, իրենք են իրենց աս-
տուածը, և սոյն այս աստուածոյն կը նուիրեն իրենց պաշ-
տամունքը:

Ի՞նչպէս. կարելի՛ է որ մենք, մենք՝ Յիսուսի Քրիս-
տոսի քահանաներս՝ այս ասոնցմէ կուրանանք: Ո՛չ, ոչ
Ա.ստուած իմ, ոչ երբեք. այսու ամենայնիւ քննենք ըզ-
մեզ, մի դուցէ յայտ մասին արատ մը գտնուի վրանիս:

Երբ մեր խորհրդոց հետ առանձին կը գտնուինք,
ինչպիսի՛ մտածմունքներ կը շրջապտին դլխիկներուս մէջ:
Եթէ դժբաղդաբար ամբարտաւանութիւնը վրանիս կը
տիրէ, չը վախնանք ծանուցանելու, կամ գոնէ խոհեմ
կասկածով մը յայտնենք սրտերնուս գաղտնիքը:

Ա.յն վայրկեաններուն մէջ արդեօք սրամտութիւն-
ներուս վրայ չէ՞նք մտածեր. և փոխանակ զոյն Ա.ստու-
ծոյ ընծայելու, որ կրնար զմեզ տխմար ստեղծել այնչափ
դիւրութեամբ՝ որչափ որ խելացի ստեղծեր է, մի թէ
հաճութիւն մը չէ՞նք զգար կարծուած արդիւնքներուս
խորհրդածութենէն, երբոր թէ դլխաւորապէս և մանա-
ւանդ թէ միայն մենք եղած ըլլայինք անոնց հեղինակը:

Ա.յս տաղանդներուս մտածմունքը ամբարտաւա-
նութիւններէս կազդուրուած չի՞ տեսներ ըսելու սրտե-
րուս մէջ, որ ունեցած պաշտօնիս մեզի այնպիսոյ ըլլա-
լով, աւելի բարձրագունեներու արժանի ենք, այս կամ
այն անձինքը մեր քառորդը չարժելով. մեզմէ յառաջ
անցած են, և որոնցմէ դուցէ կախում ունինք, մինչդեռ
(կ'ըսեինք) ամենայն իրաւամբ անոնք պէտք էր որ մեզի
հպատակէին:

Եւ այս նոր խորհրդածութիւններով աւելի հեռուն
չէ՞նք երթար, մինչև մեծաւորներն ալ մեղադրելու, որ
զմեզ մոռցած ըլլան, մինչդեռ պարտաւոր էին բարձր
պաշտօններու հասցընելու. զիրենք կերպով մը մեր նա-
խատուած ամբարտաւանութեան առեանը կանչելով և
ամբաստանելով, որ ձրադը գրուանին տակը պահած ըլ-

լան, և խելքը քովերնին արժէք մը չ'ունենայ: Ի վերայ այսր ամենայնի ըստ Սալէզեան սուրբ Փրանկիսկոսի՝ մեծաւորները շատ մեծ խմաստութեամբ կը վարուին, երբ բարձրագոյն պաշտօններու համար, չափաւոր բայց առաքինութեամբ ընկերացած խելքերը կ'ընտրեն, քան թէ այնպիսի բարձր հանճարները, որոնք միայն այնպիսի առաքինութեամբ զարդարուած են՝ որ քիչ մը ամբարտաւանութիւն կը բուրէ:

Վերջապէս այս ընդունայն խորհուրդներէն չէ՞ հեռուիր որ ամբարտաւանութիւնը հոգիներուս վրայ նուաղելէն առաջ, և իշխանութեան ունեցած չարդուքիւնին նուազել. զայրացած տագնապը, տհաճութիւնը և անտեղի մտածմունքներով խռոված էրեւակայութիւնը զմեզ վհատեցուցիչ սրտաբեկութեան մէջ ձգեն, պաշտօններուս պարտուց մէջ զանցառու գըտնուինք, նախանձաւորութեան արդիւնքները տկարանան և բոլորովին ոչնչանան. և Ժողովրդեան սէրը իրենցմէ ձանձրացած հովուէն պաղելով՝ բաղձայ, ինչպէս որ մենք կը փափագինք, որ օր մը յառաջ հեռանայ իրենցմէ: Ծանր և ամենածանր անհեղութիւններ, որոնցմէ երբէք չ'ամենաձեր տուողիս խոնարհ քահանայ մը, որ ունեցած պարզ և փոքրիկ պաշտօնին ալ ինքը զինքը անարժան կը սեպէ: Բայց յառաջ երթանք:

175. Մտքերնիս երբէք չէ՞նք դադարեցըներ այս կամ այն ինչ երևելի դործքերուս յառաջ եկած կամ այն պէս կարծուած յաջողութեան վրայ. զոր օրինակ, հըրատարակուր քարոզչ, դիտական ճառէ, գրաւոր աշխատութիւններէ, և կամ թէ միայն հանճարեղ և տաղանդաւոր մարդկանց հետ խօսակցութենէ:

Այսպիսի առիթներու մէջ ամբարտաւանութիւնը շատ աղէկ գիտէ իւր արուեստը, և մեռոյ մտածմունքներ փչելէ չի դադարիր: Մինչև անգամ ամենախոնարհ մարդկանց ալ կը թելադրէ, թէև անոնց համար ուրիշ բան չ'ըլլայ՝ եթէ ոչ նոր յաղթութեանց և արդեանց առիթ մը. որովհետև փորձութենէն չը յաղթուելով, մտանգամ թէ ուժով դէմ դնելով կը խոնարհին, և իրենց

նախկին թշուառութեանց մտածմունքով կ'ոչնչանան Աստուծոյ առջեւն. և խոնարհութեան ամենամեծ զգացմամբ կրկնելով մարգարէին գեղեցիկ խօսքերը, «Մի մեզ, Տէր, մի մեզ, այլ անուան քումմտուր զփառս»[1], այնպէս կ'ընեն՝ որ փորձութիւնը փոխանակ իրենց վնասելու, մանաւանդ թէ օգուտ կը բերէ, անոր համար որ շատ մը արդիւնաւոր առաքինութեանց պատճառ կ'ըլլայ, մինչդեռ առանց անոր պիտոր չըլնէին:

Բայց երբ ուրիշ ընդունելութիւն կը գտնեն այս խորհուրդները, երբոր հաւանութեամբ բաւական ատեն ուշադրութիւնիս կը դրաւեն, երբ արտաքուստ ցոյց որուած սուտ և հրապուրիչ քաղցրութեան համը կ'առնուի, երբ մանաւանդ կրկին կը յիշուին անցած բաները, զըրցուած գեղեցիկ խօսքերը, ունկնդրացը զարմանքը, և ամէն բանէ աւելի, խօսակցութեանց մէջ համբաւաւոր անձէ մը լսուած գովասանքը, գովասանք՝ որուն յիշատակութեամբ կը փքանայ. եղբ՞ւկ, ո՞վ կրնայ պատմել թէ որչափ մեզ գործել կուտայ մեզի այս ողորմելի ամբարտաւանութիւնը: Ամբարտաւանը իւր ըզաւրձութեան գինովութեան մէջ զԱստուած բանի տեղ չի դնելով, և ոչ ալ անոր՝ դէթ ըստ մասին՝ փառք տալու հոգ տանելով, թէև բոլորովին պէտք է անոր նուիրել, ըստ որում մեր ամէն բարիքը անոր պարգեւ պատուղն են, իրաւունք չէ՞ որ Աստուած ալ իր կողմանէ գանայ և ուրանայ ինդրուած շնորհքները, և ընդհակառակն խոնարհներուն տայ: Արդարև ճիշտ այսպէս ալ կ'ընէ. «Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց»[2]:

Ամբարտաւանութիւնը շատ անգամ ալ փառքի տեղ անարդութիւն և նախատինք կը գտնէ. արդ այսպիսի առիթներու մէջ ինչ կ'ընէ սուրբ քահանան: Կը խոնարհի, այո, բայց չի լքանիր, և ոչ ալ կը վհատի. ոըովհետև իւր սրբութիւնը խոնարհութեան հաստատուն խարսխին վրայ հիմնուած ըլլալով, անխռով սրտիւ կ'ըսէ.

1 Սաղմ. ճժգ. 1:

2 Յակ. դ. 6:

«Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս»[1]: Եւ յետոյ խաչելութեան առջին Գեթսեմանէին այն խօսքերը մտածելով, «Սիրեա՛ անձանօթ լինել և առ ոչինչ համարել»[2], ուրիշ բան չի փնտռեր. արդէն մխիթարուած և գոհ՝ առաքելոց հետ մնալակից ըլլալուն համար, որոնք ուրախ և զուարթ էին իրենց Տիրոջը և Վարդապետին անուան համար՝ նախատինք կրելնիերուն պատճառաւ. «Եւ նոքա գնացին ինդալով յերեսաց առեանն, զի վասն անուան (Տեառն) արժանի եղեն անարգելոյ»[3]:

Մի և նոյնը կրնայ ըսուիլ ամբարտաւան քահանային նկատմամբ. ինչպիսի՛ մեծ և մտատանջ խորհուրդներ չեն պաշարեր զինքը երբոր յուսացած և փափագած պատուոյն տեղ՝ ինքը զինքը անարգուած կը տեսնէ: Բայց ինչ. ընդունայնութիւն ցանես, նուաստութիւն կը հնձէ. գովասանք կը յուսար, և չարաչար կչտամբանք կ'ընդունի: Ամբարտաւանին աւելի յարմար բան չի կայ ճանչցընելու համար, թէ արդեօք գործքերնուս մէջ աւելի Աստուծոյ հաճելի ըլլալ կը փնտռենք, թէ մենք մեզի: Եթէ Աստուծոյ, ապա նուաստութիւնը ոչ երբեք կրնայ խռովել մեր խաղաղութիւնը, ըստ որում վերջապէս մեզք մը չէ. և սուրբ անձինք՝ սրբոյն Ոսկեբերանի օրինակին հետևելով՝ միայն մեզքին կը վախնան: Բայց եթէ նպատակնիս անձնական փառքերնիս փնտռելն է, ան աստիճան խոհոյն կը լքանինք և կը վհատինք, երբ ուզածնիերնուս պէս ամբարտաւանութիւննիս չի յաջողիր:

Խոնարհ ըլլանք, սիրեցեալ եղբայրակիցք, խորին խոնարհ ըլլանք, և այսպէս ոչ միայն Աստուծոյ փառքը, այլ նաև մեր երջանկութիւնն ալ վտանգ պիտոր ըլլան մեր խոնարհութեանը:

176. Վերջապէս հոգիներուս նեղքին գործքերը՝ խորհուրդ, բաղձանք, զգայմունք և դատողութիւն, արդեօք աւելի մարդկային պատճառներէ շարժուած և կառավարուած են թէ Աստուծոյ կամքէն:

Աստգիւ ասանկ պիտոր ըլլար, եթէ սրտերուս մէջ

1 Սաղմ. ՃԺԹ. 71:
2 Գեմե. Գիրք Ա. Գլ. Ե. 3:
3 Գործ. Ե. 41:

խոնարհութեան տեղը ամբարտաւանութիւնը թագաւորէր: Ամբարտաւանը միշտ իր առջևը ունի զնափառութիւնը, որուն կը հետևի: Անդադար երեն կուռքը: Ամբողջ տրամադրութեան մէջ գտնուած քահանայ մը, Աստուծոյ կամքը և անոր մեծագոյն փառքը փնտռելէն յառաջ, իր առաջադրութիւններուն, դիտմանց և նախանձու գործոց մէջ միշտ պիտոր սկսի ինքն իրեն հարցընելու. ինչ պիտոր մտածէ, ինչ պիտոր ըսէ ինձ համար ժողովուրդը, ինչ մեկնութիւն պիտոր տայ այս իմ խորհրդոյս, ինչ պիտոր մտածէ այս իմ մեքենայ անցուցած բարեգործութեանս նկատմամբ, և մանաւանդ այս կամ այն անձը ինչ համարում պիտոր ունենան իմ վրաս, ինչ պիտոր մտածեն և ըսեն գործակից եղբայրներս:

Իրաւցընէ, յարգելու ենք հասարակութեան կարծիքը, և առանց օրինաւոր պատճառի ալ ականջի էաև ձգելու չենք զայն. բայց եթէ ամբարտաւանութեան շարժմանց էաևէն երթալու ըլլանք, և աստուածային ազդեցութիւնները ատոնց յետագասենք, ան ատենը պիտոր հանդիպի որ անարգանաց վախ մը, կամ մանաւանդ անձի մը տհաճութիւնը՝ բաւական պիտոր ըլլան այնպիսի կարևոր ձեռնարկութիւններէ հրաժարեցընելու, որոնք շատ տղեկ եղած պիտոր ըլլային թէ Աստուծոյ փառաց, և թէ հոգւոց փրկութեան համար:

Անշուշտ պէտք է որ խնամատուն և խոհեմ ըլլանք. բայց զգուշանանք նաև խնամատութիւն անուանելու ամբարտաւանութեան ողորմելի և եղկելի պիտակը. և յիշենք որ Աստքեղջին ըսածին պէս, մարմնոյ և հոգւոյ խոհեմութեան մէջ այնչափ տարբերութիւն կը դտնուի, որչափ որ կայ կենաց և մահուան մէջ. «Զի խորհուրդ մարմնոյ՝ մահ է, և խորհուրդ հոգւոյն՝ կեանք և խաղաղութիւն»[1]:

177. Ամէն բանէն հաստատապէս հեռացընենք, որ երբեք ո՛ և իցէ պատճառաւ պէտք չէ որ սրտերնուս մէջ ամբարտաւան խորհրդոց տեղ տանք: Մոռնանք

1 Հռովմ. Ը. 6:

զմեզ՝ միայն զԱստուած մոածելու համար, և անձնական փառքերնիս երբեք աղբ սեպենք, և մանաւանդ երբ Աստուծոյ փառքը անձնական փառաց ըղձը պահանջելու ըլլայ: Ո՛վ, ան աւետը սրտերնիս ամենաստիրա Աւետարանչին խորհրդով լեցուն ընելով, ըսենք մենք ալ. «Վասն որոյ յամենայնէ զրկեցայ, — և համարիմ կղկղանս, զի ըղձ Քրիստոս չահեցայց»[1]:

Եթէ հաւատոյ մեծ և երևելի խորհուրդները սըրտերնուս մէջ չ'արմատանան, և անոնց տեղ ամբարտաւանութեան թշուառ և կծծի մոածմունքները տիրեն, ամէն գործքերնիս անպիտան կ'ըլլան: Բոլոր եկեղեցականն պատմութեան մէջ կրնաք գտնել միայն մէկ անձ մը յիշատակը, որ ստուգիւ Աստուծոյ ծառայ, անոր ողորմութեանց արժանաւոր գործիք, առաքեալ մը, քաղաքներ և գաւառներ դարձի բերող ըլլալով, խոնարհ և ինքը զինքը ոչինչ սեպած չ'ըլլայ: Ինչպէս որ արհեստաւոր մը անպէտ բաներու մէջ կը ձգէ իւր աւրուանց կամ կոտրած գործիքները, այնպէս ալ Աստուած կը մերժէ իրենց արժանաւորութեան ծուխով կուռցած հպարտները և ամբարտաւանները, որոնք կարծեն թէ Աստուած իրենց գործակցութեանը կարօտ ըլլայ ուզածը ընելու համար. «Ֆակիւց զՀզօրս յաթոռոց»: Իսկ սուրբ քահանան իւր նուաստութեան խորութեան մէջ կը թաքչի և կը պահուըտի, աստուածային կամաց գործակատար ըլլալու և անոր փառքը յառաջեցընելու համար. «Եւ բարձրացոյց զնուաստս»[2]: Խոնարհինք ուրեմն, խոնարհինք, Աստուծոյ զօրաւոր ձեռաց տակը պզտիկնանք, և ամբարտաւանութեան մեռոյ թեզադրութեանց դէմ դնենք մեր ոչնչութեան և անարժանութեան մտածմունքը:

Սրբակեաց անձ մը — որ քահանայ չէր, — բարեպաշտ Տը Բանոի պարոնը, որուն վրայ խօսած ենք, խորհրդոյ մէջ այնչափ խոնարհ էր որ օր մը վստահաբար կ'ըսէր իր մեկ բարեկամին. — Երբ առանձին Աստուծոյ ներկայութեան առջին գտնուելով մեկ կողմանէ անոր

1 Փիլիպ. Գ. 8: 2 Ղուկ. Ա. 52:

անսահմանի մեծութիւնը, և միւս կողմանէ ալ իմ անսահմանի պզտիկութիւնս կը մտածեմ, այնչափ ամօթ և չփոթութիւն կը զգամ, որ խորհրդով ձիս այնպէս գետինն կը զարնեմ և կը ճղմեմ, ինչպէս որ հաւկիթ մը ոտքի տակ կը ճղմուի:

Ահաւասիկ ըստ սրտին Աստուծոյ անձինք, ահաւասիկ այն անձինք՝ զորոնք կը գործածէ իւր փառաց, ժողովրդեան շինութեան, զմեղաւորները փրկելու և սուրբ եկեղեցին պայծառացընելու համար, զոր ինքը հիմնեց գալկլեայի քանի մը ուսմունքէ և համբաւէ զուրկ ողորմելի ձկնորսներու խոնարհութեանը վրայ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Նոյն նիւթին ղարուցակութիւնը — Խոնարհութիւն խօսքերու եւ գործոց մէջ:

178. «Խօսքերնուս մէջ խոնարհ ենք»:

Այո՛, եթէ խոնարհութիւնը կը տիրէ սրտերնուս մէջ, և եթէ ձիւսուսի գպրոցին մէջ սրտանց խոնարհ ըլլալը սորված ենք. «Խոնարհ սրտիւ»[1]: Բայց եթէ խորհրդոց և զգացմանց մէջ ամբարտաւան ենք, շատ գժուարին է, չ'ըսեմ բարոյապէս անկարելի որ ամբարտաւանութիւննիս խօսքերուս վրայ ալ չ'ազդէ, վասն զի «Ի յաւելուածոյ սրտի խօսի բերան»[2]: Ասիկա հանապազօրեայ հաստատուած ճշմարտութիւն մըն է: Այսու ամենայնիւ ամէն ամբարտաւան հակառակ չէ խօսքերուն մէջ սրտին զգացմունքը ցոյց տալու: Աւելի չենք ուզեր ըսել որ ուրիշներէն նուազ իրենց անձին վրայ խօսողները, Աստուծոյ աչքին առջև աւելի խոնարհ ըսուին: Այո՛, աւելի արթուն են, և այս արթնութիւնը իրենց ամբարտաւանութեան մեկ հնարքը և հետևութիւնն է: Որչափ որ կը բաղձան որ ժողովուրդը զիրենք յարգե և գովէ, այսու ամենայնիւ փափագած փառքերնին աւելի անարգութենէ կ'ահնածեն: Ուրդ իրենք պիտեն որ խեղացի մար-

1 Մատթ. ԺԱ. 29: 2 Մատթ. ԺԲ. 34:

դիկ զանազանութիւնը երբեւ պատիժ մը կու տան չխմոր մնափառներու։ Այսինք այնպիսեաց Թողով զցած ամբարտաւանութիւնը, որ կը սորվեցընէ երկնից մնասպարծել, սիրամարգի պէս վիքանալ և ճոխանալ, անանկ որ տեսնողները ի կարեկցութիւն կը շարժէ, երկնք աւելի բարակ ճամբաներու ձեռնամուխ կ'ըլլան։

Ոչ միայն այս վերը յիշուած անմիտ մնասպարծութենէն, սիրեցեալ եղբայրակիցք, այլ ըստ խմիք քօղարկեալ և բաւականապէս տեսանելի ունայնամտութենէն ազատ ենք, այնպէս որ ոչ ոք կարող ըլլայ ըսել զմեզ «մեծաբան և պարծենկոտ» կանչել։

Այսպէս զոր օրինակ, (ձեռքերնիս ուղղակի վերբերն վրայ դնելով) եթէ մնասպարծութեամբ ախտացած ենք, ի հարկէ յայտնապէս չենք ըսեր. «Ո՜հ, ես աղուոր քարոզ կու տամ, ինչ որ կ'ուզեն, Թող ըսեն»։ Ըստ որում ասկից անհամ և տմարդի անձնագովութիւն մը կ'ըլլայ, անհաճոյ ամէն խելացի մարդկանց։ Բայց դուցէ այնչափ ալ խղճահարութիւնը զգացուի ըսելու ամէն մնասպարծութեան երևոյթէ ազատ, և դուցէ քիչ մըն ալ բարեպաշտութեան կերպարանքով. — Աստուած կը գիտնայ իմ միջնորդութեամբս՝ թէև անարժան ըլլամ, քանի մը հոգի փրկելու. անցեալ աւուր քարոզս ալ այնչափ անճոռնի չէր, կարծեմ թէ բարի պտուղ մը ունեցած պիտոր ըլլայ. քիչ մը յառաջ այս ինչ եկեղեցւոյ մէջ սբ. Լուսաւորչեան աւետարանը կարդացի

Ա.յս վերջին խօսքերուն վրայ հաստատ կրնանք, վասն զի Ճշմարտութեան լեզուն ասիկայ է: Ա.րդ ոչ ըսեմ, մահը նոր մերկութեամբ՝ բան մը չ'ուզեր, բան մը չ'ըսեր և բան մը չի հասկընար. գովք զինքը, պարսաւք, պատուէր, անարգիր, երեն համար մի և նոյն է: Իւր լեզուն մռնչէ և սուած է, ո՛ և իցէ անապարծութիւն մը ամենևին չի կրնար բառ մը արտաբերել տալ: Ա.յսպէս ալ պէտք է որ մենք վարուինք աշխարհքին հետ, որով հետև մեռած և Յիսուսի Քրիստոսի հետ թաղուած ենք. յիմարութիւն չէ՞ արդեօք միայն գովուելու համար յարութիւն առնելը:

179. Մի թէ միայն մեր անձին և գործոյ վրայ ուշադիր խօսելով խոնարհութեան դէմ կը մեղանչե՞նք: Հաւատացողը մեծապէս կը խաբուի: Ա.յսպէս զոր օրինակ, ամբարտաւանութեան ծնունդ չէ՞ն այն անուշ խօսքերը որ լեզուներուս վրայ կու գան, և նախանձու չարժմունքէ մը սոսկալուած դուրս կը փախչին, և որոնց միով առանց մենք զմեզ ուշադիր բարձրացընելու, կը նուաստացընենք եղբայրնիս՝ որ իւր բարձրագոյն արժանաւորութեամբ տաղտկալի է մեզի, որպէս զի սանուկով մենք բարձրանանք: Եւ եթէ նախանձու թոյնով ներկուած են, այս նախանձը ուսկից յառաջ կրնայ գալ, եթէ ոչ ամբարտաւանութենէն: Եւ մանաւանդ թէ ասկից ամենանուրբ ամբարտաւանութիւն մը չէ՞ արդեօք, մահաբեր ամբարտաւանութիւն մը՝ որ մեկ հարուածով զնոնարհութիւնն ալ, զեղբայրսիրութիւնն ալ կը վիրաւորէ:

Հապա այն կեղծաւոր խօսքերուն կերպը, չէ՞ թէ ըստ ինքեան չար՝ այլ խոնարհ, ջերմեռանդ, սիրալիր և որուն ուրիշ բան պակաս չէ՝ եթէ ոչ գիտաւորութեան մաքրութիւն մը. հապա այն խօսակցութեան կերպը, զեղեցիկ կեղևէն անդին չը տեսնող մարդկանց աչքին, բայց գանելի՝ զծուծը նկատող Աստուծոյ աչքին. հապա այն խօսակցութեան եղանակը որ գործածողին առաքինութեան համբաւ կը շահի, որուն իր սրտին մէջ ինքն ալ իւր անձը արժանի չի գտաւեր. մի թէ ասոնց ամենքն ալ ամբարտաւանութեան արդիւնք չէ՞ն արդեօք:

Հապա այն ցասկոտ, մեծաբան և խելկատակ խօսքերը, որ զուրցողին կողմանէ անարգութիւն մըն է եղբայրակցին՝ որուն դէմ որ կը խօսուի, մանաւանդ թէ այն եղբայրնիս անմտի, անպէտի և բոլորովին անօգուտ բանի մը տեղ կը դնէ, թէև դուցէ Աստուծոյ աչքին առջև զինքը այսպէս նուաստացընողներէն հարիւրը կ'արժէ. և որ իւր սորվին պաշտօնովը և ջերմեռանդ աղօթներովը՝ շատ աւելի հոգի կը փրկէ քան թէ մնապարծ ամբարտաւանը, որ անոր վրայ անարգաբար կը խօսի: Ա.յս ալ մի՛ թէ խենդէշ ամբարտաւանութեան ծնունդ մը չէ՞ արդեօք:

Հապա այն խօսքերը՝ որ տաքցած վիճաբանութեան մէջ կարկառուն նման կը թափին, հակառակորդներուս դէմ յաղթանակ կանգնելու բաղձանքէ գրգռուած խօսքեր, զերծնէք ըսելու սոխակող կրքի նման վառվռուն խօսքեր, գրգռիչ, խայթիչ և անարգիչ այն անձին՝ որուս դէմ որ թունաւոր նետերու պէս կը նետուին. նուրբ և նենգամիտ խօսքեր, որոնք աւելի խաւար և չխոթուած կը պատճառեն՝ քան թէ լոյս և կարգ. վերջապէս սուտ կամ յայտնապէս չափը անցած խօսքեր, որոնք զՃշմարտութիւնը կ'ընդհարեն, և սուտը կը յաղթանակէ, բոլորն ալ ողորմելի ամբարտաւանութեան պտուղներ չէ՞ն արդեօք:

Հապա այն չափէն աւելի խիստ և սաստիկ խօսքերը, որոնք նախատուած և հակառակութիւն ու նուաստութիւն կրած, և կամ անձէ մըն ալ ատելութիւն գրգռած ատենները բերանէրնիս դուրս կը ժայթքեն. որոնք սաստիկ մահացուցման հակառակ են, քան որում յայտնի կը ցուցընեն՝ որ թեթև ձանձրուածքի մըն ալ խաղալ արտով համբերելու առաքինութիւնը չունինք. հակառակ են հեզութեան՝ ինչպես որ յարակից բարկութեան գիւրաւ կը յայտնուի. հակառակ են եղբայրսիրութեան՝ յուզած խռովութեանց, պղտորութեանց և հեւեալ գժտութեանց պատճառաւ. բոլորն ալ սոյգ և ամենաստոյգ, բայց մի և նոյն ատենն ալ խորամանկ ամբարտաւանութեան պտուղ չէ՞ն արդեօք, որոնցմէ կըր-

նայինք գնալու խոյս տալ՝ եթէ խոնարհութեան խորհրդովը վարուինք։

Հապա այն՝ լինելու խօսքերը, որոնք իրաւցնէ մեզի գովասանք ձարելու ուղղուած չեն, բայց զորոնք հարկ եղած ժամանակ արթնութեամբ կը գործածենք, վերահաս և իբրև ծանր և տաղտկալի կարծուած անարգութենէն խոյս տալու համար. մի թէ ասոնք ալ սորվեցընողն ամբարտաւանութիւնը չէ՞ արդեօք։

Հապա այն պատիւը խօսքերը, որոնցմով իրօք չ'ընդունուած բան մը հաստատել կը ձեւացընենք, որոնք մարդութեան մէջ կը պահեն զանոնք՝ յորմէ աղատիլ պէտք էր. այսպէս ճշմարտութիւնը և եղբայրսիրութիւնը ոմանց մնոտի յարդանքը պահելու հաճոյքը զոհելով, որոց գուցէ բարեկամութենէն չը զրկուելու շահն ունինք. այն տեսակ խօսքերն ալ մի թէ ամբարտաւանութիւնը բերաննիս դրած չե՞ արդեօք։

Հապա այն կոպիտ, պաղ և պլանդակ խօսքերը, որոնցմով չարաչար կ'ընդունինք բարեկամի մը, եղբայրակից մը և գուցէ նաև մեծաւորի մը սխրալիր խորհուրդները, և որոնք յայտնապէս ցոյց կու տան, որ չենք սիրեր այլոց նախանձաւոր աղգարարութիւնները, և ոչ ալ կ'ախորժինք այլոց առաջնորդութենէն, և թէ մենք զմեզ կառավարելու բաւական յաջողակութիւն ունինք. ասոնք ալ մի թէ ամբարտաւանութենէն թելադրուած խօսքեր չե՞ն արդեօք։

Եւ չենք գիտեր թէ ո՞ւր կրնանք լինցընել, եթէ ուզենք մի առ մի նշանակել այն ամէն պարագաները, որոնց մէջ լեզուն ամբարտաւան սրտի մը նուաստ ծառան կ'ըլլայ։ Որչափ մեզքերու արդեօք պատճառ չէ այս մոլութիւնը։ Ինչպիսի՜ թշուառութեան խոր անդունդ մը չի բացուիր աչքերնուս առջեւ, երբ պատուի զանիկայ ծածկող քօղը։ Ո՛վ Աստուած, ինչ է ուրեմն մարդը։ Եւ ինչպէս յայտնապէս առեղծ զամբարտաւանութիւնը, կրնաս սիրել զանոնք, որ իրենք զիրենք կը սիրեն, և քովէդ իրենց փառացը կը յետադասեն. «Սիրեցին զփառս մարդկան առաւել քան զփառս Աստուծոյ»[1]։ Յիրաւի, չէ թէ այսպիսեաց՝ այլ քու խոնարհ ծառաներուդ վրայ կ'անձրեւես քու ընորհքներդ. «Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ ընորհս խոնարհաց»[2]։ — «Որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի Աստուծոյ»[3]։

Խոնարհ ըլլանք, ամենասիրելի եղբայրակիցք, որ թշուառութեամբ հսկենք խօսքերնուս վրայ՝ որոնք քիչ ըլլան. — Շատ խօսողները, կ'ըսէ Հոգին սուրբ, մեղքէ ազատ չեն ըլլար. «Ի շատախօսութենէ ոչ պակասեցաւ է մեղաց»[4]։ Իսկ փորձառութիւնը մեզի համոզակութիւն կու տայ աւելցընելու, թէ ամէն շատախօսները մեյմեկ ամբարտաւան են։

Անասելապէս մարդը անձնահաճութենէն զատ ուրիշ բան չի մտածեր, և գիտմամբ ճոռոմաբանելով՝ իւր ուսնայնամոլութիւնը կը յուսցընէ. իսկ խոնարհը ընդհակառակն, մանաւանդ եթէ առաքինի՝ պարկեշտ և չաչս իւր անարգ քահանայ է, խօսքերուն մէջ մեծ չըջահայեցութեամբ կը վարուի, իւր խօսքերուն պարզութեամբը օրինակ կ'ըլլայ, և կը զգուշանայ որ ամբարտաւանութենէ շարժուած բառ մը բերնէն չ'ելլէ։ Ինքը միշտ իւր քահանայական պաշտօնէն պահանջուած կատարելութեան կը փափաքի, և ի Հոգւոյն սրբոյ դաստիարակուած՝ գիտէ որ անիկայ միայն կատարեալ է, ով որ անըստգտանելի է իր խօսքերուն մէջ. «Եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ, նա է մարդ կատարեալ»[5]։ Եւ գիտէ նաև, որ իւր լեզուն խմաստութեամբ սանձահարել չ'ուզողին բարեպաշտութիւնը ոչ ճշմարիտ է և ոչ ալ հաստատ. «Եթէ ոք կամիցի կրօնաւոր լինել, և ոչ սանձահարեսցէ զլեզու իւր, այլ զբաղեցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն վայրապար է կրօնաւորութիւն»[6]։ Ահաւասիկ Աստուծոյ խօսքը. չի խաբուինք, ասիկայ այնպիսի խօսք մըն է՝ որ ոչ կը սխալի, և ոչ ալ կ'անցնի. ասիկայ մեր

1 Յովհ. ժԲ. 43։
2 Ը. պետ. Բ. 5։
3 Ղուկ. ԺԶ. 15։
4 Առակ. Ժ. 19։
5 Յակոբ. Գ. 2։
6 Յակոբ. Ա. 26։

հոս առժամանակեայ ընթացքին կանոնը պիտոր ըլլայ, վասն զի մեղի ըլլալիք դասատանին ալ կանոն է:

180. «Մեր գործոյ մէջ ալ խոնարհ ենք»:

Գործքերնիս մեծաւ մասամբ իրենց արդիւնքը բարի դիտաւորութենէն առնելով, որով որ զանոնք կը կատարենք, սոյգ է որ եթէ մտածմունքներուս, խորհուրդներուս և սրտերնուս նեղքին զգայմանց մէջ խոնարհ ենք, նոյնը կրնանք ըլլալ նաև գործքերնուս մէջ ալ: Եւ եթէ այսու ամենայնիւ խանգարուած բնութեան չար յօժարութեամբ երբեմն ունայն պատճառներով մղուած ենք գործք մ'ընելու, շատ հաւանականաբար կամ չանկարծահաս ցնորման և կամ այն նախ առաջին շարժմանց արդիւնքը կ'ըլլայ, որոնցմով Աստուած չի վհատիր:

Բայց յիշենք որ ասիկայ միայն «ստուգիւս սրտանց խոնարհներուն նկատմամբ» կ'ըսուի, և ոչ թէ անոնց հասմայր՝ որոնք խոնարհութեան չարգութիւն մը, և զանիկայ ի գործ դնելու հարկաւոյն փափագ մ'ունենալուն պատճառաւ, կը կարծեն որ իրօք ալ խոնարհ ըլլան: Այնպիսիներուն սուտ խոնարհութիւնը ամբարտաւանութենէն գրգռուած քանի մը փորձերով իսկ և իսկ կը յայտնուի:

Յորմէ հասկընալու ենք, թէ որչափ կարեւոր է ստուգիւս խոնարհ ըլլալը, որովհետև առանց խոնարհութեան՝ գրեթէ անկասկածելի է բոլոր գործքերնուս արդեանց կորուսաը:

Եւ իրօք, ամէն մարդ բնականապէս կը բաղձայ անձնական գործոյ մէջ իրեն հաճոյքը վնտռելու: Իսկ արդ Աստուծոյ կամքը բոլոր մեր գործոյ նախասիսն ըլլալով, հարկ է որ մեր խանգարուած բնութեան բնական բաղձանքը աւելի զօրաւոր յօժարութենէ մը նուաճուի, որպէս զի գործքերնիս միայն Աստուծոյ հաճոյանալու համար գործենք: Այս երկրորդ յօժարութիւնը, այս զօրաւոր հաւասարակշռութիւնը՝ է անձնական հրաժէշտը, է նոյն ինքն խոնարհութիւնը:

Ճշմարիտ խոնարհը մեկ կողմանէ աչքնելով զԱստուած որ կը պահանջէ իր խորհուրդները, բաղձանքնե-

րը, խօսքերը և գործքերը, և միւս կողմանէ ալ տեսնելով իր վատութիւնը, անարժանութիւնը, վերջին աստիճանի թշուառութիւնը, պիտոր ամբչիայ ինքը զինքը Աստուծոյ նախագասելու, և անոր իրմէ ուզածը զանազատելու իրեն սեպհականելու: Ուստի կը հրաժարի իր անձնական փառաց համար գործելէ, և ամէն բանի մէջ Աստուծոյ փառքին զատ ուրիշ նպատակ չի դներ իրեն, ըստ կամաց Աստքերին. «Զամենայն ինչ ի փառս Աստուծոյ արասջիք»[1]: Ան տեսնը իրաւցընէ սուրբ են իր գործքերը, և եթէ սուրբ քահանային գործքերուն համաձայն ըստ ինքեան կատարեալ են, ոչ իսկ աւելի զօրութեան դերազանցութիւն չ'աւելցըներ անոնց վրայ այն խորին խոնարհութեամբը՝ որով որ զանոնք կը կատարէ, և այն եռանդուն փափագով որով բորբոքած է Աստուծոյ փառքը և հոգւոց փրկութիւնը յառաջեցընելու համար: Ուստի բոլոր իր գործքերը սրբացած են խոնարհութեամբ. և որովհետև այսպիսի գործքերով լեցուն են իր օրերը, որոնց յաջորդութիւնը կը կազմէ իր կեանքը, ահաւասիկ Ճշմարիտ խոնարհ քահանային կեանքը շատ խաղաղութեամբ կ'ընթանայ Աստուծոյ ներկայութեան առջև, արդեանց այնպիսի առատութեամբ՝ որ խոնարհութեան միջոցաւ թէև աշխարհքին անծանօթ՝ այլ երկինքը բոլորովին կը ցնծայ. «Եւ աւուրք իմ լի կատարեալ դոցին ի նմա»:

Ամբարտաւանը ընդհակառակն, իր անձէն զատ ուրիշ բան չի մտածելով՝ չի յարգելով և չը սիրելով, բոլոր իր գործքերը ամբարտաւանութենէ և անափառութենէ շարժած կը կատարէ. և որովհետև այս չար սկզբունքը իր սրտին մէջ հաստատուած է, և ինքը բան մը չ'ըներ զայն արմատէն վերցընելու, մնաւանդ թէ ամէն վայրկեան ամբարտաւանութեան գործքերով աւելի կը խորկընէ, որուն երբեք առնի չի պակսիր. կը հետևի որ ինքը Աստուծոյ աչքին առջև տխուր և ողորմելի կեանք մը կ'անցընէ, մեղքերով բոլորովին տգեղացած, և այնչափ աւելի յանցաւոր՝ որչափ որ աւելի պէտք էր սուրբ

1 Ա. Կորնթ. ժ. 31:

և արժանաւոր կերպով համեմատաբանել իւր պաշտօնին գերազանցութեանը:

181. Սովորական գործքերնիս մէկը քննութեան ենթարկելով, տեսնենք թէ մի գուցէ ամբարտաւանութիւնն անոր արգիլքը գողնայ:

Մենք կ'աշխատինք անաարակոյս, ուսմունքն ալ մեր ձեռքնիս մէկ մասն է. որուն համար արդեօք կ'աշխատինք, որուն համար կը սորվինք. Աստուծոյ թէ մեր փառացը համար:

Ճշմարտապէս սուրբ և հեռւաբար տուգիս խոնարհ քահանան մտքին մէջ տպաւորուած պահելով մեծին Պօղոսի Առաքելոյն յանձնարարութիւնը, «Զամենայն ինչ ի փառս Աստուծոյ արասջիք»[1], ուսման ղեկավարէ յառաջ՝ սիրտը առ Աստուած կը վերցընէ, սիրով անոր կը նուիրէ, անոր ըլսելը և ընդհանրերը կը խնդրէ, և կ'առաջադրէ որ ուրիշ վախճանաւ չուզեր ուսմունք սորվիլ՝ եթէ ոչ միայն անոր աւելի փառք տալու համար: Յետ այնորիկ քննելով թէ արդեօք է այն ուսմունքը՝ որուն Աստուծոյ մեծագոյն փառքը կը պահանջէ որ պարապի, և ասկից գիտնալու համար իւր հաճոյքէն խորհուրդ չառնուր, և ոչ ալ ախորժակէն կամ հետաքրքրութենէն, և ոչ ալ գիտութեան սիրէն, իբրև պարզ գիտութիւն, և կամ մարդկանց քով պատիւ և համբաւ վաստկելու համար յատուկ միջոց մը. ո՛չ, ո՛չ, Աստուծոյ փառքը և մեծագոյն փառքը, կը կրկնենք, ահաւասիկ իւր մէկ հատիկ կանոնը:

Զոր օրինակ, նոր ձեռնադրեալ կամ քարոզչի նկատմամբ պիտոյ պատրաստութիւն: Գիտնալով որ Աստուծոյ և մարդկային փառաց ազդեցութիւնները բաղդատութեան մէջ մեծ հակառակ են, ինքը իւր սիրտն հաւատարիմ գտնուելով, և Աստուծմէ զատ ուրիշ բանի համար ըլլալ չուզելով, զայն իր քարոզութեանցն նկատմամբ կ'ընտրէ՝ ինչ որ խղճմտանքով իւր ունկնդրաց օգտին յատուկ կը գտնէ. և ոչ թէ զայն՝ որ ըստ քմահաճ ամբարտաւանութեան՝ թոյլ կուտայ իր քարոզը շքեղացընելու գեղեցիկ և խորին մեկնութեամբ, նոր գաղափարներով, ծանրախորհուրդներով, նմանութիւններով և փիլիսոփայական տեղեկութեամբ և խորհրդածութիւններով: Իւր խոնարհութեան չափովը ընտրելով, խոնարհութեամբ ալ կը քարոզէ, ոչնչէ տեղի տալով անգիտութեան, ամէն բան Աստուծոյ և հոգւոց փրկութեան ուղղելով: Ահաւասիկ սուրբ քահանային վարմունքը, ահաւասիկ այն գաղտնիքը՝ որով իր պաշտօնին մէջ այնչափ պտուղներ կը քաղէ երջանիկ յաջողութեամբ:

Որչափ տարբերութիւն ասոր և ամբարտաւան քահանային մէջ, որ ամբարտաւանութեան դերին ըլլալու գժբաղդութիւնը ունենալով, իւր ամէն գործոց մէջ քիչ մը չափաւոր նկարագրուած քահանային հակառակ վարմունք մ'ունի. և փոխանակ սուրբ քահանային պէս միայն Աստուծոյ փառքը փնտռելու, միշտ անձնականին հետևին կ'ըլլայ: — Իբրաքանչիւր ոք իր գործքերը քննէ, և տեսնէ թէ երկուքէն որուն կը նմանի:

182. Ասոյգ է, որ երբեմն առանձնութիւնին թողլով սահմանած կ'ըլլանք ժողովրդեան երթևեկութեան պատշաճութիւնները և գուցէ նաև հովուական պարտքերնիս ալ կը պարտաւորցընեն վրէժ առնր անոր այցելութիւն մ'ընելու. ահաւասիկ գործքերնուս մէկն ալ: Սուրբ քահանան կը զգուշանայ պահասաւոր չը գտնուելու, բայց կ'երթայ ուր գիտնալու ըլլայ որ Աստուծոյ կամքը զինքը կը կանչէ. և երթալով ալ ուրիշ նպատակ մը չ'ունենար՝ եթէ ոչ բարի օրինակ տալու, ժողովուրդը սրբացընելու և քահանայական պաշտօնին ալ չարդ ու պատիւ չհեղելու: Ի՞նչ կ'ընէ ուրեմն: Աս երեցոյթս փոքր ինչ՝ ընկերութեան մէջ կը տանի այն սովորութիւնը, որ բոլոր աշխարհք գիտէ որ իրեն սեպհական է. այն գովելի պարկեշտութիւնը, կ'ըսեմ, որ քարոզէ մ'աւելի կ'արժէ, այն գաւմ մը յատուկ հեզութիւնը՝ որ ամէն բանի չափաւոր է, այն խորին խոնարհութիւնը՝ որ իր մեկնելէն վերջը ըսել կու տայ. — Իրաւցնէ սուրբ հովիւ մը ունինք: — Չպղտոմաները վայելուչ, բայց առանց պաճուճանաց. խօսակցութեան

1 Ա. Կորնթ. ժ. 31:

կերպը միշտ քահանայի մը արժանի, ոչ ցամաք ու պաղ, բայց և ոչ ալ չափէն աւելի երկար. ոչ շատ ագահ իր խօսքերուն մէջ, և ոչ ալ հեռաքրքիր, պաճուճեալ և անոտիաբան, որ ամենուն վրայ ծաղրելի է, բայց շատ աւելի քահանայի մը վրայ: Այս է Աստուածոյ Ճշմարիտ մարդը, Յիսուսի Քրիստոսի խոնարհութեամբ զարդարուած: Եթէ ասոր հակառակ վարմունք մը երեւակայենք ընդհանրապէս, ամբարտաւան քահանային ձիշտ պատկերը կ'ունենանք, այնպէս կազմուած՝ ինչպէս որ գիտէ յարդարել իր վրայ սիրող ամբարտաւանութիւնը:

183. Խոնարհ քահանան ի հարկէ յարաբերութիւն կ'ունենայ իր եղբայրակիցներուն հետ. յայտ մասին ալ իր խոնարհութիւնը անոնց յարգութիւնը և սէրը իրեն կը գրաւէ: Ո՞վ չի սիրեր խոնարհ քահանան: Ո՞վ չի փափագիր անոր մտերիմ ըլլալ: Նոյն իսկ անոնք որ ցնծութիւնը իրենց վրայ չեն սիրեր, այլոց վրայ ախորժելով կը գիտեն: Ուստի խոնարհ քահանան իր եղբարց ալ համձիլի և սիրելի է: Ես ստուգիւ բնական է. վասն զի ինքը անոնց հետ գոռոզութեամբ չի վարուիր, խիստ կամ ցասկոտ խօսք մը չի զսպեր, երբեք այլոց նուաստացուցիչ խօսք մը չ'արտաբերելով բանախօսութեան ալ առիթ մը չի տար. ոչ մեծաւորի, ոչ ալ տիրոջ կերպարանք կ'առնու. իրեն զսպուած կեցուածք կամ նախատական խօսքերէն չ'առնուիր, որուն դէմ ամբարտաւանութիւնը կը պահանջէ որ դիմադարձուի, բայց ինքը խոնարհութենէն կը սորվի համբերութեամբ տանելու: Իր վրայ եղբօրը դէմ երբեք գժտութեան, կամ առելութեան և կամ թշնամութեան նշան մը չի տեսնուիր, թէև մէկը իրեն նախատմամբ թեթեւ. ամպրդութիւն մըն ալ ըրած ըլլայ, ըստ որում ինքը այնչափ կը յարգէ այս առաքինութիւնը, որչափ որ կ'արժէն: Միշտ սիրելի և սիրուած, վասն զի միշտ խոնարհ է և ամէն կողմանէ խոնարհութեան սքանչելի օրինակներ կու տայ, առանց ինքը գիտնալու:

Ի՜նչ խղճի տագնապներու նիւթ պիտոր ըլլայ ամբարտաւան քահանայի մը, եթէ այս խոնարհ քահանային նկարագրին ուրուագծէն զինքը տարբեր գտնէ: Ինչպիսի՜

նեղքին չխոնարհութիւն պիտոր զգայ, երբ հառաչելով ըսելու ստիպուի, թէ ահաւասիկ ինչ որ ես չեմ:

184. Եթէ սուրբ քահանան ընկերական յարաբերութեանց մէջ խոնարհութեան օրինակ մըն է, հապա որչափ աւելի պիտոր ըլլայ իւր քահանայական վեհ արժանապատուութեան պարտքերը կատարելու առեն:

Մի թէ ամբարտաւանութեան ոգւով տգործուած ամպիոնը կ'ելլէ, իւր աստուածային վարդապետին աւետարանը քարոզելու համար: Մի թէ գովասանք լսելու մտքով: Կէշ քարող տալուն համար անարգուելու վախով: Արդեօք իրե՞ն թէ Աստուծոյ փառքը կը փնտռէ, որուն առաքեալն ու միջնորդն է: Քարոզէն յառաջ պատիւ և գովասանք չսիրելու մտածմունքներով պաշարուած է իւր միտքը, երբ ամենայն եռանդեամբ կը պատրաստուի և գիտաւորութիւնը կ'ուղղէ, ինչպէս որ կը պահանջէ կատարելիք հարկաւոր և հանգիսաւոր գործը: Ո՛հ, հեռի են իրմէ այսպիսի տրամադրութիւններ, որ անպտուղ ընելով իւր ամէն գործքերը, Աստուծոյ աչքերէն կը հրաւիրեն անոնց վրայ: Ո՛չ, ո՛չ. խոնարհութիւնը միայն զինքը կ'ուղղէ, կը կառավարէ և կը լուսաւորէ. ամբարտաւանութիւնը ամենևին տեղիք չտալով: Ինքը խորին կերպով կը խոնարհի, և խոնարհած՝ պարկեշտ գնացքով մը սեղանին առջև եռանդուն աղօթքի կը պարապի, նեղքին խոնարհութեան ճառագայթները՝ գուբսէն ալ արտայայտելով կը սկսի քարոզը:

Արդեօք այս սուրբ պաշտօնը կատարելէն վերջը՝ գովասանք մտրալու կ'ելլէ: Արդեօք իւր քարոզը վար զարնելու յիմար հնարքը կը գործածէ, որպէս զի ուրիշները գովեն զայն: Անտիտութեամբ կ'ուզէ, ինքն իր վրայ կը զարմանայ, և իւր յաղթանակէն ունայն հաճութիւն մը կը զգայ. զԱստուած մոռնալով, որուն խօսքը կ'աւետարանէր, կը յափշտակէ անկից անոր սեպհականութիւնը: «Քա՜ւ լեցի, քաւ լեցի, ո՛չ, ոչ»: մանաւանդ թէ քարոզէն վերջը առջինէն աւելի խոնարհ՝ իւր ոչնչութեան անգունդին մէջ կ'ընկղմի, երկու բան իրեն նպատակ դրած. — զինքը մոռնալ — և աղօթել: —

կը մոռնայ ինքը զինքը, երևնալ ուզող ամբարտաւանու-
թիւնը խղդելով, և կ'աղօթէ՝ որպէս զի իւր քարոզը
փրկութեան առատ պտուղները բաղէ: Աղէ, կարենայինք
ամենքս ալ այսպիսի օրինակի մը հետևիլ, և սակայն մոռա-
ծել ինչ որ այս նկատմամբ կ'ըսէր Պաւլոս Առաքեալն սուրբ
Վիճակեցեալոսը. — Մի թէ սրբասպիղծ չէ՞ անիկայ որ պար-
ծանք, գովեստ և յարգութիւն ստանալու համար կը
քարոզէ: Եւ իրօք սրբասպիղծութիւն չէ՞ արդեօք Աստու-
ծոյ խօսքը մեզի գովեստ և համբաւ ձարելու համար դուր-
ծածելը: —

183. Խոստովանութեան մէջ ալ արդեօք ամբարտա-
ւանութիւնն է որ զինքը կը կառավարէ և կը շարժէ:
Ինչպէս: Ապաշխարութեան սուրբ և խորհրդաւոր ա-
տենին մէջ, յորում այնչափ թշուառ մեղաւորայ յաւի-
տենական վիճակին վրայ վճիռ կը տրուի, որոյ ինքը քա-
հանան գործակատարն է, այն ատրճին տեղը՝ ուր ժա-
մերով կը նստուի յանուն Աստուծոյ մեղաւորաց թողու-
թիւն տալու համար, պիտոր համարձակի՞ մեղանչելու
անիկայ՝ որ այլոց մեղքերը կ'արձակէ: Կարելի բան է որ
այսպիսի պաշտօնի մէջ ալ մնափառութիւնը իր ձարակը
գտնէ: Ո՛հ, մարդ միշտ մարդ ըլլալով, եթէ մոխիր ընե
ամբարտաւանութեան թելադրութեանց, իւր ամէն՝ ին-
չուան սուրբ գործքերն ալ այս սխալով կ'ապականին և կը
ոչնչանան: Բայց խոնարհ քահանան միշտ արթնու-
թեամբ կը հսկէ իր խոնարհութեան վրայ, և ոչ երբեք
կը հանդուրժէ որ մնափառութիւնը իր արդիւնքը յա-
փշտակէ:

Երբեք խոստովանարանին բոլորտիքը չի նայիր ա-
պաշխարողներուն բազմութենէն հաճութիւն մը զգալու
համար, ոչ. ինքը ոչ երբեք կը պարծի իր խոստովան-
որդւոց բազմութեան վրայ, ոչ կը հաճի կամ կը պար-
ծի անոնց մէջ երևնալ անձինք գտնուելնուն համար, և
ոչ ալ ոմանց երամ հեռանալուն համար կը տխրի. որովհե-
տև կը մտածէ որ ըստ Թուղմն պահապութեան՝ կը նուա-
զի նաև պատասխանատուութիւնը, և ոչ ալ տհաճու-
թիւն կը ցուցընէ այն եղբայրակցին դէմ, որուն դիմեր
են իր որդիքը:

Խոստովանարանը գնացած առենը ընկերակից է ի-
րեն խոնարհ և պարկեշտ աստուածպաշտութիւնը. ոչ
երբեք կը մոռնայ Աստուծոյ առջին խոնարհելու, և ջերմե-
ռանդ աղօթքներով անոր ընորհքը խնդրելու: Իրեն սպա-
սող ապաշխարողայ վրայ պարապ և հետաքրքիր նա-
յուածքներ չի ձգեր, տեսնելու համար թէ ինչպիսի ոչ
խարներէ կը բաղկանայ իւր հօտը:

Խոստովանութեանց մէջ երկու լեզու չի գործածեր,
մէկը միւս քաղցր ոմանց, և միւսը խիստ և սաստիկ ու-
րիշներու համար: Անձանց մէջ նախադասութիւն չի
կայ, օրէնքը ամենուն համար հաւասար է: Առանց օրի-
նաւոր պատճառի ոմանց երկար ունկնդրութիւն տալով,
ուրիշներուն ալ շուտով ճամբայ չի տար: Եթէ այնպիսի
գժուարութեանց հանդիպի՝ որ չը կարենայ լուծել, այն-
չափ կը խոնարհի իւր չունեցած լոյսը ուրիշներէն փընտ-
ռելու. գիտէ կասկածիլ, խորհրդակցիլ և միանգամայն
գիտէ անարգել զամբարտաւանութիւնը, որ կ'ուզէ իրեն
կարծել տալ որ այլոցմէ խորհուրդ հարցընելը՝ տգիտու-
թեան խոստովանութիւն մ'ըլլայ:

Վերջապէս իր պաշտօնը կատարելով՝ ամէն բան կը
մոռնայ, և բոլոր խոստովանողքին ի մի անձն գումա-
րելով, սրտանց և ջերմեռանդութեամբ զանոնք Աստուծոյ կը
յանձնէ:

Օրհնեալ ըլլաս դու, ով սուրբ և արժանաւոր քա-
հանայ, օրհնեալ ըլլաս: Խոնարհութիւնդ իրեն վայե-
լուչ պատուիրներէն զուրկ չէ, թող տուր մնափառներուն
որ իրենց բարբանջմունքներով օդը ծեծեն, դու շարու-
նակէ քու գաղտնիքովդ հոգիները փրկելու: Ինչ սքան-
չելիքներ չի գործեր Յիսուս Քրիստոս այսպիսի խոնարհ
քահանաներ իր ձեռքը գործիք ունենալով: Մի թէ քա-
նի մը հատ ձկնորսներով զարհուրեցուց արգեօք:

186. Հապա երբ խորանը կ'ելլէ, պէտք է նորէն
հարցընենք որ խոնարհութիւնն ալ ընկերակից է: Ա-
ստուած մը զոհել, ճշմարիտ քահանայ ըլլալ, կերպարա-
նեալ յանձն Աբրահամու և պատուէրը ընդունիլ զոհելու

ոչ թէ Իսահակ մը, այլ ինքն Յիսուս Քրիստոս։ Վէց խօսք արտաբերելով երկինքէն ձեռքերուս մէջ հրաւիրել Աստուծոյ Որդին։ Ոտքի վրայ հրամայողական ձևի մէջ կայնիլ. երկրպագու Ժողովրդեան բազմութեամբ և հրեշտակաց լեգեոններով շրջապատած, խաչի նշանաւ օրհնել Յիսուս Քրիստոս, լեզուի վրայ դնել, սրտին մէջ ընդունիլ, Ժողովրդեան բաշխել. վերջապէս ընել, ինչ որ ամենասուրբ Կոյսն անգամ իշխանութիւն չունէր ընելու, « և խոնարհ չըլլալ »։ Անհմանալի բան։

Ճշմարտապէս խոնարհ քահանայ մը իրօք ասկից չի հասկընար։ Արդեօք զոր օրինակ, կ'ուզէր իւր երդին գեղեցիկ ներդաշնակութենէն համար գովեստ մուրալ. կ'ուզէր նայուածք մը տալ ինչպիսի ժողովրդեամբ շրջապատուած ըլլալը աւելնելու համար. կ'ուզէր քաղաքավարութիւնը կատարելու առեն չքեղութիւն մը գործածել. կ'ուզէր բազմութեան առջև հանդէս մը կատարած առեն արտաքին վերմականդութիւն մը ցոյց տալ, յորմէ զուրկ է իր սիրտը։ Ոչ, իրաւցընէ ոչ. ոչ ինքը և ոչ ալ ուրիշ ո՛և իցէ քահանայ մը կ'ուզէ քահանայական վսեմութիւնը մեափառութեան այս ողորմելի ձարտարութենէն զոհել։

Բայց բաւական չէ սուրբ պատարագի առեն խոնարհ ըլլալ, մեծ բան մը չէ սեղանին առջև խոնարհ ըլլալ, ըստ որում հոն խոնարհ չըլլալու համար պէտք է գոնէ մ'ըլլալ։ Ուրիշ ի՞նչ կը պահանջուի ուրեմն։ Նուազ անարժանութեամբ մէն օր Յիսուսի Քրիստոսի երկրպագելի մարմինը և արիւնը սրբագործելու համար պէտք է իրօք խոնարհ ըլլալ ճշմարտապէս և ունակաբար խոնարհ ներքին և չարունակ մշակուած բազձանքով. « Ուսարհաբար կենդանի, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ »[1]։ Ունայ կարող ամբարտաւան քահանայ մը ի՞նչպէս կրնայ ամէն օր սեղանին առջև երթալ խաչին զոհը նորոգելու, և նմանապէս ամէն օր իւր դատապարտութիւնը չը գանել իւր զոհած օգուտապատ պատարագին խորհրդաւոր խոնարհութեան մէջ։

1 Մատթ. ԺԱ. 29։

Խոնարհ ըլլանք, սիրեցեալ եղբայրակիցք, խորին խոնարհ ըլլանք, չենք կրնար այնչափ խոնարհ ըլլալ, որչափ որ բաւական է։

187. Զանց կ'առնենք միւս գործոց քննութիւնը, որոց հիմը պէտք է որ խոնարհութիւնը ըլլայ. ամենքին տեղը այս մէկը բաւական ըլլայ՝ որ ամենևին գործք մը չի կայ որ խոնարհութեամբ սուրբ ըլլալու պարտաւոր չըլլայ։ Դպրոցներու մէջ կը վիճաբանի գիտնալու համար, թէ մեր գործոց նկատմամբ մինչև ո՛ր կը հասնի գիտաւորութեան ուղղութեան զօրութիւնական ազդեցութիւնը։ Բայց երբեք տարակուսի տակ չենկաւ թէ արդեօք անոնցմէ մէկը կրնա՞նք մեր արդեանց սեպհականել. նոյն իսկ այսպիսի վէճ մը արդէն գայթակղական է։ « Զամենայն ինչ գործէ Տէր վասն իւր »[1]. ամենայն ինչ Աստուծոյ կը վերաբերի, ամէն բան անկից կու գայ, և ամէն բան ալ պէտք է անոր դառնայ. ուստի ամբարտաւանութեամբ և մտայ հպատակութեամբ անկից չէ թէ գործք մը, այլ մտածմունք մըն ալ մեկդի առնելը՝ անոր փառքը յափշտակել մըն է, որ միայն անոր սեպհական է, և զոր երբեք մեկու մը չի տուաւ և ոչ ալ պիտոր տայ. ինչպէս որ նոյն ինքն կ'ըսէ։ « Զփառս իմ այլում ոչ տայց »[2]։

188. Աստբերբուն խօսքերը բոլորովին յատուկ չըննորհք մը և ազդեցութիւն մ'ունենալով, կը կարծենք ո՛ր աւելի ազդկ լինք կրնար վերջացընել այս ամենակարևոր գլուխը, եթէ ոչ Պաւլոսեան սրբոյն Վինկենտիոսի քանի մը առածները և խօսքերը յիշելով երեն ամենասիրելի առաքինութեան՝ խոնարհութեան նկատմամբ։ Այս խօսքերով և առածներով մեծ զօրութիւն կը ստանան մեր մինչև ցարդ ըսածները, և յայտնապէս կը հաստատեն որ մենք կանոնաց երաւացի չափաւորութեան տակ մանը չենք անցած, զորոնք համարձակեցանք ընթերցողներուս առաջարկելու։ Ահաւասիկ այն առածներէն մէկ քանինը։

— Խոնարհութիւնը Յիսուսի Քրիստոսի, իւր ամե-

1 Առակ. ԺԶ. 4։ 2 Եսայի. ԽԲ. 8։

նասուրբ Մօրը, և մեծ սուրբերուն առաքինութիւնն է, որ յինքն կը պարունակէ ամէն առաքինութիւնները, և երբ անկեղծ է՝ զամէնքն ալ սրտին մէջ կ'ընդունի: Վևին յաղթելու համար՝ ամենէն աւելի զօրաւոր զէնքը խոնարհութիւնն է:

— Ամէն մարդ պէտք է ըսէ ինքն իրեն. եթէ ամէն առաքինութիւնները ունենայի առանց խոնարհութեան, ոչինչ պիտոր ունենայի. ինքը զինքս առաքինի պիտոր կարծէի, բայց երջանիկ ամբարտաւան փարիսեցի մը պիտոր ըլլայի:

— Ամառաձային գործոց մի միայն անունը յարմար կու գան, որոնք որ խորին խոնարհ և անկեղծ անձնանախատ են:

— Ընկերաց հետ միաբանութիւնը և եղբայրսիրութիւնը պահելու միջոցներուն մէջ ամենէն աւելի ազդուն և աղէկը՝ սուրբ խոնարհութիւնն է, ամենէն աւելի սատրին, չար և վատ համարուելն է:

— Այդպէս մը՝ որ խոնարհութենէն կը հեռանայ, Ամառաձմէ կը մերժուի և կը դատապարտուի, թէև շատ մը ուրիշ բարեգործութիւններ ունենայ: Ամէն ինչ՝ որ իր վրայ առաքինութիւն կը կարծուի, մոլորութիւն է:

— Առանց խոնարհութեան՝ գիտութիւնը եկեղեցւոյ միշտ վնասակար եղաւ, և ըստ որում ամբարտաւանութիւնը երկնքէն դժոխքը թափեց ապստամբ հրեշտակները, այսպէս ալ շատ անգամ իմաստուն մարդկանց կորստեան պատճառ կ'ըլլայ. ամենագէտ սատանան ալ նուրբ փիլիսոփաներէն և խորին աստուածաբաններէն շատ աւելի բան գիտէ:

— Հրապարակական ճառերու մէջ կարելու մեկնի ձգելու է այն ամէն ինչ, որ ուրիշ բանի չի ծառայէ՝ եթէ ոչ աւելի համբաւ ստանալու և այլոց գովեստը դրաւելու: Մեկնի ձգուելու են զարդարուն խօսքերը և իմաստները:

— Խոնարհութիւնը պէտք է հեռացնէ մեզմէ բոլոր մնոտի հաճութիւնները՝ զրոնք կրնանք ունենալ, և մանաւանդ բարձր պաշտօնները:

— Ամառաձ սովորաբար միջակ և հասարակ խելքերը կ'ընտրէ ըստ հարկաւորութեան ազգայ փրկութիւնը հոգալու համար, ըստ որում նուազ յանձնապատան ըլլալով, աւելի խոնարհութեամբ Ամառաձոյ կը դիմեն, և միայն անոր կը նուիրեն բոլոր իրենց գործոց փառքը և արդիւնքը:

— Ամառաձ մեզմէ կը պահանջէ, որ ժողովրդին սեանուելու համար ամենևին բարիք մը չընենք, հապա միայն անոր փառքը ըլլայ մի միայն պատճառ մեր գործոց, և մարդկային նկատման համար ամենևին բան մը չընենք:

— Ո՛ և է մեղաւոր մը՝ որ՝ է խոր կը խոնարհի՝ սուրբ կ'ըլլայ. իսկ ընդհակառակն հրեշտակային կեանք վարող վերջին ստիճանի ամենաչքնաղ առաքինութիւններով զարդարուած մարդ մը՝ առանց խոնարհութեան դատապարտուածի նման կ'ըլլայ, որովհետև իւր ամէն առաքինութիւնները առանց հիման են, և չեն կրնար դիմանալ:

— Եթէ ամբարտաւանութիւնը մեզի թեւադրէ բարձրանալու, մենք պէտք է խոնարհինք. եթէ անձնահաճութեան խորհուրդներով մտքերնիս լեցընէ, շուտով պէտք է որ տկարութիւնիս և թշուառութիւնիս մոռնանք. եթէ զմեզ գրգռէ որ աչքառնի ծանօթանանք, պէտք է հրաժարինք այն ամէն բանէ՝ որ կրնայ մեզի համբաւ շարել, և անարգ ու ստորին գործքերը մեծ և պատուաւոր գործոց նախագասենք:

— Անոտի հաճոյքը բարի գործոց մէջ սպրդելով, կը թունաւորէ զանոնք. ժամա մըն է որ կ'ապահանէ այնասուրբ գործքերն ալ, և շուտով զԱմառաձ մոռցընել կու տայ: Հոգևոր կենաց և կատարելութեան մէջ յառաջադիմութեան ամենէն վնասակարը՝ այս մոլորութիւնն է:

— Շատ աւելի աղէկ է ձեռքերնիս և ոտքերնիս կապուած կրակին մէջ ձգուիլ, քան թէ գործքերնիս մարդահաճութեան համար կատարել:

Ամհաւասիկ եկեղեցւոյ մէջ երևցած Ամառաձոյ ամե-

նամեծ ծառանեբլեն մեկուն վարդապետութիւնը։ Մտածենք՝ մանաւանդ թէ ի գործ դնենք անոր սուրբ դասատուութիւնները. և այսպիսի չնորհք մը ստանալու համար, ըսենք ամէն սրտերուս խորին հառաչանքներով. « Ցիսուս, հեղ և խոնարհ սրտիւ, ողորմեայ մեզ »։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ողջախոհութիւն — Այս առաքինութեան հարկաւորութիւնը — Հակառակ ախտեն սոսկումն — Նոյն ախտեն մաքուր մնալու կերպը — Դատարկութիւն, ճեղտասիրութիւն, եւ այլն։

189. Ողջախոհութեան առաքինութեան ամենամեծ գովեստը սուրբ Գրոց մէջ՝ հետևեալ բացագանչութեան մէջ պարունակուած է. « Լաւ է անզաւակութիւն հանդերձ քաջութեամբ » [1]։ Ո՛չ, երկրիս վրայ այնպիսի անգին բան մը չի կայ՝ որ կարող ըլլայ ողջախոհ հոգւոյ մը գերազանցութեան հետ համեմատիլ. « Ո՛չ է կշիռ ամենայն արժանի ժուժկալ անձին » [2]։ Շատ քիչ անգամ կը հանդիպի որ սուրբ Գիրքը առաքինութիւն մը գովելու առեն, այսպիսի ազդու խօսքեր գործածէ. անոր համար կը կարծենք որ անսահմանաբար սիրելի ըլլայ Աստուծոյ, տեսնելով որ ինքը բոլոր զօրութեամբ կը բարձրացընէ զայն։

Եւ իրօք մարդուն ամենագեղեցիկ և գերագոյն փառքը ողջախոհութիւնն է։ — Բարեպաշտ հեղինակ մը կ'ըսէր, Թէ ով որ ամենայն հաւատարմութեամբ ողջախոհութիւնը կը պահպանէ, մարդէ հրեշտակ կը դառնայ. իսկ ով որ կը կորսընցնէ՝ հրեշտակէ սատանայ կ'ըլլայ. « Որ պահեաց ողջախոհութիւնն՝ հրեշտակ է, իսկ որ կորոյս՝ սատանայ »։ —

Քահանային նկատմամբ համարձակաբար կրնանք ըսել, որ իւր պահկին հաղուագիւտ գոհարը ողջախոհութիւնն է։ Եթէ արդէն իւր երկնային պաշտօնին զար-

1 Իմաստ. Գ. 1։ 2 Սիրաք. ԻԶ. 19։

մանալի մեծութեամբ այսչափ բարձրացած ըլլալով, անդադար կը ջանայ նաև ողջախոհութեամբ իւր մարմինը և զգայարանքները հոգևորելու, եթէ այս առաքինութեամբ մինչև Աստուած վերացած և հոն իւր ընակութիւնը հաստատած, և անկից երբեք չիջնելով, եթէ ոչ հրեշտակներու նման և հրեշտակային մաքրութեամբ՝ մարդկանց մէջ իւր աստուածային պաշտօնը ի գործ դնելու, ով կրնայ անոր փառաց հարիւրին մէկ մասն ալ նկարագրել. իրաւցընէ հրեշտակ մըն է. « Որ պահեաց ողջախոհութիւնն, հրեշտակ է »։

Բայց եթէ ինքը մտնալով իւր մեծութիւնը, և իր ուսնեցած նեղքին և նուիրական յարաբերութիւնները՝ Ցիսուսի Քրիստոսի մարմնոյ և արեան հետ, որոնցմով ամէն օր կը կերակրի սեղանին վրայ. եթէ ինքը չի յիշեր ողջախոհութեան խիստ օրինքը, որուն քրիստոնէական վիճակին զատ՝ քահանայական կարգով ալ պարտաւորուած է. եթէ ինքը վերջապէս Աստուծոյ ամենասուրբ սրտէն և երկնային փառքէն հրաժարելով, իւր Թագաւորական քահանայութեան ամենաբարձր պատիւը արդիմերու և աղտեղութեանց մէջ կը չաղախէ, ո՜հ, ինչպիսի հրէշ մը կը դառնայ ան առեն։ Ա՛լ հրեշտակ չէ, և ոչ ալ մարդ կրնայ ըսուիլ։ Ի՞նչ է՝ ըլլայ ուրեմն։ Սատանայ, այո՛, սատանայ. « Որ կորոյս ողջախոհութիւնն, սատանայ է »։

Եկեղեցին ողջախոհ քահանային առելի գայթակղութենէն ազատ չ'եղաւ, յորում Աստուած երբեմն երբեմն թոյլ տուաւ յանկարգութեանց, որպէս զի առելի հաստատուի անոր աստուածային ըլլալը. բայցայց կերպով ցոյց տալով որ դեռ ևս կենդանի է այն բանէն վերջն ալ, որով պէտք էր ընդունիլ, և կը շարունակէ իւր յաղթական ընթացքը նոյն անոնց հարուածոց դէմ, որոնք պէտք էին իր պահկը և փառքը ըլլալ։ Բոլոր դարերուն մէջ այսպիսի գայթակղութիւններ շատ յանցաւ են, և վատ Յուդայի մը դէմ հազարաւոր սուրբեր կրնանք հանել, որոնք ամենամեծ զգուշութեամբ Աստուծոյ արժանի սրտերու մէջ ողջախոհութեան անգին

գանձը կը պահէն: Այսու ամենայնիւ համոզուած ըլլալով որ ընթերցողներս ալ այսպիսեաց գասէն են, այս գլխուն մէջ ուրիշ բան պիտոր չըսենք՝ եթէ ոչ ողջախոհութեան գործադրութեան պարտաւորութիւններուս զօրաւոր փաստերը պարզելէ և յայտնելէ վերջը, զանիկայ մաքուր և անարատ պահելու կերպը և պատճառները ցուցընել:

190. Մենք պէտք է որ ողջախոհ ըլլանք: Ինչո՞ւ համար: Վասն զի այնպէս ըլլալու խոստացանք մեր կենաց ամենահանգիստաւոր վայրկենին մէջ: Ակիկ ի՞նչ կը հետեւի: Մի թէ յաւաջուց ալ ողջախոհութիւնը մեզի հրամայուած չէր: Սուրբ Պօղոս առաքեալը մեզի՝ ինչպէս նաև բոլոր քրիստոնէից՝ պատուիրած չէր որ մարմնիս պէտք էր Հոգւոյն սրբոյ տաճար ըլլալին, և թէ յաւիտենական ժանյանքներ պահուած էին անոնց, որ պղծութեամբ յանդգնին այսպիսի տաճար մը ապականել. « Եթէ ոք զտաճար Աստուծոյ ապականէ, ապականեսցէ զնա Աստուած » [1]:

Այո՛, ստոյգ է. բայց պարզ քրիստոնէի մը բաւական եղածը, քահանային համար չի բաւեր. ասոր ուրիշ նոր և մանաւանդ օրէնք մը առաջարկուած է, օրէնք մը՝ զոր ինքը յօժարակամ ազատութեամբ յանձն առաւ ձեռնադրութեան օրը:

Եպիսկոպոսը իրեն ծանոյց որ ինքը դեռ ևս ազատ ըլլալով, եթէ քայլ մըն ալ յառաջ երթալու ըլլար, պիտոր զրկուէր այս ազատութենէն. այս քայլը ընելով ի՞նչ թողուց իր եաւը, եթէ ոչ մարմնոյն գործքերը և ամէն ցանկութիւնները: Եւ ի՞նչ բանի դէմ վազեց, եթէ ոչ ողջախոհութեան, զոր այն վայրկենին յանձն առաւ եպիսկոպոսին ոտքերուն առջին:

191. Մենք պէտք է որ ողջախոհ ըլլանք: Ինչո՞ւ համար: Վասն զի քահանայական պաշտօնիս այն աստիճան հոգւոր և սուրբ է, որ ամենևին չի կրնար յարմարիլ ո՛և է նոյն աղտեղի ներգործութեան մը, և ոչ ալ մարմնոյ ո՛և է նոյն գործքի մը հետ, թէև օրինաւոր և պատշաճ ալ ըլլայ, ինչպէս է ամուսնութիւնը: Եկեղեցին պատճէն կարգադրեց, և այնչափ խմաստութեամբ՝ որ երբեք չենք կրնար ըստ բաւականի գովել: Մանաւանդ դեռ աւելին կայ. նոյն ինքն հերետիկոսութիւնն ալ, գոնչ առանց մխտ դնելու անգամ, բայց օրինաւորութիւնը հակընդդէմ, հերետիկոսութիւնը ևս, կ'ըսեմ, մինչև մեկ կէտ մը եկեղեցւոյ հետ համամիտ գտնուեցաւ: Բողոքական պաշտօնեայն կուսակրօնութեան դէմ չը կուռեցաւ, մինչև որ չ'ուրացաւ քահանայական պաշտօնն օգուտաւիտառ ու ամենաչքեղ մասը. իր գործքովը բացայայտ կերպով ըսելով, որ մարմնոյ ամէն գործքերն պէտք էր հրաժարիլ, եթէ մեզի պէս հաւատալու ըլլար որ ամենասուրբ Հաղորդութիւնը իրապէս է երկրպագելի մարմինն Յիսուսի Քրիստոսի:

Եւ իրօք, ի՞նչպէս կրնայ քահանայ մը հաւատալ այս անճառելի խորհրդոյն, և իւր սիրտը բաժնել կէս մը Յիսուսի Քրիստոսի՝ որուն պաշտօնեան է, և կէս մըն ալ իր կնկանը, որ օրինաւոր իրաւունքներ ունի իր վրայ:

Բայց մանաւանդ ի՞նչպէս կրնանք հաւատալ, որ ամէն օր քահանայ մը կարող ըլլայ ընդունիլ իւր աստուածային Փրկչին ամենասուրբ մարդեղութիւնը անպարկեշտ գործքերով պղծուած մարմնոյ մը մէջ, որ ամենուն ալ արդելուած է: Ո՛րքան աւելի մարմնաւոր ըլլան քահանայի մը ախտերը, այնչափ աւելի աւելի և զզուելի կ'ըլլայ աստոյ հակառակութիւնը իւր գերագոյն պաշտօնին հետ: Դիտէ, զոր օրինակ, գինեսէր քահանան և անպարկեշտ քահանան: Մի թէ աստոյ յանցանքները վերջին աստիճանի կործանման դարձուածքը չե՞ն, որուն դէմ այնչափ բարկութեամբ կը բորբոքէր մարգարէն:

192. Մենք պէտք է որ ողջախոհ ըլլանք: Ինչո՞ւ համար: Վասն զի Աստուած կը մերժէ զանպարկեշտ քահանան: Ի՞նչ բան ունի ինքը բոլջախոհ քահանայի մը սրտին մէջ: Մանաւանդ պաշտօնեայ, որ զմարմինը իրեն մատան և բաժին ընտրեց, և Աստուած ալ զինքը մարմնոյ

1 Ա. Կորնթ. Գ. 17:

կը մնանէ. — Մերժեց օրհնութիւնը, թող հեռանայ անկից. « Ոչ կամեցաւ զօրհնութիւն, հեռի եղիցի ի նմանէ »: Անէծքը ընտրեց, գլխուն վրայ պիտոր Թափի սոսկալի կերպով. « Սիրեաց զանէծս և եկաց նմա » [1]: Ինքը անով իբրև զգեստով մը ծածկուած է, և անոր մէջ պիտոր մնանէ, և ջուրի և իւղի պէս մինչև ոսկորներուն ծուծը պիտոր Թափանցէ: — Բայց Աստուած անկից հեռանալէն վերջը պիտոր կործանէ, ինչպէս որ կործանեց Սոդոմայ հինգ քաղաքները. այս տարբերու-Թեամբ՝ որ ծծումբին և կրաձիւրին տեղը՝ կիրքերուն կրակը պիտոր վառէ զինքը, որ յետոյ գժոխոց յաւիտենական կրակին պիտոր փոխուի, եթէ իր մեղքին համաձայն չ'ապաշխարէ: Եւ ինչպէս որ Սոդոմայ կործանման՝ սոսկալի անպատշաճութիւնն մը յայտնուեցաւ, այսպէս ալ Աստուած անպատուղ կ'ընէ սրբապիղծ քահանային պաշտօնը:

193. Մենք պէտք է որ ողջախոհ ըլլանք: Ինչո՞ւ համար: Վասն զի քահանան ողջախոհ չ'ըլլալով զինքը Աստուծոյ հետ միացընող կապերը նոյն կէտին կը խզուին, ուսկից վերջը ինքը ոչ կառավարելու համար լոյս ունենալով, ոչ մխիթարութեան համար բարեպաշտութիւն, ոչ վերսին կանգնելու և քաջալերուելու համար սիրտ, ոչ փրկելու համար ալ եռանդ, ինքը զինքը և եղբայրները կօրսընչելով, Թշուառաբար անդունդ պիտոր գլորի. « Խորհք ի խորոց կարգային » [2]: Նախ ողբալի կուրութեան մէջ պիտոր կ'ինայ, անկից վհատութեան, անկից ալ անզգայութեան մէջ. այնուհետև սրտի կարծրութեան մէջ, և անկից ալ, եթէ Աստուած այն ողորմութեան ցանցառ հրաշքներէն մէկը չի գործէ, ուրիշ անգունդներու մէջ՝ զորոնք միայն Աստուած գիտէ, որոնց մէջ դրեթէ միշտ սոսկալի մահ մը վրայ կը հասնի:

194. Մենք պէտք է որ ողջախոհ ըլլանք: Ինչո՞ւ համար: Վասն զի անպարկեշտ քահանային անկարգութիւնները եթէ նախ գաղտնի են, շատ չեն ուշանար կը

1 Սղմ. ՃՀ. 18:

2 Սղմ. ԽԱ. 8:

յայտնուին, և ան ատենն է որ եկեղեցւոյ մէջ կը նկատուին այն սոսկալի գայթակղութիւնները, որ յանցաւորին հետ միատեղ Ջերմեռանդ անձանց ալ սաստիկ տրամութեամբ լաց ու ողբ կը պատճառեն. գայթակղութիւն մը՝ որ ամբարշտաց մեծ ուրախութեան առիթ կուտայ, զիշերատու յանցաւորը անարգանօք կը ծածկէ, և անոր վրայ ըսել կուտայ ինչ որ աստուածային Փրկիչը Յուդային համար կ'ըսէր. « Վա՛յ մարդոյն այնմիկ... լաւ էր նմա եթէ չէր ծնեալ մարդն այն » [1]: — Եղկելենէր, կ'ըսէր սուրբը և յարգելի քահանայ մը այսպիսի գայթակղութեան մը առթիւ. եղկելենէր, զմեզ պիտոր սահեցնէն Ժողովրդեան առջև քահանայական պաշտօնները ուսս վրայ առնելու:

195. Մենք պէտք է որ ողջախոհ ըլլանք: Ինչո՞ւ համար: Վասն զի քահանան ողջախոհութեան առաքինութիւնը կորսընցնելով, միայն անոր դէմքն մեղանչէր. այլ առանց խղճմտանաց միս ամենքն ալ կը ղոհէ, և այն ամէն ախտերու դերն կ'ըլլայ, որոնց որ հակառակ ունի: Գլխաւոր սանձը խզելով, ո՞վ կրնայ այնուհետև զինքը արգելուլ: Ո՞ր դառնել անպարկեշտ մը, որ միայն անպարկեշտ ըլլայ: Ողջախոհութիւնը կորսընցնելով, ինչ կ'ըլլան միս առաքինութիւնները. եղբայրսիրութիւնը, հեզութիւնը, ժուժկալութիւնը, խոնարհութիւնը, նախանձը, մահացուցումը և բոլոր միացածները: Ինչ ողբալի վիճակ, ով Աստուած իմ, ինչ թշուառութիւն: Ինչպէս օր ըստ օրէ միշտ աւելի ահաւոր և սարսափելի կ'ըլլայ իւր սրբապղծութեանց շղթան, որոց օղակները կ'ըլլայ իւր սրբապղծութեանց շղթան, որոց օղակները շատ շուտով անթիւ կ'ըլլան: Գրեթէ սուրբը գործք մը չի կրնար կատարել որ յանցանք մը չ'ըլլայ, յանցանքներ՝ որոնց մէջ կը շարունակէ թշուառաբար մինչև որ չափը լեցուի և վերջ տրուի, կամ շատ հազուադիւտ դարձով մը, կամ կանոնական դատակնքով, և կամ՝ որ աւելի շարհուրելին է՝ մահուամբ:

196. Մենք պէտք է որ ողջախոհ ըլլանք: Ինչո՞ւ համար: Վասն զի ճշմարտապէս ողջախոհ քահանան գրեթէ

1 Մատթ. ԻՁ. 24:

անվրէպ սուրբ քահանայ մը կ'ըլլայ: Որչափ միւթարու-
թիւն կը պատճառէ շատ մը քահանայից երդմամբ խոս-
տացուած ողջախոհութեան հաւատարմութիւնը: Ո՛վ
Տէր, դուն օրհնէ այս սուրբ քահանայից լեգէոնը, որոնք
ամէն օր մաքուր սրտերնուն մէջ կ'ընդունին աստուա-
ծային Գառնին երկրպագելի մարմինը և անգին արիւնը:
Անձրևէ ասոնց վրայ քու շնորհքներդ և օրհնութիւն-
ներդ, որպէս զի շարունակեն իրենց կենաց սրբութեամբ
բարի օրինակ ըլլալու Ժողովրդեան, և այնպէս ալ վա-
րուին՝ որ օր մը արժանի ըլլան քեզի դարձունելու քա-
հանայական զգեստը՝ այնպէս մաքուր և անարատ, ինչ-
պէս որ դու տուիր իրենց ի գրաւ դաշնակցութեան,
քահանայ ձեռնադրութենուն երջանիկ օրը. « Լաւ է
անզաւակութիւն հանդերձ քաջութեամբ » [1]:

Գանք հիմայ քանի մը փրկարար գործնական ծա-
նուցումներ տալու, որպէս զի այս նիւթիս վրայօք ղգու-
շացընենք սիրելի եղբայրակիցներս այն վտանգներուն
դէմ, որոնցմով պաշարուած են ողջախոհութեան նկատ-
մամբ:

197. Յատուկ յանձնարարութիւն մըն է ղոր պար-
տաւորուած կը սեպենք զմեզ առաջարկելիք կանոննե-
րուս դլուխը գնելու, այսինքն է ողջախոհութեան ա-
ռաքինութիւնը չափազանց հարկաւոր սեպել Ժողովըր-
դեան բարի օրինակ տալու, աստուածային պաշտօննե-
րուս յաջող ելից, և անձնական սրբութեան համար.
այնպէս որ չէ թէ միայն բան մը չ'ընենք, որով վտանգ
այս առաքինութիւնը, այլ և ոչ կասկածանաց նշոյլ մը
պատճառէ մեր վարուց սրբութեան դէմ: Եթէ յայտ
մասին չափէն աւելի խղճահար չ'ըլլանք, եթէ սուրբ
քահանայից ի գործ դրած խոհեմ զգուշութիւնները
չնչին անոթիք սեպենք, շատ բաներ կրնանք ընել առանց
խիղճերնիս արթընցնելու. որովհետև իրօք մեղք չեն,
սակայն կրնան միւսասկար անհոգեմութիւններ ըլլալ,
որոնցմով դիւրութեամբ իրական մեղաց դիմենք, որոնք
համբառնիս ալ, պատիւնիս ալ կ'արատաւորեն: Ասոնք

1 Խրատ. Գ. 1:

աղէկ մը մտածենք. մեզի համար լմնցած է, եթէ անգամ
մը միայն աւելի տանիք չարերուն՝ գործքերնուս վրայ դէշ
կասկածներ ունենալու:

Յոխակեաց աշխարհական մը, եթէ անկեղծօրէն
վարքը փոխելու ըլլայ, կրնայ կորնցուցած համբաւը
կրկին ձեռք բերել, իսկ քահանան ոչ երբեք: Աստուած
կը ներէ, բայց աշխարհք ոչ ամենևին: Շատ շատ ապաշ-
խարող մը կը սեպէ. բայց ապաշխարող կարծուած քա-
հանան իւր փառաց պսակը կորսընցուցած է: Հրաշք ալ
գործելու ըլլայ, իւր յանցանքներուն լիշատակը պիտոր
նուաղէ և նախմացընէ անոնց պայծառութիւնը:

Պաւլայեան սուրբը վիճկենտիոս, յայտ մասին
աքանչելի զգուշաւորութիւն մը ունէր. ինքը կրցածին
չափ կը պատուիրէր այս մեր քիչ մը յառաջ ըսած յան-
ձնարարութիւնը իւր հաւատակութեան բոլոր քահա-
նայից: Անդաւսիկ ինչ որ օր մը ըսաւ անոնց. — Զգուշ
բաւական չէ որ ողջախոհութեան առաքինութեան մէջ
գերազանց ըլլաք. այլ ամէն կերպիւ պէտք է հոգ տանիք
այնպէս կենցաղավարելու՝ որ աշխարհքիս մէջ մեկը կա-
րող չըլլայ ձեր վրայ « հակառակ ախտին ամենաթեթև
կասկած մըն ալ » ունենալու. վասն զի այսպիսի կասկած
մը, թէկև անհիմն ըլլայ, շատ աւելի վնասակար պիտոր
ըլլայ ձեր քահանայութեանը, քան թէ ուրիշ ո՛և իցէ
յանցանք մը՝ որով կրնաք չարախօսուիլ: — Որչափ, ո՜ն,
որչափ բարի քահանայք ալ զղջացին այս կարևոր յան-
ձնարարութիւնը բանի տեղ չդնելնուն համար:

198. Քահանայութենէն առաջ այս առաքինութեան
դէմ պակասաւոր դանուած ենք: Եթէ գժբաղդաբար
« այո » պատասխանելու սոխպուած ենք, ո՜ն, հակենք,
միշտ և ամենայն զգուշութեամբ հակենք վրանիս: Որ-
չափ որ հաստատուն և անկեղծ ըլլայ դարձերնիս, այս
հին թշուառութեամբ տեսակ մը տկարութիւն, տեսակ
մը հակում ստացեր ենք առ չարն, որ շատ շուտով այն
առաջին թշուառութեանց կրնայ տանիլ զմեզ, եթէ մենք
չդնած ժուժկալութիւններս խիստ արթնութեան և
ջերմեռանդ ու յարատև աղօթքի պաշտպանութեան տակ

չի դնենք. « Հակեցեք և աղօթս արարէք, զի մի անկանիցիք ի փորձութիւն » [1]: Ամենևին մոքերնիս չի հանենք որ սատանան կարգէ դուրս ձիգ կը թափէ զքահանաները իրենց փառաց բարձր աթոռներէն՝ մեզայ անդունդը, մանաւանդ եթէ կարենայ, անմաքրութեան տղմին մէջ գլորելու համար:

Յայսմ մասին չիչենք նոյն աստուածային Փրկչին խօսքերը, բացայայտ և որոշ խօսքերը, որոնք մեծ զգրուեթիւն կու տան մեր ըրած յանձնարարութեանը. « Ահա յորժամ այսն ասիցէ ձեզ ի մարդոյ՝ ընդ ո՞ր անդը-դին տեղիս, ինդրեք հանդիսա՝ և ոչ գտանէք. յայնժամ ասէ. գարձայց ի տուն իմ, ուստի եկին. և եկեալ գտանէ պարապուրդ մաքրեալ և յարդարեալ: Յայնժամ երթայ և առնու ընդ իւր եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն, և մտեալ բնակէ անդ. և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն » [2]:

Շատ անգամ կը պատահի որ նախկին մեղքերէն վերջը աւելի ևս համարձակութիւն մը կ'առնուենք. նորէն չ'ևյնալու համար միշտը առէպ առէպ մտածելն է, որ պէս զի խոնարհինք Աստուծոյ առջև, և աղաչենք որ նորէն ևյնալէն ազատ զմեզ:

— Սրբոյն Պետրոսի անկմանը վրայ մտածելով, կ'ըսէ Հայրն Լա Փըլոմպիէր իւր « Հոգևոր առանձնութեան մէջ », զարմանալով և դողալով Ճանչցայ մեր տկարութեան մեծութիւնը: Կը դողամ, ամեն ախտերու աղբիւրը և սերմը ևյս կը կրեմ. ատոնց մէջ ամենևին մեկը չի կայ, որ ծնանելու և սնանելու կարողութենէն զուրկ ըլլայ. և իմ ու ամեն չարեաց անդունդին մէջ տեղը՝ միայն Աստուծոյ շնորհքը կայ, որ կարող ըլլայ զիս փրկելու: Ինչպիսի սարսուռ վհատակ մըն է: Ա՛յսպիսի մտածմունք մը ինչպիսի ամրութիւ պէտք էէ որ ծածկէ ամենասուրբ հոգիները ևս: Ահաւասիկ ինչու համար սուրբ Պօղոս առաքեալը կ'ըսէր. « Անհնս և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք » [3]: —

1 Մատթ. ԻԶ. 41:
2 Մատթ. ԺԲ. 43, 44, 45:
3 Փիլիպ. Բ. 12:

Բայց ուրիշ անգամ ողջախոհութեան սուրբ առաքինութեան դէմ մեղանչած ըլլալնիերուս ընդհանուր տեսութիւնը բաւական է. պէտք է նաև մտածել թէ որո՞նք էին այն չարագուշակ պարագաները, որ զմեզ այն թշուառութեանց մէջ ձգեցին. այն առիթները, որ մեզի համար վտանգաւոր եղան. այն մտնաւոր հակմանց բնաւորութիւնը, որ այս կամ այն մեղքը գործել տուին. վասն զի այսպէսով կրնանք ճանչնալ թէ հոգիներուս տկար կողմը, և թէ ինչպիսի զգուշութիւններ ի գործ դնելու է կրկին անգամ չ'ևյնալու համար, որ չի պարտաւորէր մանրամասն քննութիւն ընելու այնպիսի բաներու՝ որոց նորոգուած յիշատակը կրնայ զմեզ կրկին նոր վտանգներու մէջ ձգել:

199. « Ներկայիս հակառակ ախտէն սաստիկ նոսկում մը, և մաքուր ու պարկեշտ կենալու եռանդուն փափագ մը ունի՛նք արդեօք »:

Եթէ սուտգիւ այսպիսի երջանիկ տրամադրութեան մէջ ենք, օրհնենք զԱստուած և հոգ տանինք ամեն օր կազդուրելու զայն, տէպ խորհրդածելով քահանայի մը զարհուրելի թշուառութիւնը, որուն մէջ կ'ևյնայ աղտեղի մեղքերով, այսպիսի մեղքերու սոսկալի ծանրութիւնը, Աստուծոյ ահաւոր ցասումը, այն սուրբ ուրախութիւնը յորմէ կը զրկուի, իւր պաշտօնին անպատշաճութիւնը, այն առաջին անգամները դողալով յիշոյ ալ աներկիւղ գործած սրբապղծութիւնները, այն տէպ յանկարծական մահերը, որոց վտանգին մէջ կը գտնէ ինքը զինքը, և վերջապէս գժոխքը՝ զոր գարշելի մեղքը երեն կը պատրաստէ:

Կազդուրենք այս բարի տրամադրութիւնը՝ մտածելովնաև ողջախոհութեան անգին յարգը, պարկեշտ հոգւոյ մը երջանկութիւնը, այն առատ մխիթարութիւնները, զորոնք Աստուած ի՛նձրևէ իրեն՝ պաշտօնին և իւր խնամոյ յանձնուած հաւատացեալոց. իրեն կենակից եղբարց տուած բարի օրինակին և բոլոր քահանայական առաքինութեանց վրայ, որոնք ողջախոհութեան պատուաւոր չքեղութիւն մը կու տան. այն անգին մա-

հուան վրայ, զոր իրեն կը պատրաստէ և կ՚արժանացընէ ողջախոհութիւնը, և վերջապէս յաւիտենական երանութեան վրայ, որուն կը տանի իրեն հաւատարիմ գտնուած զսուբբ քահանան, յաւիտենական երանութեան երկինքը, ուր արժանի պիտոր ըլլայ և յաւիտեան աստուածային Գառին հետէն երթալու, Յիսուսի Քրիստոսի կուսանաց անարատ խմբին հետ. « Սոքա գընան երթան Գառինն, ուր և երթիցէ » [1]:

200. « Միշտ հաւատարմաբար կը պահէնք քահանայութեան սկիզբը պարտաւորուած բարեպաշտական սովորութիւններս »:

Ողջախոհութեան ապահով պահապանը բարեպաշտական սովորութեանց հաւատարիմ պահպանութիւնն է: Ով որ կրնայ Թող ցուցընէ քահանայ մը, որ այս սովորութեանց հաւատարիմ գտնուելով անհամեմատ եղած ըլլայ: Անոնցմէ ամէն մէկը կապ մըն է, զինքը Աստուծոյ հետ կը միացընէ. արդ ինչպէս կրնայ մէկը անմաքուր ըլլալ, երբ անսահմանաբար մաքուր Աստուծոյ մը հետ սերտիւ միացած է:

Բայց մի և նոյնը կրնայ ըսուիլ նաև այն քահանային համար, որ յանդուգն յանձնապաստանութեամբ վնասակար չի կարծէ բարեպաշտական սովորութեանց զանցառութիւնը. իւր ողջախոհութիւնը վտանգի մէջ չէ՛ր դներ այսպէս յիմարութեամբ Աստուծմէ բաժնուելով, և բոլորովին ոչինչ սեպելով խմաստնոյն խօսքը. « Գիտացի՛ր թէ ոչ այլազգ լինիցիս Տուժիկալ, բայց եթէ Աստուած տայցէ » [2]:

Մենք հաստատապէս կը հաւատանք որ ամէն պայթակղութիւն տուող և համբաւաբեր քահանայ յառաջուց ունեցած բարեպաշտական սովորութիւնները զանց առնելէն սկսաւ այնպէս ըլլալ: Եթէ կ՚ուզէ անկեղծ ըլլալ, պէտք է խոստովանի, որ բարեպաշտական սովորութիւնները չեն ձգած՝ ողջախոհութեան դէմ չեղան էեց, այլ մտաւանդ թէ կերմեռանդութեան մէջ պահպանութիւն ընելուն համար սուբբ առաքինութեան դէմ

1 Յայտ. ԺԴ. 4:

2 Իմաստ. Ը. 21:

ալ յանցաւոր գտնուեցաւ: Ողորմելի՛, երբէք չէր կրնար մտածել որ իրեն Թէեւ կարծած մէկ զանցառութիւնը իր անկարգութեանց առաջին նշանը պիտոր ըլլար:

Իրմէ սորվինք, արժանապարտ եղբայրակիցք, ոչինչ բան չի կարծել ծուլութիւն մը, որ կրնայ զմեզ այսպիսի անդունդներու մէջ գահավիժել: Շարունակենք բարեպաշտ սովորութիւններս, եթէ դեռ ևս հաւատալիմ ենք, և նորէն սկսինք եթէ գժբաղդաբար զանց ըրած ենք:

201. « Խոլոր վարքերնուս ամբողջութիւնը աղո՛ի է արդեօք ամէն հեղգութենէ, ծուլութենէ և անկարգութենէ »:

Ճշմարիտ սուբբ անձի մը վրայ երկու երևելի բան կը տեսնուին, հաստատութիւն և կարգաւորութիւն: Հաստատութիւն ունի, վասն զի առանց բոլոր կէտերուն մէջ կռնաբելու, չի կրնար մէկը Ճշմարտապէս ողջախոհ մնալ: Կարգաւորեալ է իր բաներուն մէջը, վասն զի ողջախոհութիւնն ալ կարգ մըն է, և բոլոր մարդկութեան կարգը: Անոնք կը կարգաւորէ իր խորհուրդները, իւր սիրտը, իր ամէն ղգայմունքը, բաղձանքները, երևակայութիւնը, ջնդիկն իր կարողութիւններովը և զմայլմունքը իր զգայարանքներովը:

Երբ մարդ մը հաստատութիւն չունի, փորձութեան մէջ ինկած առենը՝ հաւանական է որ ղհ ըլլայ, և մանաւանդ եթէ փորձութիւնը այն տեսակներէն ըլլայ, որոնք կը վերաբերին և վէրքերը սիրել կու տան:

Երբ մարդ մը իր բաներուն մէջ կարգաւորեալ չէ, երբ անկարգութենէ չի նեղուիր, և գուցէ այնչափ ալ թշուառ ըլլայ, որ մանաւանդ թէ հաճութիւն մըն ալ զգայ, անմաքրութեան ախտը իրեն այնչափ սոսկալի չի պատճառեր, որչափ որ կատարեալ կարգաւորեալ անձ մը կը սարսափեցընէ:

Անհաւասիկ այս ախտին նկատմամբ փորձառութեան զարմանալի մէկ ապացոյցն ալ: Մի թէ գալափարնեբուն մէջ հաստատուն, սկզբանց մէջ յարատև և կրօնից պարտաւորութեանց պահպանութիւնը անկեղծ և ազ-

դու կամքով սիրող անձանց մէջ արդեօք անմաքրութիւնը իր կոտորածները կ'ընէ։

Ո՛չ հաստատապէս։

Մի թէ կարգաւորեալ, իրենք իրենց իբրև խիստ օրէնք մը դրած կանոնին հաւատարիմ պահպանող անձանց, որուն մէջ երեսուն քառասուն տարուան քահանայութիւնէ վերջը մի և նոյն մեացեր են՝ ինչպէս որ էին այն կանոնը դրած օրերնին։ Կամ մի թէ այն յարգելի հովիւներուն, որոնց ժողովրդապետական տունը ջերմեռանդ հաստարակութեան պատկեր մը կը ձևացընէ։ Մի թէ այս սուրբ քահանայից դէմ է, կ'ըսեմ, որ Թըշնամին յաջող ելքով կ'ուզէ իւր հրեաններուը։ Իրաւ ցընե՞ս։

Բայց եթէ մէկը անկարգ և անկանոն կեանք մը վարէր առանց յարատևաբար ՚ի գործ դրուած ջերմեռանդ սովորութեանց, եթէ մէկը միայն դիպուածով՝ վայրկեներին բերման համաձայն, ըստ հաճոյից և քմայ սպրեր, ամէն տեսակ գործի պարապելով, և ոչ ալ կարգաւորուած Թեան ղօրաւոր ձարտարութեամբ բարեպին մէջ զսպուած, ո՛հ, ան առնէր Թշնամին՝ որ միշտ « չղջի », մանաւանդ քահանային բաղդատիկ որսալու համար, տեսնելով աղէկ չը պաշտպանուած ամրոց մը, շատ շուտով կ'առնէ և կը տիրէ անոր։

Նմանապէս Թէ որ ծոյլ և աշխարհականաց պէս հեղգասիրտ, փափկասէր և սանձառեաց քահանայ մը տեսնելու ըլլայ, որ ամենևին մահացուցման չ'ենթարկէ զինքը, մանաւանդ Թէ մարմնապաշտ ալ ըլլայ, հարկ եղածէն աւելի քնանայ, կարծէք որ սատանան շատ դժուարութիւն պիտոր զգայ այսպիսի մէկուն յաղթելու համար։

Որուն համար, սիրեցեալ եղբայրակիցք, շատ ապահով չ'ըլլանք այս ծոյլ, փափուկ և հեշտական կեանց վրայ, որ կրնայ ծանրագոյն չարեաց սկիզբ մ' ըլլալ. բոլոր սուրբերը կ'տեսին զփափկակեցութիւնը. և եթէ մէկը այնպէս ծնած ըլլալուն պատճառաւ՝ զայն ձանձնալու սոխպուելցաւ, առաքինութեամբ ընդդէմ ու ա-

պաշխարող և ճնշուած կենաց հետ փոխեց, որ իւր ողջախոհութեան պահապանը եղաւ, ինչպէս որ նաև ըստուգիւ մերինին ալ պիտոր ըլլայ։

Զի վստահինք այս անկանոն և անկարգ կենաց վրայ, որ երբեք չի համաձայնիր ճշմարիտ սրբութեան հետ։ Յիշենք որ մեր քահանայական կենաց ամենագեղեցիկ և ամեներջանիկ օրերը անշուշտ անոնք էին, որոնց մէջ ճշդիւ պահուած մանաւանդ կանոն մը կը սրբէր բոլոր մեր գործքերը, առաքինութիւնը մեզի սիրելի կ'ընէր, և այնպէս կը կաղդուրէր հոգիները, որ չարութեան առաջերն ալ տեսնելով կը զգուշանայինք և կուռելու կը պատրաստուէինք, Աւաքելոյն խորհրդոյն հաւատարիմ գտնուելով. « Յամենայն իրաց չարաց ի բաց կացէք » [1]։ Աղէ՛, քիչ մը սիրտ առնենք, և այն կարգաւորեալ կեանց ընթացքնիս ձեռք բերենք, ուսկից դուրս քահանան միշտ վտանգներու մէջ կը գտնուի։

202. « Չ'առնելի՛ է մեզի քաղցր պարապութիւնը, և չարաւոր դատարկութիւնը »։

Սրտերուս բոլոր զգացմամբ վշտակից պիտոր ըլլանք այն քահանային՝ որ այս հարցմունքներուս պատասխանէր. — Այո՛, կը խոստովանիմ, անուշ պարապութիւնը ինձ շատ հաճելի է, ու աշխատութիւնն ալ ծանր կուգայ, մանաւանդ կարդալը անտանելի է։ Ո՛հ, միայն պարտքս կատարելով դոհ կ'ըլլամ, աւելորդնեղութիւն մըն է, զոր ուզողը թող առնէ։ — Սուտգիւ ալ հարկաւոր չէ որ այսպիսի քահանայ մը իւր մտաց և սրտին միաբ տրամադրութիւնները մեզի բանայ, ըստ որում միայն այն խոստովանութիւնը բաւական է, որով հասկընալ կարենանք մեացած բոլոր թերութիւնները։ Ո՛րչափ զարհուրելի չարիք պիտոր գործեր այս սխալը, եթէ գժբաղդաբար բոլոր կղերին մէջ տարածուէր. Աստուած պահէ։ Այն առնը երեմն բարով բոլոր առաքինութիւնները ալ և մանաւանդ ողջախոհութիւնը. ըստ որում ով չի գիտեր, որ մաքրութեան ամենամեծ Թշնամին դատարկութիւնն է։

1 Ա. Թեսալ. Ե. 22։

Դատարկապորտ անձն մը հոգին առաքինութենէ զուրկ է, և հետևաբար բաց է ամէն մեղութեանց. « Բազում էարիս ուսոյց դատարկութիւն »[1], կ'ըսէ Հոգին սուրբը: Բայց յատկապէս այս ոգորմելի ախտին վրայ խօսելով, ինչ էր Սոդոմայ մեղաց և անոր կրած զարհուրելի պատժոյն պատճառը: Նոյն ինքն Հոգին սուրբ կ'ըսէ. « Բայց այս էր անօրէնութիւն Սոդոմայ ... փափկանայր »[2]:

Եթէ աղէկ մը մտածենք, պիտոր տեսնենք և աղէկ մը պիտոր հասկընանք առանց զարտուղութեան, որ աստուածպաշտութեան գաղջութիւնը, նախանձումն մարիլը, ինքը զինքը ցոյց տալու յօժարութիւնը, փորձութեան դէմ կռուելու հեղգութիւնը, նախ Թեթև՝ յեսոյ ալ քահանայութեան ամեթ և նախատինք բերող սոսկալի գայթակղութիւնները, ի սկզբան կարգալուս սէր չունենալէ և այն դատարկապորտ ծուլութենէն յառաջ եկան, որ շատերուն կործանումՊատճառեց և կը պատճառէ:

Իսկ միւս կողմանէ հարևանցի նայուածքով մըն ալ կը տեսնուի՝ որ ուսումնասէր քահանայ մը, և մանաւանդ (աղէկ ուշ դնենք) եկեղեցական ուսմունքը սիրող, շատ ցանցառ և համ երբեք գայթակղութիւն չի տար:

Ուսման սիրենք զուսումը, ինչպէս պէտք է որ սիրենք նաև զմաքրութիւնը՝ որուն պաշտպան և պահապանն է, և գարշենք դատարկութենէն՝ որչափ որ պէտք է գարշինք անմաքրութենէն, առ որ կը տանի ծուլութիւնը. « Սիրեա զուսումն սուրբ Գրոց », իրաւամբ կ'ըսէ սուրբն Ցերոնիմոս, « և զախտս մարմնոյ ոչ սիրեսցես »:

203. « Կերակրոյ մէջ սակաւապէտ ենք »:

Անմաքրութիւնը մարմնոյ սեպհական ախտն է. ահաւասիկ ինչուն համար ամէն ժամանակի և ամէն վիճակի սուրբերը հաստատապէս ուզելով պարկեշտ մնալ, ծոմապահութեամբ և ապաշխարանաց խստութեամբ հոգ տարին սանձելու և ճնշելու իրենց մարմինը: Բայց իրենց այսչափ սուրբ խստութեամբն ալ սուրբ Պօղոս ա-

1 Սիրաք. ԼԳ. 29: 2 Եզեկ. ԺԶ. 49:

ռաքելոյն չի նեղուիր մարմնոյն խայթը՝ ասոնց չէր հնապանդ. սակայն ըստ որում իրենք ամենախիստ մահապատժոյն կրթութեան մէջ կ'ապրէին, անոր համար ալ միշտ յաղթող կ'ելլէին. և ամէն մէկ փորձութենէ իրենց նորանոր յաղթութեանց առիթ էր: Ինչ պիտոր ըլլային, եթէ փոխանակ այսպէս վարուելու՝ պաշտպնէին, խաղցնէին, փաղաքշէին իրենց մարմինը՝ անոր հաճոյքը կատարելով, և այսպէսով անոր հեշտական ախորժակը սնուցանելով. « Մի արբենայք գինւով, յորում զեղխութիւն է »[1], կ'ըսէ Հոգին սուրբ: Եւ ոչ ալ գիտեր որ փորձառութիւնը ամէն վայրկեան կը հաստատէ այս վճռոյն ճշմարտութիւնը:

Կրօնաւոր և խնամատուն բժիշկ մը կ'ըսէր այս խօսքերը, զորոնք երբեք չենք կրնար մոռնալ, և հոստեղ ալ յիշելու շատ յարմար կու գան. — Ես հաստատապէս կը հաւատամ քահանայից ողջախոհ ըլլալուն, և բարի օրինակ ալ կ'առնեմ. բայց երբոր անոնցմէ մէկ քանին կը տեսնեմ, որ կամ իրենց մէջ ատելի մէկմէկու, և կամ աշխարհականներէն որոշած կոչունքներուն շատ կը յաձախեն, կը զարմանամ թէ ինչպէս կրնան ողջախոհ մնալ. և այսու ամենայնիւ ատելի և գործ դնել ինչ որ, ըստ իմ կարծեցս, շատ վանգաւոր է թէ ողջախոհութեան, և թէ այսպիսի վարմունքով ալ իրենց պարկեշտութեանը՝ ուրիշ մեղնութեան չեմ կրնար տալ, եթէ ոչ այն առատ ընծոյայ արգիլնք սեպել, զոր իրենց վեմ պաշտօնը կը պահանջէ և կ'ընդունի Աստուծմէ: — Շատ ցաւելու բան է որ կղերը աշխարհականաց առիթ տայ իրենց վարմունքին վրայ այսպէս խօսելու:

Յառաջ բերինք նաև այս նիւթիս նկատմամբ, ինչ որ կ'ըսէր անձ մը (Չօհկելօհե իշխանը) որուն առաքինութիւնը ճանչցաւ բոլոր Եւրոպա. — Ետնս լեռը այն ասոնձան չի բռընկիր, ինչպէս որ կը վառի կերակրով և ըմպելիօք բորբոքուած մարմինը: Եթէ իմ խորհուրդս կրնայ արժէք մ' ունենալ, թէ որ իմ փորձառութիւնս հաւատարմութեան արժանի է, ես խորհուրդ կու տամ

1 Եփես. Ե. 18:

և կը Թախանձեմ այն անձը, որ կ'ուզէ Յիսուսի Քրիս-
տոսի Հարմանալ մաքուր և անարատ պահելով զողջա-
խոհութիւնը, գիմիէն իբրև մահաբեր Թունէ մը փախ-
չելու, որուն մէջ կը գտնուին սատանային առաջին գէն-
քերը։ Գինին զՀեշտախտուութիւնը կը բորբոքէ. ինչո՞
համար այս կրակին կերակուր աւելցընել վրան իւղ Թա-
փելով։ Ինչո՞ համար այս արդէն բորբոքուած մարմնոյն
աւելի ևս վառելու նիւթ մատակարարել։ — Ա,յս վեր-
ջին երկու հարցմունքը իշխանը սուրբ Յերոնիմոսէն ա-
ռած է, որով աւելի զօրաւոր կ'ըլլայ իւր հեղինակու-
Թիւնը, և աւելի աղդու ապաւորութիւն մը պէտք է որ
ընէն վրանիս։

Ա,յս խորհրդածութիւնները, որոնք զմահացուցու-
մը մեղի սիրելի կ'ընեն, պէտք է որ սակայ ընենք. մոա-
ծենք նաև սուրբ Առաքելոյն այս խօսքերուն վրայ.
« Տուաւ ինձ խայթ մարմնոյ հրեշտակ սատան, կռփել
զիս » [1]։ — « Ձնչեմ զմարմինս իմ և հնազանդեցուցանեմ.
զի գուցէ որ այլոցն քարոզեցի, ես ինքն անպիտան
գտանիցեմ » [2]։ — « Ժուժկալ լեր » [3]։ — « Նոյնպէս և
զաարկաւագուհիս պարկեշտս... մի գինեսէրս » [4]։

Եթէ ողջախոհութիւնը մեղի սիրելի է, պէտք է
նաև սիրելի ըլլայ այն ամէն ինչ՝ որ զայն կը պահէ ու կը
պաշտպանէ. և եթէ կը գարշինք անմաքրութեան ախ-
տէն, պէտք է նաև խորշինք այն ամէն բանէն, որ զայն
կը ծնանի և կը պարարէ։

204. « Զգայարանաց մահացուցումը հաւատար-
մաբար կը գործածեմ՞նք »։

Անտարակոյս սրտերնիս անմաքրութեան հնոց և
կրակարան է. բայց զգայարանքները սրտին խողովակ-
ները՝ ճամբաները և գրեթէ բերանները են։ Աչքերուն
և սրտին մէջ եղած հաղորդակցութիւնը եղելութեանու-
Թենէն շատ աւելի արագ է։ Նոյնը ըսելու է նաև ական-
ջին համար. խօսքը կը հնչէ, և նոյն կէտին՝ սրտին մէջ
կը լսուի։ Արդ զգայարաններուն և հետևաբար սիրան

1 Բ. Կորնթ. ԺԲ. 7։
2 Ա. Կորնթ. Թ. 27։
3 Բ. Տիմ. Դ. 5.
4 Ա. Տիմ. Գ. 8։

ալ բնականապէս մարմնոյ հեշտութեանց հակեալ են.
ուստի եթէ վրանին չի հսկենք, շատ յաճախ ըլլալով ա-
ռիթները, շատ դիւրութեամբ ալ ողջախոհութիւնը յա-
բատև վտանգներու մէջ կը գտնուի։ Ուսկից յառաջ է-
կաւ մահացուցման կրթութիւնը, զոր սուրբերը զար-
մանալի խստութեամբ ի գործ կը դնէին։ Մեզի համար
տեսակ մը հրաշք պիտոր ըլլայ ողջախոհութեան միա-
բանութիւնը չը ձնշուած զգայարանաց հետ։

Ա,յս նկատմամբ ինչպէս կը գտնուինք։ Քննենք։

Կը փախչինք այնպիսի անձանց ընկերակցութենէն,
որ իրենց անվայել խօսակցութեամբ ականջներուս տգեղ
աղտեցութիւն մը կ'ընեն։ Կը տհաճինք աշխարհային
պիղծ երգեր լսելու, որոնցմէ ամօթխածութիւնը և մա-
նաւանդ քահանայի մը պատկառանքը կասկածելով կը
վախնայ։ Կը հեռանանք անճոռնի երաժշտութիւններէ,
որոնք զՀոգին կը մեղկացընեն, և որոնց մէջ աշխարհա-
կաններն անգամ կը զարմանան քահանայից ներկայու-
Թեանը վրայ։ Կենցաղավարութիւնիս միայն այնպիսի
անձանց հետ է, որոնք կրնան զմեզ առաքինութեան
հրաւիրել և բարի օրինակով հաստատել։

Հոս կը յանձնենք և կ'ապրսպրենք, որ կենակից
ընկերութեան և մտերիմ բարեկամութեան համար՝
« ջաւրազանց ողջախոհ » և սուրբ քահանայք ընտրուին։
Անոնց՝ վարմունքը մաքրութեան նկատմամբ տեսակ մը
հրապուրիչ զօրութիւն ունի, որ ախորժելով կը գրաւէն
իրենց հետ խօսողները։ Խօսքերը, նայուածքները, կե-
ցուածքները և արտաքին վարմունքնին՝ Յիսուսի Քրիս-
տոսի պարկեշտութիւնը կը յիշեցընեն. այնպէս որ ի-
րենցմէ բաժնուելէ վերջն ալ մեզի առաջնորդէն շատ
աւելի ողջախոհ կը գտնուի։

Չասպա աչքերնիս։ Չննեցէք լման մը, ինչպիսի նա-
յուածք. կարծես Թէ անպարկեշտութեան դէմ այս
ողորմելւոյն աչքերէն դուրս չանթեր կ'արձակէ։ Բայց
ընդհակառակն դիտեցէք պարկեշտ մը, որպիսի ամօթ-
խածութիւն, ինչպիսի պարկեշտութիւն. սատկիս մաք-
րութեան հրեշտակը կը կառավարէ անոր նայուածքը։

Մեզի համար սուտ էիւ ողջախոհ քահանային նայուածքէն աւելի սիրելի և գեղեցիկ բան չի կրնար ըլլալ: Մեզմէ որոնն սիրաը, սիրեցեալ եղբայրակիցք, մաքրութեան ամենաթաղցր զգայմամբ չի չարժիր՝ հրեշտակային սուրբ Աղեքսիոս Գոնձակային սովորաբար նկարուած պատկերը դիտելով:

Պաւղոսեան սուրբ Վիննկենտիոս, ինչպէս ամէն բանի՝ այսպէս ալ աչաց պարկեշտութեան մէջ զգրմանալի էր. այսպէս կ'ըսէ Ագելի, իւր վարուց հեղինակը. — Իր սրտին մաքրութիւնը՝ երեսին վրայ կ'արտայայտէր. մեծ հսկողութեամբ կը պահպանէր իւր զգայարանքները, մանաւանդ աչքերը. ոչ երբեք կամ թեթեւ, կամ հետաքրքիր, կամ առանց հարկի և կամ հաստատ նպատակ կը ձգէր, մանաւանդ այլասեռ անձանց վրայ: —

Աչաց պարկեշտութեամբ, ոչ միայն ողջախոհութեան անգին գանձը կը պահպանենք, այլ նաև ժողովրդեան ալ բարի օրինակ կ'ըլլանք, որ միայն ասով զմեզ արժանաւոր և սուրբ քահանայ կը սեպէ: Բայց եթէ պարկեշտ չ'ըլլանք, առաջին անգամ զմեզ տեսնողները, զմեզ սուրբ կարծելէ յառաջ՝ փորձի կարօտ պիտոր ըլլան. սակայն ուրիշ՝ մանաւանդ թէ հակառակ կարծիքը պիտոր ունենան՝ եթէ նպատակներուս մէջ պարկեշտ և ամթիսած չըլլանք:

Վերջապէս հարկ կը համարինք խօսք մըն ալ ընելու զգայարանաց մէջ ամենէն աւելի ազդեցութեան ենթարկուածին՝ չօշափման վրայ: Երբեք չը մոռնանք մարմնական սրբութիւնը, որ սրբացաւ Փրկութեան սուրբ աւազանին՝ վերստին ծննդեամբ. առաջին սուրբ խորհուրդ՝ որ զմեզ Հոգւոյն սրբոյ տաճար ըրաւ. աւելի սուրբ եղաւ քահանայական ձեռնադրութեամբ, և միշտ աւելի սուրբ կ'ըլլայ սուրբ սեղանին առջև. և աւելի բացայայտ ըսենք, Յիսուսի Փրկատոսի ամենասուրբ մարմինը և արիւնը ընդունած ատենը: Մենք հաւատքով լեցուն քահանայ մը ճանչցանք, որ մեծ յարգութեամբ կը համբուրէր իւր օծուած մատուրները, անոնց ամէն օր Յիսուսի Փրկատոսի երկրպագելի մարմինը չօշափելուս պատիւը

մոռնալով: Վայ մեզի եթէ անվայել չօշափմամբ պղծենք այն նուիրական մարմինը, որուն մէջ ամէն կու գայ Յիսուծոյ Որդին, որուն բոլորտիքը Հրեշտակները պար առած կը պաշտեն՝ հոն փակուած սրբոց Սուրբը:

Ամենևին թոյլ չի տանք այն թեթեւամտութիւնները, այն ոչինչ կարծուած չօշափմունքները, ոչ մեր և ոչ ալ այլոց վրայ, որոնցմէ սուրբ քահանայք այնչափ խղճահարութեամբ կը խորշին:

Ո՜հ, որչափ բարի օրինակ է մեզի տեսնել թէ յայտմասին որչափ զգաստ էր Պաւղոսեան սուրբ Վիննկենտիոսը: Օր մը բարի ժողովրդապետին մեկը այս նուիրեաս նկատմամբ խնդիր մը կ'առաջարկէր, որուն մէջ յայտնի կը տեսնուէր թէ մեկուն զգաստութիւնը, և թէ միւսին ճշտութիւնը: Իսարի քահանան կը հարցընէր, որ պատշաճ է արդեօք վանդակաւոր հիւանդ օրիորդի կամ կնկան մը երակը ընել, հակընալու համար թէ արդեօք հոգեվարքը է թէ ոչ, և ըստ այնմ վերջին խորհուրդները մատակարարել, ու հոգեվարութեան աղօթքները ընել: Ահա տասիկ սուրբին պատասխանը. — Աւելի ընելէ ամէն կերպով զգուշացիր: Սատանան կրնայ այդ գործքդ էի թէ հիւանդ մը, այլ հոգեվարքը մըն ալ փորձելու գործածել: Սատանան այն ահաւոր ժամուն մէջ, ամէն փայտ ալ նետ կը պատրաստէ հոգի մը խոցելու համար, և մարմնոյն նուաղած տեսնը՝ հոգւոյն կրնայ դեռ ևս ուժը պահել: Ցիշէ այն սուրբը, որ հիւանդութեան տան էր ուղեր որ իւր կինը երեն դպչի՝ ողջախոհութեան փոխադարձ ուխտին պատճառաւ, և կրցածին չափ կը պնդար, թէ մեխերին տակը դեռ ևս կրակը կենդանի է: Ինչ պարտքդ կատարելու համար, բժիշկին կամ ուրիշ անձի մը դիմէ. բայց ինչ կ'ուզէ ըլլայ, « ամենևին մի՛ համարձակիր ո՛ և իցէ պատճառաւ աղջկան մը, կամ կնկան մը դպչելու »: — Ինքը յայտմասին շատ խիստ էր, կը յանելու վարուց հեղինակը, թեև ուրիշ ամէն բանի մէջ սիրալիր և բարեբարոյ: Մենք ալ հետևինք, սիրեցեալ եղբայրակիցք, այսպիսի խստութեան մը. վասն զի ասիկայ պիտոր ըլլայ մեր ողջախոհութեան հաւատարիմ պահապանը:

203. « Զափէն՝ աւելի և առանց օրինաւոր պատճառի չէ՛նք յաճախեր կանանց ընկերութիւնը »:

Ամեն մարդ կը խոստովանի, որ կանանց հետ յաճախ տեսութիւնը՝ մարդկանց համար մեղայ առիթ է: Արդ, եթէ բարոյականի մէջ ընդհանրապէս ընդունուած սկզբունք մը կայ, ասիկայ է. վերկութեան հանիլ ուզողը պէտք է որ մեղայ առիթէն փախչի: Այս սկզբունքը ամեն նիւթի մէջ ալ ճշմարիտ է, բայց ողջախոհութեան առաքինութեան նկատմամբ՝ բացարձակապէս հարկաւոր է: Ո՛չ ոք առանց Աստուծոյ օգնականութեան՝ կրնայ ողջախոհ մնալ. « Գիտացի թէ ոչ այլոգ լինիցիմ ժուժկալ, բայց եթէ Աստուած տայցէ » [1]: Բայց Աստուած իւր օգնութիւնը չի տար անոնց, որ կամաւ իրենց անձը մեղանչելու վտանգի մէջ կը դնեն, մանաւանդ թէ այնպիսիներուն կորստեան կը սպառնայ. « Որ սիրէ զտագնապ՝ ի նմին կորնչիցէ » [2]:

Շատ աղէկ կ՛ըսէր Ներսէս սուրբ Փիլիպպոսը, թէ զգայարանաց պատերազմին մէջ ծոյլերը կը յաղթեն, այսինքն անոնք՝ որ առիթէն կը փախչին:

Իսկ Պաւլոսեան սուրբ Վինկենտիոսը, ըստ որում կը գրէ իր վարքին հեղինակը, առանց հարկաւորութեան այցելութիւն չէր ըներ իրեն հաստատած սիրոյ Քեռից հասարակութեան վանքին, և ոչ ալ անոնց մեծաւորուհի Լըկրա օրիորդին: Օր մը այս առաքինի և հանդուրժողին այսպէս կը գրէր. — Եթէ կ՛ուզես որ ես քեզի այցելութեան գամ այդ հիւանդութեանդ առթիւ, ինձի լուր խաբէ. վասն զի ես ինձի կանոն դրած եմ քեզի չի գալու, եթէ ոչ կամ « ծանր և կամ մեծապէս օգտակար բանի մը համար »: — Բայց երբոր կամ խղճի և կամ ուրիշ հարկաւոր գործոց պատճառաւ չէր կրնար իւր այցելութիւնը զլանալ այս օրիորդներէն մէկուն, յառաջուց շատ մ՛աղաչել և թախանձել կու տար, և յետոյ ալ շատ դժկամակութեամբ և բանի կ՛երթար. որպէս զի այսպիսի այցելութիւնները յաճախ չըլլային, ինչպէս որ ինքն ալ չէր ուզեր:

1 Իմաստ. Ը. 21: 2 Սիրաք. Գ. 28:

Աչքոնաւ ամենայնիւ որչափ զգուշութեամբ կու տար այս ունկնդրութիւնները. ընկեր մը կ՛առնէր իրեն հետ, և չէր հանդուրժեր որ իրմէ յառաջ անիկայ ունկնդրութեան սենեկէն դուրս ելլէր, այլ իրմէ քիչ մը հեռու կը նստեցընէր: Գիտէ անգամ որ պէտք ըլլար կանանց հետ խօսիլ, իրենները էն մէկը քովը գտնուելու էր, գործքը կարելի եղածին չափ շուտով կը լմնցընէր, և բոլոր ունկընդրութեան ժամանակ՝ նայուածքի, խօսքերու և վարմունքի կատարեալ պարկեշտութիւն մը կը պահէր: Յորմէ ոմանք վերահասու եղան, որ իր վրայ մէկ քանի չարասիրտ անձինք եթէ ուրիշ զրպարտութիւններ ըրին, բայց ոչ ոք համարձակեցաւ իւր կուսական մաքրութեան վրայ արատ մը դնելու:

Զգոյշանալու բան: Սուրբերը իրենք զիրենք պարտաւորած կը կարծէին անթիւ զգուշութիւններ և պահպանութիւններ ընելու իրենց ողջախոհութեան գեղեցիկ շուշանը մաքուր և անարատ պահելու համար, որ արդէն, ինչպէս կ՛երևի, իրենց մեծ սրբութեամբը պահուած ու պաշտպանուած էր: Իսկ ընդ հակառակն թեթևսոլիկ և անխոհեմ քահանայք աստուածպաշտութեան մէջ խախտուած, այսինքն ամենակերպ թշուառութեանց որամադրուած, աներկիւղ և անխղճ ուրախութեամբ՝ ամենավտանգաւոր առիթներու մէջ կը ձգեն իրենք զիրենք: Որովհետև, ինչպէս որ սովորաբար կը հանդիպի, աւելի համարձակ կը վարուին անոնք, որ աւելի վախնալու էին: Բայց գուցէ ըսէ մէկը, թէ — այցելութիւն ըրած անձս՝ արդէն տարիքն առած է: —

Արդեօք այնպիսի մէկն է, որ իւր կենցաղավարութիւնը ոչ քեզի և ոչ ալ իրեն համար ամեն ամենաթեթև վտանգէ ալ աղատ ըլլայ: Տարիքն առած է. մի թէ իր տանը մէջ ուրիշ տարիքը չառածներ չեն գտնուիր որ գիւղաք. զոր օրինակ, աղջիկներ, քեռորդիք, աղախիններ, և այլն: Ինչպիսի՛ թշուառութիւն, եթէ քու այցելութիւնդ աւելի առանց ըլլային քան թէ տարիքը առածին: Ո՛չ, եղբա՛կ: Տարիքն առած է. այդպէս ալ ըլլալով մի թէ աշխարհքիս մէջ կը պակսին այնպիսի լեզուներ որ այդ յաճախ այցելութիւններդ չի դատապարտեն:

Գուցէ ուրիշ մըն ալ ըսէ. — Ես ապահով եմ իմ անձիս և գիտաւորութեանս վրայ: — Ինչպիսի՛ յանդգնութիւն. և ինչպէս կը յուսացուի որ Աստուած օրհնէ զայն: Ապահովութեան համար Պաւլոսեան սուրբը վճռեցաւոսէն աւելի ապացոյցներ ունի՛ք, որուն վարմունքը քիչ մը յառաջ տեսանք: Լսեցէք սուրբը Յերոնիմոսին խօսքերը և դողացէք. « Բազումք ի սրբոց անկան յայս ախտ վասն ապահովութեան: Մի՛ ոք յոյսդ վստահիցի. զի եթէ սուրբ ես, այլ ոչ ապահով»: Իսկ սուրբն Յովհաննէս Ոսկեբերանը կ՛ըսէ. « Մի՛ թէ քան՛ ելես, մի՛ թէ երկնէ՛ր. մարդ ես հասարակ բնութեանն տկարութեան ենթարկեալ: Չհուր ունիս, և ո՞չ բորբոքիցիս »:

Զար քահանայք գիմակին վար առնելով անառակութեանց մէջ գահավիժելներուն խելք կրնա՛ք հասցընել. բայց անըսգաստանալի վարքի տէր եղող քահանայից նկատմամբ՝ անիմանալի բան մը կ՛ըլլայ. եթէ ոչ սկեպք է ըսենք, որ կամ աչքերնին չլացած է, և կամ դառոզութիւնին ծառած, մինչդեռ չատ պայծառ և յայտնի է այս հեռահեալ խորհրդածութիւնը. « Այնինչ հարկաւոր չէ, որ ես քիչ թէ չատ կենցաղավարիմ այս ինչ անձին հետ. և բացարձակապէս հարկաւոր է, որ իմ անունս ալ պատիւս ալ անարատ ըլլայ »:

206. « Երբեմն՝ չատ թէ քիչ վտանգաւոր ընթերցմանց չէ՞նք պարտիր արդեօք »: Սուրբ քահանան այսպիսի ընթերցմունքներէ միտ կը զգուշանայ. մենք ալ գոնէ յայտ մասին օրինակին հետևինք: Այնոսիստա օրէնք մը գնենք մեզի երբեք չը կարդալու ինչ ինչ վիպասանութիւններ, քիչ մը համարձակ՝ տափական չքսելու համար՝ առասպե՛լներ, անձոռնի և լիրբ դրքոյկներ, զորոնք օրաթերթերը գժբաղդաբար առատօրէն կը թափին ընկերութեանց վրայ, որոնց մէջ բարոյական խօսքի մը քով այնպիսի նկարագրութիւններ կը գտնուին՝ որ բոլոր բարոյականը կ՛ապականեն. թատերական գործքեր, և կամ այսպիսեաց ծանուցագրերն ալ, որոնք միտ ողջախոհութեան վնասակար են: Եւ վերջապէս այն

բարի և պարկեշտ կարծուած բանաստեղծական վէպերը, զորոնք նոյն ինքն բարի կարծողներն անգամ սխալօր զարմանան քահանայի մը ձեռքը տեսնելով:

Այսպիսի անխոհեմ ընթերցմունքներէն վերջը, միշտ նեղութիւն մը՝ տագնապ մը սրտերնիս կը պաշարէ, ծանր կամ թեթև խայթ մը կը զգանք, հեղգութեան և փափկութեան զգացմունք մը կ՛ունենանք, պաշտօններու գործքերէն համ չենք առներ, աղօթքի և բարեգործութեան դէմ տեսակ մը անբաւականութիւն և հակակրութիւն կ՛իմանանք. այսինքն այսպիսի ընթերցմանց մէջ հոգևորներէն զգացածներուս բոլորովին հակառակը կը զգանք:

207. « Կանանց հետ չարունակ թղթակցութիւն չունի՛նք արդեօք »:

Այսր նկատմամբ այսչափը միայն ըսենք, որ այսպիսի թղթակցութիւնները քիչ անգամ օգտակար, և շատ անգամ մեծապէս վնասակար են: Յաճախ գրութեանց մէջ չատ գիւրաբաւ այնպիսի վստահութիւններ կ՛ըլլան, որոնց հետևանքը մտածելով մարդ կը սոսկայ:

Երբեք չի մոռնանք որ կանանց հետ վարուելով, մեկ խօսք մը կրնայ կայծ գառնալ, և կայծն ալ մեծ հրդեհ մը պատճառել. յիշենք նմանապէս որ երիտասարդ օրիորդները քահանայէ մը ստացած նամակները՝ գրեթէ երբեք ծածուկ չեն պահեր: Այս օրիորդները աշխարհքի մէջ իրենց բարեկամները ունին, որոց իրենք զիրենք երջանիկ կը համարին, և երբեմն ալ կը պարծին ունեցած թղթակցութիւնին յայտնելու. և այսպէս գալտնիքը բարեկամէ բարեկամի անցնելով՝ քիչ ատենէն ամենուն ծանօթ կ՛ըլլայ, որուն վրայ ան ատենը կու լանք, երբ ալ օգուտ մը չունի:

Այսպիսի գժբաղդութենէ մը ազատ ըլլալու համար՝ սքանչելի կանոնը այս է. « Այնպիսի նամակ մը մարդու չհասցընէք, որ գրուած ըլլալով՝ պիտոր չհամարձակէինք ըսելու, թէ եպիսկոպոսին կու տայի կարդալու, եթէ անձամբ հոս ներկայ ըլլար »:

208. « Վերջապէս մաքրութեան սուրբ առաքինու-

Թեան նկատմամբ՝ ինչպիսի՛ վարմունք ունինք խոստովանարանին մէջ։ Անընդդիմանելի՛ ենք արդեօք »։

Ա. Հաւասիկ յայտ մասին հարկաւոր տեղեկագրանշելիութիւնս։

Ե. Երիտասարդ օրիորդները խոստովանողին ունենալու չի փափագիլ, և այսպիսեաց խոստովանահայր ընտրելու համար առնելին չաշխատիլ։

Բ. Խոստովանութեան առեն չափէն աւելի աչաց պարկեշտութիւն պահել, և հաստատ նայուածք չի ձգել ոչ անձին և ոչ ալ հագուստին վրայ։

Գ. Ամենամեծ զգուշութիւն հարցմունքներու մէջ, միայն պարզ և սոսկ հարկաւորին նայելով, և վերջերդ պատուիրանին նկատմամբ՝ վայելուչ և պարկեշտ խօսքեր գործածելով։

Դ. Խոստովանողը՝ առաքինութիւնը սիրելի ընելու համար ալ՝ եռանդուն յորդորներ ընելէ զգուշանալ։ — Պաւլեայեան սուրբը Վինկենտիոս կը պատուիրէր իւր հաստարակութեան քահանայից, թէ բացարձակապէս հրաժարեցէք կանանց կամ օրիորդաց հետ չափէն աւելի զգայուն բառերով խօսելէ կամ գրելէ, թէև ջերմեռանդութեան համար ըլլայ։ — Ինքը, սուրբ Վինկենտիոս, ինչպէս կը պատմէ իւր վարուց հեղինակը, պարզութեամբ և յարգանօք կը գրէր ամենուն. բայց ոչ երբեք բարեկամաբար և կամ քաղցրութեամբ կը գրէր կանանց։ —

Ե. Ուրիշ խոստովանահօր խաբել այն ապաշխարողները, որոնք երբեմն խոստովանահօր վրայ սաստիկ սէր մը կը ցուցընեն. միայն թէ յայտ մասին անոնց ցոյց տուած կասկածը անոտի խղճահարութիւն մը չըլլայ։ Եւ ասիկայ անկից կը հասկըցուի, որ այսպիսի խոստովանողք ուրիշ բաներու մէջ ալ խղճահար ըլլան, և իրենց խոստովանահօր նկատմամբ միշտ այնպէս վարուած ըլլան, ինչպէս որ են ներկայիս։

Զ. Բացարձակապէս ուրիշ խոստովանահօր խաբել այսպիսի ապաշխարողները, եթէ (Աստուած մի՛ արասցէ որ պատահի), տեսանենք որ մենք ալ մեղանչելու

վտանգի մէջ կը դանուինք, մանաւանդ եթէ այս վտանգը ուրիշ կերպով չի փարատի։

Ը. Երիտասարդ կանանց խոստովանութեան ժամանակ ձեռքի մէջ փոքր խաչելութիւն մը ունենալ, և անոր վրայ նայուածքնիս սեւեռել. երբեմն երբեմն համբուրել զայն, և սրտանց ղՅիսուս և ղՄարիամ օգնութեան կանչել։

Ը. Խոստովանութեան պատշաճ ամբողջութիւնը և կերպը պահելով, կարելի եղածին չափ կարճ կապել այսպիսեաց խոստովանութիւնը։

Թ. Վերջապէս խոստովանութիւնը լինցածին պէս, կամաւ անոնց վրայ ամենևին չի մտածել։

209. Ա. Այս են այն վարմանց կանոնները, զոր պատշաճ դատեցինք տալու մեր արժանաւոր եղբարց, առաքինութեանց մէջ ամենէն աւելի զեղեցիկ և աւելի փափուկ առաքինութեան նկատմամբ։ Կարծղ ըլլայինք զանոնք անխախտ հաւատարմութեամբ պահել։ Որչափ որ ողջախոհ քահանան Աստուծմէ և մարդկանցմէ օրհնուած է, այնչափ ալ ատելի և զզուելի է թէ մարդկանց և թէ Աստուծոյ անպարկեշտ քահանան։ Ողջախոհութիւնը դանձերուն մէջ ամենահաղուագիւտը սեպենք, և անոր պահպանութեանը վրայ փոյթեռանդն և խղճահար ուշադրութեամբ հսկենք։ Ժուժկալ ըլլանք, պարկեշտ, խոնարհ, ճնշուած, ուսումնասէր, աղօթասէր, հաւատարիմ կանոնապահ. և ոչ երբեք իբրև փոքր և թեթև անարգենք այն միջոցները՝ զոր Աստուած կու տայ իրեն այնչափ սիրելի առաքինութեան մը պահպանութեան համար։

Կղերանոցի ջերմեռանդ մեծաւոր մը, որուն խոհեմ խորհուրդներուն և գերազանց առաքինութեանց յիշատակութիւնը՝ չափէն աւելի հաճոյութիւն կը պատճառէ մեզ, ատեն ատեն զբօսաւոր հաւաքով, և երկար փորձառութեան հեղինակութեամբը կ'ըսէր մեզի. « Տեսէք, սուրբ է այն քահանան, որ կատարեալ ողջախոհ է »։ Ա. Այս խօսքը՝ իբրև հոգևոր կենաց վճիռ մը գործածենք. և ո՛րտեղեւ աւելնքս ալ պէտք է որ սուրբ ըլլանք, աւելնքս

ալ միշտ և մեծապէս ողջախոհ ըլլանք. և սուրբ արագութեամբ անձնատուր ըլլանք Հոգւոյն սրբոյ խանդակաթ յորդորանացը որ կ'ընէ մեզի սուրբ Աւաքելոյն բերնովը. « Աղաչեմ զձեզ, եղբարք, գթութեամբքն Աստուծոյ՝ պատարաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ »[1]:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Բարի օրինակ — Պարկեշտութիւն — Սէր առանձնութեան, կաճոճի եւ ուսման — Սուրբ կեանք — Բարի օրինակին աքացնելի արդիւնքը — Գայթակղութիւն քահանայից, կրօնաւոր ճոգւոց:

210. Բարի օրինակը հոս վերջը կը դնենք, չէ թէ միւս առաքինութիւններէն նուազ հարկաւոր ըլլալուն համար, այլ որովհետև զամենքը կը յիշէ, և յինքն կը պարունակէ՝ երբեմն անոնց կատարեալ համառօտութիւն մը:

Սուրբը քահանային համար և ոչ մէկ առաքինութիւն մը կը պակսի, ուստի և բարի օրինակովը ալ ամենուն չի նուիրեր կը պատճառէ:

Զար քահանան ընդհակառակն, ինչպէս նաև գաղջ և ծոյլ քահանան ալ, զուրկ է էական առաքինութեանց մէկ քանիէն, և կամ եթէ բարեբաղդաբար ունի, շատ անկատար կերպով՝ ի գործ կը դնէ, որով իւր կեանքը կամ գայթակղական է, և կամ շատ քիչ շինութիւն առնող: Անկարելի բան է գեղեցիկ առաքինութիւններով զարդարուած ըլլալով այլոց բարի օրինակ չ'ըլլալ, ու ընդ հակառակն անոնցմէ զուրկ ըլլալով՝ գայթակղութիւն չի տալ: Յորմէ ստիպուած կ'ըսէր Մասլիճն այս ծանր խօսքերը. — Օրինակը՝ մեր վճռակին առաջին պարտքն է. առանց որոյ բոլոր մեր գործքերը կամ անպտուղ կ'ըլլան, և կամ կործանման առիթ և գայթակղութիւն այն Ժողովրդեան՝ զոր Աստուած իւր ցաւման առեն մեզի վստահացաւ:—

1 Հռովմ. ԺԲ. 1:

Հարկաւորութիւն կայ այնքան ամէն քահանայից երբեմն առաքինութեան օրինակաւ Ժողովրդեան շինութիւն տալու անանօրինելի հարկաւորութեան վրայ: Մանաւանդ վայրկեան մըն ալ մտածելը բաւական է նոյն կէտին տեսնելու համար թէ որչափ և ինչպիսի զօրաւոր փաստեր կ'ապացուցանեն այս հարկաւորութիւնը:

Մանր դէպքերը յիշենք:

211. Մենք պէտք է որ իրաւցընէ սուրբ կեանքով բարի օրինակ տանք: Ինչո՞ւ համար: Վասն զի Աստուծմէ առաքելութիւն ունինք Ժողովրդեան ուղեցոյց և լոյս ըլլալու. « Դուք էք լոյս աշխարհի »[1]: Ի՞նչ օգուտ ունի դրօսանին տակը պահուած ճրագը: Ի՞նչ է այն ուղեցոյցը՝ որ դէպ ի՛ անդունդները կը տանի: — Մենք պէտք է որ բարի օրինակ տանք: Ինչո՞ւ: Վասն զի պէտք է որ այնպէս աշխատինք Ժողովուրդը լուսաւորելու համար, (ինչպէս որ պարտաքերնիս է), որպէս զի տեսնեն մեր կենաց սրբութիւնը, և բարի գործքերուս պայծառութիւնը. « Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս »[2]:

— Մենք պէտք է որ բարի օրինակ տանք հաւատացեալց: Վասն զի այսպէս կը պատուիրէ սուրբ Աւաքեալը, և այնպիսի խօսքերով՝ որ կասկածելու տեղի չի տար. ալեկոծ մը կընդունէք անոր ամէն խօսքերը. « Ամենեցուն զանձն օրինակ կացուցանել գործոց բարութեան, վարդապետութեամբ զանեղծութիւն ունելը »[3], և այլն: — « Օրինակ լինիջիս հաւատացելոց բանիւք, գնացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ »[4]:

— Մենք պէտք է որ բարի օրինակ տանք. վասն զի եկեղեցին սուրբ Ժողովքներով, և սուրբերը իրենց վարդապետութեամբ և գործքերով շարունակ կը յիշեցընեն մեզի այս ամենածանր և հիմնական պարտաւորութիւնները:

Տրիտենդեան սուրբ Ժողովքին խօսքերէն աւելի բացայայտ ինչ կրնայ ըլլալ, որոնք ամենուն ծանօթ են.

1 Մատթ. Ե. 14:
2 Մատթ. Ե. 16:
3 Տիտ. Բ. 7:
4 Ա. Տիմ. Դ. 12:

« Ի ղբեստաս, ի գնացս, ի բանս և ՅԱՄԵՆԱՅՆԻ ծանրաբարոյ, չափաւոր և պարկեշտ ցուցցեն (քահանայք) զանձինս »:

« Ի գնացս », արդէն ըսած էր սուրբն Օգոստինոս, ուակիյ սուրբ ժողովքը առած կ'երևի վերոյիշեալ խօսքերը, « 'ի վիճակի, 'ի ղբեստաս և յամենայն վարս ձեր ոչինչ գացի, որ առելի տեսողացն լինի. այլ որ վայելչի է ձերդ սրբութեան »:

— Ամէն հովիւ՝ որ գայթակղութիւն կու տայ, կ'ըսէ նոյն սուրբ վարդապետը, կը սպաննէ ոչխարները, ըստ որում պարտաւոր է արածելու. « Ամենայն որ չարաչար կեայ, որոյ առաջնորդ կարգեալ իցէ, ըստ անձինն զօրութեան զղչխարսն սպանանէ »:

— Եկեղեցականաց կեանքը, կ'ըսէր 1537ին Տուր քազաքին մէջ դումարուած ժողովքը, աշխարհականաց գիրքն է. « Գիրք աշխարհականաց, կեանք եկեղեցականաց »:

— Մենք պէտք է որ բարի օրինակ տանք. վասն զի մեր առաքելութեան էութենեն պարտաւորուած ենք հոգիները փրկելու, որոնք շատ աւելի դիւրութեամբ կը փրկուին սուրբ կենաց բարի օրինակաւ մը՝ քան թէ խրիքով ու քարոզներով:

— Մենք պէտք է որ բարի օրինակ տանք. վասն զի քահանայի մը համար նոյն իսկ բարի օրինակ չը տալը՝ արդէն գայթակղութիւն տալ է. քահանայութիւնը ոչընչացընել է, ատանային գործակից ըլլալ է, և հաւատացեալոց Յիսուս Քրիստոսէ այնչափ աշխատանքով, նեղութեամբ, քրտինքով և արեամբ շինուած փրկութեան շէնքը քակել և կործանել մըն է:

— Վերջապէս մենք պէտք է որ բարի օրինակ տանք. վասն զի առաքելութեան տեղ եթէ մոլութեան օրինակ տալու ըլլանք, մեղաւորները համարձակութիւն կ'առնեն իրենց անկարգութիւնները շարունակելու, և մեր անձն ալ զրկենք ուղղելու և յանդիմանելու անկարողութեան ամօթապարտ վիճակին մէջ կը ձգենք: Ի՞նչպէս կրնանք ցուիակեացներուն դէմ խօսիլ, եթէ անոնք կա-

րող ըլլային ըսել, որ մեր ժողովրդապետն ալ մեզմէ ոչ աւելի է և ոչ ալ պակաս:

Ի՞նչպէս դատապարտել անպարկեշտութիւնը, եթէ կարենային ըսել, թէ այս կամ այն ինչ քահանային օրինակ կ'առնենք: Ի՞նչպէս սաստել ագահները, եթէ անոնք ալ կարենային ըսել, թէ մեր ժողովրդապետն անդամ կը ժողվէ և կը գանձէ: Ի՞նչպէս պոռալ խաղացողներուն դէմ, եթէ կարենային երեսնիս զարնել, որ քահանաք ալ օրը և գիշերները կ'անցընեն խաղի մէջ:

Մեսայն սուրբը քահանան կրնայ ձայնը բարձրացընել ամէն ախտերու դէմ. վասն զի ամէնքն ալ գիտեն, որ ինքը սուրբ և մաքուր է. ինքը միայն կրնայ ամէն տապալութիւն քարոզել, վասն զի բոլոր աշխարհը պիտի, որ ինքը ամենուն ալ հաւատարիմ է:

Աստուծոյ փառացը համար, սիրեցեալ եղբայրակիցք, քահանայութեան պատուոյն համար՝ որով զարդարուած ենք, քարոզութեան ամբողջ ազատութիւնը պահենք, և ոչ երբեք հանդուրժենք կորընչացնելու այն իրաւունքը՝ որով պէտք է միշտ մաքառինք ախտերու դէմ և զառաքինութիւնը քարոզենք: Զգուշանանք այն պիսեաց կարգը չը գանուելու, որոնց դէմ սուրբ Աքաքեալը այնչափ ուժով կը պոռար. « Առաջնորդ լինել հուրայ... Ո՛ր ուսուցանես զընկերն՝ զանձն քո ոչ ուսուցանես, որ քարոզես չգողանալ՝ գողանաս, որ ասես չշնալ՝ շնաս. որ գարշիս ի մեհենից՝ զսեղանս կողոպտես, որ օրինօքն պարծիս՝ յանցանել ըստ օրինին զԱստուած անարգես »: Եւ մանաւանդ յիշենք այս հետագայ խօսքերը. — « Զի անունն Աստուծոյ պՕՍՆ ՁԵՐ հայհոյի 'ի մէջ հեթանոսաց »[1]:

212. Սակայն աճապարենք ըսելու. մենք կը գաբելինք և կ'առնենք ծանր գայթակղութիւնները. և եթէ երբեմն մանուկ Յուդայ մըն ալ կ'երևի մէջերնիս, հաւատարիմ առաքելոյ նման՝ յաւակից կ'ըլլանք անոր թշնաւութեանը, և բարկութեամբ կը բորբոքինք անոր յանցանացը դէմ:

1 Հռովմ. Բ. 19, 21—24:

Սոյգ և ամենատոյգ, սիրեցեալ եղբայրակիցք, օրհնեալ ըլլայ Աստուած. բայց չի խաբուինք և չը կարծենք որ ընթացքներուս մէջ ամենայն ինչ կարգաւորեալ ըլլայ, ժողովրդեան ծանր գայթակղութիւն մը չը տալերնուս համար:

Պիտոր համարձակինք ըսելու: Դուցէ մեկը առաջին անգամ զարմանայ. բայց յետոյ մտածելով պիտոր հասկընայ, որ՝ զոր օրինակ՝ եղեռնագործ քահանայի մը, անպարկեշտ քահանայի մը, և դինեասէր և ագահ քահանայի մը, (ըստ որում ասոնք են գայթակղութիւն տուող քահանային երեք ծանր յանցանքները), չար կեանքը չէ որ կը հրապուրէ զհոգիները զԱստուած թողուլու և մեզքին հետեւելու: Այնինչ աւելի ապականուած և կորսուած մարդիկ ալ այսպիսի քահանան կ'անարգեն, կը ծաղրեն, կը նախատեն, գիտնալով որ անիկայ մահկանացու է երկրիս վրայ գտնուած ամեն բանէ աւելի նուիրական և սուրբ բաներէ. գիտեն որ անիկայ Թագաւորական քահանայութիւնը՝ զոր ինքը աղտեղութենէն ժանտութեամբ պղծեր է. գիտեն որ ոտնակոխ ըրած է Աստուծոյ և եկեղեցւոյ պատուիրանքները, և սուրբ զգեստի մը տակ՝ ապականած ու վատ հոգի մը կը կրէ: Բարեպաշտ հոգիները կու լան անոր անկարգութիւնները, անոր արժանապարտ եղբայրները՝ ամբոխով ծածկուած են: Եպիսկոպոսը եկեղեցական գաւանութոյ կ'ենթարկէ, և ամեն մարդ հառաչելով կ'ըսէ, Թշուառ մըն է. և հոս կը լինայ ամեն բան: Իր վարմունքը և օրինակը ոչ այնչափ գայթակղելի են՝ որչափ որ ղղուելի: Անտարակոյս ինքը եկեղեցւոյ անտանելի չարեաց պատճառ է. երբեմն այնպիսի պաշտօններ կը վարէ, որ միայն սուրբ քահանայից կը վայելէ, անուանաձայ առանց նեղութիւն մը զգալու՝ կը թողու որ խեղճ հոգիներ գժոխոց կերթան: Իւր պաշտօնը այն աստիճան անպատուղ է, որ մահուան պաշտօնն կը նմանի, Աստուծմէ անիծուած ու գատապարտուած: Ո՛հ, այս ամենը շատ ճշմարիտ է, բայց իրական գայթակղութեան նկատմամբ, այսինքն իւր ժանտաբեր չար օրինակներով՝ զուրկ ընելուն ալ առ

չարն մղելու համար, իւր գործած չարութիւնը, կը կըքնինք, այնչափ ընտանեկար չէ՝ որչափ որ կը կարծուի: Աչխարհքիս մէջ իրենք զիրենք ծանր անկարգութեանց տուած մեղաւորները, որոնց վրայ վերը խօսեցանք, շատ աղէկ գիտեն որ հրատարակուած մեղաւոր են, և իրենց ընձեռակից քահանայ մըն ալ ըլլալուն համար չեն կարծեր որ Աստուծոյ սուրբ օրէնքը անպատկառաբար անալ գելու իշխանութիւն ունենան: Գրեթէ ամենքն ալ պիտոր չարունակելին իրենց ամենաչար ընթացքը, առանց ապիրատ քահանային գայթակղութենէն չար օրինակին նայելու, զոր իրենք ալ միաներուն պէս կ'անարգեն:

Բայց ասոնցմէ տարբեր են քանի մը ըստ ինքեան թերեւ մեղքեր, զորոնք ուրիշ բանի մէջ բարի օրինակ եղած քահանայք սովորաբար կը գործեն, և զորոնք ոչ ոք կրնայ համարձակիլ գայթակղելի կանչել, ըստ բաւին ապեղ իմաստին:

Այն մեղքերը մեծ յանցանք չ'ըլլալով վերը յիշածներուս չափ սոսկում չեն պատճառեր. և երբոր ժողովուրդը կը տեսնէ որ բարի համբաւ ունեցող քահանայք ալ առանց խղճի կը գործեն, դիւրաւ կը համոզուին, որ այնչափ ծանր պիտոր չ'ըլլան, և այնչափ ալ խղճահարութեամբ ղգուշանալու չէ: Ասկից մեծ չարիք մըն է, և ծանրագոյն չարեաց ալ աղբիւր մը:

Սակայն երբեք չի մոռնանք որ ամեն բանի մէջ պարտաւոր ենք բարի օրինակ տալու, ոչ միայն գայթակղութեամբ զԺողովուրդը աս չարն չի ձգելու համար, այլ նաև զԱստուած փառաբանելու, մեր պաշտօնին պատիւը և աղգեցութիւնը աւելցընելու, մեղաւորները փրկելու, արդարները միշտ աւելի ևս սրբութեան մէջ յառաջ տանելու համար: Ուստի այն ամեն ինչ՝ որ վարմունքներուն մէջ արդիք կ'ըլլայ սրբագործութեան այս պատուիրներուն չարաւոր յառաջ գալուն, պէտք է որ մեկդի ձգենք և ուղղենք, սուրբ Առաքելոյն պատուիրածին համաձայն. « Պարտ է ... անարատ լինել... արթուն, հեզ, ցած, պարկեշտ, հիւրասէր, ուսուցիչ. մի թիւնամանող » (ըստ լատ. մի գինեսէր), « մի հարկանող,

այլ հանգարտ. մի կռուող, մի արծաթասէր »[1], և այլն:

Գիտենք ուրեմն թէ արդէօք բարի օրինակ տուող, մեկ խօսքով, Աստուածէն ուղածին պէս « անըստգտանելի » քահանայ՞ էնք:

213. Մենք պէտք է որ բարի օրինակ տանք մեր անձին բոլոր արատաբին վարմունքով: Հաւատոյ, յուսոյ, սիրոյ, խոնարհութեան նեղբին նեղդործութիւնները երբեք բարի օրինակ չեն ըլլար ընկերներուս. ինչո՞ւ համար: Վասն զի չեն տեսներ, միայն Աստուած կը տեսնէ զանոնք: Սուտգիւս այս նեղդործութիւնները անուղղակի կերպով կ'օգնեն հաւատացելոց չինութեան, անոր համար որ բարի օրինակ տուողին սրտին մէջ կը պահեն այն առաքինութիւնները, որոնց արգիւնքն է այն նեղդործութիւնը՝ որով այս առաքինութիւններն ալ արտաքուստ յայտնուելով՝ բարի օրինակը յառաջ կու գայ: Բայց չնաակը զուրցելու համար, այս նեղդործութիւնը ըստ ինքեան չի կրնար բարի օրինակ ըլլալ: Կը կրկնենք. արատաբին տեսքն է որ կը չինէ:

Քահանան պէտք է որ եկեղեցւոյ մէջ ամէն առաքինութեանց կենդանի և երեւելի օրինակը ըլլայ: Այնպէս պէտք է ըլլայ, որ ղինքը տեսնողները և լսողները սոսկալուն ըսելու, թէ տհաւասիկ սուրբ քահանայ մը: Եթէ այնպէս վարուինք՝ որ մեկ բանի մը մէջ ալ այս գովեստին արժանի չ'ըլլանք, անտարակոյս վրանիս ուղղութեան և նորոգութեան կարօտ բան մը կայ:

Մենք կրնանք երբեք կեանի վերածել այս ամէն ինչը՝ որ քահանայի մը վրայ կրնայ ընկերին բարի օրինակ տալ,— իւր արատաբին անձը,— իւր խօսքերը,— և իւր գործքերը —: Այս երեք յարաբերութեամբ ալ ընկերներուս բարի օրինակ կու տանք: Տեսնենք:

Ոչ ոք թող զարմանայ եթէ վերը ըսածներս հոսնորէն կրկնելու ըլլանք: Արդէն ակնարկած ենք, հիմա կուտան ըսածնիս՝ յառաջաւանութիւն մեկ համառօտութիւն է:

214. Նախ և յառաջ կ'ըսենք, որ քահանան պարտաւոր է բարի օրինակ տալու իւր «արատաբին անձամբ», որ է ըսել պարկեշտութեամբ:

Պարկեշտութիւնը բոլոր արատաբին վարմանց մեկ վայելուչ, սիրելի և աղեկ կարգաւորեալ կերպարանք կամ տեսքն է: Եւ քրիստոնեավայել առաքինութիւն մըն է, երբ բարեպաշտօրէն ի գործ կը դրուի Յիսուսին նմանելով, և անոր հաճոյանալու համար:

Երբ պարկեշտութիւնը ըսածներուս պէս կ'ըլլայ, մեկ հատիկ միջոց մըն է բարի օրինակ տալու համար: Ովոր զայն կը տեսնէ, կ'ըսէ Իննովիկենտիոս Ե. Սրբազան Քահանայապետը, բանի սխալուած է անոր հետեւելու. «Տեսողացն գաղափար և օրինակ »: Պարկեշտութիւնը, կ'ըսէ Լաւերանեան Ժողովքներուն մեկը, մշտաւոր և վրկութեան պատուիրերով առատ քարոզութիւն մըն է. « Յարատեւ քարոզ վրկութեան »: Անով քահանան աստուածային Փրկչին կատարեալ նմանող կ'ըլլայ, այսինքն ամենայն կատարելութեանց կատարեալ օրինակին. « Օրինակ ամենայն սրբութեան, և կանոն ամենայն առաքինութեանց »:

Սուրբ քահանայի մը պարկեշտութիւնը՝ աշխարհքիս մէջ ամենագեղեցիկ և ամենաթաղցր բան մը կ'ըլլայ: Ամբարիշտներն անդամ չեն կրնար չը նկատել ծածկուած առաքինութիւնը, և որչափ որ կը նախատեն զանպարկեշտ քահանան կծու խօսքով այնչափ ալ կը գովեն և կը զարմանան պարկեշտ քահանային վրայ:

Պարկեշտութիւնը ոչ միայն ընկերին չինութեան զօրաւոր միջոց մըն է, այլ նաև ուսնեցողին ալ սրբութեան աղբիւր մը. անանկ որ Հայր Կիւրթի ամենահռչակ հոգեւոր վարդապետը, տասը երեսէն աւելի գրեց յայտնապէս այս ճշմարտութիւնը յուցնելու համար, որ « միայն պարկեշտութիւնը զօրաւոր միջոց մըն է կիրքերուն յաղթելու համար »:

215. Պարկեշտութեան առաքինութիւնը մարդուս բոլոր արատաբինը կ'ամփոփէ, կը կարգաւորէ, կը կառավարէ, կ'աշխատասիրէնէ և բարութեան ու գեղեցկութեան ամբողջութիւն մը կը շահի, որ ամէն բան

1 Ա. Տիմ. գ. 2:

պարկեշտ անձին վրայ հաձելի է, ու անախորժ բան մը չ'երևիր. բարութեան, հեզութեան, անկեղծ պարզութեան, արժանապատուութեան, անմեղութեան, համեստութեան, բարեխառն ուրախութեան, և սիրելի ծանրաբարոյութեան չափաւոր և կատարեալ համեմատութեամբ բաղադրութիւն մըն է:

Աչքսիկի քահանայք տեսնուածնուն պէս՝ իսկ և իսկ այլոց սէրը, յարգութիւնը, համարումը և վստահութիւնը կը գրաւեն: Մեր պարկեշտութիւնն ալ առանիկ է: Տեսնենք:

Ինչպիսի՞ է մեր արտաքինը իւր ամբողջութեան մէջ: Ընդհանրապէս ինչ տեսակ ազդեցութիւն կը կարծենք որ ընկ հետերնիս կենցաղավարողներուն վրայ: Աչք հարցմանց ձիշտ պատասխանը մեզի իսկ տալը շատ դժուարին է: Մենք այնչափ քիչ կը ճանչնանք ըզմեզ, այնչափ քիչ կը տեսնենք, մեր պակասութիւնները տեսնելու անտնկ կայր ենք, որ շատ անգամ այնպիսիներէ կ'ուսնենանք՝ որ ամենքը կը տեսնեն, ինչ որ մենք չունենալ կը կարծենք: Ո՛րչափ հարկաւոր և ազնիւ բան կ'ըլլար, եթե ամբարտաւանութիւններնիս ներքը, որ անկեղծ և ազաւաքինի բարեկամ մ' ունենայինք, որ առանց չողոքորթելու՝ բոլոր պակասութիւններնիս բանար և զուրկեր մեզի. բայց որովհետև մինակ ենք, գոնե մենք մեզի ուշադրութեամբ խորհրդածենք, և կարելի եղածին չափ նպատակներուս շուտով հասնելու ջանանք:

216. Երբեք զննած կամ լսած չէ՞նք որ հետերնիս վարուողները՝ քիչ մը վախով և կասկածով կը մտենան մեզի. եթե հասկընանք որ գործը իրօք այսպէս է, հաւաստեաւ հետևցընենք, որ վարմունքներուս մէջ կամ խստութիւն մը, կամ արհամարհողական ձև, կամ պաղութիւն մը, կամ դառնութիւն մը, կամ կեղծեալ ծանրութիւն մը, և կամ չափազանց գժնդակութիւն մը կայ. և յարատև ուշադրութեամբ հսկենք վրանիս, որպէս զի ինչպէս որ պէտք է՝ ուղղենք արտաքին վարմունքնիս:

Բայց եթե տեսնենք որ չափին աւելի ընտանութիւն կը գործածուի հետերնիս, և առանց ղմեզ վրայ

ընելու ակնածութեան՝ անտեղի և անյարմար կատակներ կ'ընեն հետերնիս, անպատշաճ աղաւութեամբ կը վարուին, որոնց չի կրնար համբերել կատարեալ պարկեշտ քահանայ մը, հաստատ գիտնանք որ ծանրաբարոյութենէ և խոհեմութենէ զուրկ ենք. ամեն չանքով ջնջենք, և պիտոր տեսնենք որ վարմունքներուս մէջ չափին աւելի անհոգութիւն, թափթփկածութիւն, թեթևութիւն և թուլութիւն կայ, որոց ամենքն ալ անհամոյ են պարկեշտութեան, որով և նորոգութեան ալ կարօտ:

217. Ուղղակի կամ անուղղակի ակնարկներուս դիպած է որ չափին աւելի մաքրութեան հոգ կը տանինք. վարմունքներուս, մտքերուս և բոլոր անձերուս վրայ այնպիսի բաներ կը տեսնուին որ պարզութեան հակառակ են: Ստոյգ գիտնանք որ չափին աւելի հոգ կը տանինք գեղեցիկ երևնալու, որ այնպիսի ընդունայնութեանց եռանդն կ'երթանք, որոնք թէև աշխարհականաց ներելի են, բայց ոչ երբեք քահանայից:

Ընդհակառակն, եթե գիտնանք որ ընդհանրապէս վրանիս կը խնաման ըսելով՝ որ վայելչութեան հակոտնեայք կրնանք ըսուիլ որ հագուստներուս պարզութիւնը ան աստիճան չափն անցած է՝ որ աղտեղութենէ տարբերութիւն մը չունի, յորմէ ամենքը կը զզուին, որ առաքինութիւն մը չէ, այլ պակասութիւն, հեռու կենանք այսպիսի ծայրայեղութիւններէ, և առանց պճնասիրութեան գառնալու, պարզ ըլլանք՝ բայց մաքուր, վնճակներուս վայելուչ զգեստներ գործածենք, այնպէս որ տեսնողները չ'ըսեն, թէ տեսնք պճնասիրութիւնը, կամ ջնջեցնէք ասոր աղտոտութիւնը. այլ ամենքն ալ ըսեն. շատ վայելուչ է, այսպէս աղնիւ է:

218. Լսեցինք որ ոմանք նայուածքներուս մէջ քիչ մը հետաքրքրութիւն կը դտնեն, որ աչքերնիս խուզարկու և անպարկեշտ է: Գիտցանք որ ատով զմեզ թերեն, ցնդած, անհոգ և ունայնասէր քահանայի տեղ կը դնեն. ամասպարեանք շուտով հասարակութեան կարծիքն փոխել տալու, ուղղելով այն ամեն բան՝ որ ատանկ խօսքերու

առիթ առած է, և աչքերնիս սուրբ քահանայի յատուկ ձիրք եղած՝ ջերմեռանդ պարկեշտութեամբ և չնչին կարգով պահպանելնիք:

Իսկ ընդհակառակն տեսանիք որ ժողովուրդը զմեզ շատ ամիսներուան, և աչքերնիս զպահելու չափազանց խըստութիւնը՝ անտեղի և տհաճոյ ձարտարութիւն կը կանչէ. Թող տանք որ պարկեշտութիւնը « թևեթև » ամենաթևեթև կերպով դարմանէ այս ծայրայեղութիւնը, այնպիսի ամիսներու մէջ մնանք՝ որ օրինակ ըլլանք այլոց. և ծայրայեղութիւններէ զգուշանանք, որոնք միայն խնտալու առիթ կու տան:

219. Ըսուեցաւ մեզի երբեմն, կամ հասկըցուցին որ շարժուածքներուս, դնացքներուս և բոլոր արտաքին վարմունքներուս մէջ ընդհանրապէս պճնասէր, բարձրամիտ, չինծու զարդարանքներու տրուած և փոքր ան ձերնիս պահուռնելու զբաղած ըլլանք: Այսպիսի ազդարարութեան օդուտ քաղենք, և այն ցանկալի պարզութեան գառնանք՝ որ աշխարհք, նոյն իսկ բարեկիրթ աշխարհքն ալ կը պահանջէ քահանային վրայ տեսնելու, զանիկայ յարգելէն և պատուելէն յառաջ:

Բայց եթէ գիտնանք որ հաւատացեալները մեր յիմար վարմունքներովը, ամբարտի և գոռհնկ կերպերովը, անվայել և անարժան դնացքներովը կը զուարճանան, ընդհանրապէս թափթըփած և շրխնաի կանչելով զմեզ. այս պակասութիւնիս ալ պարկեշտութիւնը ուղղէ, և այնպէս ընէ՝ որ ամէն մարդու և ամէն տեղ կարող ըլլանք ներկայանալ, ամենուն միայն յարգութիւնը, մեծարանքը և չնորհութիւնը գրաւելով:

Բարի օրինակի նկատմամբ զոր պարտաւոր ենք ժողովրդեան տալու մեր արտաքին վարմունքով, ասոնք են դլխաւոր կէտերը, որոնց վրայ հարկ տեսինք պնդելու:

220. Երկրորդաբար ըսինք որ « խօսքերուս մէջ » պարտաւոր ենք բարի օրինակ տալու:

Ծանր և աշխատելի նիւթ մըն է ասիկայ, որուն ձեռք կը զարնենք, ըստ որում լեզուն ինչպիսի՛ անկարգութեանց գործիք մը չէ:

Յայտմասին այն ատենները բարի օրինակ մը տալու պարտաւոր ենք, որ ամենքն ալ ատիպտուին մեզի համար այ ըսելու՝ ինչ որ կ'ըսէին աստուածային Փրկչին վրայ. « Եւ զարմանային ընդ բանս չնորհացն, որ ելանէին ի բերանոյ նորա »[1]: Ասանկ է: Տեսնենք:

Մեր խօսքերով այլոց բարի օրինակ տալու համար՝ ուղղելիք առաջին պակասութիւնիս՝ շատախօսութիւնն է: Անյոգնելի շատախօս քահանայք կը գտնուին, որ ընկերութեան մէջ այլոց և ոչ մէկ խօսք մը զուրցելու կարդ կու տան: Ինչ կ'ուզէ ըլլայ խօսքին նիւթը, իրենց միայն կը սեպհականեն և վրայ կու տան, կը վիճեն, կը կռըւտեն, ամէն կողմէ կը շրնեն և թոյլ չեն տար որ ուրիշներն ալ իրենց կարծիքը զուրցեն: Եւ ուզածնուն չափ խօսելէն վերջը՝ ուրիշ նիւթի վրայ կը գարձընեն խօսքերնին նոյն տեսարանով: Եթէ պատահմամբ ուրիշ մը խօսքերնին կտրելու ըլլայ, առիթը եկածին պէս գոռձեալ կը սկսին, բայց գրեթէ քառորդ մը դլուխ ցաւցընելու չափ շաղակրատ յառաջաբանութեամբ մը: Սակայն երբեք ամենևին խիղճ չեն ըներ ուրիշին խօսքը ընդհատելու. և ըստ որում իրենք ալ կը հանկրնան ըրած անքաղաքավարութիւնին՝ իրրև փակագծեալ դէպք մը մէջտեղ կը ձգեն, բայց այս փակագիծը անդամ մը բացուած, միայն Աստուած գիտէ թէ ուր տեղ կրնայ դոցուիլ: Որչափ ալ եղբայրասէր ըլլան ունկնդիրները, այսու ամենայնիւ չեն կրնար, կամ շատ դժուարաւ կընան զսպել իրենց մտածմունքը՝ որ այսպիսի անհամ « շատախօսութեան » տակը ունայնասիրութիւն մը ծածկուած սկսաւ ըլլայ, և գովեստ լսելու գաղտնի բաղձանք մը, որ շատ անգամ պարապի կ'ելլէ: Եւ իրօք շատախօսներուն չաղխաղխութիւնները գովեստէ չատ աւելի գառամանց կ'ենթարկուին. և իրենց պակասութեան տգեղութիւնը այնչափ աւելի յայտնի կ'ըլլայ, երբ ընկերութեան մէջ գտնուած իրենցմէ տարբերով մեծ և աւելի գիտնական երևելի մարդիկ՝ այնչափ աւելի սակաւախօս ըլլան՝ որչափ որ իրենք ձոռոմաբան են:

1 Ղուկ. Դ. 33:

Ցայտնի բան է որ այսպիսի ծայրայեղութիւն մը դարմանի կարօտ ըլլայ, և կայր կ'ըլլար այսպիսի տաղտկալի չառաքոսութիւն մը չափաւորելու անանձնիւնելի հարկաւորութիւնը չի տեսնողը. անշուշտ մեկ ծայրէն միւսը անցնելու չէ, անանկ որ բերանը գոցելով կատարեալ լռութիւն մը՝ խօսակցութեան աշխոյժը բոլորովին մարէ. ըստ որում թէև ասկից միւսէն չատ աւելի թեթև պակասութիւն մըն է, այսու ամենայնիւ միշտ պակասութիւն է, ուսաի և խորշելի: Չափաւորութեամբ և ըստ պատշաճի խօսինք, երբեք մտքերնիս չը հանելով Իմաստունին առածը, թէ « Ամենեցուն ժամանակ է... ժամանակ լռելոյ, ժամանակ խօսելոյ » [1]:

221. Քահանային ամենայն վրեթով զգուշանալու պակասութիւններէն մեկն ալ խօսակցութեան մէջ բռընկիլը, չափէն աւելի ձայնը բարձրացընելը, և վարգապետական ու պերճաբանական կերպով ձեխանալն է. մեկ խօսքով, այն ամէն բան՝ որով խոհեմ չափաւորութեան դէմ կրնայ մեղանչել: — Պարկեշտութիւնը, կ'ըսէ սուրբն Ամբրոսիոս, մինչև անգամ ձայնին ալ միջամուխ կ'ըլլայ, և հնչիւնը կը բարեխառնէ. « Ձհնչիւն իսկ ձայնին կշռէ պարկեշտութիւնն »:

Աչխոյնները կը տեսնուին որ բան մը չեն կրնար ընել այն ամենուն հաճելի պարկեշտութեամբ, այլ երբենց ձայնովը միւսներուննը կը խզդեն. և այն բաներն ալ որ քաղցր և խաղաղ կերպով պէտք էին զուրցել, նոյն բարձրաձայն եղանակաւ կը շարունակեն: Այսպիսի պակասութիւն մ'անկրթութեան արգիւնք ըլլալէն զատ, որ զզուելի է միշտ բարեկիրթ անձանց, յայտնի է որ այն կերպ խօսուածքով ամէն բան կրակոտութեամբ կ'ըսուի, որով ապացոյցներս անգամ երբենց զօրութիւնը կը կորսընցնեն:

Երբեմն եկեղեցականաց բամբասելու ընկերութեան մէջ կը գտնուին այնպիսիները, որ հոս վերը նկարագրուած պակասութեան դերն են, ան աստէն որ գեղեցիկ տեսարաններ կը ներկայացուին. ըստ որում իւրաքանչիւր ոք

1 Ժողովող. Գ. 1, 7:

բորբոքուած խօսելով լեզուակռիւ մըն է կը բռընկի. ով կրնայ համրել ամէն կողմանէ անձրևի պէս թափուած խօսքերը և փսփսուքը: Ա՛լ խօսակցութիւն չէ. հապա աղէկոծութիւն մը, որուն զոհ կ'ըլլայ պարկեշտութիւնը: Մենք ալ այսպիսի տեսարաններուն ներկայ գտնուեցանք, և ականջնիս դեռ ևս կը յիշեն զանոնք. իրաւ որ այսպիսիներէն չորս հատ շատ աւելի աղմուկ կը հանեն, քան թէ քսան հատ պարկեշտ և բարեպաշտ քահանայք:

Սուտգիւ տատուերկու առաքեալներէն շատ աւելի աղմուկ կը հանեն, որոնց Յիսուս ատուածային Վըրէպը, անոնց հետ ըրած խօսակցութեան առեն: Ո՛հ, մեր փրկչին խօսակցութիւնները միշտ սուրբ պարկեշտութեամբ կառավարուած էին, բայց մերինները ոչ:

222. Ի՞նչ ըսենք հապա այն խօսքերուն վրայ, որոնք ոչ միայն անվայել են, այլ նաև չար:

Սուտ կամ գռնի չափազանց խօսքեր, որոնք շուտ թէ ուշ յայտնուելով՝ եթէ ոչ բոլորովին, գոնե ըստ մասին կորսընցնելու պատճառ կ'ըլլան այն յարգութիւնը և վստահութիւնը՝ զոր հաւատացեալները պէտք է ունենան իր վրայ, և քահանան ալ ամենայն ուշադրութեամբ պարտաւոր է զանոնք երբեն գրաւելու միջոցները ձեռքէ չի թողլու:

Աչհամարհոտական և գռեհկ զրպարտական խօսքեր, որոնք երբացընէ լսողներուն բարի օրինակ չեն ընծայեր:

Մեծաւորաց և անոնց կառավարութեան վրայ երդիճական և պարսաւական խօսքեր:

Բարձրամիտ, յանդուգն և գրեթէ նախատական խօսքեր, որոնք մի և նոյն աստէն եղբայրսիրութեան, հեզութեան և պարկեշտութեան կը դպչին:

Խեղկատակ և քիչ մըն ալ գռեհիկ ու մեծ խօսքեր, որոնք շատ տխուր աղդեցութիւն պիտոր ընեին սրբոյն Բեռնարդոսի սրտին, որուն համբաւաւոր է այս առածը. « Բաչաղանք ի բերանս աշխարհիկ անձանց՝ բայց զանք են, այլ ի բերանս քահանայից՝ հայհոյութիւն »:

Դառն, պատիր, անուռի և ուրիշ շատ մը տեսակ խօս-

.քեր, որոց նկատմամբ համար պիտոր տրուի Աստոր, որ չէ Թէ միայն քահանայից՝ այլ նաև հաւատացելոց ալ կ՚արգելու ամէն դատարկ և ընդունայն խօսք լսուելու. « Ընդ ամենայն դատարկ բանի՝ զոր խօսեցան մարդիկ տացեն համար յաւուրն դատաստանի »[1]:

Որչափ ուղղուելու բաներ, որչափ զգուշանալու գայթակղութիւններ, որչափ աշխատանք՝ այսպէս Թէրի քահանայի մը համար, եթէ ամէն կերպիւ ուզէ հաւատարիմ մնալ Աստուծոյ պատուէրին. « Օրինակ լինիջիր հաւատացելոց »[2]:

223. Քահանայից պարտք եղած բարի օրինակ տալու օրինաց դէմ, նաև եռանդեամբ և շահախնդրութեամբ աշխարհային ելից, անցուդարձած լսոց, աշխարհական նաց յատուկ ուշացնութեանց, և ուրիշ շատ մը չլսմանութեանց վրայ խօսիլը, որոնց վրայ աշխարհականները հոգ կը տանին, բայց քահանայք ամենևին բանի տեղ դնելու չեն:

Սուրբ քահանան աշխարհականաց ընկերութեան մէջ գտնուած ատենը, այսպիսի նանրութեանց վրայ եղած խօսակցութիւնը՝ խոժոռութեամբ չընդհատեր, և ոչ ալ չափն աւելի խստութիւն կը գործածէ, կամ լռութիւն կը հրամայէ, որ իւր ընկերաց անպատեհ յանդիմանութիւն մը պիտոր ըլլար. այլ այնպէս կը վարուի՝ որ քովիններէը հասկընան, որ միայն քաղաքավարութեան համար և ակամայ կը խառնուի այն տեսակ խօսակցութեանց, և ոչ Թէ սրտի յօժարութեամբ. և խօսքին նիւթը փոխելու առիթը ներկայացածին պէս՝ առանց մէկը վշտացընելու՝ շատ մը քաղաքավարութեամբ և շուտով կը փոխէ, և միշտ ալ պատրաստ կը կրէ խօսելու և քննելու աւելի հարկաւոր և աւելի օգտակար նիւթեր:

224. Ան տեսնեն ալ սուրբ քահանան բարի օրինակ կու տայ, երբոր խօսակցութեան մը հրաւիրուած, և գրեթէ պարագաներէն ստիպուած ըլլայ: Եթէ վէճը կարևորութիւն մը չունի, յաղթութեան փառքը ընկերին նուիրելով կը լինցընէ: Իսկ եթէ ճշմարտութիւն,

1 Մատթ. ԺԲ. 36:

հաւատք, առաքինութիւն, յանուն Աստուծոյ փառացը կը պահանջեն որ իւր կարծիքը յայտնէ, համարձակաբար և պարկեշտաբար կը ղեկցէ. և Թէ որ իւր պատշաճ փաստերովը հաստատուած կարծիքը ղեկցելէն վերջը, կը տեսնէ որ դիմացինը չի համոզուիր, կը կարէ պարապ վէճը, աղէկ գիտնալով որ կրքոտ վէճ մը երբէք չի համոզեր զայնպիսին՝ որ հեզութեամբ և պարկեշտութեամբ ըսուած ճշմարտութեան դէմ կը դնէ: Երկբայական և քննելի նիւթերու վրայ եղած վիճաբանութեանը, կամ մանաւանդ, ինքը իւր երկբայութիւնը՝ իբրև երկբայութիւն կը յայտնէ, և կը զգուշանայ իբրև ստոյգ ճշմարտութիւն այլոց կլլեցընելու զայն, որ իրեն համար ալ այնպէս չէ: Հոս ալ ինչպէս նաև ուրիշ բաներու մէջ ալ, միշտ բարի օրինակ տալու բաղձանքն է՝ որ սուրբ քահանային խոհեմ և ընդհանուր կերպերը գործածել կու տայ:

225. Նմանապէս մի և նոյն բաղձանքն է, որ կը յորդորէ և կը համոզէ զսուրբ քահանան զգուշաւոր ըլլալու իր խօսակցութեան մէջ, և չը կշռուած խօսք մը բերնէն դուրս չի հանելու, ըստ սրբոյն Օգոստինոսի գեղեցիկ առածին, Թէ « Անմեղ բան նախ 'ի վերայ խարտոցի քան 'ի վերայ լեզուի փորձեսցի »: Զոր չեն ըներ անոնք, որ միշտ չսապեղով խօսելով՝ նեղութեր կը ձգեն, և յետոյ ըրած անպարմանելի չարութեան վրայ կու լան:

Վերջապէս սուրբ քահանային իր սրտին մէջ զգացած բոլոր աշխարհքի բարի օրինակ տալու հարկաւորութիւնն է, որ այնպիսի զգուշութեամբ լեզուին վրայ հսկել կու տայ, անանկ որ բերնէն բառ մը չի փախցընէր՝ որ քաղաքավարութեան դէմ և կամ ուրիշ ինչ և իցէ սաքինութեան մը հակառակ ըլլայ, երեն պարտք սեպելով այնպիսի խօսք մը չարտաբերել՝ որ այլոց բարի օրինակ չըլլայ:

Երջանիկ, երիցս և չորիցս երջանիկ այն քահանան՝ որ սանկ կը վարուի, և այսպիսի զգուշութեամբ և պարկեշտութեամբ կը կառավարուի: Աստուածմէ օրհնուած է, Յիսուսի Քրիստոսի սիրելի պաշտօնեայ է, մարդկի ալ ընկեր կը սիրուի և կը յարգուի. ինքն իր անձին

հետ ամենաքաղցը խաղաղութեան մէջ կը գտնուի, ալ ինչ ըսենք: Այս կատարեալ է, վասն զի այնպիսեաց կարգն է, որոց համար Հոգին սուրբ ըսաւ. « Եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ, նա է մարդ կատարեալ » [1]:

226. Երրորդաբար « գործքերուս մէջ » պարտաւոր ենք բարի օրինակ տալու:

Հոս ամենքն ալ կը տեսնեն որ նեւրքը անչափ կ'ըլլայ, եթէ մանրամասնաբար քննելու ըլլանք: Եթէ քահանան ոչինչ կամ քիչ բան ընէ, ծուլութեան գայթակղութիւն կու տայ. իսկ եթէ բան մ'ընելու ըլլայ, ըրած բանուին ալ բարի օրինակ տալու պարտաւոր է:

Ժողովրդապետութեան մը մէջ շատ քիչ անձինք կը գտնուին, որոց արտաքին վարմունքը այնչափ ծանօթ ըլլայ հասարակութեան՝ որչափ որ քահանայինը, մանաւանդ փոքր քաղաքներու և գիւղերու մէջ: Որովհետև ինքը աշխարհածանօթ մէկն է, հասարակութեան երեւելի և ծանր գործոց ղեկաւած, որովհետև շատ մը պարագաներու մէջ ամենէն կարևոր մարդն է, որովհետև իւր պաշտօնին բերմունքէն անթիւ բազմութեան մը հետ ուղղակի յարաբերութեան մէջ է, կրնանք ըսել որ ամենուն աչքը անոր վրայ կը տնկէ, և այնչափ են իր գործոց դատաւորները՝ որչափ որ են իւր պաշտօնը վարած քաղաքին կամ գիւղին բնակիչները: Եթէ անարատ և սուրբ վարքով բարի օրինակ տալու ըլլայ, ամենքն ալ զարմանալով կը գովեն զինքը. բայց եթէ ընդհակառակն մէկ բանի մը մէջ ալ գայթակղութիւն տալու ըլլայ, չարերը զինքը կ'անարգեն և կը խայթեն, բարիները կը տխրին, գաղտնի կերպով կը հառաչեն և անոր վրայ ունեցած յարգութիւննին ու վստահութիւննին կը կորսընցնեն:

Մեր գործքերը այս երկու զգայմունքներէն ոմանք պատճառ են հաւատացելոց մէջ: Ասկից գիտնալու համար, հարկ կ'ըլլայ երկու պակերը տուեբերակրել, մեկը բարի օրինակ տուող քահանային, և միւսը գայթակղութիւն տուողին:

227. Առաջինը, ինչպէս ըսինք, իւր պարկեշտ և

1 Յակ. գ. 2:

շնորհալի վարմունքովը և կենցաղավարութեամբը չարաչար կշտամբանաց ձեռքէն ղինքը թաւիլ կու տայ, և չարերը անգամ զինքը կը մեծարեն: Բայց ըստ որում հասկնալի է, որ այս երկու առաքինութիւնները իրեն ըստ հարկին բաւական պիտոր չըլլան՝ եթէ միւս առաքինութիւններով ալ զարդարուած չ'ըլլայ, ուշադրութեամբ կը հսկէ որ չարերուն իր վրայ չար խօսելու առիթը չի տայ:

Աստուածպաշտութեան մէջ այնչափ եռանդուն է, որ ամենուն բարի օրինակ է, և հաւատացեալները զինքը իր պարտուց հաւատարիմ, եկեղեցւոյ մէջ պարկեշտ և ամիսով մտօք տեսնելով, ուր երկար ժամեր խորանին առջև կ'անցընէ յերեկոյեան երկրպագութիւն ամենասուրբ Հաղորդութեան, պատշաճ արժանաւորութեամբ մատուցած սուրբ պատարագը և միայն ժողովրդեան մէջ աստուածպաշտութիւնը հաստատելու զբաղմունքը տեսնելով, ամենքն ալ զարմացած կ'ըսեն. ահաւասիկ սուրբ քահանայ մը:

Ինքը բարի օրինակ կու տայ իւր պաշտօնին պարտաւոր գործադրութեամբը: Երբ տեսնելու ըլլան որ սուրբ եռանդով բորբոքուած՝ կ'աւետարանէ ժողովրդեան աստուածային պատգամները, զղջայքը կը կրծէ քրիստոնէական վարդապետութեամբ. երբ կը տեսնեն ապաշխարութեան առեանը չարունակ նստած՝ զամենքն ալ հաւասար մարդասիրութեամբ ընդունելու և սրբելու. երբ կը տեսնեն որ հիւանդաց համար բոլորովին սէր է, և ջերմեռանդ ու վեհ վարմունքով սուրբ խորհուրդները կը մատակարարէ. երբ կը տեսնեն որ առաջին նշանին ամենայն փութով կ'երթայ ուր որ իւր հովուական պարտքը կը կանչէ զինքը, ան առեղը բոլոր ժողովուրդը միաբերան կ'ըսէ. ահ, ինչպիսի սուրբ քահանայ մ'ունինք:

Ինքը բարի օրինակ կու տայ իւր անշահախնդրութեամբը, մանաւանդ եթէ իւր առատաձեռն գթութեամբը: Ի՞նչպէս կրնայ ըլլալ որ տեսնեն իւր հիմնած բարեպաշտական գործքերը, միշտ պատշաճ վայելչութեան մէջ պահուած եկեղեցին, տուած հոգևոր կրթութիւն-

նեբը, յօժարութեամբ կրած զրկողութիւններըը, իր քահանին ծախքով ըրած ծառայութիւններըը, իր իրաւունքը կամ պաղին պաշտպանելու և ուղելու անհոգութիւնը, այցելած և առատաձեռնութեամբ օգնած աղքատներըը տեսնեն և չի կանչեն, թէ ահաւասիկ աղքատաց հայրը, ահաւասիկ սուրբ քահանան:

Ինքը բարի օրինակ կու տայ իւր վարուց անբիծութեամբը և մաքրութեամբը: Մինչև հասնիս մինչև ցկնշաձարութիւն իւր ամէն խօսքերուն մէջ, մինչև ներմուծանդաբար երկիւղ և ղգաստ իւր նայուածքին մէջ, մինչև թշնամի կասկածելի ընկերութեանց, մինչև ծանր և սրբաբար խոտակեաց կանանց հետ հարկաւոր յարաբերութեանց մէջ ալ, մինչև ցյետին աստիճան խոհեմ անունց երբեմն հարկ եղած թղթակցութեանց մէջ, մինչև զգոյշ զանոնք իր անձէն՝ իւր արժանաւորութեամբ և վարմանց պարկեշտութեամբը՝ քիչ մը հեռու պահելու, ինքը գուցէ ազանց մտածելու՝ իրեն հաւատարմաբար ի գործ դրած առաքինութեանց ամենագեղեցիկ նեբրողը կը չինէ. և այսպիսի հրեշտակային մաքրութեան մը առջին՝ ցոփագէացն ալ յարգանօք կը խոնարհի և միաներուն հետ կ'ըսէ, ահաւասիկ սուրբ քահանայ մը:

Ինքը բարի օրինակ կու տայ ժուժկալութեամբ: Արդէն իր բնական տեղը իւր սահաւասպիտութեան համբաւը կը քալէ. կերակրոյ մէջ ինքնիրեն դրած վայելուչ չափաւորութեան կանոնին հաւատարիմ, այնչափ հեռու թէ հեշտասէր մարդուն շքեղ սեղանին, թէ ագահին ազահեղի կծծութենէն, թէ իր և թէ այլոց տան մէջ արտաքոյ կարգի կոչունքներու ոխերիմ թշնամի. միշտ գիտող՝ որ իրեն հետ գանուած աշխարհականներէն աւելի չափաւոր ըլլայ, մանաւանդ ոգեվից ըմպելիքներու գործածութեան մէջ ամենաչափաւոր, որոց եթէ մեկը չը զգուշանայ՝ ամենաանձ և ողբալի դիւրութեամբ կը վարժի. միշտ զգոյշ՝ որ չըլլայ թէ խօսքով կամ շարժմունքով բորբոքիչ կերակրոց չափազանց սէր մը ցոյց տայ, ինքը իւր օրինակովը ժուժկալութեան գործնական դաս մը կու տայ շատերուն. մանաւանդ թէ ամէն ինքը տես-

նողներուն, որոնք յետոյ սրտերուն մէջ կ'ըսեն. իրաւ որ ասիկայ բարի քահանայ մըն է:

Ինքը բարի օրինակ կու տայ իւր կարգաւորեալ կեանքով, ուսումնասիրութեամբ և առանձնասիրութեամբ: Արդէն գիտեն ինքն իրեն դրած կանոնաց հաստատմութիւնը, գիտեն որ ուսմունքը իրեն ամենասիրելի է, և սուրբ աշխոյժով մը կը զբաղի. գիտեն որ առանձնութիւնը իրեն զբօսանքն է, անանկ որ մեծ հաճութեամբ քաշուած կը մնայ, առանձնութեան խաղաղութեան մէջ նոր առաքինութիւն մը վիճաբելով որով կարող ըլլայ աւելն ևս նեբքին միութեամբ իր Աստուծոյն հետ կապուիլ, սիրոյ Աստուածը՝ որ միայն առանձնութեան մէջ կը գտնուի. գիտեն որ իր կանոնին դէմ չի պահասիր, ուսմունքէն չի հեռանար, եթէ ոչ երբոր Աստուծոյ փառքը, հոգւոց փրկութիւնը, իր պաշտօնին պարտաւորութիւնը և համբաւոյն քաղաքավարութիւն մը հրամայեն. բայց նոյնպէս գիտեն որ իր գործը լինցընելով իր կանոնին, ուսմանց և առանձնութեան կը դառնայ. ըստ որում վայ (ի'ըսէ ինքնիրեն) եթէ Աստուծոյ տուած ժամանակին մէկ մասը կորսընցնելու ըլլամ, որ անչափ անհամեմատ բան անդին է: Ի՞նչպէս այսպիսի սուրբ վարմունքներու ականատես վկայ ըլլալ ու չի կանչել. ահաւասիկ սուրբ քահանայ մը:

Ինքը վերջապէս բարի օրինակ կու տայ իւր ամէն մարդու հետ ունեցած յարաբերութեամբը, և ամենայն առաքինութեանց հանդիսով որոնք միշտ և ամէն տեղ իրեն ընկերակից են: Բոլոր աշխարհը իր վրայ իշխանութիւն մը չ'ունի, և չի կրնար վնիքը կերպով մը դիպել, և ոչ ալ իրեն ընկերութենէն ի'ախորժի, թէև անոր կոչուքը ըլլայ: Ամենևին աշխարհքի մէջ չ'երևիր, եթէ ոչ իւր մեկ պարտաւորութիւնը կատարելու համար, և միշտ յարգութեան և մեծարանաց մեծագոյն նշանները ի'ընդունի: Իւր սիրելի հեզութեան, ջերմեռանդն աստուածպաշտութեան, բարեկիրթ պարկեշտութեան, չինչ եղբայրսիրութեան, անկեղծ պար-

ղուԹեան, առաքելական նախանձու, հովուական մարդասիրուԹեան, և այն միշտ պատշաճ սահմանի մէջ պահուած անմեղ ուրախուԹեան վրայ կը զարմանան, զոր կը պահանջէ քահանայական կենքոյն պատիւը:

Ինչպիսի՛ ուրախուԹիւն կը պատճառէ ընկերը տեսնելը. մեկնելէն վերջն ալ ինչպէս վերադառնալուն կը սպասեն. և ո՞վ կրնայ արգելուլ որ սրտանց չի կանչեն. ահաւասիկ այր Աստուծոյ, ահաւասիկ բարի հովիւ մը. ասիկայ, ասիկայ սուրբ քահանայ մըն է: Իւր բնական տունը գեռ ևս կը բուրէ իւր առաքինուԹեանց և Յիսուսի Քրիստոսի ամենաքաղցր հոտը:

228. Շատ դժուամակուԹեամբ ձեռնամուխ կ'ըլլանք միւս պատկերին ստուերագրուԹեան, այսինքն դայԹակղեցուցիչ քահանայի մը նկարագրուԹեանը: Ինչպիսի՛ տգեղ ընդդիմակողմ միտքեր, Թէև քանի մը խօսքով յայտնի կ'ըլլայ բարի օրինակին նկատմամբ նկարագրած և հմայ նկարագրելիք քահանայից մէջ գըտնուած անսահման տարբերուԹիւնը:

Այս քահանային համար ալ կրնա՞նք ըսել, ինչպէս որ միւսին համար կ'ըսէինք, Թէ ահաւասիկ սուրբ քահանայ մը: ԵԹէ, զոր օրինակ, աստուածպաշտուԹեան փորձ մը վրան չի տեսնուի, ԵԹէ եկեղեցւոյ մէջ պատշաճ վարմունք մը չ'ունենայ, ԵԹէ սուրբ պատարագը չափազանց շուտուԹեամբ մատուցանէ առանց մտաց ամփոփման և պարկեշտուԹեան:

ԵԹէ ժողովրդապետ կամ հոգաբարձու ըլլալով, շատ ցանցառ քարոզ տար, ԵԹէ ամպիոնը ելլելով հաստատուն և օգտակար բան մը չ'ըսելով, միայն ասոր անոր դպչողական խօսքեր բերնէն վախցընէր. ԵԹէ տղայոց քրիստոնէական վարդապետուԹիւն չի սորվեցընէր, մանաւանդ Թէ չափէն աւելի խստուԹեամբ՝ նախատանքներ կ'անդիմանուԹեամբ, և գուցէ գառն ու դաժան վարմունքով զանոնք իրմէ հեռու վախցընէր, ինչպէս կրնայ ըսուիլ, Թէ ահա սուրբ քահանայ մը:

ԵԹէ յայտնի ցուցընէր որ խոստովանարանը իրեն ձանձրուԹիւն կու տայ, ուր յաճախ կ'երԹայ, որ ասպաշնարողները իրեն համար բեռ մըն են. և ոմանց հաճար միայն այնպիսի նախադասուԹիւն մը կը շնորհէ, որ այլոց շատ մը նուաստուԹիւն կը պատճառէ. ԵԹէ անուղղակի կերպով միշտ սրբապղծուԹեան մղէր իւր խոստովանողները, չը Թողլով անոնց ուրիշ խոստովանահօր դիմելու, հարկաւոր սեպած առենին: ԵԹէ իւր յաճախ բացակայուԹեան առեն, և գուցէ խաղն ղբաղած ըլլալով, հիւանդները՝ որոց կենքը հովիւ է՝ առանց սուրբ խորհրդոց մատակարարուԹեան մեռնէին, որո՞ն մտքէն պիտոր անցներ ըսել, Թէ ահաւասիկ սուրբ քահանայ մը:

ԵԹէ անշուշտ գիտցուէր որ իւր կեանքը անկանոն և շարունակ անկարգուԹեան մէջ է, որ այնչափ հաճելի է իրեն պարապուԹիւնը՝ որչափ որ զղջալի է ուսմունքը, առանձնական կեանքը իրեն անտանելի է. ԵԹէ միշտ ղբօսանքի, քալելու, և եկեղեցիէն և ժամատունէն դառ՝ ամեն տեղ գտնուէր, մէկ անձ մըն ալ կրնար դըտնուիլ որ կարող ըլլար ըսելու. ահաւասիկ սուրբ քահանայ մը:

ԵԹէ աշխարհքիս անցաւոր բարեաց փակուած ըլլալուն անկասկած ապացոյցներ մատակարարէր, մանաւանդ ԵԹէ ադահի աաելի մակդիրը իրեն տային, օգտակար չընկերուս ամենևին ձեռնտուուԹիւն մը չ'ընէր՝ ծախքին չատուԹեան համար. ԵԹէ եկեղեցին զղջալի աղատուԹենէ մաքրելու հոգ չի տանէր. ԵԹէ աղքատները մերժէր, և անոնց տակ մ'իրմէ ողորմուԹիւն չի տալու և միշտ ուրիշին հայԹհայԹելու համբաւը հանէր. և որ աւելին է, աղքատ և գծուծ կեանք մ'անցընելէն վերջը՝ մեռուհներէն ոսկւոյ լեցուն Թողուր, ո՞վ կը համարձակէր իր գերեզմանին վրայ ըսելու, Թէ ահա սուրբ քահանայ մը:

ԵԹէ անմաքրուԹեան գայԹակղուԹիւնը տար, և կամ առանց զինքը հրապարակաւ անմաքուր ցոյց տալու՝ կասկածելի վարմանց տէր կարծուէր. ԵԹէ խօսուածքին մէջ տմարդի և համարձակ ըլլար, նայուածքով անհամեստ, կանանց հետ չափէն աւելի ազատ և ընտանի, և իրեն տրուած խոհեմ խորհուրդներու վրայ անհոգ, չը

յաձախելու այնպիսի ընկերութիւններէ՝ որոցմէ յօժարակամ պէտք էր խոյս տալ, ով կրնար եղբէլ և իւր վարմանց վրայ աղէկ խօսիլ. իսկ ընդհակառակն, ով չի սիրովը ըսելու, Թէ ինչ տեսակ քահանայ է:

Եթէ դիւրաւ գաւաթով յաձախ խելքը կորսընցնէր, եթէ յայտնի ըլլալով իւր անժուժկալութիւնները՝ ժողովրդեան ծաղրը իր վրայ չարժէին, կամ եթէ առանց այս ծայրայեղութեանց՝ զօրաւոր սրտով կոչունքները յաձախէր, և ամենուն յայտնէր իրեն մեծ հաձութիւնը այնպիսի չքեղ սեղան նստելու և կոկորդը օծելու, ով կրնար զինքը սուրբ քահանայ անուանել:

Եթէ վերջապէս, իր վրայ գովասանաց արժանի առաքինութիւն մը չը տեսնուէր, և եթէ ամէն վայրկեան չափազանց կրակոտութեամբ և խստութեամբ զՀեղջութիւնը ղոհէր, մտաց ցնդմամբ՝ նորին ամիսփումը և ջերմեռանդութիւնը, իւր վարմանց և խօսքերուն անվայելչութեամբ զպարկեշտութիւնը, անարդութեամբ և չարաբասութեամբ զեղբայրսիրութիւնը. ինչպիսի՞ ահաձոութեան քրիստինէլն մը բերնին մէջ պիտոր չը խղդէր այնպիսւոյն ձայնը, որ համարձակէր այսպիսի քահանայ մը համար ըսելու, Թէ ահաւասիկ սուրբ քահանայ մը:

229. Հոս, սիրելեալ եղբայրակիցք, ալ վերջ տանք այս զազրութեանց, և աղաչենք զԱստուած որ իւր երկեղեցւոյն խնայէ այսպիսի վիշտերը և անպատուութիւնները, որ անարժան քահանայի մ'անվայել վարքէն յառաջ կու գան:

Փրկենք զժողովուրդը, փրկենք բարի օրինակով, և ոչ երբեք գայթակղութեամբ անոնց գժողքի ճամբայ բանանք: Ո՛հ, արդէն չատերը իրենց մեղքերէն ձգուած անձրևի պէս հոն կը թափին, մեր մեղքերուն ալ այսպիսի թշուառութիւն մը չ'աձապարենք անոնց: Պաշտօնեայ ուսա պայմաններն զանոնք արքայութիւն տանելու տարպուած ըլլալով, գողանք և սոսկանք, որ մի գուցէ վերջին դատաստանին օրը զմեզ իբրև իրենց հոգեսեան պատձառ ամբաստանելու առիթ տուած ըլլանք: Առաքինաբար

Թեամբ ամենուն յարգութիւնը և օրհնութիւնները մեր վրայ հրաւիրենք, և ոչ երբեք մոլութեամբ անոնց անարգանքը: Վերջապէս աղէկ մը խորհրդածենք Հոգւոյն սրբոյ այս խօսքերը, որ մարգարէին բերնով մեզի կ'ուղղէ. « Եւ արդ այս պատուէրը ես իմ առ ձեզ, քահանայքդ. եթէ ոչ լսեցէք՝ և ոչ դնիցէք 'ի սրտի ձերում, տալ փառս անուան իմում, ասէ Տէր ամենակալ, առաքեցից 'ի վերայ ձեր անէծս, և անիծից զօրհնութիւնս ձեր՝ և նզովեցից զնա, և ցրուեցից զօրհնութիւնս ձեր, և մի ելցէք 'ի միջի ձերում. զի դուք ոչ եդիք 'ի սրտի ձերում: ... Իսկ դուք խոտորեցարուք 'ի ճանապարհէ, և սկարացուցէք զբազումս օրինօքն. և ապականեցէք զուխտն Ղևեայ, ասէ Տէր ամենակալ. և ես եառու զձեզ արհամարհեալս և լքեալս ընդ ամենայն ազգս, փոխանակ զի ոչ պահեցէք զճանապարհս իմ»[1]:

Նմանապէս և աղէկ մը մտածենք աստուածային Փրկչին այն զարհուրելի խօսքերը. « Եւ որ ոք գայթակղեցուցէ զմի 'ի փոքրկանցս յայսցանէ՝ լիս հաւատացելոց, լաւ է նմա՝ եթէ կախեցի երկան իշոյ ընդ պարանոց նորա՝ և ընկղմեցի 'ի խորս ծովու»[2]:

Այս զարհուրելի նզովքներուն հետ լինինք նաև Առաքելոյն բարի օրինակաւ հոգիները փրկելու եռանդուն հրաւէրը. « Այլ յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրև զպաշտօնեայս Աստուծոյ՝ համբերութեամբ բազմաւ, 'ի նեղութիւնս ... յաշխատութիւնս, 'ի հսկմունս, 'ի պահս, 'ի սրբութեան, 'ի գիտութեան, յերկայնմտութեան, 'ի քաղցրութեան, 'ի հոգի սուրբ, 'ի սէր առանց կեղծաւորութեան»[3]:

Ամենքնիս ալ, սիրելեալ եղբայրակիցք, այնպէս ապրինք՝ որ կարող ըլլանք սրբոյն Պօղոսի պէս ըսելու.

ՆՄԱՆՈՂՔ ԻՆՁ ԵՂԵՐՈՒՔ, ՈՐՊԷՍ ԵՒ ԵՍ ՔՐԻՍՏՈՍԻ[4]:

1 Մաղաք. Բ. 1, 2, 8, 9:
2 Մատթ. ԺԸ. 6:
3 Ե. Կորնթ. Զ. 4, 6, 7:
4 Ա. Կորնթ. ԺԱ. 1:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Քահանայական սրբութեան երկրորդ միջոցը — Գործքեր։

230. Որչափ որ մինչև ցարդ սուրբ վիճակներուս յատուկ առաքինութեանց նկատմամբ ըսինք, բաւական նապէս կը ցուցընեն որ զանոնք հաւատարմաբար ՚ի գործ դնելով՝ անշուշտ սուրբ կ՚ըլլանք։

Առաքինութեանց վրայ ձառելով, հարկաւորապէս պէտք եղաւ խօսիլ թէ անոնցմէ գատապարտուած չար գործոց, և թէ թեւադրուած բարի գործոց վրայ։ Իսկ երկրորդ մասին մէջ ունեցած դիտմունքնիս եղաւ ըզքահանան չարժել, այս առաքինութիւնները ձեռք բերելու, և զանոնք իր սրբութեան իբրև միջոց գործածելու։

Բայց այս երրորդ մասին մէջ ուղղակի նպատակնիս է քահանային որոշել տալ՝ որ սուրբը ըլլայ այս առաքինութեանց գործադրութեամբ, որոնցմով բեղմնաւորած են, կամ պէտք է ըլլան իւր օրերը։

Առաջին գլուխն մէջ պիտոր յիշենք ժամանակը ազէկ գործածելու, Աստուծմէ արգիլուած գործքերէ հրաժարելու, մէկա և ամէն վայրկեան Աստուծոյ հրամայածը ընելու, և ամէն ըրածնիս սրբելով՝ սուրբ ըլլալու հարկաւորութիւնը. որ այլ և այլ առաքինութեանց վրայ խօսած տեղնիս՝ նոյն նպատակ ընծայենք։ Ասոնց հետ միանալով, առանձին գործքերու վրայ մանրամասն և մանաւանդ տեղեկագիր մ՚ընելէ ղմէզ կը տնօրինէ։

Բայց մի և նոյն ընթացքը պիտոր չը բռնենք հոգևոր գործոց նկատմամբ. ասոնք այնպէս հարկաւոր և էական են քահանային սրբութեան համար, որ մեզի պարտք կը սեպենք ամէն մէկ նպատակին համար զատ զատ գլուխներ հարկել։ Այսու ամենայնիւ այն աստուձան մանրամասն պիտոր չի խօսինք, ինչպէս որ նպատակը կը պահէ. վասն զի դիտաւորութիւն չ՚ունինք, զոր օրինակ, աղօթքի, սուրբ պատարագի, աստուածային ժամերգութեան վրայ խօսելով, ասոնց վրայ առանձին և կատարեալ ձառեր շինելու։ Այլ, կ՚ուզենք բացայայտ կերպով պարզել անոնց գերազանց հարկաւորութիւնը, ինչ ինչ ծանուցումներ տալ, գործնական կանոններ ազդել այս կամ այն ինչ գործքը կատարեալ սրբացընելու, և բոլոր անոնց պատուղը ժողվելու և օգուտը շահելու համար, զոր այն գործքերը առատապէս կը մատակարարեն՝ երբ ըստ պատշաճի ՚ի գործ դրուած են։

Եւ որովհետև ընդհանուր խօսքը քիչ կը կրթէ, և ընդհակառակն՝ ճշտութիւնը և բացայայտութիւնը ամէն բանի մէջ շատ օգտակար են, այնպէս մտածեցինք՝ որ չորս կարգի բաժնենք քահանաները, ինչպէս որ իրօք բաժնուած են իրենց կատարելութեան աստիճանին համեմատ։

Ամենքնիս ալ գիտենք որ մէջերնիս չորս տեսակ քահանայ կը գտնուին, ամենքն ալ մէկմէկէ շատ տարբեր, այսինքն. — « չար » քահանան — « դաղջ » քահանան — « բարի » քահանան — և վերջապէս « սուրբ » քահանան։

Այս գասակարգութիւնը, զոր ընթերցողնիս կը խնդրենք լաւ մտքերնին պահելու, շատ կարևոր պիտոր ըլլայ իւրաքանչիւր հոգևոր գործքի մը վրայ կարձառօտաբար խօսած տեղնիս հասկընալնիս այս կամ այն տեսակ քահանային ունակութեան կերպը և վարմունքը՝ այս ինչ գործոյն նկատմամբ. որով ընթերցողը դիւրութեամբ կրնայ դատել թէ ո՛ր դասին կը վերաբերի այն քահանան։

ԳԼՈՒԽ Ա.

Գործոց սրբութիւնը — Ժամանակին ազէկ գործածութիւնը — Ուսումնք — Դատարկութիւն — Նախանձաւորութեան արդիւնք։

231. Մէկ տիպրոսով և մի և նոյն գլուխն մէջ պիտոր խօսինք ընդհանրապէս գործոց սրբութեան, և ժա-

մանակին աղէկ գործածուելեան վրայ, որովհետեւ շատ մեղքիմ յարաբերուելիւն ունին միմիանց հետ: Եւ ի-
ւրաքանչիւր ժամանակը աղէկ գործածելը սուրբ գործոց ղեա-
ղեցընել էջ արդեօք: Եւ ամէն վայրկեան սուրբ գործ-
քեր ընելը՝ ժամանակը Աստուծոյ ուղածին պէս գործա-
ծել էջ արդեօք:

Կը խնդրենք ընթերցողներէս որ արդէն ըսածնիս աղէկ մը յիշեն, այսինքն թէ սուրբ կեանք մը ուրիշ բան չէ, եթէ ոչ սուրբ գործոց կեանք մը: Շարունակ Աս-
տուծոյ հրամայածը ընել, և այն կատարելութեամբ ընել՝ որով քահանայիցմէ կը պահանջուի. ահա սակայն քահանայական կենաց համառօտութիւնը:

Գործքերն են այն մի միայն ձշմարիտ բարիքը՝ զոր ասնինք աշխարհքիս մէջ և կրնանք հետերնիս տանիլ՝ ի հանդերձեալն: Պատիւ, հաճոյք, ոսկի, կալուածք, ա-
մուսնութիւն և ոչ մէկը հետերնիս կու գայ գերեզմանէն ան-
դին: Մի միայն հոգին ըրած գործքերուս հետ միատեղ մտնուամբ յաւիտենականութեան կ՚անցնի, ըստ որում մարմինիս անգամ առաջին դատաստանին ներկայ պի-
տոր չի գտնուի: Ո՛հ, ինչը դեռ ևս անկողնոյ մէջ վերջին շունչը տալով՝ կենսական աշքութիւնը բոլորովին չը կորսնցուցած, արդէն որոշուած պիտոր ըլլայ յաւիտե-
նական վիճակնիս, և վերուն ալ գործքերուս համեմատ արուած պիտոր ըլլայ: Մանաւանդ ձիշտը ըսելու հա-
մար, դատաստանիս չէ Թէ Աստուծմէ, այլ մեր գործ-
քերէն պիտոր տեսնուի: Աստուած երբև դատաւորաց ժողովքին գահերեց, եթէ նմանութիւնիս կը պատաշ-
ձի, ուրիշ բան պիտոր չընէ, եթէ ոչ օրինաց համեմա-
տութեամբ՝ վճռոյն գործադրութիւնը: Բայց դատաւո-
րութեան պաշտօնը նոյն իսկ գործքերնիս պիտոր վարէն, և միայն զանոնք տեսնելով, կամ անձառելի խնդութեան, և կամ զարհուրելի ցաւոց պիտոր ենթարկինք: Ուստի այսպիսի մտածմունք մը իւր ազդու ապաւորութեամբ պէտք է որ սահպէ զմեզ անգամ մը վիճակնիս որոշելու, և հաստատապէս ջանալու որ բոլոր գործքերնիս սրբութիւնք հետևեալ կանոնաց հաւատարիմ պահպանութեամբ:

232. Ամենքս ալ գիտենք և շատ անգամ ալ կ՚ը-
սենք, որ ժամանակը անսահմանապաէս անգին բան մըն է. վասն զի ուրիշ վաճառքի համար որուած չէ մեզի, եթէ ոչ աղէկ գործածելով յաւիտենական երջանկութիւնը շահելու: Բայց առանց շատ բարեհամառութեան կրնանք տեսնել, որ եթէ ժամանակը այնչափ անգին է ամենուն համար, հարիւրապատիկ աւելի պիտոր ըլլայ քահանա-
յից համար: Ըստ որում քահանային առաքելութիւնը ոչ միայն իր անձը, այլ նաև իւր եղբայրները փրկել ըն-
ալով, յայտնի է որ Աստուծոյ այսպիսի կարևոր առա-
քելութեան մը համար շնորհած ժամանակը՝ կրկին պատ-
ճառներու համար այն ատենէն թանկագին է, որ ոչ ոք կրնայ յարգել ըսել: Իր պաշտօնին գերազանցութիւնը ձանչցող քահանան միայն կրնայ հասկընալ, որ իր պաշ-
տօնը ըստ արժանաւորութեան վարելով՝ միշտ հոգւոց փրկութեան գործած է՝ ըլլայ, որովհետև միշտ և ամէն տեղ քահանայ է, այսինքն միշտ Աստուծոյ և մարդ-
կանց մէջ:

Իր պաշտօնին վիճակաւ շնորհաց սնօ՝ մանաւանդ թէ աղբիւրին գով գտնուելով, քահանային պարտքն է առատութեամբ զայն մեզաւորաց բաշխել, որոնց որ այն-
չափ հարկաւոր են: Աստուած սուրբ քահանային բան մը չի ըլլար, բոլոր աղօթքներուն կը լսէ, աշխատանքը կ՚օրհնէ, պաշտօնը պատրաստ կ՚ընէ, անոր ամէն մէկ գործքովը հաղարաւոր հոգիներ կը փրկէ, և միայն երբ կինքը կրնանք տեսնել անոր առաքելութեան ժամանակ վատնուած փրկութեան արդեանց առատութիւնը: Ի՞նչ-
պէս չի ղղջանք հասած չարաչար գործածելնուս համար այն ժամանակը, որ այս ատենէն կրնայ օգտաւէտ ըլ-
լալ. երբոր խիղճերնուս ձայնին դէմ՝ մեռած հաճոյից և անպէտ խօսակցութեանց կը զոհենք այն ժամերը, որոց մէջ շատ մը հոգիներ կրնայինք փրկել: Ի՞նչպէս չենք մտածեր որ ան ատենը անչափ և գուցէ անդարմանելի կորուստ մը կ՚ընենք:

Այսպիսի խորհրդածութեանց առջին՝ ամենասուրբ քահանայք անգամ խստութեամբ իրենք զիրենք կը քան-

դիմանեն՝ ժամանակին միայն մէկ վայրկեանն ալ կորսընչացուցած ըլլալնուն համար. և թէպէտ միշտ սուրբ գործոց ղբաղած, այսուհանդերձ ամենայնիւ մահուան առեն կը գտնան երկնից պաշտօնին երևելի պարտաւորութիւններըը ըստ պատշաճի կատարած չըլլալնուն վրայ: Ինչպիսի՛ գեղեցիկ գաս մը գատաստկապետ քահանային համար: Ինչպիսի՛ գառնակիկիճ խայթերու պատճառ այն քահանայիին համար, որուն կենացը մէջ այսպիսի սխալ անչըքեհանելը կը գտնուին:

233. Ինչպէս ըսինք, ժամանակը ան առենը սրբաբար գործածուած կ'ըլլայ, երբոր չարուհնակ բարի գործքերու համար կը ծախսուի: Ուստի մանրաքնին նայուածք մը տանք մեր գործոց, և առնենք թէ արդեօք իրաւցընէ միշտ Աստուծոյ հրամայածը կ'ընէնք. և թէ այն առեակ որ կեանքերնիս աստուգիւ քահանայական կեանք մ'ըլլայ: Աւելի բացայայտ ըսենք. քննենք, եթէ ինչպէս կ'ըսէ սուրբ Գիրքը, մեր օրերը կրնա՞ն իրօք լեցուն ըսուիլ. « Աւուրք լի կատարեալ »[1]:

Ամէն բանէ յառաջ, մի թէ շատ անգամ ձեռքերնիս գօսինիս զարկած՝ կատարեալ դատարկութեան մէջ չէ՞նք գտնուիր: Քահանայի մը վրայ հեղգութեան ամենատգէղ նշանը դատարկութիւնն է: Երբոր մէկը այս ախտին գերի կ'ըլլայ, առեակ մը բարոյական և նիւթական քանդում մը կը նկատուի այնհետևայն վրայ, որ այնուհետև հարկաւոր և օգտակար բաներէ ամենևին համ մը չառնուր:

Մ՝արմինը առեակ մը հանգստութեան, թուղութեան և փափկութեան ուռնակութիւնը կը սանայ, այնպէս որ ալ աշխատութեան մտածմունքն անգամ տաղտկալի կու գայ:

Իսկ հոգին ալ իր կողմանէ, ալ զբօսութիւն չունի իր կարողութիւններըը հաստատուն գործքերու զբաղեցընելու: Կամքին զսպանակը այն առեիման ակարացած կ'ըլլայ, որ պարտաւորիչ գործքերը, և անոնք ալ՝ որոց զանցառութիւնը գայթակղութիւն կը պատճառէ, թուլութիւնը, ծուլութեամբ, դժկամակելով և հետևաբար շատ անկատար և ապարդիւն կ'ըլլան:

Ակռայեակ ողբալի վիճակի մէջ, ուրիշին ալ մեզ ծանրութիւն կ'ըլլանք. կեանքերնիս բեռ մը կը դառնայ, որուն տակը կը ճզմուինք. և օրերը՝ որ այնպէս արագութեամբ կը սահին սուրբ քահանային նկատմամբ, դատարկապորտին համար՝ անվերջանալի են: Պարապ ձեռքով կը նեղի, եթէ բան մ'ընէ կը ձանձրանայ: ուստի ինչ ալ ընելու ըլլայ, միշտ ձանձրութեան դատապարտուած ըլլալով, անգործութեան ձանձրութեան մէջ լքուած ձեռքը աւելի յանձն կ'առնուր: Ամէն օր երկար ժամեր այսպիսի անգործութեան մէջ կ'անցընէ. և որպէս զի օրը իրեն կարճ երևի, կրցածին չափ ուշ կը սկսի. և կրնանք ըսել որ իր անկողնէն ելլելուն կանուխը՝ անկողնոյ մէջ պառկելէն ձանձրանալն ըլլայ. ուստի քանի մը ամենակարևոր գործքեր սովորական թմրութեամբ և անհոգութեամբ ընելէն վերջը՝ դարձեալ իր ոչնչութեան մէջ կ'իյնայ: Կը քալէ, վան զի ոտքերը կը չարժէ, կը խօսի, ոչինչ ըսելու համար. անեցոյց կամ դրացեաց մեկնուն հետ քիչ մը ժամավաճառ կ'ըլլայ, և յետոյ սեղնեակը կը քաշուի, (որ ամէն անգամ չի պատահիր), բայց ինչ ընելու համար: Երևակայեցէք: Հազար մտածիւք իրեն կը սպասեն. և կամ անուշ մրափուտ մը, ըստ որում խեղճը շատ աշխատանքէն առաւիկ յոգնած կը թաղկըծի: Ահաւասիկ ունակաբար ծոյլն օրերը, և ձիշտը ըսելու համար՝ կեանքը:

Այս տեսակ կենաց մէջ ինչ պտուղ կրնան տալ հոգևոր և կամ հասարակ գործքերն ալ: Արդէն աղօթքը չափերն աւելի կարճցեր է, և զայն ալ չարաչար և շուտ կ'ընէ: Աստուածային ժամերգութիւնը չափազանց նեղլիչ պարտք մըն է, և կրցածին չափ արագութեամբ և առենը անցած կը կատարէ: Աւելի ինչ ըսենք: Պատարագն ալ առնցմէ աւելի ալեկ վիճակի մէջ չէ, ըստ ուրում ծոյլը՝ մինչև սեղանն ալ կը տանի իրեն սեպհական հեղգութիւնը ու պաղութիւնը:

Իսկ պաշտամանն վերաբերեալ գործոց նկատմամբ՝

Ինչ կրնան ըլլալ ծուլութեան և հեղգութեան ունայնութեամբ: Գործնեութեան կարօտ է զանոնք կատարելու համար. բայց ծոյլը գիտէ արդեօք թէ գործնեութենէն ինչ ըսել է: Եռանդ կ'ուզէ. բայց ծոյլը և ոչ եռանդին անունը գիտէ: Աստուածպաշտութիւն սէքաք է. բայց ինչ աստուածպաշտութիւն կրնայ ունենալ այն, որ անոր վերաբերեալ գործքերէն անգամ լուր չունի: Կանոնաւոր կեանք մը հարկաւոր է. բայց ինչ կանոնաւորութիւն կրնայ ունենալ այնպիսին՝ որ կարծես թէ անկարգութեան համար ծնած ըլլայ:

Աոսկալո՛ւ բան, յիրաւի, դողալո՛ւ բան: Ա՛յսպէս կ'ապրի ուրեմն քահանայ մը, Յիսուսի Քրիստոսի պաշտօնեա՞յ մը, երկրիս վրայ անոր փոխանո՞րդը: Անոր աբեմները դնուած հոգւոյ փրկիչ է անիկայ, որ չամչէնալ այս աստիճան ծուլութեան ու զազրութեան մէջ թաւալելու, այնչափ՝ որ և ոչ աստուածայնին վարդապետին ձայնին կ'արթննայ, որ զարհուրելի կերպով կը հրամայէ. « Ջծառայդ անպիտան հանեք 'ի խաւարն արտաքին » [1]:

234. Եթէ բանի մը ձեռք զարնելու ըլլանք, մի թէ դատարկութիւնը զանիկայ չաքրեր, չի գիշացըներ: Դիւրաւ կրնանք տեսնել որ այս տեսակ ծոյլ և անկարգ կեանք մը՝ սրտերէս ամէն առաքինութիւն հալածելով, ամէն մոլութեանց տեղ կը պատրաստէ: Հարկաւոր չէ որ սուրբ Գիրքը մեզի ըսէ, թէ « Բազում չարիս ուսոյց դատարկութիւն » [2]: Ըստ որում Թուլութեան ունեցած հակումնիս մի՛ թէ չի՞ զբանար այս փափկասիրութենէն, որ չի Թողութ բարիք ընելու, կամ չարութեան դէմ կենալու: Ո՞ր ծոյլը այս մոլութեան վրայ չէ լացած: Եթէ դժբաղդաբար այս ախտին տարուած ենք, շուտով դառնանք սրտերնուս և քննենք մի՛ դուցէ ծոյլ կենաց անկարգութենէն զատ ուրիշ չարագործութիւններ ալ ըրած ըլլանք:

Որո՞նք են այն ժողովրդապետութիւնները, որոնց մէջ առաչնորդները երեսէ ձգուած, հիւանդները ան-

1 Մատթ. իե. 30: 2 Սիրաք. լդ. 29:

խնամ Թող տրուած, տղայք անկիրթ, և բոլոր նուիրապետութեան պաշտօնը անկարգութեան մէջ ընկղմած ըլլայ: Մի՛ թէ Ջերմեռանդ, փութաջան, աշխատող և նախանձաւո՞ր, թէ մանաւանդ Թոյլ, ծոյլ և գատարկապո՞ղ քահանայից ժողովրդապետութեանց մէջ են:

Ո՞րն է այն քահանան, որ երկար ժամեր կը վատնէ անպէտ խօսակցութեանց, որոց մէջ անխղճաբար ինչ ինչ կատակներ, և գուցէ բամբասանքներ կ'ըլլան, ուրիշներուն գործոց վրայօք անպատեհ խօսքեր, անտեղի մտերմութիւններ, և ուրիշ շատ մ'անխոհեմութիւններ՝ի գործ կը դրուին, որոնք ժողովրդեան յարգն ու վստահութիւնը կը կորսընցնեն: Մի՛ թէ դատարկապորտ քահանան չէ՞ արդեօք:

Ո՞րն է այն քահանան, որ ապաշխարութեան առեներն մէջ ամէն վայրկեան վտանգաւոր արձակութիւններ կուտայ, որ առանց հաստատուն սկզբանց՝ կը տնօրինէ հատուցման պարագաներ, և կամ կը պարտաւորէ իւր անխոհեմութեան՝ և ոչ Թէ ողջմիտ աստուածաբանութեան վճռոց համաձայն, որուն չի գիմեր ծուլութեան համար: Մի՛ Թէ ծոյլ քահանան չէ՞:

Ո՞րն է այն քահանան, որ խենթ ծախքերով կը տնանկանայ, որ անկարգ և անկանոն վարմունք մ'ունի Թէ հոգևոր և Թէ առժամանակեայ գործոց նկատմամբ, որ կրցած տեղէն փոխ կ'առնու, առանց վճարելէն ալ մտածելու. և մեռած առենն ալ խառնաչփոթ կնճռոտներ կը Թողու, որոնցմէ մեծ ձեպս կը հատնի երրորդ անձանց, որոնք դեռ ևս քիչ մը վստահութեամբ զինքը կը յարգեն: Ծոյլ և գատարկ քահանան չէ՞ արդեօք ատեպ այսպիսի ձեռնարկներ և գայթակղութիւններ առաջը:

Ո՞րն է այն քահանան, որ անվայել երեն քահանայութեան՝ անժուժկալութեամբ կը գայթակղեցընէ զՀատացեալները. անժուժկալութիւններ՝ որ զինքը վհատութեան և անարգանաց կ'ենթարկեն: Մի՛ Թէ ուսուցիչասէր քահանան է այսպիսի սոսկալի գայթակղութիւնները առաջը, Թէ մանաւանդ անհոգ և անփոյթ քահանան, որ աստուածպաշտութեան և նախանձայու-

գուԹեան ախորժակը կորսընցուցեր է, որ կ'ատէ ուսմունքն ալ դրքերն ալ, որ ամէ գործքի մը չի կրնար ղբաղիլ, և իւր գատարկուԹեամբը ծանրուԹիւն մը կ'ըլլայ Ժէ իրեն և Ժէ ուրիշի:

Եւ երբոր եկեղեցին սուգ կը հագուի երբեմն երբեմն տեսնելով իր պաշտօնէիցմէ ոմանց այն աստիճան վատուԹիւնը, որով աստուածային քահանայուԹիւնը կ'անարգուի ու անպատիւ կ'ըլլայ, մի Ժէ ուսումնասէր և նախանձաւոր քահանան է որ ասանկ դառնապէս լացունել կու տայ, Ժէ ընդհակառակն փափկասէր, անվեյթ, Թոյլ, տկար, ուսման և ամէն կարևոր գործոց Թշնամի քահանան, որ իւր գատարկապորտուԹեամբ փորձուԹիւնը իր վրայ կը հրաւիրէ:

Ո՞րչափ երկար պիտոր ըլլար ցուցակը, եԹէ ուզինք մի առ մի համրել այն չար և վատ գործքերը՝ որոց պատճառ և սկիզբ է գատարկուԹիւնը:

235. Գուցէ եղբայրակիցներէս ոմանք այս տողերը կարդալով՝ չունչ առնուն, մտածելով որ իրենք այս ատեձան ծոյլերու և չարագործաց կարգը չեն, սակայն զգուշանան. վասն զի գրածներէս դուրս ուրիշ հազար կերպով ալ ժամանակը կրնան կորսընցնել: Ո՛հ, քանի՛ քանիներ քիչ մը բան կ'ընեն, բայց ոչ այնչափ՝ որչափ որ ընելու պարտաւոր էին:

Չար օրինակ, եԹէ շատ մը անպէտ և մեր պաշտօնին չը վերաբերեալ գործքերու խառնուէինք, կրնայինք ըսել, Ժէ ըրինք ինչ որ պէտք էինք ընել: Ժամանակնիս աղէկ անցուցած կ'ըլլանք, եԹէ ընտանեկան գաղտնեաց մէջ մտնելով՝ խոստովանողէս ոչ միայն հոգևոր, այլ նաև առժամանակեայ կառավարուԹեան և հոգաբարձուԹեան ձեռնամուխ ըլլայինք, անձերնիս յանդիմանուԹեան վտանգի մէջ գնելով այնպիսիներէն՝ որոց տուած խորհուրդնիս կրնար տհաճոյ երևնալ:

Սուրբ Առաքելոյն հնազանդած կ'ըլլայինք, որ ՏիմոԹէոսին ըսածը ամենուս ալ կ'ըսէ. «Ձգործս առեւ տարանչի գործեա»[1]: Եթէ անխոհեմաբար նշանախո-

1 Բ. Տիմ. Դ. 5.

ռուԹեանց, պսակներու, կտակներու, առուծախի և ամէն տեսակ դաշինքներու միջամուխ ըլլայինք. փոխանակ մեզի վերաբերեալ գործոց ղբաղելու և Թող տալու որ «մեռածները իրենց մեռելները Թաղեն», ինչպէս որ կ'ըսէ աստուածային Փրկիչը, որ և ոչ կ'ուզէր որ իրեն հետևիլ ուզող երիտասարդը՝ վայրկեան մ'իրմէ հեռանար, հոգը վերջին ծառայուԹիւնը ընելու պարտաւորուԹիւնը՝ի գործ դնելու համար, զոր իրեն խիստ պատուիրան մը կը յարգէր:

Չարմանալոր բան. կ'ուզենք բարի գործել, բայց մեզի արգելուած բաներ ընելով, և ընելու պարտաւոր եղածներս ալ զանց առնելով:

236. Ժամանակը աղէկ կը գործածէ՞ այն քահանան, որ շատ մը ժողովքներէ կ'ելլէ արգելուած բաներու կը նուիրէ զայն: Չոր օրինակ, եԹէ վարդապետանոցը վաճառատեղի մը դարձընէ, արտեր վարձէ, որոց կարօտուԹիւն մը չունի, այլ միայն երկրագործուԹեան ղբաղելու հաճոյից համար. և կամ կենդանեաց և վատ անասուններու հոգ տանելու համար՝ երկար ժամեր անցընէ, զորոնք հոգւոց հոգաբարձուԹեան պէտք էր գործածել. Յիսուսի ուրեմն գնուած հոգւոց՝ որոց փրկուԹեանը պէտք է զոհենք ամէն մտածմունքնիս, լռձերնիս և գործքերնիս: Ա՞յսպէս կը գործածէին իրենց ժամանակը սուրբ քահանայք: Մի Ժէ յաւիտենական գատաւորին առեանը պատասխան պիտոր չի տանք աշխարհային գործոց պատճառաւ՝ զանց ըրած բարեգործուԹեանց, և այնչափ մեղաւորներու նկատմամբ՝ զորոնք կրնայինք փրկուԹեան հասցընել, եԹէ անոնց համար գործածէինք այն ժամանակը՝ զոր անիրաւուԹեամբ քահանայուԹեան անվայել գործքերու ծախած ենք:

Ո՞րչափ զանց եղած կամ ըստ պատշաճի չեղած քրիստոնէական վարդապետուԹեան մեկնուԹիւններ, որչափ անպտուղ քարոզներ, վասն զի առանց պատշաճ պատրաստուԹեան. որչափ չտապով լսուած խոստովանուԹիւններ, որչափ անխնամ ձգուած հիւանդներ, որչափ արգելուած կամ ըստ արժանւոյն չեղած աղօթք-

ներ, ան առենը՝ երբ մեր պաշտօնին մեծութեան անվայել գործքերու կը ջանանք, ան առենը՝ որ սրտերուս մէջ աստուածպաշտութեան քաղցր օծութիւնը պակսելով՝ աշխարհային իրաց ախորժակը կը բազբոջի, զորոնք եթէ Պօղոս առաքեալը պարզ հաւատացելոց կ'արգելուր, հապա որչափ աւելի սուրբ աւետարանին պաշտօնէից. « Ձվերինն խորհեցարուք, մի զայս որ յերկրի աստ է »[1]:

237. Հապա այն մնոտի և այնչափ ստէպ այլ և այլ բարեկամներու գրուած նամակները, որոնք նոյն կերպով պատասխանելու ստիպուած կը կարծեն զիրենք. հապա այն անձոռնի և խեղկատակ գրուածքները, որոնք այնչափ ժամերնիս գողնալով կարևոր ու պիտանի գործքերու կը վնասեն. հապա այն մնոտի և գուցէ բան մըն ալ աւելի ընթերցուածները, որոց վարժելով զլսնիս հազար տեսակ մտածմունքներով կը լեցուննն, հալածելով անկից ուսման և աստուածպաշտութեան սէրը. հապա այն աշխարհային ուսմունքները, որոց երբեմն կարգ գուրս աշխուժով կը զբաղինք. ուսմունք՝ որոնք ըստ ինքեան չար չեն, մանաւանդ թէ տղայոց կրթութեան զբաղող քահանայից կրնան կարևոր ալ ըլլալ, բայց բոլորովին անօգուտ են հոգաբարձու քահանայից՝ որոնք միայն զուարճութեան համար և պատշաճ առենն մը կրնան զբաղիլ, այսինքն երբ նց պարտաւորութիւնները կատարեալ կերպով՝ի գործ դնելէն վերջը. ուրեմն այս ամէն ինչ արգելք նորոգութիւն մը չէ՛ն պահանջեր քահանայի մը վարքին մէջ: Մի թէ այս ամենը յետ ձգուելու բաներ չէ՛ն ուրիշ Աստուծոյ փառացը, հոգւոց փրկութեան և մեր սրբութեան աւելի օգտակար գործքերու զբաղելու համար:

238. Հապա ժամանակը անցնելու համար այն ամենօրեայ երկար այցելութիւնները, որ առանց այն զբօսանքին անտանելի պիտոր ըլլար, ինչպէս կրնանք համարձակիլ ժամանակնիս այսպէս վատնելու, գիտնալով որ

1 կողոս. գ. 2:

այսպիսի բաներու համար ծախուած ժամանակը՝ աւելի օգտակար և կարևորներու կրնար գործածուիլ:

Այսպիսի մնոտի այցելութեանց սովորութիւնը գուցէ ծոյլ քահանային բնաւորութեան մէջ աւելի բացայայտ երևի: Առանձնութիւնը իրեն տանջանք մըն է, ասոր խելքերնիս կը հասնի. մինակութիւնը միայն ուսումնասէր և աղօթասէր մարդկանց հաձելի է. արդ որովհետև ծոյլը ոչ մէկն է և ոչ ալ մէկալը, ուստի հարկաւոր է որ վնասը տառապեցնող ձանձրութեան դեղը ընկերութեանց մէջ փնտռէ: Եւ սովորաբար իւր մտերիմ ծանօթութիւնից տեղերը միշտ շատ չեն ըլլար: Շատ շատ երկու կամ երեք տուն, ուր աւելի կ'ախորժի ընակիլ, հոն կրնան վնասը գտնել սենեակը չեզած առեն: Պատարագը ըսածին պէս, քանի մը հատ ալ խոստովանանք՝ եթէ կայ՝ շտապով ընցուցածին պէս, սենեակը կը մնայ շուտ մը դուրս ելլելու համար. և ահա ասանկ կը սկսի իր ամէն աւուր այցելութիւնները:

Ասկ անունք, որոնց աչքին կը զարնէ այսպիսի յարատևութիւն մը, և որոնց ամենէն բարի օրինակ մը չի պատճառեր, մեկմեկու կը հարցընեն, թէ ինչ հարկաւորութիւն կայ ասանկ յաձախ և երկար խօսակցութեանց. և չեն կրնար հասկընալ թէ ինչպէս կրնայ մեկը այսպիսի այցելութեանց մէջ առենը անցընել, առանց անկից զգացած հաձոյքը նուաղելու, եթէ թէ երբեմն հաձոյք մ'ըլլար: Բայց մի թէ գատարկութիւնը կրնա՞յ ծոյլ մարդուն հաձութիւն մը պատձառել, թեպետև իւր չար սովորութիւնները յայտնելու համար անտարակոյս գտնել կ'ուզէ: Իրեն պէտք եղածը՝ առանձնութեան մէջ զինքը վշտացընող ձանձրութենէն ազատիլն է: Ստոյգ է որ յաձախ այցելութիւնները երթալով անհամ կ'ըլլան, խօսակցութիւնը կը նուազի, պատմելու պատմութիւնները և առակները կը պակսին, միշտ պատրաստ չեն ըլլար խեղկատակ և խնամալու խօսքեր, և վերջապէս գատարկապորտը ձանձրութիւն կը գտնէ հոն ալ, ուր կը դիմէ անկից ազատելու համար. բայց որովհետև իրեն առանձնութեան չափ տհաձոյ բան

մը չի կայ, անոր համար աւելի կ'ախորժի ընկերութեանց մէջ «քիչ մը» ձանձրութենէն, քան թէ առանձնութեան «շատ մը» տաղտկութենէն:

Իսկ ամենացաւալին ընկերութեան ընտրութիւնն է, որմէ հետ կ'անցնին այն դառարկ օրերը: Եւ երբ, այսպիսի ընկերութիւններ միշտ քահանայի մը արժանի չեն, թէ որ բարի՛ մանաւանդ հարկաւոր են այսպիսի այցելութիւնները տեղւոյն ոչ միայն մեծամեծաց, այլ նաև ուրիշներու ալ. այսու ամենայնիւ պատշաճ չէ որ ունակաբար, չարունակ, և տարիները գրեթէ դուրս ձգելով ըլլան այս այցելութիւնները, և ոչ ալ այս յետիններուն մէջ ընտանի և մտերիմ բարեկամներ ընտրուին: Որովհետև քահանայ մը այսպէս վարուելով՝ հասարակութեան կարծեաց մէջ կը կորսընցնէ երէն պէտք եղած համբաւը: Այսու ամենայնիւ կրնայ հանդիպիլ որ հոն և միայն հոն գտնէ իւր հաճոյքը: Հոն աւելի հանգիստ է, աւելի ազատաբար կրնայ բարբանջել, աւելի համարձակ խնամալ, աւելի յանդգնութեամբ ըստ քմայ կծու խօսքեր երգիծաբանել, և աւելի ուրախութեամբ առներն անցընել: Բայց երէն յարմար առիթ մըն է ասիկայ: Աստուծոյ գործը կը յառաջանա՞յ հոն: Ընկերին բարի օրինակ կու տա՞յ: Անցուցած ժամանակը սրբաբար գործածուած կը սեպուի՞:

Տա՛ր Աստուած որ չարագոյն չ'ըլլար, և այն առնելը՝ ուր կը յաձախուի՝ տաղտկութենէ ազատելու համար, մինչև հոս ըսածներէս ծանրագոյն վտանգներու առիթը չը ներկայացուներին:

Այցելութեանց նկատմամբ ուրիշ անկարգութիւն մըն ալ կայ, որ շատ մը երկար ժամանակ կորսընցնելու պատճառ է. այսինքն այն այցելութիւնները՝ զորոնք աւելորդ ձանչնալութեամբ կը շահինք: Երբ կ'ախորժինք ընկերութեանց մէջ թափառիլ, երբ բնական առիթներուս ամէն կողմը կը պատրաստենինք ձանձրութիւններս, երբ կը յայտնենք ժամանակին անխնայ ըլլալնիս, մինչ նաւանդ թէ մեզի խօսակցութեանց ժամանակը վատնելու հաճոյքնիս, երբ վերջապէս անխոհեմ մեղի ներկայացողները չ'ուզենք չաժարութեամբ կ'ընդունինք, չայտնի բան է որ այցելութիւնները պակաս չեն ըլլար: Աչխարհքիս մէջ դառարկապորտները լեցուն են, և անդամ մ'անուշ դէմք մը տեսածնուն պէս՝ լսթերնուս կը փակչին: Գտած քաղաքավար ընդունելութիւնին, քիչ մըն ալ նստելու համար գործածուած ձարտարութիւնը, անոնց չաղփաղփութիւնները լսելու հաձութիւնը, չայտնի կը ցուցընեն՝ որ երկու դառարկապորտ մէկզմէկ գտած են. ուսումի որչափ որ կ'տեսեն տուբը քահանայից այցելութիւնը, որոց անախորժ է երեսնց չտտախօսութիւնը, այնչափ ալ կը փափագին երեսնց նման ծոյլերու ընկերութեանը, երկու կողմէն ալ զդացուած տաղտկութիւնը փարատելու համար: Ո՛րչափ ժամանակի կորուստ կ'ըլլայ այս տեսակ արանց և կանանց այցելութեանց մէջ:

239. Հնպա խաղերը, կոչնիքները, չաձախ բացայայտութիւնները, ձանապարհորդութիւնները, թէ եղբայրակիցներու հետ և թէ ուրիշ տեղ հանդիպած երկարատև զբօսանքները, ոմ կրնայ պատմել թէ որչափ ժամանակ կը կորսընցնեն, երբ դժբաղդաբար աչխատանքը տեսլով գառարկութեան վերատակար տօրորութեան կը վարկենք:

Գառարկապորտ մարդու մը թմրութիւնը, խոնջութիւնը և գժկամակութիւնը տեսնելով, երբեմն կը կարծուի որ աչխուժի և եռանդեան ընդունակ չըլլայ, այսու ամենայնիւ այնպէս չէ: Այն մարդը, զոր օգտակար և ծանր գործքի մը նկատմամբ պաղ և անտարբեր կը տեսնէք, եկէք զինքը տեղւոյն վրայ, խաղի, զբօսանքի և ուրիչ զուարճութեանց մէջ զինեցէք, և կ'տպահովցնեմ որ պիտոր զարմանաք իւր գործնէութեան վրայ. ան տեսնը չայտնի կը ցուցընէ իր խելքը, կայտառութիւնը, ուրախութիւնը, խօսելու և ձեռաց չարժման ձարտարութիւնը: Մինչդեռ տուբը քահանան՝ շնորհալի վարմունքով և պարկեչտութեամբ զդատ կը կենայ, որ անվայել խօսք մը բերնէն չելլէ, և կը չայտնէ որ երէն չատ աւելի ախորժելի են իւր խղճին հանդարտութիւնը, և եկեղեցւոյ չերմեռանդ լսութիւնը, քան

Թէ այն խառնաչփոթ ընկերութիւնները։ Ընդհակառակն դատարկապորոտը գործքով կը ցուցընէ, որ այսպիսի աղմկայոյզ ընկերութիւնները՝ իրեն հաճոյքը և կեանքը կը կազմեն։

Եւ ասոնք են այն երկու տեսակ մարդիկը՝ որոնց վրայ սուրբն Պօղոս Առաքեալը խօսելով կ'ըսէ. « Զի որք ըստ մարմնոյն էն, զմարմնոյ խորհին. և որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն »[1]։

Ախ այսպիսի չնչին սնոտեաց մէջ է որ ժամերը կը թռչին առանց իրենց անցնելուն հետքը թողլու, այնչափ որ անպէտ տեղը կը գործածուին։ Հոս է որ կը ցամքի և կը ցնդի աստուածպաշտութեան օծութիւնը, և քահանայական հոգւոյն անգին անուշահոտութիւնը. հոս է որ աշխարհականաց սէրը երթալով կը պաղի. հոս է որ քահանան իր քահանայութիւնը կը թողու՝ սոսկ մարդ դառնալու համար, Աստուածմէ իրեն յանձնուած հոգւոց ամենամեծ ձեռասովը։

Ի՞նչ է, կը հարցընենք, ինչ է մանաւանդ գիւղերը հարկինք մ'եղած աւուր աշխատութիւնը։ Միայն առտուն քիչ մը բան, այնուհետեւ բոլորովին պարապ կ'անցնի օրուան մնացորդը. միայն իրիկուան դէմ շտապով հազար մտքի ցնդմամբ և քնահար վիճակի մէջ զուրցուած ժամերգութիւն մը, անանկ որ հաստատապէս կասկածիլ կու տայ, Թէ արդեօք այս պարտքն ալ ըստ պատուիրանին կատարուեցա՞ւ Թէ ոչ։

Հապա եթէ այս հարկինքները, զբօսանքները և խաղերը ամէն օր, կամ գոնէ քիչ կարճ միջոցով նորոգուելու ըլլան, եթէ ամէն շաբաթ, կամ շաբթուն մէջ քանի մ'անգամ պատահին այս փոխագարձ կոչունքները, որով մեծ և մանաւանդ անգին սուրբ ժամանակ մը կորսուի, որուն համար Աստուած ամենախիստ համար մը պիտոր պահանջէ, ժամանակ մը՝ որ ասանկ խենթութեամբ վատնողներուն չէ, այլ շատ մը մեղաւորներու կը վերաբերի, որոց ծառայութեանը պէտք է գործածուի ինչուան մէկ ակնթարթն ալ, ինչպիսի կեանք, ինչպիսի

1 Հռոմ. Ը. 5։

ընորհաց չարաչար գործածութիւն, ինչ կորուստ, որպէս մը անկարգութիւն։ Եւ ինչպէս կրնանք չը լալ այնպիսոյն վրայ՝ որ ասանկ վարուելով չի կրնար այսչափ ժամերուց դարման մը տանելու։

240. Հաստատ գիտենք որ շատերը պիտոր համարձակին ըսելու, Թէ իրենց պարտուց հաշուն մասին մէջ չեն պակսիր։ Բայց միշտ այնպէս է։ Ազէ, մենք զմեզ չի խաբենք։ Սովորաբար ծոյլ մարդը, որ միշտ ապին անգին մեռ և կամ հեռու կը թափառի, որ աշխատանքը կ'ատէ, բարեպաշտութենէն համ մը չառնուր, նախանձաւորութեան եռանդ և սէր չունի, կրնայ ըսել որ իր բաները շատ մը և ծանր պարաքերուն նկատմամբ կատարեալ կանոնաւորութեան մէջ ըլլան։ Այս նիւթերուն վրայ ճառող հեղինակները թուղ քննէ, վարմանց կանոնները նշանակող ժողովքներուն սահմանադրութիւնները կարդայ, հոգեւոր կրթութեանց աստէն իրեն հոգեւոր հայր ընտրած բարեպաշտ և իւր պարտաւորութեանց հաւատարիմ քահանային Թուղ հարցընէ. այս հոգեւոր կրթութեանց մէջ ինքն իրեն Թուղ հարցընէ, բայց անկեղծաբար, և իբրև Թէ մահուան դուռը դանուած ըլլար. ան ատենը նայինք Թէ իր վրայ պատճառ մը կը գտնէ՞ հանգիստ ըլլալու, ինչպէս որ դուրսէն հասկըցունել կ'ուզէ։

Ո՛հ, եթէ բոլոր իւր վարմունքը մանրամասնաբար եպիսկոպոսին յայտնէր, եթէ անկեղծաբար առանց պատճառաբանութեան և ապին անգին փախուստ տալու՝ տեղեկութիւն տար իւր անցուցած օրերուն, բարեպաշտական գործոց կատարման, քրիստոնէական վարդապետութեան մեկնութեան, քարոզի, խոստովանութեան, հիւանդաց այցելութեան վրայ. եթէ ըսէր Թէ ինչ է ըրածը, կամ մանաւանդ ընդ ըրածը եկեղեցւոյ վայելչութեանը համար, եթէ անոր աղտոտութիւնը նկարագրէր, եթէ խոստովանէր աս ունեցած վերջին ծայրի անհոգութիւնը. եթէ խօսէր մեղաւորները դարձընելու համար ընդ ըրած միջոցներուն վրայ, որոց նկատմամբ պատասխանատու է Աստուծոյ, և ասկէ է որ սրբութեան ու կատարելութեան մէջ յառաջեցընէ

իրեն ինամոց յանձնուած ընկերութեանց անձինքը. եթէ գոնէ մէկ տարուան անցուցած կեանքին կատարեալ և մանրամասն տուեր ագիրն ընէր, ան առենը պիտոր հասկընար թէ արդեօք եպիսկոպոսն ալ մի և նոյն համարումը պիտոր ունենար իր վրայ:

Բայց դիտենք թէ պարտաւորութեանց էական մասին դէմ չենք պահած, և կատարեալ կանոնաւոր ըլլալ ենք, և քիչ մըն ալ հաստատութեամբ կարող ըլլայինք ընելու, որ առած ունակութիւնին « մահու չափ » ծառը ջրցուն. այսու ամենայնիւ կրնայինք, սկրբելով եղբայրակից, խօսքը մեղրեղինս մնայ, կրնայինք հանգիստ ըլլալ, և այնպիսի զարհուրելի անդունդին բերանը ապահով մնալ, որուն մէջ գահավիժելու համար ուրիշ բան պէտք չէ՝ եթէ ոչ ծուռ քայլ մ' առնուլ: Ո՛չ, ինչպէս կրնանք մեզը խմալէն ապահով ըլլալ, երբ առանկ անհոգ, մանաւանդ թէ յիմար քաղաքավան գոնդին եղերքին վրայ կը յառաջանանք: Այսպիսի վիճակի մը մէջ մի՛ թէ բաւական չէ՞ որ վանդաւոր առիթ մը ներկայանայ, ազդու փորձութիւն մը վրայ հասնի, ու գլխու պտոյտ մ' առէն՝ ոտքերնիս սահելով ծառը մեղայ մէջ խփանք:

Յետ այնորիկ որչափ անաւակ որդինեը կան, որ բաղդատութենիս կը պարտին և միայն նշանի մը կը սպասեն որ գան իրենց բարի հօրերուն դիրկը նետուին: Որչափ փարախէն դուրս ինկած ոչխարներ, որոնք մոլորած կը թափառին, որոնք ուրիշ բանի չեն սպասեր՝ եթէ ոչ հովիւներուն ձայնին, որ գլուխնին կանչէ, որպէս զի շուտով նորէն փարախը դառնան: Մի՛ թէ չի կա՞ն այցելութեան կարօտ մեղաւորներ, օգնութեան սպասող աղքատներ, մխիթարութիւն յուսացող վշտացեալներ, իրաւցընէ քահանայի մը վայել բարի օրինակով շինուելիք ամբողջ ժողովուրդ մը: Ո՛չ, մահուան առէն, այո՛, մահուան առէն պիտոր տեսնենք թէ արդեօք այս աւուրը պէս համարձակութիւն ունի՞նք:

Արդէն ըսած ենք, եթէ այն կէտին՝ եռանդուն և նախանձաւոր քահանայք անգամ կը դողան՝ իրենց անցեալ սուրբ կեանքնին ալ. հապա ինչպէս կրնան հանդիստ ըլլալ անոնք որ այսպիսիներէն շատ հեռու են:

241. Շատ մ' ընելիք բաներու ձեռնամուխ ըլլալն ալ՝ ժամանակի անկարգ գործածութիւն մըն է: Շատ անգամ կը տեսնուին այնպիսի մարդիկ, որոնք այնչափ ծոյլ կը գտնուին գործ ընելու առէն, որչափ որ եռանդով սկսած էին:

Սուրբ գործոյ՝ մանաւանդ նախանձու գործոց նկատմամբ՝ առաջին անգամ ըրած գաղափարնիս միշտ շատ կամ նուազ խաբէական է. երեւակայութիւննիս՝ այն խաբեբայ կեղծաւորը, նախ և յառաջ այն գործը լինցածի պէս կը ներկայացընէ, գեղեցիկ գոյներով կը նկարէ անկից յառաջ գալիք բարիքը, ժողովրդեան ունեցած նալիք շինութիւնը, բազմութենէ մը սպասելիք երախտագիտութիւնը, մէկ խօսքով յաջող եղբը և անոր արդիւնքը կը ցուցընէ. բայց ծածկելով գործադրութեան արգելքները և դժուարութիւնները, հնձոց ղուարձութիւնը կը գովէ, մշակութեան տառապելի աշխատութիւնը կեղծելով, կ'ըսէ. « Սկսէ և ըրէ ». և մենք իրօք կը սկսինք, բայց հազիւ թէ դժուամակելով քայլ մը կ'առնուինք, շատ անգամ թերեւս դժուարութենէ մըն ալ վհատած՝ գործքերնիս կը ձգենք ուրիշ բանի մը զբաղելու համար, որուն իրօք ձեռք կը զարնենք՝ առաջնոյն վնասովը, եթէ աս ալ անոր վիճակակից չըլլար: Ոսկից կը պատահի, որ ժողովուրդը տեսնելով շատ մը սկսած ու չը լինցած գործքեր, շատ մը խոստմունքներ ու ոչինչ գործադրութիւն, կը կրկնէ մեզի լինչ որ աւետարանին մէջ յիշուած անմիտ մարդուն ըսուեցաւ. « Սկսանիցեն ծաղր առնել զնա և ասել, թէ այս այր սկսաւ շինել, և ոչ կարաց կատարել » [1]:

Բայց եթէ սկսած գործքերուս և ոչ մէկը ուզենք թողուլ, այլոց ցոյց տալու համար ոչ միայն շատ մը գործք սկսելու՝ այլ նաև զանոնք լինցընելու ալ բաւական քաջութիւն ունենանինս, ան առէնը գէշին գէշը: Վասն զի չափէն աւելի կրած աշխատութիւննիս՝ պաշ-

1 Ղուկ. ԺԴ. 30:

ածներուս էական պարտաւորութեանց կը վնասեն։ Ա-մենքն ալ լմնցընել ուզելով կը լմնցընենք, այո՛, բայց ինչ կերպով։ Հարպաքո, չափազանց շտապով, խոհեմութեան ու հասուն խորհրդոց պակասութեամբն ըլլալնուն համար։

Ուրիշները, և ասիկայ ամենատարած է, միւս ծայրը կ'անցնին, և չեն գիտեր ժամանակը ըստ պատշաճի գործածել։ Ինչ, շատ քիչ բան կ'ընեն և ան ալ անմտան դանդաղութեամբ. թէ արտաքոյ կարգի քահանայական, և թէ օրական գործոց նկատմամբ վերը յիշուած երկու ծայրերուն միջին ճամբան է ղոր պէտք է բռնենք։

Ոչ շատ շտապ, և ոչ ալ շատ դանդաղութիւն. այո՛, ղգուշանանք կարգէ դուրս աճապարելէն՝ որ ոչ կ'ըղդուշանայ, և ոչ ալ խորհուրդ կը հարցընէ. բայց ղգուշանանք նաև չափէ դուրս դանդաղութենէն ալ, որ կէս աշխարհքի մը խորհուրդ կը հարցընէ, և չի գիտեր թէ որո՛ն հետևի։ Շատ է չափէ դուրս շտապը, որ միշտ «Յառաջ» կը պոռայ. շատ է նաև չափէ դուրս դանդաղութիւնը որ ամէն մէկ քայլ առնելնուս կ'ըսէ. «Ինչ մը սպասենք», աճապարելու ինչ հարկաւորութիւն ունինք։

Բայց տեսականէն գործնականին անցնելու համար, ղգուշանանք չափազանց շտապէն, որ կ'ուզէ որ մէկ ժամուան մէջ քանի խոստովանանք լսենք. բայց խոյս տանք նաև դանդաղութենէն՝ որ կ'ըսէ. «Ո՛հ, երկու կամ երեք հատը բաւական են»։

Մինչև հիմայ ըսածներս կրնան բանաստեղծին երկու խօսքովը համառօտիլ. — «Դանդաղութեամբ շտապեցէք»։ — Եթէ այսպէս վարուինք, ժամանակիս շատ աղէկ պիտոր գործածենք. ան ատենը գործքերնիս սրբութեամբ կը կատարուին, ըստ որում ան ատենը ղգաստութեամբ վարուած պիտոր ըլլանք, գործծնեայ և խոհեմ եռանդեամբ։

242. Անհաւասիկ ժամանակին գործածութեան նըկատմամբ ուրիշ անկարգութիւն մըն ալ, որ չենք կրնար լռութեամբ անցընել։ Կան այնպիսիներ որ դատարկա-

պորտ չեն, մանաւանդ թէ ըլլալնին մոլութիւն կը սեպեն. կը ձանչնան ժամանակին յարգը, կ'ուզեն աշխատիլ, և իրօք կ'աշխատին ալ։ Շատ լաւ. բայց անպտուղ է աշխատանքնին։ Ինչո՞ւ համար։ Վասն զի աշխատութիւնը կամ գործքը ընտրելու առեն, միայն հաճոյից՝ քմայ և վայրկենական բերման կը հետևին։ Կանոնի թշնամի, կը կարծեն որ օրը դատարկութեամբ չանցուելը բաւական ըլլայ, այնպէս որ պարապ առեն մ'անցած չըլլայ։ Ինչ կը պատահի։ Կ'աշխատին, այո՛, բայց առանց արդիւնքի։ Ինչպէս։ Անհաւասիկ։

Այս ինչ անձը, որոշուած առեն մը՝ սուրբ Գիրքը կարդալու բաղձանք ունի, այսպիսի ուսմունք մ'աղէկ կ'երևի երեն, գերազանց և ամէն կողմանէ օգտակար. ուստի կ'առաջադրէ կարգալու և բաղձանքը յագեցնելու չափ՝ անոր վրայ ուսմունք ընելու։ Շատ լաւ։ Ձեռքը կ'առնէ սուրբ Գիրքը, գլուխ մը այսօր, գլուխ մըն ալ վաղը... հապա միւս օրը։ Միւս օրը՝ ինծա բարով, սուրբ Գիրքը։ Կ'ուզէ եկեղեցական պատմութիւն կարդալ, թո՛ղ տրուի, նայինք. քահանայի մը համար ասկից աւելի վայելուչ ուսմունք չի կրնար ըլլալ. իրմէ աւելի որո՞ն հարկաւոր է եկեղեցական պատմութիւնը։ Շատ լաւ. ուստի ձեռք կ'առնէ եկեղեցական պատմութիւնը, մէկ, երկուք, երեք, վեց, տասը երես։ Յետո՞յ։ Յետոյ դարձեալ իւր սեղը նը գնէ ղՀեղինակը՝ ղոր շատոնց ունէր իբրև թէ ունեցած չըլլար, ու երթա՛ս բարով. վեց ամսէն թէ տարիէ մը վերջը՝ հաղիւ նորէն միտքը պիտոր կ'ինայ։

Այսու ամենայնիւ կը խոստանար ամէն օր կարգաւորեալ կերպով կարդալու։ Այսպէս ալ աստուածաբանութեան, եկեղեցական կարգաց, ծիսարանի, ձարտարախօսութեան և ուրիշ գիրքերը։ Ոչ կարդ, ոչ եղանակ, ոչ յարատևութիւն կը գտնուի։ Ինչ տեսակ ուսմունք է ասիկայ, ինչ պտուղ կրնայ յուսացուիլ այսպիսի ուսմունքէ։

Նոյնպէս ալ կը կատարուին միւս գործքերը։ Ինչ մը կամք ունեցած առեն՝ խոստովանարանը կ'երթայ,

այսօր այս ինչ ժամ, վաղը ուրիշ առեն մը. շաբաթ մը կամ երկուք կարգաւ հիւանդներուն կ'երթայ, բայց յետոյ ամիսներով ալ կը մնայ: Այսօր ժամ մը աղօթք կ'ընէ, վան ղև եռանդ մը կը զգայ. իսկ վաղը եռանդը պաղած ըլլալուն, եթէ քանի մը վայրկեան ալ աղօթք ընելու ըլլայ՝ շատ բան է: Քրիստոնէական վարդապետութեան կարգաւոր կրթութեան ընթացք մը կը սկսի. բայց հազիւ թէ սկսած՝ կը թողու զայն, երբեմն անպատրաստ և անուսումն քարոզներուն ձեռք զարնելու համար: Կ'ընդհատէ իր բարի գործքերը, առանց դադարի ձնալու. վան ղև ինչպէս ըսինք, դատարկութիւնը շատ ոտքեղ բան մը կ'երևի երբեմն, ուսուի բան մը կ'ընէ. բայց այս բանը, այն ատենուան անմաս ու այլակերպ է, որ հանուած օգուտը գրեթէ ոչինչ է:

Մենք կ'աղաչենք այս տեսակ կեանք անցընողները, որ տարբոյն վերջը աղուոր քննութիւն մ'ընեն ուսմանց նկատմամբ՝ երբեմն աշխատութեանց պատրուակ դնելու համար: Եթէ անկեղծ են, պէտք է խոստովանին անոնց չնչին բան մ'ըլլալը: Շատ կարդացեր են, բայց մոքերնին շատ քիչ բան մնացեր է. շատ բան գրած են, բայց երբեք ալ չեն դիտեր թէ ինչ եղած են այն թերթերը. շատ մը դաղափար և գիտութիւններ գլխնուելէն անցան, բայց առանց արդիւնքի մը:

Ի՞նչ բան կը պակսի այս սիրելի եղբայրակիցներուս: Եռանդ, կարգապահութիւն, յարատևութիւն, և կարգին հաւատարմութիւն: Աւաքելոյն տուած խորհուրդն գործադրութիւնը կը պակսի. « Եւ ամենայն ինչ ձեր... ըստ կարգի լինիցի » [1]:

Ինչո՞ւ սուրբ քահանային չեն նմանիր, որ իրենց պէս գեղեցիկ խորհուրդներով, գաղափարներով և խմաստալից խօսքերով առատ չէ, մանաւանդ թէ զգաստ և զգուշաւոր վարմունք մ'ունի այսչափ գեղեցիկ բաներու տէրէան և Թուրքն դէմ. այլընդ հակառակն խոհեմ և հաստատուն ջերմեռանդութեամբ կը գիտէ ինչ որ « կրնայ և պէտք է » ընել ամէն օր, ամէն շաբաթ, ամէն ամիս և ամէն տարի:

1 Ա. Կորնթ. ԺԴ. 40:

Կատարեալ կարգ մ'ունի իւր աստուածպաշտութեան մէջ. թէ ըստ ժամանակին, թէ ըստ եղանակին և թէ ըստ տեղուութեան, իւր պաշտաման գործքերը բոլոր օրուան ընթացքին մէջ կանոնաւոր կերպով բաժնուած են. և եթէ երբեմն չի կարենայ ալ այն կարգը պահել, որ շատ քիչ անգամ կը պատահի, այսու հանդերձ ղևարդն ու կանոնը գրեթէ չաբերը:

Կը կարդայ, բայց անկից օգուտ քաղելու համար, և ոչ թէ ըստ հաճոյից կամ ըստ քմայ: Ինչը կը դիտէ և կ'ընտրէ, ինչպէս նաև մնացած բաներու մէջ ալ, թէ ո՞ր ուսման աւելի ղբաղելու է, Աստուծոյ փառքը և հոգւոյ փրկութիւնը ճարելու պատճառաւ՝ աւելի յաջողակ ըլլալու համար: Սուրբ Գիրքը, աստուածաբանութիւն, եկեղեցական պատմութիւն, քրիստոնէական վարդապետութեան վրայ՝ ձեռք մը կարգաւորեալ քարոզներ, ահաւասիկ իւր ուսմանց նիւթը: Եւ այս իւր ուսմունքը կանոնաւորեալ է, պարտաւորութեան խղճով ղբաղած, ցանցառ ընդհատուած, և միշտ ընդհատութեան պատճառը վերնալով հաստատմամբ կրկին անգամ ձեռք առնուած:

Եւ որպէս ղև ըրած ուսմանց օգտին վրայ աւելի ապահով ըլլայ, սուրբ քահանան ամենևին բան մը չի կարդար առանց ձեռքը ունենալու տետրակ մը, աննման բան. որուն մէջ այբբենի կարգով իւր շատ և տեսակ տեսակ ծանօթութիւնները կը նշանակէ, որոնք յետոյ ուշ տեղն իրեն շատ կարևոր պիտոյ ըլլան, և զորոնք շատ շուտ պիտոյ մտնար՝ եթէ այս կարգաւորութեան ճարտարութիւնը չըլլար:

Որչափ գեղեցիկ բան է աստուածպաշտութիւնը, որչափ կ'օգնէ ամէն բան կարգաւորելու, որչափ սուրբ գործքերով արդասաւոր են իր աղդեցութիւնները: Որչափ օգտակար կրնայ ըլլալ թէ պլըղ և թէ իր անձին աստուածպաշտ քահանան. « Աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է, և զաւեպս կենայ ունի՝ զարդիս և զանդերձելոցն » [1]:

1 Ա. Տիմ. Դ. 8:

243. Վերջապէս, մինչեւ հիմայ ըսածներս՝ի գործ դնելով, և վերը յիշուած պակասութիւններէն ամէն փուճով մաքրուելով և սրբուելով, և այնպիսի վարմունք մ՚ունենալով ալ, որ կարենանք ըսել, Թէ ամէն օր և ամէն ժամ մեզի պատուիրած գործքերը կը կատարենք: Կանո՞նաւո՞ր է ընթացքնիս, կրնա՞նք հանգիստ ըլլալ: Կրնա՞նք խաղաղութեամբ հանդչիլ, և ամէն իրիկուն աչքերնիս գոցել այն գեղեցիկ վստահութեամբ, այն իրենց ամէն պարտքը կատարող հաւատարիմ ծառաներուն պէս ու ըսել Պօղոս առաքելոյն հետ. « Ջընթացքն կատարեցի... Այսուհետեւ կայ ինձ արդարութեան պսակն »[1]: Այո՛, եթէ ամէն աղօթքներուս, գործքերնուս և վերաց համբերութեան գիտաւորութիւննիս մաքուր և անկեղծ եղած է, և տոգորուած ամէն բանի մէջ միշտ Աստուծոյ սուրբ կամքը իւր մեծագոյն փառաց համար ընելու յարատեւ բաղձանքէն: Որովհետեւ ինչպէս աղէկ գիտենք, գործքը որչափ ալ սուրբ ըլլայ, Աստուծոյ առջին արդիւնաւոր չէ, եթէ ոչ այն եռանդուն գիտաւորութեամբը՝ որով այն ներգործութիւնը կ՚ընդայ. ի՞նչ են աշխատութիւննիս, և յաւիտենական վարձատրութեան նկատմամբ ի՞նչ արժողէք ունին, եթէ գերբնական պատճառով չեն կատարուիր:

Հոս երկու ժայռե ալ խոյս տալու ենք. — առանց գիտաւորութեան, բնականապէս և սովորութեան համար գործք մ՚ընել, — և կամ չար գիտաւորութեամբ ընել զայն:

— Առանց գիտաւորութեան գործք ընել: Ո՛հ, ո՛րչափներ կ՚ընենք՝ միայն ընելու համար, մեքենայօրէն, ունակութեամբ, ըստ քմայ և առանց նպատակի մը: Ի՞նչպէս կրնայ Աստուած ուղղակի իրեն համար չը կատարուած և անուղղակի ալ իրեն չը վերաբերած գործքի մը մէջ գտնուիլ: Ինչպիսի՞ վարձատրութիւն ընելու կը պարտաւորի անոր, որ իրեն վարձատրութեան վրայ ոչ կը մտածէ, և ոչ ալ կը փափաքի անոր արժանի ըլլալու: Եթէ կը գտնուի այնպիսի կոյր մը, որ պահանջէ

1 Բ. Տիմ. Դ. 7, 8:

այսպիսի վարձատրութիւն մը, մահուան առեն Թող սպասէ. և կը տեսնէ Թէ այսպիսի ըստ դիպաց կեանքը ինչ խաղեր պիտոր խաղայ իր գլխուն: Ըստ որում դատարկ ձեռքով դատաւորին առջին ներկայանալու պիտոր սոխալուի այն յիմարներուն պէս, որոնց համար կ՚ըսէր Մարգարէն. « Ննջեցէն զքոնս իւրեանց և ինչ ոչ գտին »[1]:

— Չար գիտաւորութեամբ գործ մը կրնայ ընդունիլ, երբ մենք միայն գործք մ՚ընելով՝ բնական հարկը գոհ ընելու, կամ զուարճութեան համար, կամ նիւթական շահ մը քաղելու և կամ ժողովրդեան աչքի հաճոյ ըլլալու, կամ ամբարտաւանութեան, կամ մնափառութեան, և վերջապէս ուրիշ այնպիսի ո՛և իցէ պատճառի համար կը գործենք, յորմէ ուղիղ խղճմտանք մը գոհ չըլլալէն զատ, Աստուած ալ կը վշտանայ:

Ո՛րչափ գործքեր, ով Աստուած իմ, որչափ գործքեր այս անիծած ցեղէն կ՚ապականուին, եթէ ճշմարիտ աստուածապաշտութեամբ չի զօրանանք, եթէ սուրբ քահանայ չըլլանք: Հոս միայն վարձքը կորսընցնելու վտանգին վրայ չէ խօսքերնիս, այլ այսպիսի վարմունքով արժանի եղած պատիժէն ազատելու հնարը կը մոռնանք:

Չգուշութիւն, սիրեցեալ եղբայրակիցք, ամենամեծ զգուշութիւն, խանգարուած բնութիւններուս հակուածը զմեզ արագութեամբ Թերի գիտաւորութենց կը մղէ. փրկութեան ուրիշ յոյս և ճար չունինք, եթէ ոչ հաստատուն և ճշմարիտ աստուածապաշտութիւն մը: Մենք կը կարծենք որ ըրածնիս աքանչելիք ըլլայ. բայց եթէ գիտաւորութիւննիս բարի և արդար չէ, Աստուած այն գործքերուս և ոչ նայուածք մը տալու կը վերջանի:

— Մեծամեծ և գեղեցիկ բաներ կ՚ընեն, կ՚ըսէ Աստուած, բայց յիմարաբար՝ի պատիւ Բահաղին կ՚ընեն, որոց վրայ ոչ երբեք իմ սիրտս կը հաճի. « Եւ չինեցին բագինս Բահաղու... զոր... ոչ ածի զմտաւ ի սրտի իմում »[2]:

244. Ուսոմ, սիրեցեալ եղբայրակիցք, սրբոց խմաստութեամբը զգաստանանք, և գործքերնիս անոնց ը-

1 Սաղմ. Հե. 6:

2 Երեմ. ԺԹ. 5:

բածին պէս կատարենք, և ի գործ դնենք այս հետևեալ կանոնները, զոր իբրև համառօտութիւն մինչև հիմայ ըսածներուս այս գլխուն վերջերը կը գրենք. ասոնք այնպիսի կանոններ են՝ որ մեծապէս կ'օգնեն մեզի չատ մը արգիլութիւններ պահելու յաւիտենականութեան համար:

— Եւ ոչ վայրկեան մը ժամանակ կորսընցնենք. վասն զի ամէն մէկ կորսընցուցած վայրկեանիս կրնար հոգւոյ փրկութեան օգտակար ըլլալ, նախ մեր և ապա մեր եղբարց:

— Զար գործքերէ միշտ և ամէն առեն զգուշանանք. ժողովուրդը սրբացընենք, աշխարհքի լոյս և աղ ըլլանք, և մեզքին ոխերիմ թշնամի. մի թէ պիտոր համարձակինք ուրիշին քարոզած օրէնքներուս հակառակ վարուելու: Պիտոր հանդուրժէինք մեր վրայ տեսնելու այն մեղքը՝ զոր պլտոց վրայ ընդելու կ'աշխատինք:

— Չալածենք անկարգութիւնը, որ Աստուծոյ օրհնութենէն զուրկ է. կարգաւորեալ մարդ ըլլանք, միշտ ընենք ինչ որ ամէն վայրկեան ընելու ենք. մեզի հնազանդինք և ոչ թէ մեր քմայ, դերի ըլլանք մեր պարտուց և ոչ թէ ախորժակներուս:

— Վերջապէս աշխատինք և չատ աշխատինք և աստկից աւելի աղօթք ընենք. բայց թէ աշխատանքնիս և թէ աղօթքնիս սուրբ ըլլան, այնպէս որ Աստուած և միայն Աստուած ըլլայ գործքերնուս հոգին, և գիտաւորութիւննիս միայն անոր հաճոյանալը ըլլայ: Վախնանք սուրբ աւետարանին մէջ յիշուած այն Թշուառին նմանելու, որ կարծեր թէ պարապ կենալու իրաւունք մը ստացած ըլլար: Զարհուրելի են անոր դէմ ըսուած խօսքերը: Այլ, տար Աստուած որ մենք ալ չը լսենք այն խօսքերը. « Աստցից ցանձն իմ. անձն... հանգիր, ակր, արբ և ուրախ լեր: Ասէ ցնա Աստուած. անմիտ, յայսմ գիշերի զգիգ ի քէն ի բաց պահանջիցեն. եւկ զոր պատրաստեցեր, ո՞ւմ լինիցի »[1]:

1 Ղուկ. ԺԲ. 19:

ԳԼՈՒԽ Բ.

Աղօթք — Նորին մեծ ճարկաւորութիւնը — Քահանայի աղօթքին նկատմամբ սովորական կերպը — Գործնական կանոններ:

245. Քահանան արթընցածին պէս օրհնած ջրով երեսը խաչակնքելով, և Յիսուս, Մարիամ, սուրբ Հայր Յովսէփ անունները օգնութեան կանչելով, և սիրտը Ջերմեռանդաբար Աստուծոյ նուիրելով իր օրը աղօթքով կը սկսի. ուստի նախ անոր վրայ սկսինք խօսելու:

Իոլոր սրբոց, վարդապետաց, հոգևոր հայր, չատ մը քահանայապետաց, Ժողովքներու կանոնաց, երկոց Թեմերուն մէջ բոլոր եպիսկոպոսաց վկայութեանը կըսթնած, բոլոր կղերանոցներու հաստարակութեանց, միաբանութեանց, կրօնական ընկերութեանց, և ընդհանրապէս եկեղեցւոյ մէջ ո՛և եցէ իշխանութիւն ունեցողի մը յարատև սովորութեանը վրայ հաստատուած, մենք իբրև անուրանալի գործք մը կրնանք ըսել, Թէ ինչպէս որ նիւթական կերակուրը մարմնոյն՝ այսպէս ալ աղօթքն է որ հոգւոյն կեանքը կը պարարէ. և Թէ առաւելապէս քահանային համար անհնկ բացարձակապէս կարևոր բան մըն է, որ բարոյապէս անկարելի կ'երևի՝ որ ինքը առանց աղօթքի կարող ըլլայ իր ծանր պարտքերը այնպէս կատարել՝ որ իւր հոգւոյն փրկութիւնը ապահովացուցած ըլլայ:

Եւ յիրաւի, քիչ մը ուշադրութիւն ընելով կը տեսնուի որ այնպէս պէտք է ըլլայ: Անհնածանր և ամենակարևոր գործք մը, որուն եչքին կը կախուին անթիւ օգուտներ կամ անթիւ ձախորդութիւններ, պատշաճ չէ՞ որ այսպիսի գործ մ'աղեկ ընելու համար իրեն համապատասխան ալ փոյթ եռանդութիւն գործածուի: Պատշաճ չէ՞ որ սեպհ վրան ուսումնք ըլլայ, մտածուի և նախապատրաստութեան չարդիք ըլլայ արգելք ժամանակ գործութիւնները, և ամէն կերպ և հնարք գործածուի,

որ աղէկ վախճան մ՚ունենայ: Աստուածպաշտութիւն: Արդ եթէ աշխարհային գործքի մը համար այս ասոնցմէ հոգ ու խնամք տանիլ պէտք է, հապա որչափ աւելի աղօթքին նկատմամբ, մանաւանդ քահանային համար:

Աշխարհքիս երեսն ալ ուրիշ ինչ հարկաւոր գործ կրնայ ըլլալ քան զայն՝ որ քահանան յանձնառու եղած է իր ձեռնադրութեան օրը: Ո՛չ միայն ամենուն պէս պարտաւոր է իր հոգին փրկելու, այլ պաշտօնին բնութենէն պէտք է որ ալոցն ալ փրկէ, կամ գոնէ եռանդով աշխատի, ինքն ըլլալով Աստուծոյ և մարդկանց մէջ միջնորդ, Աստուծոյ պատասխանատու պաշտօնեայ, որուն ձեռքը յանձնած է թէ իշխանութիւնը և թէ իր զաւակութիւնը, իբր աստուածային Գլխոյն մէկ նոյն աշխատութեանց և պաշտօնին նուիրուած, աշխարհքի ըլլայ, ժողովրդեան հայելի, աւետարանի քարոզիչ, խորհրդոց մատակարար, և վերջապէս Յիսուսի Քրիստոսի ամենասուրբ մարմնոյ և արեան հանապազօրեայ պատարագիչ: Ինչ իշխանութիւն, ինչ պաշտօն, ինչ ծանր բեռն: Քահանայութենէ գուրս ո՛ր կրնայ գտնուիլ մարդ մը, որ այսպիսի կարևոր գործոց ղրաշած ըլլայ: Արդ այս գործքերը, կամ լաւ և այս աստուածային պաշտօններուը ոչ նիւթական են և ոչ ալ երկրաւոր. այլ միշտ հաւատքով Աստուած, Աստուծոյ հետ, Աստուծոյ համար և յանուն Աստուծոյ կը կատարուին: Քահանան ինքնիրեն ձգուած, բացարձակապէս անկարող կ՚ըլլար այս գերագոյն պարտաւորութեանց մէկ հատն ալ պատշաճ սրբութեամբ կատարելու: Մ՚իշտ և ամէն վայրկեան բացարձակ կարօտութիւն ունի աստուածային օգնականութեան, առանց որոյ կամ պիտոր չընէ ընելիքը, և կամ գէշ պիտոր ընէ. և այս երկու դէպքին մէջ ալ հոգւոց յաւիտենական կորուստը՝ աննահանջելի արդիւնք պիտոր ըլլայ իր ծուլութեանը, կուրութեանը և կամ ապիրատութեանը:

Իսկ արդ ո՛ր պիտոր գտնէ այս իրէն կարօտ եղած օգնութիւնը, եթէ ոչ աղօթքի մէջ: Եթէ աղօթասէր չէ, ինչ լաւ կրնայ ունենալ թէ իրեն և թէ ալոց համար:

Ինչ եռանդեամբ պիտոր վազէ մոլորած ոչխարներուն հետևէն: Ինչ սրտով պիտոր ջանայ իր նախանձաւորութեան դէմ դնող արգելքներուն յաղթելու: Ինչ առաքինութեամբ պիտոր մաքառի թշնամւոյն փորձութեանց դէմ: Ինչպիսի՞ երկաեռանդութեամբ կրնայ միանալ Աստուծոյ հետ, անոր համար աշխատելով: Ինչ մխիթարութիւններ կրնայ յուսալ, որոնցմով նեղութեանց և ձանձրութեան մէջ կարող ըլլայ սփոփիլ: Ինչ պիտոր ընէ ամպիոնը, խոստովանարանը, հիւանդաց անկողնոյն քով, և սեղանին առջև: Ակը կրկնենք. ինքը աղօթասէր մէկը չըլլալով, ինչպէս կրնայ այս ամէն բան կատարել:

Սուրբ քահանան իր տեսակ տեսակ պաշտօններուն և ըրած գործքերուն մէջ Աստուծոյ վառք կուտայ, չատ մը հոգիներ և անոնց հետ իրեններն ալ կը փրկէ: Ինչո՞ւ համար: Վասն զի աղօթասէր է: Հեռացուցէք իրմէ աղօթքը և ահաւասիկ եռանդէ, լուսէ, եկեղեցական հոգիէ, օծութենէն և աստուածպաշտութենէն զուրկ կը մնայ. ալ չի կրնար յառաջ երթալ կատարելութեան սուրբ ճանապարհայ մէջ: Շատ աշխատանքով հազիւ թէ քարշ կու գայ գաղջ և ծոյլ քահանային ընկերութեամբը: Ո՛հ, ով չի գիտեր որ աղօթքին հրաժարելով՝ ինքն ալ շուտով պիտոր չի գլորի այս խորխորատին մէջ, ուր ինկած է արդէն չարագործ քահանան, աղօթքին սուրբ և օգտաւէտ սովորութիւնը ձգելուն համար:

246. Այս խորհրդածութիւնները ընթերցողին վերջը, ալ չենք զարմանար սուրբերուն՝ զաղօթքը իրրև կարևոր և հարկաւոր կրթութիւն մը յանձնելնուն վրայ: Ալ այնուհետև զարմանք չեն պատճառեր սրբոյն Լիգուորեայ այս ծանր և իմաստուն խօսքերը.

— Այն մարդն, որ յաւիտենական Ճշմարտութիւնները չի մոածեր, առանց հրաշքի մը չի կրնար քրիստոնէավայել կեանք անցուցանել. ըսո որովհետև առանց մոածական աղօթից, լուսէ զուրկ գտնուելով՝ խաւարի մէջ կը շրջի: Հաւատոյ Ճշմարտութիւնները մարմնոյ աչքով տեսանել չը կրնալով, այլ միայն հոգւոյ աչքերով՝ մոածական աղօթից միջնորդութեամբ, ով որ չի մոածեր,

ըսել է որ չի տեսներ զանոնք, և հետևաբար ալ մոռնայ խաչարի մէջ կը գտնուի. ան տեսնը բնական է որ ըղգայական երևոյթ սէր կտակէ, և յաւիտենական բարիքներըը անարգէ։ —

Ահ զարմանք չի բերեր սրբուհի Թերեզա, վերը յիշուած սրբոյն Ալֆոնսոսի ըսածին պէս, « մտածական աղօթիկ նախատիպը », որ այս ծանր և զարհուրելի վճիռը կու տայ ըսելով, Թէ — Ո՛վ որ մտածական աղօթքը կը թողու, սատանայի կարօտ չէ որ զինքը դժոխք տանի, այլ ինքնիրմէ կ՚երթայ ։ —

Նմանապէս պէտք չէ որ զարմանանք Հ. Սուարէզի այն սուրբ և ընտիր խօսքին վրայ, որ խմաստութենէն շատ աւելի կը յարգէր զաստուածպաշտութիւնը. — Ես աւելի յաժարութեամբ կը համբերեի բոլոր դիտութիւնս կորսընցնելու, քան Թէ մտածական աղօթքին մէկ ժամը միայն ։ —

Նոյն այս սրբակեաց կրօնաւորը երբէք մտի բաժներ էր օրը ։ Ուժը ժամ աղօթքի, ուժը ժամ ուտմանց, և ուժը ժամ ալ կերակրոյ, հանգստեան և զբօսանքի ։ — « Ո՛ւժը ժամ աղօթքի » ։ Չի մոռնանք ասիկայ ։

Վերջապէս աս ալ չի մոռնանք ըսելու, որ շատ մը եպիսկոպոսներ քահանայից աղօթքին ամենամեծ հարկաւորութիւն ունենալնուն վրայ հաստատապէս համոզուած ըլլալով, դրեթէ օրինք մը հաստատեցին չի ձեռնադրելու եթէ ոչ զանոնք՝ որ ամէն օր շատ կամ քիչ երկար տեսն մը որոշած էին մտածական աղօթքի համար ։

Ուսոի քննենք աղօթքի նկատմամբ քահանայից վարմունքը ։

247. Արդեօք « չար » քահանան աղօթք կ՚ընէ։ Ո՛չ, ոչ երբէք. եթէ աղօթք ընէր, չէր կրնար չար ըլլալ. աղօթքին սուրբ սովորութիւնը ձգելուն համար չար է. աղաւ ։ Խօսքերնիս ամենակարևոր նիւթի մը վրայ դառնալով, կը խնդրենք ընթերցողներէս, որ ամէն մէկ բառերուս ալ ուշադրութիւն ընեն ։ Աղօթքը ձգելո՞ւն համար մէկը չար քահանայ կ՚ըլլայ, Թէ չար քահանայ ըլլալուն համար մէկը աղօթքը կը ձգէ։ Ուրիշ խօսքերով

քաղայայութիւնք ։ Ինչ բանով կը սկսի մէկը չար քահանայ ըլլալ։ Արդեօք մեղք գործելով կը սկսի քահանայ մը չար ըլլալ, Թէ աղօթքը ձգելով։ Տեսնենք Թէ ինչ կ՚ըսէ փորձառութիւնը, որ այս տեսակ հարցմանց ուղիղ պատասխանատուն է ։

Մէկ գլ Թողունք զանիկայ որ միշտ չար եղած է ձեռնադրութեան ժամանակն ալ ։ Անյաջիսի յանդուգնը Աստուծոյ կամքին հակառակ քահանայութեան մէջ սպրդած է ուրիշ ամէն արհեստի կամ գործքի մը չարմարութիւն չունենալուն համար ։ Անյաջիսէն համար կրնանք ըսել, որ կղերանոցին մէջ ալ երբէք աղօթքի չէ ղբաղած. ուրիշներուն պէս պարտաւոր եղած ըլլալուն համար միայն ներկայ կը գտնուէր. բայց ուրիշ է աղօթքի ներկայ ըլլալ, և ուրիշ է աղօթք ընելը ։ Արդ ասիկայ կղերանոցին մէջ ուրիշ բան չէ ըրած, եթէ ոչ մարմնով ներկայ, իսկ հոգւով և սրտով հեռու կեցեր է ։ Ուսոի յանդուգն գաւառացութիւն չըլլար եթէ ըսենք, որ այսպիսին իր անձին տէր ըլլալով՝ զանց ըրաւ իրեն վրայ բեռ եղած սովորութիւնը, ուսկից օր մը յառաջ սպառելու կը չտապէր ։

Ո՛չ, այսպիսի Թշուառին վրայ չէ խօսքերնիս ։ Աղօթքը, Թէ որ աղէկ ընէր, իր փրկութեան սկիզբը պիտոր ըլլար. հիմայ ալ, եթէ ուզէլու ըլլայ աղէկ ընել, կրնայ շուտով մը (Թէև ոչ առանց նեղութեան) գարձեալ զինքը այն ճամբուն մէջ դնել, որ խիղճը հանգիստ ըլլայ ։ Ուսկից յառաջ կու գայ որ այսպիսին առանց գիտնալու, աղօթքին ամենագեղեցիկ նեղբողը կ՚ընէ. այսինքն, իրեն քահանայութեան անարժան վարքովը ցոյց տալով՝ աղէկ տպրելու համար աղօթքին անտնօրինելի հարկաւորութիւնը ։

Բայց խօսքերնիս աւելի հասարակ դէպքերու վրայ դարձընելով, այն քահանային վրայ խօսինք՝ որ միշտ չար չեղաւ, այլ քիչ քիչ յառաջ գնաց չարութեան մէջ ։ Ասկից ալ աղօթք չ՚ըներ, ստոյգ է. բայց ո՞րչափ տեսնէն՝ ի վեր ։ Մենք կրնանք առանց սուտ ելլելու վախի մը հաստատել, Թէ քանի որ աղօթք ընելու սովորութեան

հաւատարիմ էր, Ճիշտը խօսելով՝ ինքը չար քահանայ մը չէղաւ, երբեմն գուցէ ծանր յանցանքներու մէջ ալ ինկաւ, բայց աղօթքով Աստուծմէ ընդունած շնորհքովը՝ կը նշմարէր իւր մեղքերուն ծանրութիւնը, և պատշաճ դեղերն ալ կը փնտռէր, առանց սրբապղծութեամբամբարշտութեան ծայրը հասնելու։

Ի՞նչպէս հապա այսպիսի ողբալի վախճան մ՚ունենայաւ։ Անհաւասիկ։ Անոր վերը յիշուած առաջին սխալմունքները, որչափ ալ որ հոգին աղօթքին բարի ազդեցութիւնը մաքրուած ըլլար, անոր վրայ տեսակ մը թուլութիւն և տկարութիւն կը բերէին. ուստի և աստուածպաշտութեան և հետեւաբար աղօթքին սէրը՝ օր ըստ օրէ աւելի կը նուազէր։ Եւ որովհետեւ յառաջ գուցէ շատ ջերմեռանդութեամբ աղօթք ընելու սովորութիւն չունէր, յետոյ ալ նուազ ջերմեռանդութեամբ կ՚աղօթէր. ուստի և համ ու հոտ չը գտնելով, երբեմն երբեմն առանց խղճահարութեան զանց կ՚ընէր, երբեմն ալ կը կարճէր զայնքը այն ըրած օրերն ալ, քանի մը ցնդած և հարեւանցի խորհրդածութիւններով գոհ ըլլալով. ան ալ շատ պատ քիչ մը ձայնաւոր աղօթք սովորութեան վարժութեամբ ըսելէն վերջը, որ և ոչ աղօթքի անուան արժանի է։ Վերջապէս անպիտանութիւնը տեսնելով՝ այն քիչ խորհրդածութենէն ալ վերջին բարեւը տուաւ, և այսպէս իւր աղօթքը ոչնչացուց։ Մ՚ուս կողմանէ ալ, ուրիշ իր քովը մտածական աղօթքի չափ յարգութիւն չունեցած աստուածպաշտութեան կրթութիւններ՝ արդէն շատոնց ի վեր վերջացած ըլլալով, օրուան մէջ ալ ուրիշ գործ մը չը մնաց եթէ ոչ չտապով և առանց ջերմեռանդութեան, առանց պատրաստութեան և գոհութեան ըսուած պատարագ մը, և աստուածային ժամերգութիւնը, (ըստ որում վինքը մեղքին մէջ այն աստիճան յառաջ գացած չէնք հնթադրեր, անանկ որ իր ամենածանր պարտուց մէջ այս ծանր պարտաւորութեան դէմ ալ պակասած ըլլայ), այն տեսակ ըսուած՝ որ զԱստուած հաշտեցընելուն տեղը աւելի զայրացնէ։

Իրը այսպէս ըլլալով, ինչպէսի՞ վիճակ կը պատրաստուի արդեօք երեն համար։ Մարդկային վրկութեան Թշնամին, որ միշտ մտնջող առիւծի նման կը շրջի որսի համար, կարծէք թէ առիթը ձեռք առնելով՝ այս թշուառ թափառականին վրայ յարձակած և անոր յաղթած չըլլայ։ Ջինքը անդէն և մանաւանդ թէ ընդհանրապէս աղօթքին և թէ՚ի մասնաւորի մտածականին զօրաւոր զէնքէն զուրկ տեսնելով, կարծէք թէ գթայ անոր տկարութեանը վրայ, թէ մեծ ցնծութեամբ օգուտ պիտոր քաղէ անդունդը գլորելու վտանգաւոր առիթներու մէջ դնելով, անոր երեւակայութիւնը պիղծ նկարներով խռովելով, ամենայն ճարտարութեամբ անոր բարի գործ մ՚ընելու դժկամակութիւնը. և ընդհակառակն ալ մոլութեանց հակումը աւելցընելով՝ ամէն տեսակ փորձութիւններով վինքը անհանգիստ ընելով։

Սակայն աւելի յառաջ չերթանք, վասն զի ձեացածը, ո՜հ, շատ դիւրաւ կը դուշակուի։ Այո՛, անշուշտ այս է ան չար ճամբան՝ որուն մէջ կը դտնուի աղօթքը ձգող քահանան։ Աղօթքը երեն օդնական և նեցուկ է, եթէ ինքը անոր հաւատարիմ ըլլայ. իսկ թող տուած աւետնը, կ՚իյնայ։ Աղօթքը վինքը կը վերցընէ և ոտքի վրայ կը կանգնեցընէ. եթէ թշուառը անգամ մ՚իյնալէն վերջը անոր դիմէ և յանձնուի, աղօթքը կը շարունակէ վինքը կառավարելու և ճամբայ ցոյց տալու, քանի որ ինքն ալ զայն ուղեցոյցի տեղ դնելով՝ անոր կը հետեւի. և ոչ երբեք չարութեան ճամբուն մէջ բաղորովին կը կործանի, մինչեւ որ ինքն ալ բաղորովին թողլէն տայ աղօթքին տէրը կրթութիւնը։

Ի՞նչ գեղեցիկ ներքոյ մը աղօթքի, ինչպիսի՜ ապացոյց անոր օգտակարութեանը, մանաւանդ անհրաժեշտ հարկաւորութեանը։

Ի՞նչ է, սիրելեակ և յարգելի եղբայրակիցք, ինչ է վարմունքնիս աղօթքի նկատմամբ։ Անմիջապէս հիմայ առաջարկուած վտանգառութեան լուսովը ինչ կը տեսնենք հոգիներնուս վրայ։ Ո՜հ, եթէ մինչեւ ցարդ աղօթքի մէջ քիչ մը անհոգ գտնուեցանք, շուտով առանց տեսնելու կորսընցնելու, եռանդեամբ սկսինք, վասն զի անիկայ է մեր պահապանն և պաշտպանը։

248. Գաղջ և ծոյլ քահանան ալ աղօթք կ'ընէ: Այո՛, սովորաբար. բայց շատ անգամ կը պակսի, և ըրածն ալ աղէկ չըներ:

Կը գտնուին այնպիսի գաղջ և ծոյլ քահանաներ, որոնք միշտ գրեթէ մի և նոյն վիճակի մէջ են, ոչ բոլորովին աղէկ, և ոչ ալ բոլորովին չար. և այս ալ ըստ մեր կարծեաց, սովորաբար ըրած քիչ մը աղօթքներուն արդիւնքն է. իրաւ է, աղէկ չեն ըներ, բայց այսու ամենայնիւ կ'ընեն, և Աստուած ալ իրենց կէս հաւատարմութիւնը կը վարձատրէ զկրնէք անդունդին բերնին վրայ բռնելով, որուն գալ կ'անցընեն իրենց ողորմելի կեանքը, այնչափ գթութիւն ընելով՝ որ մէջը չկրնան: Երբեմն և նաև շատ անգամ ալ չոր ու ցամաք կ'անցընեն, գրեթէ առանց ծերպագրութեան, և ահաւասիկ ինչուան համար հազիւ քայլ մը մնացած է որ անդունդին մէջ կլլուին. բայց փրկութեան այս միջոցին բոլորովին հրաժարած չըլլալով, և երբեմն ալ՝ ի գործ դնելով զայն, բաւական ուժ կը ստանան, որով վերջին կործանմանէն զերծ կը մնան:

Շատ քահանան մահուան մեղայ գերութենէն յառաջ՝ գաղջ քահանային վիճակէն անցաւ: Ի՞նչ տարբերութիւն կայ իր ու գաղջ քահանային մէջ, որ ամբոյաւ իրեն հետևելու ծանր չարութեանց մէջ: Մէկը աղօթքը բոլորովին ձգեց, միւսը դեռ ևս երբեմն կը յիշէ. ահա ասսիկ ըստ մեր կարծեաց այս գաղտնեաց բանալին:

Սակայն, եթէ այն թերի և շատ անգամ զանց եղած աղօթքը կրնայ դեռ ևս ղգաղջ քահանան կատարեալ չարութեան մէջ լինալու չի թողուր, բայց միւս կողմանէ այնչափ զօրութիւն ալ չունի որ զինքը բարի քահանայ ներսն կարգը դասէ. թող արթընայ ողորմելի Թմրութիւնէն, և յօժարակամ ջանքով աշխատի իր աղօթքը ընել, ինչպէս որ պէտք է. և պիտոր տեսնէ որ ժանտահոտ ղազրութենէն ազատելով, մինչև սուրբ քահանայից բարձրութեան պիտոր հասնի, և դուցէ մինչև այն գերազանց ասպիճանին ալ՝ յորում Աստուած սուրբ քահանային երկնաւոր հրաձանաց ճաշակը առնել կու-

տայ: Ըսածներուս փորձը հոգւոր կրթութենէն և անմիջապէս անոնց յաջորդ օրերը առած կ'ըլլայ, երբ դեռ ըրած առաջադրութենէն պտուղը կը պահէ: Ան տեղը իւր հոգին Թմրութեան մէջ չի գտնուիր: Ինչո՞ւ համար: Վասն զի հաստատ սրտով աղօթքին սովորութիւնը ձեռք առաւ, թող յարատևէ, և պիտոր տեսնէ թէ քանի որ այն բարերար պատճառը կայ, նոյն ամենաքաղցր արդիւնքը պիտոր վայելէ:

Բայց չի խաբուի իր վիճակին վրայ, և մեծ բան մը չի կարծէ զինքը չար քահանային քիչ մը հեռու տեսնելով: Եթէ այն ըրած կարճ աղօթքը ղքահանայ մը չարացունով մահուան մեղքէն զինքը կ'ազատէ, դուցէ Աստուծոյ աչքին ալ ամենաթշուառ երևնալու արգելք մը չըլլայ: Թէև չար քահանային նուաղ յանցաւոր, բայց դուցէ այս հեռևեալ զարհուրելի խօսքերուն արժանի եղած ըլլայ. «Անուն կենդանւոյ ունիս, և մեռեալ ես»[1]: Աստուածս իրեն շատ կը յարմարի. «Այլ դու գաղջ ես... հանդերձեալ ես փսխել ի բերանոյ իմմէ»[2]:

Վերջապէս թէ գաղջ և թէ թոյլ քահանան, երկուքն ալ առանձին կերպով և առանց գիտնալու՝ աղօթքին նեղբողը կը չինեն, և իրենց վարմունքովը կ'ապացուցանեն անոր օգտակարութիւնը և հարկաւորութիւնը:

249. «Բարի» քահանան աղօթք կ'ընէ: Այո՛, և շատ քիչ անգամ կը պակսի. միայն թէ այնչափ օգուտ չի տեսներ, որչափ որ կրնար. վասն զի բոլորովին պատշաճ սուրբ պայմաններով չըներ:

Բարի քահանան Աստուծոյ ալ՝ մարդկանց ալ չարգելի է. բարիք կ'ընէ, մանաւանդ եկեղեցւոյ մէջ: Շատ պատուով իր պաշտօնը կը վարէ, բարուց մէջ անբասանելի է. լաւ պարտքերը ընդհանրապէս կանոնաւոր կերպով և ընկերին բարի օրինակ տալով կը կատարէ. երբեք չուզեր ծանր մեղք մը գործել, կ'ուզէ փրկութեան հասնիլ, բայց ոչ առանձին. կը քարոզէ, քրիստոնէական կը մեկնէ, խոստովանութիւն կը լսէ, Աստու-

1 Յայտ. գ. 2: 2 Յայտ. գ. 16:

ծոյ համար հոգինեը վաստրկելու փափագով, և վերջա-
պէս բոլոր իր վարմունքով ըսել կու տայ, և իրօք ալ
արժանի է որ ըսուի, թէ « բարի » քահանայ մըն է:

Բայց այսպիսի հազուագիւտ ձիրքերու քով անկա-
տարելութիւններ ալ կը գտնուին, և քանի մը պակասու-
թիւնները ալ, որոնք շատ ծանր չըլլալով՝ ժողովրդեան
քով ունեցած յարգութեան ու վստահութեան չնաս մը
չեն բերեր, ուստի ինքն ալ անհոգ կը գտնուի և ուղղե-
լու չի ջանար: Ասոնք են, ղոր օրինակ, քիչ մը անհամբե-
րութիւն, քիչ մը յաճախ տեսնուած յամառութիւն-
ներ, ուրիշին գործոց պարսաւանք, խելագատութիւն-
ներ, մնոտի խօսքեր, մէկու մը հետ խոժռուելու դիւրու-
թիւն, թեթեւ սխալութիւններ, Աստուծոյ ծառայու-
թեան մէջ ծուլութիւններ, արտաքոյ կարգի բաներու
քիչ եռանդուն. և ուրիշ այս տեսակ բաներ՝ որոնք ար-
գելք կ'ըլլան կարելի և պէտք եղածին չափ սուրբ ըլլա-
լու, որոնք եկեղեցւոյ մէջ ընելիք բարեաց թիւը կը պակ-
սեցնեն, և « սուրբ » քահանայից դասը դասուելու ար-
գելք կ'ըլլան, որոնք ամենայն ղգուշութեամբ կը չանան,
մարդկային տկարութեան ներածին չափ, այս վերջին
շեղ ամէն արատներէն մաքրուելու:

Այսչափ ինչ ըսել հարկաւոր էր, աղօթքի նկատ-
մամբ՝ բարի քահանային վարմունքը հասկընալու համար:

Ըսինք որ ինքը հաւատարիմ է այս սուրբ կրթու-
թեան, և երբեք չի պակսիր, և Աստուած ալ իւր վարձ իւր
այս հաւատարմութեան, ոչ միայն հեռու կը պահէ ինքը
քը էար քահանային սոսկալի մոլորութիւններէն, այլ
նաև թոյլ քահանային գաղջութենէն ալ: Ասոր ուրիշ
ինչքա համար « սուրբ » քահանային պատուոյն չի հաս-
նիր, այլ բոլոր իր կեանքը « բարի » քահանայի վիճակին
մէջ կ'անցընէ: Ասոր ալ պատճառը իր աղօթք ընելու
կերպին հարցուցէք:

Փիչ մը ուշադրութիւն ընելով կը տեսնենք, որ ա-
մէն պէտք եղած պայմաններով ի գործ չի դներ այն
սուրբ կրթութիւնը, որպէս զի նա ալ « կատարեա-
պէս » իր արդիւնքը ընէ: Մեր ամէն պակասութիւննե-

րը, եթէ զանոնք արմատաքէն խլելու հոգ չի տանինք,
ամենքն ալ աղօթքին բարի պտուղներուն զօրաւոր ար-
գելքներ են: Արդ այս պակասութիւններէն, ինչպէս
վերը ըսինք, շատ մը կը գտնուին բարի քահանային վրայ՝
որ զանոնք ուղղելու շատ հոգ չի տանիր:

Ակնյայտաբար կու գայ իւր աղօթքի մէջ ունեցած
պաղութիւնը, վասն զի շատ մեծ սիրով չի կատարած
սիրեր. անկից կը ծագի իւր ցամաքութիւնը բաւակա-
նին չափ խոնարհ չըլլալուն համար. անկից յառաջ կու
գան զինքը չիմոդող մտայ ցնդութիւնները, ամիսով չըլլա-
լուն համար. անկից կը ծագին ձանձրութիւն և տխա-
ճութիւնները, զգայարանաց հետ՝ հոգւոյն մեծ վնասով՝
քիչ մը ներողամտութեամբ վարուելուն համար:

Եթէ աղօթք ըներ հաստատուն առաջադրութեամբ
զանիկայ իրրև իւր պակասութիւնները ուղղելու համար
զօրաւոր միջոց մը գործածելու, շատ աղէկ բան ըրած
կ'ըլլար. բայց այնպէս չըներ: Իրաւցընէ ամէն օր աղօթք
կ'ընէ, բայց առանց մանաւանդ և որոշած դիտաւորու-
թիւն մը գնելու: Աղօթքը իրեն համար նպատակ մըն է,
և ոչ թէ սուրբ ըլլալու համար միջոց մը. իրրև մէկ ան-
վերջանալի ճանապարհ մըն է, ուր ամէն առտու կու
գայ ընդագայելու, առանց ուրիշ նպատակի՝ եթէ ոչ Աս-
տուծոյ հետ հոգւոյ զբօսանք ընելու համար. զբօսանք
մը, որ միշտ մի և նոյն չէ: Ինքը գոհ է, եթէ կարող ըլ-
լայ ըսել. կէս կամ մէկ ժամու աղօթքս ըրի, ամէն մտայ
ցնորութիւնները մերժեցի: Բայց այսու ամենայնիւ թէպէտ
կ'ընէ այս աղօթքը, որ իրեն արդիւնքը ունի, դեռ ևս
իւր պակասութիւնները կը տեսնէ, իւր սրբութիւնը
չտեսնելով, եռանդը տեսնել ևս չի ծործրքիր, ըրած բարի-
քը օրերուն համեմատութեամբ չի ճաշիր, և շատ մը՝ կամ
գոնե քանի մը առաքինութիւններ երկար տարիներ ան-
կատար տուեր պարզ մը վիճակին մէջ կը մնան:

Ուրեմն ինչ պէտք է ընել: Պէտք է աղօթքները շատ
աղէկ ընել, կանխաւ կրկին հեռատես և մերձատես պա-
տրաստութիւններով. այնպիսի աղօթքներ՝ որոց մէջ
մոքերնուս առջին ներկայ ունենանք տեսակ տեսակ

պակասութիւնին. այնպիսի աղօթքներ՝ որ այս պակասութիւնները ջնջելու նպատակաւ եղած ըլլան. անանկ աղօթքներ՝ որոց մէջ միայն անորոշ ընդհանուր և հասկնալի առաջադրութիւններ տեղի չունենան, այլ որոշուած ըլլան այն մանաւանդ պակասութեան համար, և համայն գլխաւոր անկատարութենց՝ որ աւելի անհաձոյ են Աստուծոյ այս մեր անցուցած կեանց մէջ: Այդ ասիկայ է որ զանոց կ'առնուի, մանաւանդ թէ ընելն անդամ և ոչ մոքերնիս կ'անցնի. ըստ որում, ինչպէս ըսինք, այն պակասութենց և թերութենց հետ խաղաղ կ'ապրինք, առանց աշխատելու և առանց ուղղուելու ձգտելու վախճադի մը:

Աղէ, ուզենք բարի քահանայք, որոց վրայ կը խօսինք և զորոնք մեծապէս կը յարգենք և կը մեծարենք, հետևիլ այս խորհուրդներուս, զոր համարձակութեամբ իրենց տալու, այսօրուընէ հաստատապէս մոքերնին դնելին մտածական աղօթքը մեր ցոյց տուած կանոնաւորով ընելը: Իրաւցընէ այնպիսի վարք մը պիտոր ունենայ՝ որ աղօթքին ամենագեղեցիկ ներքողն ըլլար:

250. Վերջապէս «սուրբ» քահանաներն ալ աղօթք կ'ընեն, և ինչպէս կ'ընեն: Այո, ստուգիւ սուրբ քահանաները աղօթք կ'ընեն, և միայն Աստուած գիտէ թէ ինչպիսի հնորհաց առատութեան պատճառ կ'ըլլայ: Աղօթքին զիրենք զրկելը, կեանքերնէն զրկել մըն է: Ցօժար սրտով կը սկսին, մեծ զուարճութեամբ երկար ժամեր կը շարունակեն, և դժկամակելով ալ վերջ կուտան: Պօղձեան սուրբ փրանկիսկոս հինգ կամ վեց ժամ աղօթքէ վերջը, կ'աղաչէր իր ընկերոջը (որ մանաւանդապէս քովը գրուած էր իւր եռանդը չափաւորելու համար) որ մեծ հնորհք մ'ըրած կ'ըլլար՝ եթէ քառորդ մը ժամ նակի ալ ներողամիտ ըլլար: Մենք գիւրութեամբ չենք կրնար ըմբռնել այս կրթութեան այս աստիճան սէրը որ մեզի երբեք այնքան կարճ չի գար, և յորմէ սոսկալի բան չունինք հաձոյ: Սուրբ ըլլանք, կամ գոնէ սրտերնուս մէջ սուրբ ըլլալու համար հաստատապէս աշխատելու վախճադը մնուցանենք. և ան ատենը կը տեսնենք,

որ մինչև հիմայ չը հասկըցած բաներնիս՝ ան ատենը շատ դիւրութեամբ պիտոր ըմբռնենք:

Աղօթքը Աստուծոյ հետ խօսակցիլ, մտերմաբար հաղորդակցիլ մըն է. բոլոր մեր սրտով զինքը սիրենք, անոր անհաձոյ եղած և սէրը վրանէրնիս կտրելու աւելի եղած պակասութեանց դէմ՝ որերիմ թշնամիլ պէտ պատերազմինք, ղժուշանանք հաւանութեամբ ի և ևցէ մեզք մը գործելէ. և ան ատենը Աստուծոյ անսահման բարութիւնը, որ ուրիշ բան չուզեր՝ եթէ ոչ ամենուն հետ երկարօրէն բանակցիլ, իրօք մեր սրտին մէջ ալ սուրբ բերուն սրտին պէս պիտոր բանակցի:

Այսու ամենայնիւ միայն հոգւոր մխիթարութիւնները չեն որ աղօթքը զինքը աղէկ ընդունին կը շահի, վասն զի ուրիշ շատ աւելի մեծ և անգիւտ արդիւնքներ ունի: Այն պայծառ լոյսերը՝ որ բոլոր մեր կեանց ընթացքը կը լուսաւորեն, այն փորձութեանց դէմ եղած արիութիւնները, այն հոգւոց փրկութեան տաստիկ եռանդը, այն կարգաւորութեան և կանոնաց սէրը, այն առանձնութեան և ուսման հաձոյութիւնը, այն ընդունայնութեան քամահրանքը, այն բարի գործերով լեցուն բոլորովին գեղեցիկ՝ չնիկ և սուրբ կեանքը, առանք ամենքը պտուղ և արդիւնք են այն բարի աղօթքներուն՝ որոց մէջ սուրբ քահանան ամեն օր կը կաղդուրուի, կը նորոգուի, կը մաքրուի և կը սրբանայ: Հետացուցէք անկից աղօթքը, և կը տեսնէք, թէ ինչպէս շուտ անյաղթութեան կը փոխուի այս առատութիւնը: Բայց ասկէ ալ աւելի է, որ մենք ոչ միայն չենք ուզեր հաւատալ որ աղօթքի մէջ այսպիսի հրճուանաց, զուարճութեան և մխիթարութեան ախորժը զգացուի, այլ գուցէ և ոչ ալ անոր այսպիսի մեծամեծ օգուտներու պատճառ ըլլալուն հաւատանք, և գրեթէ այսչափ մեծ գովեստից մէջ, քիչ մըն ալ չափազանցութիւն ըլլալու փորձութիւնը զգանք, որ թէև ծուռ՝ բայց բնականապէս ասկէ ալ մտքի կուգայ. ըստ որում սուրբ քահանայից ըրածին պէս՝ այն գիտութեան մաքրութեամբ և եռանդեամբ աղօթք ըրած չըլլալով, չը կրցանք երբեք փորձել մեր վրայ անոր սքան

չէլն պատուղը. ի բաց առեալ այն քիչ, վատուժ և տկար պատուղները՝ որոնք ունեցանք մեր սրամադրութեանց համեմատ: Եւ այս ունեցած ողորմելի պատուղներս ալ իրաւցընէ գեղեցիկ և բարի բան մը չէին, մանաւանդ թէ աւելի բացասական՝ քան թէ ստորասական բարեաց կերպարանք ունէին. վասն զի իրենց մեզի տուած օգնութիւնը աւելի չարէն խոյս տալու կը նպաստեր, քան թէ բարիք մ'ընելու, և ինչպէս որ գաղջ քահանային ըրած քիչ մը աղօթքը՝ զինքը չար քահանայից կարգը անցնելէն կը պահէ, այսպէս ալ մեզի կը հանդիսի, այսինքն այն ըրած աղօթքնիս գուցէ միայն օգնէ մինչև գաղջ ըլան կարգը չը նուաստանալու, և ոչ աւելի ինչ: Ուստի մեծ բան մը չերեւնալով ոչինչ բանի տեղ կը դնենք, և ոչ ալ աղօթքին կու տանք այս արդիւնքը: Բայց անգամ մը փորձենք աւելի սուրբ և կատարեալ ըլլալու, հաստատ և յօժար կամքով մուտ ականնիս ընելու. և այն ատենը դիւրաւ պիտոր տեսնենք թէ աղօթքը այնպէս մեր վրայ ալ իւր սքանչելի արդիւնքը ցոյց կու տայ, ինչպէս սուրբերուն վրայ:

Ըստ մեր կարծեաց յայսմ միայն կը գանուի աղօթքին գաղտնիքը. ինքը իրաւցընէ ճոխ է անոման պատուղներով, բայց աղօթքը առանց մեր գործակցութեան չի տար այս պատուղները, մեր կողմանէ ալ պատշաճ տրամադրութիւններ կը պահանջուին: Ինչպէս ցորենի հատիկ մը, որ ըստ ինքեան շատ աղէկ բան մըն է, բայց եթէ յարմար հողի մէջ չի գրուի՝ ամենևին պատուղ չի տար: Մենք միշտ մուտականի աղուոր գրքեր, աղօթքի նոր կարգեր վինտեղու եռանդ ենք, և պաղտեղութեան ու մոքի ցնդման վրայ ալ մեր անձին դէմ կը բարկանանք. ամենքն ալ գերազանց, գովելի և բարի սրամադրութիւն նշանակող բաներ են. բայց եթէ ասկից զատ ուրիշ բան չընենք, էականին երբէք հասնելիք չունինք:

Կ'ուզենք պակասութիւններէս մաքրուիլ, անոնց դէմ անհաշտ պատերազմ հրատարակել, և սուրբ քահանայից կատարելութեան հասնելու փափագիլ թէ ոչ: Եթէ առ այս հաստատ և անկեղծ կամք ունինք, մեր

ամէն մուտականները շատ աղէկ կ'ըլլան, և շատ ալ պիտոր օգնեն՝ բաղձանքնիս ի գործ դնելու: Բայց եթէ կամքերնիս հաստատուն և անկեղծ չէ, բոլոր մուտականներու գրքերը, բոլոր աղօթքի եղանակները, բոլոր ցնորմանց վրայ զգացած տհաճութիւնիս, երբեք պիտոր չօգնեն մեր ուղղութեանը, որուն հաստատ որոշով չենք փափագիր:

Ձննեցէք առ բարին գործած աշխարհական մեծ մեղաւոր մը, որուն անտանելի կու գար իրկիւան ըրած աղօթքը: Ինչո՞ւ համար. վասն զի երկէ դեռ զմեղքը կը սիրէր: Հիմայ ալ աղօթքէն մեծ զրաւճութիւն մը կը զգայ: Ինչո՞ւ համար. վասն զի այսօր զմեղքըատելու սկսեր է: Ուրեմն պէտք է ըսենք որ մի և նոյն բանն է աղօթք ընելը և կամ չընելը, անկից յառաջ եկած պատուղները չը տեսնելուս համար: Ո՛չ, ոչ երբեք, ըստ որում աղօթքը չարագոյն ըլլալնուս արդեօք եղաւ՝ պէտք է որ շարունակենք, բայց անանկ որ զմեզ բարեգոյն ընէ, ամենևին արգելք մը չը դնելով անոր գործողութեան յամառ ընդդիմութեամբ, և կամ թերութեանց ու պակասութեանց մէջ չիմար շարունակութեամբ:

251. Չոս մուտական աղօթքի մանաւոր կանոն մը պիտոր չի նշանակենք: Ըստ մեր կարծեաց, ըսածներս ամէն կանոնէ ալ գերազանց են. բայց այսու ամենայնիւ դիտմունքնիս չէ չընդունիլ այն կանոնները՝ որ հոգևոր կեանց վարդապետները մեզի աւանդեցին: Այս կանոնները շատ օգտակար և աղէկ են, մանաւանդ անոնց համար՝ որ երբեք աղօթք ըրած չըլլալով՝ կանոնի մը պէտք ունին, որ կարող ըլլայ իրենց միաքը ամփոփ պահել և ցրուելու ալ արգելք ըլլալ: Բայց մենք բարեպաշտ եղբայրակցաց խօսեցուով, որոնք երկար աւեներ է վեր յօժարութեամբ սրտի աղօթքի զբաղած ըլլալով, զանց կ'ընենք անոնց մասնաւոր կանոնաց նշանակութիւնը՝ որոնք կրնայ ըլլալ որ իրենց չի յարմարին, և զորոնք ուղած աւեներնին, կրնան դիւրութեամբ այն գրքերուն մէջ գտնել՝ որոնք «վարդապետօրէն» այս նիւթիս վրայ ձառած են: Մենք միայն թէ քանի մը խօսք իրրև աղդարարութիւն պիտոր զրոյցենք

այնպիսինները, որոնք կը բաղձան աղօթքէն բարի և ա-
ռատ պտուղներ քաղելու *:

Ը. Սովորաբար այս տրամադրութեան մէջ ապրիլ, այսինքն աւելի վեր սեպել մեռնիլը՝ քան թէ հաւանու-
թեամբ միայն ներելի մեղք մըն ալ գործելը:

Թ. Նախընթաց երիկուընէ հետեւեալ առաւօտան մոա-
ծականին նիւթը պատրաստել, և քնանալէն յառաջ միտք բերելով յիշել:

Ժ. Մտածականին այնպիսի նիւթ մ'ընտրել՝ որ իւ-
րաքանչիւր ուրուք հոգեւոր կարօտութեանցը աւելի յար-
մար գայ, և շուտով օգնէ գլխաւոր պակասութիւնները ուղղելու:

Ժ. Մտածականին միշտ աղէկ մերձաւոր պատրաս-
տութիւն մ'ընել:

Ե. Մտածականը պատշաճ տեղ մը ընել. այսինքն անանկ տեղ մը՝ ուր միտքը ամփոփ մնայ, և ծանրակշիռ խոհմանց յարմարի:

Զ. Մտածականին առեն՝ շնորհալի և պարկեշտ կեր-
պարանք մ'ունենալ, որ կարծածնեղէս շատ աւելի կ'օգ-
նէ շնորհաց ներգործութեան:

Է. Անհնայ մերժել ցնորութիները՝ երեւցածնելուն պէս. և եթէ ուրիշ կերպով ազատիլը կարելի չէ, դիմք մը ձեռք առնելու է:

Ը. Մտածականը միշտ զպակասութիւնները ջնջելու համար ուղղելու և գարձընելու է, և իրօք ալ ուղղու-
թեան շնորհքը Աստուածմէ խնդրելու է եռանդուն ա-
ղօթքներով և հառաչանքներով:

Թ. Մտածականի առեն և մանաւանդ լմնալէն վեր-
ջը՝ բացայայտ և կատարեալ որոշ առաջադրութիւն դնե-
լու է այն սխալանաց նկատմամբ, որոց մէջ սովորաբար

* Հղինակին այսպէս պարբերութեան մէջ ըսածները շատ ի-
րաւացի են միայն եւրոպացի քահանայից համար, որոնք աճէն տե-
սակ դիւրութիւններ ունին, և իրօք առաջ հետեւեալ ազդարարու-
թիւնները ալ բաւական են անոնց. բայց մենք ընթերցողներուս
մտածական աղօթից եղանակին գաղափար մը տալու համար, գործ-
նական կանոն մըն ալ կ'աւելցընենք այս գլխու վերջը:

կ'լինանք, և որուն համար կրնանք նախագուշակել՝ որ օրուան մէջ շատ անգամ առիթը պիտոր հանդիպի:

Ժ. Վերջապէս եթէ կրնանք՝ ամբողջ ժամ մը նուի-
րելու է մտածականին, կամ գոնէ կէս ժամ ձայնաւոր աղօթքներէ դուրս: Եթէ կէս ժամ մը, կամ մէկ ժամ մը մտածականի պարապելու դժկամակութիւն մը կ'ըզ-
գանք, հաստատ դիտանք որ այսպիսի դժկամակութիւն մը զգալնուս համար, բոլորովին մտանաւոր կարօտու-
թիւն մ'ունինք մտածական աղօթից: Ըսածնիս գոնէ փոքր օգնութիւն մը կարենայ մտատկարարել արժա-
նաւոր եղբայրակիցներուս: Եթէ ուղելու ըլլան, բոլոր այս գրքին մէջ ըսածնեղէս շատ աւելի օգտակար պիտոր ըլլան իրենց՝ միայն մտածականին վրայօք ըսած քանի մը խօսքերնիս:

ԳԼՈՒԽ Գ.

**Պատարագ — Իւր գերազանցութիւնը — Քահանայից պատարագ զուրցելու սովորական կերպը — Գործնա-
կան կանոններ:**

252. Թէ որ քահանան, կ'ըսէ սուրբն Ալֆոնսոս Լիգուորի, չըմտնէ պատարագին սուրբ զոհին անսահ-
ման մեծութիւնը, երբէք պիտոր չը կարենայ ըստ ար-
ժանւոյն նուիրել զայն: — Յիսուս Քրիստոս աշխարհքիս վրայ աւելի մեծ և աւելի գերազանց բան մը չըրաւ: —

Նոյն անիկայ, կ'ըսէ Տրիտենդեան ժողովքը, որ ինքը զինքը խաչին վրայ զոհեց, սեղաններու վրայ քահանա-
ներէն կը զոհուի. «Նոյն ինքն զոհի այժմ ի ձեռն քա-
հանայից, որ զանձն յայնժամ զոհեաց ի խաչին»:

Սուրբն Յովհան Ոսկեբերանը կենդանի հաւատքով մը կ'ըսէր. — երբ կը տեսնես զպատարագիչ քահա-
նան, մտածիր քահանան և մտքիդ առջին ներկայացուր Աստուծոյ ձեռքը աներեւութաբար երկնցած սեղանին վրայ, — «Յորժամ տեսանես զպատարագիչ քահանային,

մի զքահանային տեսանել համարեսցիս, այլ զանեբևոյթ ձեռն Աստուծոյ ձգեալ ի վերայ սեղանոյ »։ —

— Ամէն քահանայ, կ'ըսէ նոյն սուրբը, պատարագը աւարտելէն վերջը, պէտք է որ բոլորովին Աստուծոյ սիրովը բորբոքուած և դժոխոց ահարկու ըլլայ. — « Որպէս զհրաշունչ առիւծունս մեկնեսցուք ի սեղանոյ անտի, լեալք ահարկուք սատանայից »։ —

— « Ոչ արժանապատուութեան իշխանութեան քահանայից », կը կանչէ սուրբն Օգոստինոս, « յորոց ի ձեռս իբրև յարգանդի Կուսին մարմնանայ որդին Աստուծոյ »։ —

Ահաւասիկ ինչ կը մտածէ, կը զգայ և կ'ըսէ սուրբ Եկեղեցին, և թէ ինչ կը մտածեն, կը զգան և կը խօսին սուրբը Հարք մեր սեղաններուն սուրբ և օգոստափառ զոհին նկատմամբ։ Որչափ ալ որ ազդու և զօրաւոր են այս խօսքերը, այսու ամենայնիւ տակաւ և Թոյլ կ'երևին, երբ կը մտածուի անոնց փառաւորած խորհրդոյն անձառելի գերազանցութիւնը։ Սուրբն Թովմաս, սուրբ Հաղորդութեան նկատմամբ անոր արտաքոյ կարգի գերազանցութեանը վրայ կարելի եղածին չափ նուազ հեռու բան մ'ըսել չը կրնալուն համար, ըստ իմիք ցաւելով այս հետևեալ խօսքերը արտաբերից, որոնցմով կը յուցընէ թէ այսչափ խորհրդոյ մը վրայ խօսելու կարողութիւնը կը պակսէր.

« Ա՛յնչափ նկըրտեաց որչափ և կարես,
զի ի վեր է քան զամենայն գովեստ.
ոչ ըստ արժանւոյն դրուատել բաւես »։

Եւ մենք Յիսուսի Փրկիսոսի քահանաներ ենք, որ ամէն օր այս աքանչելի հրաշքը կը գործենք, զոր մարդկային լեզուն ճառել կարող չէ։

Սոսկալի մտածել ենք, և ով որ խորհրդածելու ըլլայ՝ կարծիքներուս պիտոր հետևի, որ շատ նուաստացուցիչ բան մըն է ողորմելի բնութիւններուս համար տեսնելը, որ այս աստուածային խորհրդոյն հետ այն աստիճան ընտանութիւն առած ենք՝ որ և ոչ սրբագործու-

թեան առէն սրտերնիս կը չարժի։ Շատ մը բարի և սուրբ քահանայք կան որ միշտ մի և նոյն կենդանի չարժումը չեն ղգար։ Ճշմարիտը ղուրցելու համար, թէև հրամայուած չէ, բայց այնչափ բնական և հարկաւոր կ'երևի որ երջք նուաստութիւն մըն է սրտերնուս անզգայութիւնը։ Ալէ, այն չզգացած չարժման տեղ, դնել այնքան սուրբ տրամադրութեամբ մատակարարելինք այսպիսի օգոստափառ խորհուրդ մը, որ կարելի եղածին չափ նուաղ անարժանութեամբ պաշտեինք։

Երբեք չենք կրնար ոչ մտածել, և ոչ ալ ըսել թէ ինչ աստիճան կատարելութիւն կը պահանջեն մեզմէ Աստուած և Եկեղեցին, որպէս զի կարող ըլլանք ըստ արժանւոյն ղուրցել պատարագը։ Եթէ հին օրինաց մէջ կը պահանջուէր որ սուրբ ըլլային սուրբ անօթները կրողները, « ի պիղծս մի՛ մերձենայք... մեկնեցարուք (ըստ Լատ. սրբեցարուք) որ բարձեալ բերէք ղսպաս Տեառն »[1], հապա որչափ աւելի, կ'ըսէ Պետրոս որ Պրուա, պէտք է որ սուրբ ըլլան անոնք՝ որ զնոյն ինքն Փրկիսոս կը կրեն ձեռքերուն և սրտերուն մէջ. « Որչափ առաւել սրբութեան կարօտ են, որք ի ձեռս և ի մարմին կրեն զՓրկիսոս »։

— Պէտք է խոստովանինք, (աղէկ մը զննենք Տրիտենդեան ժողովքին այս խօսքերը), որ մարդ պատարագին ահաւոր զոհէն աւելի սուրբ և աստուածային բան մը չի կրնար ընել. « Հարկաւորապէս խոստովանիմք, թէ չէ հնար ումեք գործել գործ ինչ այնպէս սուրբ և աստուածային՝ որպէս զահաւոր զայս խորհուրդ »։ — Ուսկի կը յաւելուն նոյն ժողովքը. Քահանան պէտք է որ կարելի եղածին չափ խղճի մաքրութեամբ մերձենայ այս խորհուրդը կատարելու։ — Շատ նշանաւոր է այս խօսքերուս ազդեցութիւնը. և ինչպէս ազդու չըլլայ, մինչդեռ այնպիսի երևելի ժողովք մը հետինակութենէն յառաջ կու գայ. — « Յորմէ յայտ իսկ է թէ ամենայն փութով չանալ պարտ է, զի որչափ առաւել հնար իցէ՝ներքին մաքրութեամբ սրտի գործեսցի »։ —

[1] Եսայի. ԾԲ. 11։

253. Հիմայ տեսնենք թէ արդեօք մեր վարմունքը համաձայն է այս հրամաններուն:

« Ձար » քահանան պատարագ կը զուրկէ, և ինչպէս կը զուրկէ: Այս հարցմունքին պատասխանը այնպիսի է, որ դրեթէ չենք համարձակիր տալու. բայց ընենք: Այո, ձար քահանան պատարագ կը զուրկէ, խղճին վրայ մեծ հուշափ մեղքը կրելով: Առաջին անգամները դողալով, և եռքին քիչ քիչ դողը համարձակութեան տեղի տալով մինչև որ սրբապղծութեան անդունդը ընկղմի:

Անտարակոյս առաջին անգամ սեղանը պղծելէն յառաջ, ինքը արդէն չարութեան մէջ խստացած էր, ազօթքէ և բարեպաշտական գործքերէ հրաժարելով. արդէն անզգայ եղած էր խղճի խայթերուն՝ օր ըստ օրէ աւելի ծանրացած մեղքերու բազմութեամբ. արդէն քանի մը կասկածելի, և գուցէ բան մըն ալ աւելի՝ հաղորդութիւններով գրեթէ վարժած էր սրբապղծութեանց: Այսու ամենայնիւ, երբ առաջին անգամ գիտութեամբ որոշեց սրբապղծութիւն ընելու՝ դողաց, և կարծես թէ սոսկալով կեցաւ: Ճիշդ Յուդային նման, որ զարհուրելի մտածութենէն յառաջ, հարկաւ ինքն ալ սոխալուեցաւ խղճի սաստիկ խայթերուն դէմ կռուելու. տագնապեցաւ, խռովեցաւ, կարծեց որ նոյն կէտին աստուածային վրէժխնդրութեան կայծակը գլխուն կը զարնէ: Երանի՛ իրեն եթէ անդունդին բերանը կանգ առած ըլլար, և պարապի չի հաներ այն վերջին ձիգը՝ զոր ընդհակը կ'ընէր զինքը փրկելու համար: Բայց ո՛չ, անպատիժ մնալու յանցաւոր յոյսով յանդգնեցաւ, և երբ տեսաւ որ վախցածին պէս իրօք Աստուածմէ կայծակնահար չեղաւ, դժբաղդաբար իր ոգեղ և զգուելի հոգին աւելի թանձր խաւարներու մէջ էյնալով, և Առաքելոյն խօսքերը իր վրայ ճշմարտելով մահաբեր քնով ննջեց. « Զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խարէ զմարմինն Տեառն: Վասն այնորիկ իսկ են ի ձեզ բազումք հիւանդք և ախտաժէտք, և շատ ևս այն են՝ որ և ննջեցեալքն իսկ իցեն »[1]:

1 Ա. Կորնթ. ԺԱ. 29, 30:

Հետեւեալ օրը իւր խռովութիւնը՝ առաջին աւուր պէս մեծ չէր: Սատանան զինքը քաջալերելով կ'ապահովցնէր, վասն զի ան ալ Աստուած հեռացեր էր իրմէ, և սատանան մտած էր իր հոգին. « Եւ յետ պատառոյն, ասպա եմուտ ի նա սատանայ »[1]: Երկրորդ սրբապղծութենէն ետքը իւր խստութիւնը կատարեալ եղաւ. և ան ատենը անդունդէ անդունդ գահավիժելով, « խորք ի խորոց կարդային »[2], անխռով նստեցաւ իւր ամբարշտութեան մէջ. « ի սուեր մահու նստէին »[3]: Մեր կաղողութենէն վեր է զուրկել այն չարիքները՝ որ եաքէն գործեց, այն ամէն անգամները որ պսկասաւոր գտնուեցաւ իւր սրբազան պարտուց դէմ, այն ամէն ախտերը՝ որոց գերի եղաւ, այն ամէն հոգիները՝ որ առչարն գարձուց, և այն ամէն օր ըրած սրբապղծութիւնները. ասոնք այնպիսի բաներ են՝ որ ինքը միայն կրնայ ըսել. մանաւանդ թէ ինքն ալ չի կրնար, որովհետեւ թէ ժողովրդապետութեան մէջ գործած, և թէ երկար աւեն չարունակելիք չարութիւնը, ուրիշ մէկը այնչափ աղէկ չի գիտեր՝ եթէ ոչ սատանան, որ գործել տուաւ, և Աստուած որ կը զննէր՝ իր օրը եկածին պէս կայծակիները գլխուն թափելու համար. « Երեսք Տեառն ի վերայ չարագործաց »[4]:

Այսպէս կ'ապրի Թշուառը, ամէն օր կրկնելով Յուդային միայն անգամ մ'ըրածը. մինչև որ եպիսկոպոսը, խմանալով իւր անկարգութիւնները, « յաստուածայնոյն» արգելման դատակնիքով նորանոր սրբապղծութեանց առիթը կ'առնու, բարի քահանայից մէջէն հեռացընելով զանկից. ինչպէս որ վատ խոտերը կը քաղուին աղէկ ցորեններուն մէջէն, անոնց ամբելուն արգելք չըլլալու համար:

Օրհնենք զԱստուած, արժանապարտ եղբայրակիցք, որ մինչդեռ Առաքեալները միայն տասներկու հոգի ըլլալով՝ մէկ հատ մատնիչ ունէին, իսկ մենք թուով այնչափ աւելի շատ ըլլալով, հազիւ թէ քանի մը հատ ունինք ասդին անդին ցրուած:

1 Յովհ. ԺԳ. 27:
2 Սաղմ. ԽԱ. 8:
3 Ղեւկ. Ա. 79:
4 Սաղմ. ԼԴ. 17:

Եթէ պատահմամբ հոս վերը նկարագրած Թշուառ քահանայից մէկը այս խօսքերս կարդալու ըլլար, կ'ուզէինք կրցածնուս չափ Թախանձէր'ի սէր Յիսուսի Քրիստոսի, « Թողէք Քրիստոսի Յիսուսի » [1], դիւքը շուտով մը ձեռքէն չի ձգելու, այլ կրկին և կրկին կարգալու, և քանի մը վայրկեան խորհրդածելու Աստուծոյ ներկայութեան առջև, անկից ջերմեռանդ աղօթքով ելլս և ընորհք խնդրելէն ետքը: Պիտոր ընէ արդեօք: Խստութիւնը և կուրութիւնը, երկուքն ալ չար քահանային սեպհական, մի թէ պարապուն պիտոր չի հանե՞ն այս մեր գինքը փրկելու չանքը, ինչպէս որ պարապուն հանեցին մինչև յարդ այնչափ չարաչար գործածուած շնորհքները: Մենք շատ կը վախնանք, մի գուցէ սուրբը Գրոց խօսքը սասկնեղուն վրայ ստուգուի. « Խստասիրտն բաները ոչ պատահէ » [2]. բայց ամենաստոյգ է, մանաւանդ սովորաբար սրբապղծութեամբ կուրացած և խստացած քահանայից համար: Այսու ամենայնիւ գիտնայ, որ բարեգութ Տէրը զՅուդան բարեկամ կանչեց, և ան աւետիսը որ ամբարիշտը համբուրիւ մը գինքը մատնելու վրայ էր, գինքն ալ բարեկամ կը կանչէ, և պատրաստ է վերջինդիր սուրը գետինը ձգելու, և գինքը գորովագութ սիրով ընդունելու, եթէ ղղջալով սրտանց անոր գիմելու ըլլայ:

254. « Գաղջ և Թուլացած » քահանան պատարագ կը զուրցէ՞, և ինչ կերպ: Ես ոչ հոստեղ կրնանք գտնել ցիկ և գոհացուցիչ պատասխան մը տալ: Այո՛, գաղջ և ծոյլ քահանան պատարագ կը զուրցէ, բայց չըսելու ալ խիղճ չըներ: Եռանդէ, բարեպաշտութենէ և աստուածսիրութենէ զուրկ ըլլալով, այնչափ կարևորութիւն չի տար այսպիսի օգուտապուտ խորհրդոյ մը կատարման. միւս կողմանէ աղէկ գիտնալով որ գինքը շատ քիչ շնորհքներ կ'ընդունի, և նուազ ալ մխիթարութիւններ կ'ըզգայ: Որուն համար երբեմն այնպիսի անուռ պատճառներու համար զանց կ'ընէ, որ սուրբը քահանային[3]քով ոչնչէ են: Բայց զուրցած ատենն ալ ինչ կերպով կը զուրցէ: Ահնպէս, ինչպէս որ կ'ընէ միւս Աստուծոյ վերաբերեալ գործքերը. այսինքն անհոգութեամբ, թուլութեամբ, պաղութեամբ և այնչափ քիչ ախորժելով որ յայտնապէս կը ցուցընէ այն սոսկալի վճռոյն իրէն յարմարելը. « Ա՛լ դու գաղջ ես... հանդերձեալ ես փսխել ի բերանոյ իմմէ » [1]:

Գաղջ քահանան միայն բան մը կը մտածէ, ան ալ շատ անգամ թերեւսաբար. այսինքն, ըստ իմիք համեմատ ըսել կրնալու՝ Թէ ինքը յայտնապէս մահուշափի մեղքի մէջ չէ: Երբ կարող ըլլայ այսչափ ինչ իր վրայ վկայել՝ հանգիստ է, զոր ձեռք բերելու համար, փոխանակ ըրած չարիքը և ընելու պարտաւոր եղած բարիքը մտածելու, չըրած չարիքը և ընելիք քիչ մը բարիքը կը մտածէ. ամէն բանէ աւելի չարագործ քահանային սոսկալի անկարգութենէները գինքը կ'ապահովցընեն. « Ես արգէն անոր պէս չեմ», կ'ըսէ սրտին մէջ: Բայց նմանապէս ալ ուրիշ բան մը գինքը այնչափ չի խռովեր, որչափ որ իւր բարեպաշտ եղբայրակիցներուն չնկէ եռանդը. « Ո՜րչափ հեռու եմ անոր նմանելէ », կ'ըսէ իր գաղջութեանը վրայ ամբչնալով:

Բայց քիչ մը խորունկ մտածելով, շատ աւելի աղէկ պիտոր տեսնէր, թէ հապա Աստուծմէ ո՞րչափ հեռու է. ըստ որում ինչ տեսակ առաքինութիւն է այնպիսւոյնը, որ ամէն օր գԱստուած սրտին մէջ կ'ընդունի, և երբէք չելլեր իր գաղջութեան զազրութենէն, մինչդեռ միայն մէկ անգամուան Հաղորդութիւնը բաւական է զմարդը սուրբ ընելու: Բայց ուրիշ կերպ ալ չի կրնար ըլլալ, մինչդեռ ինքը երբէք այն որամադրութեամբ չի զուրցեր զպատարագը, որ պատուղները չահելու արժանի ըլլայ: — Շատ աղէկ կ'ըսէ Պօղոսաւը, թէ խորհրդոյ գործածութիւնը՝ սուրբ չեղած օգտակար չըլլսր, և այն գործածութիւնն ալ սուրբ չըլլսր առանց պատշաճ որամադրութեանց: — Արդ ինչպիսի՞ որամադրութեամբ կը պատարագէ գաղջ և Թոյլ քահանան:

Ի՞նչ տեսակ է իւր հեռաւոր պատրաստութիւնը:

1 Փիլիպ. Ա. 8:

2 Առակ. ԻԸ. 20:

1 Յայտ. գ. 16:

Ա՛հա սիսկ. իր հեռաւոր պատրաստութիւնը քանի մը կարճառօտ և ամենապարզ աղօթքներ են, ան ալ եթէ ընելու ըլլայ, վասն զի այնչափին ալ միշտ չըներ. առանց ջերմեռանդ ղեկտմանց զուրկ ժամերգութիւն մը. ինչպէս՝ հոգևոր ընթերցմունքներ, Սրբութիւն սրբոց պես պես վարդապետութիւններ, խղճի քննութիւններ, ապաշխարութիւն և մահացուցումներ՝ երթան բարով. և ասոնց տեղը անկարգ կեանք մը, ցնորմանց սովորութիւն, ժամանակի վատնութիւն, զբօսանք, զուարճալի ձանձարկերգութիւններ, գրեթէ չարունակ խաղ և հաճկինքներ. և այսպիսի գեղեցիկ ղբաղմանց խրթև յաւելուած՝ շատ մըն ալ մեղքեր, զորոնք առանց խղճահարութեան կը գործէ, միշտ կարծելով որ ներբեւ ըլլան, թէ և երբեմն Աստուած ուրիշ տեսակ կը գտաէ: Ի՞նչ պատրաստութիւն. ի՞նչպէս կրնանք բարի պատրաստ մը յուսալ:

Իսկ մեծաւոր պատրաստութեան գալով, ինչ տեսակ կրնայ ընել սանկ քահանայ մը: Ինքը կը պատրաստէ. բայց ինչ ջերմեռանդութեան նշան կուտայ՝ պատարագէն յառաջ, ըսած սաները և վերջը: Ինքը եկեղեցի կ'երթայ, գրեթէ առանց դիտաւորութեան թէ ինչ բանի համար կ'երթայ. ասոր անոր հետ խօսելով և խնդալով կը զբօսաշրջի, դէպ ի խորանը կ'երթայ, երբեմն թէ սենեակը երթար. կը կրճատէ գրեթէ բոլոր արարողութիւնները, և ամէն ինչ այնպիսի արագութեամբ կ'ընէ, որ կարծես թէ շատ աւելի հարկաւոր գործ մը երեսն կը սպասէ: Շփոթ և ցնդած կեցուածքով գոհութեան ներգործութիւն մը կ'ընէ, և յետոյ իբր սովորական անտարբերութեանը գառնալով՝ բոլոր օրը կ'անցընէ, առանց և ոչ անգամ մը յիշելու, որ առտուն Յիսուսի Քրիստոսի մարմինը և արիւնը ղոհեց, ամբողջ աքանչացած և յափշտակուած արքայութեան մը առջեւ. մինչդեռ ինքը, անարժան պաշտօնեայ, պաղ անդիսայութեամբ պատարագող քահանայի պաշտօնը կը վարեր: Ի՛նչ սխալ տեսարան, և ինչպէս կարելի է չը տեսնել թէ որպիսի՛ նորոգութեան կարօտ է այս տեսակ կեանք մը:

255. «Բարի» քահանան կը պատարագէ՞, և ինչպէս:

Հոս Աստուծոյ ներկայութիւն առաջին անգամ բարի օրինակի սկզբունք մը կը տեսնուի: Այո՛, բարի՝ քահանան կը պատարագէ. այո՛, ինքը կը նուիրէ այս մեծ ղոհը Աստուծոյ փառաց, եկեղեցւոյ և երեն օգտին համար: Ոչ միայն մաքուր և սուրբ խղճով սեղանին կը մօտենայ, այլ նաև առաքինութեամբ, ջերմեռանդ սովորութիւններով, ծանր, յարդելի, պարկեշտ և ամփոփ վարմունքով. անանկ որ արժանի կ'ըլլայ Աստուծոյ առատագութ նայուածքին, և օր ըստ օրէ ալ միշտ հաւատացեալոց կողմանէ յարդանաց առաւելութեան մը:

Այսօս ամենայնիւ այս արժանաւոր եղբայրակից-ներուս մէկ քանիին պէտք է ղուրցենք, որ շատ աւելի աղեկ կ'ըլլար, եթէ պատրաստութեան և գոհութեան համար քիչ մը աւելի ժամանակ գործածէին, և կը յորդորենք որ այս երկուքը՝ որչափ որ կարելի է՝ «առաջին ժողովրդեան» ընեն. վասն զի պահարանին մէջ շատ ջերմեռանդութեամբ աղօթք ընել երբէք կարելի չէ: Պետրոս ապաստրենք նաև որ արարողութիւնները քիչ մը աւելի աղեկ ընելու հոգ տանին, որուն մէջ շատ մը քահանայք այնչափ գոլեստի արժանի չեն: Ջոր օրինակ, բարձր ձայնիւ կը ղուրցեն ծածկապէս ըսուելիք աղօթքները, մինչդեռ հակառակը խստիւ պատուիրուած է:

Վերջապէս պետրոս ըսենք նաև որ ղուշանան պատարագը քիչ մը արագ ղուրցելէն ալ: Կը գտնուին բարի քահանայք որ սուղ ժամանակի մէջ պատարագնին կը ընդունեն: Այդ, ասիկայ բարի օրինակ մը չէ բարեպաշտ անձանց, և մենք պետրոս աւելցնենք, որ այս կերպ պատարագ ղուրցելը շատ հաճելի է գաղջ քահանայից, ինչպէս նաև չարերուն ալ, որոնք երեից բարեպաշտ եղբայրակիցներուն գոնէ քիչ մը նմանելնուն համար չափազանց կ'ուրախանան:

Իսկ ներբեւ տրամադրութեան նկատմամբ՝ Աստուածեան համար պետք է ըսենք, որ շատ մը բարի քահանայք իրենց պաշտօնին ամենաչքեղ գործքէն չեն քաղեր այն ամեն պատուղը՝ զոր դիւրաւ կը քաղեն անոնք, որ բարի և սուրբ կենաց տրամադրութիւնն ալ միատեղ ու-

նին: Կ'ուզեն ընդունիլ զսուբբ Հաղորդութիւնը, և ա-
ղէկ ընդունիլ, սոյդ է. ընդունելով կ'ուզեն Աստուծոյ
հաճելի գործք մ'ընել, գարձեալ սոյդ. այս կերպով
կ'ուզեն ընդհանրապէս օգտակար ըլլալ այլոց և մանա-
ւորապէս ալ իրենց, ո՛չ ոք կրնայ ուրանալ: Բայց որչափ
որ կ'ուզէ բարի ըլլան իրենց դիտաւորութիւնները.
սակայն անանկ սրամադրո՞ւած են միշտ յառաջ երթա-
լու աստուածպաշտութեան և ջերմեռանդութեան մէջ,
առանց յետ երթալու և կամ կանգ առնելու, ամեն օր
զուրցած սուբբ պատարագներուն օգնութեամբն ալ:
Աստուածային սուբբ խորհուրդը կը ներգործէ՞ անոնց
վրայ այն միշտ աճող կատարելութիւնը, ինչպէս այն
հոգիներուն վրայ, որոնք անոր գործողութեան երբեք
արգելք չեն դներ: Հոգ կը տանին իրենք այս կատարե-
լութեան ծայրը հասնելու: Աւած հաղորդութիւնները
ղիրենք մի և նոյն վիճակի մէջ պահելէ աւելի ուրիշ բան
մը կ'ընեն, և « յառաջադիմութենէ » աւելի « պահ-
պանութեան » գործքեր չե՞ն արդեօք: Ա՛յն այնչափ թե-
լութիւնները և ներելի մեղքերը, որոց մէջ սակայ կ'ին-
նայ բարի քահանան ալ, ինչպէս որ ըսինք աղօթքին վրայ
խօսած առենիս, սուբբ Հաղորդութեան արդեամբք կը
հրսուին և կը փարատին:

Ո՛հ, սակայն ունք հաստատելու որ բարի քահա-
նայից հաղորդութիւնները սովորաբար այսպիսի քաղցր
պտուղներ չեն տար: « Բարի » քահանայից վիճակին մէջ
կը մնան, և շատ քիչ անգամ կը պատահի որ « սուբբ »
քահանայից վիճակին հասնին. և գուցէ իրենք ղիրենք
դովին գաղջերուն վիճակակից ջըլլալնուն համար, մինչ-
դեռ խոնարհելու էին, այսչափ հաղորդութիւններէ ետ-
քը՝ սրբոց կատարելութեան հասած ջըլլալնուն համար:

Ուսկից յառաջ կու գայ այս չարիքը: Ուսկից այն
արգելքը սուբբ Հաղորդութեան բարի արգեանց, զորոնք
կ'ուզէ և կրնայ ընել: Ամեն օր ինքը զինքը մեղի տալով
Աստուած կ'ուզէ որ անվրէպ մենք սուբբ ըլլանք, եթէ
չենք ըլլար՝ յանցանքը մերն է. « Պակասութիւն ոչ'ի կե-
րակուրն, այլ'ի կերողն է », կ'ըսէ Պօնա Կարթինալը:—

Ա՛յնչ տրամադրուած անձ մը, կ'ըսէ Լալըման, սուբբ
Հաղորդութեան մէջ բոլոր սուբբերուն միատեղ ունե-
ցած սեսիլքներէն և յայտնութիւններէն անհամեմատա-
բար շատ աւելի մեծ շնորհք մը կ'ընդունի: — Բայց յի-
շենք որ այս հոգևոր պարգևաց առատութիւնը միայն
« աղէկ տրամադրուած » հոգւոյն շնորհուած է. ուստի
թէ որ մենք այսչափ հաղորդութիւններէ ետքն ալ միշտ
մի և նոյնը մնացեր ենք, պատճառը աղէկ տրամադրու-
թիւն չունենալնիս եղած է:

Դժբաղդաբար շատ իրաւ է: Որովհետև մահուչափ
մեղաց նկատմամբ խիղճերնիս հանգիստ է, և մենք զմեզ
բարի քահանայի տեղ դրած ենք, ու շատ մը չար կամ
գաղջ քահանաներէն ալ շատ վեր կը տեսնենք զմեզ, ո-
րոնց նմանիլը մեզի ծանր պիտոր դար, կը ձնանք ինչ որ
ենք և ամենևին աղդու և զօրաւոր միջոց մըն ալ չենք
դործածեր հաղորդութենիս աւելի եռանդուն և ա-
ւելի սուբբ ընելու համար:

Եւ յիրաւի, ինչ կ'ընէ « բարի » քահանայ մը սուբբ
պատարագէն հոգևոր օգուտ քաղելու համար: Մահու-
չափ և քանի մը ծանրակեզ նեղելիներէն կը զգուշանայ,
ըստ էականին կարգաւորեալ կեանք մը կը վարէ, հա-
ւատարիմ է քանի մը վարժած բարեպաշտական գործ-
քերու, այս ամենքը աղէկ. անտարակոյս ասիկայ է զին-
քը բարի ընողը և իւր հաղորդութիւնները սրբապղծու-
թենէ աղատ պահողը, այնչափ որ կրնան բարի հաղոր-
դութիւն ալ ըսուիլ: Հապա այն իւր փոքր պակասու-
թիւնները, այն կրակոտութիւնները, այն արհամարհան-
քը, այն հպարտութիւնը, այն ցնդամիտ, այն բռընկելու
չափ դուրս դիւրութիւնը, այն ոխը, այն աստուածա-
յին ծառայութեան մէջ ունեցած ծուլութիւնը և ուրիշ
շատ մը սկարութիւններ, զորոնք պէտք էր որ բոլորո-
վին ջնջէր սուբբ Հաղորդութիւնը, ինքը զասոնք իրօք
սուբբ Հաղորդութեան բարի արգեանց խոչընդոտի տեղ
դրած է: Ա՛կը կանգնի՞ ինքը միշտ օր ըստ օրէ աւելի արդիւ-
նաւոր ընելու իւր հաղորդութիւնները: Աւելին ըսենք.
կը մտածէ՞ երբեք: Եւ երբոր պատարագի պատրաստու-

Թիւն կը տեսնէ, աղօթքէ կամ ներմեռանդ ներգործու-
Թենէ զատ կամ աւելի բան մը կ'ընէ, Թէ միշտ մի և նոյն
բանը ըլլալով՝ սովորութիւն կ'ըլլան, և անկարող մեծա-
գոյն արգեանց:

Խոստովանինք, ահաւասիկ ինչուն համար առաքի-
նութեան ճանապարհին մէջ դադարական ենք: Ինչուն
համար ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդը այն-
չափ Թեթեւ արգիւնքներ ցոյց կու տայ վրաիս, մինչդեռ
կրնար և պէտք էր որ սքանչելիքներ գործէր: Ահաւա-
սիկ ինչուն համար սուրբ քահանային երջանիկ վիճակին
քնաւ չենք հասներ, որուն մէջ պիտոյ դանդինք անձա-
ռելի մխիթարութիւններ և բերկրութիւններ, կատա-
րեալ առաքինութիւններ, միշտ աճող եռանդ և գլեթէ
անսահման ընորհքներ, որոնք զմեզ սրբացընելով՝ յո-
ւացմամբ պէտք էր սրբացընէին նաև շատ մը հոգիներ ալ,
որոց յաւիտենական փրկութիւնը՝ գուցէ Աստուած իւր
երկրպագելի պատգամներով՝ մեր սրբութենէն կախա-
կայեր է:

Մենք մեր առաքինութեանց վրայ կ'ուրախանանք,
մինչդեռ պէտք էր որ անոնց ամենամեծ և ոխերիմ թըշ-
նամի պակասութիւնները ջարդէինք. զնոքերնիս գործա-
ծելու ժամանակ՝ վար կը թափինք, և սուրբ քահանայից
աւելի սուրբ ըլլալու աշխատանքէն նուազ հոգ կը տա-
նինք սուրբ քահանայ ըլլալու. վերջապէս հանգիստ կը
փնտռենք ան տեսիլը՝ երբ Աստուած ակնթարթս ի վար
կը պոռայ. « Արի ... զի բազում է ի քէն և անդր ձա-
նապարհդ » [1]:

256. Ահաւասիկ հասանք « սուրբ » քահանային. ո՞րն է անոր պատարագ ըսելուն կերպը:

Չարկ չէ հարցունել Թէ միշտ կը պատարագէ՞, որ
իրեն նախասիրելի մըն է: Բոլորը աշխարհ գիտե, որ սուրբ
քահանան առանց պատարագի չի կրնար, եթէ ոչ երբ
նիւթական կամ բարոյական արգելք մ'ունենայ: Թեթեւ
պատճառ մը երբեք չի կրնար զրկել զինքը այն սեղանին
առջև ունեցած անձառելի բերկրութենէն և անգին
հնորհքներէն:

1 Գ. Թագ. ԺԹ. 7:

Ըսե՞նք արդեօք, որ ինքը հնորհալի վարմունքով,
պարկեշտութեամբ և ջերմեռանդութեամբ կը պատա-
րագէ: Ըսե՞նք, որ երևցածին պէս, ամենքը կը զգան
տուած բարի օրինակին ազդեցութիւնը, որ կը շարու-
նակէ իր հեռանալէն բաւական ատեն ետքն ալ: Ըսե՞նք
արդեօք, որ զինքը անձամբ չը տեսնողներն ալ՝ յոժար
սրտով զինքը կը գովեն, ինչպէս որ Պաւլեայեան սուրբը
Վինկենտիոսին պատահեցաւ ըսելով. « Ահաւասիկ սուրբ
մը, ահաւասիկ հրեշտակ մը »: Ըսե՞նք արդեօք վերջա-
պէս, որ իւր պատարագը պատարագ մը աւելի է, այս-
ինքն ձշմարիտ և ճարտարախօս քարոզ մըն է, որով շատ
անգամ խաւասիրտ մեղաւորներ դարձի եկան: Ա՛յ, ը-
սենք այս ամենը, վասն զի ամենն ալ ստոյգ է, և նաև
ինչուն որ կրնայ մեզի բարի օրինակ ըլլալ, և այսպիսի
կատարեալ օրինակի մը նմանելու փափաքը ազդել մեզ:

Ջարմանալո՜ւ բան, (ներուի մեզի այս համառօտ խո-
տորումը). մենք շատ կը յարգենք, անսահմանաբար կը
յարգենք այս սուրբ քահանան, իւր բարեպաշտութիւնը
մեզի օրինակ է, իւր առաքինութիւնները մեզի մեծ զը-
ւարճութիւն կը պատճառեն, իւր քաղցրութիւնը զմեզ
կը գրաւէ. գիտենք Թէ ոչըսփ կը յարգէ զինքը բոլոր
աշխարհը, կը տեսնենք իւր պաշտօնին զարմանալի պը-
տուղները և ապահով ենք որ ինքը կարելի եղածին չափ
երջանիկ է քահանայական սուրբ պաշտօնին մէջ. այսու
ամենայնիւ այս ամէն բան՝ մեր վրայ միայն անպտուղ
զարմանք մը կը պատճառէ, և մեզերնիս և ոչ մեկը իր
բռնած ճամբան կը Թողու՝ սուրբ քահանային ճամբան
բռնելու համար, ու չարը միշտ չար կը մնայ, գաղջն ալ
միշտ գաղջ. ինչպէս նաև բարին ալ սիրտ չըներ նմանելու
որուն վրայ որ կը զարմանայ, Թէև ուրիշ բան մը չունի
ընելիք, եթէ ոչ քայլ մը իւր սուրբ բարեկամին հասնե-
լու, և անոր հետ միաւորեղ յաւաջ երթալու:

Բայց դառնանք խօսքանը, ուր Թողուցինք զսուրբ
քահանան: Միայն Աստուած գիտէ Թէ ոչըսփ առատ
պտուղ կը քաղէ, արդար վարձատրութիւն իւր սուրբ
պատգամաւորութեանցը՝ որոնցմով կը մերձենայ: Ամբողջ

կեանքը սուրբ պատարագի չարունակ պատրաստուԹիւն մըն է, Աստուած իրեն հետ ամէն տեսակ պարգեւներով հաղորդակից է· վասն զի ինքն ալ իր կողմանէ բոլոր սրբոանց և սիրով ինքը զինքը Աստուծոյ կը նուիրէ: Մինչ դեռ չար, դաղջ և երբեմն բարի քահանայք ալ այնպէս կ'ըլլնեն խորանին ինչպէս որ ելած էին, սուրբ քահանան բոլորովին սուրբ սիրով բորբոքուած, և իր ու այլոց սրբուԹեան միշտ նոր նախանձով հոգևորած՝ սեղանէն կը մեկնի: Աստուածային ՀաղորդուԹեան արդեանց խոփոնարար արգելքները վերցուցած ըլլալով, անկից իր վրայ այնպիսի ընորհաց աքանչելիքներ կը գործէ՝ որոց չափը ինքն ալ չի գիտեր:

Երբոր այս տեսակ պատարագ կը զուրցուի, ա՛լ մարդը չէ գործողը, այլ Աստուած՝ որ իր գործքը կը կատարէ քահանային սրտին մէջ: — Այն առենը, կ'ըսէ Հ· Լալըման, հոգին կ'այլափոխի և կը կատարելագործուի, Յիսուս կը փարատէ անոր տկարուԹիւնները, արատները կը սրբէ, չար սովորուԹիւնները կը քաղէ, զօրաւոր կերպով կիրքերը կը սանձէ և ըստ տրամադրուԹեան ցանկուԹեան կրակը կը մարէ: ԳոհուԹեան աղօթքը, որ այնչափներուն երկար, աշխատալի և գրեԹէ ձանձրացուցիչ կ'երևի, սուրբ քահանային համար անպատուար վայելչման ժամանակ մըն է: — Միայն մէկ հաղորդուԹիւն մը, կ'ըսէ սուրբ Փրանկիսկոս Պօրձեան, զիս անսահմանաբար աւելի երջանիկ կ'ընէ, քան ԹէԹ աշխարհքիս բոլոր վայելչուԹիւնները ԹէԹև յաւիտենական ըլլային: —

Ո՞վ կրնայ մեզի հաղորդել սուրբ քահանային զգացմունքը: Ո՛ւր էր ԹէԹ մենք ալ այնպէս պատարագէինք, ինչպէս որ ինքը կը պատարագէ: ԵԹէ իրեն պէս ապրէլու սիրտ ունենանք, իւր զգացածն ալ զգալու բաղդը կ'ունենանք: — Մենք անսահման կորուստներ կ'ընենք, կ'ըսէ գարձեալ Հ· Լալըման, սուրբ ՀաղորդուԹեան մէջ եղած բարիքները չը գիտնալով, և ըստ այնմ արժանաւոր պատրաստուԹիւն չը տեսնելնուս համար: Յիրաւի, յայտմ մասին ունեցած լիմաորուԹիւններս ողբալի է...: Մենք որ ամէն օր սուրբ ՀաղորդուԹեան մօտենալու բաւեբաղդուԹիւնը ունինք, ամէն օր պէտք է որ հետևեալ աւուրը ՀաղորդուԹեան պատրաստուէինք: Կեանքերնիս չարունակ պատրաստուԹիւն մ'ըլլալու է սուրբ պատարագի և սուրբ ՀաղորդուԹեան:

257. Հոս քանի մը աղդարարուԹիւններ յաւելցընենք սիրելի եղբայրակիցներուս համար, որպէս զի ուրիշին վրայ զարմացած բանէրնին՝ իրենք դիւրաւ կատարեն:

Ա· Արտերնիս սովորաբար ո՛ և իցէ մեղքէ հեռու պահենք, հաստատուն որոշմամբ աւելի մեծնալու, քան ԹէԹ կամաւ ԹէԹև ներելի մեղք մըն ալ գործելու· « Յա՛ մենայն իրաց չարաց 'ի բաց կացէ՛ք » [1]:

Բ· Միշտ և միշտ կրնանք անձերնիս առաքինուԹեան գործադրուԹեան մէջ զատուածպաշտուԹիւնը մշակելով՝ որ զամենքը յինքն կը պարունակէ· « Բայց կրնաս զանձն քո յատուածպաշտուԹիւն » [2]:

Գ· Երբեք սահման մը չը գնենք մեր կատարելուԹեան՝ ըսելով· այսչափս բաւ է· — « անձն իմ, հանդիր » [3]: — Այլ մանաւանդ սուրբ Պօղոս առաքելոյն նմանինք, որ ըրած բարիքը և ոչ մոքէն անցունել կ'ուզէր, այլ սիրտն ալ միտքն ալ ընելիք բարեաց վրայ զբաղած էր· « Զի զառ ի յետոյն մոռացեալ է և ի յառաջադէմն նկրտեալ եմ, ուշ եդեալ ընԹացեալ իւիկէտ կոչմանն Աստուծոյ » [4]:

Դ· Միշտ աղէկ և գեղեցիկ մեծաւոր պատրաստուԹիւն մը տեսնենք· արդէն ըստ պատշաճի եղած աղօթքը շատ բարի տրամադրուԹիւն մըն է, բայց յատուկ պատրաստուԹիւն մըն ալ ընենք, որով շատ մը ընորհաց և եռանդեան մեծ օգուտներ կ'ունենանք:

Ե· Ընդհանուր դիտաւորուԹենէն զատ, միշտ եռանդուն փափագ մ'ունենանք, սուրբը պատարագին ըստ կամաց անօրինել կրցած պատուղները մեր նպաստին մերձեցընելու, կամ մանաւանդ ախտի մը ջնջման, և կամ առաքինուԹեան մը կատարելուԹեան համար:

1 Ա· Թեսալ. Ե· 22:
2 Ա· Տիմ. Դ· 7:
3 Փիլիպ· Գ· 13:

Զ. Ամենախիստ օրէնք մը դնենք պատարագէն յառաջ բառ մըն ալ չարտաբերելու, մանաւանդ պահարանին մէջ. ինչպէս նաև նիւթական, աշխարհային, մնոտի և բնականապէս ցնորիչ բաներու վրայ չը մտածելու։ — Սեղանը եղած ատենս, կ'ըսէր Սալէզեան սուրբը փրանկիսկոս, աշխարհքիս ամէն բաները աչքերէս կը հեռացընեմ։ —

Է. Սովորաբար որոշուած ատեն մը զատեցնենք պատարագնիս, հաւատացելոց աւելի դիւրինը ընտրելով։

Ը. Դէպ ի խորանը գացած ատեննիս, ծանր քայլով և աչքերնիս վար նայելով երթանք։ Այն քահանայից չի նմանինք, որոնք արագութեամբ երթալով և չորսրալով՝ շուրջառնին կը ցնցեն։

Թ. Հանգարտութեամբ սեղանին աստիճանին վրայ եկնինք, և կատարելիք ահաւոր խորհուրդներուս մտածմունքով գրաւած վարմունքով և կատարեալ պարկեշտութեամբ լծնինք վար, աճող ջերմեռանդութեամբ պատարագը սկսելու համար։

Ժ. Պատարագին սկիզբէն մինչև վերջը ամէն բառերը աղեկ և որոշ արտաբերենք, և լեզուի սահելէ շատ զգուշանանք, և ոչ ալ սպասաւորին հետ արագութեան նկատմամբ մրցինք. միայն աս կտորը բաւական է մեր աստուածպաշտութեան ամենաիսկուբ գաղափար մը տալու։ — Այն քահանաները, կ'ըսէ սուրբն Ալփոնսոս Լիգուորի, որ շատով կը սկսին, շտապելով ալ կը լմընցնեն. կը սրբագործեն, ձեռքերնին կ'առնուն Յիսուսի Քրիստոսի երկրպագելի Մարմինը, և կը հաղորդուին այնպէս՝ որպէս թէ այս աստուածային Մարմինը հայի պատառ մ'ըլլար։ — Օր մը Հայրն Ալվըա կ'ըսէր իր քահանայից մեկուն. — Կ'աղաչեմ, եղբարը, քիչ մը աւելի մեծարանօք վարուեցեք, վասն զի բարի հօր մը զաւակ է։ —

ԺԱ. Կարելի եղածին չափ աղեկ ու չնորհալի կերպով ընենք բոլոր արարողութիւնները, որոնք այնչափ գեղեցիկ, սուրբ և խորհրդաւոր նշանակութեամբ լեցուն են։ Հաւատացեալը շատ անգամ աչքով տեսածը

ները կը գաւեն. և երբ այնպիսի վարմունք ունենանք, որ երեց բարի օրինակ ըլլայ, մանաւանդ սեղանին առջև, ան ատենը մեզի համար կ'ըսեն, թէ սուրբ քահանայ էն։

ԺԲ. Սուրբ պատարագը աղեկ ըսելու համար պատշաճ ժամանակը չը ննայենք. կէս ժամին ալ աւելի և ալ պակաս. ըստ որում ան ատենը կամ արարողութիւնը կրճատած, և կամ մանաւանդ ծածուկ աղօթքները այնպիսի արագութեամբ զըլցած պիտոր ըլլանք, որ պատուաւոր մարդու մը հետ այնպիսի արագութեամբ խօսելնիս վրայ պիտոր ամչնայինք։

ԺԳ. Խորանէն մեկնած ժամանակնիս, հոգ տանինք որ վարմունքնիս միշտ պարկեշտ, չերմեռանդ և չնորհալի ըլլայ. « Որպէս հրաշունչ ... լեալք ահարկուք սատանայից »։

ԺԴ. Երբեք զանց չընենք գոհութեան աղօթքը, և գոնե գոնե քառորդ մը գործածենք անոր համար։ — Գոհութիւնը, կ'ըսէ սուրբն Ալփոնսոս Լիգուորի, քիչ մ'ընդարձակաբար խօսելով, պէտք է որ օրուան հետ մընայ։ Ինչ խելագնութիւն, ինչ անկարգութիւն և ինչ գայթակղութիւն է այն քահանայից, որոնք պատարագէն վերջը առանց մտադրութեան և չերմեռանդութեան պահարանին մէջ կարճառօտ աղօթք մ'ըրածնուն պէս, խակ և խակ մնոտի բաներու և աշխարհային գործքերու վրայ կը խօսին, և գրեթէ շուտ մը եկեղեցիէն դուրս ելլելով՝ զԱստուած փողոցները կը պտըտցուն։

ԺԵ. Ոչ երբեք մոռնանք, որ պատարագին անմիջապէս յաջորդող ժամանակը կեանքերնուս ամենէն սուրբ ժամանակն է, յորում առատագոյն չնորհքները կրնանք ընդունիլ թէ մեզի և թէ այլոց համար, և մոքերուս մէջ լաւ տպաւորենք սրբոյն Բոնավենտուրայի խօսքերը՝ որով կ'ուզեինք վերջ տալ այս գլխոյս. — Եթէ հաղորդութենէ վերջը առած հոգեւոր կերակուրիդ արգիւնքը չես զգար, նշան է որ հոգիդ հիւանդ է և կամ մեռած. ծոցդ կրակ ես լեցուցեր ու տաքութիւնը չես իմանար, մեղը առեր ես բերանդ ու քաղցրութիւնը չես զգար։

ԳԼՈՒԽ Դ.

Ժամերգութիւն — Նորին կարեւորութիւնը — Քահանայից ժամասացութեան կերպը — Գործնական կանոններ։

258. Աստուածային ժամերգութիւնը, կ'ըսէ սուրբն Բոնավենտուրա, երկնային Երուսաղէմի երգերուն նմանութիւնն է. «Ժամերգութիւնն աստուածային նմանութիւն ունի է երկնային գեղեցկանց»։ Ինչպէս նաեւ քահանայական ցեղին անպատիւները մեկմեկու հետ միացընող կապ մըն է, հասարակաց աղօթից ամենօրեայ ասմունքին մէջ։

Այդ էն այս երկու խորհրդածութիւնները մեծ եւ բարձր գաղափար մը կու տան աստուածային ժամերգութեան. բայց եթէ մենք աւելցընենք ըսելու, թէ ներկայ հասատատութիւն մըն է յարդելի հնութեամբ յայնիշատակ ժամանակաց հետէ, եթէ ըսենք որ աղուոր աղօթքներէ կազմուած է, սուրբ Գիրքը երբեմն անոր յատակ մըն է, որուն վրայ ազգին անդին ամենաքաղցր երգերը ցանուած, որոնք գեղեցկագոյն եւ շնորհալի կերպարանք մը կու տան, որ զարդարուած է սրբոց գեղեցիկ վարքերով, որոնք իրենց առաքինութեան բարի օրինակաւը կը հրաւիրեն զմեզ իրենց շաւղացը հետեւելու. եթէ վերջապէս խորհրդածենք, որ ամենախիստ պարտաւորութիւն մ'ունինք զայն ամէն օր ըսելու ընդ ծանր մեղք, եթէ նշանաւոր մաս մը Թողու, կամ կամաւոր մտքի ցնդմամբ եւ կամ չափազանց արագութեամբ ըսելու ըլլանք, պէտք կ'ըլլայ ընդունիլ, որ շատ կարեւոր բան մըն է, եւ ամէն քահանայ պարտաւոր է յարդել զայն։

Ո՜հ, այսպիսի հաւատով եւ կրօնքի զգացմունքներով մենք ալ կ'ըսէինք ժամերգութիւննիս՝ ձեռնադրութեան առաջին օրերը. ինչ փափագ ալէկ ըսելու։ Որչափ երկիւղ կը կրէինք մտաց թեթեւ ցնորմանց համար, ինչ եռանդուն պատրաստութիւններ այն ցնորումները արգիլելու համար. ինչ արթնութիւն, եւ ինչ հսկողութիւն երեւցածնուն պէս զանոնք հերքելու։ Ինչպիսի՛ սերոյ հառաչանքներ Դաւիթ մարգարէին հետ Աստուծոյ օրհնութիւնները երգելնուս համար. սակայն այս ամէն գեղեցիկ որամադրութեամբ ալ ինչ խղճմտանաց անձկութիւն երբ խղճմտանքնիս բան մը չէր կրնար յանդիմանել։ Եւ ինչպէս մեզի կը յարմարէին այն խօսքերը, առանց անդրադառնալու անոնց մեզի համար գրուած ըլլալնուն վրայ. «Անդ երկիւղն զերկիւղ, ուր ոչ իցէ երկիւղ»[1]։

Ո՛վ ամենագեղեցիկ եւ սիրուն օրեր, ո՛վ եռանդեան եւ դորովալից բարեպաշտութեան օրեր, ո՞ւր գնացիք։ Ի՛նչ տխուր մետալի փոխուեցաւ ամենամաքուր ոսկին։ Ո՞ւր է այն խղճմտանաց վախկոտութիւնը. ո՞ւր են այն մեր վրայ գեղեցիկ յոյսեր մնուցանող սուրբ տագնապները։ Մի գուցէ եկեղեցւոյ օրէնքը թեթեւցած ըլլայ։ Ո՛չ, ո՛չ երբեք. է ինչպէս որ էր, և պիտոր ըլլայ մինչև վերջը։ Մենք, մենք փոխուեցանք։ Այն առեներ կատարեալ, ներկայիս գուցէ գաղջ և թուլցած, եթէ հիմակուան պաղութիւնիս հին եռանդեան հետ համեմատելու ըլլանք, շատ մեծ բան է եթէ կարենանք մեր խղճ առուերը վրանիս գտնել։

Բան մը չի կայ, ըստ մեր կարծեաց, որ այնպէս յայտնէ սուրբ քահանային կատարելութիւնը, բան մը երեւն այնչափ գովեստից պատճառ չըլլար, եթէ ոչ անոր ընչեան երեսոյն քառասուն տարի քահանայութենէն առքն ալ միշտ ջերմ եռանդեամբ ըսած ժամերգութիւնը։ Քանի՛ քանի՛ անգամ ունակաբար զրուցելու հակման դէմ կռուած պիտոր չըլլայ. ինչ զգուշութիւն՝ ներ ըրած պիտոր չըլլայ. ինչպիսի՛ աստուածպաշտութեան զօրութեամբ ընդդիմացած պիտոր չըլլայ թուլութեան փորձութեան դէմ. ինչպիսի՛ նեղբեւն միութիւն մը պահած պիտոր չըլլայ Աստուծոյ հետ, անանկ որ կարող եղած ըլլայ հիմայ ալ կիսասարկաւագութեան առաջին օրերուն պէս՝ գոհ ըլլալ իր ժամերգութենէն։

1 Սաղմ. ԺԹ. 5։

Գիտենք թէ արդեօք մենք ալ մի և նոյն ճամբուն մէջ կը քալենք. և թէ ձեռնադրութեան առաջին օրերուն պէս մի և նոյն մտացեր ենք: Ժամերգութիւնը աղեկ ընելնիս դիտնալու համար երեք բան պէտք է խորհրդածել.

— Նախընթաց պատրաստութիւն — արտաքին տրամադրութիւններ — և ներքին յարակից տրամադրութիւններ:

Այս երեք նկատմամբ տեսնենք քահանայից ժամերգութիւնը ըսելու կերպը. որպէս զի հասկընանք, թէ ո՛ր կարգը դասուելու ենք:

259. «Ջար» քահանան ժամերգութիւնը կ'ըսէ, և ինչպէս կ'ըսէ:

Այս Թշուառականին վրայ չը զուրցուելիք բաներ կը տեսնուին, այնքան որ ամենամութ անդունդներու մէջ ի խոր ընկղմած է: Երբոր քահանայ մը առանց խղճի յանցանքներուն մէջ ամենասոսկալուին՝ այսինքն սրբապղծութեան մէջ կ'ինկնայ, մի թէ զարմանալո՞ւ է թէ անիկայ ժամերգութիւնը անոտի և չնչին բանի մը տեղ դնէ, և ոչինչ սեպէ զայն զուրցելու պարտաւորութիւնը: Այսօր ամենայնիւ փորձառութիւնը կը ցուցընէ, որ Յիսուսի Քրիստոսի ամենասուրբ մարմինը և արիւնը սրբապղծաբար ընդունողը՝ դեռ ևս կը յարգէ ժամերգութեան եկեղեցական օրէնքը: Այսչափ ինչ գոնէ շատերուն վրայ փորձուած դիտենք, միւսներուն վրայ չէ խօսքերնիս:

Ըսինք որ ջար քահանան ժամերգութիւն կ'ըսէ. բայց ինչպէս:

Երբ դժկամակութեամբ և պաղութեամբ վերջապէս կ'որոշէ զուրցելու, արդեօք այնպիսի բան մը կ'ընէ՞ որ պատրաստութեան նման է: Արդեօք հաւատոյ և աստուածպաշտութեան անորոշ և ընդհանուր զգացմունք մ'ունի՞: Արդեօք ընելիք գործին օգուտ քաղելու գիտաւորութիւն մ'ունի՞ Աստուծոյ բարկութիւնը լծցընելու և անոր անսահման ողորմութիւնը երեն նպաստաւոր ընելու համար: Արդեօք միտքը կ'երթայ՝ ի Հոգւոյն սրբոյ լոյս և ընորհք խնդրելու, աղեկ և արդեամբք ընելու այն

գործքը, որուն դեռ ևս պարտաւորուած կը կարծէ զինքը: Գաւ լեցի, ինչ կ'ըսեք արդեօք: Բաւական տեղեակ է վեր ինքը չի գիտեր թէ ինչ է պատրաստութիւնը՝ որ այնչափ ալ հարկաւոր է:

Այսպիսի սիրզբունքէ մը վերջը, ալ ինչ կրնայ ըլլալ ժամերգութեան տեղն անոր հոգւոյն ներքին արտամադրութիւնը:

Արժանաւոր կերպով կ'ըսէ արդեօք. «արժանապէս»: Եթէ այսպէս ըլլար, Աստուծոյ ներկայութեանը առջին ահիւ և պատկառանօք կը կենար, մոռածելով որ այս մեծ Աստուածը իւր վրայ սևեռած է իր աչքերը, և սրտին մէջ կը կարդայ իրմէ պահելուզած մեղքերը. կ'օրհներ անոր սուրբ անունը, անարժան ճանչնալով ընքը անոր փառաց գործիք ըլլալու. յարգութեան և մեծարանաց զգացմամբ կը լեցուէր անոր նկատմամբ՝ որուն հետ որ կը խօսի, և անոր խօսքերը կը կրկնէ: Ո՞վ կրնայ ըսել որ այսպիսի զգացմամբ լեցուն ըլլայ...:

Ուշադրութեամբ կ'ըսէ. «մտադրութեամբ»: Ինքը անգամ համոզուած չէ, երբ շատ մը ցնորումներ ժամերգութեան սկիզբէն մինչև ցվերջը ընքը կը պաշարեն, ցնորումներ՝ զորոնք ինքը ջանալուր վռնտելու, մանաւանդ թէ դիտնալով ալ կ'ընդունի և կը պահէ:

Ջերմեռանդութեամբ կ'ըսէ. «ջերմ եռանդեամբ»: Ջերմեռանդութիւնը սեր մըն է. արդ ինչպիսի՞ աստուածսիրութիւն կրնայ դանուիլ այնպիսւոյն քով որ միշտ ծանր կերպով զԱստուած կը վշտացընէ, ջերմեռանդութիւնը՝ եռանդ մը, աշխոյժ մը կ'ենթադրէ. ինչպիսի՞ եռանդ կրնայ ունենալ, թէ որ բոլորովին գաղջ ալ չէ: Ի՞նչ եռանդ կրնայ դանուիլ ջար քահանային քով: Ջերմեռանդութիւնը միշտ սուրբ ուրախութեան մը հետ միացած կ'ըլլայ, ջար քահանան ե՞րբ ուրախացաւ ժամերգութիւն ըսելով, ինչպէս որ կը զգայ սուրբ քահանան: Ի՞նչ հաճութիւն կրնայ ունենալ աղօթք մ'ընելով, որ երեն համար ծանրութիւն մըն է. աղօթք մը որ ոչ երեն և ոչ ալ Աստուծոյ սրտին վրայ ազդեցութիւն մը կ'ընէ. մանաւանդ թէ աղօթք մը՝ որ ընելուն կերպովը

մեղք է. « Աղօթք նորա ի մեղս դարձցին»[1]: Լսեցէք այն ղարհուրելի խօսքերը, որ Աստուած կ'ըսէ այսպիսի ա-ղօթքի մը համար. « Իսկ դու ընդդէմ բնաւ պատմես զաղ-դարուրթիւն իմ, կամ առնուս զուխտ իմ ի բերան քո»[2]:

Ինչպիսի՛ աղօթք, ինչ վհճակ, ո՛վ Աստուած իմ, ինչ սեռակ քահանայ:

Եթէ այս են նեղքին տրամադրութիւնները, ինչ ալիտոր ըլլան հապա արտաքինները, որոնք ասոնցմէ կը կախուին: Կրցածին չափ շտապով կ'արտաբերէ տեղ տեղ ցաթկելըն վրայ ալ՝ ոչ հոգ կ'ընէ և ոչ ալ խնդէ. առանց պատճառի և կամ նոյն բաներու համար տեւեն մը կ'ընդ-հատէ, նշանաւոր կերպով աղօթքէն կարգը կը փոխէ. շատ անգամ չը հակըցած խորագրերուն մէջ կը սխալի, զո-րոնք սորվելու միշտ անհոգ դանուեցաւ. յետ այնորիկ դրեթէ բոլորն ալ մեկտեղ խրխնաւան կը թողու զուրցե-լու. ոչ աչքերուն, ոչ վարմունքին և ոչ ալ անձին վրայ բնաւ պարկեշտութիւն մը չերեւիր: Մի թէ ասիկայ կրօ-նական գո՞րծ մըն է: Ո՛հ, ինչ թշուառութիւն, ինչ ան-կարգութիւն, ինչ մեղաց առաւելութիւններ նոյն այն գործոյն մէջ, որով որ արդէն գործուածներուն նե՛րու-մը և թողութիւնը պէտք էր հայցել և ընդունիլ:

Ողբա՛նք, սիրեցեալ եղբայրակիցք, ողբանք այնպէս սոյն վհճակին վրայ, որ չի ճանչնար իր յետին թշուա-ռութիւնը: Աստուածմէ խնդրենք որ փարատէ զայնպէս սին պատող խաւարը և դարձի բերէ:

260. « Գաղջ և թոյլ» քահանան ալ ժամերգութիւն կ'ըսէ. և ի՞նչպէս: Այո՛, գաղջ և թոյլ քահանան միշտ իր ժամերգութիւնը կ'ըսէ, և միայն օրինաւոր և ծանր պատ-ճառներու համար կը թողու զայն: Բայց ինչպէս կ'ըսէ: Երբեք մահուամբ մեղք չը գործելու մտածմանց մէջ հաս-տատուն, ինչպէս որ ըսինք երեն նկատմամբ սուրբ պա-տարագին վրայ խօսած առենին, կրնանք հաւատալ որ զգաստութեամբ զգուշանայ իր վրայ, և աւելի ուշա-դրութեամբ ընէ աստուածային ժամերգութեան հրա-պարակական աղօթքը, քան թէ միւս ողորմելի ձայնա-

1 Սաղմ. ճԸ. 7:

2 Սաղմ. Խթ. 16:

ւոր աղօթքները՝ զորոնք սովորաբար առանց չերմեռան-դութեան բերնէն դուրս կը թափէ: Ըստ որում վերջա-պէս ինքը իւր գաղջութեան կուրութեամբ ալ գիտէ, որ ժամերգութիւնը աղեկ չընելով կրնայ մահուշափ մեղքի մէջ կրնալ: Այս խորհրդածութիւնը պէտք էր որ ար-թընցնէր իւր մտադրութիւնը և զգուշացնէր ամենամեծ չարիքին դէմ, որ է մահուշափ մեղքի մէջ կրնալը:

Բայց դժբաղդաբար հոս ոչ հանճար և ոչ ալ հա-ւատք, այլ սովորութիւն է յաղթանակողը: Երկար ժամանակէ ի վեր ամենաւած սովորութիւնը զօրանալով, ժամերգութիւնը դաղջ և թոյլ քահանային բերանը ու-րիշ բան չէ, եթէ ոչ առանց նշանակութեան՝ շրթանց շարժում մը, որ զբուիկ է բնաւ ձչմարիտ բարեպաշտու-թեան քաղցր օծման մխիթարութենէն:

Ա՛լ ինչ. ըսի՞նք որ ամէն ժամերգութիւն ըսելուն մահուշափ մեղք կը գործէ: Ո՛չ, երբեք չենք ուզեր ասի-կայ հաստատել: Մի թէ ժամերգութեան առեն գաղջ և թոյլ քահանային հոգւոյն և Աստուծոյ մէջ եղածը կրնա՞նք գիտնալ: Կրնա՞նք երբեք գատել, որ իւր ծու-լութիւնը այն աստիճան եղած ըլլայ, որ յանդուգնութիւնը կա-մաւոր և այնքան երկարատև եղած ըլլայ՝ որ մահուշափ մեղայ ծանրութեանը հասնին: Արդէն ասիկայ աստուա-ծաբանութեան այն չայտնի, պարզ և գործնական վհճե-բէն չէ, որուց վրայ կարող ըլլանք կերպաւոր և ստոյգ վճիռ մը տալ: Գաղտնի և նեղքին գործ մըն է, կը կրկնենք, միայն Աստուծոյ և գաղջ քահանային հոգւոյն մէջ եղած բան մը: Բայց մենք կ'ըսենք, որ այս գործը ծածուկ և միայն Աս-տուծոյ ծանօթ ըլլալուն պատճառաւ, իւր մեծ կարևո-րութեամբը շատ մը կանխազգուշութիւն և ուշադիր արթնութիւն կը պահանջէ: Արդ, որովհետև գաղջ և թոյլ քահանան, այս մեծ զգուշութեան և ուշադիր ար-թնութեան նկատմամբ անհոգ դանուած կը տեսնենք, կը վախնանք իւր վարմունքէն, մի գուցէ ժամասացութեան նկատմամբ՝ ծանր կերպով եղծէ եկեղեցւոյ օրէնքը, մանաւանդ ծանրագոյն ծուլութեանց և աւելի չաճախ ու չը մերժուած ցնորմանց օրերը: Մեր առանձին վախն

է ասիկայ, թէեւ գժբաղդաբար ոչ անհիմն, սակայն վախ մը եւ ոչ աւելի ինչ:

Ա.հաւասիկ խորհրդածութիւն մը՝ զոր կը յանձնենք գաղջ քահանային, աղաչելով միանգամայն զինքը որ աղեկ մը կշռէ: Ինչ ալ ըլլայ իւր գաղջութեան ասոնձանը, իրաւ չէ՞ որ եթէ հիմայ ուխտ ընէ ձայնաւոր աղօթք մ' ընելու, չատ ուշադրութեամբ եւ նուաղմասց ցնորմամբ պիտոր ընէր: Ա.յո, ուրեմն ինչո՞ւ համար մենք մեզի դրած օրէնքներուս համար այնչափ խղճահարութիւն, եւ ընդհակառակն այնչափ անհոգութիւն կը ցուցընենք եկեղեցւոյ ամենածանր օրինաց վերայ: Նոյնը ըսելու է նաեւ խորհրդական ապաշխարանաց վերայ. որչափ գաղջ եւ թոյլ ըլլայ քահանայ մը, այսու ամենայնիւ կը հաւատանք, որ խոստովանահօր դրած ապաշխարանքը՝ առանց ծանրապէս յանցապարտ մտացնորման կատարէ: Ինչէ՞ն կ'ըլլայ ուրեմն որ կը վախնայ զԱստուած վշտացընելու, խոստովանահօրմէն դրուած հատուցման պարտք մը աղեկ չի կատարելով. ու ընդհակառակն չի ջանար պատշաճ հաւատարմութեամբ կատարելու աստուածային ժամերգութեան՝ ամենասուրբ եւ հանդիսաւոր եկեղեցական օրէնքը:

Գուցէ ըսէ, որ եթէ առանձնաբար ուխտած աղօթքին ալ ժամերգութեան պէս մշտաւեւ եւ ամենօրեայ ըլլար, երկուքն ալ մի եւ նոյն ձեւերով պիտոր կատարէր: Ըսածը իրաւացընէ տրամաբանութեան հակառակ չէ, ըստ որում իրօք հաւանականաբար իրը այնպիսի ընթացք մը պիտոր բռնէր: Բայց ասով ինչ կ'ըլլայ: Ա.սով միայն երկու մեղքի յանցաւորութիւնը պիտոր չահի: Պարտք մը երկարաւեւ ըլլալուն համար, ըսելո՞ւ է որ ատեն մ' անցնելէն վերջը ալ չի պարտաւորեր: Ո՞վ երբեք տոլմեցուց ասիկայ: Մինչեւ որ օրէնքը կայ, կայ նաեւ զանկայ հաւատարմաբար պահելու պարտքը: Ինչո՞ւ համար ուրեմն ժամերգութենիս այնպէս չենք ըսեր, ինչպէս որ՝ ի սկզբան կ'ըսէինք: Օրէնքը իր զօրութիւնը չի կորնցուց:

Թախանձանօք կ'աղաչենք գաղջերուն ողորմելի թը-

չուառութեանը մէջ ընկղմած եղբայրակիցներս, որ աչքերնին բանան այս իրենց ցոյց տրուած ճշմարտութեան, եւ ոտքերնին հիմակուանէն աւելի ամուր երկրի մը վրայ հաստատեն: Ի՞նչ խաղաղութիւն եւ երջանկութիւն կը ըննայ գանուիլ իրենց տխուր ճամբուն մէջ: Ա.յսպիսի ճանապարհի մէջ քալող ամէն քահանայ թշուառ է, եւ զուբլիչներն ալ կը թշուառացընէ: Իւր խաւարած բանականութիւնը ալ չի տեսներ իր պարտքերը. « Ո՛չ գոյ որ խմանայ », ալ հաճելի չըլլար Աստուծոյ ընկերութիւնը. « Եւ ոչ ոք է որ խնդրէ զԱստուած »: Իրեն հետ կենցաղավարող գաղջ քահանաներն ալ իրեն պէս դեպ ի անդունդը կը դիմեն. « Ամենեքեան խոտորեցան »: Իրենց կեանքը որ սուրբ գործքերով պայծառանալու էր, անկարգութեամբ եւ ընդունայնութեամբ լեցուած է. « Ի միասին եւ անպիտանացան »: Զարութիւն կը գործեն, առանց հակադարձ բարութեան մը. « Ո՛չ ոք է որ առնէ զբաղցրութիւն »: Աստուծոյ սուրբ երկիւղն, որ իրենց քահանայութեան սկիզբը այնչափ եռանդեամբ կը լեցուներ զիրենք, հիմակ յանձնապաստան վստահութեան մը փոխուած է, որ զիրենք կուրցընելով կը քշենացուներ. « Ո՛չ է երկիւղ Աստուծոյ առաջի աչաց նոցա »: Իրենց կեանքը շատ թշուառ է, եւ ճշմարիտ խաղաղութեան ճաշակը չեն առած. « Բեկուսին եւ թշուառութիւն ի ճանապարհս նոցա, եւ զճանապարհն խաղաղութեան ոչ ծանեան » [1]: Եւ ինչպէս կրնան հանդիստ ունենալ, երբոր ժամերգութեան պէս ծանր պարտաւորութիւնները անանկ չարաչար կը կատարեն՝ որ բարոյական աստուգութեամբ չենք կրնար ըսել, որ խստիւ պահանջուած արտաքինութեամբ կատարած ըլլան:

Չենք սխալիր եթէ ըսելու ըլլանք, որ ժամերգութեան պարտաւորութիւնը զգաղջ եւ թոյլ քահանան սանձող պարտաւորութեանց մէկն է: Թո՛ղ կրկին կարգայ ինչ որ գրեցինք այն արտաքինութենէ վերայ, որոնցմով « չար » քահանան ժամերգութեան ծանր պարտաւորութիւնը կը կատարէ, եւ տեսնէ որ գրեթէ իրեն ալ չեն չարմարիր:

1 Հռոմ. գ. 11—18:

261. « Խարի » քահանան ինչպէս կ'ըսէ ժամերգութիւնը: Խարեբաղդաբար կրնանք ըսել որ բարի քահանան ընդհանրապէս ժամերգութեան մէջ ծանրապէս չի մեղանչեր: Ինքը իւր պարտքը ըստ պատշաճի ընելու բարի դիտաւորութիւն և բաւճանք ունի. քիչ շատ կատարեալ պատրաստութիւն մը կ'ընէ, ղպացածին պէս կը մերժէ ցնորումները. և այս գործքը ընելու տրամադրութեանց ամբողջութիւնը խղճի վստահութիւն և անդորրութիւն մը կ'ազդեն, յորմէ սովորաբար զուրկ է գաղջ քահանան: Խղճմտութիւն ատոյգ, մանաւանդ թէ մեծապէս գոհ ենք հաստատելու որ մեր « բարի » ըսած քահանայք՝ կղերին մեծ մասը կը կազմեն, մանաւանդ թէ նոյն իսկ կղերը ընդհանրապէս:

Այսու ամենայնիւ ժամերգութեան նկատմամբ այս յարգելի եղբայրակիցներուս ալ ըսելիք մը ջնջելինք: Կրնանք խրենց հետ կատարեալ խնդակից ըլլալ, և անշուշտ խրենց համար ըսել այն սիրուելի խօսքերը. « Աստուծոյ գէմ ցարգարն, զի բարի է »[1]. (ըստ Լատ. Թարգմանութեան): Դժբաղդաբար ոչ. և եթէ ուզենք ալ ըսել, գուցէ խրենք իսկ զգուշացընէին զկրենք եղածներէն աւելի չը սրբագընելու, և քանի մը բողոքովին անկեղծ չեղած գովեստներ խնայելու: Ուստի ասոնց ալ քանի մը ծանուցանելիք և առաջարկելիք բաներ ունինք, եթէ լսելու բարեհաճին:

Ամէն բանէ յառաջ կ'ուզենք ըսել որ եթէ աւելի արթուն, աւելի մտացած և ամփոփուած ըլլային, եթէ աւելի փութաջան ըլլային պակասութիւնները չտեսնելու, եթէ նեղութեան մեզայ դէմ ալ մտուզեան մեզքին դէմ դրած գործնեութեամբ կռուէին, եթէ քիչ մըն ալ աւելի փափուկ խիղճ ունենային, աւելի զգուշաւոր խրենց վրայ, զգայարանաց մէջ աւելի զգաստ ու ճնշուած, շատ աւելի մտերմութեամբ Աստուծոյ հետ միացած պիտոր ըլլային սովորական եռանդեան անուշ կապովը, որով արդիւնած կ'ըլլային շատ մը ցնորումներ. որոնք այնչափ զկրենք կը խռովեն, կը վշտացընեն և կը նեղեն

1 Եսայի գ. 10:

ալ, և ոչ միայն չեն Թողուր խղճմտանաց կատարեալ խաղաղութիւն մը վայելելու, այլ նաև կը զրկեն զկրենք այն քաղցրութենէն և սիրոյ եռանդէն՝ որ ժամերգութեան առեն սուրբ քահանային զուարճութիւնը կը կազմէ:

Կ'ուզենք ըսել խրենց, որ եթէ այն հեռաւոր պատրաստութեան վրայ քիչ մըն ալ ուշադիր և կերմեռանդ մերձաւոր պատրաստութիւն մ'աւելցընելու ըլլային, եթէ առաջին բառը ըսելու բերանին չի բացած՝ Աստուծոյ ներկայութեան առջին ամփոփուէին, անոր օգնութիւնը և շնորհքները խնդրելու քանի մը վայրկեան « մտաւոր պատրաստութեամբ », աղեկ ուղղելով և մաքրելով դիտաւորութիւննին, միշտ առաջադրելով, ունայնութիւնը կամ սովորութիւնը կտորելու և ջնջելու համար՝ մանաւոր և յատուկ շնորհք մը խնդրելու, այն ընելիք բարի գործքով՝ գուցէ (և առանց գուցէի) աւելի կերմեռանդ, աւելի ուշադիր կ'ըլլային ժամերգութեան, և աւելի ապահով աղեկ ըսած ըլլալնուն վրայ:

Կ'ուզենք ըսել խրենց, որ եթէ ժամերգութիւնը ըսելու համար այնպիսի տեղ մ'ընտրէին, որ կերմեռանդութեան և մտաց ամփոփման յարմար ըլլար՝ և ոչ թէ այնպիսի տեղեր՝ ուր շատ անդամ մտաց ցնորումը անխուսափելի է. զոր օրինակ, պահարաններու մէջ, ուր շատախօսութիւն և աղմուկ պակաս չեն ըլլար, տանը խոհանոցին մէջ, հրապարակական փողոցներու և զբօսարաններու մէջ, և այլ այսպիսի տեղուանք, խրենք նուազ նեղութիւն պիտոր զգային ցնորմունքներէ, և այն ծանր պարտաւորութիւնը աղեկ կատարելու աւելի պատշաճ տրամադրուած:

Կ'ուզենք վերջապէս ըսել խրենց որ եթէ ժամերգութեան առեն քիչ մը չափաւորէին լեզուներուն կարգ դուրս արագութիւնը, և ամէն բառ ուղիղ հնչելու հոգ տանէին. երկու երեք տուն « մեկ ընդով » չըսէին, առանց տուներուն վերջը հանգիստ մ'ընելու, այլ շարունակելով մինչև շունչերուն հատնիլը. և դարձեալ ժամանակ վատնելու համար՝ բառերը թէ չունչ առնելով

և Թէ տալով չը ըլլըցնէին, ըսր ամենքը կը հասկընան, Թէ ո՛րչափ անկրթութիւն պիտոր սեպուհը խօսակցու-Թեան մը մէջ. եթէ այսպէս չընէին, կ՛ըսենք, Աստուած պիտոր օրհնէր լիուլի իրենց հանդարտ և ծանր ծանր ըսրըցուածքը, և այն քանի մը աւելորդ րոպէներուն փոխարէն՝ պիտոր աւելցներ անոնց չնորհքները և ջերմեռանդութիւնը:

Ո՛րչափ բարի քահանայք զանց կ՛ընեն այս մեր յիշած և դեռ ևս ուրիշ տեղ յիշելիք բարեպաշտական միջոցները: Սովորութիւնը կամ վարժութիւնը, այս ձայնաւոր աղօթքին մեծ պատիժը ու պատուհասը, սովորութիւնը կ՛ըսենք կամաց կամաց իրենց կը յաղթէ, և իրենք ալ դժբաղդաբար շատ քիչ հոգ կը տանին անոր դէմ: Ոսկից կը հետևի որ ժամերգութիւնը իրենց շատ ախորժելի չի գար. կ՛ըսեն զայն, վասն զի ըսելու պարտաւոր են, բայց առանց օծութեան, առանց եռանդի և դրեթէ առանց արդեանց: Եթէ ժամասացութեան տեսակի մը ղօրութիւնը կշեռքի մէկ թաթը դրուէր, և միւս թաթն ալ սուրբ քահանային ըսած ժամերգութեան տեսակը, կշեռքը ո՛ր կողմը արդեօք պիտոր չըշէր:

Այս անպատեհութիւնը վերցընելու հոգ տանինք, որ մտածուածէն շատ աւելի ծանր է, և վերջին վայրկեաններուս համար տարաժամ ղեղջ և գուշէ գառն անձկութիւններ չի պատրաստենք:

262. Վերջապէս «սուրբ» քահանան ինչպէս կ՛ըսէ ժամերգութիւնը:

Սուրբ քահանային անփոփոխ կանոնն է կրցածին չափ մեծագոյն կատարելութեամբ ընելու Թէ եկեղեցւոյ օրէնքով, և Թէ առանձին խոստմամբ պարտաւորուած աղօթքները: Երբեք չըսեր, Թէ այս աղօթքը պարաքէս դուրս ըլլալով՝ չուտով կրնամ ընցուներ առանց պարտաւորեալ աղօթքի մը պէտք եղած ամիսմանման, ուշադրութեան և ջերմեռանդութեան: Ո՛ և իցէ աղօթք մը սկսելու առենը կենդանի հաւատքով մը իրրև աչքերուն առջին կը տեսնէ աստուածային մեծվայելչութեան Թեան չքեղութիւնը, որուն առջին կ՛երկչի. և այս մտածմունքը մտքին մէջ հաստատ տպաւորած, կրցածին չափ վայելուչ կերպով կ՛աղօթէ, առանց մտածելու Թէ ընելիք աղօթքը խստիւ պատուիրուած ըլլայ Թէ ոչ: Աղօթք ընելով գիտէ որ Աստուծոյ հետ կը խօսի, ուստի և բոլորովին հարկաւոր կը սեպէ յարգութիւնը, մտադրութիւնը և ջերմեռանդութիւնը:

Այսօր ամենայնիւ իւր եռանդը ևս առաւել կը բորբոքի՝ քանի մը հաճոյագոյն ջերմեռանդութեանց առենը, որոց մէջ (գուցէ չատերուն զարմանք պատճառէ) ժամերգութիւնը իրեն ամենասիրելին է: Այո, ժամասացութիւնը, որ շատ անգամ առանց ջերմեռանդութեան ղգացման, և երբեմն նաև պաղութեամբ կ՛ըսուի, սուրբ քահանային համար անճառելի մխիթարութեան անսպառ աղբիւր մըն է: Մ՛իայն մտածելով որ Աստուծոյ օրհնութիւնները ընելու կ՛երթայ, որով արքայութեան երանելեաց դասին և բոլոր ղինուորեալ եկեղեցւոյ հետ կը միանայ, որով՝ յանուն որոյ և որուն համար կ՛ընէ այն հանդիսաւոր աղօթքը, բոլոր սիրտը աղեկ ընելու սուրբ խղճերով և եռանդեամբ կը չարժի: Աւտի դիտաւորութիւնը ղգաստ և մանաւոր կերպով ուղղելով այնպէս կ՛ըսէ, որ սուրբ Գրոց ամէն խօսքերը կը դպչին և սրտին խորերը կը թափանցեն. սաղմոսներուն ամէն վսեմ իմաստը էլեկտրական կայծի նման կը սթափեցընէ ղինքը և կը բորբոքէ, որով աստուածային ժամերգութեան առենը, որ շատերուն երկար կ՛երևի, իրեն համար ամէն արագութեամբ կը թռչի, և որ իրեն պատիւ ալ կը բերէ:

Կրնանք հաւատալ որ ժամերգութիւնը սիրող քահանան, մեծ փութաջանութեամբ ալ կը պատրաստուի. ծանր ծանր, աղեկ յարգութեամբ և սիրով կ՛ըսէ, և այս տեսակ աղօթքին մեծ հաճութիւն կը ղգայ. և այս իրեն տրամադրութիւնները քանի մ՛աւուր համար պահական բաներ չեն, այլ ամէն աւուր համար կանոնաւորեալ գործք մը: Առանց ուրիշ վկայութեան ալ, ինքնայ տարակուսիլ այս քահանային սրբութեան վրայ:

263. Թէ այս և Թէ ուրիշ բաներու մէջ մեզի օրի-

նակ առնենք այս մեր արժանաւոր եղբայրակիցը, և իբեն դովելի ձեռնհասութեամբ պահած հետեւեալ կանոնները, մեզի ալ ամենայն հնազանդութեամբ սեպհականենք։

Ա. Վարքերնիս ամբողջապէս սուրբ և իրաւցընէ քահանայական ըլլայ, սովորաբար Աստուածոյ երկիւղիւ և սիրովը ապրինք, և ամէն բանի մէջ հաւատարմութեամբ անոր ընորհաց համապատասխանատուութիւնը մեզի խիստ պարտք մը սեպենք։ Աստուածային ժամերգութիւնը ըսելու արամադրութիւննիս՝ սրբութիւններուս և հատարելութիւններուս համաձայն ըլլայ։ Զար քահանան միշտ չարաչար պիտոր ըսէ, դաղջը ծուլութեամբ և հեղգութեամբ, բարկն քիչ մը ջերմեռանդութեամբ, միայն սուրբ քահանան է՝ որ ըստ պատշաճի կ՚ըսէ ժամերգութիւնը։

Բ. Աստուածային ժամերգութիւնը աշխատալի բեռի մը տեղ չը դնենք, և կամ ինչպէս կ՚ըսէ Հ. Վալերի, մեկ առելի «պարտաւորութիւն» մը չի կարծենք. այլ մանաւանդ թէ աղէկ ընողին համար ամենաքաղցր և ամենաղուարճալի կրթութիւն մը։ Եւ ոչ ալ երբեք վճարելիք պարտք մը սեպենք, այլ երբեմն թէ մեր և թէ այլոց սրբութեան զօրաւոր միջոց մը։ Ահա պատճառները սակերպելնուս համար է, որ շատ անգամ գրեթէ ձեռքերնուս մէջ կ՚անպիտանանայ այս միջոցը։

Գ. Երբեք չի մոռնանք ժամերգութիւնը ըսելու և աղէկ ըսելու պատրաստութիւնը։ Շատ շուտ կը մոռնանք այս պարտաւորութեան ծանրութիւնը և մեծութիւնը։ Առաջին անգամները զգացած աղգուստպաւորութիւններէս եառը, շատ քիչ անգամ կը յիշենք, և վերջապէս հասարակ բանի մը տեղ դնելու կը վարժինք, ասկից ալ յառաջ կու գայ ղային պաղութեամբ ըսելու վարժութիւննիս։

Դ. Միշտ և յարատեւաբար հակենք ուսումնութեան վրայ, ոչ ոք կրնայ հասկընալ թէ այս գործը աղէկ չը նեղուի՝ որչափ պատրաստութիւններ կը զրկուինք։ Մի միայն սուրբ քահանան իւր արհեստութեամբը և ջերմեռանդութեամբը ապահով է ուսումնութենէն յառաջ եկած չարիքներէն։

Ե. Ահա ուսումնութեան ժամու առնկը ցնցելու, արմատով փրցընելու և ընկելու համար ժամերգութիւնը չը սկսած՝ սրտերնիս չարժելու և մոքերնիս ամփոփելու յարմար ծանր և սուրբ խորհրդով մը մոքերնիս պատրաստենք։ Ըսենք մենք մեզի, զոր օրինակ. Եթէ հիմակ ըսելիք ժամերգութեան մասը աղէկ ու վայելուչ կերպով զրուցելու ուխտ ըրած ըլլայի, կամ խոստովանահայրս աղէկ ըսելու ապաշնարհանք դրած ըլլար, և կամ եթէ գիտնայի որ այս ժամերգութիւնս ըսելէս վերջը պիտոր մեռնիմ, և կամ այս ժամերգութիւնը երեւելապէս նեռկայ Յիսուսի Քրիստոսի ոտքերուն առջին զրուցելու սահմանած ըլլայի, ինչպէս պիտոր ըսէի։

Զ. Անմիջապէս մեծ ուրախութենէ կամ վշտերէ կամ նեղութիւններէ և կամ խռովութիւններէ եառը ժամերգութիւն չըսենք, մինչև որ սրտերնիս այն զգայմանց պաշարմունքէն ազատի. վասն զի ան առելը ժամերգութիւնը յարատեւ ցնորմամբ, մեքենայապէս և առանց ջերմեռանդութեան պիտոր ըսէինք։

Է. Ժամերգութեան համար առանձին և պատշաճ տեղ մ՚ընտրենք. որչափ ալ խաղաղ և առանձին տեղեր քաշուած ըսելու ըլլանք այս երեւելի աղօթքը, այսու ամենայնիւ ազատ չենք շատ մը մոքի ցնորմունքներէ. ուստի աւելորդ ցնորմանց ոչ պատճառ տանք, և ոչ ալ փնտռենք զանոնք։

Ը. Ժամերգութիւնը չը սկսած միշտ քանի մը վայրկեան մտաւոր պատրաստութիւն տեսնենք, եկեղեցիէն ընդհանրապէս ընդունուած։ «Բաց տէր»* աղօթքը

* Բաց Տէր զբերան իմ առ ի օրհնել զանուն քո սուրբ, և մաքրեա զսիրտ իմ յամենայն մտաւոր, չար և օտար խորհրդոց. լուսաւորեա զմիտս իմ, բորբոքեա զսիրտ իմ, զի արժանապէս, մտադրութեամբ և ջերմ եռանդեամբ կարացից ասել զժամերգութիւնս զայս, և արժանաւորեցայց ընդունել զՏայզուստս իմ յաստուածածին մեծավայելչութենէ քումէ, Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ. ամէն։

Տէր, ի միաւորութեան այնր աստուածային դիտաւորութեան որով դու յերկրի զօրհնութիւնս Աստուծոյ մատուցեր, զայս առքեզ (պիշերայինս) մատուցանեմ։

իրօք շատ գեր ազանց է, բայց գրեթէ միշտ սովորութիւն եղած ըլլալուն՝ առանց ուշադրութեան և ջերմեռանդութեան կը զուրցուի: Ուստի, դէռ այս աղօթքը չսած՝ պատրաստուինք քանի մը վայրկեան մտածական աղօթքներով, և երբէք զանց չընենք մանաւանդ վախճան մը դնելու. և յետոյ, « Հայր տէր » աղօթքն ըսելով, հոգ տանինք աղէկ և ջերմեռանդութեամբ արտաբերելու բոլոր խօսքերը՝ ախորժ մը զգալով, և ամէն բառերու միտքը խմանալով:

Թ. Կղերանոցին մէջ ունեցած սովորութիւններս ի գործ դնենք, այսինքն ծունկ չոքած ըսելու այս « Հայր տէր » աղօթքը: Շատ կը սխալի, ով որ կը կարծէ թէ արտաքին վարմանց պարկեշտութիւնը կարևորութիւն մը չունենայ: Թող փորձուի և կը տեսնուի որ վայելչաչէն յարգելի վարմունքներով ըսած ժամերգութիւններս շատ աւելի գոհ պիտոր ըլլանք:

Ժ. Նոյն պատճառով հիւանդութենէ դուրս, երբէք ժամերգութիւն չըսենք, կամ անկողնոյ մէջ, կամ աթոռի մը վրայ ընկողմանած, կամ գլուխնիս կրթնցուցած, կամ ոտքերնիս մէկմէկու վրայ լարած. և վերջապէս ուրիշ ո՛ և իցէ այնպիսի անվայել դրութեան մէջ՝ յորմէ իսկ և իսկ չհեռիլ պէտք կ՚ըլլար, յանկարծ մարդ մը կամ նոյն իսկ ծառանիս վրայ եկած առենը:

ԺԱ. Ամէն չանքով խորագրիները սորվինք, օրացոյցը դիտենք, ևչնչին պատճառներու համար ժամերգութիւնները չընդհատենք: Այս կանոնները չը պահողը՝ թեթևասլիկ մէկն ըլլալու է, որ քահանային չի վայելեր:

ԺԲ. Ճիշտ և հաւատարիմ ըլլանք ժամերգութիւնիս որոշուած առենին զուրցելու. « գիշերայինը, առաւօտեանը և արևագալինը» առաուն կարելի եղածին չափ կանուխ. « Ճաշուները » կէսօրը. « երեկոյեանը, խաղալականը », և այլն, իրիկունը: Անխախտ պահենք այս կանոնը, ծանր պատճառներէ յառաջ եկած արգելքներէն դուրս: Ամենևին չենք տարակուսիր գալջերուն կարգը դասելու զանոնք՝ որ առանց պատճառի գրեթէ սովորաբար բոլոր ժամերգութիւնը երիկուան կը թողուն:

ԺԳ. Վայ կալգէ դուրս չտասլին: Զգուշանանք. ըստորում ինչպէս կրնանք բարեպաշտ քահանայից դասը դասել սասլիկ չտապելով ժամերգութիւն ըսողը: Այս կերպ ժամերգութիւնը ձանձրութեան նշան մըն է: Ի՞նչ ըսելու է անոր որ զԱստուած փառաբանելէն կը ձանձրանայ, և անոր հետ խօսակցելէն կը նեղի, ու վայրկեան մը յառաջ աղաւթելու կը ջանայ: Քանի մը վայրկեան աշխըտելով ժամերգութիւնը ըստ պատշաճի կ՚ըսուի. « Աւժանապէս, մտադրութեամբ, ջերմ եռանդեամբ »:

ԺԴ. Հոս խորհուրդ մը պիտոր տանք, որուն դժբաղդաբար եղբայրակիցներէս շատերը գուցէ չի հետևին. այսու ամենայնիւ կու տանք, աղաչելով ղերենք որ գոնէ երկու երեք անգամ փորձեն. ու եթէ Աստուած ի փոխարէն՝ իրենց բարեպաշտութենն և եռանդը չի շատցուց, ինչ կ՚ուզեն թող ըսեն. այսինքն ժամերգութեան առեն ամէն տան մէջտեղը և վերջը մէյմէկ ընչաքութեան հանգիստ ընեն:

ԺԵ. Ցնորմանց դէմ մահուչափ պատերազմ, զգայացնոտս պէս հալածենք զանոնք. եթէ ձանձրացուցիչ են, վայրկեան մը դադար առնենք, գիրքը դոցենք, Աստուծոյ օգնականութիւնը խնդրենք, և սկիզբը ըրած դիտաւորութենիս նորոգենք: Ասկից չար ցնորմանց առջևն առնելու համար, մեծապէս կ՚օգնեն բառերուն դրաւոր լմնցումն աղէկ ուշադրութիւն ընելը. յետ այնորիկ սահպ սահպ Աստուծոյ ներկայութիւնը մտքերնիս բերելը, զոր օրինակ, « Յիսուս Քրիստոս, Տէր Աստուած» անուանց հանգիպելուն, և մանաւանդ « Փառք Հօր », և այլն, ըսուած առենը: Ամէն այս բառերուն գլխուն թեթև խոնարհութիւն մ՚ընենք, կամ երեսնիս խաչակնքենք. շատ օգտակար կ՚ըլլան այս կամ առնց նման հնարքներ:

*ԺԶ. Վերջապէս ծունկ չոքած և ամենայն մտադրութեամբ զուրցենք վերջին աղօթքները, մանաւանդ « Ամենասուրբ » * աղօթքը, ժամերգութեան մէջ թեթև պակասութեանց ներումն ընդունելու դիտմամբ:*

* Ամենասուրբ և անբաժանելի Երրորդութեան, խաչելեալ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մարգեղութեան, ամենեցունցմէ

Աստնք են սուրբ քահանային այսպիսի կարևոր գործքի մ'առեն պահած կանոնները: Մենք ալ կընանք ամենայն հաւատարմութեամբ բոլորն ալ պահել, և այսպէս ընել Ժամերգութենիս՝ որ Աստուծոյ հաճելի և ընդունելի ալ օգտակար ըլլայ, և մեր ալ անձնական սրբութեանը նպաստէ:

ԳԼՈՒԽ Ե.

Մասնաւոր քննութիւն — Նորին հարկաւորութիւնը — Այս կրթութեան նկատմամբ՝ քահանային վարմունքը — Գործնական կանոններ — Ընդհանուր քննութիւն:

264. Ըստ տեսականին, ամենքս ալ գիտենք թէ ինչ է մասնաւոր քննութիւնը: Ամենուն ծանօթ է, որ այս կրթութեամբ մենք ամեն օր կը մտածենք խիղճերուս վիճակը՝ չէ թէ ընդհանրապէս, այլ մասնաւորապէս առաքինութեան մը՝ կամ ախտ մը՝ կրթութեան և կամ պարտաւորութեան մը նկատմամբ. որպէս զի շատ մը կէտերու մէջ տեսնենք ըրած պակասութիւննիս, կամ յանցանքնիս, և հաստատապէս կանանք թերութիւննիս ուղղելու և առաքինութեան մէջ յառաջանալու:

Այս պարզ ծանօթութիւնը արդէօք բաւական չէ՞ այս հոգևոր կրթութեան կարևորութիւնը հասկցնելու

և ամենափառաւոր և միշտ կուսին բեղմնաւոր անբծութեան, և ամենայն սրբոց համօրէն փառաց՝ եղիցի յաւիտենական գովութիւն, պատիւ, զօրութիւն և փառք յամենայն աթարածոց, և մեզ թողութիւն ամենայն մեղաց՝ ի յանսահման յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Երանի՛ արգանդին Մարիամու Կուսին, որ տարաւ զՈրդին Հօրն յաւիտենականի: Եւ երանի՛ տեսանցն որք դիպեցուցին զԲիբլիստաս Տէրն մեր: « Հայր մեր, Ողջոյն, փառք Հօր »:

Որոյ վինի ծամբգոութեան, ընդ[illegible]անգութեամբ, և ի ծոնր առնէն պաղչիս, լէտան ժ. Քահանայապէտ ներսոճ ընորհեալ պատառութեանց և յանցանաց, որք մարգիայնի փափուկութեամբ գործել իցեն ի ծամառացութեան:

համար: Յայտնի է որ մանաւոր քննութեամբ՝ ուղղակի չարեաց արմատը կը գիտենք, զոր խլելու ձեռնհաս ենք ըլլար, եթէ բարի կամք ունեցողներուն երբեք չը խնայուած աստուածային օգնականութեամբ, ամեն օր չը կրկնենք յարձակումնիս միշտ կռուելու և թերութիւննիս ջնջելու նոր բաղձանքով և յոժարութեամբ, ըսելով Դաւիթ մարգարէին հետ. « Չալածեցիր զիս նամիս իմ, և հասիր նոցա, և ոչ դարձայ ի նոցանէ, մինչև սպառեայիր զնոսա »[1]:

Իրաւցընէ ամեն աստուածապաշտութեան գործք առանձին զօրութեամբ և աղդեցութեամբ ախտերնիս ջնջելու գործակից կ'ըլլան, մանաւանդ երբ յատկապէս այս նպատակին ուղղուած ըլլան. բայց մանաւոր քննութեան մէջ այս առանձին գիտաւորութիւնը որոշակի անոր էութիւնը կը կազմէ, ըստ որում անոր ուղղակի և էական վախճանը պակասութիւնները ջնջել և առաքինութիւնները ստանալն է:

Այ չի զարմանանք ուրեմն, եթէ ամեն հոգևոր խոհեմութեան վարդապետները այնչափ կը յանձնեն մանաւոր քննութիւնը՝ սրբութեան միջոցներուն մէջ երբեք ամենազօրաւորը: Այ չի զարմանանք ուրեմն երբ լսելու ըլլանք, զոր օրինակ, Թոմբլիսուեդ մը որ կ'ըսէ. — Սուրբն Իգնատիոս մանաւոր քննութիւնը մտածական աղօթքէն աւելի նախամեծար կը համարէր. ըստ որում մտածականի մէջ միայն ընելու առաջարկածնիս՝ մանաւոր քննութեան մէջ պէտք է ի գործ դնենք. այսինքն այն բանը՝ որուն վրայ պէտք է աւելի հոգ տանինք, և ախտերէս ուղղուիլը և կիրքերնիս ձնշելը —: — Բան մը կարող չէ, գարձեալ կ'ըսէ Թոմբլիսուեդ, յետ կեցցնելու զմեզ այսպիսի սուրբ կրթութենէ մը. և եթէ ծանր գործք մ'արդելք ըլլայ որոշուած ատենը ընելու, պէտք է որ յետոյ հոգ տանինք կարելի եղածին չափ շուտով ընելու: Նոյն ինքն մտածականէ տնօրինող հիւանդութիւնները՝ ոչ մասնաւոր և ոչ ալ ընդհանուր քննութենէ կը տնօրինեն զմեզ, ուստի անգարձ վնաս մըն է, որ

1 Սաղմ. ծիզ. 38:

ինչ և իսկ պատճառի համար զանց առնելու չենք այս
կրթութիւնը։ —

Նոյն հեղինակը կը սորվեցընէ մեզի, որ սուրբն Իգ-
նատիոս, այն Աստուածմէ յայտնապէս քրիստոնէական,
կրօնական և քահանայական կառավարչութեան գործնա-
կան ուսմունքը կանոնաւորելու և յարդարելու համար
խաւրուած անձը, գոհ չէր որ միայն իր կրօնքին մէջ ի
գործ դրուէր մանաւանդ քննութիւնը. այլ կը պահան-
ջէր որ իր կրօնակիցները աշխատէին աշխարհականաց ալ
ընել տալու։ Եւ ինքնին օրինակ ալ կու տար. հոգևոր
հիւանդի մը հոգաբարձութիւնը յանձն առածին պէս,
շուտով մը մանաւանդ քննութեան վրկարար դեղը կ'ա-
պըսպրէր։ Երկար առեն իւր կրօնակիցները հոգևոր
ճամբու մէջ ուղղելու և առաջնորդելու համար մանա-
ւանդ քննութենէն, և սուրբը խորհրդոց գործածութենէն
զատ՝ ուրիշ միջոցի մը ձեռք չի զարկաւ. և կ'ըսէր որ այս
երկու միջոցները աղէկ գործածողները՝ առաքինութեան
մէջ հաստատ կը մնային։

Եւ այնպէս կարծելու չէ, որ սուրբ Իգնատիոս մը-
տածական աղօթքին վրայ այնչափ համարում չունենա-
լուն համար, մանաւանդ քննութեան վրայ այսպէս խո-
սած ըլլայ։ Այսու ամենայնիւ կրնանք ըսել, ըստ մեր
կարծեաց, որ կանոնաւոր կերպով մեր տալիք եղանակին
համաձայն եղած մանաւանդ քննութիւնն ալ՝ տեսակ մը
մտածական աղօթք է, և եթէ քիչ մըն ալ կը տարբերի՝
ասիկայ աւելի կերպին՝ քան թէ էական մասին մէջ է։

265. Զենք կարծեր որ մանաւանդ քննութեան սո-
վորութիւնը նոր կամ գրեթէ — նոր բան մ'ըլլայ եկե-
ղեցւոյ մէջ։ Ընդհակառակն շատ հին է. սուրբն Բարսեղ,
սուրբն Օգոստինոս, սուրբն Յովհան Ոսկեբերան, սուր-
բըն Աստուն, սուրբն Բեռնարդոս, և ընդհանրապէս ա-
մեն կրօնաւորական կարգերու հիմնադիրները՝ անոր ա-
մենօրեայ գործածութիւնը կը հրամայեն, մանաւանդ
թէ, ինչպէս կ'ըսեն սուրբն Յերոնիմոս և սուրբն Թով-
մաս, Պլեւթագորան անգամ կը պահանջէր որ իւր ա-
շակերտները օրը երկու անգամ այս իրենք հարցմունքնե-

րուն վրայ քննութիւն ընէին. — Ի՞նչ ըրի. — Ի՞նչպէս
ըրի. — Ի՞նչ բան զանց ըրի։ Որպէս զի յաջողութեան
վրայ ուրախանային, և չարեաց վրայ՝ եթէ գործած էին՝
ղղջային։ Թօմբիկուէդ կ'ըսէ, որ ուրիշ շատ մը փիլիսո-
փաներ, ինչպէս Սենեկա, Պլուտարքոս և Եպիտետոս
նոյն գործածութիւնը կը իրատեին։

Բայց այս արտաքին հեղինակութիւններն ալ ոչինչ
սեպելով, յայտնի չէ՞ որ կրթութիւն մը՝ որ զմեզ ամեն
օր խիղճերուս խորը կ'իջեցընէ մեզի վնասելու համար,
և եթէ սեպնէ անոնցմէ զղջալու և դարձի գալու, Աստու-
ծոյ առջին խոնարհելու և կրկին չընելու առաջադրու-
թիւն դնելու համար, իւր ընորհաց օգնականութիւնը
խնդրելու, և վերջապէս սեպնելու համար թէ զմեզ նո-
րոգելու որ միջոցները աւելի պատշաճ ըլլան. յայտնի
չէ՞, կը կրկնենք, որ այսպիսի կրթութիւն մը պէտք է
չափազանց ազդու ըլլայ։

Զանազան այս ճշմարտութեան վրայ կատարեալ հա-
մոզում մը ստանալու։ Ուսկից կառալ կու գան մեր
թշնամանութիւնները։ — Մեր պակասութիւններէն։ —
Ի՞նչպէս կրնանք զանոնք ճանչնալ։ — Մանաւանդ քննու-
թեամբ։ — Ի՞նչպէս կրնանք ատոնց դէմ կռուիլ։ — Ուշ-
զակի, զգրաւոր և յարատև յարձակմամբ. այսինքն մա-
նաւանդ քննութիւնը ձեռք առնելով, որ ամեն կրթու-
թեանց մէջ միայն անհրաժեշտ է՝ որ ուղղակի պատերազմ կը
բանայ մեր հոգևոր թշնամեաց դէմ. ուստի մանաւանդ
քննութիւնը հարկաւոր է։ Ձեռքով շօշափելի ճշմար-
տութիւն մը չէ՞ ասիկայ։

Հակառակ ճամբով յառաջ երթանք։ Ուսկից յա-
ռաջ կու գան բոլոր մեր թշնամանութիւնները։ — Մեր
պակասութիւններէն։ — Ի՞նչ պէտք է ընենք զանոնք չի
ճանչնալու համար։ — Մանաւանդ քննութեան կրթու-
թիւնը զանց ընել։ — Ի՞նչպէս կրնանք զանոնք պահել և
աճեցընել։ — Երբեք ուղղակի զգրաւոր և յարատևաբար
վրանին չի յարձակելով. այսինքն մանաւանդ քննու-
նէն հրաժարելով, որ մի միայն կարող է այնպէս կռուե-
լու։ — Ուրեմն ասիկայ ամենահարկաւոր կրթութիւն

մըն է. երաւցընէ խելքերնիս պիտի չը հասնէր, թէ ինչպէս ընթերցողներէս մէկին ալ արեգական պէս պայծառ պիտի չի տեսնէր այս ճշմարտութիւնը:

266. Բայց գուցէ ըսուի, թէ կրնանք մենք մեզի առանձնանալ առանց մասնաւոր քննութիւն ընելու. զոր օրինակ, մտածականի ատեն, պատարագէ վերջ, դպրոցական ատեն, և կամ հոգևոր ընթերցման մէջ: Շատ բան բրի: Բայց ան ատենը դուք մասնաւոր քննութիւնը՝ աղօթքի, դպրութեան և հոգևոր ընթերցման մէջ պիտոր ընէք: Վասն զի մենք մեզի առանձնանալ՝ պահաստութիւն մը գտնելու, և անոր դէմ կռուելու համար, ասիկայ է ահա առանձին քննութիւնը, որ առանձնաբար եղածին չափ ազդու չըլլար, որուն մէջ կերպասէս ըրածնիդ հարևանցի պատահմամբ և թերութեամբ պիտոր ընէք այսպիսի կրթութեանց մէջ, որոնք ուղղակի պահաստութեանց դէմ կարգաւորեալ չեն, ինչպէս է մասնաւոր քննութիւնը: Ուստի մենք անդրդուելի համոզման ապահովութեամբ այս երկու առածները կը հետևցընենք, զորոնք հոգևոր կենաց վճիռ կ'անուանենք. — « Առանց մասնաւոր քննութեան երբեք պիտոր չը կարողանանք պահաստութենիս ուղղել »: — « Մասնաւոր քննութեամբ անտարակոյս թերութիւններս եթէ ոչ ըստ բոլորին՝ գէթ ըստ մասին կրնանք ուղղել »:

Բայց գուցէ դարձեալ ըսուի. Կարծենք որ ձեր « բարի » ըսած քահանաներէն ըլլանք, առանց մասնաւոր քննութիւն ալ ընելու: Կրնայ ըլլալ. բայց բուն իսկ մասնաւոր քննութիւն չընելնուդ համար՝ « սուրբ » քահանայ ալ չէք. և եթէ բոլոր կէտերուդ մէջ չէ, գոնէ բաւական երկար ատեն ինչ ինչ պահաստութիւններ պիտոր ունենաք, որոնք կատարելութեան վերին աստիճանը հասնելու արգելք պիտոր ըլլան, և զձեզ միշտ այդ վիճակին մէջ պիտոր պահեն:

Բայց, վերջապէս գուցէ մէկը դարձեալ կրկնէ. Արդեօք պարտաւորեցուցիչ կրթութիւն մըն է ասիկայ: Այո, այնչափ՝ որչափ որ կը պարտաւորէ պահաստութեանց ուղղութիւնը. վասն զի, ինչպէս տեսանք, առանց անոր բան մը չենք կրնար ընել: Արդ ով, մանաւանդ թէ որ քահանան պիտոր համարձակի ըսելու, որ պատշաճ ըլլայ թերութեանց հետ դաշնադիր ըլլալով՝ զենքերը գետին ձգել:

267. Մենք հաստատապէս գիտենք, որ սատանան ձեռքով ոտքով կ'աշխատի զհաւատացեալները, նա մանաւանդ զքահանաները յետ կեցընելու մասնաւոր քննութեան յարատև գործադրութենէն:

Անիկայ դժբաղդաբար մեզմէ շատ աւելի աղէկ կը տեսնէ, թէ որչափ վրկարար է այս կրթութիւնը, և դիտէ թէ ինչ սքանչելի պտուղներ կը շահի անոնց, որոնք հաւատարմութեամբ կը շարունակեն. անանկ որ միշտ տհաճութիւն և տաղտկութիւն կը թելադրէ զը հասկցողներուն և չընողներուն. և շնտակը նոր չանքեր ալ պարապի չելլելը:

Եւ երբ որչափ քիչ են ամեն օր կանոնաւորեալ մասնաւոր քննութիւն ընողները: « Զաղ և գաղջ » քահանաները արդէն երբեք չեն ըներ. իսկ « բարի » քահանայք ալ միայն հոգևոր կրթութեանց ատեն կ'ընեն, և գուցէ շարունակեն քանի մը օր վերջն ալ: Միայն « սուրբ » քահանայք են որ յարատևաբար հաւատարիմ են, թէև չար թշնամին աշխատի զանոնք ալ որսալու, և երբեմն ալ մէկ երկուք մը կը հանդիպցընէ: Բայց շնտակը զուարցելու համար, սուրբ քահանայից մէջ ալ այս կրթութիւնը զանց ընողները՝ սրբութեան մէջ յառաջ չեն երթար, և միայն անունք յառաջ կ'երթան՝ որոնք ամեն օր կանոնաւոր կերպով կը շարունակեն այս կրթութիւնը:

Ուստի հաստատուն առաջադրութիւն դնենք միշտ հաւատարմութեամբ և յարատևութեամբ այս կրթութիւնը ընելու, ապահով ըլլալով որ շատ և ամենամեծ օգուտներ կը քաղենք: Բայց զգոյշ կենանք, սիրեցեալ եղբայրակիցք, զգոյշ կենանք որ այս ճամբան բռնելով հաղիւ թէ քիչ մը յառաջ գացած՝ մի գուցէ կենալու և կամ յետ դառնալու փորձութիւնը զգանք. և ան ատենը վայ մեզի եթէ խաբէութիւնը չհասկընալով, երբ կե-

նանք. միայն քանի մը օր զանց ընել պիտոր կարծենք, ռակայն շուտով օրերը ամմաներու պիտոր փոխուին. և ան ատենը սովորական և հաստարակ ձամբան բռնենք, այսինքն միայն իրիկունը արագ և անորոշ նայուածք մը ռանք օրուան մէջ հանգիպած գործքերուս վրայ, որ երբեք բաւական պիտոր չըլլայ մեր կատարեալ և հիմնական նորոգութեանը: Սիրտ առնենք ուրիշին, քաջալերուինք, քիչ մը սուրբ բռնութեան ձեռք զարնենք և երկինց արքայութիւնը մերն է. « Արքայութիւնն երկնից բռնագաւառ, և բռնուն յափշտակէն զնա » 1:

268. Ահաւասիկ քանի մը դլխաւոր կանոններ այսպիսի կրթութեան մը յաջող եղբին վրայ ապահով ըլլալու համար:

Սուրբ Իգնատիոսին եռանդուն աշակերտները, և կատարելութեան ձամբուն մէջ մեր գերազանց օրինակները, ամէն օր երեք անգամ խղճի քննութիւն կ'ընեն: Առաջինը առաւօտ, զոր երեք յառաջատեսութեան քննութիւն կ'անուանեն. ըստ որում ուրիշ բան չէ, եթէ ոչ այն սխալմունքները յառաջուց տեսնելու հոգ մը, որոնց մէջ կրնան իյնալ այն օրը ըրած քննութեան ներկայ նիւթին համաձայն: Երկրորդը կէսօրը կ'ընեն, ամբողջ քառորդ մը, որուն մէջ կը քննեն առաւօտնէ մինչև այն ատենը պակասութիւնները եթէ դժբաղդաբար ըրած են: Երրորդը վերջապէս իրիկունը, ան ալ քառորդ մը, օրուան երկրորդ մասին նկատմամբ, այսինքն ցերեկէն մինչև իրիկուն: Ա՛լ զարմանալու չենք, երբ հաստատութեամբ այսպիսի կանոն մը պահելով սրբութեան ասանկ գեղեցիկ օրինակներ կու տան: Ո՞ր պակասութիւնը ուրեմն կրնայ արմատ ձգել ասանկ պատերազմող մարդու մը սրտին մէջ: Եթէ նոյնչափ ընելու չենք հմարձակիր, գոնե միայն երեկոյեան քննութեան պարտաւորուինք, բայց ամէն իրիկուն ընելու:

Ոմանք իրենց մանաւանդ քննութիւնը կէսօրէ կէսօր կ'ընեն, ուրիշներն ալ իրիկուընէ իրիկուն: Ասանք կ'ըսեն, որ շատ աւելի դիւրին կ'ըլլայ ամբողջ օրուան մը մէջ եղած պակասութիւնները քննել և դանելը, քան թէ նախընթաց աւուր գործուածներու, որոնք շատ աւելի դիւրութեամբ կը մոռցուին, քան թէ նոյն աւուր մէջ գործուածները. և ըստ իմիք երաւունք ունին, բայց իւրաքանչիւր ոք իրեն դիւրին եկածը թողընէ:

Մանաւանդ քննութեան նիւթին նկատմամբ հոգևոր վարդապետները կ'ապրպրին նախ այն նիւթերու վրայ ընել՝ որոնք ընկերին դայթակղութիւն և վիշտ պատճառած են. յետ այնորիկ միւս դլխաւոր պակասութեանց վրայ, որոնք զմեզ շատ անգամ կը մոլորցընեն:

Ամէն մէկ մանաւանդ քննութեան նիւթը՝ մէկ կամ երկու հատ պակասութիւն ըլլալու է. երբոր նիւթը շատ ըլլայ, ան ատենը կրկին ես ու դուն մէջ չի մնար, հոգևոյն կարողութիւնները կը բաժնուին, և չափէն աւելի ընդհանուրին վրայ տարածուելու անպատեհութիւնը կ'ունենանք, որ շատ քիչ անգամ աղէկ հետևութիւններ կ'ունենայ: Առանձինը միշտ և ամէն բանի մէջ գերազանց է:

Առաջին պակասութիւնը բոլորովին չը ջնջած, կամ նշանաւոր կերպով չը տկարացուցած՝ ուրիշ պակասութեան անցնելու չէ, բայց եթէ քիչ մը ժամանակի համար պատշաճ տեսնուի ուրիշի մը վրայ յարձակելու. որպէս զի յետոյ դարձեալ աւելի եռանդեամբ առաջինը պաշարուի:

Ասիկայ այսպէս ընելով գործքին ձեռք զարնելու է:

Աղէկ կ'ըլլայ որ կրցածնուս չափ հոգ տանինք ո և իցէ խղճի քննութեան քիչ շատ ընկերակից եղող ցամքութիւնը պակսեցընելու, որուն համար շատերը այնչափ նեղութիւն կը ղգան ընելու, և կամ սկսելու ալ: Ուրեմն սոսկապէս մեր պակասութեանց անախորժ ու տաղտկալի քննութեան հետամուտ ըլլալու չենք, որ միւս կողմանէ գրեթէ անօգուտ կ'ըլլար, եթէ յառաջ ուեղը քանի մը քննութեան վրայ աղօթքին անուշահոտութիւնը սփռող խորհրդածութիւններ չընկերէին: Վերոյիշեալ անպատեհութենէն խոյս տալու համար, ահաւասիկ ձիշտ քննութենէն յառաջ ըլլալիք ներգործութիւնները:

ԱԼ. Կատարելապէս Աստուծոյ ներկայութեան առ-
ջև գտնուիլ, և անոր օգնութիւնը խնդրել:

ԲԼ. Շնորհակալ ըլլալ անկից ընդունուած բարեաց, մանաւանդ անանձնիներուն համար՝ որոնք աւելի երախ-
տագէտ ըլլալու կը ստիպեն զմեզ:

ԳԼ. Զգուիլ բոլոր կենաց մէջ գործուած մեղքերէն, և ընորհաց ու անկից ընդունուած բարիքներու չարա-
չար գործածութենէն:

ԴԼ. Կառուցուիլ ձեռնամուխ եղած պակասութենէն մեղի եղած ինամները քննել, չարունակուելիք ինամներ՝ եթէ այն պակասութիւնը հանդարտ Թող տալու ըլլա-
յինք: Ինչպէս նաև մտածել թէ արդարի անհաճոյ է Աս-
տուծոյ այն պակասութիւնը, և սուրբերը արդարի աշխա-
տած ըլլան անոր դէմ կռուելու, և այլն:... Ա,յս ամենքը պէտք չէ որ երկարատև ըլլան, այլ քանի մը այս տեսակ խորհրդածութիւններ զկամքը կը բորբոքեն, և քննու-
թիւնը աղեկ ընելու կը պատրաստեն:

ԵԼ. Ուշադրութեամբ քննել այն աւուր քննութեան պակասութեան վերաբերեալ խորհուրդները, գործքերը և զանցառութիւնները: Նախընթաց քննութենէն մինչև ներկայ քննութիւնը անցած ժամերը մի առ մի մտքի առ-
ջևն բերել, և այնպիսի պարագայից մէջ քիչ մ'աւելի կանգ առնել՝ որոց մէջ գիտենք որ շատ անգամ կրնանք պակաս ըլլալ: Այնէն մէկ նոր գտնուած մանաւանդ ծանրակէկ պակասութեան վրայ շատ օգտակար կ'ըլլայ հեծութիւն մը, կամ եռանդագին հառաչանք մը, միշտ զքննութիւնը ախորժելի և հաճոյ ընելու դիտմամբ:

ՋԼ. Պակասութեանց քննութիւնը լինցածին պէս զղջման աղեկ ներգործութիւն մ'ընել, ի խոր խոնարհիլ Աստուծոյ առջևն, Թողութիւն խնդրել. և յետ այնորիկ կռուած պակասութեան հակառակ առաքինութեան մէկ կամ երկու ներգործութիւնը երբեմն ապաշխարանք դնել մեզի: Պակասութիւններէս ուղղուելու համար պահելու էական կէտը ամենևին պակասութիւն մը անպատիժ չի Թողուըն է: Օգտակար կ'ըլլայ նաև որ մենք մեզի դրած ապաշխարանքնիս քիչ մը ծանրակէկ ըլլայ, մանաւանդ

անձնասիրութեան նկատմամբ գործուած մեղքերը քա-
ւելու և կրկին գործելէ զգուշանալու համար:

ԸԼ. Հաստատ առաջադրութիւն մը դնել սաստիկ ե-
ռանդեամբ մինչև միւս քննութեան կռուելու ջնջուելիք պակասութեան դէմ:

ԸԼ. Քննութիւնը լինցընել « Հայր մերով», կամ ու-
րիշ պատշաճ աղօթքով մը:

Կը յանձնուի որ մէկ քննութենէն մինչև միւս քըն-
նութիւնը հաշանութեամբ չի մեղանչելիք քննութեան նկատմամբ, անհնայ պատ-
ժելով զմեզ այն թերութեանց համար՝ որ յայսմ մասին ըրած ըլլանք:

Իւրաքանչիւր օր կը տեսնէ որ ինչ ինչ փոփոխու-
թեամբ՝ մանաւանդ քննութիւնը կրնայ առաքինութեան մը, բարեպաշտական գործոյ մը և պաշտօններուս մէկ պարտաւորութեանը վրայ ըլլալ:

Բան մը չենք ըսեր իրիկուններըը օրուան մէջ գոր-
ծուած պակասութեանց նկատմամբ ըլլալիք ընդհանուր քննութեան վրայ. որուն համար, քանի մը թերթև տար-
բերութիւններէ զատ, կրնան նոյն իսկ մանաւանդ քըն-
նութեան կանոնները գործածուիլ: Ա,յս քննութիւնը իրիկունը ընելով, լինցածին պէս կրնայ մէկը ընդհա-
նուր քննութիւն մ'ընել օրուան մէջ գործուած բոլոր մեղքերուն վրայ, բայց մանաւանդ քննութեան սեպհա-
կան բնաւորութիւնը պահելու հոգ տանելով:

Ասկից է այս գերազանց կրթութեան եղանակը: Տէր Աստուած, որ բարեպաշտ ընթերցողներս շարունակ և կանոնաւոր կերպով ընէին: Ի տրիտուր իրենց հաւա-
տարմութեանը առատ մխիթարութիւններ, զորութիւնք լա-
ցընող պակասութեանց ջնջումը և առաքինութեանց ստացումը կը խոստանանք, որոնք՝ առանց այս ամենաօգ-
տաւէտ սովորութեան՝ միշտ քիչ շատ թերի կը մնան:

Վերջապէս իրենց խորհուրդ կու տանք, իրրև ի-
րենց տկարութեան և թուլութեան դէմ կռուելու հա-
մար օգնելու զօրաւոր միջոց, որ աղաչեն զԱստուած հայրնին ատեպ իրենց յիշեցընելու, և ամենայն ձգտու-

Թեամբ հարցուփորձ ընելու մասնաւոր քննութեան պարտաւորութեանը վրայօք: Եւ եթէ իրենք իսկ քահանայից խոստովանահայր են, կը հրաւիրենք զնոսա ազդուութեամբ սոսկալու իրենց խոստովանողութիւնը՝ գործ դնելու այս սուրբ կրթութիւնը: Եւ հոս վերջակէտ կը դնենք, յաւելով այսպիսի հարկաւոր նիւթի մը այսպէս շուտով վերջ տալը մեր համար:

ԳԼՈՒԽ Ջ.

Ա.յցելութիւն ամենասուրբ Հաղորդութեան — Ա.յս սովորութեան ճարկաւորութիւնը եւ օգուտները — Յայտ մասին քահանայից հասարակ սովորութիւնը — Գործնական կանոններ:

269. Ա.մենասուրբ Հաղորդութեան խորհրդոյն յերմեռանդութիւնը այնպէս սուրբ, իրաւացի և ամէն տեսակ շնորհքներով առատ է, որ կարծես թէ անկարելի կ՚երևի որ հաւատք ունեցող մը զանց ընէ զայն: Ինչպէս հաստատութեամբ հաւատալ, որ Յիսուս Քրիստոս անձամբ ներկայ է մեր տապանակներուն մէջ, ու հոն կը մնայ օր և գիշեր մեր սիրոյն համար, այնչափ համբերութեամբ մեզի սպասելով, աղերսագութիւններով զմեզ կանչելով, այնչափ խանդակաթ գգուանօք զմեզ ընդունելով, այնչափ սիրով հետերնիս խօսելով, և իւր պարգևաց անսպառ առատութեամբը զմեզ հարստացընելով, ինչպէս հաւատալ, կ՚ըսենք, բարութեան այսչափ հրաշքներու, և ընդդէմ ալ այսչափ անտարբեր և պաղ գտնուիլ:

Ա.յս խորհրդածութիւնները եթէ սոսկ են ամենուն համար, հապա ո՛րչափ աւելի քահանայից նկատմամբ: Ա.ստուածային Հաղորդութեան խորհուրդը իրենց կեանքը, փառքը, ամէն բարիքը և գանձն ըլլալու է. աւելին ըսենք, իրենց գործքն է, ըստ որում իրենք են սրբագործող պաշտօնեայները. ինչպէս որ կրնան իրենք իրենցմէ տեսնել այն խօսքերուն մէջ զոր սեղանը

չէլած կ՚ըսեն. « Ես կամիմ պատարագել և քահանայագործել զմարմին և զարիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի »: Իրենք են որ խօսքով մը զՅիսուս Քրիստոս երկընքէն սեղանին վրայ կ՚իջեցընեն, իրենք սրբատափնեղուս մէջ կը դնեն, տապանակներուն մէջ կը դոցեն. իրենք կը կրեն այս սքրոյ բանտերուն բանալիները, իրենք են, ներուի մեղի այս խօսքը, աստուածային Բանտարկիչին պահապանները. այո, Յիսուս Քրիստոս իրեն պաշտօնեից ձեռքը յանձնուած է, անանկ որ ինքիրմէ և ոչ թեթև չարժուամ մը կ՚ընէ, այլ յօժարութեամբ քահանային ուզածին հպատակ է: Ինչպիսի զարմանալի յարաբերութիւններ կը յայտնէ մեզի ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդը հոն իրապես ներկայ Յիսուսի Քրիստոսի և իրեն պաշտօնեայ քահանային մէջ: Ինչպիսի խիստ և սրբազան պարտաւորութիւն մը ուրեմն մասնաւանդ մեզ քահանայիցս համար, յատուկ և մասնաւոր ջերմեռանդութիւն մ՚ունենալու ամենասուրբ Հաղորդութեան:

270. Պ.ետրոս, իւր « Հոգևոր առաքինութեան » մէջ այնչափ սաղմոսած ամենասուրբ Խորհրդոյ այցելութեանց վրայ խօսելով, այս իրեք սկզբունքները կը դնէ, և փաստաբանելով կը մեկնէ. — Ա.մենասուրբ Հաղորդութեան խորհրդոյն այցելութենէն աւելի հաստատուն ջերմեռանդութիւն չի կայ: — Չի կայ ջերմեռանդութիւն մը՝ որ Յիսուսի Քրիստոսի գիտաւորութեանը և մտքին աւելի յարմար ըլլայ: — Չի կայ ջերմեռանդութիւն մը՝ որ ասկէ աւելի փրկարար և օգտաւէտ ըլլայ հոգւոյ: —

Ասկից է որ բոլոր սուրբերը սեղաններուն ոտքը կը դնեն այնպիսի կենդանի հաւատքով և եռանդուն սիրով, որ անկից աւելին չըլլար: Ասկից է որ երկար ժամեր կ՚անցընեն տապանակներուն առջին, թէև իրենց համար վայրկեան երևին: Ասկից է որ նոյն իսկ աշխարհիկ անձինք ամէն օր երեւելի ժամանակ մը կը նուիրեն ամենասուրբ Հաղորդութեան այցելութեան: Ա.ռնցմէ մեկը, Պարոն Տը-Բանսե, աքանչելի օրինակ մը առաւաւասիկ իրեն կենսագիրը Հ. Սէն-Ժիւբերն անոր նկատ-

մամբ գրածը: — Երկար ժամեր աղօթքով կ'անցընէր ա-
մենասուրբ Հաղորդութեան առջեւ. և օր մ'իրեն բարե-
կամները երբ զարմանքնին կը յայտնէին այսչափ երկար
ատեն այսպիսի կրթութեան մէջ մնալուն նկատմամբ,
Անոր համար է որ, ըսաւ, հոն հոգեւորապէս կը զբօս-
նուայ, և միշտ ալ կը հանգչիմ, և նոր զօրութիւն մը կը
ստանամ: — Աշխարհականաց համար այսչափ կարևոր
եղածը՝ մի թէ քահանայից համար խիստ պարտաւորու-
թիւն մը չըլլար:

Ո՛հ, եթէ ճանչնայիք Աստուծոյ պարգևը. « Եթէ
գիտէիր դու զպարգևան Աստուծոյ »[1]: Եթէ գիտնայիք
թէ ինչ ըսել է սեղան մը՝ որուն վրայ իրապէս ներկայ
է Յիսուս Քրիստոս: Եթէ գիտնայիք թէ ինչպիսի դան-
ձեր պահուած կան այն գաւանին մէջ՝ որուն « տապա-
նակ » կ'ըսենք, որ զգայարանաց վրայ մեծ ազդեցութիւն
մը չունի, բայց կենդանի հաւատք և եռանդուն սէր ու-
նեցողն մը միտքը՝ վեհ և զարմանալի մտածմունքներով
կը յափշտակէ:

Աղերսենք, արթընցնենք այս հաւատքը, որով-
հետև կը քնանայ. արծարծենք այս սէրը՝ որ պաղեր ու
սկսած է, և սառած սրտերնիս նորէն բորբոքելու
համար ըսենք մենք մեզի. Եթէ տեսնէի որ մէկը աճապա-
րելով և շտապով գար ու ինձի ըսէր, թէ այս ինչ եկե-
ղեցւոյ մէջ Յիսուս Քրիստոս երևելի կերպարանքով կե-
ցեր է, մի թէ անտարբեր կը կենայի՞. մի թէ քիչ մը նե-
ղութիւն չանձն չէի՞ առներ Աստուծոյ Որդին՝ իմ Փըր-
կիչս և գտաւորս տեսնելու համար: Ո՛չ, իրաւցընէ ոչ.
այլ նոյն վայրկենին մէջ կը թռչէի անոր ոտքերուն առ-
ջեւ: ... Ո՛վ անմիտ և խեղճ մարդ, ինչ հարկ կայ մար-
մնաւոր աչքով տեսնելու, ինչ որ այնպէս յայտնի կը
տեսնես հաւատոյ աչքերով: Փողէն քեզի ինչ ընաս՝ երբ
դու գիտես որ անոր տակը կը գտնուի քու պաշտածդ:
Ո՛հ, եթէ ծնողասէր որդի մը կարենալով գալ մինչև
բանտին դուռը, ուր Թշուառաբար գոցուած է իր հայ-
րը, մի թէ պիտոր ըլլար՞ գալու ամէն օր և դրան ե-

1 Յովհ. Դ. 10:

տեղն անոր երկու մխիթարական խօսք ղուրցելու, և ի-
րեն անոր վրայ ունեցած գուրթը և սէրը ցուցընելու,
Թէպէտև չը կարենար հօրը երեսը տեսնել:

Իրաւցընէ մեր սեղաններուն տապանակը այն սիրոյ
բանտն է՝ ուր գոցուած է Յիսուս: Մեր վրայ ունեցած
անհուն սէրն է՝ որ զինքը հոն կաչկանդեր է. այո՛, իր
անսահման սէրն է, որ զինքը կը ստիպէ ըսելու այն զար-
մանալի և անսպառում խօսքերը. Իմ ղուարճու-
թիւնս մարդկանց հետ ըլլալն է. « Ուրախ լինել յորդիս
մարդկան »[1]:

Ո՛չ, այնչափ աշխատալի բան մը չէ ամէն օր ամենա-
սուրբ Հաղորդութեան մէջ Աստուծոյ այցելութիւն
մ'ընել: Երբ հաւատքով դիտենք որ ինքը սեղանին վրայ
կը գտնուի, իրաւունք և ամենամեծ պատշաճութիւն
մըն է այցելութիւն ընելը, մանաւանդ թէ բարեսիրտ
անձի մը համար երախտագիտութեան և սիրոյ պարտա-
ւորիչ գործ մըն է:

Կը կարծէք, սիրեցեալ եղբայրակիցք, որ ընդհա-
նուր քրիստոնէից համար ըսուածը, պիտոր չը կարե-
նանք աւելի իրաւամբ քահանայից ալ ըսել:

271. Բայց դուցէ ըսուի, թէ ի՞նչ հարկաւորու-
թիւն կայ այս կէտիս վրայ այնչափ պնդելու: Մի թէ կը
գտնուի՞ քահանայ մը որ ամէն օր ամենասուրբ Հաղոր-
դութեան իր այցելութիւնը չընէ: Ո՛րչափ հաձելի և սի-
րելի կ'ըլլար մեզի թէ այնպէս կարենայինք հաւատալ և
ըսել. բայց դժբաղդաբար այնպէս չէ:

« Զար » քահանան և ոչ գիտէ թէ ինչ ըսել է այս
Ներմեհանդութիւնը: Ինքը երբեք սեղանին առջև չէ-
լեր, եթէ ոչ սրբապղծութեամբ զայն պղծելու համար.
Յանցանքը գործածին պէս իւր վարդապետին երեսէն
փախուստ կու տայ, և Ադամին պէս մեղանչելէն վերջը՝
կը թաքչի, որպէս զի չերտայ ուրիշ մեղքեր գործելու
համար երևան ելլէ: Ո՛հ, եթէ ուզէր ամէն իրիկուն քիչ
մը ժամանակ սեղանի մ'առջև երթալ՝ իր կենացը վրայ
հեծելու և լալու, քիչ առենէն այս Աստուծոյ այցելու-

1 Առակ. Ը. 31:

Թեան պատուիրեը պիտոր քաղէր։ Բայց ամենևին չը-
նեը, և իր խաւարը հեռացնեու Թանձրանալով՝ աւելի
սոսկալի կ'ըլլայ, ու սիրան ալ աւելի կը խստանայ։

Անկից աւելի աղէկ մը էչ «գաղջ» և «Թոյլ» քա-
հանան։ Ամենասուրբ Հաղորդութեան երկրպագութիւ-
նը անոր վրայ ամենևին հրապուրիչ զօրութիւն մը չու-
նի։ Իրօք, զաղիր գաղջութեամբ ապրողը Ինչ կրնայ ը-
նել սեղանին առջև։ Սառույցէ պարիսպ մ'անոր սիրտը
Յիսուսին սրտէն կը բաժնէ։ Աստուածային խորհուրդը
անոր համար ամենևին քաղցրութիւն մը չունի, և ինքն
ալ անոր ընկերութենէն կը ձանձրանայ։ Իւր սիրտը ու-
րիշ տեղ է. ուշադրութեամբ լեցուն, ըստ այնմ կը
կառավարուի, և անկից զատ ալ ղմկիկը չի սիրեր։ Այսու
ամենայնիւ եթէ ուղէր սուրբ Հաղորդութեան մէջ իր
Աստուածոյն դիմել, ինչպէս որ ուրիշ անգամ ինքն ալ
մեծ յօժարութեամբ կը յաճախէր, ո՜հ, այո՛, ինքն ալ
իր գաղջութիւնը եռանդուն սիրոյ կը փոխէր, և ան-
կարգ կեանքն ալ սուրբ կենայ կը դարձնէր։

Բայց դուն «բարի» քահանան հաւատարիմ է ա-
մենասուրբ Հաղորդութեան ամենօրեայ այցելութեանը։
Ծանը կու գայ ըսելը, բայց փորձառութիւնը պիտոր
ստեր ղնէ՝ եթէ հաստատելու ըլլայինք՝ որ «բարի»
քահանաներն ալ ամենահաւատարիմ են այս մեծ ջեր-
մեռանդութեան։ Իրօք ինքը մեծապէս կը յարգէ, շատ
աղէկ գիտէ անկից յաւաչ եկած զարմանալի պատուէնե-
րը, գաւած ըղձերը, ընդունած զօրութիւնն ու մխիթա-
րութիւնները՝ եթէ ամենայն փութով ի գործ դնէ այս
կրթութիւնը։ Ինքը ղինքը կը յանդիմանէ նաև շատ ան-
գամ պակասաւոր գտնուելուն համար, կը զարմանայ
այն եղբայրակիցներուն վրայ՝ որոնք յարատև են այս
ջերմեռանդութեան մէջ. իւր խոստովանորդինները կը
յորդորէ այս կրթութեան ջերմեռանդ ըլլալու, մինչդեռ
ինքը շատ անգամ ի գործ չի դներ։

Ո՛րչափ բարի քահանայք շատ անգամ անոսի պատ-
ճառներու համար զանց կ'ընեն այս գեղեցիկ ջերմեռան-
դութիւնը։ Քանի մ'օր կ'ընեն, բայց յետոյ կը Թողուն.

կրկին կը սկսին և նորէն կը ձգեն։ Իրենք զիրենք չջմեղ
հանելու համար, կ'ըսեն Թէ ժամանակ չունին, պաշտօն-
ներուն պարտաւորութիւնները արդեօք կ'ըլլան, գործ-
քէ, ղբաղմունքէ և այցելութիւններէ աչք չեն կրնար
բանալ. բայց եթէ անկեղծօրէն խօսէին, պէտք էր խոս-
տովանէին որ միշտ Թուղութիւն և հեղգութիւն մըն է որ
չի Թողուր իրենց ընելու Քառասերեանները, Րէձիանե-
րու, Տումինիկոսեաններու, Ֆերրերեաններու, Պաւլեան-
ներու, Լիգուորիներու և ուրիշներուն ըրածը, որոնք
իրմէ անհամեմատաբար շատ աւելի գործքերու ղբաղած
էին, և այսու ամենայնիւ ամէն օր ժամեր ու երկար ժա-
մեր կը գտնէին ամենաքաղցր յօժարութեամբ երկրպա-
գելու իրենց սուրբ Խորհրդեան մէջ բովանդակուած Յի-
սուսին։

Մ'ևայն «սուրբ» քահանայք այս սուրբ ջերմեռան-
դութեան հաստատուն և անփոփոխելի օրէնք մ'ունին,
Թէպէտև ուրիշ քահանայից պէս գործքերու տակ ձըն-
չուած՝ այսու ամենայնիւ կը սիրեն ամէն օր ղուարձալի
ժամ մ'անցընել սեղանին առջև։

Հոս է որ իրենք ալ Պարոն Տը-Բանտիին նման
«հոգևորապէս կը ղբօսնուն, և նոր զօրութիւն ու հան-
գիստ կ'առնուն»։ Հոս կը հանդչին իրենց պաշտօնին
աշխատութիւններէն վերջը, հպատակ Յիսուսի ձայնին՝
որ իրենց ալ կը կրկնէ՝ իւր սիրելի առաքելոց ըսածը.
«Եկայք դուք յառանձինն յանապատ տեղի, և հանգիս-
ջիք սակաւ մի»[1]։ Հոս է որ կու գան սրտերնին բանալու
աստուածային սիրոյ հնոցին մէջ, և ակարացած ուժերը-
նին կազդուրելու. հոս կու գան տարակոյսներու, տագ-
նապներու և նեղութեանց մէջ ըլլս առնելու, փորձու-
թեանց դէմ դնելու համար պէտք եղած ընդհգքները
ընդունելու, ընդհանրապէս բոլոր մեղաւորաց և մասնա-
ւորապէս ալ իրենց խնամոցը յանձնուած հաւատացե-
լոց, և աւելի յատկապէս ալ իրենց խոստովանորդաց
համար աղօթք ընելու։

1 Մարկ. Զ. 31։

Ո՞վ կրնայ պատմել այն երկար ժամերուն ատեն այս արժանաւոր քահանային և իրենց բարեգուէթ Տիրոջ և Աստուածոյն մէջ անցածը: Ո՞վ կրնայ այսպիսի բարի օրինակի մը հաւատացելոց վրայ ըրած ազդեցութեան հաշիւերթորդ մասն ալ նկարագրել: Ո՞վ կրնայ ճառել ժողովրդեան այսպիսիներուն վրայ ունեցած վատահութիւնը, երբ կը տեսնեն որ երկնքի հրեշտակաց պէս երկրաւոր երկրպագութենց զբաղած են: Չի խաբուինք: Շատ անգամ աշխարհք գիտէ և կը ընդունի մեր յարատեւութիւնը այնպիսի ջերմեռանդութեան մէջ, և մեր հաւատարմութենէն որչափ որ կը վնասուին, այնչափ ալ կը զարմանան զմեզ եկեղեցին չը տեսնելով, եթէ ոչ միայն ծանր հարկ մը տեսած առնէք:

Զեռք զարնենք ուրեմն այս մեծ և սուրբ ջերմեռանդութեան, և ըստ իմիք փոխարինութիւն մ'ընենք Յիսուսի Քրիստոսի՝ այնչափ ապերախտ սրտերու պաղութեան նկատմամբ, որոնք ապերախտութեամբ զինքը կը վշտացընեն. չնորհութիւն տանք հաւատացելոց տեսլ եկեղեցւոյ մէջ երևնալով, և Աստուածնիս, (աղեկ մը խորհինք), Ճմարիտ Աստուածնիս պաշտելու և անոր երկրպագութիւն ընելու համար. և անձերնիս սրբացընենք այս երևելի ջերմեռանդութեան միջոց հաւատարիմ մնալով:

272. Պուրտալու եւ եզերակացութեանց ծանօթ զբոսութեամբ ապացուցանելէն վերջը, թէ աստուածաշունչ Քրիստոսի օրէնքի կը փափաքի որ մենք ամենասուրբ Խորհրդեան մէջ իրեն այցելութիւն ընենք, կը շարունակէ իւր այս հետևեալ ծանր խօսքերը. — Այս Ճմարտութենէն հանելիք հետևութիւնս է, որ Յիսուսի Քրիստոսի Խորհուրդը ուրիշ կերպով չեմ կրնար աւելի անարգել, եթէ ոչ անհոգութեամբ. և ոչ ալ կրնամ աւելի սաստկաբար վշտացընել այս սիրոյ Աստուածը, եթէ ոչ բանի տեղ չը դնելով անոր ինձ ըրած ազատութիւնը, և այն ազատին կերպը՝ որով կը կանխէ:... Եթէ իշխանի մը պալատը առանց պալատականներու մնար, շատ մեծ ամօթ պիտոր պատճառէր. վասն զի իւր հպատակները ասկից

աւելի անարգութեան նշան մը չէին կրնար ցոյց տալ: Եւ ստուգիւ, այս ապերախտութեամբ անարգուած, և իմ զինքը չը յիշելուս վրայ արդարապէս բարկացած աստուածային Քրիստոս, չի՞ կրնար յանդիմանել զիս իր աշակերտաց պէս, որոնք Գեթսեմանի պարտէզին մէջ չը կրնալով դէմ դնել քնոյն ծանրութեան՝ անուշ մը կը մրմռիկեն. « Ո՛հ, այսպէս ուրեմն և ոչ ժամ մը կրցաք լինծի հետ արթուն մնալ»: Խեղճերը չը գիտցան թէ ինչ պատասխանեին իրենք զիրենք արդարացընելու համար. հապա ես ինչպէս պիտոր արդարացընեմ իմ այսչափ ծուլութիւնս: —

Ո՞րչափ ազդեցութիւն ընելու չէին արդեօք Պուրտալուէին խօսքերը այնչափ քահանայից վրայ, որոնք ծանր զբաղմունք մը չունենալով, ինչպէս են գիւղերը գտնուած շատ մը հոգաբարձունները, որոնք յայտնապէս կը խոստովանին՝ թէ այն երկար շաբաթներուն մէջ չեն գիտեր թէ ինչ ընեն, այսու ամենայնիւ այն խաղերու, զբօսանքի և անպէտ այցելութեանց ծախած անվերջանալի ժամանակին և ոչ մէկ մաս մը կը նուիրեն Սրբուն Թիւն սրբոյն այցելութեան:

— Մենք, կ'ըսէ Հ. Լալըման, երկրիս վրայ ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդին զատ, ուրիշ բան մը ոչ ուզելու, ոչ տեսնելու և ոչ ալ ուրիշ բանի վրայ զարմանալու ենք: Նոյն ինքն Աստուած, եթէ կարող ըլլար զարմանալ, այս Խորհրդեան և մարդեղութեան վրայ պիտոր զարմանար: Հապա մե՞նք, մենք ինչ բանի վրայ կը զարմանանք. պատուոյ, խելքի, վատ և անարգ բաներու, որոնք ամենաչոր պիտոր ընեն զմեզ. երբ մարդիկ տեսնեն թէ ինչպէս վարուած ենք մեր Տիրոջ հետ ամենասուրբ Հաղորդութեան խորհրդեան մէջ: Մանաւանդ քահանայք միայն այս երկրպագելի Խորհուրդը պէտք էր ընդունին, որուն որ պաշտօնեայքն են: —

Աղէ, չի յամառինք և այս հաւատոյ ազդեցութենց և վարդապետութեան յարմար՝ զօրաւոր փաստերուն դէմ դնելու չանիրաւինք:

273. Թէև չենք կարծեր որ հարկաւոր ըլլայ բարեպաշտ ընթերցողներուս խրատ տալ ամենասուրբ Հաղորդութեան այցելութեան կերպը, այսու ամենայնիւ երկու խօսք ըսենք:

Երբ մեկը ուզէ բարեկամին այցելութիւն մ'ընել, մի թէ դրբերո՞ւ մէջ կը փնտռէ, կամ ուրիշի՞ կը հարցնէ բարեկամին ըսելիքը: Ո՛չ երբեք. այլ սա բարեկամիս այցելութիւն մ'ընեմ ըսելով կ'երթայ, գիտնալով որ խօսակցութեան բառերը իրենք իրենցմէ կու գան: Այսպէս ալ պէտք է ընել Յիսուսի հետ, և իրեն քովը հասած՝ նուդ պէս այնպէս խօսեցեալ՝ իբրև թէ անձամբ զինքը տեսնելիք:

Այսու ամենայնիւ եթէ սրտերուդ մէջ Յիսուսի հետ խօսելու նիւթ մը չի գանէք, ան առիթը գիրք մ'առնէք. զոր օրինակ, « Սրբոյն Լիգուորեայ՝ այցելութիւն առ ամենասուրբ Խորհուրդն Հաղորդութեան » ըսուածը, որ շատ օծութեամբ և իղձերով լեցուն է: Ի վերայ այսր ամենայնի, այս կրթութեան էական մասն է՝ կենդանի հաւատոյ ներգործութեամբ՝ Յիսուսի Քրիստոսի սեղանին վրայ իրական ներկայութիւնը մաքերնուս առջեւն բերելը. յետ այնորիկ մեզի և ուրիշներու համար այն շնորհքները խնդրելն՝ որոց որ մասնաւորապէս կարօտ ենք. և վերջապէս սիրով անոր հետ խօսակցելն՝ ինչպէս բարեկամ մը իւր բարեկամին հետ, որպէս մը իւր հօրը հետ, և Թողլով որ ըստ կարգի ինքն ալ խօսի մեր սրտին. և այն վայրկենին աղաչութեան համաձայն՝ հաւատոյ, վստահութեան, սիրոյ և երախտագիտութեան ներգործութիւնները ընելը:

Ո՛չ էր թէ բոլոր մեր արժանաւոր ընթերցողները՝ մեծ հաճոյութեամբ Յիսուսի Քրիստոսի 'ի սուրբ Հաղորդութեան այցելութիւն ընելու սկսին: Մենք կը համարձակինք սուրբ կանչելու այս ջերմեռանդութեան մէջ յարատեւ քահանան: Սակայն, որոշենք մենք ալ այսպիսի փրկարար կրթութիւն մ'ընելու, և մեզի պարտք սեպենք սնոտի զուարճութեանց համար վատնած այնչափ ժամանակներուն փոքր մասն ալ՝ մեր սեղաններուն առաւածային հանդարկելոյն նուիրել:

ԳԼՈՒԽ Է.

Հոգեւոր ընթերցումն — Այս սովորութեան մեծ օգուտները — Սուրբ Գիրքերուն վարմունքը — Գործնական կանոններ:

274. Ամենքս ալ կը ճանչնանք հոգեւոր ընթերցման մեծամեծ օգուտները: Գիտենք որ Աստուած հոգեւոց փրկութեան համար հազարաւոր անգամ այս միջոցը գործածեր է. և պարզ պատահմամբ առանց պատուղ մը քաղելու դիտման եղած ընթերցմունքը, շատ մը համբաւաւոր մեղաւորներու համար ճշմարիտ և զարմանալի դարձի սկիզբը եղաւ: Պատմութիւնը լեցուն է այսպիսի օրինակներով: Բայց նմանապէս յարատեւ և ընդհանուր փորձառութիւնն ալ կը ցուցընէ այս ընթերցման օգտակարութիւնը՝ Աստուծոյ նուիրուած հոգեւոյ մը անդեան համար, զանկից աւելի ևս Աստուծոյ ծառայութեանը կապելու, ամենաթեթև արատներէն մաքրելու, և անոր աստուածապաշտութեան եռանդը պահելու և ամրացնելու համար: Ահաւասիկ մէկ հատիկ պատճառը՝ որուն համար ամենքը՝ ինչուան նաև պարզ հաւատացեալներն ալ, սրտանց կ'ուզեն առաքինի ըլլալ և կատարելութեան հասնիլ. և ժամանակնին ալ այնպէս կը կարգաւորեն՝ որ ամէն օր քիչ մ'առեն հոգեւոր ընթերցման զոհեն: Ահաւասիկ մէկ հատիկ պատճառը, որուն համար ամէն կրօնական հաստատութեանց, բոլոր կղերանոցներու և համբաւաւոր վարժարաններու մէջ հոգեւոր ընթերցմունքը կանոններէն պատուիրուած է, և ի գործ կը դրուի:

Եւ որովհետև ասկից այսչափ փրկաւէտ կրթութիւն մըն է, և ըստ որում աշխարհքի մէջ այնչափ բարեպաշտ հաւատացեալներ ալ կանոնաւոր կերպով կ'ընեն միշտ աւելի ևս բարեպաշտ ըլլալու համար, մի թէ պատշաճ չէ՞ որ մենք քահանայքս ալ, որ սրբոյն Թովմայի ըսածին համաձայն՝ նոյն իսկ վանականներէն աւելի կա-

տարեթալ ըլլալու ենք, այս գործառոյ միջոցն ի գործ դնենք քահանայական պաշտօններէս պահանջուած կատարելութեան հասնելու համար:

275. Մենք այնչափ աւելի մեղադրելի կ'ըլլանք, եթէ ի գործ չը դնենք բոլոր հոգևոր կրթութեանց մէջ ամենէն գլխաւորը: Ընթերցուածք մ'աւելի ինչ պարզ և դիւրին բան կրնայ ըլլալ: Պատարագ տեսնելու համար տունէն դուրս ելլել պէտք կ'ըլլայ, աղօթք մ'ընելու համար չոգնելու ենք, խոստովանանք ըլլալու համար ամէն պատրաստութիւն մը հարկաւոր է: Բայց քիչ մ'ընթերցմունք ընելու համար, ոչ տունէն դուրս ելլել պէտք է, ոչ ծունկ չոգիլ, և ոչ ալ խղճի քննութիւն ընել: Ինչ ուրեմն. ձեռքերնիս կ'երկնցնենք գիրք մ'առնելու համար, կը կարդանք, և առատ շնորհքներ ընդունելու համար, կը կարդանք, և առատ շնորհքներ ընդունելու համար, կը կարդանք, և առատ շնորհքներ ընդուն

Իսկ « բարի » քահանան, չար և գաղջ քահանայից պէս՝ աստուածպաշտութեան գործքերու հակակրութիւն մը չունենալով, բոլորովին չի հրաժարիր հոգևոր ընթերցմունքէն. մանաւանդ թէ երբեմն շատ յօժարութեամբ ալ կ'ընէ, և աղէկ ըրած առէնն ալ իւր գոհունակութիւնը կը խոստովանի: Դժբաղդաբար յարատևութիւն չունի, այլ միայն յօժարութիւն և կամք ունեցած առէնը կ'ընէ, ասոնք փախածին պէս՝ զանց կ'ընէ. երբեմն այս գիրքը, երբեմն ալ ուրիշ մը կը կարդայ, օր մ'երկար երկար ընթերցմունք կ'ընէ, ուրիշ օր մըն ալ ոհաձուելիւն զգալուն համար՝ կարճառօտ կ'անցնի. սրտին մէջ եռանդ մը զգացած առէնը, ըստ պատշաճի կը պատրաստուի, բայց աշխոյժ չունեցած ժամանակ՝ առանց պատրաստութեան կ'ընէ, և հետևաբար ալ անպտուղ կ'ըլլայ: Թէ ասոր և թէ ուրիշ շատ բաներու մէջ՝ ճշմարիտ և հաստատուն աստուածպաշտութեան տեղ, ախորժակը, քիմքը և վայրկենական աղդեցութիւնը զինքը կը շարժեն և կը կառավարեն: Ուսկից յառաջ կու գայ իւր անհաստատութիւնը, և շատ քիչ պտուղներ կը շահի այնպիսի կրթութենէ մը՝ որ ընդհակառակն մեծամեծ օգուտներ բերելու էր իրեն:

278. Մնայն « սուրբ » քահանային համար են այս մեծամեծ օգուտները: Արդէն մենք չենք կրնար պատմել ամէն ընթերցմանց մէջ իւր ղգացած եռանդեան աճումը: Շատ անգամ աղօթք ընելէն աւելի՝ կարդալով մեծագոյն շարժում մը կը ղգայ: Երբ իւր խանդակաթ բարեպաշտութեամբ, սուրբ Օգոստինոսի նման ի խոր ամփոփուելով՝ գրերուն քօղին տակ զԱստուած կը փնտռէ, Աստուած ալ՝ որ չափազանց կը սիրէ զինքը փնտռողները սրտին երկարօրէն խօսակցիլ և հաղորդակցիլ, ամէն մէկ կարդացած բառով անոր սրտին կը խօսի, և երբեմն մինչև արցունք թափելու չափ ալ կը շարժէ: Ուրախութեան և երջանկութեան ծայրը հասած՝ այսչափ աղդեցութեամբ սիրտը շարժող գիրքը կը համբուրէ, և ընթերցման պտուղները նոր եռանդութեամբ ձեռնամուխ եղած պաշտօնին պարտուց կատարմամբ ցոյց կու տայ:

Չոս չափազանցութիւն մը չի կայ, հարկ եղած աւէն նոյն իսկ աշխարհիկ անձինք ալ կը վկայեն, որ հոս յիշուած քաղցր սրտի շարժումները՝ մեր գիւտերը չէն ղրբրնեները հոգևոր ընթերցման հրապուրելու համար: Օր մը տղայ առէնս, սենեակ մը մտայ, ուր երկու երիտասարդ նստեր կու լային: Առանցմէ մէկը ձեռքը գիրքը մ'ունէր, և հասկցայ մէկէն որ խեղճերուն աչքերը թրջողն այն գիրքն էր: Բայց ալ աւելին գիտնալու հետաքրքիր, մօտեցայ զայն ընդնելու համար. և տեսայ որ երեսցընէ հոգևոր գիրք մըն էր: Եթէ Աստուած աշխարհականաց հետ այսչափ խանդակաթ սիրով հաղորդակից կ'ըլլայ, հապա ո՞րչափ աւելի գերազանցաբար պիտոր չը հաղորդակցի քահանային հետ:

279. Բայց որպէս զի հոգևոր ընթերցմունքն ալ իրեն կատարեալ արդիւնքն ունենայ, աստուածպաշտութեան միւս աղէկ կատարուած գործքերուն պէս քանի մը թէոլոգեանց կարօտ է, զորոնք հիմայ պիտոր ցոյցընենք. թէև ուրիշ բան պիտոր չընենք՝ եթէ ոչ սուրբ քահանային հոգևոր ընթերցման ոճն և կանոնը հրատարակել:

Կատարելութեան մէջ յառաջ երթալու համար էական կէտ մըն է օգուտ քաղելու անկեղծ փափագ մ'ունենալը. եթէ այս փափագէն զուրկ ըլլանք, ընթերցմունքը երբեմն կրնայ յառաջ բերել զայն. բայց չատ անգամ ալ քիչ կամ ոչինչ կ'օգնէ, և զմեզ յառաջդիման վիճակնուս մէջ կը թողու: Ոչ ախորժակ պիտոր գտնենք, ոչ օծութիւն և ոչ ալ եռանդ, այլ գուցէ ընդհակառակն ձանձրութիւն և նեղութիւն ու պաղութիւն, և դրեթէ նոյն իսկ ընթերցման վրայ ալ տհաճութիւն. ուսկից պիտոր հետևի՝ որ երթալով կարճեցընենք, և յետոյ բոլորովին թողունք ալ:

Դրքին ընտրութիւնն ալ մեծ կարևորութիւն ունի: Այնպիսի գիրք մը կարդալ՝ որ սիրտ շարժելէն աւելի միտքը կրթէ, աւելի ուսման քան թէ աստուածպաշտութեան կրթութիւն մը կ'ըլլայ. հետաքրքրութիւննիս շարժող գրքերը սրտերուս վրնասով միայն հոգինեբս կը

պարարեն. Ճարտարախօսութեամբ գրուած գրքերը՝ ներմեռանգութենէն աւելի դեղեցիկ ոճին հաճոյութիւնը կը գրգռեն: Այո՛կ, բայց շատ մը պատմութեամբ լեցուն գրքեր կան, որոնք ընորհաց և փրկութեան ճշմարիտ պատուիրերու տեղ՝ միայն զուարճութիւն կը պատճառեն:

Ընդհանուր կանոն. այն գրքերը կարդանք, որոնք աւելի սրտերնիս կը շարժեն. այն չարժմամբ՝ որով սրտերուս մէջ Աստուծոյ մեծագոյն սէրը մը կը բորբոքի, որն որ աւելի ազդեցութեամբ կը հեռացընէ այն ամէն բանէն՝ որ Աստուծոյ վիշտ կը պատճառէ, որն որ աւելի զմեզ կը հրաւիրէ ու կը քաշէ առաքինութեան հաստատութիւնը պահպանութեանը: Ահաւասիկ հոգևոր ընթերցմունքներուս յարմար գիրքը, ինչ կ'ուզէ ըլլայ ոճն ալ; տիտղոսն ալ:

Արդէն հարկ չի կայ ըսելու որ սուրբ Գիրքը առաջին տեղին ունի: Կրնայնայն սովորութիւնը ձեռք առնենք, եթէ զանց ըրած ենք, ամէն օր մէկ գլուխ Նոր կտակարանէն և մէկ գլուխ մ'ալ Հին կտակարանէն ջերմեռանդութեամբ կարդալ, ինչպէս որ կ'ընեն սուրբ քահանայք, որոց լիուլի հետևելու համար ծանր չի գայ քանի մը տուն ալ « Յիսուսի Քրիստոսի նմանութեան » գրքէն կարդալը: Ասոնցմէ զատ ուրիչ սրտաշարժ գրքեր ալ պակաս չեն, որոց ընտրութիւնը մեր ընդհանուր աեսութենէն վերջը ընթերցողաց կամքին կը թողունք:

280. Սակայն քիչ մը մեծաւոր պատրաստութիւնն ալ անհնարինելի է. առանց որոյ, գոյցէ միայն պատահմամբ հոգևոր ընթերցումը բարի պտուղ մը տալու կարող ըլլայ: Մենք ամենայն զգրութեամբ կը հաւաստենք որ մեծ տարբերութիւն մը կայ « յանկարծադէպ » և այն հոգևոր ընթերցման մէջ, որ կ'ըլլայ Աստուծոյ ներկայութեան առջին քանի մը վայրկեան մտաց ամփոփմամբ, անկից հարկաւոր ընորհքները խնդրելով և ընդունելու պատրաստութեամբ:

Հոգևոր ընթերցմունքին օգուտ քաղելու համար հարկաւոր եղած թէորութեանց մէկին ալ ծանր ծանր և կարգացածը աղէկ մը հշտելով կարդալն է:

Ձեռընթացի նման ընթերցմունքը բոլորովին անօգուտ է: Բառերը չէ թէ ալիքներու նման, այլ ցօղի պէս կաթիլ կաթիլ պէտք է մտնեն սրտերուս մէջ՝ զայն սրբելու համար: Շտապով կարդալը քիչ եռանդեան, ոչինչ աստուածպաշտութեան, և կամ գոնէ կարգացածէն օգուտ քաղելու քիչ կամք ունենալու նշան մըն է: Երբոր կարդալով սրտերնիս կը շարժի, յօժար սրտով կանգ կ'առնենք սրտերնիս շարժող բանին համ առնելու. բայց երբ չունինք այս շարժումը, շտապով շատ մը երեսներ աչքէ կ'անցընենք՝ ականջնիս զուարճացընելու և ճանճրութենիս փախցընելու յարմար նոր բան մը գտնելու համար:

Գերազանց և ամէն հոգևոր վարդապետներէն ապրեցրուած կանոն մըն է, վայրկեան մը ընթերցումը ընդհատել՝ երբոր սաստիկ յուզմանց կ'ենթարկի սրտերնիս: Մանաւանդ թէ սպասելու չենք որ նախ ընորհքը արձակէ իւր հարուածը, այլ մենք կանխենք և գրգռենք, երբեմն երբեմն հանգիստ առնելով գրքին մէջ յայտնուած մեծ ճշմարտութիւն մը՝ հաւատոյ հոգւով ուշադրութեամբ խորհրդածելու համար: Եւ յիրաւի այս խորհրդածութիւնները աւելի յարմար բան մը չի կայ որ կտուի և յաղթէ ունակութեան:

Վերջապէս ընթերցմունքը չի լմնցուցած, ըստ պահանջման հարկին գործնական առաջադրութիւններ ընելու ենք, զորոնք յետոյ ի գործ ալ դնել պէտք է, ինչպէս որ կ'ընէր սուրբն Եփրեմ, որ կարգացածը գործքով կ'արգիւնաւորէր. « Արդեամբք զընթերցեալն նախըրէր »:

281. Կարելի բան է որ ամէն օր վերոյիշեալ կանոնաց համաձայն եղած հոգևոր ընթերցմունք մը՝ բարի պտուղներով արգասաւոր չըլլայ: Մանաւանդ եթէ աստուածպաշտութեան միւս գործքերն ալ համընթաց ընթալով, և մենք ալ մեր կողմանէ հաւատարմաբար և աղէկ կատարելով քիչ ժամանակի մէջ սուրբ քահանայ ընթանք: Ի՜նչ ցնծութիւն, ինչ երջանկութիւն եթէ այն աստիճան հասնինք: Ինչպիսի՜ ամենաընտիր ընորհքներով

պիտոր չի պահուին մեր աշխատութիւնները, և բնա-
կան հետեւմամբ որչափ փրկութեան պատրաստներ պիտոր
չի գործենք եկեղեցւոյ մէջ:

Ուստի, քաջութեամբ ձեռք զարնենք այսպիսի
ամենաշահաւէտ կրթութեան մը, ամենքնիս մեղմ ը-
սուած սեպենք սուրբ Առաքելոյն խօսքերը. « Մխա դիր
ընթերցուածոց »[1]: Հետու կենանք մտայ ցնորամ
պատճառող մտոհ ընթերցուածներէ, և չինութիւն բե-
րող չերմեռանդ ընթերցուածներու հաւէտ ըլլանք: Մեկդի
ձգենք Աստուածոյ ծառայութեանը մէջ սրտերնիս պա-
ղեցնող ընթերցմունքները, և այնպիսիներուն հետևինք՝
որ սրտերնիս առ այն բորբոքեն: Աստուածային բաներէ
տգիտութիւն բերող ընթերցուածներն առենք, և այնպի-
սիները սիրենք՝ որ միշտ և աւելի ևս զԱստուած սիրելը
կը սորվեցնեն: Նախանձնիս և աշխոյժնիս տկարացը-
նող և մարող ընթերցմունքներէ զգուշենք, և այնպիսի-
ները վերառնենք՝ որ աւելի ևս զայն կը զարգացընեն և կը
բորբոքեն, և չմոռնանք յիշելու միշտ սրբոյն Աթանասի
այն վճիռը՝ որով կ'ուզենք այս գլուխը վերջացընել. « Ա-
ռանց վուռթոյ ընթերցման, ոչ ըզք մոռդիւր առ Աս-
տուած համարեսցիս »:

ԳԼՈՒԽ Ը.

**Ջերմեռանդութիւն առ ամենասուրբ Կոյսն — Այս
ջերմեռանդութեան որպիսութիւնը — վարդապան —
Յայսմ մասին քահանայից սովորական վարմունքը —
Ընդհանուր ձայնաւոր աղօթք — Գործնական կանոններ:**

282. Նամակօրէն «վարդապան» ըսուած աղօթքին առ-
թիւը՝ բարեբաղդ կը սեպենք զմեզ մեծարանքներուս
հարկը վճարելու ամենասուրբ Կուսին և արժանաւոր
եղբայրակիցներուս ապրսպրելու, որ ամէն օր մատնա-
ւոր ջերմեռանդութեամբ մը զանիկայ պատուեն:

Ամենասուրբ Կուսին ջերմեռանդութիւնը ներկայ

1 Ս. Եփր. Դ. 15:

առենուան պէս երբեք ընդհանուր եղած չէր. նախանձ
մը, փոյթ մը, եռանդ մը, երախտագիտութեան և սիրոյ
հարիւրաւորութիւն մը կը զգացուի առ այս կաթոդին
Մայրը, այնպէս որ անկարելի կ'ըլլայ սաստկապէս և
քաղցրութեամբ 'ի գուէթ չի շարժիլ: Գիւղ մը չի կայ,
ուր այս գորովալիր Մօրը պատուոյն աղուոր զարդա-
րուած և յաճախութեամբ այցելած սեղան մը չի գտնուի.
տուն մը չի կայ, ուր անոր մէկ սրտաչարժ պատկերը չի
տեսնուի. քաղաքներու ու աւաններու մէջ ժողովրդա-
պետութիւն մը չի կայ, ուր սովորաբար անոր նուի-
րուած ամիսը՝ հանդիսիւ և չերմեռանդութեամբ չի կա-
տարուի:

Այո, գուցէ իր եկեղեցիները երբեք այսչափ ուխ-
տաւորներու այցելութիւնը չունեցան: Նոյն իսկ մեղա-
ւորները, եթէ ոչ ամենքը՝ գոնէ ըստ մասին ընդհանուր
յուզման տեղի կու տան. և եթէ դեռ ևս գործնական և
արդիւնաւոր չերմեռանդութեամբ զսուրբ Կոյսը չեն
պատուեր, այսու ամենայնիւ չերմեռանդներուն աղօթք-
ներուն կը յանձնուին, և շատ անգամ, գուցէ առանց
մտագրութեան. մանաւանդ դժբաղդութեան մը առեն՝
յօժար սրտով անոր սուրբ Անունը իբրեւ օգնութեան
կը կանչեն:

Անթիւ են անոր սուրբ Անուան պաշտպանութեան
տակը հաստատուած եղբայրութիւններ, միաբանու-
թիւններ, ընկերութիւններ և ամէն տեսակ չերմեռան-
դութիւններ:

Այս այսպէս ըլլալով, ինչպէս որ իրաք է, հարիւր
չէ արդեօք որ մենք քահանայքս ալ ուրիշներու պէս ը-
նենք: Ի՞նչ ըսի, ուրիշներու պէս ընե՞ք: Ո՛չ, պէտք էր
ըսէի զուրիշները այս չերմեռանդութեան ուղղել և յոր-
դորել, չուշղղները յօժարեցընել, և բարիները եռան-
դեան մէջ պահել: Ո՛րչափ տգեղ կ'ըլլար, եթէ այսպիսի
չերմեռանդութեան մէջ ոչխարները հովիւներէն յառաջ
երթային: Եւ որչափ չարագոյն պիտոր ըլլար, եթէ հո-
վիւները անոնց հետևելու սախտուած՝ դժկամակութիւն
նին յայտնէին, և կամ գոնէ շատ հետու մնացած ըլլա-

յին: Բարեբաղդաբար այս գայթակղութիւնները երբեք չեն տեւմուիր, և կամ շատ քիչ անգամ:

Ամէն բան աղէկ կարգի է, ամէն կողմանէ ոչնարնեը երկնային Հովուհօրն ոտքերը կը գիտեն, բայց իրենց հովիւներուն առաջնորդութեամբ: Ճաշակերութիւնք ուրեմն, կարգէդ եղբայրակիցք, սիրա առնենք, խանդակաթ սիրով սիրենք և սիրել տանք զամենասուրբ Կոյսն Մարիամ. և սիտոր տեսնենք թէ ուրչափ և որպիսի շնորհաց փոխարինութեամբ սիտոր վարձատրէ իր փառքը և ջերմեռանդութիւնը տարածելու համար ունեցած ե. ռանդագին նախանձնիս:

283. Ամէնայնիւ արժանաւոր եղբայրակիցներս ներա ներեն մեզի այս ջերմեռանդութեան նկատմամբ իրենց խորհուրդ մը տալու, զոր թէև ունինք սրտերուս մէջ, բայց գուցէ ըստ պատշաճի տիրած չըլլայ: Ասիկայ կ'ըսենք ոչ միայն մեր հոգւոյն սրբութեանը համար, այլ նաև այն բարի օրինակին նկատմամբ՝ զոր պէտք է տանք բոլոր աշխարհքի, և մեր խնամոց յանձնուած հոգւոց փրկութեան համար:

Մեր առ ամենասուրբ Կոյսն ունեցած ջերմեռանդութիւնը ոչ սովորական ըլլալու է, և ոչ ալ հասարակ: Եթէ աստիճան աւելի չէ, հաւատացելոց վրայ ամենևին տպաւորութիւն մը չընէր, որոց ջերմեռանդութիւնը շատ անգամ մերինէն աւելի սրտանց և բացայայտ է: Սակայն իրաւցընէ մենք պարտաւոր ենք պատուելու զամենասուրբ Կոյսը, ոչ միայն սրտերնուս զգացմամբ և մանաւանդ բարեպաշտութիւններով, այլ ամէն առթի մէջ թէ խօսքով և թէ արդեամբ պէտք է ցոյց տանք երկնից Թագուհին պատուելու նախանձնիս: Եռանդնիս պէտք է որ ամենէն աւելի գերազանց ըլլայ, և յայտ մասին յատուկ համբաւ մը ստանալու ենք, այնպէս որ Ժողովուրդը ձիրքերուս և գուցէ պակասութիւններուս վրայ խօսած ատենը, սոսկալի խոստովանելու ամենասուրբ Կուսին խանդակաթ ջերմեռանդութիւն ունենալը նկատ, ամենամանուկ պաշտօնով զանիկայ պատուելնիս, և թէ յայտ մասին ոչ միայն անբծագտանելի ենք, այլ նաև ամենայն գովասանաց արժանի:

Մեզի պարտք սեպեցինք այս խորհուրդը տալ քահանայից ոմանց եռանդը գրգռելու համար. որոնք առատակոյս շատ կը սիրեն զամենասուրբ Կոյսը, անոր նուիրուած ընկերութեան մը գլուխ ալ են, ամէն օր անոր պատուոյն համար աղօթքներ կ'ընեն. բայց այսու ամենայնիւ անոր համար ոչ արտաքոյ կարգի բան մ'ըլած են, ոչ ժողովրդեան վրայ աղդելիք գործք մը, և ոչ ալ Աստուածոյ Մօրը արժանաւոր ըսուելու չափ ջերմեռանդութիւն մը:

284. Բայց գուցէ եղբայրակիցներէս մէկը ըսէ. Ի՞նչ կ'ուզէք ուրեմն որ ընեմ ամենասուրբ Կուսին փառացը ամենայատուկ նախանձախնդիր քահանայի համբաւը ստանալու համար: Շատ գիւրին՝ թէ որ քիչ մը մտածենք, և եթէ իրօք սրտերուս մէջ առ աստուածային Մայրը կաթոգին սէր մ'ունինք:

Զոր օրինակ, արդեօք խօսակցութեանց մէջ քիչ մ'աւելի ստէպ և եռանդուն ջերմեռանդութեան նշաններով չէ՞ք կրնար խօսիլ անոր վրայ: Չէ՞ք կրնար ստիպել վերաւորները զանիկայ իրենց օգնութեան կանչելու և անոր պաշտպանութեան յանձնուելու, ապըսպրել հաւատացելոց օրէ օր ջերմեռանդութիւնին աւելցընելու, խորհուրդ տալ մերերուն իրենց մատղաշ տղաքը անոր նուիրելու, տղայքը յորդորելու ամէն օր անոր պատուոյն աղօթք մ'ընելու: Չէ՞ք կրնար պահարաններուդ մէջ անոր փոքր պատկերները և միաձնները կրել, և յարմար ժամանակին ասոր անոր ցրուել:

Չէ՞ք կրնար Սրբութիւն սրբոցին այցելութենէն եռքը այցելութիւն մըն ալ ամենասուրբ Կուսին ընել, կրցածնուազ չափ անոր խորանը զարդարել, հարկ եղած առեղը հաւատացելոց բարեպաշտութեանն ալ դիմելով: Համոզել ժողովրդապետութեան մէջ գտնուած հարուստ տիկինները անոր մատուռը աւելի վայելուչ կերպով չինելու կամ զարդարելու. ծանրակեզ ղեկղովութիւն մ'ընելով՝ այնպիսի սրտաբուխ պատկեր կամ արձան մը ձեռք բերելու, որ եկեղեցին ներս մտնողին աչքերուն զարնելէն զատ, նայողին սրտին դպչի, գրաւէ և շահի:

Չէք կրնար ամպիոնէն ալ առէք և չառ առէք խօսիլ, մանաւանդ թէ միշտ և այնպէս եռանդուն խօսքերով՝ որ ամէնքն ալ ապշին ջերմեռանդութիւններուդ աստիճութեանը վրայ: Սուրբերուն նմանինք. զոր օրինակ, սուրբն Ալփոնսոս Լիգուորին առաքդութիւն դրած էր երբեք քարոզ չը տալու առանց ամենասուրբ Կուսին վրայ երկու խօսք գովեստ մ'ընելու: Երբ եկեղեցին անոր մէկ ծանախմբութիւնը կը կատարէ, աւելր պատշաճէին դուրս քարոզ չի տանք, (ինչպէս որ երբեմն հանդիպիր է Աստուածածնայ Ծննդեան օրը՝ մեղաւորին մահուան վրայ, և Վերափոխման օրն ալ՝ դժոխքին վրայ): Առէք առէք յորդորենք, և համոզենք ընտանիքները պատուելու զամենասուրբ Կոյսը: Անոր ծանախմբութեանց նախընթաց իննօրեայ ջերմեռանդութիւնները կատարենք, ամէն աւուր զուրցուելիք աղօթքները ծանուցանենք, ըսելով որ մենք իսկ Ձդիւ պիտոր կատարենք:

Խոստովանարանին մէջ խօսինք: Ո՛հ, այո, հոն ալ խօսինք ամենասուրբ Կուսին վրայ. խօսինք մեղաւորոց, որպէս զի փորձութեանց առեն իրենց օգնութեան կանչեն. խօսինք արդարներուն, որպէս զի անոր պաշտպանութիւնը խնդրեն թէ՛ մեղաւորաց և թէ իրենց համար. խօսինք անխոնջ բոլոր խոստովանողաց, որպէս զի այս ջերմեռանդութիւնը մշակեն և տարածեն: Խոստովանութիւն մը չանցնի՝ որուն մէջ ամենասուրբ Կուսին վրայ խօսք մը չի զուրցենք:

Ահաւասիկ այս բարեգութիւն Մայրիկը պատուելու, և պատուել տալու կերպերը. ահաւասիկ թէ ինչ կերպով կրնանք ժողովրդեան առջին մեր ջերմեռանդութիւնը հաւաստել: Ահաւասիկ ինչպէս կրնանք ձեռք բերել ամենասուրբ Կուսին փառացը մասնաւոր նախանձախնդիր ըլլալնուս հնաչխարհիկ համբաւը:

Տէր Աստուած, որ այս մեր խորհուրդները պարապի չերթային, անտարակոյս փրկութեան ամենաստոյգ հետևութիւն:

285. Ամենասուրբ Կուսին պատուոյն համար եկեղեցւոյ հաստատած աղօթքներուն մէջ վարդապետին պէս գործածուածը չի կայ. սրբազան Քահանայապետներէն շատ մը ներողութիւններով ճոխացած, ամէն հասարակութեանց և կղերանոցներու իրրև կանոն մը պատուիրուած, աստուածապաշտ անձինքներէ անընդհատ ի գործ դրուած, երևելապէս շատ մը մանաւանդ ընորհքներով վարձատրուած, զոր կ'ընդունին Աստուծմէ հաւատարմաբար գործածողները: Հապա մենք ինչպէս մեր կենաց կանոնին մասնաւոր յօդուածը պիտոր չընենք զայն:

Իրաւցընէ ասանկ է: Ամէն քահանայ ամէն օր այս գերազանց աղօթքը կ'ընէ՞: Կ'ուզենք հաստատել, բայց դժբաղդաբար չենք կրնար. վասն զի փորձառութիւնը հակառակը ցոյց կու տայ: Այս սուրբ կրթութիւնը՝ շատ ծանր և տաղտկալի է «չար և գաղջ» քահանայից, բաւական առեն է որ և ոչ կը յիշեն: «Բարի» քահանան իրաւցընէ ասոնց ծուլութեանը մասնակից չէ, բայց ամէն օր ալ չի զուրցեր վարդապետը, և ըսած առեն ալ այնչափ շուտով և ցնորած մտքով կ'ըսէ՝ որ շատ քիչ օգուտ կը տեսնէ:

Միշտ «սուրբը» քահանային քով փնտռելու է ամէն գեղեցիկ ջերմեռանդութեան, եռանդուն աստուածպաշտութեան և յարատև կանոնաւորութեան կատարելագործ օրինակը: Վարդապետը անոր օրական գբաղմանց կարգին մէջ է, և առանց ուխտիւ պարտաւորուած ըլլալու, (որուն և ոչ Սալեզեան սուրբը Փրանկիսկոս կը հաձէր), միշտ ժամանակ կը գտնէ ջերմեռանդաբար ըսելու: Եթէ չը կարենայ ամենասուրբ Կուսին խորանին կամ արձանին առջև զուրցել, որոնցմով որ իր սենեակը զարդարուած է, հիւանդի մը գացած՝ կամ քիչ մը չոնչ առնելու համար՝ զբօսանքի ելած առեն կը զուրցէ: Եւ ոչ միայն յարատև է այս ջերմեռանդութեան մէջ, այլ սովորական եռանդեամբ ալ կ'ըսէ: Հոգւով ծունկ չոքած այն փառաւոր գահին առջև, որուն վրայ բազմած է երկինքը ամենասուրբ Կոյսը, կը միանայ իրրև իրենց թա-

դուհի պատուող հրեշտակաց և սրբոց դասերուն հետ, և այսպիսի չքեղ ընկերութեամբ իւր գովեստները անոր կ'ընծայէ: Գիտնալով այս աղօթքին տրուած այնչափ ներողութիւնները, և գիտնալով ալ որ այն ներողութիւնները շահելու համար « հարկաւորապէս » մտածելու է « ուրախութեան, չարչարանաց և վառաւորութեան » տաւն և հինգ խորհուրդները, յօժար սրտով կը մտածէ, և այսպէս արդէօք կ'ըլլայ մտաց ցնորման, որ մի և նոյն աղօթքին կրկնութեան սովորութիւնը բնական նապէս կը բերէ: Երջանիկ և արժանաւոր քահանայ· Աստուած օրհնէ քու բարի օրինակ եղող եռանդդ: Շատ մը նմանողներ ունենայիր:

286. Հոս յարմար կը տեսնենք քանի մը խօսք ալ ընդհանրապէս ձայնաւոր աղօթքին վրայ զուրցելու, որ աղէկ է և շատ աղէկ· ըստ որում նոյն ինքն Աստուած հատ մը չընելու արժանի գտաւեցաւ, և մեզի ալ զուրցելու սովրեցուց այս խօսքերով· « Եւ արդ այսպէս կացէք դուք յաղօթս· Հայր մեր որ յերկինս »[1], և այլն: Բայց պէտք է խոստովանինք որ մանաւորապէս ձայնաւոր աղօթքին մէջ վախնալու և շատ մը վախնալու է սովորութենէն՝ կամ ունայնութենէն: Ասոնք աղօթքները բերնուց գիտնալով և ամէն օր մի և նոյն բաները կրկնելով, ուշադրութիւննիս կը նուազի, սրտերնիս կը թուլնայ և գրեթէ շարունակ ցնորմունքներ անոր պատուղը կը դողնան: Ասոնք անպատեհութիւնը դարմանելու համար, հոս քանի մը կանոններ ապրսպրենք մեր արժանաւոր եղբայրակցաց:

Ա· Շատ ձայնաւոր աղօթքներու պարագ չ'առնենք վրանիս: Գոհ ըլլանք ամէն թէմի մէջ գործածուած առաւօտեան և երեկոյեան աղօթքներով, ինչպէս նաև եղբայր գրուած ընկերութեանց ներողութիւնները շահելու համար ապրսպրուած աղօթքներով: Բայց միշտ ի բաց առեալ այն մանաւոր պարագաները, որ կամ հարկադրեն և կամ պատշաճ գտաւեն այս կամ այն աղօթքն ընելու:

1 Մատթ. Զ· 9:

Բ· Ձայնաւոր աղօթքնիս դէռ չը սկսած՝ քիչ մը պատրաստութիւն տեսնենք· ասիկայ՝ աղէկ միտ դնենք, ձայնաւոր աղօթքներուն համար կրկնապատիկ հարկաւոր է, ասոնց մէջ ցնորմանց աւելի յաճախ ըլլալուն համար: Ո՛րչափ պարապի դացած ձայնաւոր աղօթքներ կ'ըլլան պատրաստութեան պակասութեան համար:

Գ· Հաստատ և խիստ կանոն մը դնենք շատ ծանր զուրցելու· աղէկ և ծանր զուրցուած « Հայր մեր, Ողջոյն » մը՝ անսահմանաբար շատ աւելի կ'արժէն, քան թէ քառորդուան մը ծամծմած ու դուրս թափուած աղօթքները: Սրտերնիս ինչ կը ըզգայ և ինչ կ'օգտի ձեռընթաց պակասնքներով, և ո՛վ գիտէ ո՛ր տեղուանքը չըջագայող մտքով զուրցուած աղօթքներէն: Կրնա՞նք աղօթքի անունը տալ ասանկներուն: Ասոնք աղօթքներն ընելով՝ անոնց բացայայտած սուրբ խմաստներուն ալ միտք կը դնե՞նք: Կը մտածե՞նք երբեք որ Աստուած մըն է՝ որուն կ'ուղղենք այս աղօթքները, և որոնցմով վշնքը պատուել կը կարծենք: Եթէ մեկը յանկարծ աղօթքնիս ընդհատելով հարցընելու ըլլար, թէ այս վայրկենիս մէջ Աստուածմէ ինչ կը խնդրենք, խակոյն և առանց մտածելու կրնայինք պատասխան տալ: Շակենք, չակենք այս պակասութիւննիս, և հաստատ որոշենք ձայնաւոր աղօթքներուս բառերը ծանր ծանր և հանգարտութեամբ արտաբերել, բերանով զուրցածնիս սրտանց ախորժելով, և ջերմեռանդութեան հաճի առնելու համար ժամանակ տալով:

Դ· Մանաւանդ ծանր և յստակ զուրցելու՝ չափէն աւելի խղճահար ըլլանք թէ տան մէջ և թէ եկեղեցին հատարակութեամբ աղօթք ըրած առենիս: Երբոր մէյմը շտապով զուրցելու կը վարժուի, այնուհետև անկարելի կ'ըլլայ ուրիշ կերպ աղօթելը: Որով չար օրինակ ալ կը տրուի նոյն իսկ հաւատացելոց ժողովքներուն, որոնք երբեմն ներկայութեան առջին այսպէս շտապով աղօթք ընելնիս խմանալով՝ պիտոր ըսեն, թէ հապա միևնակ գտնուած առենը ինչպէս կ'ընե՞ք աղօթքը: Գանե՛ք քանի անգամ հանգիստը ենք լեզուներնը թռած բարի քահա-

նանեբուս ալ, և քանի քանի անգամ ալ այսպիսի ոգեղ ունակութեան համար այլոց հշտամբանքը լսեր ենք։

Մենք պէտք է գիտնանք, որ թէ եկեղեցւոյ և թէ տան մէջ հասարակութեամբ աղօթք ըրած առեններս, մեզի լսողներուն մէջ հարիւր հատերը կը գտնուին՝ որ իրենց աղօթքը ծանր և յստակ կը հնչեն. և այնպիսինեբը շատ քիչ կը շինուին քահանային այն կերպ արտաբերելը լսելով, որուն իրենք մեզք պիտոր սեպեն հետևելու։ Իսկ մեզի նման շտապով զուրցողներուն ինչպէս կրնանք համարձակիլ կամ յանդիմանելու, և կամ ուղղելու խոստովանութեան մէջ ամբաստանուած առեններն, եթէ մենք իսկ իրենց չար օրինակ եղանք։

Ե. Վերջապէս ամենամեծ արթնութեամբ ներքինները և արտաքիններուս վրայ ալ հսկենք. վրանիս եկած փորձութիւններէ աղատելու համար՝ վայրկեան մ՚ընդհատենք աղօթքնիս՝ սրտերնիս առ Աստուած բարձրացնելու համար, մտհացուցում մը յանձն առնենք, կամ դռնի կատարեալ պարկեշտ և յարգանօք լի վարմունք մ՚ունենանք։ Երբեմն կ՚օգնէ նաև աղօթագիրքը ձեռքերնիս առնուլ, և փոխանակ բերնուց զուրցելու, աղօթագրքին վրան կարդալ։ Այսկայ աղուոր արդեամբք լեցուն փորձառութիւն մըն է. վասն զի կարդալով՝ չատ աւելի եռանդեամբ և ուշադրութեամբ կ՚արտաբերուին բառերը, քան թէ գրեթէ շարունակ ցնորմամբ թոթոված առեններս. տպուած խօսքերուն տեսքը այնպիսի ձիրք մ՚ունի՝ որ այն բառերուն խմաստին յիշատակը կը նորոգէ մտքերուս մէջ. մինչդեռ բերնուց զուրցուած առենը՝ մտքերնիս արտաքին բանէ մը խափանուած չըլլալով, ուղածին պէս առդին անդին կը պտըտի։

Աւտնք են ահա այն կանոնները՝ զոր հարկ սեպեցինք արժանաւոր եղբայրակիցներուս մտքերը ձգելու, ամեն օր ըրած և միշտ ալ ուղածներուն պէս օգտակար չեղած ձայնաւոր աղօթքներէն քաղած պտուղներուն վրայ ապահով ըլլալու նպատակաւ։ Աղէ՛, ուրիշներուն շատ աղեկ կերպով սորվեցուցած աղօթքին կարևոր կէտը՝ մեր անձնական օգտին ալ ծառայեցընենք։ Ձստուած փա-

ռաքանենք այս սուրբ կրթութեամբ, և երբեք չի պատահի, այո՛, երբեք չի պատահի, որ անով զԱստուած վշտացընենք, որով պէտք էինք ընդհակառակն անոր բարկութիւնը լկեցընել և շնորհքներն ընդունել։ Այո՛, այնպէս աղօթք ընենք՝ որ երբեք չի ամխալունք մեզի հասմար ըսելու՝ սուրբ Օգոստինոսին խոնարհաբար իր անձին համար ըսածը. — Ելլո՛ւկ ինձ, աւելի մեղաւոր կ՚ըլլամ նոյն այն կրթութեամբ՝ որով աւելի սուրբ ըլլալու էի։ Ո՛հ, ով կրնայ գլուխ Աստուծոյ առջին արդարացընել, եթէ նոյն իսկ իմ աղօթքներս ինձի դէմ դատախազ կը դառնուին։ —

ԳԼՈՒԽ Թ.

Խոստովանութիւն — Գործնական կանոններ եւ ազդարարութիւններ — Խոստովանահօր ընտրութիւն — Ստէպ խոստովանանք — Պնդութիւն — Ջղզումն — Խոստովանութիւն — Հատուցում — Մեր խոստովանութեանց պտուղը։

287. Նեղկայ գլխոյս սիտղոսին յայտնած նիւթը շատ փափուկ է, և գրեթէ դողալով ձեռք կը զարնենք, թէև կարելի եղածին չափ կը ջանանք նուազ դժուարին ընելու։ Բայց ասով ալ այնչափ սիտոր չի համարձակինք արժանաւոր եղբարցս ընկերակից ըլլալու մինչև ապաշխարութեան սուրբ առենը, ուր պարզ հաւատացելոց պէս կ՚երթան խոստովանահօր ոտքերուն առջին իրենց մեղքերը թափելու. և մենք յարգելով անոնց խղճմտանաց սրբարանը՝ մանրամասնաբար պիտոր չի քննենք թէ արդեօք ինչ են անոնց խոստովանութեան սուրբ վորական նիւթերը։ Ո՛չ, այլ միայն այսպիսի կարևոր նիւթի մը վրայ խմաստուն խորհուրդ մը տալով գոհ կ՚ըլլանք։

Ապաշխարութեան խորհուրդը աստուածային ողորմութեան աքանչելեաց աքանչելիքն է, և քահանայք անոր պաշտօնեայները ըլլալով ալ՝ իրաւունք ունին ուրիշ-

ներսն պէս անկից յառաջ եկած հոգևոր բարեաց մաս-
նակից ըլլալու, եթէ ուրիշներուն պէս պատշաճ տրա-
մադրութեամբ մերձենան: Այլ, տար Աստուած որ այս
վերկարաբ աւազանին մէջ գանելինք ուղիղ ճամբան՝ եթէ
մոլորած ենք, և չնորհք ու նոր ուժ ստանայինք՝ եթէ
ուրիշ բանի կարօտ չենք:

288. « Խոստովանահօր ընտրութիւն »: Նախ և յա-
ռաջ խոստովանահօր ընտրութեան վրայ խօսինք: Անհնար
ալ կը ձանձնանք այսպիսի ընտրութեան մը վերջին աս-
տիճանի կարևորութիւնը, բայց գուցե աղէկ կը հասկը-
նանք զայն միայն աշխարհականաց նկատմամբ, և ոչ թէ
մեզի համար՝ որ մեծ սխալ մըն է:

Մինչ էլ, բայց շատ անգամ խոստովանահօր բարե-
պաշտութենէն՝ խոստովանորդ-ն ալ կը հասկըցուի:
Ուստի, եթէ չենք կրնար « սուրբ » քահանայի մը յանձ-
նուիլ, որ երաւցընէ հաղորդութեան բան մըն է, քանանք
գոնէ « բարի » խոստովանահայր մը գտնելու:

Այսպիսի քահանայի մը խօսակցութիւնը, անոր
առաքինութեանց օրինակը, ջերմ և եռանդուն յորդոր-
նէրը և ամեն բան՝ շատ մեծ ազդեցութիւն կ'ընեն խոստո-
վանորդ-ն սրտին վրայ, և անոր ալ կը հաղորդուին:
Սուրբերը ուրիշ մարդկանց պէս չեն խօսիր, անոնց խօս-
քերը բորբոքուած սրտերէ դուրս կ'ելլեն և կայծին նման
սառցեայները կը հալեցընեն:

Սակայն այսու ամենայնիւ կրնա՞յ ըսուիլ որ ամեն
սուրբ քահանայ կարող ըլլայ ամեն քահանայի համար
ալ բարի խոստովանահայր մ'ըլլալ: Ո՛չ. կան սուրբեր որ
շատ քաղցրաբարոյ և ներողամիտ են: Ասոնց համար
այնչափ բարեբարոյ, որչափ որ խիստ են իրենց համար,
(որ ընդհանրապէս խօսելով՝ շատ դեղեցիկ տրամադրու-
թիւն մըն է) · չափազանց բարութեամբ կը հանդուրժեն՝
ինչ որ երբեք հանդուրժելու չէին, այլ եղբայրսիրական
հաստատութեամբ զսպելու և ուղղելու էին: Այսպիսի
խոստովանահայր՝ անխարաբար ամենուն յարմար չէն:

Եթէ տեսնելու ըլլանք, որ խոստովանահայրնիս
թեպետև սուրբ՝ խղճմտանքներէն աւելի ներողամիտ է,

եթէ դիւրութեամբ կը թողու խղճերուս չի թողածը,
եթէ « ամենևին խղճահար չըլլալով » խոստովանութիւն-
ներուս նկատմամբ անհանգստութիւն և տագնապ մը կը
զգանք. եթէ կասկած մը հոս գայ մեզի, որ կամ տիւտու-
թեննէ և կամ չափազանց բարութենէն շարժած կը գտնե
խղճերուս վիճակը, ղգուշանանք. վասն զի այս տեսակ
խոստովանահայրն ալ մեզի յարմար չէ: Ո՞վ գիտէ որ
անոր սրբութեան համբաւը յայտող համարում մը չաղդե
վարմունքներուս վրայ և խղճերուս խայթերը արհա-
մարհելու պատճառ չըլլայ: Սուրբ ըլլալով ալ կրնայ խա-
բուիլ. բայց ասոնք զարտուղութիւններ են, ընդհանուր
սկզբունքը՝ որուն պէտք է հետևինք, է « սուրբ և գի-
տուն » խոստովանահայր մը ընտրելն:

Որչափ նուազ սուրբ ըլլանք, այնչափ աւելի սուրբ
խոստովանահօր կարօտութիւն ունինք, որպէս զի զմեզ
սրբութեան ուղղէ: Ի՞նչ պիտոր ըլլար, ո՛վ Աստուած
իմ, եթէ չար քահանան իրեն նման չար մը խոստովա-
նահայր ընտրէր. ի՞նչ կը դառնար՝ եթէ գաղջ ու թոյլ
քահանան՝ իրեն պէս հեղգասիրտ քահանայի մը խոս-
տովանէր: Ի՞նչ եռանդ կրնային ունենալ այսպիսի խոս-
տովանահարք կատարելագործելու իրենց խոստովանոր-
դներէն, յորս իրենք զիրենք պիտոր տեսնէին:

Ընդհանուր կանոն: Որչափ որ կրնանք՝ մեզմէ աւե-
լի սուրբ քահանայ մը մեզի խոստովանահայր ընտրենք.
ապա թէ ոչ շատ վախնալու է որ խոստովանահայրը չը
համարձակի յանդիմանելու խոստովանորդ-ն այն բա-
ներն վրայ՝ զոր ինքն ալ գժբաղդաբար բանի տեղ դրած չէ:

— Այնպիսի խոստովանահայր մը ընտրենք՝ որ իրեն
խոստովանող քահանաները սուրբ ընելու չափազանց
եռանդ մ'ունենայ: Կրնայ ըլլալ որ խոստովանահայր մը
շատ աղէկ ըլլայ միայն աշխարհականաց և ոչ թէ քահա-
նայից համար. որ բորբոքուած եռանդ մ'ունենայ աշ-
խարհականները սուրբ ընելու, և քահանայ խոստովան-
որդւոց վրայ ալ փոյթ չունենայ. որ իրաւցընէ հակա-
սուելին մը կ'ըլլար, ըստ որում աշխարհքին վրայ քա-

հանապէ մ՚աւելի ոմն սուրբ ըլլալու պարտաւորուած է։ Խոստովանահարցս եռանդը գրգռենք՝ աղաչելով զինքը որ հեռեւեալս խոստովանութեամբ վարուի, և ամէն խոստովանանքներուս մէջ սկսելէ այս կամ այն կէտին վրայ՝ որուն նկատմամբ քաջալերուելու և կամ նոր ուժի կարօտ կ՚ըլլանք։

— Ա. Ինպիսի խոստովանահայր մը ընտրենք՝ որ ահեղ, համարձակ և կատարեալ աղատութեամբ խօսի հեռեւեալս։ Երբեմն կը հանդիպինք այնպիսի խոստովանահարք՝ որ քանի մը խոստովանողուց նկատմամբ կը տագնապին, և չեն համարձակիր սրտերուն մէջ ղգացածնին՝ բերանով զուրցելու։ Եթէ աւելի երկչոտ բնաւորութիւն ունի, եթէ խելքով և պաշտօնով խոստովանողուն աւելի տարին է, եթէ անոր հետ յաճախ և բարեհամական յարաբերութիւններ ունի, չիմանալ մը՝ քաշուածութիւն մը կը ղգայ, որով չի կրնար՝ ինչպէս որ պէտք է՝ խրատել, յորմէ ծանր անպատեհութիւններ կրնան յառաջ գալ։

Մեղի խոստովանող քահանային երբէք չի խոստովանինք, որ վտանգներէ ազատ չըլլար, բայց եթէ միայն քահանայի պակասութեան համար։

— Որչափ որ կարելի է, այնպիսի խոստովանահայր մը ընտրենք՝ որ մեզմէ շատ հեռու չի բնակի. վասն զի անոր բնակութիւնը մերինէն շատ հեռու գտնուած ատենը՝ շատ անգամ կը պատահի, (մանաւանդ երբ օդը խառնակ կ՚ըլլայ և կամ սովորականէն աւելի ղեղմանց մէջ կը գտնուինք), որ խոստովանութիւնը աւելի կ՚ուշանայ. որ չէր պատահի՝ եթէ խոստովանահայրնիս մօտ եղած ըլլար, որ միշտ քիչ շատ ծանր հոգևոր ինամներու պատճառ է։

— Վերջապէս եթէ խոստովանահայրերէս գոհ չըլլանք, պէտք է որ ուրիշ մէկը ընտրենք։ Անտարակոյս շատ դանդաղ վարուելու է խոստովանահայրը փոխելու համար, և ոչ ալ առանց ծանր պատճառներու որոշելու է. բայց ձեռքերնիս օրինաւոր փաստ ունեցած ատենիս ալ, վայրկեան մը վարանելու չենք։ Ա. Այս օրինաւոր

փաստերուն մէջ առաջինն և դիւրաւորը՝ անկասկած այն խոստովանահօրը եղած խոստովանանքներէս հոգևոր յառաջադիմութիւններուս նկատմամբ քիչ կամ ոչինչ պատուղ քաղելիս է, մանաւանդ եթէ գիտնալու ըլլանք՝ որ ուրիշ խոստովանահօր մը քով շատ աւելի օգուտ պիտոր քաղինք։

Ինչպէս ըսինք, կը դանուին բարի և սուրբ խոստովանահարք, որոնք քիչ կամ ոչինչ փոյթ կ՚ունենան կատարելութեան մէջ յառաջ տանելու իրենց քահանայ խոստովանորդները։ Կ՚ուզէ երկչոտութիւն ըլլայ, կ՚ուզէ երկար աւելնէ առնուած սովորութիւն ըլլայ, կամ թէ խմաստուն եռանդեան պակասութիւն, ղուրցուած մեղքերը ամենայն պարզութեամբ մոխիկ կ՚ընդնեն. յետոյ ընդհանուր և ոչինչ նշանակող յորդոր մ՚ընդելով՝ արձակումը կու տան. երթաս բարով, ամէն բան ըմբնցաւ։ Կը կարծէք որ ասիկայ խոստովանողընկերը աղեկ կերթայ մ՚ըլլայ։

Որչափ խոստովանահարք կը գտնուին որ երկար տարիներ իրենց քանի մը եղբայրակիցներուն խոստովանահայր ըլլալով, ոչ երբէք մտքերնին եկած է հարցընելու, թէ վարմունքներուդ կանոն մ՚ունիք։ Որո՞նք են դլխաւոր կէտերը։ Հաւատարմաբար ի գործ կը դնէք։ Աղօթք կ՚ընէք։ Ամէն օր որչափ ժամանակ աղօթքի կը ղբաղիք։ Ինչ կերպով կ՚ընէք, և ինչ պատուղ քաղեր էք։ Առանձին քննութիւն, հոգևոր ընթերցմունք, և Սրբութիւն սրբոցին այցելութիւն կ՚ընէք։ Ձեր կարծեաց համեմատ, որն է դլխաւոր պակասութիւնդ։ Ինչ կ՚ընէք զայն ուղղելու համար։ Նշանակած էք արդեօք թէ այդ դլխաւոր պակասութիւնդ կը տկարանայ, թէ երթալով կը զօրանայ։ Ինչ կ՚ընէք մեղաւորաց գարձին համար։ Ա. Արդեօք ժողովրդապետութիւններուդ կամ հոգեբարձութիւններուդ մէջ չի կան այնպիսիներ, որոց գարձը ընդունելու յուսով կարենայիք ուղղակի և անուղղակի ձեռնամուխ ըլլալ։ Ըրած էք։

Ա. Այս և ասոր նման հարցմունքներ ղարմանալի արդիւնքներ կ՚ունենան, եթէ եռանդուն և նախանձախնդ

գիր խոստովանահայրը՝ իւր քահանայ խոստովանողուհոյն ընէ: Գոնէ գոնէ միշտ կը հասկըցնէ, թէ սրբազան կարեւոր կէտեր են, որոց մէջ երբեք զանցառութիւն ընելու չէ. խոստովանողիք ալ իրենց կողմանէ գիտնալով որ ամէն խոստովանանքի մէջ համար պիտոյ տան, վերջապէս ուղէն չուղէն ի գործ պիտոյ դնեն եռանդուն խոստովանահօր ապրեսպրած հրթռութիւնները, և իրենց վարմունքը այնպէս պիտոյ ուղղեն՝ որ կարող ըլլան զհայցուցիչ պատասխաններ տալու այն ղեկատ հարցմանց: Ա.յսպէս կը պատահիր արդեօք, եթէ խոստովանահայրը սոսկ իրեն զուրցուածը մտիկ ընելու գոհ ըլլար, առանց մանրամասն քննութեան ձեռք զարնելու, և անորոշ ու ընդհանուր յորդորիւ մը վերջը՝ տար արձակումը և խաղաղութեամբ ճամբու դնէր զխոստովանողիքը:

289. «Ճաշակ խոստովանանք»: Շատ օրեր անցընելու չէնք առանց խոստովանանք ըլլալու: Շատ մը «խղճահար» չէղող սրբոց նկատմամբ կը կարգանք, որ ամէն օր խոստովանանք կ'ընէին, և անանկով ալ կատարելութեան ճամբուն մէջ ոչ թէ յառաջ կ'երթային՝ այլ կը վազէին: Պահպանութիւնները ջնջելու և պատքինութիւնները կատարելագործելու համար, յաճախ և պատշաճ որամադրութեամբ խոստովանութիւնն աւելի օգտաւէտ բան չի կրնար ըլլալ:

Իրաւ մեր խոստովանութիւնները վերոյիշեալ սրբոց խոստովանութեան պէս յաճախ ընելու չեն, բայց գոնէ շաբաթը անգամ մը քիչ է ու շատ չէ: Ախկայ է սուրբ քահանայից սովորութիւնը, որուն մենք ալ հետեւելու ենք: Առանց սխալելու վախ կրնանք ըսել, որ սովորաբար տասնհինգ օրը անցընելով խոստովանողները քիչ շատ յառաջ գացած կ'ընեն գաղջութեան և ծուլութեան մէջ, և գուցէ չարագոյն ալ:

Ախկ մի դրուի այս խորհրդածութեան: Ախկ եզած խոստովանութեան մը գործնական և բարի արդեանց ըռումը երեք կամ չորս օրէն աւելի չի քշեր. որմնցմէ վերջը իրաւ մահուշափ մեզք չի գործուիր, բայց սովո-

րաբար եռանդեան նուազելը կ'իմացուի: Ախթէքի մէջ աւելի անմոռադրութիւն և ցնորում, խօսքերու մէջ աւելի համարձակութիւն, զգայարանաց մահացուցման թուլութիւն, մեկ խօսքով այնչափ պակասութիւններ կը գործուին՝ որ խոստովանութեան օրը չէին գործուիր. և այս փոքր թուլութիւնը օր ըստ օրէ միշտ «կ'աճի», մինչև որ նոր խոստովանութիւն մը վերադարձնէ հոգւոյն յաւելեալ արիութիւնը և եռանդը: Որուն համար, երբ կ'ուշանայ այս նոր խոստովանութիւնը, չարը կը ծաւրանայ, խղճին փափկութիւնը կը խլանայ, ունակութիւնները աւելի խորութիւնը կը ձգեն արմատները, և կատարելութիւնը երբեք չի շահուիր: Ուսուի յաճախ և ամենայաճախ խոստովանութիւն պէտք է, եթէ կ'ուզենք սուրբ քահանայ ըլլալ:

290. «Հնութիւն»: Հնենք, հարցընենք խղճերնիս. բայց անշուշտ ոչ երբեք խղճահար ըլլանք, որ փոքր յիմարութիւն մ'ըլլալով երբեմն վտանգաւոր կ'ըլլայ, մանաւանդ քահանայից. վտանգաւոր թէ իրենց և թէ խոստովանաւորին ալ: Բայց կրնայ մեկը ձիչտ ըլլալ՝ առանց խղճահարութեան:

Հնութիւնիս միայն և միշտ մի և նոյն երկու երեք կէտերու վրայ չամփոփենք, որոնք ստէպ զանց առնուած ներուն չափ կարեւորութիւն չունին: Վճռակներուս պարտաւորութեանց վրայ քննենք զմեզ, ժամանակին գործածութեան վրայ, մեր ուսմանց վրայ, հիւանդաց հետ ունեցած վարմունքներուս վրայ, սուրբ խորհրդոց մատակարարութեան վրայ. եկեղեցին պահելներուս կերպին վրայ, զարդերուն, մարմնականերուն, սրբելիներուն և սեղանին միւս սպասներուն մաքրութեան վրայ. պարտքերուս կատարման ուշանալումներուս վրայ, յանձն առնուած պատարագները զուրցուելուն վրայ. բացակայութեանց, ձանձրացորդութեանց, խաղերու, հարկինքներու վրայ. անցաւոր բարեաց և ստակի սիրոյն վրայ, ագահութեան կամ ընդհակառակն չնայելութեան վրայ, անօգուտ և անպէտ ծախքերու վրայ, առնելիքի սիրուցուց վիճաս մը բերելու վտանգուել եղած պարտքերու վրայ:

Դեռ շատ երկար կ'ըլլար, եթէ ուզէինք հոստեղ մի առ մի համրել այն կէտերը՝ որոց վրայ պէտք է քննենք խնդիրնիս, և գուցէ զանց կ'ընենք:

291. « Ձղջուամ»: Ձղջուիլս շարժենք, չէ թէ անորոշաբար և ընդհանրապէս ղջման ազօթքին մէջ ամփոփելով բոլոր մեղքերուս վրայ ղգացած ցաւերնիս, այլ քննութեամբ յիշած իւրաքանչիւր մեղքի նկատմամբ՝ նեղքին ձգմարիտ սրամադրութիւններուս խորութիւնը չափելով. որպէս զի հասկընանք թէ ատոր ցաւ մ'ունինք թէ ոչ. և թէ ըլլալիք խոստովանութիւննիս միայն արտաքին կերպաւորութիւն մը չըլլայ: Ձոր օրինակ, ըսենք մենք մեզի. « Ատուաձ ոչ արհամարհի »[1]: — « Ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա»[2]: Ես կ'երթամ այս կամ այն մեղքս խոստովանելու, ձեռնամած և ծռնկեցս գեաոնի վրայ դրած, ընդրկ խնդրող մահապարտի պէս կ'երթամ բողոքելու, որ կը ղղուիմ ու կը գարշիմ այն մեղքէն, կ'առաջադրեմ մշտին ալ ան մեղքը չի գործելու, կը բաղձամ ընդունած սուրբ Խորհրդոյս ընդրկնելէն օգուտ քաղելու: Բայց ա՜սոնք են իրաւցնէ իմ սրամադրութիւններս: Անկեղծաբար և սրտանց որոշած եմ աւելի արթնութեամբ հսկելու, առիթներէն փախչելու, աւելի եռանդեամբ աղօթք ընելու, աւելի ուժով փորձութեանց դէմ դնելու: « Ատուաձ ոչ արհամարհի ». այս Ատուածը, այսօր իմ վրաս այս կամ այն մեղքին նկատմամբ՝ աւելի սաստիկ և դառնակսկիծ ցաւ մը կը տեսնէ՞ արդեօք, զոր այնչափ անգամ խոստովաներ եմ, և զղուշանալու ալ խոստացեր եմ, բայց եռքէն ալ բան մ'ըրած չեմ:—

Ահաւասիկ ղղջումնիս շարժելու կերպը, իրական ղղջում մը և ոչ թէ նորին երեւոյթը ունենալու ապահովութեամբ: Երբոր մեղքէ մը վերջը այս նեղդրծութիւնները կ'ըլլան, և հաստատ մտօք առանց ղմեղ խաբելու կ'ըսենք, որ ապագային մէջ դարձեալ նոյն մեղքերը գործելէ պիտոր ղգուշանանք, ան ատենը առաջադրութիւնը մեծ զօրութիւն մը կը ստանայ ղղջումը արթնցը-

1 Գաղ. Զ. 7:

2 Եբր. Դ. 13:

նելու և տարածելու պատշաճ ձգմարտութիւնները մտածելով. զոր օրինակ, Գեր. Լա-Մօտ Ամենի եպիսկոպոսն ոձը կ'առնուի, որ իր մեղքերուն վրայ ղղջումը չարժելու համար, հոգւով երեք կայարան կ'ընէր. մեկը դժոխքին մէջ, մտածելով անոր արժանացած ըլլալը. երկրորդը արքայութեան մէջ, հոն երթալու իրաւունքը կորսընցուցած ըլլալը մտքէն անցընելով. երրորդն ալ Գողգոթա լեռը, հոն իր ցաւոց մէջ ընկղմելով Աստուծոյ մը ոտքերուն առջին, որ կը կրէ և կը մեռնի զմարդը փրկելու համար:

Ա՛յս կանոնաց հաւատարիմ պահպանութեամբ՝ մեր խոստովանութիւնները հիմակուանէրեն շատ աւելի գոհացուցիչ և պղտաւէտ պիտոր ըլլան:

292. « Խոստովանութիւն »: — Վերոյիչեալները ի գործ դնելով խոստովանինք, բայց ամէն պատշաճ թէուռնութիւններով, անկեղծաբար, խոնարհաբար, պարզութեամբ, ճշդութեամբ և խոհեմութեամբ, և ամենէն վերջը, խոստովանահօրը ոտքերուն առջին թափած մեղքերնուս վրայ միշտ ճշմարիտ և դառնակսկիծ ցաւով: Աչխարհքի մէջ կ'ըսուի, որ խոստովանութեան նկատմամբ՝ քահանաներուն խոստովանանքը աշխարհականներէն աւելի դէշ է, որ ամենևին ստոյգ չէ. յետ այնորիկ աշխարհք ինչ գիտէ:

Մեայն խօսք մը ղուրցենք ձիշտ խոստովանութեան վրայ, այսինքն թէ « պակասութիւննիս ալ մեղքերուս պէս հաւատարապէս խոստովանինք »: Խօսքս բացատրեմ. պակասութիւն ու մեղք մեկ բան չեն, այլ տարբերութիւն մը կայ, ինչպէս ծառին ու պտղոյն մէջ: Մեղքը պտուղն է, իսկ պակասութիւնը՝ այս անհրաժեշտ պտղոյն ծառն է: Ա՛րտաքոյ կարգի պատահմամբ կրնանք ամբարտաւանութեան մեղքին մէջը իյնալ՝ առանց ամբարտաւանութեան ախտը ունենալու, և կամ բարկութիւն մը ցուցընել՝ առանց երեսպէս բարկացող ըլլալու: Բայց երբ պակասութիւնը ունինք, ան ատենը վտանգ կը դանուի նաև այն չար ծառնիկը՝ որ ատենին իր պտուղները կը բերէ: Որուն համար կ'ըսենք որ ոչ միայն մեղքերը խոս-

տուվանելի պէտք է, այլ նաև պակասութիւններն ալ. այս-
ինքն՝ այս կամ այն ինչ մեղքը զուրկ չէ՞ն վերջը, պէտք
է հասկըցունել նաև այն մեղքին պատճառ եղող պակա-
սութիւնն ալ: Որ շատ օգտաւէտ և շատ ալ կարևոր է
խոստովանահօր՝ խոստովանողութեան խորհին ձիշտ վերա-
կին նկատմամբ լուսաւորուելու համար: Հասկընալու է
նաև որ մեծ տարբերութիւն կայ միայն մեղքի մը պարզ
ամբաստանութեանը, և անոր պատճառ եղող պակասու-
թեան յայտնութեան մէջ. պարզ ամբաստանութիւնը
միշտ բաւական չէ պակասութիւնն ալ դուշակել տալու:
Եթէ, ըսր օրինակ, ես ըսելու ըլլամ որ սաստիկ բարկա-
կեցայ, խոստովանահայրս պիտոր կարծէ որ ես թեթև
մը հեղութեան դէմ մեղանչած ըլլամ: բայց եթէ աւել-
ցընեմ, որ այն արտաքոյ կարգի կրակոտութիւնս յան-
դիմանական խօսքի մը յառաջ եկաւ, որուն չի կրցայ ըստ
սովորութեանս լուսթեամբ համբերել, ան ատենը ինքը
իրաւամբ պիտոր հետևցընէ, որ ես ոչ միայն հեղու-
թեան՝ այլ նաև խոնարհութեան դէմ ալ պակասեր եմ:
և եթէ երբեք այս է իմ ունակութիւնս, ես ոչ միայն
յաճախ կ'ըլլամ, այլ նաև ամբաստանան ալ: Նոյնպէս,
եթէ ընկերներէս մէկուն դէմ քիչ մը դժուութիւն կամ
թշնամութիւն ունենալս ամբաստանելու ըլլամ, առանց
յայտնելու որ ասոր պատճառը մոխրի տակ թաղուած
շար նախանձ մըն է, խոստովանահայրս միայն եղբայրսի-
րութեան դէմ պակսիլս պիտոր տեսնէ, առանց գիտնա-
լու որ պակասութեանցս մէկն ալ շար նախանձն ըլլայ:

Մ'իշտ ամէն մէկ խոստովանած մեղքերուս սկիզբը՝
պատճառը քննենք, և խոստովանահայրնիս ալ տեղեկա-
ցընենք, որպէս զի շարը հոգայ. և կամ աղէկ բացատրե-
լու համար՝ ծառին միայն մէկ ոստը կտրելով գոհ չըլ-
լանք, այլ կացինը արմատին դէմ տանք՝ արմատովը մա-
տեղ վերցընելու համար:

293. « Հատուցում », այսինքն ապաշխարանաց վը-
ճարում: Ապաշխարութեան խորհրդոյն այս վերջին
ամբողջական մասին վրայ բան մը չենք ուզեր զուրցել,
ապահով ըլլալով որ յայտ մասին եղբայրակիցներէս և

ոչ մէկը ուղղութեան կարօտ կէտ մ'ունի: Հոս չէ մեր
խոստովանութեանց մեծ դժուարութիւնը. խոստովա-
նած մեղքերէս ուղղուելը՝ շատ աւելի ծանր կու գայ
քան թէ խոստովանահօր դրած թեթև ապաշխարանքը.
միայն այսչափը ըսենք, որ մեր սաստիկ ակարութեան
դէմ շատ նպաստաւոր պիտոր ըլլայ մեզի օգնելու հա-
մար, եթէ աղաչենք զխոստովանահայրնիս որ մեզի ա-
պաշխարանք դնէ ամէն օր՝ կամ զանց ըրած, և կամ գալ-
ջուութեամբ կատարած այս կամ այն բարեպաշտութեան
գործն ընելու, կամ ուսման որոշուած չափ մը դնելու՝
մինչև հետևեալ խոստովանութիւնիս, և կամ ուրիշ
գործք կամ ղեկտիւնք մը որ խրախուսէ, օգնէ և յա-
ջողէ առաքինութեան մէջ յառաջադիմութիւնիս, ո-
րոնք եթէ մենք խնդրելու չըլլանք, դուցէ երբեք խոս-
տովանահօր միտքը չի'նան մեզի ապաշխարանք դնելու:

294. « Մեր խոստովանութեանց պատուղները »: —
Եթէ մինչև յարդ ապաշխարութեան խորհրդոյն նկատ-
մամբ տուած կանոններս հաստատմութեամբ պահելու
ըլլանք, անկարելի է որ չուտով կատարելութեան մէջ
յառաջ չերթանք: Որովհետև զմեծ մեղաւորները ի մե-
ղաց առ ընորհս գարձընող խոստովանութիւնը արդար-
ներուն ալ կ'օգնէ և պարզ արդարութեան վիճակէն
կատարեալ արդարութեան կ'անցընէ, և այս երջանիկ
անցքերը շատ անգամ զարմանալի արագութեամբ կ'ըլ-
լան: Վասն զի առ այս միայն երկու բան պէտք են. —
Աստուծոյ օգնութիւնը, — և մարդուն կամքը. — և ըստ
որում Աստուած յարատև և եռանդուն աղօթքով խըն-
դրողներուն չի զլանար իւր օգնութիւնը, և ապաշխարու-
թեան սուրբ խորհուրդին մէջ ալ առատութեամբ կ'ա-
ռաջարկէ, յայտնի կ'ըլլայ որ մենք հաստատուն՝ անկեղծ
և յարատև կամքով մտածենալով՝ կրցածնուս չափ օգուտ
քաղելու, ասանկով քանի մը շաբթուան մէջ շատ ա-
ւելի յառաջադիմութիւն կ'ունենանք, քան թէ երկար
տարիներու ընթացքի մէջ, եթէ կասկածելի և թերի
կամ նաև հասարակ և սովորական տրամադրութեամբ
մտածենալու ըլլայինք:

Յորմէ պէտք է որ շատ կարևոր բան մը ձանչնանք. այսինքն թէ մեր այսչափ խոստովանութիւններով, ըղձումն բողոքներով, մեյմըն ալ չի մեղանչելու կրկին և կրկին առաջադրութիւններով, գարձեալ սրտերուս խորը տակաւութիւն մը գաղտած կը գտնուի. կամքերնիս թոյլ, մեղկ և անզօրապէս է. կամք մը որ ինքնիմէ բան մ'ընելու կարող չէ և առանձին վիճակ մը կը կազմէ, երբև թէ կամքէն տարբեր բան մ'ըլլայ, որով լեզուներս անոր համար առանձին անուն մը յարմարցուցեր է, և անով կը կանչէ « կամքութիւն »: Շատ բան ուզել կը կարծենք՝ մինչդեռ իրօք բան մը չենք ուզեր, կամ գոնէ այն հաստատութեամբ չենք ուզեր՝ որ Աստուծոյ օգնականութեամբ ուզէլէն վերջ գործելու կը սովրինք զմեզ:

Փրկութեան ճամբուն մէջ ամենքնիս ալ սահման մը դրած ենք, և կ'ըսենք չէ թէ բերանով կերպարանք, այլ գործքով. — Մինչև հոս բաւական է, ասկից աւելի կատարելութիւնը ինչ պիտոր ընենք. կրնայինք « բարեգոյն » ըլլալ, բայց « բարին » ալ բաւական է: — Ասկից ինչ կը հետևի: Այս միայն, որ ամենևին հոգ չենք տանիր պակասութիւններս ուղղելու, մինչև որ դրած սահմաններէս շատ ապին չկտ չի գառնանք:

Եթէ այս վիճակիս խոստովանահարցս՝ կամ գոնէ մեզի յայտնելու ըլլանք, գուցէ կարող ըլլանք անկատարութիւնը աւելնել, և զայն աղեկցնելու որոշում մը տալ. բայց ոչ ձանչնալով և ոչ ալ խոստովանելով, այս մեր արամադրութիւնը աւելի կը ծածկենք. և խոստովանութիւնիս՝ գժբաղդաբար զմեզ նորոգելուն տեղը, մանաւանդ մեր կուրութեան պատճառաւ կարծես թէ գտնուած թերութիւններուս մէջ զմեզ կը գադարեցնէ: Խոստովանութիւնը մեր յանցանքովը չէ թէ գարմանի, այլ քօղ մը կ'ըլլայ թշուառութիւնիս ծածկելու, զորոնք չը տեսնելով հանգիստ կ'ըլլանք: Ի՞նչպէս: Իրենակնապէս: Կը խոստովանինք և խիղճերուս զարկած բոլոր մեղքերը կ'ամբաստանենք, զղջման ներդործութիւնը կ'ըսենք, արձակումը կ'առնունք. և թէպէտև ա-

մէն օր մի և նոյն պակասութեանց մէջ կը դլորինք, և երբեք արտաքոյ կարգի ջանք մը չենք ըներ ղգուշանալու և չըտկուելու, այլ ամէն խոստովանանքէն վերջը այնպէս կ'ապրինք՝ երբև թէ խոստովանութիւնը իւր ամէն բարի արդիւնքը ունեցած ըլլար, որ այնպէս չէ. վասն զի հետևեալ խոստովանութեան մէջ գարձեալ նոյն պատմութեան չարունակութիւնը պիտոր ըլլայ: Սակայն խոստովանութիւնը մեր խոկ յանցանքովը կատարելութեան մէջ յառաջադիմութեան նպատամբ՝ ձեռքերնիս անպիտան գործիք մը կ'ըլլայ, պատրուակ մըն է և ոչ թէ գարման. առ առաւելն « պահպանողական » գործք մը կ'ըլլայ, և ոչ թէ « լաւագունութեան » և յառաջադիմութեան, որ անգունդներու մէջ կ'իյնալէ կը պահէ, բայց մինչև սուրբ լերան գլուխը չի տանիր զմեզ:

Ի՞նչ ընելու է ուրեմն այս լաբիւրինթոսէն ազատելու համար: Սուրբ քահանային նմանիլ, որ քաջութեամբ ձեռք առած փրկութեան ճամբուն մէջ երբեք սահման մը չի գներ, ըսելով. « ո՛հ, բաւ է »: Սուրբ քահանային նմանիլ, որ իր առջևը դեռ ևս ընելիք անհատնում ճամբայ մը տեսնելով, կը քալէ և միշտ ուժով կը քալէ, Յիսուսին ձայնին հպատակելով՝ որ Պետրոսի ըսածը երեն ալ կը կրկնէ. « Խաղացո՛ ի խորն »[1]:

Սուրբ քահանային նմանիլ, որ սուրբ Պաւղոսի նման անցեալ յաղթութիւնները մոքէն հանելով, եւանդոն փափաքով կը վազէ նոր յաղթանակներ կանխելու. « Զի զառ ի յետոյն մոռացեալ (է), և ի յառաջագիմն նկրտեալ եմ. ուշ եղեալ ընթանամ »[2]: Վերջապէս սուրբ քահանային նմանիլ, որ — գիտնալով թէ ոչ ոք քահանայական վիճակին մէջ երբեք ըստ արժանւոյն կրնայ չափազանց կատարեալ ըլլալ, և որչափ սուրբ ըլլայ՝ այնչափ ալ աւելի հոգի կը փրկէ, և անձնական փրկութիւնն ալ աւելի կ'ապահովցնէ, — երբեք սահման չի գներ իր անձնական կատարելութեան, և հաւատարմութեամբ կը համապատասխանէ Աստուծոյ երեն

1 Ղուկ. ե. 4:

2 Փիլիպ. գ. 13, 14:

տուած ընորհացը. իմացընելու համար որ ինքը խօսել էր անոր հրաւիրանացը՝ զոր կ'ընէ ըսելով. « Ով արդարա-նալոցն է՝ արդարասցի, և որ սրբեալոցն է՝ սրբեսցի »[1]:

Սիրա առնենք, արժանապատիւ եղբայրակիցք, և մենք ալ սուրբ կ'ըլլանք. բայց սուրբ՝ ճշմարտապէս քահանայական սրբութեամբ, որ թէ հոս և թէ ի հանդերձեալն՝ մեր երջանկութեան սկիզբը պիտոր ըլլայ:

ԳԼՈՒԽ Ժ.

Հոգեւոր կրթութիւն տարեկան — Ամսական — Մաճուառն պատրաստութիւն — Հոգեւոր կրթութեանց վերջայ գործնական կանոններ եւ ազդարարութիւններ:

295. Քահանայի մը վերանորոգութեան և սրբութեան ամենազօրաւոր միջոցը, ինչ կ'ուզէ ըլլայ իւր վիճակը, անշուշտ հոգեւոր կրթութեան ընորհքն է: Վայ անոր որ օգուտ չի քաղեր, և ընելէն վերջն ալ յառաջուան պէս կը մնայ: Այնուհետև ալ ինչ բանի վրայ պիտոր գնէ իւր ուղղութեան յոյսը, եթէ այն օրհնեալ օրերուն մէջ Աստուծոյ անոր դլխուն թափած ամենառատ ընորհքներուն ալ վրան երևելի փոփոխութիւն մը չի տեսնուեցաւ: Հոգեւոր կրթութեանց արատաքոյ կարգի և գրեթէ անընդհմակաց միջոցներով ընդունել չի կըրցածը՝ հասարակ միջոցներով ինչպէս պիտոր ընդունի:

Հոգեւոր կրթութեանց զօրաւոր ձեռքով չի չարժած ապառաժը, մեկ թեզով ինչպէս պիտոր վեր ելլէ:

Այս մտածմունքը շատ մեծ ազդեցութիւն ընելու է մեզի՝ կրթութիւն ընելու բարեբաղդութիւնը ունեցած առենիս: Այն առենը իւրաքանչիւր ոք ամենայն առատութեամբ պէտք է ըսէ ինքն իրեն. Հիմակ կարողութեանս ձիշտ չափը կրնամ իմանալ. եթէ հոգեւոր կրթութեանցմէ այնպէս ելլեմ՝ ինչպէս որ մտայ, եթէ արծուի պէս նորոգուած չեմ, որ բոլոր հին փետուրները թափեզով՝ նոր և գեղեցկագոյն փետուրներ կը հադուի, « Նորոգեսցի որպէս արծուոյ »[2]. եթէ կրկին

1 Յայտ. իբ. 11: 2 Սաղմ. ճԳ. 5:

դաղջութեան մէջ լինամ, ոչ արթնութիւն ունենալով, և ոչ ալ աղօթք ընելու բարեգոյն ախորժակ մը, ոչ անոսկ և ընդունայն վարքիս վրայ տհաճութիւն, և ոչ ալ ուղղուելու եռանդ մը, ոչ պակասութեանց դէմ դնելու աշխոյժ, և ոչ ալ թէ իմ և թէ ինամոցս յանձնուած հոգւոց վրկութեան մեծագոյն նախանձ մը, ալ ինչ ճամբայ և ինչ կոյս կը մնայ ինձ: Եթէ հոգեւոր կրթութիւնները կրցածնուն չափ օգուտ քաղող քահանայք, հաւիս կրնան մինչև մեռս հոգեւոր կրթութիւնները պահել գայն, հապա ինչ պիտոր ըսեմ ես ինձի համար, երբ այս կրթութիւնը կ'անցնի առանց իմ վարմանցս վրայ հետքի նշան մը թողլու:

Բայց բարեբաղդաբար կը յուսանք որ իրօք այնպէս չըլլայ: Սայդ է որ շատ տարբեր են հոգեւոր կրթութեան արդիւնքները, բայց չի կայ քահանայ մը որ քիչ շատ օգուտ մը քաղած չըլլայ:

« Զաբ » քահանան գայն ընելու յօժարած առենը, երբեմն իւր վերայ խորութիւնը կը քննէ. աւետարանին խօսքը ըսելով կ'արթընայ, իւր գաւչելի Թշուառութիւնը առանելով կը խոնարհի. և քանի մը կաթիլ տաք արցունքներ կը թափի՝ այն եռանդուն քահանային ողբերուն առջին, որուն բացած է իւր խղճին Թշուառ վիճակը:

« Գաղջ և ծոյլ » քահանան կը յանդիմանէ իւր վարմունքը. այն կարճ օրերուն առանձնութեան մէջ միտքը կը բերէ անթիւ պակասութիւնները՝ զորոնք յառաջ ցնորման պատճառաւ չէր տեսներ. կը ճանչնայ ըրած չարիքը, չըրած բարիքը, իւր պաշտօնին շատ քիչ և դրեթէ ոչինչ արդիւնքը, և հոգեւոր կրթութենէ ելլելու առենը՝ իրեն կը սեպհականէ այս հետևեալ խօսքերը, որոնք իրօք ալ իրեն կը վերաբերին. « Զսէրն քո զառաջինն թողեր, յիշեա այժմուսկի անկարն և ապաշաւեա, և զառաջինն գործսն քո արա. ապա թէ ոչ գամ ես վաղվաղակի, և շարժեցից զաշտանակս քո ի տեղւոջէ իւրմէ, եթէ ոչ ապաշխարեցես »[1]:

1 Յայտ. բ. 5:

« Բարի » քահանան կ'արծարծէ իւր մարած եռանդը, պակասութեանց դէմ կը դնէ, որոնց ծանրութիւնը յառաջ կը ծածկէր. սրբագոյն կենաց հիմը կը դնէ, իւր եռանդին բոցը կը բորբոքէ, մոքին մէջ կրթութենէն վերջը ընդունած բարի գործքերը կը պատրաստէ, և արդիւնաւոր կերպով Աստուածային այս խօսքերուն վրայ կը մտածէ. « Մխիթարիչ ընթերցուածոց մխիթարութեան վարդապետութեան, մի՛ անփոյթ առներ զշնորհսդ որ ի քեզ են, որ տուաւ քեզ ... ի ձեռնադրութենէ երիցութեան » [1]:

Վերջապէս « սուրբ » քահանան ամենքէն աւելի պատրաստուած՝ ամենքէն ալ աւելի առատ շնորհքներ կը շահի: Աստուծոյ խաւրած ամէն ազդեցութիւնները կ'ընդունի, ամէն բարեպաշտ փափաքները կը գործադրէ, և ջերմեռանդ խորհուրդներն անգամ պատուիրանի պէս կը պահէ: Արդէն եռանդուն՝ եռանդնագոյն կ'ըլլայ, և սրբութեամբ կը փափագի երէն մէկ հաւիկ զբաղմունքութիւնը պատճառող քահանայական կատարելութեան, և հոգևոր կրթութիւնը կը թողու՝ շրթանց վրայ կրելով այն խօսքերը. « Զի եմ յառաջադիմութիւն ամենեցուն յայտնի լիցի » [2]:

296. Եւ որովհետև հոգևոր կրթութիւնները այսպիսի զարմանալի արդիւնք ունին, պէտք չէ՞ որ մենք ալ ամէն տարի անխախտ ի գործ դնենք: Այսպէս է Աստուծոյ կամքը, եկեղեցւոյ բաղձանքը, դերապատիւ եպիսկոպոսներուս սաստիկ փափագը, սուրբերուն գործադրութիւնը, կղերին ընդհանուր սովորութիւնը, և շատ անգամ ալ երևելի և աներևոյթ թշնամիներէ ընդունած վերքերու ալ՝ ամենամեծ և ստէպ ալ մէկ հաւիկ դեղ ու դարմանը: Ո՛րչափ փառաւոր ամէն տարի երթալու և հոգևոր կրթութեանց մէջ ժամ կաղդուրելու, զօրացընելու և վերանորոգելու համար:

Երբեք ձանձ չընենք, և հաստատ մոքերնիս դնենք որ որչափ յօժարութիւններնիս պակաս ըլլայ, այնչափ աւելի կ'ըլլայ կարօտութիւններնիս: Բարեպաշտութեան պա-

1 Ա. Տիմ. Գ. 15:

2 Ա. Տիմ. Գ. 15:

կասութիւնն է որ մեզի զանց ընել կու տայ. և ոչ երբ կընդնանք գանել բարեպաշտութիւնը, եթէ ոչ հոգևոր կրթութեանց մէջ՝ որ անոր աղբիւրն է: Այն քահանան որ ըստ պատշաճի չի յարգեր սրբութեան այս փրկարար միջոցը, որ առանց խղճի զանց կ'ընէ, և յանկարծակի մէջ ենկած արդեօք մը կ'ուրանայ. և որ առանց սուրբ նախանձ մը զգալու՝ կը տեսնէ իւր ընկերները, որ սուրբ եռանդեամբ բորբոքուած հոգևոր կրթութիւններէ կը գառնան, առանց այլևայլի պէտք է հետևցընէ, որ վերջին աստիճանի հարկաւորութիւն մ'ունի, և թէ իր վարքին մէջ շատ մը նորոգութիւններ կը գտնուին:

Ուրեմն հաստատ առաջադրութիւն դնենք ամէն տարի քանի մ'օր հոգևոր կրթութեանց նուիրելու, թէ որ չենք կրնար ուրիշներու հետ միատեղ ընել եպիսկոպոսին աչքին առջին, այս զրկողութիւնը փոխարինենք, մենք մեզմէ ընելով կամ քանի մ'օր վանք մը քաշուած, և կամ եղբայրակիցներէս մէկուն տունը, որ ուզէ այս առթէն երէն ալ օգուտ քաղել:

297. Եթէ «ամենածանր» պատճառներ արգելք չեն ըլլար՝ թեմական հոգևոր կրթութեանց յաճախենք: Հոն է որ Աստուծոյ կամքը զմեզ կը կանչէ, հոն է որ Աստուծոյ մեզի համար պահուած մեծ շնորհքները պիտոյ գանենք:

Գուցէ ըսուի որ առանձին հոգևոր կրթութիւնը՝ ընդհանուրէն աւելի հաճելի ըլլայ: Թիւր կարծիք: Ոչ թէ մեր՝ այլ Աստուծոյ հաճոյքը փնտռելու ենք: Արդ Աստուած մեծաւորաց բերնով մեզի կը ծանուցանէ, որ աւելի կը հաճի զմեզ թեմական հոգևոր կրթութեանց մէջ տեսնել:

Գուցէ ըսուի նաև, որ առանձնական հոգևոր կրթութեանց մէջ աւելի մտայ ամփոփում կ'ըլլայ, աւելի աղէկ տրամադրութիւններ կ'ունենայ մեկը, և աւելի արդիւնք կը տեսնուին: Այս փաստն ալ բան մը չարժէր: Ուզուած տեղն ամէն տեղ կը գտնուի մտայ ամփոփումը, թեմական հոգևոր կրթութեանց տեղն՝ ա-

նանկ սուրբը քահանանեը կը տեսնուին, որ կարծես թէ Կիսաեբսեան ըլլային. եկէք անոնց հետ, և որովհետև ամիսովմամը այնչափ հաճելի է, ապահով եղէք որ ձեր բարի օրինակը անպտուղ չըլլար: Իսկ ընդհանուրին ա-ւելի առանձին հոգևոր կրթութեանց մէջ տեսնել կար-ծուած արդեանց նկատմամբ, Աստուած միայն գիտէ թէ իրօք այնպէս են. բայց գուցէ պտուղ կ'անուանենք այն խորագոյն ամիսովմանէ յառաջ եկած հաճելութիւնը. սակայն ով ըսաւ որ Աստուած յայտ առելի ձեր անձ-նական հաճութիւնը չի տեսներ, քան թէ սոյզ պտուղ մը: Մենք այս միայն գիտենք որ Աստուած զմեզ այս թէ-մական հոգևոր կրթութեանց կանչելով, այս և ոչ թէ ու-րիշ կրթութեանց մէջ կը ընորհէ խրատքանչիւր ու-մէք իւր ընորհաց պարգևները:

Շատ ցաւալի բան է որ թեմին քահանայք (գիւղու-թեամբ կարենալով գալ) չեն յաճախեր թեմական հո-գևոր կրթութեանց, և ուրիշ առանձին հոգևոր կրթու-թեանց կը գիմեն: Այս քահանայք շատ անգամ եռան-դեան և կանոնաւորեալ կենաց մէյմէկ լուսաւոր օրի-նակներ են, և մտքերնին անգամ չանցնիր թէ որչափ օգտակար պիտոր ըլլայ իրենց ներկայութիւնը այսպիսի հոգևոր կրթութեանց մէջ՝ որ մուտքը բարոզութեան աղդեցութիւն պիտոր ունենայ, և շատ անգամ բերա-նացի որուած քարոզներէն աւելի կը գոյչի և կը շարժէ: Եթէ հոգևոր կրթութեանց մէջ քարոզ և խրատներ հարկաւոր են, գուցէ շատ աւելի արդիւնաւոր ըլլայ սուրբ քահանայից բարի օրինակը:

Մեւս կողմանէ ասանկներըը շատ կարևոր ծառայու-թիւն մը կրնան ընել. այսինքն իրենց եղբայրակիցնե-րուն խոստովանանքը լսել: Ուրիշ որ խոստովանահայր կրնան ընտրել անոնք՝ որ սուրբ քահանայից կարօտ են իրենք ալ սուրբ ըլլալու համար, եթէ այսպիսիները մէջ-տեղը չեն երևիր: Հարևանցի մ'ըսենք, որ այսպիսի առ-թի մէջ՝ իր եղբայրակիցներուն խոստովանութիւնը լսել չուզող քահանան, անձնասէր մէկը պիտոր կարծուէր, որ թէև ուրիշ բաներու մէջ անըսազատանելի, բայց յայտ մասին գովութեան արժանի չէ:

298. Հոգևոր կրթութեանց աւելի աղէկ ըլլալու սուրբ գիտաւորութեամբ, և անկից օգուտ քաղելու սասակ փափագով երթալու ենք: — Արդեօք հետա-քրքրութիւնը սուրբ գիտաւորութիւն կրնայ ըլլալ. կամ անկից հաճութիւն մը ղգալու համար, կամ սովո-րական կենաց միաձևութիւնը ընդհատելու համար, ան-սովոր տեսարանի մը ներկայ գտնուելու համար, երկար տեսնել ի վեր չը տեսած բարեկամներ և ծանօթներ տես-նելու համար, մի թէ այս ամենը սուրբ գիտաւորու-թիւններ են: — Ուրիշները գացած ըլլալնուն պատճա-ռաւ երթալ, և ընկերներուս կշտամբանքը վրանիս չի չարժելու համար երթալը, սուրբ գիտաւորութիւն է արդեօք: Մեծաւորներուն ուղելուն համար երթալ, և չերթալով՝ անոնց մեր վրայ յարգն ու համարումը կոր-սընցնելուս վախի համար երթալը, սուրբ գիտաւորու-թիւն է արդեօք: — Առանց նպատակի մը և առանց ո-րոշ պատճառի մը երթալը, այլ յանկարծ մտքերնիս գալով, և առանց մտածելու հաւանութիւն տալով եր-թալը, սուրբ գիտաւորութիւն է արդեօք:

Այս տեսակ տեսակ հարցմանց հարկ չէ պատաս-խանել, արդէն ինքնիրմէ յայտնի է: Այնքնիս ալ եր-թանք հոգևոր կրթութեանց պակասութիւններս ուղղե-լու, բարութեան մէջ հաստատուելու, եռանդնիս զար-գացընելու, և աւելի սուրբ ու կատարեալ ըլլալու ան-կեղծ և բորբոքուած փափագով: Որովհետև միայն այս վախճանին կարգաւորուած են հոգևոր կրթութիւննե-րը, մենք ալ այն խորհրդոյն համաձայն գիտաւորու-թեամբ պէտք է երթանք՝ որով որ աստուածային նա-խախնամութիւնը փրկութեան այս զօրաւոր միջոցը մեզի կու տայ:

Շատ վայելուչ է որ մենք յառաջուց պատրաս-տուինք հոգևոր կրթութեան ընորհքները ընդունելու՝ խորագոյն առանձնութեամբ, բարեգոյն աղօթքներով, արտաքոյ կարգի բարեպաշտական գործքերով. և զգօ-նութեամբ մտածելով այն տեսակ տեսակ կէտերուն վը-բայ, որոնք աւելի հիմնական և չուտ նորոգութեան կա-

բօտ են: Կարելի եղածին չափ քիչ մ՚առնէն յառաջ նախատեսելու է, ինչ որ կրթուվթեան առեն կրնայ մեզի ցնորելու առիթ ըլլալ: Թղթակցուվթեան առենը որոշել, անհրան գործքերը կարգի դնել, ընտանեկան հոգւեն խաչըսիլ, հիւանդաց՝ առեներն այցելուվթիւն ընել և զանոնք խոստովանցընել. վերջապէս այնպէս նախապատրաստել՝ որ բացակայուվթեան առեններս հոգւոց փրկուվթեան նկատմամբ ամենեվին անպատասխանատուվթիւն մը չըլլայ:

Ամէն բան այսպէս կարգադրելով և ճանապայ ելլելու ժամը մօտեցած ըլլալով, շատ յարմար կու գայ քանի մը վայրկեան այցելուվթիւն ընել ամենասուրբ Հաղորդուվթեան, և աստուածային փրկչէն իւր օրհնուվթիւնը խնդրել: Հոն անոր ոտքերուն առջին թողլու է ամէն՝ հայրենեաց, ընտանեաց, գործքերու, մտածմանց հետ կրթուվթեան օրերուն մէջ հանդիպելիք դժբաղդուվթեանց ամէն վախ և անհանգստուվթիւնը:

299. Հոգևոր կրթուվթեանց արդեանցը ամենամեծ արգելքը անտարակոյս մտաց ցնորումն է, ինչպէս որ անմիջապէս պիտոր ըսենք: Աբդ կրթուվթիւնը չը սկսած և նոյն իսկ կրթուվթեան առեը չի հասած, ցնորմանց դէմ պատսպարուելու է: Շատ բնական է որ երկար առենէ ի վեր չը տեսնուած բարեկամներ մեկմեկու հանդիպելով, հարցուփորձի և աշխարհային լուրերու առեը կուվթեանց վրայ բաւական ժամանակ ծախսուի, որ որչափ աւելի օգտաւէտ կերպով կրնար գործածուիլ այնպիսի նուիրեալու վրայ դարձընելով խոստակցուվթիւնը, որ ոչ միայն անոնի մտածմունքները մոքերէս բոլորովին հեռացընէին, այլ նաև նոյն իսկ կրթուվթեանց ալ պատրաստուվթեան ծառայէին:

Զգուշանանք, սիրելեալ եղբայրակիցք, և կրթուվթենէն յառաջ այնպիսի վարմունք մ՚ունենալու չանանք որ տեսողներն անգամ իսկ և իսկ լմնան թէ ինչպիսի համարմունք ունինք հոգևոր կրթուվթեանց վրայ, և թէ ինչպիսի ազդեցուվթեամբ տոգորուած ենք անոնց սուրբ արդեանց նկատմամբ. տեսած պատրաստուվթիւններէս աշխարհայինք ալ հասկընան, թէ շատ կարևոր մտած-

մունքներ գրաւած ըլլան մոքերնիս. և ասկից աւելի ինչ կարևոր բան կրնայ ըլլալ, եթէ ոչ՝ որ ահաւոր անաչառ դատաւորի մ՚առջին չերեւած, և մեր խորհրդոց, խօսքերու և գործոց վրայ համար չի տուած, մենք մեզի առանձնուվթեան մէջ խիղճերնուս հաշուեգիրքը մէջ ձգելու, և սխալները շտկելու, ու տալիք պատասխաններս պատրաստելու ըլլալինք: Այո՛, ինչ աս տեսակ մտածմունքներ պէտք է որ պաշարեն մոքերնիս, սրտերնիս հոգևոր կըրթուվթենէ առէկ պատուղներ քաղելու բաղձանքով տոչորի, կամքերնիս իբրև ընելիք վերջին հոգևոր կրթուվթենէն կրցածին չափ առատ արդիւնքներ հաստատապէս ուզէ քաղել, և այս նեղքին յուզմանց ազդեցուվթիւնը արտաքին վարմունքներուս վրայ ալ ներգործելով՝ քանի մ՚օրուան համար կատարեալ մտաց ամփոփում մը չտասեսէ մեզի:

300. Կրթուվթեանց տեղը հասնիլն ալ ցնորմանց առիթ մըն է: Այն տեղը արտաքոյ կարգի շարժում մը, երթևեկ մը կը տեսնուի տանը մէջ, սենեակ գտնելու, կահ կարասիքը յարմարցընելու՝ խառնակուվթիւն և անխռսափելի չփոթուվթիւն մը: Այսու ամենայնիւ սուրբ քահանայք որ միշտ մեր բարի օրինակները ըլլալու են, միշտ կ՚աշխատին կարելի եղածին չափ նուազ չփոթուվթիւն հանելու, պարկեշտաբար և խոնարհուվթեամբ իրենց գործքերը կարգի կը դնեն, և գրեթէ գաղտագողի սենեակներուն վերատեսուչին կը ներկայանան, և հատ մը իրենց նշանակուելով՝ առանց տեղն կորսընցնելու, կ՚երթան ուր որ սրտերնին զերեզք կը մղէ, այսինքն խոստովանին առջին Աստուծոյ երկրպագուվթիւն ընելու, և անոր սուրբ օրհնուվթիւնը խնդրելու համար: Այս պարագաներն կատարելով՝ ձեռացածը շուտով կը լմընցնեն. առանց ազմուկի՝ գէմ եղած բարեկամները և ծանօթները կ՚ողջունեն, և անվնասապէս կ՚առանձնանան՝ կրթուվթիւնը դեռ ևս չը սկսած ալ:

Այս սուրբ եղբայրակիցներուս նմանինք, և մենք ալ հաստատապէս և խորին կերպով առանձնանանք ու ամփոփուինք, առանց որոյ հոգևոր կրթուվթիւնները ար-

Ժէք մը չունին: Շատ բաղձալի բան կ'ըլլար, որ « Եկ առըր Հոգի » երգուածին պէս՝ ամենայն խղճահարու-թեամբ հոգ տանէինք՝ տեսնել դուրս բառ մըն ալ չար-տաբերելու, մինչև « Զքեզ Աստուած գովաբանեմք »: Եթէ ամէնքը պահէին այս ջերմեռանդ լռութիւնը, ամե-նամեծ և ընդհանուր չինութեան ասիթ մը պիտոր ըլ-լար, որ նաև շատ ազդեցութիւն պիտոր ընէր հոգևոր կրթութեանց յաջող ելքին վրայ: Զոր դժբաղդաբար ոմանք չեն հասկընար, որոց աչքին դուցէ այս մեր խոր-հրդածութիւնները չնչին բաներ երևին, մինչդեռ իրօք ամենակարևոր են: Որոնք որ այս ամիսիս մէջ շատ չեն յարդեր (և միշտ ալ քիչ են), սովորաբար մէջերնին առանց ակնածութեան կը խօսին, անանկ որ յաճախ լռութիւնը աւրելով՝ ամիսի կը կարծեն ղրկինք: Մենք կը համարձակինք հաստատելու, որ այսպիսիները ամե-նևին պատուղ մը չեն քաղեր հոգևոր կրթութիւններէ: Համբերութիւն՝ եթէ սոսկ իրենք ապարդիւն եղնէին. բայց գէշն ան է՝ որ իրենք ցնդած կենալով, զուարիշներն ալ կը շփոթեն, որոնք՝ եթէ չար օրինակ տեսող մը չըլ-լար, լռութիւն պահելով ամիսի կը կենային: Եւ յայտ-նի բան է, որ մինչդեռ ծե-ծուշաղարդ յարգելի քահանայք կարդասեանց պէս լուռ և ամիսի կը գտնուին, երիտասարդները՝ որ ամենէն ա-ւելի կարօտ են ամիսիման և լռութեան, ցնդած մտքով կը կենան:

Եթէ դժբաղդաբար քարոզիչը ամիսիման հարկա-ւորութիւնը զգալով, առանձին կերպով պնդելու և ա-պըսպրելու չըլլար, հոգևոր կրթութիւնները ամենուն համար ալ շատ նուազ արդիւնաւոր պիտոր ըլլային, քան թէ կատարեալ ամիսիմամբ ըրած ատեններնին:

301. Հոգևոր կրթութիւնները սկսելով, ամեն մե-կուն գլխաւոր հոգը պիտոր ըլլայ իրեն համար խոստո-վանահայր մը ընտրել, և ազէկ խոստովանութեան մը պատրաստութիւն տեսնել: Խոստովանահօր ընտրու-թիւնը, ինչպէս որ ուրիշ տեղ ըսինք, ամենակարևոր է: Մեծաւորները առաւօրէն ամեն մտրդու իրեն ուզած

խոստովանահայրը ընտրելու լիուլի ազատութիւն տա-լու համար, շատ մը քահանայից ընդարձակ իշխանու-թիւն կու տան. բայց ասկից հետևցընելու չէ՝ որ ամեն խոստովանահայր հաւասարապէս ամեն մեկուն ալ ա-ղեկ գայ:

Կը խնդրենք ընթերցողներէս, որ հոգևոր կրթու-թեան մէջ դանուած ատենին, նախընթաց գլխոյն մէջ դրած կանոններս, մանաւանդ « խոստովանահօր մը ըն-տրութեան » յօդուածը կարդալու, և ամենայն ճշդու-թեամբ ի գործ դնելու բարեհաճին. շատ հաւանական է որ իրենց համար հոգևոր կրթութեանց պատուղը՝ այն ամենակարևոր ընտրութենէն կախուած ըլլայ: Հոս միայն կ'աւելցընենք, որ հաւասար իրաց մէջ՝ շատ աւելի իմաստութեամբ պիտոր վարուին անոնք, որ կղերանոցի մը եռանդուն հոգևոր հայրը իրենց խոստովանահայր ընտրեն, որ « կանոնի, առանձնութեան և ուսման » վարժած ըլլալով՝ ընդհանրապէս ամենէն աւելի ազէկ գիտէ քահանայից միտքը ճգել՝ եթէ գժբաղդաբար մոռ-ցած ըլլային՝ այն քահանայական կենաց հիման իրեք գլխաւոր խորհրդները:

Իսկ խոստովանութեան և անոր պատշաճ թեղու-թեանց, և այնպէսիկ գլխաւոր կէտերուն և ուրիշ անոր վերաբերեալ մանաւանդ նկատմամբ, շատ ազէկ կ'ըլլայ որ ընթերցողք հոգևոր կրթութիւնը սկսածնին պէս՝ նախընթաց գլուխը ամբողջապէս կարդան: Սա-կայն եթէ թերութիւններն չակելու, եռանդնին նորոգե-լու, և սուրբ Աստքելցին ըսածին համաձայն՝ սրտերուն մէջ մարած ընորհքը կենդանացընելու, « Յիշեցուցանեմ քեզ արծարծել զընորհսն Աստուծոյ » [1], ճշմարիտ կամք ունին, ան ատենը՝ թէև ըսելու ալ հարկ չի կայ, իրենց յարմար խոստովանահայր մը կ'ընտրեն, և խոստովա-նութիւնն ալ շատ ազէկ կ'ըլլայ: Յիշեն որ շատ ան-դամ ոչ միայն արձակման մը հարկաւորութիւն ունին, այլ մանաւանդ խմաստուն խորհրդով մտածուած և մաս-նաւորուած առաջնորդութեան մը:

1 Բ. Տիմ. Ա. 6.

Գուցէ ոմանք հարցընեն, Թէ հոգևոր կրթութեանց առեն ո՞ր խոստովանութիւնը աւելի աղէկ է, ընդհանրակա՞նը՝ Թէ մասնաւորը: Կը պատասխանենք, որ եթէ աղէկ խոստովանահայր մը ընտրած, և խիղճերնիս ամբողջապէս անոր բացած ենք, կարելի եղածին չափ հոգիներուս վիճակը անոր հասկըցնելով, ան առենը աւելի աղէկ է անոր խորհուրդին հետևիլ: Կրնայ ըսուիլ որ սովորաբար քիչ շատ կատարեալ ընդհանրական խոստովանանք մը, կամ գոնէ վերջին ընդհանրական խոստովանանքէն ետքը՝ խղճի աղէկ սեռութիւն մը, հոգևոր կրթութեանց առեն շատ օգտակար ըլլայ: Միայն Թէ խոհուրդ կու տանք ասկից կրթութեանց առաջին օրերը ընելու, և ոչ Թէ բոլոր ժամանակը գրաւելու, անանկ որ ուրիշ գործքերու կամ ոչնչ և կամ շատ քիչ առեն ձնայ. որովհետև այսպէսով, ինչպէս կ'ըսէր սրբակեաց և խնամառուն կրօնաւոր մը, ալ կրթութիւն չէ ըրածնիս, այլ խոստովանութիւն:

302. Հոգևոր կրթութեանց կանոնաց հաւատարիմ ձշտութեամբ գործադրութիւնը՝ անոնց յաջողութեան համար՝ էական թէութիւն մըն է. ըստ որում այն կանոնաց մէջ կէտ մը չի կայ որ պարապ և անօգուտ ըլլայ, և ամենքը կատարեալ ամբողջութիւն մը կը կազմեն, որուն մէջ ամէն կերպիւ չանալու է երբէք չի սահելու: Երբեմն հոգևոր կրթութեանց մէջ ամենամեծ և կարևորագոյն չնորհքը, կանոններուն ըստ ինքեան երևելի չը կարծուած մէկ կէտին պահպանութենէն կը կախուի:

Երբէք առանց ամենածանր պատճառի պակսելու չէ հասարակութեամբ եղած ջերմեռանդութիւններէն. և առաքիւ բարի օրինակ մը չընծայէր, երբոր հոգևոր կրթութիւն ընդունողներուն մեծ մասը եկեղեցւոյ մէջ ժամերգութիւն ըսած առենը, ուրիշ մաս մըն ալ պարտէզին մէջ շրջագայելով՝ ժամերգութիւն կընէ. և չարագոյնը ան առենը կ'ըլլայ եթէ ժամերգութենէն ետքը միատեղ ժողովելով՝ շաղափողփէն, երբեմն Թէ հանգստեան ժամանակ եղած ըլլար: Աստուած առանկ աղմկալից սրտերուն չի խօսիր. « Եւ ոչ 'ի չարժման Տէր » [1]:

1 Գ. Թագ. ԺԹ. 11.

303. Իսկ քարոզները՝ Աստուծոյ խօսքին վայելուչ յարգութեամբ մտիկ ընել պէտք է: Քարոզն ներկայ եղած առենիս մէկ մտածմունք մը պէտք է որ գրաւէ մտքերնիս, այսինքն ամեն մէկ խօսքէն օգուտ քաղել, և փրկութեան ճամբուն մէջ յառաջ երթալու համար՝ գործնականապէս քարոզը մեզի սեպհականել:

Եթէ խնամատարութեամբ ուշենք քարոզչին խելքն ու գիտութիւնը դատել, եթէ կամ զարմանք մը յայտնենք և կամ քամահրանք մը, եթէ ուզելին միտ չը դնելով կեղևը քննելու ըլլանք. եթէ ամեն խրատ վերջը մնք մեզի չամփոփուինք, այլ անհամբերութեամբ հեռանալ խրատին սպասենք, հաճութիւնիս միայն քարոզչին ճարտարախօսութեան վրայ դնելով՝ միայն մարմնով ներկայ սիտոր գտնուինք հոգևոր կրթութեան, և ոչ Թէ հոգով ու սրտով, շնորհքները տարափի մը պէս վրանիս սիտոր անցնին, առանց անոնցմէ հոգևոր օգուտ մը քաղելու:

Ո՛ և իցէ քարոզ Թէև պարզ ու սովորական, և ոՀի ու խնամսոի կողմանէ ալ անշան ըլլայ, եթէ մենք ուզենք օգուտ քաղել, անիկայ մեզի համար գերազանց քարոզ մը կ'ըլլայ. ընդհակառակն ամենաճարտար և վեմ խնամսոներով լեցուն քարոզ մը՝ ամենևին օգուտ մը սիտոր չունենայ, եթէ քարոզչին վերջը աղէկ մը չի քննենք խիղճերնիս՝ պէտք եղած նորոգութիւնը ընելու համար: Ա յս ձշմարտութեանց վրայ համոզուած չըլլալով, կըրթութեանց բոլոր քարոզները պարապի կ'երթան:

Անոր համար քարոզչին այնպէս մտիկ ընենք երբև Թէ նոյն ինքն Յիսուս Քրիստոս ըլլար խօսողը. ամեն մէկ քարոզէ և խրատէ յառաջ, եռանդուն աղօթքով Աստուծմէ քարոզին ամեն մէկ խօսքերէն օգուտ քաղելու չնորհքը խնդրենք, ոչ միայն մեզի՝ այլ նաև բոլոր եղբայրակիցներուս համար ալ: Քարոզչին ևխրատին եղբը, մտքերուս մէջ զանունք որոշմանք. և ամեն կանքով Աստուծոյ առջին մտածենք, և հոգևոր կրթութեանց յիշատակարաններուս մէջ նշանակենք: Շատ անգամ սեմնուած են քահանայք՝ որ այն սուրբ օրերէն վերջը կ'ըսեն. — Ի՜նչ

սքանչելի կրթութիւն մ'ունենայնք, ինչ երևելի քարոզիչ, ինչպէս Ճարտարախօս, որչափ փորձառու մարդկային սրտին, և որչափ տեղեակ եկեղեցական նիւթերու։ Երբեք ասանկ կրթութիւն մը մեզի չէր տրուած։— Իոլըր ըսածն ալ ստոյգ կրնայ ըլլալ, միայն քարոզչին և տուած քարոզներուն նկատմամբ։ Բայց չի մոռնանք որ քարոզչին շատ աւելի մեզ ենք կրթութեանը աղէկ համ վառ ըլլալուն պատճառը. քարոզիչը շատ աղէկ կատարեց իր պարտքը, օրհնեալ ըլլայ Աստուած։ Սակայն մենք ալ մեր պարտքը կատարեցինք. ահաւասիկ եկանը։ Այս ինչ քահանան զարմանալի քարոզներ տուաւ, շատ աղէկ. բայց մեր ըրած հոգևոր կրթութիւնը չի կրնար աղէկ ըսուիլ, եթէ անկից յուսացած բոլորը օգուտները չի քաղենք։

304. Հոգևոր կրթութեանց մէջ ըզօսանքները շատ վտանգաւոր են, անոնցմով քանի մը վայրկեան ցնորման մէջ կորսընցնելու վտանգի մէջ կը դնենք՝ շատ գժուարին ամիսներ վաստկած շնորհքները։ Այս ըզօսանքներուս մէջ է, որ քարոզչին գատաքննութիւնները կ'ըլլան. այս ըզօսանքներուս մէջ է, որ Աստուած մեզի դնելով հազար տեսակ մտոհեաց վրայ կը խօսուի, որոնց մով գլուխնին լեցընելով յետոյ ջերմեռանդ գործքերու և ըզաղմանց, աղօթքի և քարոզներու առեն մտաց վրայ կը յարձակին ցնորեցընելու համար. նոյնպէս ըզօսանքի առեն է, որ գատ ու վէճ ծագելով եպիսկոպոսին հրատարակուած բարեկարգական օրէնքները կը գատուին ու կը քամահրին։— Երբեմն հոգևոր կրթութիւններ բոլորովին պարապ գային այսպիսի հրատարակմանց առթիւ և պատճառաւ. չատերուն քմայը յարմար չի գալով, ոմանց ապագային անհանգստութեան պատճառ երևնալով, ոմանք ալ այս կամ այն պատճառներու համար քամահրելով, ան առենը իւրաքանչիւր ոք եռանդեամբ իւր կարծիքը կը յայտնէր, և կ'աշխատուէր յաղաղ մղելու զայն. այն օրէնքները պաշտպանողներու հետ լեզուակռիւ մը կը բռնկէր գիմացինը համոզելու համար. հետևեալ ըզօսանաց առեն կրկին այս խօսակցութիւնը մէջ կը բերուէր, ինչուան նաև ըզօսանքէ գուրս կարևոր ժամանակներն ալ այսպիսի խօսակցութեանց կը զոհուէին. և ասանկով աղէկ կերպով սկսուած կրթութիւնը շատ գէշ վախճան մը կ'ունենար։ Որուն համար ներողամտութիւնն յուսալով խոնարհաբար կ'աղաչենք գեր. եպիսկոպոսին, որպէս զի հոգևոր կրթութեանց վերջին օրը հրատարակելու բարեհաճին կղերին վերաբերեալ սահմանադրութիւնները, մանաւանդ երբ քիչ մը հակառակութիւն գտնելու կասկածը ունենան։

Ըզօսանքներու մէջ սուրբ քահանային նմանելու չանանք. ինքը ըզօսանքի առեն ալ սուրբ է, ինչպէս ուրիշ ամեն առ և ամեն ժամանակ, անուշ ուրախութիւն մը երեսին վրայ փայլելով ամենուն ալ եղբայրսիրութեան և մեծաւորաց ալ յարգութեան օրինակ մըն է միշտ, անանկ որ իր ընկերութենէն փախչողներն ալ չէն կրնար զինքը չի գովել։ Եթէ ամիսներ և առանձնութեան խաստութիւնը կը թուլացընէ, ուրիշ բանի համար չէ՝ եթէ ոչ աղեղին լարը միշտ ձիգ չը թողլու համար, որպէս զի չի կտրի. եթէ քարոզչին վրայօք խօսք ըլլայ, միշտ անոր տուած բարի խորհուրդները կը յիշէ, և ոչ երբեք դատողութիւն կ'ընէ. եթէ իւր եղբայրակիցներուն հետ եպիսկոպոսին նոր սահմանադրութեանց վրայ խօսելու ըլլայ, ոչ երբեք քամահրելով, այլ միշտ անոնց օգտակարութեանը վրայ կը պնդէ։ Այս կերպով ըզօսանքը կը թողուշ, այնչափ եռանդով լեցուն՝ որչափ ուրիշ ըզօսանքներ եկած առեն. և այնպես պատրաստ բոլոր կրթութեանց ջերմեռանդութիւնները շարունակելու, ինչպէս որ եթէ ըզօսանքի և հանգստեան ժամերով երբեք ընդհատած չըլլար։

305. Հոգևոր կրթութեանց առեն այս կանոնները պահպանութիւնը էական կէտ մըն է։ Քահանայից վախնալու պատուհասներուն մէկն ալ իրաւացընէ անկարգութիւնն է. երբոր քահանայ մը կարգաւորեալ կեանքէ կը հեռանայ, այնուհետև ալ ըստ քմայ և ըստ բերման ժամանակին կ'ապրի։ Հազար պակասութիւններ

կ'ընէ. և եթէ բարիք մըն ալ ընելու ըլլայ, ան ալ պատահմամբ է, և շատ անգամ ըրած բարիքն ալ պատշաճ չէ: Ուրեմն եթէ կ'ուզենք որ հոգևոր կրթութեանց պատուին ու արդիւնքը սեռոզական ըլլան, պէտք է որ հոգևոր կրթութիւնները չի թողուին առանց կենաց կանոն մը շինելու, և առանց առաջի Աստուծոյ և անոր փոխանորդ խոստովանահարցս կերպապէս խոստանալու և առաջադրելու այն կանոնը միչեւ հետևեալ կրթութիւնը անխախտ պահելու:

Այսենևին չի մոռնանք որ «միշտ թերի են այն կրթութիւնները, որոց պատուղը իրենց չափ կը գիմանայ»: Կրթութեանց ալեկոծութիւնը ոչ ըրած աեւնիս, և ոչ ալ վերջին օրը յայտնի կ'ըլլայ. այլ կրթութենէ վերջը ունեցած վարքերէս պէտք է գտեւնք անոնց ալեկոծութիւնը:

Այդ, որպէս զի ապագան նեղկայնի հակառակ չի գայ, պէտք է որ կանոն մը շինենք, և զայն ճշտութեամբ պահելու խիստ պարտաւորութիւն մը դնենք վրանիս: Այնոր մէջ որոշելու ենք անկողնէն ելլելու աեւնը, մուծականի նուիրուած ժամանակը, պատարագ ըսելու, խոստովանութիւնները լսելու, հիւանդաց այցելութեան, առանձին քննութեան, հոգևոր ընթերցման, և բահանայից 'ի գործ դրած ուրիշ բարեպաշտական գործքերու և զբաղմանց ժամերը: Խոստովանանքի երթալու օրերնիս և ինչպէս խոստովանանք ըլլալնիս ալ նշանակելու ենք. մանաւանդ նշանակելու ենք նաև խաղ, զբօսանքի, ճանապարհորդութեան, հարկինքներու վերաբերեալ աեւնիերն ալ, և ոչ ալ զանց ընելու ենք յիչելու գլխաւոր պակասութիւնիս, և զայն ջնջելու համար գործածուելիք պատշաճ միջոցները:

Վերջապէս այս կանոններս շատ աղեկ կ'ըլլայ որ կրթութեան խոստովանահօր ալ ցոյց տանք, որպէս զի ուղածին պէս կամ հասատատ, կամ կերպաւորէ. և կրթութենէն վերջն ալ մեր սովորական խոստովանահօրը ծանուցանենք, որպէս զի կրցածին չափ օգնէ մեզի զանոնք ճշտութեամբ պահելու:

306. Կրթութենէն դառնալու աեւնիս, դարձեալ երթալու աեւնուան վտանգները յառաջ կու գան: Ի բաւականէ հոս արժան չենք աեւներ մնդելու, որ հոգևոր կրթութեանց ընորհքներովը նորոգուած, այս նորոգութեան նշան մը տալու ենք աւելի պարկեշտութեամբ, ընորհալի գնացքով և ամիսոմամբ, թէ խօսքերու և թէ արտաքին վարմունքներուս մէջ: Հոգևոր կրթութեանց երթալու աեւնիս ցոյց տուած մտաց ցնդութիւնիս՝ եթէ բարի օրինակ մը չէր տար, դառնալու աեւն ցոյց սըւաձնիս՝ իրաւունք գայթակղական կ'ըլլայ: Ասոի ամենայն արթնութեամբ հսկենք վրանիս, և բոլոր եղբայրական կիցներուս ցոյց տանք որ Պօղոս առաքեալին նման ընդունած ընորհքնիս շահեցուցեր ենք. «Եւ ընորհք նորա որ ի իս, ընդունայն ինչ ոչ եղեն»[1]:

Սովորական կենաց ընթացքնիս ձեռք առնելով՝ սուրբ եռանդեամբ սկսինք, և առաջին օրէն սկսեալ՝ ամենայն ճշտութեամբ կանոններուս հետևինք: Փոքր զանցառութիւնն ալ պակասութեան տեղ դնելով, իբրև ճշմարիտ յանցանք մը խոստովանինք: Աղաչենք խոստովանահայրնիս զօրաւոր կերպով և մանաւանդապէս մեզի օգնելու այս կամ այն կէտերուն նկատմամբ, որոնք կրթութեան աեւն կարևոր երևցած էին: Առանց օրինաւոր և ծանր պատճառի կանոնազանց գտնուած աեւներնիս, քիչ մը ծանրկեկ ապաշխարանք մըն ալ դնենք մենք մեզի: Իբրև թէ դեւ հոգևոր կրթութեանց մէջ ըլլայինք, այնպէս աշխատինք երկար աեւն եռանդնիս պահելու: Յիչենք, որ եթէ վարքերնիս փոխելու ըլլանք, ղմեզ չարժող ճշմարտութիւնները 'ի յաւիտեան կենդանի պիտոր մնան սրտերուս մէջ. «Ճշմարտութիւն Տեառն մնասցէ յաւիտեան»[2]: Եւ որովհետև կրթութեանց սուրբ և քաղցր զուարճութիւնները ճաշակեցինք, այնպէս ապրելու չարունակենք, իբրև թէ միշտ հոգևոր կրթութեանց մէջ ըլլայինք. որպէս զի կարող ըլլանք միշտ վայելել այն քաղցը հաճոյքը, և նոյն արդիւնքը վաստակել: Վերջապէս կրթութենէն դառնալնիս

1 Ա. Կորնթ. ԺԵ. 10: 2 Սաղմ. ՃԻԲ. 2:

Հաքը ունեցած հոգևոր վիճակներուս նկատմամբ երբեմն երբեմն համար տանք հոգևոր կրթուԹեանց առեն ունեցած խոստովանահարցս։

Շատ գերազանց սովորուԹիւն մըն է ասիկայ, բայց գժբաղդաբար քիչ հետևող ունի։ Սուրբ քահանայի մը առաջնորդուԹեամբ հոգևոր կրթուԹիւն ըրած ըլլալով, անոր ստուգիւ աւելի հաճելի բան մը չի կայ, եԹէ ոչ փոխագարձ նամակներով ձեռնտու ըլլալ մեզի այն կըրԹուԹեանց պատրաստը երկար առեն պահելու համար, որ երեն անուշ մխիԹարուԹիւն մը կը պատճառէ, և մեզի ալ մեծ օգուտ։ Ի՜նչ մեծ երջանկուԹիւն, եԹէ այսպէս ապրելով մինչև հետևեալ հոգևոր կրթուԹիւնները, երԹայինք նոր և առատագոյն շնորհքներ առանալու։

307. Հոգևոր կրթուԹեանց միջոցը շատ երկար ըլլալով, և այս միջոցներուս մէջ շատ շուտով դաղջուԹեան հակումնիս զգալով, հոգևոր վարդապետները կը խրատեն և սուրբ քահանայք ալ հաւատարմաբար ի գործ կը դնեն ամենաշահաւէտ սովորուԹիւն մը, զոր երբև այս դիտուն պակ հոս կ'ուզենք դնել։ Այս սուրբ սովորուԹիւնը «ամսական կրթուԹիւն» կ'ըսուի, որուն մէջ ապրելու հոգևոր կրթուԹեանց պես կրկին կազդուրուելու և նորոգուելու ջանքեն զատ, մահուան ալ պատրաստուԹիւն կը տեսնուի։ Այհաւասիկ ընելուն մէկ դիւրին կերպը։

Ամսական կրթուԹեան համար որոշուած աւուր նախընԹաց իրիկունը, ընԹրիքեն յառաջ ամենասուրբ ՀաղորդուԹեան այցելուԹիւն մ'ընելու է, այս կրթուԹիւնը աղէկ ընելու շնորհքը Աստուծմէ խնդրելով. «Ե՛կ սուրբ Հոգի, Ողջոյն մը և Վարդապետը» կը զուգորդի նոյն դիտումով, և պատշաճ աղօԹքներով պահապան հրեշտակներուս և պաշտպան սուրբերուս ալ օգնուԹիւնը խնդրելով։

Հետևեալ օրը առտուն կանուխ և եռանդով մը անկողինեն էլլել, ցխստեան այս աշխարհքին մէջ գըտնուած առեն արԹընալու դիտաւորուԹեամբ և միաւորուԹեամբ։

Պատարագի առեն հոգևոր հաղորդուԹիւն ընել Թոշակ առնելու դիտաւորուԹեամբ, և գոհուԹեան աղօԹքներու առեն նորոգելու հնչ քահանայական խոստմունքնիս և ուխտերս, այնուհետև մեր հեղգուԹեան և գաղջուԹեան գլխաւոր պատճառները մտածելով։

Օրուան ընԹացքին մէջ աստուածպաշտուԹեան գործոց և ղբաղմանց աւելի հաւատարիմ ըլլալ, որոց մէջ մոռնալու չէ նաև հոգևոր ընԹերցմունքը։ Այսկից վերջը որոշել այն կէսը՝ որուն դէմ անցած կէտնքերուս մէջ աւելի յաճախ պակասաւոր գտնուած ենք, և որուն աւելի հաւատարիմ կ'ուզենք գտնուիլ հետևեալ ամսոյն մէջ։ Վերջապէս այցելուԹիւն մ'ընել ամենասուրբ ՀաղորդուԹեան և մահուան պատրաստուԹիւնը տեսնել։

Այհաւասիկ մահուան պատրաստուԹեան ալ գլխաւոր գործողուԹիւնները, զորոնք այս դիտմամբ գրուած գրքերէ քաղելով՝ հոս կը դնենք ի դիւրուԹիւն ընԹերցող յարգելի եղբայրակիցներուս։

Ա. Կէս ժամ, կամ աւելի աղէկ՝ ժամ մը մտածական աղօԹք հետևեալ կէտերուն վրայ. — Ինչ է մահը. — մահուան նկատմամբ ինչ տեսակ կեանք անցուցի. — մահուանս կէսին ինչպէս ապրած ըլլալու պիտոյ վախեցէի. — բարի մահ մ'ունենալու համար ինչ միջոցներ գործածելու եմ։

Բ. Զմահը սիրով յանձն առնուլ, աստուածային սուրբ կամաց համակերպուԹեան, ապաշխարուԹեան և կրօնից համար, և այլն, որոնք որ առ այս աւելի պատշաճ կ'երևին։

Գ. Զերմեռանդ աղօԹքով Աստուծմէ աղէկ մեռնելու շնորհքը խնդրել։

Դ. Վերջին օծման սուրբ խորհրդոյն մատակարարուԹեան և հոգեվարուԹեան աղօԹքներուն մէկ կամ մեծ մասը կարդալ։

ԱմենաբարեգուԹ Աստուածը, առատաձեռն ողորմուԹեամբ իր շնորհաց պարգևները Թափէ այս գլուխը կարգացողներուն գլխուն, և հոս ըսածներս՝ հոգևոր կրթուԹիւն ըրած առեններն արդիւնաւոր կերպով յիշելու շնորհքը տայ անոնց։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Սուրբ խորհրդոց մատակարարութիւն — Անոր այս հարկաւոր տրամադրութիւնները — Ինչպէս կարող ըլլայ ասիկայ քահանայի մը ձեռքը սրբութեան զօրաւոր միջոց մ'ըլլալ։

308. Հոստեղ խորհրդոց մատակարարութեան վրայ քանի մը խօսք զուարճալու սահպուած ըլլալով, մնացեր ինչ « վարդապետօրէն » ձառ մը չունենալ չէ, որով հասկըցունենք թէ ինչպէս այս խորհուրդները ղրկենք ընդունողներուն վրայ իրենց ազդեցութիւնը կ'ընեն. ասիկայ մեր նպատակէն դուրս է։ Քահանային ընելիք աստուածպաշտութեան սուրբ գործքերուն վրայ խօսած առենիս, մեր դիտմունքը քահանային անձնական սրբութիւնն է, այնպէս որ հաւատացելոց սրբութիւնը՝ երկրորդական խնդիր մը կ'ըլլայ։ Ուստի ուրիշ բան պիտոյ չընենք հոս, եթէ ոչ յիշել քահանայից՝ որ խորհրդոց մատակարարութիւնը մեքենայօրէն կատարելու չեն, և ոչ ալ կարծեն որ կարգաւորեալ ըլլայ, երբ հակառակ չէ աստուածաբանական սկզբանց, որոնք օրինաւոր մատակարարութիւնը կ'ապահովցընեն. որով այսպիսի կարևոր պաշտօն մ'իրենց անձնական սրբութեան զօրաւոր միջոց մը գործածելու անհոգ ըլլան։

Սուրբ քահանան, որ ամէն բանէ օգուտ քաղել կ'ուզէ կատարելութեան մէջ յառաջ երթալու համար, կրնայ արդէօք ամէն վայրկեան մատակարարած սուրբ խորհրդոց առատ շնորհքները այլոց հաղորդել, առանց իրեն ալ օգուտ մը քաղելու։ Ասիկայ կարելի բան չէ։ Սուրբ քահանան երբեք չի Թողուր որ ուշադրութեան չար սովորութիւնը իւր աստուածային պաշտօնին արդիւնքը գողնայ. և նոյն իսկ այն գործոց մէջ, յորում հաւատացելոց սրբութիւնը գլխաւոր և ուղղակի նպատակ կ'ըլլայ, սուրբ քահանան ինքը զինքը կը մոռնայ, և ըրած ամէն մէկ գործքերը՝ իւր հոգևոր յառաջադիմու-

թեան և կատարելութեան համար՝ իբրև մէկմէկ զօրաւոր միջոցի տեղ կը ծառայեցընէ։ Թէ դիտաւորութեան և թէ վարմունքին մէջ իրեն նմանելու չանանք։

309. Սուրբ խորհրդոց մատակարարութեան առեն մոքերնուս ներկայացընելիք առաջին մոռածմունքնիս անոնց սրբութիւնը ըլլալու է։ Յիսուս Քրիստոս իւր եկեղեցին հիմնելով՝ խորհուրդներէն աւելի Թանկագին և սուրբ բան մը չի Թողուց անոր։ Անկէ հրեշտակաց ալ, մարդկանց ալ զարմանալի երկու սքանչելիքը, այսինքն մեղքերը արձակելու և հոգիները Յիսուսի Քրիստոսի ամենասուրբ մարմնով և պատուական արեամբ մնուցանելու իշխանութիւնը, երկու զատ խորհուրդ չեն արդեօք։ Ամէն օր կը քարոզենք Ժողովրդեան որ խորհուրդները շնորհաց աղբիւր և առուակներն են. և բոլոր շնորհքներուն Յիսուսի Քրիստոսի ամենասուրբ արեամբ արժանացած ըլլալով, այն շնորհքները մեղի հաղորդող խորհուրդներէն աւելի սուրբ բան մը չենք կրնար երևակայել։

Արդ, սուրբ բաները սրբաբար պէտք է կատարուին, Կարթագինեայ չորրորդ Ժողովքին յայտնի վարդապետութեանը համաձայն, « Որոց ոչ են սուրբք, չէ պարտ ձեռնամուխ լինել ի սրբազան իրս »։ այսպէս ալ ըսելու է, Թէ այն քահանան՝ որ իւր պաշտօնին պարտաւորութեամբ՝ եկեղեցւոյ մէջ եղած ամենասրբազան խորհուրդները պէտք է կատարէ, ընտիր և սուրբ անօթ մ'ըլլալու է։ Ասոր համար է որ սուրբ առաքեալը պաշտօնական կերպով կը յիշեցընէ որ վարքերնիս այն աստիճան կատարեալ ըլլալու է, որ Ժողովուրդը տեսածին պէս՝ հասկընայ աստուածային խորհրդոց արժանի մատակարար ըլլալնիս. « Անդնպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրև զպաշտօնեայս Քրիստոսի և հաղարապետս խորհրդոցն Աստուծոյ »[1]։

310. Իսկ մեր ծանր մատանութեան պատճառ եղողը, այս ամենասուրբ իրաց հետ այնչափ գիւրութեամբ ստացուած ընտանութիւնն է, երբ հաւատքնիս

1 Ա. Կորնթ. Դ. 1։

անդադար չենք կենդանացըներ հաւատոյ գործքերով, անոր առաքարկած Ճշմարտութեանց մտածականներով և Ճշմարիտ քահանայական վարքով մը: Այս տեսակ կեանք մը մնուցանելով և Աստուծոյ համար ալ աշխատելով, սուրբ քահանան անկից հեռու գանուելուն համար շատ անգամ ալ կ'ողբայ. Ինչ պիտոյ ըլլայ հատա էէ թէ չար քահանան՝ որուն վիճակը յայտնի է, այլ գաղջ, ծոյլ և հեղգ քահանան, որ ամենասրբազան բաներու մէջ ալ չի շարժիր և անղթայ կը մնայ: Այն մտատկարարած օգուտտալու խորհրդոյ հետ ընտանութենիս, ունակութիւն ըրած քահանային աստուածպաշտութեան մինչև արմատներն անգամ կը չորցընէ: Ասկից պիտոյ ընդունի այն խիստ տպաւորութիւնները, որոնք միայն հոգւոյն վրայ մեծամեծ ազդեցութիւն ներ կ'ընեն, եթէ իր կատարած սրբազան պաշտօնէն չի շարժիր:

Ասոնք անդադար և խիստ պատերազմով մաքառինք ունակութեան դէմ, մտատկարարած խորհուրդնիս շատ անգամ մտածականներու և հոգւոյ ընթերցմանց նիւթ ընենք. և եթէ այս վտմ խորհրդոյ հետ, և կամ մեր բարեպաշտական գործոց մէջ ընտանութեան ատեր մըն ալ նշմարելու ըլլանք, խիստ յանդիմանութիւն մ'ընենք մենք մեզի, հաւատոյ զօրաւոր և ազդու մտածմունք մը մտքերնիս բերելով, և մտքերէս հանած խորհրդոյն սրբութեան վրայ գոնէ կարճառօտ խորհրդածութիւն մ'ընելով:

311. Այս ազդարարութիւնները այնչափ աւելի կարևոր են, որչափ որ հաւատարմութեամբ 'ի գործ դնելով ոչ միայն մեր անձնական սրբութեանը պիտոյ ծառայեն, այլ հարկաւոր հետևութեամբ, նոյն իսկ հաւատացեալներն ալ մեր տրամադրութեան մէջ իրենց համար ընորհաց առաւելութիւն մը պիտոյ գտնեն:

Մենք ոչ երբեք միայն մեզի համար սուրբ ենք, այլ մեր սրբութիւնը կերպով մը վկայ եղողներուն ալ կը հաղորդուի: Եւ ասկից դվնաւորապէս սուրբ խորհրդոյ մատակարարութեան մէջ յայտնի կ'երևի: Որչափ

մեծ տարբերութիւն կը տեսնուի երկու քահանայից մէջ, որոց մէկը ջերմեռանդաբար և հաւատոյ աղդած արժանաւորութեամբ կը մատակարարէ, և միւսն ալ պաղ անհոգութեամբ ու մեքենայօրէն և սովորութեան համար: Առաջինը կը շարժէ և կը չինէ իւր շարժուածքին ծանրութեամբ, նոյն իսկ ձայնին հնչմամբ և բոլոր արտաքին ընորհալից վարմունքովը. մինչդեռ երկրորդը ամենևին ազդեցութիւն մը չընէր. ընելու ալ ըլլայ, չար ազդեցութիւն մը պիտոյ ընէ, թերհաւատկութեան և այն շտապին համար՝ որ շատ յայտնի կերպով կը մեկնէ աստուածային ծառայութեան վրայ ինչ ատելձան յարգ ու հոգ ունենալը:

Ջննեցէք սուրբ և գաղջ քահանաները խոստովանարանին մէջ և կամ հիւանդաց անկողնոյն քով: Երկուքն ալ մի և նոյն խորհուրդները կը մատակարարեն, բայց ինչպիսի՜ տարբերութեամբ: Սուրբ քահանային խոստովանողքը սրտերնին ի գութ և ի ղջուժ շարժած՝ խոստովանարանէն կը մեկնին. իսկ գաղջ քահանայիններէն, ինչպէս որ եկած էին՝ այնպէս ալ կը բաժնուին, պաղ ու անղթայ: Սուրբ քահանային այցելած հիւանդները՝ (իրեն եռանդուն և հոգեկից յորդորիչ ընորհիւը) աղէկ տրամադրուած, իրենց մեղքերուն վրայ ալ ցաւով ու մի և նոյն առեն ալ Աստուծոյ ողորմութեանց վրայ վստահութեամբ լեցուն են. մինչդեռ գաղջ քահանային հիւանդները՝ գրեթէ անհոգ և երեսի վրայ ձգուած են, որովհետև իւր խօսքերը աստուածպաշտութեան օծութենէն և կենդանի հաւատքէ զուրկ ըլլալով՝ մինչև հիւանդին սիրտը չեն հանիր զանիկայ շարժելու համար:

312. Ի՞նչ ընելու ենք ուրեմն որ խորհրդոյ մատակարարութիւնը թէ մեզի և թէ հաւատացեալոց սրբութեան միջոց մ'ըլլայ: Ամիկայ վերջին աստիճանի սուրբ գործք մ'ըլլալով, իրեն նման սուրբ գործոց պէս հեռաւոր և մերձաւոր պատրաստութիւն մը կը պահանջէ:

Հեռաւոր պատրաստութիւնն է ընդհանրապէս ջերմեռանդ և կարգաւորեալ կենաց ընթացք մը: Գաղջ և

ծոյլ քահանան երբէք չը կարենայ պիտոյ պատշաճ կատարելութեամբ մատակարարել զնորհուրդները։ Անոնց գերազանցութեանն խելքը չը հասնելով, հաղիւ թէ անորոշ և հարևանցի գաղափար մը պիտոյ ունենայ անոնց արդեանցը վրայ. երբէք պիտոյ չը ղգայ սրբութեամբ ապրելով՝ անոնց զարմանալի արդիւնքը աճեցընելու և ապահովցընելու կարօտութիւնը. ամենևին իր վարած պաշտօնին վրայ պիտոյ չունենայ այն կենդանի հաւատքէն յառաջ եկած վսեմ ղգայմունքը, եթէ անոր լուսոյը մոռնայը «աստուածային խորհրդոց հաղարապետութեան» պաշտօնին բարձրութիւնը։ Նմանապէս և ղուրկ պիտոյ ըլլայ այն խորին խոնարհութենէն՝ որ պիտոյ ունենար, և միայն կրնայ ունենալ ընդհակ աստուածային պաշտօնին համեմատութեամբ իւրաքանչիւր ոչնչութիւնը և անարժանութիւնը մոռնալով։ Միայն սուրբ քահանան ունի այս ղգայմունքը. ուստի մենք ալ անհրաժեշտ սուրբ ըլլալու ենք, որպէս զի նոյն ղգայմունքը ունենանք։

Այսչ զատ հեռաւոր պատրաստութիւնը կը կայանայ նաև հոգւոյ փրկութեան համար ունակացեալ երանդեամբ և փափագով բորբոքուած ըլլալնուն վրայ։

Որ և իցէ խորհրդոյ մը մատակարարութիւնը ամենամեծ երանդեան և առաքինութեան գործք մըն է։ Սուրբ քահանան, որ հոգւոց փրկութեան համար (զարմանալի գործնէութեամբ) ամէն բանի կը հասնի, խորհուրդ մը մատակարարելու համար սաստիկ երանդով կը վառի։ Ամենէն աւելի հոս Յիսուսի Քրիստոսի Հնմարիտ փոխանորդը կը սեպուի. և յիշելով որ այս աստուածային Փրկիչը իւր մահկանացու կենաց մէջ հոգւոց փրկութեան համար ամենևին բան մը չի խնայեց, և այս սուրբ խորհուրդները մեզի պարգևեց, որպէս զի անոնց միջոցաւ չարութենէնք անոր աստուածային առաքելութեան պաշտօնը, այն երանդուն աշխուժով կը մատակարարէ՝ որով միշտ բորբոքուած է։ Այս ամենասիրելի նախատոլին նմանութեան ստուերն անգամ կը գտնուի արդեօք այն ծոյլ և հեղգ քահանային վրայ, որ ցամաք

աչքով կը դիտէ իւր բոլորտիքը ապրող այնչափ մեղաւորաց ողորմելի վիճակը։ Այս մեղաւորները փրկել, ահաւասիկ վախճանը. զանոնք ապաշխարութեան և սուրբ Հաղորդութեան մտերնալոյս համոզել, ահաւասիկ միջոցը։ Ի՞նչ երանդ կամ ի՞նչ յօժարութիւն կրնայ ունենալ առ այս ծոյլ քահանան, եթէ քահանայութեան զմեղաւորները փրկելու մեկ հասիկ վախճանը զինքը չի շարժեր։

313. Իսկ մեծաւոր պատրաստութիւնը նախ և յառաջ ընորհոց վիճակի մէջ գտնուելու վրայ կը կայանայ, որ միանակ բաւական է հակըցնելու մեզի խորհրդոց ինչ աստիճանի սուրբ ըլլալնին, երբ զանոնք մատակարարելու համար հարկաւոր է գոնէ գոնէ ծանր մեղքէ ազատ ըլլալ, մարդ կը սոսկայ մոռնալով այն սրբապղծութենէնց չղթան, որ կը գործէ այնպիսին՝ որ մահու չափ մեղքով աղտեղացած խղճով զնորհուրդները մատակարարելու կը յանդգնի։

Ամեն վայրկեան խորհուրդ մը մատակարարելու հարկաւորութիւնը կը ներկայանայ, և շատ անգամ ալ շուտով և փութով մատակարարելու սահպուած ըլլալով, ինչ դժբաղդութիւն եթէ միշտ ըստ պատշաճի պատրաստ չի գտնուինք։

Մեծաւոր պատրաստութեան կը վերաբերի նաև ջերմեռանդ աղօթքը. չէ թէ առանց ուշադրութեան և ղգայմանց միայն թուաթակի նման պատկունքներու չարժմամբ ձևացած խօսքեր, այլ ճշմարիտ աղօթք։ Եւ իրօք անվայել բան մը չէր ըլլար արդեօք երբեմն աշխարհային ղբաղմունքներէ, անոտի ընթերցմունքէ մը, և կամ աւելի անոտի խօսակցութենէ մը վերջը ապաշխարութեան սուրբ առեանը երթալ՝ մեղքերը արձակելու և այնչափ ողորմելի մեղաւորները ընորհոց ճամբուն մէջ ուղղելու, առանց նախ Աստուծոյ օգնականութիւնը խընդրելու այսպիսի սուրբ և ահաւոր խորհրդոյ մը մէջ։ Սուրբ քահանան երբէք այնպէս չի վարուիր։ Հաղիւ թէ կ'իմանայ որ խորհուրդ մը մատակարարելու հարկաւորութիւն կայ, մոքին մէջ շուտ մը կ'արթընանայ հա-

ատոյ մտածմունք մը, որ կատարելիք գործոյն սրբու-
Թիւնը կը յիշեցնէ երեն: Այս մտածմունքը սրտին մէջ
հաստատելով՝ խորին կերպով կ'ամփոփուի, եւ անար-
գութեան մտածմունքով կ'ոչնչանայ, և երբեք անարժան
գործիք մը Աստուծոյ ձեռքը կը յանձնուի. և Աստուած
ալ իր շնորհքները առատապէս կու տայ, և անոր ձեռ-
քով ողորմութեան և փրկութեան սքանչելիքներ կը
գործէ:

Մերձաւոր պատրաստութեան մէկ մասն ալ դիտա-
ւորութեան մաքրութիւնն է, որ արդէն հիմայ ըսած
աղօթքներէս յառաջ եկած կ'ըլլայ. բայց պէտք է դար-
ձեալ նորոգել և զօրացընել, մանաւանդ ինչ ինչ խորհըր-
դոց մատակարարութեան առեն՝ որոց մէջ շատ դիւրին
է ուրիշ դիտաւորութեանց յարակցութիւնը: Հոգի
փրկելէ զատ ուրիշ բան մը չը դիտել, զմեզ մոռնալ միայն
զԱստուած մտածելու համար, Յիսուսի Քրիստոսի հետ
միանալ և մէկ բան մ'ըլլալ, որուն որ պաշտօնեայ կը
դանուինք. մի և նոյն կերպով ընդունիլ աղքատներն ալ՝
հարուստներն ալ. սուրբ եռանդեամբ Թռչիլ՝ ուր որ
խորհուրդ մ'ընդունելու կոչուած ես և իւրմէկը կանչե-
լու ըլլայ. ահաւասիկ մաքուր դիտման նշաններըը, որոց-
մէ զուրկ դանուած առեններս, ըսել է թէ բնականապէս
ուրիշ մարդկային կամ անցաւոր բարեաց վախճան է, և
կամ անպարծութեանէ յառաջ եկած դիտմունք մը կայ:

Վերջապէս մերձաւոր պատրաստութեան մէջ կը բո-
վանդակուի նաև արտաքին վարմունքներուս պարկեշ-
տութիւնը: Խորհուրդ մը մատակարարելու պատրաս-
տուած սուրբ քահանային պարկեշտ և ամփոփ վարմուն-
քէն աւելի օրինակ տուող և չնչին բան մը չի կրնար ըլ-
լալ. իր ամէն գործքերը իբրև թէ մէյմէկ հաւատոյ ներ-
գործութիւն ըլլային, միայն տեսնուելու առեն մարդ
կը տիպտիպ ըսելու՝ թէ սուրբ է: Աչքերուն պարկեշ-
տութիւնը, խոստովանարանը, կամ մկրտութեան աւա-
զանը, և կամ Յիսուս տալու համար սեղանը երթալու
առեններ՝ դնացքին ծանրութիւնը, մէկ խօսքով բոլոր ան-
ձը՝ ներկայ եղողներուն սրտին կը դպչի, և ի յարգու-

Թիւն ու հաւատոյ մտածմունքներու կը չարժէ: Նոյն
բանը կրնանք ըսել նաև չար կամ գաղջ քահանային
նկատմամբ ալ: Եթէ սուրբ քահանան իւր ներկայու-
Թեամբ յարգութիւն և ջերմեռանդ մտածմունքներ կ'ազ-
դէ, ասկից ինչ կ'ազդէ իւր դնացքին և վարմունց անվա-
յելչութեամբ:

Ուսոյ մեծ զգուշութեամբ հսկենք վրանիս, և ստէպ
մտածենք այս ծանր և սոսկալի խօսքերը. « Անիծեալ
լիցի՝ որ գործէ զգործ Տեառն հեղգութեամբ » [1]:

314. Եթէ այս խորհուրդներուս հետևի մէկը ամե-
նայն հաւատարմութեամբ, ամենևին խորհուրդ մը չի
մատակարարուիր առանց իրեն հոգևոր օգուտ մը քաղե-
լու: Բայց գժբաղդաբար շատ անդամ չենն հետևիր: Ընդ-
հանրապէս միայն այն արդիւնքը կը մտածուի, զոր այս
խորհուրդները ընդունողին կը շահեցընեն. մանաւանդ
Թէ շատ անդամ մատակարարելու չար սովորութիւննիս
այս մտածմունքներս ալ կը գողնայ՝ և ան առենը, ինչպէս
ուրիշ անգամ ըսած ենք, մեքենայօրէն և անմտադրու-
Թեամբ կը կատարենք պաշտօններուս ամենասրբազան
գործքերը:

Այս գործք մը սովորաբար ընելու չար ունակու-
Թիւնը ջնջելու և խորհրդոյ մատակարարութենէն մեզի
ալ մանաւոր օգուտ մը շահելու համար, հարկաւոր է
որ խորհուրդ մը չը մատակարարած՝ մենք մեզի մտածենք
և մեր վրայ խօսինք:

Ըսածներս բացատրենք ամէն մէկ խորհրդոյ վրայ մէյ-
մէկ խօսք զրուցելով:

315. Չար օրինակ, մկրտութիւն մ'ընելու կան-
չուած եմ. եթէ այս վերոյիշեալ կանոնները'ի գործ դրի,
միտքս եկած առաջին մտածմունքը պիտոր ըլլայ, որ ես
սատանային ձանկէն հոգի մ'առնելու և Աստուծոյ
տալու համար կ'երթամ: Հաւատոյ աչքով ամենակարևոր
բան մը: Այս մտածմունքով լեցուած, զոր միշտ ներկայ
ունենալու եմ՝ եկեղեցական հոգիս աւելի բորբոքելու
և աստուածապաշտութիւնս աւելի եռանդուն ընելու

[1] երեմ. խը. 10:

համար, հարկաւ յառաջուց պատրաստուելեան համար ջերմեռանդ աղօթք մը կ'ընեմ, բոլոր արարողութեան առեն՝ ծանր, պարկեշտ և հնորհալի վարմունք մը կ'ունենամ։ ԵՒ միշտ այն մտածմունքը ինձի առաջնորդ ունենալով պէտք է յիշեմ, որ ես ալ սուրբ պատարագը վերսին Աստուած ծնայ, և սատանային ազատեցայ։ պիտոր մտածեմ, որ իմ յանցանքներուս ինչպիսի դժբաղդութեան մէջ ինկայ։ ան առենը պէտք է յիշեմ Աստուծոյ ինձ ըրած երկրորդ պրոտեւեան, այսինքն ապաշխարութեան մեծ և ծանրագին հնորհքը։

Մինա կողմանէ այն խորհրդոյն մատակարարութիւնը իբրև եկեղեցական հոգւոյ գործք մը մտածելով, հոգածնին համար՝ որուն հոգւոյը հայրը եղած եմ, պիտոր աղօթք ընեմ, և դանիկայ մանաւոր կերպով պիտոր յանձնեմ Յիսուսի և Մարիամու, պաշտպան ըլլալնէ սուրբերուն, և բարի պահապան հրեշտակին՝ զոր հաւատոյ աչքերով արարողութեան ներկայ կը տեսնեմ։

Վերջապէս եռանդս քանի մը սուրբ խօսք պիտոր դնէ պարհուհքներուս վրայ, զորոնք կենդանի հաւատքով ըսելով միշտ բարի տպաւորութիւն մը պիտոր ընեն հանդիսականաց վրայ, որոնք կը բաժնուին կրօնքին և անոր պաշտօնէին վրայ մեծ յարգութեան զգացմամբ։ որ երբեք տեղի պիտոր չտնենար, եթէ այս դըժխուն մէջ աւանդած խորհուրդներս ի գործ չի դրուէին։

316. Խոստովանանքը լսել պէտք է։ պարագային մէջ քիչ մը փոփոխութիւն կը մտնէ, բայց ըստ էականին իմ վարմունքս միշտ մի և նոյն է, եթէ վերը ըսուած սկըզբունքներով կառավարուիմ։ Խոստովանողանը երթալուս առիսուած ըլլալով, փոխանակ հարևանցի կերպով և առանց հաւատքի մտածմանց ընելու, խոստովանանք լսելու կ'երթամ, (ինչպէս որ գործաւորը մը կ'ըսէ՝ աշխատելու կ'երթամ, կամ բժիշկ մը՝ հիւանդ տեսնելու), պէտք է ըսեմ։ Օրհնեայ ըլլայ Աստուած, ահաւասիկ հոգի փրկելու կ'երթամ։ Այս մտածմունքով լեցուն, չէ թէ դանդաղելով, այլ անմիջապէս. չէ թէ անկրթութեամբ, այլ յօժարութեամբ. չէ թէ խոժոռ դէմքով և մրմնջելով, այլ ուրախ ու զուարթ երեսով պէտք է երթամ։

Ուրիշներու սրբութեամբը ևս սրբացընել ուզելով՝ խորանին առջև կրցածս չափ ջերմեռանդ աղօթք մը կ'ընեմ, և ձայնաւոր աղօթքէն զատ քիչ մըն ալ մտածական կ'ընեմ. քանի մը օգնութեան հառաչանք երկինք կը խաբեմ, աղեկ մը դիտաւորութիւնս կ'ուղղեմ և իմ սիրտս Յիսուսի սրտին մէջ կը դնեմ, որպէս զի նա ընդհանուր կրակովը զայն բորբոքէ։

Այնուհետև հրեշտակային պարկեշտութեամբ դէպ ի խոստովանարանը կ'երթամ, և դատաւորէ մը աւելի՝ հոր պէս կ'երթամ։ յարատևութեամբ Աստուծոյ հետ միացած կը մնամ, ուսկից զժուարութիւն կամ տարակոյս մը ծագելու առեն՝ հարկ եղած օգնութիւնը կը խնդրեմ։

Բայց այսպիսի խորհրդոյ մը մատակարարութենէն աւելի օգուտ քաղելու համար, այլոց մեղքերը լսած առենս՝ խիղճերուս վրայ կը մտածեմ. սաստիկ զղջման զգացմամբ պիտոր յիշեմ եթէ խոստովանութեան մէջ լսածներէս աւելի ծանրերը գործած եմ. ապա թէ ոչ սրտանց կ'օրհնեմ զԱստուած, որ իւր ողորմութեամբը ևս անոնցմէ հեռու պահեց։

Եթէ պատահի որ այն սուրբ անձանց խոստովանութիւնը լսեմ, որոնք լալով ու ողբալով այնպիսի բաներ իրենց մեղք կ'ամբաստանեն, որ հազիւ թէ մեղքի անունը կրելու արժանի են, պէտք է որ ի խոր խոնարհիմ, մտածելով այնչափ պակասութիւնները՝ զորոնք ամեն օր կ'ընեմ առանց խիղճ ընելու։ Շարունակաբար վրայ ըլլալով ընորհաց այն աքանչելեաց, որոց ես իսկ միջոց և գործիք եմ. պէտք է յիշեմ, որ ես ալ ամենայն ինչ աստուածային ողորմութեան պարտական եմ, որուն համար ալ պէտք է որ ընորհակալ ըլլամ։ Մարդկային սրտին նկատմամբ ըրած գործնական ուսումս, պէտք է իմ վրաս ղգաստութեամբ մտածելու սովրեցնէ զիս, որպէս զի ըրածս հաւատոյ հոգւով ընեմ և ոչ թէ ունայնութեան մը համար։ Անկոց գործքերէն միշտ նորանոր բա-

նեը սորվիմ ինձի համար: Յայսմ մասին սուրբ քահանան անձնական սրբութեան միշտ անսպառ աղբիւր մը կրնայ դանել:

Ուսոի մեծապէս կը սխալին անոնք, որ կը կարծեն թէ խորհուրդները միայն ընդունողներուն կրնան օգտել: Սուրբ ըլլանք, և մեր մատակարարած ամէն խորհուրդն՝ օր ըստ օրէ աւելի սրբութեան աղդու և զօրաւոր միջոց մը պիտոր ըլլայ ձեռքերնիս: Օր մը յարգելի քահանային մեկը կ'ըսէր մեղի. — Եթէ խոստովանութեան. սուրբ առեղին մէջ, աչքիս առջև պատահած աքանչելի դարձերէն զատ՝ ուրիշ ապացոյց մը ջուններայի կրօնքիս աստուածային ըլլալուն վրայ, ասկից միտակ բաւական էր հաւատքիս վրայ ապահով ըլլալու համար: —

317. Հապա ամենասուրբ Հաղորդութեան խորհրդոյն մատակարարութիւնը, մեղի այսպիսի աքանչելի խորհրդոյ մը պաշտօնեչյս համար առատ հանք մը չէ՞ արդեօք, զոր հաւատոյ հոգին մեղի հանել կու տայ թէ մեր և թէ այլոց սրբութեանը համար:

Թէ խոստովանարանին, թէ ամպիոնին և թէ առանձին խօսակցութեանց մէջ ջհաւատացեալները յաճախ Հաղորդութեան սուրբ խորհրդոյն մասնակցելու զօրաւոր փաստերով համոզելէ վերջը, անոնց առ այն պէտք եղած տրամադրութիւնը և պատրաստութիւնը քարոզելէ, և քաղաքելիք պատուղներուն անչափութիւնը սորվեցընելէ վերջը, այս օգոստափառ խորհրդոյն նկատմամբ մեղի ալ գործնական վարդապետութիւն մը պիտոր չի պակսիր արդեօք: Ֆիչ կը մնայ որ հաւատանք չատերուն այսպիսի ծանր, հանդիսաւոր և ամենասուրբ խորհրդոյ մը մատակարարութեան մէջ ցոյց տուած չատալին և երևելի անտարբերութեան պատճառաւ:

Բայց նաև հոս ալ միշտ սուրբ քահանան է, որ մեղի կը սորվեցընէ թէ ինչպէս եռանդը առատ հունձք մը կը գտնէ հոն, ուր ունակութիւնը և չար սովորութիւնը դատարկ և ձեռնունայն կ'ելլեն: Ինքը իրեն սեպհական պարկեշտութեամբ և սուրբ մտածմունքնե-

րով լեցուն սեղանը կ'երթայ, ջերմեռանդ ահով մը տապանակին դռնակը կը բանայ, աղուոր ծնրադրութիւն մը կ'ընէ, որով յայտնի կը տեսնուի սրտին մէջ զգացած ջերմեռանդութիւնը. կը դառնայ հաւատոյ հոգւով օրհնելու զանոնք՝ որ այսպիսի հացի կերակրով մը պիտոր կերակրէ: Կ'առնէ զսուրբ նշխարը բոլորովին յարգութեամբ և սիրով լեցուն, և այնպիսի ջերմեռանդութեամբ կ'ըսէ «Ահա գառն Աստուծոյ», և այլն, որ կարծես թէ յայտնապէս կը տեսնէ քարոզած Աստուածը. սեղանին աստիճաններէն այնպէս կ'իջնէ՝ ինչպէս հրեշտակ մը երկնքէն. և սուրբ Հաղորդութիւնը բաշխած առեղը՝ հազար սուրբ խորհուրդներ փոփոխակի կը գառնան մտքին մէջ: Իրեն ըրած այնչափ հաղորդութեանց վրայ կը մտածէ. այն անսահման սիրոյն վրայ կը մտածէ՝ որ բուն հնոցն է այս խորհուրդը. աստուածային Փրկչին միշտ և ամենուն համար հաւասար եռանդեանը վրայ կը մտածէ, և իրեն ալ Յիսուսի եռանդեան նմանցընելու կը ջանայ. այս բարի Հովուին կը յանձնէ անոր երկրպագելի մարմնով կերակրած ոչխարները, և երբեք մտքէն չի հաներ, որ չորս բոլորտիքը անթիւ հրեշտակաց խումբեր շարուած՝ իր ձեռքովը բռնած Աստուծոյն երկրպագութիւն կ'ընեն: Խոստովանարանին մէջ բարի օրինակ տուող անձանց հաղորդութիւնը տեսնելով, նորէն կը խոնարհի. տեսնելով որ սրբութեան մէջ իրեն կը յաղթեն, թէև ինքը անոնցմէ յաճախ կը հաղորդուի, և ասանկով առատ և գեղեցիկ պատուղներու և արդեանց հունձքով հարուստ՝ սեղանէն կը դառնայ:

Ո՛րչափ մեծ տարբերութիւն ասոր և գաղջ քահանային մատակարարութեան մէջ, որ անտարբեր և ցընդած՝ հազիւ կը մտածէ ըրած սուրբ գործքին վրայ, և պաղութեամբ կը վարուի անոր հետ՝ որ երկինքէ արքայութեան երանութիւնը կը կազմէ:

Ո՞վ չի տպչիր և հիանար կենդանի հաւատքին՝ սուրբ քահանայի մը սրտին ազդած՝ աղնիւ զգայմանց վրայ:

318. Հապա հոգեվարքը հիւանդի մը անկողնոյն քով դանուած առեղը, երբ իրմէ այն վերջին խորհուրդը կը

ինդրուվ՝ զոր Յիսուս Քրիստոս զմարդը այն մեծ քայլը պատրաստելու համար հաստատուց, կը կարծէք որ հիւանդէն զատ ուրիշ մոռածմունք մը չունենայ: Անտարակոյս սուրբ մտերմութեամբ կ'առաստաձեռնէ անոր կրօցած հոգևոր օգնութիւնները, ամենամեծ եռանդեամբ ի ղլջումն, ի յոյս և ի սէր կը յորդորէ. ինքը տեսնելով այն խեղճը յաւիտենականութեան սեմոց վրայ, ուր պիտոր մնայ ցմիշտ առանց վերստին դառնալու յոտից, կը կրծկնապատիկ իւր ջանքը զանիկայ ահաւոր դատաստրին առտեանը ելլելու պատրաստելու համար. և անոր ուղղած սիրալիր և սուրբ խօսքերով սիրտը վստահացուցիչ մխիթարութեամբ կը լեցընէ, և ներկայ գանուողները արցունք թափելու չափ կը շարժէ:

Բայց իրեն համար երբեք անօգուտ չըլլար ուրիշն այնչափ օգտակար եղած այս ողբալի տեսարանը: Տկար և Թոյլ հաւատք ունեցող քահանան ամէն բանի հետ կ'ընտելանայ, ինչպէս մահուան տխուր տեսարանին հետ ալ, զոր ինքը գրեթէ ձեռքով կը շօշափէ մեռնող հիւանդին անգամները սուրբ խռովել օծելու առեն: Իսկ ընդհակառակն եռանդուն քահանան՝ ունեցած կենդանի հաւատքովը, ամէն վայրկեան կը նորոգէ իր մտքէն փախչելու չնացող մահուան մոռածմունքը: Երբ ինքը մօտէն կը տեսնէ զմահը հոն հիւանդին դէմքին վրայ, կը մոռածէ որ քիչ առենէն ինքն ալ նոյն վիճակին մէջ պիտոր գտնուի. և փրկաւէտ սարսափով լեցուն՝ ինքը զինքը կը քննէ տեսնելու համար, թէ արդեօք պատրաստ է՝ թէ ոչ՝ քահանայական պատասխանատուութեան առտանելի ծանրութեամբ յաւիտենականութենէն նեռս մնալու հարուածն ընդունելու. հոգւով և մտօք ինքը զինքը ահաւոր դատաստրին ոտքերուն առջին կը դնէ, և իբրև թէ լսէր այն զարհուրելի խօսքերը, « Տուր զհամար տնտեսութեան քո » [1], եռանդը, սուրբ նախանձը և հաւատարմութիւնը աւելցընելով հաշիւ տալու կը պատրաստուի:

1 Ղուկ. ԺԶ. 2:

Օր մը յարգելի Ժողովրդապետ մը, զոր Աստուած մեզի օրինակ և հայր տուած էր, յուղարկաւորութեան մը գառնալու առեն ըսաւ. — Քառասուն տարի քահանայութենէ և անթիւ յուղարկաւորութիւններէ վերջը չը կրցայ դեռ ևս վարժիլ այսպիսի տխուր հանդիսութեան. դեռ ևս չեմ կրնար գագաղի մը հողով ծածկուիլը առանց դողալու տեսնել: — Ունեցած կենդանի հաւատքը՝ պատսպարած էր զինքը փրկաւէտ սարսափով լեցուն հանդիսութեան հետ՝ ողբալի ընտանութեան դէմ: Ո՜ր էր թէ մեր հաւատքն ալ այսպէս ըլլար, որպէս զի հոգեվարքներու անկողնոյն քով պակ ու անխռով, և գերեզմանին փոսին վրայ ալ՝ անզգայ չ'ինայինք:

319. Պատկին խորհուրդն ալ սուրբ քահանային օգտաւէտ խորհրդածութեանց նիւթ կը մատակարարէ: Երբ բոլոր հանդիսականաց բարի օրինակ տալով իր շուրջ հալի վարմունքով, այն կենդանի և աղդու ջերմեռանդութեամբ մինչև անգամ զանոնք ալ կը շարժէ, որոնք երբեք եկեղեցին չեն երթար, և այն օրն ալ միայն արտաքոյզութեան համար գացած կ'ըլլան. և պատշաճ խօսքերով պատկին սրբութիւնը և մեծութիւնը հասկընցնելէն վերջը, ինքը զինքը ամփոփելով Աստուծմէ չնորհակալ կ'ըլլայ նորապատկներուն դէմ գացած վտանգներէն զինքը ազատ պահելուն համար. և երախտագէտ սրտով կ'օրհնէ զԱստուած՝ հեշտական, մարմնաւոր և հոգևորէն կեանքէ մը զինքը հեռու պահելով, սուրբ և գրեթէ հրեշտակային կենաց արժանացընելու համար. և մնաւանդ կը փառաբանէ զԱստուած իր խեղճ հոգին ձեռնադրութեան օրը իրեն հարկաւոր ընծաները ռանդութեամբ աղօթք կ'ընէ նորապատկներուն համար, շատ աւելի կ'ուրախանայ իրեն Յիսուսի Քրիստոսի հետ սերտ և չքեղ միաւորութեան վրայ: Այնչափ ստոյգ է, որ ամէն բան սուրբ քահանային ձեռքը ոսկի կը դառնայ, և ամենայն ինչ աստուածասէր անձանց աղեկութեանը կը ծառայէ. « Որոց սիրեն զԱստուած, յամենայնի գործակից լինի ի բարիս » [1]:

1 Հռոմ. Ը. 28:

320. Սակայն ոչ միայն սուրբ խորհրդոց մատակարարութիւնն է, որ զսուրբ քահանան կատարելութեան մէջ միշտ կը յառաջեցընէ, այլ նաև պաշտօնին ամէն գործքերը և զբաղմունքները նրբին գործակից են. քարոզ, քրիստոնէական վարդապետութեան մեկնութիւն, հրապարակական հոգևոր պաշտօններու ներկայ գտնուիլը, հովուական այցելութիւնները, դպրոցներու վերատեսչութիւն, աղքատաց հետ յարաբերութիւն, բոլոր նաև տեսակ տեսակ արդիւնաւոր գործքերով զարդարուած կեանքը. մէկ խօսքով, ամէն բան նրբին համար մշտատև սրբութեան նիւթ և միջոց է:

Բարի օրինակին հետևինք, և մենք ալ անոր պէս ամէն տեղ Յիսուսի Քրիստոսի անոյշ հոտը բուրենք. այնպէս՝ որ կարող ըլլանք բոլոր չըջակայ գտնուողները նրբին կեղ այն ծանրագին հոտով, և ըսել սուրբ Առաքելոյն հետ. « Հոտ անոյշ եմք Քրիստոսի » [1]:

1 Բ. Կորնթ. Բ. 15:

ՎԵՐՋԱԲԱՆ

321. Ահաւասիկ գրքին վերջը հասանք: Տա՛ր Աստուած, որ մենք մեր պարտաւորութեան մասը այնպէս աղեկ գլուխ հանած ըլլայինք՝ որ Աստուծոյ մեծագոյն փառաց և անոր պաշտօնէից սրբութեան ծառայեր:

Հոս ժողովինք, սկրեցեալ եղբայրակիցք, և առանց զմեզ չողոքորթելու քննենք, թէ արդեօք ինչ պտուղ քաղեցինք այս՝ թէև անկատար՝ գրքին ընթերցմունքէն. արդեօք ընդհանուր սովորութենէն աւելի աղեկ բան մը ըրինք, որ է ընդունել և հաստատել մեզի հաւատականը, և պարսաւել ոհմակոյն: Գիրքը գոցելով մոռացման պիտոր մնանենք, ինչպէս որ ըրած ենք ուրիշ շատ գրքեր ալ զանոնք կարդալնէս յետոյ: Եւ յառաջուան վարքերնիս պիտոր շարունակենք երբեմն թէ երբեք այս գիրքը կարդացած չըլլայինք, և երբեմն թէ վարքերուս մէջ նորոգութեան կարօտ ամենևին բան մը գտած չըլլայինք: Այս ալ միւս գրքերուն հետ գրքատունը չարխլով, երկար տաեն փոշիներուն տակը պիտոր թողունք:

Արդեօք ընդհակառակն ձեմարիտ օգուտ մը բերած մեզի, կամ բերելու յոյս մը կայ: Իրաւցընէ կը ջանանք սրտերուս մէջ յառաջ բերած բարի փափաքները ի գործ դնելու: Ինչպիսի՞ գործնական բարիք ընել կ'ուզէ մեր հոգևոյն: Ո՞ր պակասութեան դէմ մաքառելու կը պա-

արաստուԹիւնք։ Ո՞ր մանաւանդ առաքինուԹիւնը մշակելու մոտիվը ունիք. ինչպիսի դարման և հոգ տանելու կը փոխանցէք գաղջուԹիւններուս դէմ. ի՞նչ ջերմեռանդական սովորուԹիւններու ձեռք պիտոյ ջարնենք։ Կանոններ ըսա մէջ ի՞նչ նոր յօդուածք պիտոյ աւելցընենք։ Ի՞նչ տեսակ եռանդեան և սուրբ նախանձու արգիլնաւորուԹեանց ձեռնամուխ ըլլալ կը մոտածէնք։

Ասոնք այնպիսի հարցմունքներ են՝ որ կը խնդրենք արժանապատիւ եղբայրակիցներէս, որ իւրաքանչիւր ոք իր անձին ընէ, և սէր իրեն Աչմարիա աղեկուԹեանը։

Եթէ այս գրքոյկիս կարդալու արժանի բան մը տեսնուեցաւ, և ուշադրուԹեամբ ալ կարդացուեցաւ, սուտ ու տեղնուեցաւ որ մեր նպատակն էր օգտակար ըլլալ, — նախ և յառաջ «Հայր» քահանայից՝ որ Ասուածոյ հնորհիւ շատ յանցաւ են մեզ երկրորդ աւանդիններէն քիչ մը նուազ յանցաւ «գաղջ և ծոյլ» քահանայից. — վերջապէս ալ «բարի» քահանայից, որոնցմով լեցուն է եկեղեցին։ Ինչպիսի երախտագէտ հնորհակալուԹիւններ Ասուածոյ մատուցանելու պարտաւոր ենք, եԹէ եղբայրակիցներէս անոնք՝ որ քահանայից վերոյիշեալ կարգերուն կը վերաբերին, և այս գրքոյկիս կարդալու բարեհաճեցան, օգուտ քաղին «Նախատիպ» և «բարի օրինակ», Աչմարտապէս «սուրբ», և առաքելոյն ըսածին համեմատ ամէն կէտի մէջ «անըսդդտանելի» քահանայ ըլլալու համար։

Ո՛րչափ բարեբաղդ պիտոյ ըլլայինք և ինչպիսի՛ միԹարուԹիւն պիտոյ ղգայինք, եԹէ ղոր օրինակ «Հայր» քահանայ մը իր հոգւոյն փրկուԹեան համար ըսածնիս կարդալէն վերջը, քաջուԹեամբ երԹար սուրբ քահանայ մը դանելու, և այս գրքին ընԹերցման իր վրայ ըրած ազդեցուԹիւնը անոր յայտներ. և սրտերուն ղգացմանց փոխադարձ հաղորդակցուԹեան եռանդեամբ, երկուքն ալ հետևեալ կերպով խօսէին։

— «Սուրբ Քահանայ» անունով գիրքը կարդալով, անոր մէջ եղած խորհրդածուԹիւնները իմ միտքս բոլորովին գրաւեցին։ Այս գրքին մէջ յայտնապէս տեսայ,

Թէ ի՞նչ պէտք է ըլլամ՝ որ չեմ. տեսայ, Թէ ի՞նչ պէտք է ընեմ, և ընելու չեմ համարձակիր. տեսայ այն առաքինուԹիւնները յորոց զուրկ եմ, և ախտերը որ չափազանց կերպով վրաս բռնացեր են. իմ քահանայական վճակիս գերազանց բարձրուԹեանը հետ միատեղ տեսայ նաև իմ վարուցս անարժանուԹիւնը, Ասուածոյ ինձի տուած շնորհաց առատուԹիւնը, և իմ զանոնք չարաչար գործածելս։

— Այս խորհրդածուԹիւններէն ի՞նչ հետևցուցիք։

— Ես ալ չեմ գիտեր... բայց... կը յուսամ...

— Այո՛, յուսալ պէտք է, բայց աղեկ յոյս մ՚ունենալու համար, բարեկամ, վարքերնիդ ալ փոխելու հաստատուն առաջադրուԹիւն մը պէտք է։ Ընել ուզածնիդ ասկից չէ՞։

— Այո՛, չեմ կրնար համարձակիլ։

— ՀամարձակուԹիւն ըսածնիդ Ասուածոյ մէկ շնորհքն է զոր եռանդուն աղօԹքով խնդրողին երբեք չի զանար։

— Ո՛հ, բաւական սաեն է որ աղօթք չեմ ըներ, և ոչ ալ կրնամ ընել։

— Միշտ կրնաք, և մինչև կեանքերուդ վերջին շունչը պիտոյ կարենաք. աղօԹեցէք ուրեմն, և որպէս զի աղօԹքնիդ բարի և գործնեայ ըլլայ, քիչ մըն ալ ապաշխարուԹիւն ըրէք հետը։

— ԱպաշխարուԹիւն, և ոչ անունը կրնամ լսել։

— ԱռիԹներէն փախեք։

— Այնչափ արիւուԹիւն չունիմ։

— Սուրբ քահանայի մը դիմեցէք, անոր ոտքերն ընկնէք։

— Հարիւր անգամ փորձեցի, բայց միշտ անօգուտ։

— Հոգւոյր կրԹուԹիւն ըրէք։

— Քանի տարիէն ի վեր կ՚ընեմ, բայց միշտ նոյնն եմ, մանաւանդ այնպէս կը զգամ որ օրէ օր աւելի կը չարանամ։

— Հապա ինչ կ՚ուզէք ընել, բարեկամ։

— Չեմ գիտեր... կը յուսամ...

— Ի՞նչ կը յուսաք:

— Աստուած ողորմած է, վրաս կը գթայ:

— Ա՛յո՛, կը գթայ՝ եթէ խորհուրդս ի գործ դնելու ըլլաք: Ո՛չ, եթէ չարունակէք չարաչար գործածել իւր բարութիւնը, և իւր յաստմէ դրդռէք:

— Ճիշտ ես ալ նոյնը ուրիշներու կը քարոզեմ:

— Ապա ուրեմն ինչո՞ւ չէք ջանար ձեզի համար ալ օգուտ մը քաղելու:

— Սորդ է, իրաւունք ունիք: Կը յուսամ...

— Բայց, ի՞նչ բան կ'ուզէք միշտ յուսալ:

— Ո՞վ գիտէ, գուցէ հիմակ չի կրցածս՝ ապագային մէջ ընելու կարող ըլլամ:

— Սիրելի, ապագան կը խաբէ, ասիկա ձիշտը ըսեմ, ապագան ոչինչ է, և ձեր գործին համար ոչինչ կրնայ ընել: Մի՛ թէ ապագա՞ն է, որ զմարդը գործի կը բերէ: Ո՛չ. Աստուած և միայն Աստուած է: Արդ, որչափ ա՛սիկա ուշանաք առ Աստուած դառնալու, այնչափ ալ ա՛սիկա սոսկալի կ'ըլլայ ձեզի համար այս ապագան՝ որուն վրայ յոյսերնիդ գրած էք. վասն զի ամէն օր մեղքերը նոյն Թիւը կ'աւելցընէք, և չարաչար գործածելով կը պակսեցընէք ձեզի այնչափ հարկաւոր եղած ընդհանրը: Ցետ այնորիկ յանկարծական մահը երբեք չէք մտածեր: Քանի՛ քանիներ մեկ վայրկեան մէջ յաւիտենական նողկեան կ'երթան: Եթէ նոյնը գործերէդ յառաջ ձեզի հանդիպի՞...:

— Սորդ է, իրաւունք ունիք, գոնէ իմ չիմնաւթիւնս վերջին ծայրը կը հասցընէք: Ո՛վ Աստուած իմ, աս ի՞նչ վիճակ է, ինչպիսի՛ չիմնաւթեամբ խառնուած է հոգիս: Ի՞նչ անկարգութիւն, ի՞նչ խառար: Գժոխքս հմակուընէ կանխած եմ: Ո՛չ, կ'ուզեմ անգամ մը ցմիչա վերջ տալ այս մեղսալից կեանքս, որ այսպիսի տագնապներով զիս կը տառապէ. « Ելլեմ ու չիտակ հօրս գիմեմ»: Գոնէ աչ, Հայր սուրբ, աղօթք ըրէք որ ներէկ ինձի: —

Ո՛չ էր թէ բարեխաղաչար այս տողերը կարդացող Թշուառ եղբայրակիցնիս իւր նկարագրութիւնը տեսնելով, կարող ըլլար խորտակել զղջմանները, աղա-

տել այն զազրութենէն՝ որուն մէջ կը Թաւալի, և քահանայական Թագին վերագարձնել իւր ախտերուն տղմին մէջ կորսնցուցած պայծառութիւնը:

Ի՛նչ մեծ բարեբաղդութիւն կ'ըլլար, եթէ «գաղջ» և « ծոյլ» քահանան ալ երթար և եռանդուն ու սրբակեաց եղբայրակիցներէն մեկը դառնալով, այսպէս խօսէին:

— Արդէն գիտէի, բայց հիմայ աւելի աղէկ ճանչցայ, որ գաղջերուն կարգը դասուելու արժանի քահանայ եմ եղեր:

— Գժբաղդութիւն, իրաւի մեծ գժբաղդութիւն է բարեկամ. բայց հաստատ սրտով կը խօսիք:

— Ո՛հ, չափէն աւելի, դուք ինքնին գտաք էք: Ի բայց առեալ սոսկալի գայթակղութիւններ, յայտնի մահուամբ մեղքեր, և ինչ ինչ նուազ ծանր մեղքեր՝ որոց դէմ հակակրութիւն մը կը զգամ, ամենևին բան մը չեմ ըներ ներելի մեղքերէն ալ խոյս տալու և անոնցմէ ազատելու համար: Գործելիք մեղքիս մտածածէս աւելի ծանրագոյն ըլլալը չը գիտցած առեւնս, միշտ խանգարուած քնութեանս հակառակ կողմը կ'ընտրեմ, և կ'ըսեմ (Թէ և միշտ անհանդստութեամբ մը). « Ո՛հ, աս մեկն ալ կրնայ անցնիլ»: Ինչ շատ ամէն առաքինութեանց դէմ կը մեղանչեմ, Թերութիւններս անԹիւ են. և ոչ միայն զանազ ընդելու չեմ աշխատիր, այլ և ոչ անոնց դէմ դնելը անգամ մտքէս կ'անցնի: Ուսմունքէն ախորժ մը չեմ զգար, բայց խաղալ շատ կը սիրեմ: Առանձնացած և ուսումնական կեանքը անտանելի է ինձ. բայց յօժարութեամբ՝ կոչունքներու, ընկերութեանց, զուարճալի ճանապարհորդութեանց, և ընդհանրապէս այցելութեանց մէջ կը գտնուիմ: Իմ քահանայական պաշտօնէս շատ քիչ օգուտ կը քաղեմ, խոստովանարանը ծանր բեռ մըն է. քրիստոնէականի մեկնութիւնս վատ է, բայց վատագոյն է քարոզս. վասն զի չեմ կրնար, ամենևին մտածուած բան մը չեմ ըներ մեղաւորները դարձընելու համար. երբեմն վայ լքուած ձգելը եմ հիւանդները և աղքատները, և մանաւանդ այս եաքինութիւն հոգւոյ խեղճութեանը վայ ամենևին հոգ չեմ տարած:

Եկեղեցիս անվայել վիճակի մէջ է, պահարանը բոլորովին անկարգ. զարգերը և նուիրական զգեստները ապին անգին ձգուած. ամէն կողմէ՝ ամենայն ինչ ծուլութիւնս և անհոգութիւնս երեսս կը զարնեն: Իսկ հոգևոր գործքերուս նկատմամբ՝ պատարագ մը, քիչ մըն ալ ժամերգութիւն, և երբեմն ալ կրճատած աղօթք մը. բայց, ո՜հ, երանի՛ թէ ան ալ աղօթք ըսուէր. . . : Ասոնց վրայ դէռ ուրիշ շատ բաներ ալ կրնամ աւելցընել. բայց ըսածս բաւական ըլլայ հասկըցնելու համար, որ անխրատութիւն մը չեմ ըներ ինքը վնքս գաղջերուս և ծոյլերուս կարգը դնելով:

— Բարեկամ, դուն անկեղծութիւննիդ ինձի շատ հաճելի է, բայց ղուրցեցէք ինձի, թէ ինչ կ'որոշէք վերջապէս:

— Ես ալ զայն կը մոածեմ, բայց չեմ գիտեր ինչպէս:

— Բայց բնական է որ գործնական բան մը որոշէք:

— Ո՜հ, տեսականը աղէկ, բայց ի գործնականին դժուարին է:

— Փաղաքերուեցէք, Աստուած կ'օգնէ, որուն ընորհքով ամէն բան կրնաք:

— Անտարակոյս, բայց իմ ողորմելի վիճակս զիս կը զարհուրեցընէ. սակայն այսու ամենայնիւ չար քահանայից վիճակին մէջ չեմ գանուիր:

— Կ'ընդունիմ, բայց այնպիսի ձամբուռ մէջ կը գըտնուիք, որ ուղղակի չար քահանային ձամբուն կը տանի:

— Երբեք մտաուչափ մեղք մը չեմ գործեր, եթէ գիտնամ որ...

— Ա՜յո՛, ապահո՛վ էք որ գործած այնչափ մեղքերուդ մէջ չը գանուի անանկ մը, որ ներելեն աւելի ծանր չըլլայ. ի՞նչ կը կարծէք:

— Ո՜հ, ո՛չ, ո՛չ երբեք:

— Ապահո՛վ էք երբեք. քայլ մըն ալ չի չեղելու այն ձամբայէն՝ որ զձեզ կը բաժնէ չար քահանայէն:

— Կը վախնամ, և պէտք է որ վախնամ. դուք իրաւամբ կը խօսիք. վասն զի այսպիսի դժբաղդութենէ մը ազատելու համար, ամենևին բան մը չեմ ըներ:

— Կը կարծէ՞ք որ Աստուած վարմունքներիդ գոհ ըլլայ:

— Ամենևին ո՛չ:

— Կը կարծէ՞ք որ կեանքերնիդ վիճակներուդ պահանջածին համաձայն սուրբ ըլլայ:

— Վա՛յ ինձ, ո՛չ:

— Փարոզած առաքինութիւններուդ գործադրութեամբ ժողովրդեան բարի օրինակ կուտա՞ք:

— Ամենևին ո՛չ:

— Խնամքներուդ յանձնուած հոգիները փրկելու կ'աշխատի՞ք, ինչպէս որ պարտքերնիդ է:

— Կ'ուզէի որ անանկ ըլլար, բայց իրօք այնպէս չէ:

— Աստուծոյ ծառայութեան մէջ աղէկութիւն մը, մխիթարութիւն մը կը զգա՞ք:

— Ո՛չ:

— Խիղճերնիդ հանգիստ է:

— Ո՜հ, ամենևին ո՛չ:

— Կը բաղձայի՞ք մեռնիլ այն վիճակներուդ մէջ:

— Ո՜հ, ի՞նչ կ'ըսէք, Աստուած խնայէ:

— Ուրեմն վարքերնիդ չի փոխելով, ինչպէս կը յուսա՞ք բարի և սուրբ մահուամբ մեռնելու:

— Շատ կը վախնամ:

— Ո՜հ, ուրեմն, բարեկամ, իմ հարցմունքներէս և ձեր պատասխաններէն աւելի ինչ կ'ուզէք համոզուելու համար, որ ինչ կ'ուզէ արժէ, պէտք է որոշէք այսչափ հարկաւոր առաջ անհրաժեշտ դարձընիդ:

— Իրաւունք ունիք, ահաւասիկ պատրաստ եմ. « Կ'ելլեմ ու հօրս կ'երթամ »: Ո՞վ Աստուած իմ, օրհնած ըլլաս հիմակ ինձի ըրած ընորհքիդ համար. « Ասացի թէ այժմ սկսայ. այս է նորոգումն աջոյ Բարձրելոյն » [1]:

Վերջապէս ինչ մեծ մխիթարութիւն պիտոր ըլլար, եթէ « բարի » քահանայ մը ուզելով հպատակիլ Աստուծոյ կոչմանը, որ սիրալիր ձայնով կ'ըսէ իրեն. « Բարեկամ, ի վեր մտիր » [2], երթար և իրեն բարեկամ սուրբ քահանայ մը գտնելով ըսէր իրեն.

1 Սաղմ. ՀԶ. 11: 2 Ղուկ. ԺԴ. 10:

— Կու գամ, արժանաւոր եղբայր իմ, կու գամ իմ հոգեւոր վիճակը ձեղի յայտնելու, և սրտիս բոլոր գաղտնիքը ձեզի տեղեկացընելու։

— Խօսեցէք ուրեմն, բարեկամ. ո՛րչափ հաճելի է ինձ այս այցելութիւնդ. աստեն մըն է որ զձեզ կը ճանչնամ։ Դուք Աստուծոյ հնոցիւը չար քահանայ մը չէք, և ոչ ալ գաղջ ու ծոյլ։

— Գուցէ այնպէս ըլլայ. բայց քիչ մը յառաջ կարգացած « Սուրբ Քահանայ » անունով գրքի մը համաձայն ալ « սուրբ » քահանայ մը չեմ։ Մեծ բան, (նկատեցէք անկեղծութեանս), մեծ բան, եթէ « բարի » քահանայից դասը գտնուելու արժանի ըլլամ։

— Եթէ այդպէս է, ըսէք նայիմ, սուրբ գործոյ նկատմամբ ինչպէս կը դտնուիք։ Հարկաւորներու մէջ նուազագոյնով գոհ կ՛ըլլա՞ք։

— Ո՛հ, ո՛չ։

— Ջերմեռանդ սոլորութիւններ ունի՞ք։

— Ա՜յո՛։

— Քահանայական պաշտօններուդ պատիւ կը բե՞ր։ Հաւատացեալոց վստահութիւնը, յարգութիւնը և մեծարանքը կը վայելէ՞ք։

— Ա՜յնպէս կը կարծեմ։

— Խիղճերնիդ ամենայն վստահով կը զգուշանա՞ք, չեմ ըսեր մահուչափ մեղքերէ, որ ձեղի դէմ անխրաւութիւն մըն է, այլ քիչ մը ծանրակէ և կատարեալ հաւատնուէութեամբ գործուած նեղբելներէն ալ։

— Ա՜յդպէս է. բայց այսու ամենայնիւ խիղճս կատարեալ հանգիստ չէ։

— Ի՞նչպէս կրնայ ըլլալ։

— Լսեցէք։ Եթէ առանց ինքը զինքս խաբելու՝ « գաղջ ու ծոյլ » քահանային քիչ մը հեռու կը տեսնեմ զիս, բայց այսու ամենայնիւ « սուրբ » քահանային ալ շատ մօտիկ չեմ։ Աւազանիներուն հաւատարիմ երթեք չեմ ուզեր, բայց երկրորդին չափ բարձրանալու ալ չեմ համարձակիր։ « Աղեկով » գոհ կ՛ըլլամ, առանց « աւելի աղեկը » փնտռելու։ Գիտեմ որ պահպանութիւններ ունիմ, բայց անոնց ծանրութիւնը կը կեղծեմ. կը կարծեմ որ կը մաքառիմ, բայց իրօք զանոնք հանգիստ թողուցած եմ։ Խոստովանութիւններուս վրայ վստահ եմ, բայց ասոր հետ միատեղ ալ աստուածպաշտութեան մէջ յառաջ չեմ երթար։ Վարմանցս կանոն մ՛ունիմ, բայց ձըշտութեամբ՝ ի գործ չեմ դներ։ Աղօթք կ՛ընեմ, բայց Աստուած միշտ գոհ չէ իմ աղօթքներէս։ Մեծ համարում ունիմ աստուածպաշտութեան կրթութեանց վրայ, բայց շատ անգամ զանոնք յարգելէս զատ ուրիշ բան մը չեմ ըներ։ Հոգիներ փրկելու կը ջանամ, բայց նոյն աստեն կը զգամ որ աւելի հոգիներ կրնայի փրկել՝ եթէ աւելի սուրբ ըլլայի։ Խղճի ծանր յանդիմանութիւններէ ազատ եմ, բայց շատ մը մեղքերով ալ սփոփուած չեմ։ Իրաւունք չունիմ ըսելու որ վայելած խաղաղութիւնս կատարեալ խաղաղութիւն մը չէ։

— Այդպէս է, սիրելի եղբայր. բայց այս կատարեալ խաղաղութիւնը այնչափ քաղցր է, և դուք ալ ուզած աստիճանիդ այնչափ մօտ էք զայն վայելելու՝ որ անտարակոյս պիտոր ուզէք։

— Ո՛հ, հարկաւ անգամ առաքելադրութիւն դրի, բայց միշտ ալ պարապ տեղ։

— Նոր եռանդեամբ և նախանձով մը կրկին փորձեցէք, աղիւս բարեկամս. աստուածպաշտութեան կրթութիւններուդ հաւատարիմ եղիք. կեանքերնիդ քիչ մ՛աւելի կարգաւորեցէք. մտածականիդ աւելի աղեկ ընելու ջանացէք. անգամ մըն ալ զանց չընէք առանձին քննութիւնդ. աշխարհէն, խաղերէ և հարկիներէ փախէք, երկրպագութիւնդ միայն աստուածպաշտութեան և ուսման մէջ վնտռեցէք. եղբայրսիրութեան եռանդեան գործքերու ջրաղեցէք. սուրբ քահանայ մը խոստովանհայր ընտրելով, ըսէք իրեն որ դուք ալ կ՛ուզէք սուրբ ըլլալ. աղաչեցէք որ ամէն կերպիւ ձեղի օգնէ այս նպատակներուդ հասնելու համար. և ապահով եղիք որ Աստուած կ՛օրհնէ աշխատանքնիդ։

— Ամէն մեկ խօսքերնիդ մեծ բարիք մը կը պատճառեն ինձի։ Տա՛ր Աստուած, որ այս անգամ ալ պարապ չելլեմ։—

Երթանք, ամենքս ալ երթանք այս սուրբ եղբայրակ-
ցիները գտնելու, որոնց խօսքերն ալ օրինակներն ալ
այնչափ ազդու են: Երթանք և անոնց ստուածաշաչու-
թեան եռանդովը մենք ալ բորբոքինք: Մենք կը ճանչ-
նանք այս քահանայութեան գիւցազունները, այս Աս-
տուծոյ յարդելի պաշտօնեայները, որ միայն իրենք չեն
գիտեր իրենց արդեանց գանձը՝ որ օրէ օր վրայ կը դնէ:
Եկեղեցական հոգւով այնչափ լեցուն են, որ ամէն բանի
մէջ՝ ամէն բանով, և միշտ քահանայ ըլլալնին ցոյց կու
տան: Երբոր մենք զմեզ այնպէս չենք տեսներ, ինչպէս
որ կ'ուզենք և պէտք է որ ըլլանք, այս Աստուծոյ սուրբ
անձինքը տեսնելով և միայն զանոնք մտածելով՝ ձայն մը
կը լսենք, որ ներսէն հոգիներուս կ'ըսէ. « Որպէս ցու-
ցաւ քեզ օրինակ ի լերինն՝ արասցես » [1]: Ինչպիսի՛ հե-
զութիւն, ինչպիսի՛ եղբայրասիրութիւն, ի՜նչ պարկեշ-
տութիւն, ի՜նչ խոնարհութիւն, ի՜նչ հնազանդութիւն,
ի՜նչ սէր աստուածնուէրեան և ուսման, ի՜նչ եռանդ հո-
գւոյ վրկութեան, ի՜նչ կարգաւորեալ և բարեգործու-
թեամբ լեցուն կեանք, ինչպիսի՛ հակակրութիւն ցընդ-
դիման և տարտամութեան: Ինչպիսի՛ նախանձաւորութիւն
այն ամէն բանի՝ որ մնուադ կու տայ հոգւոյն, և զանի-
կայ Աստուծոյ հետ կը միացընէ: Ո՞վ կրնայ ճառել ա-
նոնց աղօթքներուն զերազանցութիւնը, պատարագ
զուրցելնուն կերպը, հոգւոյ ընթերցմանց եղանակը,
առանձին քննութեանց ոճը, ամենատուրբ Հաղորդու-
թեան այցելութեանց փափագը: Բայց նոյնպես ո՞վ կըր-
նայ զուրցել նաև անոնց քահանայութեան արդիւնքը և
պտուղը. անոնց աղօթքներուն ուժով, խորհրդոյ քաղցր
համոզմամբ, և բարի օրինակներուն անդիմադրելի զո-
րութեամբ փրկուած մեղաւորաց թիւը:

Օրհնենք զԱստուած, սիրեցեալ եղբայրակիցք, ի-
րեն սուրբ և արժանաւոր ծառաները՝ մեր թեմերուն
մէջ՝ մեզի օրինակ և առաջնորդ ըլլալու պատճառաւ
գացուածնելնուն համար:

Գուցէ լսուի, որ մենք ճգնիլս ըլլալու համար,

[1] Եբր. ութ. 5:

պէտք էր նշանակելինք գոնէ այն թեթեւ արատները՝ ո-
րոնցմով երբեմն կ'աղօտի նաև սուրբ քահանային կա-
տարելութիւնը և պայծառութիւնը: Եւ իրաւացի է այս
խորհրդածութիւնը: Բայց ի՞նչ կ'ուզէք. մի թէ աշխարհ-
քիս երեսը բոլորովին անթերի կատարելութիւն մը
կրնայ գտնուիլ: Այո՛, ստուգիւ սուրբ քահանայք ալ
իրենց թերութիւններն ունին, բայց որչափ թեթեւ մե-
ղիներուն համեմատութեամբ: Եթէ ուշադրութեամբ
մտածելու ըլլանք, կը տեսնենք որ երբէք կարելի չէ մե-
զանչական գործոց համար զերկինք յանդիմանել: Ի՞նչ է
ուրեմն: Գուցէ իրենք զերկինք եզական, արտաքոյ կարգի
և անսովոր ցոյց տալու սովորութիւննին, կամ երբեմն
կարճ տեսութիւն մը, իրաւունք մը պաշտպանելու հա-
մար շատ բորբոքուած եռանդ մը, և ատոնց նման աննշան
և առանց հետեւութեան բաներ՝ որոնք իրաւցընէ աւելի
աղէկ կ'ըլլար որ ամենևին չըլլային, բայց և ոչ ալ ըստու-
գիւ հետեւութեամբ գործուած մեղք ըսելու արժանի
են: Արդ, մենք մեղի գառնալով, ինչ կը գտնենք: Ո՛հ,
ինչպիսի՛ քիմք և հաճոյքներ և շատ մը արատներ պիտոյ
գտնենք, և աւելի սուրբ քահանային անծանօթ պակա-
սութեանց բանակ մը:

Ուստի, սիրեցեալ եղբայրակիցք, գիտէք ինչ ընե-
լու է: Ահաւասիկ. որովհետեւ եղբայրակիցներուս աղէ-
կութիւնն ալ վատութիւնն ալ տեսնելու բաւական ճար-
տարութիւն ունինք, բարութիւններուն միայն հետեւինք
և չարութիւններէն զգուշանանք:

Գործքի՛, սիրեցեալ եղբայրակիցք, գործքի ձեռք
զարնենք. կեանքերնիս արագութեամբ կը փախչի, և օրը
մթննալու վրայ է. « Տարաժամեալ է օրս » [1]: Պատաս-
խանատուութիւններուս բեռը երթալով կը ծանրանայ,
և մահն ալ մօտ է, գրան առջին հասեր է, սոսկալի դա-
տաստանին ժամը զարնելու վրայ է: Ինչ մըն ալ, « Փոքր
միւս ևս » [2], և ահա յաւիտենականութիւնը զմեզ իր
ամենածածուկ անգունդներուն մէջ պիտոյ ընկղմէ. եր-
թալու պատրաստ ենք: Հաշիւներս կարգի դրուած են:

[1] Ղուկ. իդ. 29: [2] Յովհ. ժդ. 19:

Ե՞նք արդեօք մինչ որ պէտք էինք ըլլալ: Վերջապէս կըրնա՞նք ունենք ալ ըսել, մինչ որ կրնայ ըսել տուրբ քահանան Աբաքեղոյն հետ. « Զբարւոք պատերազմ պատերազմեցայ, զընթացքն կատարեցի, զհաւատոն պահեցի: Ա՛յսուհետեւ կայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն դատաւոր » [1]: Ալէ՛լ, Ամէն: Ամէ՛ն, ամէ՛ն, ի յաւիտեանս ամէն:

ԳՈՎԵԱՆ ԵՂԻՑԻ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ:

1 Բ. Տիմ. Դ. 7, 8:

ՎԵՐՋ

ՅԱՆԿ

ՅԱՌԱՋԱԲԱՆ 5

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ — Քահանայական Սրբութեան Հարկաւորութիւնը — Ա՛յսպիսի սրբութեան մը Նկատմամբ ի՞նչ էինք անցելոյն մէջ — Ի՞նչ է ներկայ վիճակնիս — Ի՞նչ պիտոր ըլլանք ապագային մէջ . 9

Գլ. Ա. — Քահանայի մը համար սրբութեան ամենամանաւոր Հարկաւորութիւնը — Նոյն Հարկաւորութեան ապացոյցներ 10

Գլ. Բ. — Նոյն Նիւթին շարունակութիւնը — Քահանայական սրբութեան Հարկաւորութեանն ապացոյցներ 28

Գլ. Գ. — Քահանայական սրբութեան Նկատմամբ ի՞նչ եղանք անցելոյն մէջ — Ի՞նչ ենք հիմայ — Եւ ի՞նչ կ'ուզենք ըլլալ ապագային մէջ 40

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ — Քահանայական սրբութեան առաջին միջոցը — Աղաչնութիւններ 63

Գլ. Ա. — Հաւատք — Հաւատոյ կեանքը և ոգին — Հաւատոյ կենաց գործադրութիւնը — Դիտաւորութեան մաքրութիւն 64

Գլ. Բ. — Յոյս — Իւր հարկաւորութիւնը և գործադրութիւնը — Անվստահութիւն, լքում, յուսահատութիւն 82

Գլ. Գ. — Յուսոյ շարունակութիւն, յանձնապաստանութիւն 98

Գլ. Դ. — Սէր առ Աստուած — Ա՛յս առաքինութեան Հարկաւորութիւնը — Անոր գործադրութիւնը — Աստուծոյ ներկայութիւնը — Աստուծոյ վըայ խորհիլ — Աստուծոյ վըայ խօսիլ — Աստուծոյ համար գործել — Ատել ամէն բան որ անոր նախատինք կը պատճառէ — Անոր փառացը հոգ տանիլ 117

Գլ. Ե. — Սէր առ ընկերն — Քահանայի մը համար ասոր մանաւոր կարևորութիւնը 139

Գլ. Զ. — Նոյն Նիւթին շարունակութիւնը — Ի՞նչ բան կ'արգելու և ինչ բան կը հրամայէ ընկերսիրութիւնը — Եռանդ — Անչահախնդրութիւն, և այլն . . . 152

Գլ. Է. — Հեզութիւն — Անոր հարկաւորութիւնը — Գործադրութիւնը — Անկից հրամայուած ու արգիլուած բաներ 180

Գլ. Ը. — Հնազանդութիւն — Քահանայի մը առ իւր եպիսկոպոսն և առ անոր փոխանորդները ունեցած պարտաւորութիւնը 205

Գ.Լ. Թ. — Մահացուցում — Պարկեշտութիւն — Ժուժկալութիւն — Այս առաքինութեանց հարկաւորութիւնը և գործադրութիւնը 231

Գ.Լ. Ժ. — Խոնարհութիւն — Անձնուրացութիւն — Դիտման մաքրութիւն — Այս ամէն առաքինութեանց քահանայի մը համար յատուկ հարկաւորութիւնը — Խոնարհութիւն խորհրդոց և իդձերու մէջ . . 257

Գ.Լ. ԺԱ. — Նոյն նիւթին շարունակութիւնը — Խոնարհութիւն խօսքերու և գործոց մէջ 275

Գ.Լ. ԺԲ. — Ողջախոհութիւն — Այս առաքինութեան հարկաւորութիւնը — Հակառակ ախտերն որոնք մեզ — Նոյն ախտերն մաքուր ընելու կերպը — Դատարկութիւն, հեզնասիրութիւն, և այլն 294

Գ.Լ. ԺԳ. — Բարի օրինակ — Պարկեշտութիւն — Սէր առանձնութեան, կանոնի և ուսման — Սուրբ կեանք — Բարի օրինակին աքանչելի արդիւնքը — Գայթակղութիւն քահանայից, կորուստ հոգւոց . . . 320

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ — Քահանայական սրբութեան երկրորդ միջոցը — Գործք 344

Գ.Լ. Ա. — Գործոց սրբութիւնը — Ժամանակին աղեկ գործածութիւնը — Ուսմունք — Դատարկութիւն — Նախանձաւորութեան արգիլնք. 345

Գ.Լ. Բ. — Աղօթք — Նորին մեծ հարկաւորութիւնը — Քահանային աղօթքին նկատմամբ սովորական կերպը — Գործնական կանոններ 369

Գ.Լ. Գ. — Պատարագ — Իւր գերազանցութիւնը — Քահանայից պատարագ զուրցելու սովորական կերպը — Գործնական կանոններ 385

Գ.Լ. Դ. — Ժամերգութիւն — Նորին կարևորութիւնը — Քահանայից ժամասացութեան կերպը — Գործնական կանոններ 402

Գ.Լ. Ե. — Մասնաւոր քննութիւն — Նորին հարկաւորութիւնը — Այս կրթութեան նկատմամբ քահանայից վարմունքը — Գործնական կանոններ — Ընդհանուր քննութիւն. 418

Գ.Լ. Զ. — Այցելութիւն ամենասուրբ Հաղորդութեան — Այս սովորութեան հարկաւորութիւնը և օգուտները — Յայսմ մասին քահանայից հասարակ սովորութիւնը — Գործնական կանոններ. . . . 428

Գ.Լ. Է. — Հոգևոր ընթերցումն — Այս սովորութեան մեծ օգուտները — Այսոր նկատմամբ քահանայից սովորական վարմունքը — Գործնական կանոններ . . 437

Գ.Լ. Ը. — Ջերմեռանդութիւն առ ամենասուրբ Կոյսն — Այս ջերմեռանդութեան որպիսութիւնը — Վարդարան — Յայսմ մասին քահանայից սովորական


վարմունքը — Ընդհանուր ձայնաւոր աղօթք — Գործնական կանոններ 444

Գ.Լ. Թ. — Խոստովանութիւն — Գործնական կանոններ և պղտարարութիւններ — Խոստովանահօր ընտրութիւն — Սակս խոստովանանք — Փննութիւն — Զղջումն — Խոստովանութիւն — Հատուցում — Մեր խոստովանութեանց պատուղը 455

Գ.Լ. Ժ. — Հոգևոր կրթութիւն տարեկան — Ամսական — Մահուան պատրաստութիւն — Հոգևոր կրթութեանց վրայ գործնական կանոններ և պղտարարութիւններ 466


Գ.Լ. ԺԱ. — Սուրբ խորհրդոց մատակարարութիւն — Այս հարկաւոր տրամադրութիւններ — Ինչպէս կարող ըլլայ ասիկայ քահանայի մը ձեռքը սրբութեան գործաւոր միջոց մ'ըլլալ 484

ՎԵՐՋԱԲԱՆ 499





ՎՐԻՊԱԿՆ			ՈՒՂՂԵԼԻՆ
ԷՋ.	ՏՈՂ		
86	9	Աստուածմէ այնչափ	Աստուծմէ ընդունած այնչափ
102	16	Բոլորովին	Փոխանակ բոլորովին
193	10	ըսուելու	ըսելու.
242	34	Է՝ ամենայն բարեաց Թէշնամին, զոր գործ…	Է, զոր ամենայն բարեաց Թէշնամին գործ…
262	31	պատասխանները	պատասխաններիդ
267	35	գտնուելու	գտնելու.
304	15	անհամեմատ	անհամեստ
334	12	դէմ,	դէմ է՝
417	22	չար	զատ



2768

NL0028020

Ազգային գրադարան

2C 86